

ԱՐՅԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ

Ուսումնասիրություններ

(գիտական հոդվածների պարբերական ժողովածու)



6/2015

АРМЕНОВЕДЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

(периодический сборник научных статей)

ARMENOLOGY RESEARCHES

(periodical collection of scientific articles)



ՀՏԴ 94(479.25):811.19:008(045)

ԳՄԴ 63.3(5Հ)+81.2Հ+71 ց1

Հ 246

*Տպագրվում է ԱրՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
հրատարակվում է 2009 թվականից
Խմբագրական խորհուրդ*

- Բալայան Վ. Ռ. - գլխավոր խմբագիր, պ.գ.դ., պրոֆեսոր
Սաֆարյան Վ. Ա. - պատասխանատու քարտուղար, ԱրՊՀ պատմության
ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ
Դադայան Ս. Վ. - Արցախի գիտական կենտրոնի տնօրեն, պ.գ.թ., պրոֆեսոր
Մելքոնյան Ա. Ա. - ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, պ.գ.դ.,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Հովհաննիսյան Լ. Շ. - ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ
ԳԱԱ թղթակից անդամ
Պետրոսյան Հ. Լ. - ԵՊՀ մշակութաբանության ամբիոնի վարիչ, պ.գ.դ.,
պրոֆեսոր
Մուսայելյան Հ.Գ. - ԱրՊՀ բ.գ.դ., պրոֆեսոր
Սարգսյան Ա. Յ. - ԼՂՀ կրթության եւ գիտության փոխնախարար, բ.գ.թ.,
դոցենտ
Կարապետյան Ս. - ՀՀՈՒԿ կազմակերպության տնօրեն

Հայագիտական ուսումնասիրություններ: Գիտական հոդվածների
Հ 246 պարբերական ժողովածու 6/2015.- Ստեփանակերտ: ԱրՊՀ
հրատ., 2015.- 428 էջ:

ՀՏԴ 94(479.25):811.19:008(045)

ԳՄԴ 63.3(5Հ)+81.2Հ+71ց1

ISBN 978-9939-1-0279-5 © Հայագիտական ուսումնասիրություններ, 2015

Редакционная коллегия:

- Балаян В.Р. - главный редактор, д.и.н., профессор
 Сафарян В.А.- ответственный секретарь, зав. кафедрой истории АрГУ, к.и.н., доцент
 Дадаян С.В. - директор Арцахского научного центра, к.и.н., профессор
 Мелконян А.А. - директор Института истории НАН РА, д.и.н., академик. НАН РА
 Оганесян Л.Ш. - Институт языка НАН РА, д.ф.н., член корр. НАН РА
 Петросян Г.Л. - зав. кафедрой культурологии ЕрГУ, д.и.н., профессор
 Мусаелян О.Г. - АрГУ, д.ф.н., профессор
 Саркисян А.Ю.- заместитель министра Образования и науки НКР, к.ф.н., доцент
 Карапетян С. - председатель общественной организации по изучению армянской архитектуры.

Editorial Board:

- Balayan V.R. - Editor in Chief, Ph.D. in History, Professor
 Safaryan V.A. - Executive Secretary, Head of the History Department of ASU, Ph. D. in History, Associate Professor
 Dadayan S.V. - Chief of the Artsakh Research Centre, Ph.D. in History, Academician
 Melkonyan A.A. - Director of the Institute of History of NAS RA, Ph. D. in History, Academician of NAS RA
 Hovanisyan L. Sh. - Director of the Institute of Linguistics of NAS RA, Ph. D. in Philology, Corresponding Member of NAS RA
 Petrosyan H. L. - Head of the Cultural Studies Department of YSU, Ph. D. in History, Professor
 Musaelyan O.G. - ASU, PhD in Philology, Professor
 Sargsyan A. Y. - Deputy Minister of Education and Science of NKR, Ph. D. in Philology, Associate Professor
 Karapetyan S. - Chairman of the Public Organization of the Research on Armenian Architecture

**«ՀԱՅՈՑ ՅԵՂԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ
 ԴԵՍ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ»**

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՈՒՐ

Մանուշ Մինասյան - Արցախի պետական համալսարանի ռեկտոր
Արմեն Սարգսյան – ԼՂՀ կրթության և գիտության փոխնախարար
Վալերի Ավանեսյան - Արցախի պետական համալսարանի պրոռեկտոր
Վիտյա Յարամիշյան-Արցախի պետական համալսարանի պրոռեկտոր
Ալեքսանդր Մանասյան - ԵՊՀ փիլիսոփայության ամբիոնի վարիչ
Էդիկ Մինասյան - ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան
Լևոն Շիրինյան – ՀՊՄՀ քաղաքագիտության և իրավունքի ամբիոնի վարիչ
Սեդրատ Խանյան - ԱրՊՀ հայ գրականության և լրագրության ամբիոնի պրոֆեսոր
Վաչերամ Բալայան - ԱրՊՀ պատմության ամբիոնի պրոֆեսոր
Աշոտ Հայրունի - ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր
Արզիկ Մխիթարյան - ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ֆակուլտետի դեկան
Արարատ Վաղդանյան - ԱրՊՀ պատմության ամբիոնի պրոֆեսոր
Վարդգեն Սաֆարյան - ԱրՊՀ պատմության ամբիոնի վարիչ
Նարինե Ավանեսյան - ԱրՊՀ հայ գրականության և լրագրության ամբիոնի վարիչ

**ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԿՈ ՄԱՀԱԼԵՅԱՆԻ
ՈՒՂԵՐԳԸ «ՀԱՅՈՑ ՅԵՐԱՍՊՐԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇԵՄ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ
ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ**

/ք. Ստեփանակերտ, 11 ապրիլի 2015թ./

Գիտաժողովի հարգաթա՛ն մասնակիցներ,

Ողջունում եմ բոլորիդ Արցախյան հողում եւ շնորհավորում նման կարեւոր միջոցառման մեկնարկի կապակցությամբ:

Դուք իրականացնում եք մեծ աշխատանք՝ մարդկության դեմ ուղղված ոճրագործությունների ուսումնասիրման ու դատապարտման, մարդու հիմնարար իրավունքների եւ ազատությունների, ժողովրդավարական նորմերի ու սկզբունքների, համամարդկային արժեքների պաշտպանության ու տարածման ուղղությամբ: Դա առանձնահատուկ առաքելություն է, որն արժանի է բարձր գնահատանքի:

Չափազանց խորհրդանշական է, որ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջազգային գիտաժողովն անց է կացվում հենց Արցախում: Ուղիղ մեկ դար առաջ հայ ժողովուրդը ենթարկվեց Օսմանյան Թուրքիայի կողմից պետականորեն ծրագրված եւ դաժանաբար իրականացված ցեղասպանության, զրկվեց պատմական հայրենիքի մեծ մասից եւ դարձավ տարագիր՝ սփռվելով աշխարհով մեկ: Մարդկության պատմության մեջ հայտնի այդ աննախադեպ Եղեռնը չստացավ արժանի գնահատական, ինչն էլ ծնեց նոր ոճրագործություններ: 1988-ին Սումգայիթում ու 1990-ին Բաքվում կազմակերպված հայերի ջարդերը եւ արցախահայության դեմ սանձազերծված պատերազմը դրա վառ վկայությունն են: Սակայն այս անգամ մեր ժողովրդին բնաջնջելու հակառակորդի ծրագրերը դատապարտված էին ձայնողման, քանզի դարավոր ցավն ու կորուստը ուժեղացրել էին հայի ազատատենչ ոգին, դարձրել նրան ավելի ամուր ու անսասան:



Արցախյան ազատամարտի տարիներին համայն հայությունը ոտքի ելավ մեկ մարդու պես՝ պաշտպանելու իր պապենական հողը, հնագույն լեզուն, հավատքն ու մշակույթը, սեփական ձեռքերով կերտելու իր ճակատագիրը: Համագաղային միասնությունն ու համախմբվածությունը եւ հայոց անկախ պետականությունը դարձան մեր հաղթանակների գրավականն ու խորհրդանիշը, ինչը պետք է պահել ու փայփայել աչքի լույսի պես: Այս գիտակցությամբ ու համոզմունքով մենք կարողացանք դիմակայել թշնամուն, հաղթահարել բոլոր փորձություններն ու դժվարությունները եւ կառուցել երկու հայկական պետություններ, որոնք այսօր ձեռք ձեռքի կերտում են իրենց հուսալի ապագան:

Հարգելի՛ բարեկամներ,

Վստահ եմ, որ գիտաժողովն արդյունավետորեն կլուծի իր առջեւ դրված խնդիրները եւ արժանի ներդրում կունենա Հայոց ցեղասպանության ճանաչման գործում:

Մաղթում եմ բոլորիդ հաջողություններ ու ամենայն բարիք:

ОБРАЩЕНИЕ ПРЕЗИДЕНТА РЕСПУБЛИКИ АРЦАХ БАКО СААКЯНА К УЧАСТНИКАМ МЕЖДУНАРОДНОЙ КОНФЕРЕНЦИИ “ГЕНОЦИД АРМЯН КАК ПРЕСТУПЛЕНИЕ ПРОТИВ ЧЕЛОВЕЧЕСТВА”

Уважаемые участники конференции!

Приветствую всех вас на арцахской земле и поздравляю с началом столь важного мероприятия.

Вы выполняете большую работу по изучению и осуждению преступлений против человечества, защите и распространению основных прав и свобод человека, демократических норм и принципов, общечеловеческих ценностей. Это особая миссия, которая достойна высокой оценки.

Весьма символично, что международная конференция, посвященная 100-летию Геноцида армян, проводится именно в Арцахе. Ровно век назад армянский народ подвергся геноциду, запланированному и зверски осуществленному на государственном уровне Османской Турцией, лишился большей части исторической родины и стал изгнанником, рассеявшись по всему миру. Этот известный в истории человечества беспрецедентный Геноцид не получил достойной оценки, что и породило новые преступления. Резня армян, организованная в 1988 году в Сумгаите и в 1990 году в Баку, а также развязанная против армян Арцаха война стали ярким тому свидетельством. Однако на сей раз планы противника по истреблению нашего народа были обречены на провал, поскольку вековая боль и потери укрепили свободолюбивый дух армян, сделали их еще более крепкими и непоколебимыми.

В годы Арцахской освободительной борьбы армянство всего мира поднялось на защиту земли отцов, своего древнейшего языка, веры и культуры, права самому вершить собственную судьбу. Общенациональное единство, солидарность и независимая армянская государственность стали залогом и символом наших побед, которые нужно хранить как зеницу ока. Глубоко осознавая эту истину, мы сумели противостоять противнику, преодолеть все испытания и трудности, построить два армянских государства, которые сегодня рука об руку создают свое надежное будущее.

Дорогие друзья!

Уверен, что конференция эффективно решит поставленные перед ней задачи и внесет достойный вклад в дело признания Геноцида армян.

Желаю всем вам успехов и наилучших благ!

г. Степанакерт,

11 апреля 2015 г.



**ADDRESS OF THE PRESIDENT OF THE REPUBLIC OF ARTSAKH BAKO SAHAKYAN
TO THE PARTICIPANTS OF THE «ARMENIAN GENOCIDE AS A CRIME AGAINST
HUMANITY» INTERNATIONAL CONFERENCE**

Respected participants of the conference,

I welcome you all on the Artsakh soil and congratulate on the start of such a significant event.

You perform a great work carrying out the research and condemnation of crimes against humanity, protection and promotion of fundamental human rights and freedoms, democratic norms, principles and human values. It is a special mission that deserves the highest assessment.

It is very much symbolic that the international conference dedicated to the 100th anniversary of Armenian Genocide is held in Artsakh. Exactly a century ago the Ottoman Turkey organized and brutally realized on a state level the genocide of the Armenian people as a result of which our people lost the greater part of their historical homeland and became refugees spreading all over the world. The fact that this unprecedented massacre in the human history was not properly recognized gave birth to new crimes. The pogroms of the Armenians organized in 1988 in Sumgait and in 1990 in Baku as well as the war forced upon the Artsakh people are the best manifestations of that. But this time the enemy's plans to exterminate our people were doomed to failure as the century-long pain and losses strengthened the freedom-loving Armenian soul, made our nation stronger and unwavering.

During the Artsakh Liberation War the whole Armenian people stood side by side to defend their native land, ancient language, faith and culture, carve their future with their own hands. National unity and cohesion as well as the independent Armenian statehood became the symbol and guarantee of our victories, which should be kept and cherished as an apple of an eye. With this conviction and consciousness we were able to resist the enemy, overcome all the ordeals and difficulties and build the two Armenian states that together build their reliable future.

Respected friends,

I am confident that the conference will efficiently solve the issues set before it and have a worthy contribution to the process of the Armenian Genocide recognition.

I wish all of you successes and all the best.

*Stepanakert,
April 11, 2015.*

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՄԱՆ
ԱՐԴԻ ՓՈԻԼԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.
ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՎ ՀԱՏՈՒՅՈՒՄ

Էդիկ Մինասյան

*Պատմ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ԵՊՀ*

Բանալի բառեր - ցեղասպանություն, ճանաչում, դատապարտում, հատուցում, առանձնահատկություններ, հայաթափում, հայրենագրվում, հանցագործություն, նյութական պատասխանատվություն, տեղահանություն, լքյալ գույք, մշակութային եղեռն, ժխտման քաղաքականություն, փոխհատուցում, իրավաբանական հայեցակարգ

Դեռևս 1915 թ. փետրվարին երիտասարդ թուրքերի կուսակցության գաղափարական առաջնորդներից դոկտոր Նազըմը, կուսակցության կենտկոմի փակ նիստում հանդես գալով, ուղղակի կոչ արեց. «Անհրաժեշտ է, որ երկրի վրա ոչ մի հայ չմնա և պետք է վերանա Հայաստան հասկացությունը: Հիմա պատերազմ է, երբեք ավելի լավ հնարավորություն չենք ունենա: Գործողությունները պետք է հանգեցնեն հայության ամբողջական ոչնչացմանը, և կարևոր է, որ մեկ հայ նույնիսկ չփրկվի»¹: Երիթուրք կառավարությունը, օգտվելով Առաջին համաշխարհային պատերազմի ընձեռած առիթից, իրականացրեց անպաշտպան հայ ժողովրդի եղեռն: Թուրքերի ձեռքով կատարվեց մի անօրինակ հանցագործություն մարդկության հանդեպ, որը տարիներ հետո պիտի որակվեր «ցեղասպանություն» («գենոցիդ») արտահայտությամբ:

Ցեղասպանության հետևանքով Արևմտյան Հայաստանը հայաթափվեց, նրա կենդանի մնացած բնակչությունը կորցրեց իր բնօրրանը, զրկվեց իր հայրենիքից, ինչպես նաև ունեցվածքից: Այս տեսակետից հայերի բռնազաղթն ու կոտորածները տարբերվում են հրեաների ֆիզիկական ոչնչացումից, որովհետև հայերի կոտորածը սեփական հայրենիքում ապրող ժողովրդի ցեղասպանություն էր: Էական փոփոխություններ տեղի ունեցան Մեծ եղեռնից փրկված հայության մի հատվածի հոգեբանության, նրա հասարակական ու քաղաքական մտածելակերպի, հոգեկան կերտվածքի բուն էության մեջ ինչպես հայրենիքում, այնպես էլ սփյուռքում: Հայ ժողովուրդը բաժանվեց երկու մասի: Ողջ մնացած հայերը դատապարտված էին աշխարհով մեկ սփռվելու, թափառական կյանքի,

¹ Հայոց ցեղասպանություն, Աշխարհի պետությունները, ազգային խորհրդարանները և միջազգային կազմակերպությունները դատապարտում են և ճանաչում (նյութերի ժողովածու), կազմող Լ. Բարսեղյան, Երևան, 2005, էջ 4:

անխուսափելի ուժացման իրենց երկրորդ հայրենիքում՝ աշխարհի քար անտարբերության ներքո:

Ցեղասպանությունը վերապրած յուրաքանչյուր հայ, ցեղասպանության զոհ դարձած յուրաքանչյուր հայ ընտանիքի ժառանգորդ արդարացիորեն պահանջում է կատարված ոճրագործությունների հեղինակների կամ նրանց իրավահաջորդների կողմից ցեղասպանության ճանաչում: Դա կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ ոճրագործն ըստ արժանվույն չի դատապարտվել, իսկ հայերը բարոյական ու նյութական հատուցում չեն ստացել: Եթե հրեաների «հոլոքոստի» դեպքում գոնե տրվել է նյութական փոխհատուցում, որն այսօր էլ իրականացնում է Գերմանիան, ապա հայերի համար օրակարգի խնդիր է նաև բռնագավթված ու հայաթափված հայրենիքի վերադարձը: Եվ որքան Հայոց ցեղասպանության փաստը անարդարացի կերպով խեղաթյուրվում ու թաքցվում է, այնքան ավելի խորն է նրա ճանաչման ձգտումն ու ցանկությունը: Ոչ միայն հայությունը, այլև միջազգային ողջ հանրությունը, առաջադեմ մարդիկ արդեն 1915 թ. կեսերից, փաստաթղթերով ու դատապարտող նյութերով ապացուցեցին Հայոց ցեղասպանության իրողությունը: Հայ ժողովրդի ցեղասպանության դեմ հանդես եկան ժամանակի հասարակական-քաղաքական ու պետական նշանավոր շատ գործիչներ ու մտավորականներ: Նրանցից էին Մաքսիմ Գորկին, Վալերի Բրյուսովը և Յուրի Վեսելովսկին՝ Ռուսաստանում, Անատոլի Ֆրանսը և Ռոմեն Ռոլանը՝ Ֆրանսիայում, Ֆրիտյոֆ Նանսենը՝ Նորվեգիայում, Ջեյմս Բրայսը, Դ. Լյոյդ Ջորջը և Ջ. Քերզոնը՝ Անգլիայում, Կառլ Լիբկնեխտը, Յովհաննես Լեփսիուսը, Յոզեֆ Մարկվարտը, Արմին Վեգները՝ Գերմանիայում, Վուդրո Վիլսոնը՝ ԱՄՆ-ում, և շատ ուրիշներ, որոնք արևմտահայության ջարդերը որակեցին որպես XX դարի առաջին ցեղասպանություն, որը կոծկել հնարավոր չէր: Դեռևս 1915 թ. մայիսի 24- ին Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կառավարությունները միացյալ հանդես եկան հրապարակային նախազգուշացմամբ՝ ուղղված Թուրքիայի կառավարությանը: Այդ հայտարարությունը այսօր կարելի է համարել Հայոց ցեղասպանությունը դատապարտող առաջին միջազգային փաստաթուղթը, որը հրապարակվելով աշխարհի գրեթե բոլոր երկրներում՝ ազդարարեց, որ «Հայաստանում տեղի են ունեցել հայերի կոտորածներ քրդերի և թուրքերի կողմից՝ օսմանյան իշխանությունների բացահայտ թույլտվությամբ, իսկ հաճախ էլ ուղղակի համագործակցությամբ...»¹:

Երեք խոշոր տերությունները հայերի դեմ կատարված ոճրագործությունը որակեցին որպես «մարդկության և քաղաքակրթության դեմ» Թուրքիայի կողմից կատարված հանցագործություն, որի համար «...անձնական պատասխանատվությունը դնում են թուրքական կառավարության բոլոր անդամների, ինչպես նաև նրա տեղական այն իշխանությունների վրա, որոնք մասնակից են դարձել նման

¹ Նույն տեղում, էջ 5:

կոտորածին»¹:

Այդ հայտարարությունը շատ ավելի ուշ՝ միայն երեսուներեք տարի անց, իր արտահայտությունը գտավ ՄԱԿ-ի՝ 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործությունները կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայում և միջազգային մի շարք այլ փաստաթղթերում: Այստեղ սահմանված է, որ այդօրինակ հանցագործությունները վաղեմության ժամկետ չունեն, և ցեղասպանություն իրագործած յուրաքանչյուր պետություն իրավական հատուկ պատասխանատվություն է կրում անկախ այն բանից, թե կգտնվե՞ն ու պատժի կենթարկվե՞ն ոճրագործությունների անմիջական կազմակերպիչները, թե՞ ոչ²:

Ինչպես արդարացիորեն նկատել է 1984 թ. ապրիլի 13-16-ը Փարիզում իր նիստերը գումարած ժողովուրդների մշտական դատական ատյանը, թուրքական պետությունը կրում է հատուկ պարտավորություններ, որոնք բխում են ազգերի իրավունքի մասին տարբեր տարիներին ընդունված կանոնադրություններից, հատուկ պայմանագրերից և համաձայնագրերից, որոնց մասնակից էր նաև նա: Որպես հիմնական պարտականություն՝ Թուրքիայի հանրապետությունը չպետք է նենգափոխի ցեղասպանության իրողությունը, այլ համարձակություն հանդես բերի ընդունելու ու հաշվի նստելու կատարված փաստի հետ³:

Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը նվազագույն հատուցում կհանդիսանա հայ ժողովրդի կրած բարոյական ու նյութական բազմաթիվ կորուստների դիմաց: Թուրքիայի ժամանակակից պետության կառավարողներին և «1915 թ. ցեղասպանության» մասին խոսող խորամանկ ու խարդախ քաղաքական գործիչներին հարկավոր է հիշեցնել, որ Թուրքիայում հայերի ֆիզիկական բնաջնջումը շարունակվել է մինչև 1923 թ. (հայերի կրկնակի ջարդերը Կիլիկիայում, հայերի ու հույների ջարդերն ու կորուստները Զմյուռնիայում, որն իրականացրին արդեն քեմալական Թուրքիայի զորքերը)⁴: Այստեղ խորամանկությունը պարզապես անմտություն է, քանի որ ժամանակակից Թուրքիան հայերին մինչև օրս արգելում է վերադառնալ իրենց պատմական հայրենիքը, մերժում է սեփականությունը հետ ստանալու կամ պատճառված վնասի փոխհատուցում ստանալու նրանց իրավունքը: Ովքեր փորձում են պատասխանատվությունը զցել այլևս գոյություն չունեցող Օսմանյան կայսրության վրա, հիշեցնենք, որ ժամանակակից Թուրքիայի Հանրապետությունը այդ կայսրության իրավահաջորդն է ոչ միայն իրավական

¹ Նույն տեղում:

² **Քոչարյան Վ.**, Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում, ժողովածու, Երևան, 2014, էջ 14, 15:

³ Նույն տեղում, էջ 69, 70, 71:

⁴ **Առաքելյան Դ.**, Տօթ Վարապետ Խաչերեանի Զմիւռնիական օրագիրը 1922-ին Montreal-A rod Books 1997.

առումով, այլն փաստացի: Մեր կարծիքով, միջազգային փորձը հիմնավոր իրավական հիմք է տալիս պնդելու, որ թուրքական պետության ինքնությունը և անընդհատությունը չի փոխվել երկրի ներքին կյանքում եղած փոփոխություններից Օսմանյան կայսրության փլուզումից ի վեր: Մերժելով ցեղասպանության զոհ դարձած հայերի իրավունքների պաշտպանությունը՝ Թուրքիայի Հանրապետությունը դրանով իսկ բոլոր հիմքերը տալիս է պնդելու, որ Հայոց ցեղասպանությունը շարունակվում է: Միջազգային իրավունքը ցեղասպանության՝ իբրև հանցագործության կատարման հետ է կապում նաև նյութական պատասխանատվությունը՝ որպես ունեցվածքի վերադարձ և սեփականության այլ իրավունքների վերականգնում, ինչպես ֆիզիկական անձանց, այնպես էլ ամբողջ ազգային խմբին պատճառած վնասների ու կորուստների փոխհատուցում¹: Ցեղասպանության համար նյութական պատասխանատվության իրավական իմաստն այն է, որ պայմաններ են ստեղծվում ճանաչելու, ընդունելու ազգային խմբի տնտեսական քայքայմանն ուղղված գործողությունները իբրև ցեղասպանության հանցակազմի դեմ հակազդում: Ենթադրվում է նախ խախտված իրավունքների վերականգնում, ապա համապատասխան պատժամիջոցների կիրառում այդ հանցանքը իրականացնողների դեմ: Բոլորը, ովքեր մասնակցել էին այդ գործողություններին, մասնավոր անձերից մինչև պետություններ, ենթակա են տնտեսական պատժամիջոցների²:

Ցեղասպանության հետևանքով հայերին հասցված նյութական վնասների հատուցման հարցը շատ ավելի վաղ է ծագել, սակայն մի շարք պատճառներով այն մինչ այժմ չի լուծվել: Հայտնի է, որ պատմության արդի հանգրվանում հայերի սեփականության վերադարձի խնդիրն առաջին անգամ բարձրաձայնվել է 1984թ. ժողովուրդների մշտական դատական ատյանում՝ Տիգրան Գույումջյանի «Հայոց սեփականության բռնագրավումը և հայկական պատմական հուշարձանների ոչնչացումը որպես ցեղասպանության գործընթացի արտահայտություն» զեկույցում: Վերջինս հիշատակում էր, որ հայերի բանկային հաշիվներից գոյացած շուրջ 30.000 կգ ոսկին (5 մլն թուրքական ոսկե լիրա), ըստ Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Ջեյմս Բոլդվինի՝ վարչապետ Մակդոնալդին ուղղված զեկուցագրի, թուրքերի կողմից ուղարկվել էր Գերմանական կայզերական բանկ (Reichsbank-Berlin): Այսօր այդ գումարը կկազմեր 320.000.000-ից ավելի ԱՄՆ դոլար՝ գումարած տոկոսները³:

¹ Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарии, дополнение к1-му и 2-му сборника /ред.сост и автор комментария профессор Ю.Г. Барсегов, Москва, 2005, т. 2, ч 2, стр. 550, 551, 579, 580:

² **Արաբյան Ի.**, Ցեղասպանությունը և դրա պատժելիությունը (պատմության էջեր երեկ և այսօր), Երևան, 1996, էջ 43:

³ «Վեմ» համահայկական հանդես, թիվ 1(33), հունվար-մարտ, 2011, էջ 169:

Բացի բանկային հաշիվների բռնագրավումից, Թուրքիայի կառավարությունը փորձ է արել տիրանալ նաև հայերին պատկանող այլ արժեթղթերի, մասնավորապես ապահովագրական վկայականներով նախատեսված գումարներին: 1916թ. Թալեաթ փաշան ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուի հետ զրույցում հարցնում էր, թե կարող է արդյոք վերջինս իրեն ներկայացնել ամերիկյան ապահովագրական ընկերություններում ընդգրկված հայերի ցուցակը: «Նրանք բոլորը մահացել են, չթողնելով ժառանգներ», «ուրեմն այդ ապահովագրերի գումարները օրինաբար պետք է անցնեն օսմանյան պետությանը», - եզրակացնում էր նա¹: Օտարերկրյա այլ ընկերությունների դիմելով՝ տեղեկություններ հավաքեց հայերի սեփականության (դեպոզիտ, ապահովագրեր, արժեթղթեր, տներ, հողային կալվածքներ, գործարաններ, խանութներ, ընկերություններ) վերաբերյալ: Սակայն, եթե Օսմանյան կայսրության հայերի համայնքային սեփականության մասին տեղեկությունները հայտնի էին, ապա անհատական սեփականության հաշվառումն այսօր դժվար է: 1992թ. ֆրանսահայ դոկտոր Ռայմոն Գևորգյանը հրատարակել է հայկական վանքերի ու եկեղեցիների և նրանց պատկանող գույքի առավել ամբողջական ցուցակը², որի մեջ մտնում է նաև հայ կաթոլիկ և հայ բողոքական եկեղեցիներին պատկանող գույքը: Ցուցակում նշված են, չհաշված Կ. Պոլիսը, 2538 եկեղեցի, 451 վանք և 2000 կրթօջախ³: Փարիզի խաղաղության կոնֆերանսում հայկական պատվիրակության ղեկավարներ Ավետիս Ահարոնյանը և Պողոս Նուբար փաշան ներկայացրել էին զեկույց, որում կրած վնասը հաշվարկված էր մոտավորապես 14,5 մլրդ ֆրանկ: 1990 թ. դա կազմում էր մոտավորապես 100 մլրդ դոլար: Հուշագրում չեն հաշվարկել այն նյութական վնասները, որոնք թուրք-ադրբեջանական զորքերի կողմից հասցվել են Բաքվի հայությանը 1918թ., քեմալականների կողմից՝ 1920թ.՝ արևելահայությանը, 1921թ. կիլիկիահայությանը և 1922թ.՝ Զմյուռնիայի հայությանը: Օգտագործելով Նյու Յորքի Լայֆի մեթոդը և վերածելով ստացվածը 2014թ-ի արժեքների՝ կստացվի 41.500.000.00 ԱՄՆ դոլար: Այս թվին ավելացնելով 20 տոկոս, այսինքն՝ ընդգրկելով ցեղասպանության երկրորդ փուլի (1919-23թթ.) կորուստները, ընդհանուր թիվը կկազմի համապատասխանաբար 104.544.260.400 ԱՄՆ դոլար⁴:

¹ **Հովհաննիսյան Ա.**, Քեմալ Աթաթուրքը և հայերի ունեզրկման գործընթացը, հայերի ունեզրկման փաստը քողարկելու վերջին փորձերը (Տե՛ս «Վեմ», համահայկական հանդես, թիվ 1(33), հունվար-մարտ 2011, էջ 68:

² Նույն տեղում, էջ 170:

³ Նույն տեղում, 169:

⁴ Արդարացի լուծում՝ հատուցումներ հայոց ցեղասպանության դիմաց. հայոց ցեղասպանության հատուցումների ուսումնասիրման խմբի զեկույցը, վերջնական զեկույցը, Երևան, 2014, էջ 13:

1915թ. հունիսին «Տեղահանության մասին» օրենքի հրապարակումից անմիջապես հետո վարչական կարգադրություն էր արվել պատերազմական արտակարգ քաղաքական իրավիճակի պատճառով տեղահանված հայերի լքյալ շարժական և անշարժ գույքը տնօրինելու վերաբերյալ¹։ Իրականում հայերին պատկանող գույքի թալանը տեղի էր ունենում տեղահանության սկզբում կամ ընթացքում։ Գորգերը, արծաթյա և ոսկյա իրերը, հագուստը տեղնուտեղը վերցնում էին ոստիկանները, մանր կահկարասին՝ տեղի խուժանը։ Անշարժ գույքը օգտագործվում էր պետության հայեցողությամբ, իսկ երբեմն տրվում էր բանակին որպես կայանատեղի, դառնում էր պահեստ կամ հոսպիտալ, երբեմն էլ Բալկաններից տեղահանվածներին տեղավորում էին հայերի տներում։ 1923թ. ապրիլի 15-ին Մուստաֆա Քեմալի առաջարկով թուրքական Մեջլիսը օրենք ընդունեց «լքյալ գույքի» մասին, որով բռնագրավման էր ենթարկվում այն հայերի գույքը, որոնք չէին ապրում Թուրքիայում՝ անկախ այն պարագայից, թե ինչ պայմաններում էին թողել երկիրը, իսկ 1926թ. փետրվարի 2-ին նոր օրենք ընդունվեց, որով վերադարձի ենթակա չէր Լոզանի պայմանագրի ուժի մեջ մտնելուց առաջ (1924թ. օգոստոսի 19-ը) բռնագրավված գույքը²։ Փաստորեն հայկական գույքի պահանջը լուծվեց հայկական հարցի հետ միասին։ Զավեշտալին այն էր, որ նույնիսկ 1925թ. Մեջլիսի որոշմամբ հայ վրիժառուների կողմից սպանված Էնվերի, Թալեաթի և Բեհաեդդին Շաքիրի ընտանիքներին պետական թոշակ նշանակվեց, որը վճարվում էր հայկական գույքից ստացված գումարների հաշվին մինչև 1970-ական թթ. կեսերը³։

Չնայած քաղաքակիրթ երևալու ջանքերին ու եվրոպական արժեքներ դավանելու մասին անընդհատ հայտարարություններին՝ ժամանակակից Թուրքիայում ևս կա՛մ յուրացվում են հայերի հոգևոր-մշակութային արժեքները, կա՛մ ծրագրված ոչնչացվում հայկական քաղաքակրթության նյութական վկայությունները, առաջին հերթին՝ ճարտարապետական հուշարձանները, իրականացվում է «մշակութային գենոցիդ»։ Դրանով թուրքական պետական մեքենան նպատակ է հետապնդում Արևմտյան Հայաստանը թուրքացնելուն զուգընթաց՝ ոչնչացնել, իսկ եթե դա չի հաջողվում, սեփականացնել հայոց մշակութային արժեքները։ Այսպես, Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Օսմանյան կայսրությունում միայն հայկական եկեղեցական հաստատությունների թիվը 2549 էր։ Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալների՝ 1923թ. դրանցից պահպանվել էր 913 կառույց։ 1923-74 թթ. ընթացքում դրանցից 484-ի հետքն անգամ վերացվել էր, 252-ը ավերվել էին, 197-ը վերականգնման կարիք ունեին։ 2005թ. սկզբներին արդեն Բրյուսելում և Լոնդոնում Թուրքիայի կողմից պետականորեն կազմակերպված 2 մեծ ցուցահանդեսներում հայերի

¹ «Վեմ» համահայկական հանդես, թիվ 1(33), հունվար-մարտ, 2011, էջ 170։

² Նույն տեղում, էջ 173։

³ Նույն տեղում, էջ 174։

մշակութային արժեքները ներկայացվել էին որպես թուրքական¹: Նշենք, որ այսօր էլ նույն քաղաքականությունը շարունակվում է Արևմտյան Հայաստանի դեռևս պահպանված հուշարձանների նկատմամբ: Հայերի նկատմամբ մշակութային եղեռնի դրսևորում պետք է համարել նաև հազարավոր հայկական ձեռագրերի ոչնչացումը:

Այսօր էլ Հայոց ցեղասպանության մեղադրանքը մնում է որպես առկա իրողություն, որը պետք է ճանաչվի պատասխանատու պետությունների կողմից: Դեռևս 1919 թ. սկզբներին թուրքական դատարանը թուրք վկաների ցուցմունքներով ընդունեց հայերի ցեղասպանության փաստը և դատապարտեց այն: Դատավարության նյութերից մեկում ասվում է. «Համաձայն բազմաթիվ վկայությունների և բազմաթիվ փաստերի, որ ներքոհիշյալները մասնակցել էին կոտորածների... և մեղսակից են կատարված ոճրագործությանը, որոշվեց համաձայն 170 պատժական հոդվածի՝ Բեհաեդդին Շաքիրին, Նազրմին, Աթիֆ Ռիզային, Ջավիդին, Ազիզ Բեյին, Էնվերին, Ջեմալին, Թալեաթին (թվով 11 մարդու)՝ որպես ոճրագործների, հանձնել Կ.Պոլսի զինվորական ատյանին... 12 ապրիլ, 1919 թ.»²: Սա, ըստ էության, հայ դատի ճանաչումն էր պաշտոնական Թուրքիայի կողմից: Հայտնի է, որ 1919 թ. հուլիսին Ստամբուլի ռազմական տրիբունալը հեռակա կարգով մահվան դատապարտեց Թալեաթին, Էնվերին, Ջեմալին, կուսակցության գլխավոր քարտուղար Նազրմին՝ Թուրքիան պատերազմի մեջ ներքաշելու և հայ ժողովրդի բռնազաղթն ու զանգվածային ջարդերը կազմակերպելու համար³: Բայց թուրքական դատարանի որոշումը մնաց թղթի վրա և ի կատար չածվեց, քանի որ գլխավոր հանցագործները իբր չէին գտնվում Թուրքիայում: Ստեղծված պայմաններում Թուրքիայի դատարանի օրինական որոշումը կատարելու առաքելությունը իրենց վրա վերցրին հայ ժողովրդական վրիժառուները, որոնք 1921-1922 թթ. և 1931 թ. հաջողությամբ իրականացրին այն:

Մինչև 1965 թ. Խորհրդային Միությունում Հայոց ցեղասպանության մասին խոսելն ու գրելը արգելված էր: Իզուր չէ, որ 1920-50-ական թթ. Հայոց ցեղասպանության ուսումնասիրության բնագավառը անվանվում է «պարտադրված լռության շրջան»⁴: Հայտնի է, որ Հայոց ցեղասպանության

¹ Հայ-թուրքական հարաբերություններ, հիմնախնդիրներ և հեռանկարներ, խորհրդարանական լուսմներ, 19-20 դեկտեմբերի 2007թ. Երևան, 2011. էջ 144 նաև EDWARD. G. DANIELYAN, THE ARMENIAN GENOCIDE OF 1894-1922 AND THE ACCOUNTABILITY OF THE TURKISH STATE, EREVAN 2005, P. 43

² Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Առաջաբանը և թարգմանությունը Ս. Հ. Փափազյանի, Երևան, 1988, էջ 171

³ Հայոց ցեղասպանությունը, ուսումնասիրություններ՝ խմբ. Պ. Հովհաննիսյան, Երևան, 2001, էջ 127:

⁴ Հովհաննիսյան Ն., Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագրության ներքո, Երևան, 2004, էջ 11:

միջազգային ճանաչման փուլը սկսվեց 1965թ., երբ Ուրուգվայի Սենատը և Ներկայացուցիչների պալատը Գլխավոր ասամբլեայի համատեղ նիստում որոշում ընդունեցին Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր սահմանելու մասին, իսկ 7 տարի անց՝ Հայոց ցեղասպանության ճանաչման մասին: Դրան հաջորդեցին Կիպրոսի Հանրապետության (1975, 1982, 1990թթ.) Ներկայացուցիչների պալատի բանաձևերը՝ կատարված ոճիրը ցեղասպանություն բնութագրելու, իսկ ապրիլի 24-ը հայ ժողովրդի ցեղասպանության զոհերի հիշատակի օր հռչակելու վերաբերյալ, Արգենտինայի Ազգային կոնգրեսի բանաձևը 1985թ. ապրիլի 23- ին¹: Հիշատակելի են 1979թ. Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների հանձնաժողովի 35-րդ նստաշրջանի որոշումը Օսմանյան կայսրությունում հայերի ջարդերը որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն որակելու մասին, 1984թ. ապրիլի 13-16 Փարիզում հրավիրված ժողովուրդների մշտական դատարանի հատուկ նստաշրջանի որոշումը Հայոց ցեղասպանության դատապարտման մասին, 1985 թ. հուլիսի 2-ին ՄԱԿ-ի ենթահանձնախմբի 38-րդ նստաշրջանի որոշումը Հայոց ցեղասպանության դատապարտման վերաբերյալ: 1987թ. հունիսի 18-ին Եվրախորհրդարանը հատուկ բանաձև ընդունեց և դատապարտեց Հայոց ցեղասպանությունը²:

Արցախյան ազատագրական պայքարի վերելքը ստիպեց Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդին 1988 նոյեմբերի 22-ին ընդունել օրենք «Օսմանյան Թուրքիայում հայերի 1915թ. ցեղասպանությունը դատապարտելու մասին», իսկ ապրիլի 24-ը հայտարարվեց Հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր: 1990թ. Հայաստանի առաջին և երկրորդ հանրապետություններին փոխարինելու եկավ երրորդ հանրապետությունը, որի Գերագույն խորհրդի՝ օգոստոսի 23-ի առաջին նստաշրջանն ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթուղթը, որով դրվեց անկախության գործընթացի սկիզբը: Հենց այս փաստաթղթում հատուկ կետ մտցվեց 1915թ. Հայոց ցեղասպանության դատապարտման վերաբերյալ, որը վկայում էր, որ Հայաստանի երրորդ հանրապետությունը տեղ կկանգնի Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին³: 1991թ. սեպտեմբերի 21- ին Հայաստանը հռչակվեց անկախ հանրապետություն: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո սկսվեց քաղաքական նոր իրավիճակ: 1991թ. դեկտեմբերին հայերի անկախությունը ճանաչող երկրների թվում էր Թուրքիան, որը թվում էր թե, իր շահերից ելնելով, պետք է բարիդրացիական հարաբերություններ հաստատեր

¹ Քոչարյան Վ., նշված աշխ., էջ 19-28:

² Հայոց ցեղասպանության դատապարտումը միջազգային կազմակերպությունների կողմից (1984-1987թթ.), կազմող Լ. Բարսեղյան, Երևան., 1999, էջ 6, 11:

³ Մինասյան Է., Հայաստանի երրորդ Հանրապետության պատմություն, Երևան., 2014, էջ 116:

հարևաններից հատկապես Հայաստանի հետ, բայց նա ոչ միայն հրաժարվեց դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց, այլև երկկողմ հարաբերությունների կարգավորման նպատակով առաջ քաշեց մի շարք նախապայմաններ՝ հրաժարվել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումից ու պահանջատիրությունից, արցախյան հիմնահարցի դրական լուծումից, կանխել սփյուռքահայության հակաթուրքական գործունեությունը:

Ի տարբերություն Թուրքիայի՝ ՀՀ-ն հանդես եկավ առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերություններ հաստատելու օգտին և ձգտեց ապահովել տարածաշրջանում Թուրքիայի ներգրավվածությունը: Սակայն նման քաղաքականությունը արդյունք չտվեց, և Թուրքիան մինչև այժմ էլ շարունակում է դիվանագիտական հարաբերություններ չունենալ ՀՀ-ի հետ և պնդել իր առաջ քաշած նախապայմանները:

1995թ. ապրիլին Ռուսաստանի Դաշնության Պետական դուման իր ընդունած որոշումով դատապարտեց Հայոց ցեղասպանությունը: 1996թ. Հունաստանի և Կանադայի խորհրդարանները նման որոշումներ ընդունեցին: 1998թ. Բելգիայի խորհրդարանը նույնպես նման որոշում ընդունեց: 1998թ. ապրիլի 24-ին Եվրոպայի խորհրդարանական ժողովը Հայոց ցեղասպանությունը համարեց 20-րդ դարի առաջին ցեղասպանություն: 2000-ական թթ. նման որոշումներ կայացրին Ֆրանսիան, Շվեյցարիան, Իտալիան, Սլովակիան, Նիդեռլանդները, Լեհաստանը, Գերմանիան, Լիտվան, Վենեսուելան, Չիլին, Շվեդիան և այլ երկրներ¹:

Այն ճանաչել են նաև ԱՄՆ-ի 4 տասնյակից ավելի նահանգները և տարբեր քաղաքների քաղաքապետարանները: Ֆրանսիայի Սենատը 2012 թ. հունվարին ընդունեց Հայոց ցեղասպանության ժխտման քրեականացնող օրենքը, թեև սահմանադրական խորհուրդը փետրվարին այն մերժեց, խոսքի ազատությունը սահմանափակելու պատճառաբանությամբ²:

2014թ. ապրիլի 10-ին ԱՄՆ-ի սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը 12 կողմ, 5 դեմ արդյունքով ընդունել է Հայոց ցեղասպանության փաստը դատապարտող 410 բանաձևը³:

Այս փուլի մյուս կարևոր առանձնահատկություններից է այն, որ փոխվել է Թուրքիայի հասարակական կարծիքը Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Ցեղասպանության հարցը դադարեց «տաբու» լինել Թուրքիայում և դարձավ քննարկվող խնդիրներից մեկը: Ի հակակշիռ իշխանությունների և ցեղասպանության փաստը ժխտողների՝ Թուրքիայում մի շարք պատմաբաններ

¹ Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества/ документы и комментариев, т. 2, часть 2, сост. и ответственный редактор, докт. юридических наук, профессор Ю. Г. Барсегов, с. 23-67.

² Մինայան Է., նշված աշխ., էջ 582:

³ Մինայան Է., «Հանցագործությունը ենթակա է ճանաչման և փոխհատուցման, տե՛ս Հայաստանի Հանրապետություն», 25 ապրիլի, 2014, էջ 5:

ու գիտնականներ ոչ միայն ճանաչում են Հայոց ցեղասպանությունը, այլև հանդես են գալիս այն պաշտոնապես ճանաչելու կոչերով: Դրա ջատագովներից էր 2007 թ. հունվարի 19-ին Ստամբուլում ահաբեկչության զոհ դարձած «Ակոս» թերթի խմբագիր Հրանտ Դինքը: Կատարվեց անսպասելին. Դինքի թաղման արարողությունը վերածվեց բազմահազարանոց բողոքի ցույցի՝ թուրք հանրության «Մենք Հայ ենք», «Մենք Հրանտ Դինքն ենք» կարգախոսներով:

Կարևորն այն է, որ Թուրքիայի հասարակական կարծիքը Հայոց ցեղասպանության ճանաչումը սերտորեն կապում է երկրի ընդհանուր ժողովրդավարացման գործընթացի հետ, դա դիտում որպես այդ գործընթացի պարտադիր և անբաժանելի մաս: Միջազգային ատյաններում Հայոց ցեղասպանության ճանաչման անհրաժեշտությունը գնալով ավելի հստակեցվում է Թուրքիա-ԵՄ լիիրավ անդամակցության գործընթացում՝ որպես սեփական պատմության հետ հաշտվելու պահանջ: Այս դրույթն ամրագրվել է Եվրախորհրդարանի 2005թ. սեպտեմբերի 28-ի Թուրքիայի առաջընթացի զեկույցում, որում հստակ նշվում է, որ որպես ԵՄ-ի լիիրավ անդամակցության նախապայման, Թուրքիան պետք է ճանաչի Հայոց ցեղասպանության փաստը: ԵՄ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի 2006թ. սեպտեմբերի 4-ի՝ Թուրքիային վերաբերող զեկույցում նույնպես տեղ է գտել Հայոց ցեղասպանության ճանաչման անհրաժեշտության դրույթը: Եվրախորհրդարանը այս փուլում 5 անգամ՝ 2000թ. նոյեմբեր, 2002թ. փետրվար, 2005թ. սեպտեմբեր և 2006թ. սեպտեմբեր, 2008թ. հոկտեմբեր, բանաձև է ընդունել Հայոց ցեղասպանության ճանաչման և Թուրքիայի վարքագծի դատապարտման վերաբերյալ¹: Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին ՄԱԿ-ի կոնվենցիան անկախ Հայաստանը ստորագրել է 1993 թվականին: Այդ կոնվենցիայի 50-ամյակի առիթով 1998թ. ՄԱԿ-ի Ժնևյան գրասենյակում ընդունվեց ցեղասպանության մասին նոր բանաձև, որի նախաձեռնողն ու հեղինակը Հայաստանի Հանրապետությունն էր:

Մարդու իրավունքների հանձնաժողովն ընդունել է ոչ միայն 1998, այլև 1999 և 2001թթ.՝ «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» բանաձևերը: 2008թ. Մարդու իրավունքների խորհուրդն ընդունել է «Ցեղասպանության կանխարգելման մասին» բանաձևը: Նշված բոլոր բանաձևերն ընդունվել են կուսենսուսով՝ վայելելով անգամ պետությունների լայն աջակցությունը²:

«Հայաստանը միջազգային շրջանակներում ձեռք է բերել ցեղասպանության դեմ պայքարող երկրի հեղինակություն (իմիջ), որը ճանաչում է նաև ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի՝ ցեղասպանության կանխարգելման հարցերով հատուկ ներկայացուցիչը: ՄԱԿ-ի՝ մարդու իրավունքների հանձնաժողովում

¹ Նույն տեղում:

² Հիշում եմ և պահանջում. Հայոց ցեղասպանության 100-րդ տարելից, Երևան, 2014, էջ 25:



Հայաստանը 2013թ. «Ցեղասպանության կանխարգելում» վերնագրով նոր քանաձև ներկայացրեց: Մասնակցեցին ՄԱԿ-ի անդամ բոլոր երկրները: Հետաքրքիր քննարկումներ տեղի ունեցան ակադեմիական շրջանակների, քաղաքական գործիչների և վերապրողների մասնակցությամբ: Հիշարժան էր Ռուանդայի ցեղասպանությունը վերապրած մի կնոջ զեկույցը, որը վերհիշելով Ռուանդայում իր ընտանիքի սարսափելի պատմությունը՝ անդրադարձավ հայոց ցեղասպանությանը, կրկնելով այն միտքը, որ եթե ժամանակին դատապարտվեր հայոց ցեղասպանությունը, հետագայում չէին լինի ուժեր, որոնք կհանդգնեին, կհամարձակվեին նման հանցագործություններ իրականացնել»¹:

Ցեղասպանության ճանաչման վերաբերյալ 25 երկրի բանաձև կա, բայց միայն Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի և Ռուսաստանի Դաշնության ընդունած՝ բանաձևերում է նշված, որ հայ ժողովուրդը ցեղասպանվել է իր բնօրրանում՝ Արևմտյան Հայաստանում, ինչը շատ կարևոր է և ենթադրում է հատուցում, իսկ մյուս բանաձևերն այդ իմաստով խիստ թերի են²:

Մենք՝ որպես պետություն և ազգ, սփյուռքով հանդերձ, հայեցակարգային առումով այնպիսի մարտավարություն պետք է վարենք, որ ամեն անգամ որևէ բանաձև որևէ երկրի խորհրդարան տանելուց առաջ հստակեցնենք, թե ճանաչելուց հետո հատուցման փուլը ինչպես պետք է կազմակերպվի, որն էլ կլինի հենց բանաձևի մեխը: Մենք մեկնարկային փուլից նոր ենք փորձում դուրս գալ և, բարեբախտաբար, հաջորդ փուլի նախաշեմին ենք: Ցանկացած երկրում լոբբինգ անելուց առաջ՝ պետք է գիտակցենք, որ բանաձևում հստակ ձևակերպումներ են պետք՝ ճանաչել, դատապարտել և հատուցել, այսինքն՝ ցեղասպանության հետևանքները վերացնել:

Եթե մենք հեռանկարում նպատակ ունենանք հարց բարձրացնել միջազգային ստյաններում, պետք է մինչ այդ կարողանանք միջազգային իրավունքում ամրագրել ցեղասպանության ճանապարհով ժողովրդին հայրենագրկելու համար նախատեսված պատասխանատվություն: Դրանով է Հայոց ցեղասպանությունը տարբերվում բոլոր համանման ոճիրներից, որովհետև թուրքական կառավարությունը այն իրականացրել է հայերին հայրենագրկելու նպատակով: Այսօր, մեր կարծիքով, ճանաչում և դատապարտում ձևակերպումը պետք է փոխարինվի կամ լրացվի հետևանքների վերացում կատեգորիայով: Ամփոփելով, փորձենք պատասխանել մի քանի կարևոր հարցերի.

- Արդյոք ժամանակակից Թուրքիան պատասխանատու է Օսմանյան կայսրությունում իրականացված ոճիրի համար:

- Չխորանալով Թուրքիայի իրավահաջորդության, հետևաբար և պատասխանատվության խնդրի մեջ, նշենք, որ, օրինակ, միջազգային օրենքի հայտնի մասնագետ Ալֆրեդ դե Ջայասի կարծիքով՝ հանցագործության

¹ Նույն տեղում, էջ 26-27:

² Մինասյան Է., նշված աշխ., էջ 5:



«պտուղներից» գիտակցաբար օգտվելը նույնպես պատասխանատվություն է առաջացնում: - *Ինչո՞ւ է Թուրքիան համառորեն ժխտում ցեղասպանության փաստը՝ դրանով իսկ ժխտելով սեփական պատմությունը:*

-«Թուրք ազգային ինքնությունը» խարսխված է պատմությունը խեղված ներկայացնելու վրա: «Հպարտ թուրքը» անկախության համար պայքարի պատմության փոխարեն կուզենա՞ իրեն տեսնել որպես ժառանգորդ հանցագործի, մարդասպանի, կոդոպտիչի: Նրա համար բացարձակ ժխտումը ավելի ձեռնտու է թվում, մանավանդ որ սկսում է զգուշանալ նաև փոխհատուցման խնդրից: Ինչպես նշում է թուրք հրապարակախոսներից մեկը, այսօր Հայոց ցեղասպանության ճանաչումը նշանակում է ամեն ինչ դնել սեղանին՝ հանրապետությունը, քեմալիզմը, պետությունը, պետական գաղափարախոսությունը, Թուրքիայի ռեժիմը, դեկավարներին, քաղաքական համակարգը, բանակը, ուսումնական ծրագրերը և այլն:

Ուստի թուրք հայտնի պատմաբան Թաներ Աքչամը իրավացի է, երբ պնդում է, որ Թուրքիայի Հանրապետությունը ցեղասպանության արդյունք է: -

Ինչո՞ւ է Թուրքիան կատաղի պայքար մղում տարբեր երկրների խորհրդարաններում հայկական բանաձևերի ընդունման դեմ և փորձում խնդիրը տեղափոխել «պատմական հարթություն»:

- Որովհետև ձգտելով անդամակցել Եվրամիությանը՝ Թուրքիան աստիճանաբար հայտնվում է միության անդամների, այդ թվում այն երկրների իրավական դաշտում, որոնց օրենսդիր մարմինները ճանաչել են Հայոց ցեղասպանությունը: Հետևաբար, առաջ է գալիս անլուծելի հակասություն հայերից թալանված գույքի ու հարստության պահպանման և ցեղասպանության զոհերի ժառանգների փոխհատուցման՝ փաստաթղթերով ապացուցվող պահանջների միջև:

Զարգացումների այս համատեքստում հայության կարևորագույն խնդիրներից մեկն է փորձագիտական մակարդակով Հայոց ցեղասպանության հետևանքով կորուստների փոխհատուցման լուրջ և մանրակրկիտ իրավաբանական հայեցակարգի մշակումը:

Ամփոփում

Հողվածում ներկայացված են Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման նոր փուլի առանձնահատկությունները՝ Թուրքիայի հասարակական կարծիքի փոփոխությունը Հայոց ցեղասպանության հարցում, նրա լայն քննարկումը և «տաբու» լինելու հանգամանքի վերացումը: Առաջարկվում է, ցեղասպանության ճանաչումից և դատապարտումից բացի, ավելացնել հետևանքների վերացման կատեգորիան: Բացատրվում և վերլուծվում են Թուրքիայի Հանրապետության ժխտողական քաղաքականության էությունն ու հետևանքները, հայության պահանջատիրության հարցի բարձրացման և իրավական դաշտ տեղափոխելու կարևորությունը: Անհրաժեշտություն է առաջանում միջազգային իրավունքում, ցեղասպանության կոնվենցիայում ամրագրվելու ցեղասպանությամբ ժողովրդին հայրենազրկելու համար նախատեսված պատասխանատվությունը և դրա

հետևանքով կրած կորուստների փոխհատուցման լուրջ և մանրակրկիտ իրավաբանական հայեցակարգի մշակումն ու իրագործումը:

Особенности современного этапа признания Армянского геноцида.

Осуждение и возмещение

Эдик Минасян

Резюме

Ключевые слова: Геноцид, признание, осуждение, возмещение, особенности, депортация армян, лишение родины, преступление, материальная ответственность, перемещение, покинутое имущество, культурный геноцид, политика отрицания, компенсация, юридическая концепция.

В статье представлены особенности нового этапа международного признания армянского геноцида, а именно, изменение общественного мнения Турции в вопросе признания армянского геноцида, его широкое обсуждение и устранение понятия “табу” в данном вопросе. Предлагается, помимо признания и осуждения геноцида, добавить категорию устранения последствий. Объясняются и анализируются сущность и последствия политики отрицания Республики Турция, важность поднятия и перенесения в правовую плоскость вопроса требования армян о компенсации. В международном праве возникает необходимость закрепить в конвенции о геноциде ответственность, предусмотренную за патрицид народа путем серьезной и тщательной разработки и реализации юридической концепции о компенсации понесенных вследствие этого потерь.

Peculiarities of the present stage of the Armenian Genocide recognition.

Condemnation and compensation

Edik Minasyan

Summary

Key words: Genocide, recognition, condemnation, compensation, peculiarities, the deportation of Armenians deprivation of homeland, crime, material liability, travel, abandoned property, cultural genocide, policy of denial, compensation, legal concept.

The article presents the peculiarities of a new stage in the international recognition of the Armenian genocide, namely the change in public opinion of Turkey on the issue of recognition of the Armenian Genocide, its broad discussion and elimination of the concept of "taboo" in this issue. It is proposed that in addition to the recognition and condemnation of genocide, a category of elimination of the consequences should be added. The nature and consequences of the Turkish policy of denial, the importance of lifting and transferring into the legal layer issue of the Armenians demand for compensation are explained and analyzed. In international law, there is a need to fix in the Genocide Convention, the responsibility provided for patriocide by serious and careful design and implementation of the legal concept of compensation incurred as a result of this loss.

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Ալեքսանդր Մանասյան

Փ.գ.դ., պրոֆեսոր

ԵՊՀ

***Բանալի բարեր.** Հայոց Եղեն/Ցեղասպանություն, եղենի թեմայի արծարծման արգելք, թուրքերի ցեղասպանական վարքի ակունքներ, Արևելյան Անդրկովկասի հայության /աղբրեջանահայության/ ցեղասպանություն, Եղենի միջազգային քաղաքական հետևանքներ, նոր ցեղասպան պետություններ, ցեղասպանություն և միջազգային ահաբեկչություն:*

Ապրիլին հայ ժողովուրդը խոնարհումով նշեց Մեծ եղենի անմեղ զոհերի հիշատակը: Այդ օրը մեզ հետ էր ողջ առաջադեմ մարդկությունը, որի համար 1915 թվականը և ապրիլի 24-ը դարձել են մարդկության դեմ անմենաձանր հանցագործության՝ ցեղասպանության դատապարտման ու կանխարգելման խորհրդանիշեր: Ողջ մարդկության դեմ կատարված այդ ոճրագործությունը գերտերությունների կողմից չի ստացել համարժեք Եղենին հաջորդած տասնամյակներին, երբ հայոց ցեղասպանության թեման գտնվել է արգելանքի տակ, ինչը վկայում էր կատարվածում հզորների ուղղակի կամ անուղղակի մեղքի մասին: Թե՛ լրության տասնամյակները, թե՛ աշխարհի հզորների մերօրյա անդրադարձները խնդրին, երբ հանված է հանցանքի հրապարակային արծարծման թաքուն, վկայում են, որ խնդիրը նրանց կողմից եղել ու այսօր էլ մնում է քաղաքականացված: Եղենագործության ճանաչման ու հատուցման խնդիրները նրանցից յուրաքանչյուրը տեսնում է իր շահերի դիտակետից: Եվրոպան, օրինակ, դրանում առաջին հերթին տեսնում է դեպի արևմուտք Թուրքիայի ծավալապաշտական նկրտումներն ու ժողովրդագրական գրոհը զսպելու միջոց: Միացյալ Նահանգները տարիներ շարունակ *ցեղասպանություն* եզրի օգտագործումը դարձրել էին քաղաքական առևտրի առարկա՝ խուսափելով ոճիրն իր բնույթին համարժեք որակելուց, և հայտնի չէ, թե ինչպիսի վարք կդրսևորի Վաշինգտոնը հարյուրամյա տարելիցից հետո, երբ օրակարգում դրվեն իրական փոխհատուցման հարցերը: Դա մեզնից պահանջում է որդեգրել ավելի սթափ դիրքորոշումներ ու իրատեսական մոտեցումներ:

Վերջին տարիներին հայկական դիվանագիտության նախաձեռնությունները նպաստել են, որպեսզի համաշխարհային հանրության համար ավելի հստակ երևան ապաշխարանքից ու իր պատմության հետ առերեսումից մերօրյա Թուրքիայի հրաժարվելու իրական շարժառիթները և իր քաղաքական վարքով ցեղասպան Օսմանյան կայսրության հետևորդը լինելու իրողությունը:

Հայոց ցեղասպանությունը՝ մարդկության դեմ կատարված ծանրագույն այդ հանցագործությունը, երկարատև լռությունից հետո նոր է դարձել քաղաքագիտական քննարկումների առարկա: Փաստական նյութերի հավաքման, ընդհանրացումների, հիմնավորումների ու տեսական մեկնաբանման կարոտ բազմաթիվ հարցեր դեռ սպասում են իրենց ուսումնասիրությանը: Կարծում ենք՝ Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցը կդառնա նոր բացահայտումների ու շատ հարցերի նորովի իմաստավորման հանգրվան: Ստորև մենք կանդրադառնանք դրանցից մի քանիսին համառոտ դիտարկումների ձևով:

Առաջին դիտարկում: Նախ՝ Արևմուտքում վաղուց շրջանառվող և խնդրի հանրային ընկալումը կաղապարող *«Օսմանյան կայսրությունում հայոց ցեղասպանությունը 1915-1923 թթ.»* բանաձևի մասին: Հատուկ հիմնավորումներ պետք չեն բացահայտելու համար, որ այդ ձևակերպումը, հակառակ հանրահայտ ու անհերքելի փաստերի, ոճիրը աշխարհագրորեն կապում է միայն և միայն Օսմանյան կայսրության հետ: Հայոց ցեղասպանությունը, այո, ծրագրվել ու առաջ է տարվել Օսմանյան կայսրությունում: Սակայն նույն ուղեգիծը որդեգրել են նաև Թուրքիայում իշխանության եկած երիտթուրքերը, որոնք թե՛ մինչև սուլթանի հեռացումը իշխանությունից, թե՛ դրանից հետո մասնակցել են հայերի բնաջնջմանը կայսրությունում ու նրա սահմաններից դուրս՝ Նախիջևանում, Պարսկաստանի հյուսիս-արևմտյան տարածքներում, Արևելյան Անդրկովկասում:

Մերօրյա խնդիրների համատեքստում մեզ հատկապես աններելի է թվում Արևելյան Անդրկովկասում հայերի կոտորածների անտեսումը: Փաստը լռության մատնելը բացատրություններ, իհարկե, ունի: Տասնամյակներ շարունակ Արևմուտքը ջանք չէր խնայում իր ռազմավարական դաշնակից Թուրքիային ազատելու XX դարի սկզբին գործած հացանքի մեղքից՝ այն բաժին թողնելով պատմությունը լքած Օսմանյան կայսրությանը:

Պատմական փաստը գրեթե նույնատիպ շարժառիթներով անտեսում էր նաև խորհրդային Մոսկվան, որը «կարմիր հեղափոխությունը» մահմեդական արևելք արտահանելու իր ծրագրերում Թուրքիայի ու Խորհրդային Ադրբեջանի համար նախատեսել էր Արևելքում հեղափոխության ջահակիրների դերակատարությունը: XX դարի վաթսունական թվականներին, երբ արդեն հանված էր թեմայի արծարծման թաբուն, Մոսկվան հանդուրժեց *«Օսմանյան կայսրությունում հայոց ցեղասպանությունը 1915-1923 թթ.»* բանաձևի շրջանառումը՝ խստագույնս հետևելով, որ անդրադարձներ չլինեն Արևելյան Անդրկովկասում հայկական կոտորածներին, որոնց հիշատակումները պիտի խաթարեին ժողովուրդների «լենինյան բարեկամության» գաղափարախոսու-

թյունը¹: Գոնե լուծության պատենշը կոտրելու խնդրով մտահոգ մեր պատմագիտական ու քաղաքական միտքը այդ տարիներին չի անդրադարձել հիմանխնդիրն աղճատող այդ բանաձևի իմաստաբանությանը, ուշադրություն չդարձնելով այն բանի վրա, որ այն ոճիրի հանցակազմից դուրս է թողնում Արևելյան Անդրկովկասի հայության ցեղասպանությունը:

Հարցին չեն անդրադարձել նաև Եղեռնը վերապրածների գոյատևության ու հայապահպանության հարցերով ծանրաբեռ Միյուռքի մեր մտավորականները, որոնք աշխատում էին գաղթականների արևմտահայ զանգվածի հետ:

Մրանք բացատրություններն են այն բանի, թե ինչպես է անցյալ դարի կեսերից տեղեկատվական հոսքերում ու գիտական գրականության մեջ ամրագրվել աղբրեջանահայության ցեղասպանությունն անտեսող **«Օսմանյան Կայսրությունում հայոց ցեղասպանությունը 1915-1923 թթ.»** բանաձևը: Բայց այսօր, երբ մենք ազատվել ենք խորհրդային գաղափարական կապանքներից ու քաղաքական արգելանքներից, երբ տասնյակ երկրներ, այդ թվում և եվրոպական տերությունները, հայոց ցեղասպանության ճանաչումը դարձրել են Թուրքիայի հետ իրենց հարաբերությունների կարգավորման պայման, այլևս աններելի է խնդրի էությանը համարժեք հարցադրումները չմտցնել քաղաքական օրակարգ:

Կան դրան խանգարող հանգամանքներ՝ նախկին մտածողության թափը, հարցի ըմբռնման նախկինից եկող կարծրատիպերը: Մեզանում կա խորը արմատավորված կարծիք, թե հայերի Եղեռնը Արևմտյան Հայաստանում, Արևելյան Հայաստանում և Արևելյան Անդրկովկասում իբրև թե տարբեր, միմյանց հետ կապ չունեցող ցեղասպանական ակտեր են: Շրջանառության մեջ է դրված այն դրույթը, թե մենք կարծեգրկենք Օսմանյան կայսրության կողմից իրագործված ցեղասպանության փաստը, եթե զուգահեռաբար հիշատակենք Ռուսահայաստանում և Արևելյան Անդրկովկասում նույն թուրքերի կողմից իրագործված բնիկ հայության կոտորածների մասին: Ինչ-որ անհարմարություններ, իրոք, ծագում են, եթե մենք Արևմտյան Հայաստանում և նրա սահմաններից դուրս իրագործած հայկական կոտորածները արհեստականորեն տարանջատում ենք մեկը մյուսից և դրանց մասին խոսում իբրև տարբեր ուժերի կողմից տարբեր ժողովուրդների նկատմամբ իրագործված ակտեր, այն դեպքում, երբ իր էության մեջ դրանք նույն ցեղասպանության տարբեր ակտերն են: Նույնն է ոճրագործը, նույնն է զոհը: Մենք անտեսել ու շարունակում ենք անտեսել ակնհայտ այդ հանգամանքն այն դեպքում, երբ 1918 թ. Արևելյան Անդրկովկասում հայերի կոտորածները

¹ Փաստաթղթերի մի զգալի մասը ներկայացված է 2003-ին Երևանում լույս տեսած «Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ.» փաստաթղթերի ժողովածուի մեջ:

կարող է լինել հենց Օսմանյան կայսրությունում հայոց Եդենի գլխավոր ապացույցը: Եվ ահա թե ինչու:

Գլխավոր «փաստարկը», որով Անկարան հակադարձում է ներկայացվող մեղադրանքին, հանգում է այն պնդմանը, թե իբր թուրքերը չեն ունեցել ցեղասպանության կանխապես մտածված ծրագիր, բայց տեղահանել են հայերին պատերազմի մեջ գտնվող Օսմանյան կայսրության նկատմամբ նրանց անհուսալիության պատճառով: Տարհանված հայերի քարավանների հետ ճանապարհին խաժամուժի հարձակումների հետևանքով պատահած «դժբախտ դեպքերը», ինչպես պնդում է պաշտոնական Անկարան, ցեղասպանություն որակել չի կարելի¹: Մինչ օրս այս «հիմնավորումը» Եդենի ուրացման թուրքական փաթեթի հիմնական փաստարկն է: 1918 թ. Նախիջևանում և Արևելյան Անդրկովկասում տեղի ունեցած դեպքերը այդ կեղծիքը քողագերծում են անառարկելի ձևով: 1918 թ. ոչ թե թուրք ու քուրդ խաժամուժը, այլ թուրքական կանոնավոր բանակն է Բաքու տանող ամբողջ ճանապարհին հրկիզել հայկական բնակավայրեր ու սրի քաշել դրանց խաղաղ բնակիչներին և հետո նույնը արել Բաքվում միայն այն բանի համար, որ նրանք հայ են: Անհերքելի այդ փաստը Արևմտյան Հայաստանում տեղահանությունների «հիմնավորման» թուրքական թղթապանակում տեղ չի թողնում անհուսալիության մասին կեղծ դրույթի համար, քանի որ Արևելյան Անդրկովկասում իրենց պապենական հողերում դարեր ի վեր ապրող հայերը ոչ Օսմանյան կայսրության քաղաքացիներ են եղել, որպեսզի անհուսալի որակվեն և ոչ էլ որևէ վտանգ են ներկայացրել կայսրության կամ Թուրքիայի համար²:

¹ Այն նորից հնչեցվեց Թուրքիայի վարչապետ Ախմետ Դավութոջյուի կողմից Մեծ Եդենի հարյուրամյա տարելիցի նախօրեին՝ ապրիլի 20-ին: «Թուրքիան, ասված է նրա հայտարարության մեջ, սգում է այն հայերի հարազատների հետ, որոնք դարձել են Առաջին աշխարհամարտի ընթացքում հայ բնակչության նկատմամբ Օսմանյան կայսրության քաղաքականության զոհեր... Մենք նորից հարգանքով հիշում ենք օտտոմանյան հայերի մասին, որոնք զոհվեցին 1915 թ. տեղահանության ժամանակ և կիսում ենք ցավը նրանց զավակների ու թոռների հետ: Տես՝ <http://www.versia.am/axmet-davutoglu-vyrazil-sochuvstvie-rodstvennikam-pogibshix-v-pervoj-mirovoj-vojne-armyan/>

² Կոտորածները երկրատարածքի ժողովրդագրական դեմքը փոխելու նպատակն էին հետպնդում: Հրկիզվեցին տասնյակ ու տասնյակ հայկական ու ուղիական բնակավայրեր: Եթե 1914 թ. , օրինակ, Նուխու, Գեոկչայի, Շամախու և Արեշի գավառներում 73526 մարդ էր, ապա 1921 թվականին այդ թիվը նվազել էր գրեթե վեց անգամ (12716 մարդ): Եթե Նուխու գավառում հայերը 1917 թվականին կազմում էին բնակչության 20,2 տոկոսը, ապա թուրքական ռազմարշավից ու մուսավաթական տիրապետությունից հետո 2,4 տոկոսը: Պատկերը գրեթե նույնն էր մյուս գավառներում: Աղդաշի գավառում, օրինակ, ուր հայերը ազգաբնակչության 19,5 տոկոսն էին կազմում, գրեթե հայ չմնաց (0,7 տոկոս): Ի դեպ՝ նույն ճակատագրին արժանացան ռուսական բնակավայրերը հատկապես Սալյանի ու

Երկրորդ դիտարկում: Սակայն հարցը միայն Եղեռնի աշխարհագրական սահմանների ճշտագրումամբ չի սպառվում: Պակաս կարևոր չէ ոճիրի ժամանակային սահմանների ներկայացման խնդիրը: 1915-ի ապրիլի 24-ը հայոց Եղեռնի հիշատակման խորհրդանշական օր է և այն չի կարելի համարել հայասպանության թուրքական քաղաքականության սկիզբ, ինչպես դա ներկայացվում է *«Օսմանյան Կայսրությունում հայոց ցեղասպանությունը 1915-1923 թթ.» բանաձևում*: Ժողովուրդը 1915-ը համարել ու համարում է ցեղասպանական ամենադաժան արարքների տարի ու առանձնացնում է այն որպես Մեծ եղեռնի տարի¹:

Սակայն մարդկության դեմ կատարած այդ հանցագործության քաղաքական բովանդակությունը ավելի շատ խեղաթյուրում է ոչ այնքան 1915-ը վրիպումով կամ կանխամտածված ձևով ցեղասպանության սկիզբ համարելը, որքան այդ քաղաքականության ժամանակային սահմանափակումը 1923-ով՝ Օսմանյան կայսրության պատմության ավարտով: Կատարված ոճիրը համաշխարհային պատմությունից դուրս մղելու, հանցագործության ուրացման մինչ օրս շարունակվող փորձերը, Եղեռնի զոհերի ինչքի սեփականումը, Հայաստանի Հանրապետությունը և Արցախը շրջափակման օղակում խեղդելու գործելակերպը, հայոց դարավոր մշակության ժառանգության յուրացումը կամ ոչնչացումը ցեղասպանությունից փրկվածների բռնի դավանափոխումն ու թուրքացումը՝ ցեղասպանության շարունակությունն են, որ տասնամյակներ իրագործել ու շարունակում է իրագործել հանրապետական Թուրքիան, պետություն, որ հիմնել են Եղեռնին անմիջականորեն մասնակցած այդ երկրի քաղաքական ուժերը: Այդ ուժերն են ցեղասպանությունը դաժրել այլ ժողովուրդների հետ հարաբերվելու թուրքերի ազգային քաղաքական մշակույթ, և դա այդպես է, քանի դեռ թուրք հասարակության՝ ցեղասպանական գաղափարախոսության կրող այդ զանգվածը, այլ ոչ թե դրանց ընդդիմացողներն են որոշում Եղեռնի ճանաչման հարցում պետական քաղաքականությունը: Թուրքական հասարակության մեջ այդ խավի գերակշիռ դիրքն է ցեղասպանությունը դարձրել այլ ժողովուրդների

Լենքորանի գավառներում: 1914 թ. տվյալներով այդ շրջաններն ունեին 40800 ռուս ազգաբնակչություն, որից 1921 թվականի մնացել էր ընդամենը 14921 ռուս (տվյալները ըստ՝ БЭС, т.1, 1926, стр. 642):

¹ Մենք դրանով նոր բան չենք ասում: Թեմային նվիրված գրականության մեջ այդ հանգամանքին բազմաթիվ անդրադարձներ են եղել: Ջոն Կիրակոսյանը փաստը ավելի ընդգծելու համար այն ամրագրել է իր՝ “Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (1915-ց մինչև մեր օրերը)” (Երևան, 1983) գրքի վերնագրում և նրանում առանձնացրել հատուկ գլուխ՝ «Օսմանյան կայսրությունը խորտակվեց: Հայասպանությունը շարունակվեց»: Զարմանալի է, որ պաշտոնական մեր փաստաթղթերում տեղ գտած ձևակերպումներն ու բանաձևումները շրջանցում են այդ իրողությունը:

հետ հարաբերվելու թուրքերի ազգային քաղաքական վարք: Այդ հանգամանքն է միավորում մի կողմից՝ թուրք ժողովրդի և մյուս կողմից՝ Օսմանյան կայսրության և հանրապետական Թուրքիայի պատասխանատվությունը կատարված ոճրագործության համար: Այդ հանգամանքն է միավորում «ցեղասպան Թուրքիա» և «ցեղասպան թուրք»¹ հասկացությունները, որոնք տարածաշրջանի և նրա սահմաններից դուրս ապրող ժողովուրդները ընկալել են որպես հոմանիշներ ու ամրագրել բերնից բերան անցնող “Այստեղով անցել է թուրքը”, “Թուրքը մնում է թուրք” լայնորեն հայտնի արտահայտություններում²: Հայոց ցեղասպանության իրական հանցագործը ազդեցիկ ազգայնականությամբ վարակված այն թուրք զանգվածն է, որի ձեռքերում են գտնվել պետական իշխանության լծակները թե՛ Օսմանյան կայսրությունում, թե՛ հանրապետական Թուրքիայում, զանգված, որն ինքն իրեն շարունակում է վերարտադրել հասարակության բոլոր շերտերում՝

¹ Իր “Турецкое национальное “Я” и армянский вопрос” (М., 1955) գրքում Թաներ Ակչամը «Участие гражданского населения в геноциде» վերնագրով հատուկ ենթաբաժին է հատկացրել (էջ 114-119) այդ հարցին: Բավական է թերթել թեմային նվիրված փաստագրական կամ վերլուծական գրականությունը, համոզվելու համար, որ *ամբողջ* թուրքական քաղաքական մշակույթի դրսևորման բանալի երևույթն է: 1918 թ. Բաքվի մարտյան դեպքերի ականատեսներից մեկը, ըստ Մայքլ Մմիթի, մարդկանց կատաղի այդ զանգվածը անվանել է սև ամբոխ - *qara deste*. Տես՝ Майкл Смит. Память об утратах и азербайджанское общество // Азербайджан и Россия: общества и государства. М., 2001, стр. 95.

² Փոքր Ասիա թափանցած քոչվոր թուրքերը կարող էին ունենալ կենցաղային սովորույթներ, հեքիաթներ, հիշողությաններ ու միջեր արոտավայրեր գրավելու համար մղած ճակատամարտերի մասին, բայց չէին կարող ունենալ, այսպես ասած, ներքին քաղաքական պատմություն, որը նրանց ինքնության անորոշության կամ պակասավոր ինքնության պատճառ դարձավ նաև հետագա դարերում: Նստակեցության անցնելուց հետո նրանց քաղաքական պատմության սկիզբ կարող է համարվել 1326 թվականին Օսմանի գլխավորությամբ Բուրսայի գրավումը և այն նոր պետության մայրաքաղաք հռչակելը: Մեփական գրի ու գրականության ու ազգային պատմության բացակայության պայմաններում իսլամը լցրեց քաղաքական ու մշակութային ինքնության դատարկությունը: Արաբն ու պարսիկը, որոնցից նա ընդունել էր իսլամը, հազարամյակների քաղաքական պատմության ու գրավոր մշակույթի տերեր էին: Օսմանցի թուրքը, որ երեկվա քոչվորն էր, ասպատակելու, ավերելու ու զավթելու «մշակույթից» բացի, բարձր կարգի որևէ արժեք չունեի ուրիշների կամ ինքն իրեն ներկայանալու համար և մինչև 20-րդ դարը պիտի ներկայանար «ես մուսուլման եմ» կամ «օսմանցի եմ» ինքության այցետմսով: Գրականության մեջ լայնորեն տարածված այն կարծիքը, թե իբր իսլամը դուրս է մղել ազգային թուրքի ինքնությունից և մոռացության մատնել նրա պատմությունը, գուրկ է հիմքերից (դրանց քննությունը տես Танер Акчам. “Турецкое национальное “Я” и армянский вопрос”, М., 1955, стр. 19-34):



պետական վերնախավից ու ստորադաս վարչական օղակներից սկսած մինչև «շաքբային թուրքը»¹:

Երրորդ դիտարկում:

Թուրքական քաղաքակրթության ցեղասպանածին բնույթը XX դարում դրսևորվել է ոչ միայն Օսմանյան կայսրությունում և նրա սահմաններից դուրս հայերի, հույների ու ասորիների բնաջնջման, այլև ազգասպանության նույն մշակույթից սերված պետություններ հիմնելու տեսքով: Նա արդեն հիմնել է քաղաքակրթական իր գենը կրող երկու պետություն՝ Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը՝ հույների, իսկ Ադրբեջանական Հանրապետությունը՝ Նախիջևանի և Արևելյան Անդրկովկասի հայության ցեղասպանության ճանապարհով: Արևելյան Անդրկովկասում թուրքական նախագծով առաջին պետությունը այսպես կոչված Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունն էր, որը 1918-ի սեպտեմբերին հիմնեցին հայերի կոտորածներով Բաքու հասած թուրքական զորքերը: XX դարում երկրատարածքում ապօրինաբար «Ադրբեջան» անունը կրող պետությունների կերպափոխությունները, որոնցից առաջինը Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունն էր, երկրորդը՝ Խորհրդային Ադրբեջանը, երրորդը՝ մերօրյա Ադրբեջանական Հանրապետությունը, նրանցում անփոփոխ են թողել Ռուսական կայսրությունում *կովկասյան թաթար*, իսկ Խորհրդային Միությունում՝ *ադրբեջանցի* անվանումը կրող էթնիկ թուրք այն զանգվածի ցեղասպանածին վարքը, որ նա պատմականորեն ուներ թուրքական քաղաքական մշակույթի կրողը լինելու հանգամանքով և որի ձեռքերում հայտնվել էր իշխանությունը խորհրդային Բաքվում: Նոր ադրբեջանական ազգ ձևավորելու ստալինյան նախագծի պատանդ դարձած բոլշևիկյան կենտրոնը չտեսնելու է տվել հանրապետությունից հայերի դուրս մղման Բաքվի քաղաքականությունը, որն արդեն յոթանասունականներին հանգեցրել է Նախիջևանի հայաթափմանը, իսկ 1988-ին, Սումգայիթից սկսած, ստացել է հայերի զանգվածային ջարդերի բնույթ: Բայց միայն ադրբեջանահայությունը չէր Խորհրդային Ադրբեջանում ցեղասպանության քաղաքականության թիրախը: Արևելյան Անդրկովկասում և Նախիջևանում խորհրդային տարիներին տարվում էր բնիկ իսլամադավան ժողովուրդների բռնի ուժացման քաղաքականություն: Դրան դիմագրավելու միակ ձևը յուրօրինակ ազգային ընդհատակ անցնելն էր, որտեղ այսօր գտնվում է լեզգիների, թալիշների, թաթերի, քրդերի մեծ մասը: ԽՍՀՄ գոյության վերջին տարիներին երբեմնի բազմազգ Խորհրդային Ադրբեջանի էթնիկական քարտեզից «անհետացել էին»

¹ Ցեղասպանության ուրացման, պատմական փաստը ագրեսիվ քաղաքականությամբ ժխտելու մերօրյա Թուրքիայի վարքը ցույց է տալիս, որ նա պատրաստ չէ ապաշխարանքի և ուրեմն չի փոխել ցեղասպանածին իր բնությունը և որ այդ իմաստով նա գլոբալ քաղաքակրթական վտանգ է իրենից ներկայացնում

երկրամասի՝ բռնությամբ «ադրբեջանցի» դարձած իսլամասական բոլոր ժողովուրդները: Բնիկներից մնացել էին միայն հայերը, որոնց կոտորածներով դուրս մղեցին Ղարաբաղյան շարժման տարիներին: Այն, ինչ տեղի է ունեցել Արևելյան Անդրկովկասում «Ադրբեջան» անունը կրող արհեստածին պետություններում ոչնչով չի տարբերվում Թուրքիայում տեղի ունեցած և տեղի ունեցող այն գործընթացներից, որոնք ծավալվում են այդ երկրներում պետական իշխանությանը տիրացած թուրքերի¹ կողմից ոչ թուրք ազգերի ու ազգությունների նկատմամբ: Այդ ընդհանրությունն այն է, որ թուրքը թե՛ Փոքր Ասիայում իրենց կողմից գրաված տարածքներում, թե՛ Հարավային Կովկասում, որտեղ նա քողարկվել է կամ “մուսուլման”, կամ “կովկասյան թաթար”, կամ էլ “ադրբեջանցի” կեղծ էթնիական դիմակների տակ, հետևողականորեն տարել ու տանում է տարածաշրջանի այլ ազգերի սպանության ու բռնի ուժացման քաղաքականություն: Արևելյան Անդրկովկասի հայության ցեղասպանությունը նույն թուրքական ցեղասպանական քաղաքականության արդյունքն ու հետևանքն է թե՛ թուրքերի ազգային վարքի, թե՛ Թուրքիայի կամ նրա կողմից հիմնած թուրքական պետությունների պետական քաղաքականության համատեքստում: Պատահական չէ, որ Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջափակումը Թուրքիան և Ադրբեջանական Հանրապետությունը իրագործում են համատեղ: Պատահական չէ, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ սանձազերծած պատերազմում հայկական բնակավայրերն էին հրետակոծությունների ու ումբակոծությունների թիրախը: Պատահական չէ, որ Ադրբեջանական Հանրապետությունում սումգայիթյան ցեղասպանության հանցագործներին ու Բուդապեշտում իր հայ գործընկերոջը կացնահարած Ռամիլ Սաֆարովին հերոսացնում են այնպես, ինչպես Թուրքիայում հերոսացվում են Եղեռնի գլխավոր հանցագործներ Թալյաթն ու Էնվերը: Նույն ժողովուրդն է, նույն քաղաքական վարքը: Դա բաց տեքստով բացահայտել է Հեյդար Ալիևը իր “Մեկ ազգ, երկու պետություն” բանաձևով: Նախկին Խորհրդային Ադրբեջանում հայերի ցեղասպանությունը հայոց ցեղասպանության թուրքական քաղաքականության դրսևորումն է, և միջազգային հանրությանը այն այդպես էլ պիտի ներկայացվի: Ցավոք, առայժմ մենք ինքներս ենք անտեսում այն հայոց

¹ Թուրքերի, բայց ոչ թյուրքերի: Այս ճշգրտումը խիստ կարևոր է, քանի որ Անկարայի ու Բաքվի տեսաբանները հաճախ են փորձում իրենց կողմից իրագործած եղեռնագործության մեղսակիցը դարձնել թուրքական մյուս ժողովուրդներին, պնդելով, թե ցեղասպանության հարցում թուրքերին ներկայացվող մեղադրանքը ընդհանրապես թուրքական էթնոսին հասցված վիրավորանք ու մեղադրանք է: Մոռանում են, որ 1990 թվականի Բաքվի հունվարյան ջարդերից փրկվածները ապաստան էին գտնում Թուրքմենիայում և միջինասիական թուրքական մյուս հանրապետություններում:

քաղաքական պատմությունից դուրս թողնելով մեր ժողովրդի նշանակալից մի հատվածի պատմությունն ու տարագիր ներկան՝ բավարարվելով միայն Մեծ եղեռնի հուշարձանի հարևանությամբ Սումգայիթի ու Բաքվի ջարդերի զոհերի հիշատակին հուշարձաններ կանգնեցնելով: Ընդգծենք նորից՝ Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցը այդ փաստը միջազգայնորեն ընկալելի դարձնելու առիթ կարող է լինել:

Չորրորդ դիտարկում:

Հատուկ քննության կարիք ունի թուրքական ոճրագործության որակումը: Անկասկած, այն համապատասխանում է *“ցեղասպանություն”* հասկացության միջազգայնորեն ընդունված սահմանմանը: Բովանդակայնորեն հասկացությունն ընդգրկում է այն ընդհանրությունները, որ բնորոշ է ցեղասպանական տարբերակներին և չի արտացոլում նման ակտերի առանձնահատկությունները: Միայն հրեաներին է հաջողվել հասնել այն բանին, որ նացիստական Գերմանիայի կողմից իրենց հանդեպ իրագործած ցեղասպանության առանձնահատկությունն արձանագրող *ռոջակիզում*՝ հասկացությունը ստանա միջազգայն տարածում: *Ռոջակիզումը*՝ որպես ցեղասպանության եղանակ, ընդգծում է նույն ազգին պատկանող մարդկանց բնաջնջման միջոցը՝ գազախցերում վառելը: Հայոց ցեղասպանությունը ևս ունի առանձնահատկություն, և դա այն է, որ ողջ մի ժողովուրդ սրի է քաշվել իր հայրենիքում: Թուրքերի կողմից իրագործած ոճրագործության հետևանքով հայը զրկվել է իր հայրենիքից: Հայոց ցեղասպանության այդ առանձնահատկությունը արտացոլված է *Եղեռն* հասկացության մեջ, և ժամանակն է, որպեսզի *ժողովրդի ցեղասպանությունն իր հայրենիքում* բովանդակությունն ունեցող այդ հասկացությունը հենց մեր միջոցով շրջանառվի և ամրագրվի միջազգային փաստաթղթերում: Դա է ցեղասպանության հատուցման հստակեցման ամենակարճ ուղին:

Հինգերորդ դիտարկում

Օսմանյան կայսրությունում, հանրապետական Թուրքիայում և Արևելյան Անդրկովկասում «Ադրբեջան» անունով կոչված պետություններում հայերի ցեղասպանությունը, անշուշտ, չի կարող հետք չթողնել ազգային մեր հոգեկերտվածքի վրա: Այն կարող է դառնալ հուսահատության ու ընկճվածության բարդությունների պատճառ: Մենք պետք է անպայման կանխենք դա այն դրույթի հնչեղությամբ, որ ցեղասպանության ենթարկված հայ ժողովուրդը, հակադարձելով ճակատագրի հարվածներին, XX դարում հիմնել է երկու ինքնիշխան պետություն՝ Հայաստանի Հանրապետություն և Արցախ: Մեր նոր սերնունդներին մենք պետք է դաստիարակենք անսահանջ վրեժխնդրության ոգով: Բայց այդ վրեժխնդրությանը չպիտի տրվի “թուրքին՝ թուրքի ձևով” պատասխանելու իմաստը: Իհարկե մենք պետք է ազգային մեր քաղաքական օրակարգից չհանենք հայրենասիրության գաղափարը: Սակայն վրեժի ամենահրատապ, ամենաառաջնային, ամենահեռանկարային, ամենաարժանի ձևը համաշխարհային քաղաքակրթական բարձունքներին, գիտության ու

մշակույթի բարձունքներին հասնելը, այդ հարցերում թուրքին, և ոչ միան թուրքին, գերազանցելը պիտի լինի: Սրանք պիտի դառնան մեր նոր սերնդի դաստիարակության շարժիչներն ու ուղենիշները:

Մենք լավ ենք գիտակցում, որ սույն փաստաթղթի բոլոր դրույթներին հենց այսօր և միանգամից չէ, որ պիտի հնչեղություն տրվի կամ դրվի քաղաքական օրակարգում: Բարձրացրված հարցերի մի մասի պաշտոնական որդեգրումը ենթադրում է որոշակի քաղաքական ու տեղեկատվական նախապատրաստություն: Բայց կարծում ենք, որ քաղաքական նպատակահարմարության նկատառումներից անկախ ամեն մի հայ ազգային մեր այդ հիմնախնդրին վերաբերող փաստերի մասին պետք է ունենա դրանց իրական բնույթին համապատասխանող պատկերացումներ, որոնք մենք աշխատել ենք սույն փաստաթղթով ներկայացնել:

Ամփոփում

Վերիմաստավորման կարիք ունեն Հայոց ցեղասպանության՝ համամարդկային այդ աղետի արդեն իսկ հայտնի փաստերը, հանրային ընկալումը կաղապարող հասկացություններ և ձևակերպումները, այդ թվում և լայնորեն շրջանառվող «Օսմանյան կայսրությունում հայոց ցեղասպանությունը 1915-1923թթ.» բանաձևը, որը չի համապատասխանում մարդկության դեմ գործած այդ հանցագործության փաստական ու քաղաքական բովանդակությանը: Առայսօր թուրքական ռճիրի հանցակազմից դուրս է մնում Արևելյան Անդրկովկասի հայության ցեղասպանությունը:

Международно-политические последствия геноцида армян

Александр Манасян

Резюме

Ключевые слова: *Егерн|Геноцид армян, запрет на обсуждение темы Егерна, истоки геноцидального поведения турок, Егерн армянства Восточного Закавказья, армянство Азербайджана, международно-политические последствия Егерна, новые геноцидогенные государства, международный терроризм.*

Многие факты, понятия и формулировки, относящиеся к геноциду, нуждаются в переосмыслении, в том числе, широко распространенная и задающая рамки общественного восприятия проблемы формула: «Геноцид армян в Османской империи в 1915-1924гг.», которая не соответствует фактическому и политическому содержанию преступления. По сей день вне состава преступления остается геноцид армянства Восточного Закавказья.

International-Political Consequences of Yeghern

Alexandr Manasyan

Summary

Key words: *Armenian genocide/Yeghern, taboo on the discussion about Yeghern's issue, sources of genocidal behaviour of Turks, the Yeghern of Armenians in Eastern Transcaucasia, Armenians of Azerbaijan, international-political consequences of Eghern, new genocidal states, unpunished genocide as a source of modern terrorism.*

Numerous facts, concepts and statements concerning Yeghern (The Armenian Genocide) await new interpretation. On the eve of the 100th anniversary of The Armenian Genocide we draw the attention of the world community to some of these facts. The principal conclusion of this analysis stems from the concept which proclaims that the widely held and published formula of «The Armenian Genocide in the Ottoman Empire in 1915-1923» does not fully reflect the factual and political content of the crime against humanity. In particular, the massacres of the Armenians in Transcaucasia in 1918 and 1920 escaped the corpus delictiof the crime of genocide.

1920թ. ՄԱՐՏԻ 23-Ի ՇՈՒՇԻԻ ԶԱՐԴԵՐԸ ՈՐՈՇԵՄ 1915թ. ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔ

Վահրամ Բալայան

*Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԼՂՀ ԱԺ պատգամավոր, ԱրՊՀ*

1918թ. մայիսի վերջերից սկսած նորաստեղծ Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը բոլոր հնարավոր ու անհնարին միջոցներով ձգտում էր տիրանալ Արցախին: Երկրամասի հայությունը անզիջում պայքարում էր իր պետականությունն ու անկախությունը պահպանելու համար: 1919թ. հունվարից մուսավաթական կառավարության ներկայացուցիչ Խոսրով բեկ Սուլթանովը, հաստատվելով Շուշիում, անգլիացիների օժանդակությամբ փորձում է իրագործել Ադրբեջանի հայասպան ծրագրերը:

1920թ. սկզբներին Սուլթանովը Ղարաբաղի Ազգային Խորհրդից պահանջում է վերջնականապես ենթարկվել մուսավաթական Ադրբեջանին: Միաժամանակ նա հրամայեց մուսավաթական բանակը տեղաշարժել և կենտրոնացնել ռազմական նշանակություն ունեցող կետերում՝ Զանգեզուր ներխուժելու միտումով:

Ստեղծված իրավիճակը քննարկելու համար 1920թ. փետրվարի 28-ից մինչև մարտի 5-ը Շոշ գյուղում հրավիրվեց արցախահայության ութերորդ համագումարը, որը մերժեց Սուլթանովի պահանջը և գտավ, որ օգոստոսի 22-ի համաձայնագիրն Ադրբեջանի կողմից պարբերաբար խախտման հետևանքով կորցրել է իր ուժը: Համագումարը մուսավաթական կառավարությունից պահանջում է վերջ տալ կոտորածներին, այլապես “նման դեպքերի կրկնությունը կստիպի Լեռնային Ղարաբաղի հայությանը իրենց կյանքն ու պատիվը պաշտպանելու համար դիմել համապատասխան միջոցների”¹: Կազմակերպվեց Ղարաբաղի պաշտպանության կենտրոնական մարմինը՝ ջանքերն ենթադրում իր ճյուղավորումներով²:

Մարտին սկսվեց համաժողովրդական ապստամբություն: Ադրբեջանական ուժերի հարձակումը սկսվեց 1920թ. մարտի 22-ի երեկոյան: Ապստամբության ղեկավարները, քանի որ լավ չէին հաշվարկել ուժերի հարաբերակցությունը, սկզբում անհաջողություններ ունեցան:

Թուրքերը, մեծաքանակ զորքեր կենտրոնացնելով Շուշիում, 1920թ. մարտի 23-ին հրի մատնեցին և թալանեցին հայկական թաղամասը: Խաղաղ բնակչության սարսափելի սպանդ կազմակերպվեց:

Հազարավոր հայեր զոհվեցին, հրի մատնվեց քաղաքի հայկական թաղամասը, կրակի ճարակներից փրկված հայերի գույքն ու կայքը բաժին

¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 16, գ. 563, թ. 29-35:

² “Խորհրդային Ղարաբաղ”, թիվ 257, 1989:

հասավ թուրքերին: Թուրքերը այս եղենագործությունը կազմակերպեցին արդեն ունենալով համապատասխան փորձառություն, և, օգտվելով իրենց համար նպաստավոր պայմաններից ու անպատժելիության մթնոլորտից, փորձեցին են Արևելյան Հայաստանը նույնպես արժանացնել Արևմտյան Հայաստանի ճակատագրին:

1920թ. Շուշիի մարտյան ջարդերի կազմակերպիչները առաջնորդվեցին 1915թ. ապրիլի 24-ի եղենագործության ժամանակ երիտթուրք առաջնորդների գործելաոճով և նախօրոք մշակված ծրագրով: Հայտնի է, որ 1915թ. ապրիլի 24-ին զանազան կեղծ ու շինծու պատրվակներով Կ.Պոլսում բանտարկում ու աքսորում են ավելի քան 800 հայ մտավորականներ, հասարակական, քաղաքական գործիչներ, արվեստագետներ, գիտնականներ, բժիշկներ, ուսուցիչներ: Այդ ծրագրի իրագործումը նպատակ ուներ ոչնչացնելու ոչ միայն հայ մտավորականության ծաղիկը, այլև ժողովրդին գրկել ինքնապաշտպանությունը կազմակերպող կարող ուժից:

1920թ. մարտի 22-ին Խոսրով բեկ Սուլթանովի հրամանով ձերբակալում են շուշեցի 400 նշանավոր հայերի և նետում թուրքական թաղամասում գտնվող բանտը: Դեպքերի ականատես Գրիգոր Մինասբեկյանը գրել է. “Խեղճ Իվան Բեկը /խոսքը վերաբերում է Եղիշե Իշխանյանի հորը-Վ.Բ./ բանտում լինում է առաջին զոհը, որովհետև պահանջած է լինում, որ իրեն տանեն Խոսրով Բեկ Սուլթանովի մօտ՝ իմանալու, թե ինչու են ձերբակալել մարդկանց, որոնք ոչ մի բանից տեղեկություն չունեն և անմասն են: Տեղնուտեղը սպանում է Իվան Բեկը, ապա սրածում են բոլոր բանտարկեալները: Անկարելի է գրչով նկարագրել թուրքերի գործած խժոժություններն ու գազանությունները”¹:

Բարբարոսաբար ոչնչացվեց երբեմնի շեն ու շենշող հայոց Շուշին: Այդ մասին Հրաչյա Աճառյանը գրել է. “... աղբիքեղանցի ազգայնամոլները գիշերային հանկարծական հարձակում գործեցին հայոց վրա և կրակ տվին: Այդ գիշերը ուժեղ քամի էր: Քամին տարածեց հրդեհը, չոր թախտափուշերը հեշտությամբ վառվեցին, և ամբողջ քաղաքը հրո ճարակ դարձավ: ... Այդպես դատարկվեց Շուշին ու մեռավ:

... Շուշվա կործանման առթիվ վրացական մի թերթ գրել էր. “Կովկասում մի աղամանդ կար, թուրքերը փշրեցին այդ աղամանը”:

Ղարաբաղցիք, ինչպես հայտնի է, լավ կռվողներ են եղել միշտ և այդ օրն էլ կարող էին դիմադրել, բայց, ինչպես ասացի, հարձակումը բոլորովին հանկարծակի եղավ, և հայերն էլ ոչ մի պատրաստություն չունեին”²:

Շուշիի ջարդերից փրկված անօթևան մարդկանց օգնելու նպատակով Թիֆլիսում 1920թ. հունիսի 30-ին հրավիրվում է խորհրդակցություն և որոշվում դոկտոր Ռուբեն Յուզբաշյանին գործուղել Արցախ: Ռուբեն Յուզբաշյանը երկու

¹ Եղիշե Իշխանեան, Լեոնային Ղարաբաղ /1917-1920/, Երևան, 1999, էջ 579:

² Աճառյան Հր., Կյանքիս հուշերից, Երևան, 1967, էջ 255:

անգլիացի սպաների ուղեկցությամբ հասնում է Շուշի և քաղաքին լավ ծանոթ լինելով, շրջելով բոլոր թաղամասերը, ականատես է լինում սահմեղեցուցիչ տեսարանների. "... ամենուրեք աւերակների կոյտ է,- պատմել է Ռուբեն Յուզբաշյանը,- և չափազանց ծանր տպավորութիւն է թողնում մարդուս վրայ հէնց առաջին վայրկեանից: Մատերի վրայ համարուղ մի քանի շենքեր են կանգուն մնացել՝ գորանոցը, ռէալական դպրոցի շենքը, եկեղեցիները և կիսաւեր վիճակում՝ զանազան թաղամասերում մի շարք շենքեր: Աւերակ թաղամասերում հանդիպել է մարդկանց, հայերի իհարկէ, որոնք իրենց աւերակ կամ կիսաւեր տներում փնտրտութիւններ էին կատարում, տեսնելով իրեն, մօտենում են և մէկը ճանաչելով սկսում է զանգատել, խոր դժգոհութիւն յայտնում և անիծում են մարդկանց, որոնք թշառութեան են մատնել ժողովրդին: Նրան հետևեցին միւսները և պատմեցին, թէ ինչպէս իրենք անտեղեակ են եղել ... հանգիստ քնած իրենց տեղում, յանկարծ տակն ու վրայ է լինում ամեն ինչ, տները վառում են իրար ետևից, մարդիկ լեղապատառ, գլուխները կորցրած աջուձախ վագում, շատերը սպանում և ով կարողանում է, իրեն գցում է Քարին տակ գիւղը, շատերն էլ գերի են ընկնում: ... Պատմում էին, որ աննկարագրելի է այն ընտանիքների վիճակը, որոնք գիւղերում ազգական և բարեկամ մարդիկ չունէին, որ նրանց օգնութեամբ կարողանային ապրել: Նրանք, որոնք Թիֆլիս կամ Բագու աշխատող ձեռքեր ունեն, օգնութիւն ստանում են կամ փոխադրում են իւրայինների մօտ: Ընդհանուր առմամբ պատկերը աւելի քան տխուր է և ընկճող. հնարաւոր չէ նկարագրել խօսքով կամ գրչով: ... թուրքերը գազազել, անգթութիւններ են գործել, կանանց աղջկերանց բռնաբարել¹:

Թիֆլիսում տպագրվող "Սլովո" թերթը 1920թ. ապրիլի 16-ին գրել է. "քաղաքի հայկական թաղամասում քարը քարի վրա չի մնացել"²:

Շուշիի հայկական ջարդերի մասնակից Ադրբեջանի բանակի սպա Ալիմարդանբեկովն իր եղբորը հղված նամակում գրել է. "Քո տեսած հայկական Շուշին հիմնովին վառված է: Թողնվել է 5-10 տուն: Հազարից ավելի հայեր գերի են վերցված: Ոչնչացրել ենք բոլոր տղամարդկանց, նույնիսկ խալիֆին /Վահան եպիսկոպոսին,- Վ.Բ./, բոլոր հայտնի և հարուստ մարդկանց: Մուսուլմանները թալանել են հայերի անթիվ անհաշիվ հարստությունները և այնքան են հարստացել, որ լկտիացել են"³:

1936թ. հունվարի 21-ին, Կրեմլում, խորհրդային Ադրբեջանի պատվիրակության հետ հանդիպման ժամանակ, վերհիշելով Շուշիի եղեռնագործությունը, Ս.Օրջոնոկիձեն ասել է. "Ես այսօր ևս սարսափով եմ հիշում այն պատկերը, որ մենք տեսանք 1920թ. մայիսին: Հայկական

¹ Եղիշե Իշխանեան, նշվ. աշխ., էջ 623:

² "Слово", 16 апреля, 1920.

³ Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարան, ֆ.2, գ.5, էջ 107:



գեղեցկագույն քաղաքն ավերվել, ոչնչացվել էր հիմնովին, իսկ ջրհորներում մենք տեսել ենք կանանց ու երեխաների դիակներ¹:

Ինչու Բաքվում նստած մուսավթական կառավարությունը հենց Շուշին դարձրեց իր հարվածի հիմնական թիրախը: Դա ուներ մի շարք պատճառներ.

ա/ Շուշին տվյալ ժամանակաշրջանում հայկական երկրորդ պետության մայրաքաղաքն էր, որտեղ կենտրոնացված էին քաղաքական ինստիտուտները, երկրի կառավարման լծակները: Ոչնչացնել այդ ամենը՝ նշանակում էր գլխատել երկիրը և ժողովրդին մատնել անտերության: Մուսավթականներին թվում էր, թե ավերելով մայրաքաղաքը՝ արցախահայությանը կհուսալք և թևաթափ ժողովուրդը կհանձնվի Ադրբեջանի ողորմությանը, ասել կուզի՝ կկլանի հայկական երկրամասը և վերջնականապես կլուծի իր գերինդիրը:

Պատահական չէ, որ ջարդերից քիչ անց՝ մարտի 30-ին մուսավթական կուսակցության խորհրդի ժողովը, իսկ ապրիլի 1-ին Ադրբեջանի խորհրդարանը ընդունեց բանաձևեր, որոնցում գոհունակությամբ էին նշում կատարվածը, ապա սպառնում ավելի դաժան գործողություններ իրականացնել, եթե հայերը չհնազանդվեն²:

բ/ Շուշին, լինելով քննարկվող ժամանակաշրջանի հայկական մշակութային ու լուսավորչական կյանքի առաջատար օղակներից մեկը, ազատամիտ ոգու ջահակիրն էր, աննկուն հերոսների, արվեստների, գրականության, գիտության նշանավոր գործիչների ծննդավայրը հանդիսանալով՝ յուրօրինակ և չկրկնվող դերակատարություն ուներ հայոց քաղաքակրթական համակարգում: Ոչնչացնելով այդ մարգարիտը՝ մուսավթականներին և նրանց ուսուցիչներին՝ պանթուրանական հովերով տարված թուրք ոճրագործներին՝ 1915թ. ցեղասպանության մեղսագործներին, թվում էր, թե դրանով կկտրվի հայոց պատմական առաքելության կենարար զարկերակը, և ժողովուրդը հետագա տասնամյակներում կնետվի անեության և ստրկամտության գիրկը:

գ/ Շուշին ոչ միայն Արցախի կենտրոնն էր, այլև աշխարհագրական տեսանկյունից հայկական երկրամասը ՀՀ-ին կապող հիմնական օղակը: Շուշիի ոչնչացմամբ հայկական երկրամասի կապը մայր հայրենիքի հետ համարյա անհնարին էր դառնում: Ճիշտ է, Բերդաձորի ենթաշրջանի գյուղերը շարունակում էին պայքարել, բայց դրանք բազմիցս ավերվեցին և հայկական Շուշիի բացակայության պայմաններում նրանց գոյությունը և համարյա անհնարին էր դառնում: Մյուս կողմից էլ, վերացնելով այդ բնակավայրերը Ղարաբաղի դաշտավայրերում հանգրվանած թուրքական ցեղերը լայն հնարավորություն են ստանում կապելու հայկական Քաջաթաղը /այդ ժամանակների Հաջի Սամլուն- Վ.Բ/ վաղուց նվաճած քրդերի՝ իրենց հավատակիցների հետ:

¹ “Ազատ Արցախ”, 23 մարտի, 2000:

² “Աзербայджан”, 2 апреля, 1920.

դ/ Շուշիում հայկական ջարդերի կազմակերպման համար պակաս կարևոր հանգամանք չէր նաև քաղաքում թուրքական թաղամասի առկայությունը: Տասնամյակների ընթացքում Շուշիից հայ գործարար խավը եռանդի, նախաձեռնող շնորքի, նպատակալաց աշխատանքի շնորհիվ իրենց ձեռքում էր կենտրոնացրել առևտուրը, արդյունաբերությունը, արհեստները և դրա շնորհիվ կուտակել պատկառելի կապիտալ, որն էլ դրվել էր հայկական թաղամասի ծաղկման ու բարգավաճման վրա: Ստեղծելով եվրոպական ճաշակի և ինքնատիպ ճարտարապետական նկարագիր ունեցող քաղաք՝ Շուշիի հայերը, կամա թե ակամա, առաջացնում էին իրենց կողքին ասիական կենցաղով ու բարքերով ապրող հետամնաց, ռիսկալ և մոլեռանդ թուրքերի հակակրանքը, զայրույթը և ատելությունը: Հենց նրանք էլ իրենց հավատակից ու ազգակից օսմանյան թուրքերի կանոնավոր գորքերի հետ իրագործեցին Շուշիի հայերի ցեղասպանությունը:

Շուշիի հայերից թալանած կայքին ու գույքին հիմնականում տեր դարձան քաղաքի եկվոր թուրք բնակիչները: Դեպքերին ժամանակակից Աբրահամ Կիսիբեկյանը իր “Հուշեր”-ում գրել է. “Նա մեզ տվավ Մուրթուզա անունով մի ուսուցչի հասցե և ասաց. – գնացեք, ձեր աշխատավարձը ստացեք նրանից: Մենք, գտնելով նրա բնակարանը, բարձրացանք պատշկամբը և սրբելով մեր ոտները՝ մտանք սենյակը: Սենյակի պատերն ու հատակը ծածկված էին գորգերով: Երկու թե երեք գորգի ծայրերին գործած էր հայկական տառեր. Ինչպես երևում էր, այս 50-55 տարեկան, 20-25 տարվա թուրք ուսուցիչը ևս մասնակցել էր Շուշվա հայերի տների թալանմանը: Ես նրան ճանաչում էի դեռ մինչև սովետական իշխանությունը”¹:

Մի հետաքրքիր փաստ ևս. Շուշին հայաթափելուց հետո քաղաքի թուրքերը հայկական բնակավայրում սկսեցին իրենց տեր զգալ: 1920թ. մարտյան ողբերգությունից հետո նրանք իրենց մեռելներին սկսեցին հուղարկավորել Շուշիում: Մինչ այդ՝ Փանահ խանից սկսած մինչև 1920թ. մարտ ամիսը նրանք լավ գիտեին, որ Արցախում հյուր են և այդ թաղումները կատարում էին Արցախի սահմաններից դուրս:

Շուշիի հայկական թաղամասը ավերվելուց մի քանի ամիս անց՝ հայ մտավորականները՝ Դ.Անանը, Տ.Նազարյանը, Երևանում և եվրոպական երկրներում փորձում էին դրամահավաք կազմակերպել՝ հայկական բնակավայրերը վերաշինել և եղեռնից փրկվածներին նորից վերադարձնել իրենց տները:

Այդ ծրագիրը խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը խափանեց: Մուսավաթական թուրքերի կատարած գործը իր ավարտին հասցրին բոլշևիկ գործիչները:

¹ Կիսիբեկյան Աբրահամ, Հուշեր, հ.2, Երևան, 2011, էջ 97:

1921թ. 400 շուշեցիներ դիմում են Լեռնային Ղարաբաղի կենսոգործկումի նախագահ Արմենակ Ղարապետյանին՝ խնդրելով թույլ տալ վերադառնալ հայրենի քաղաք, վերաշինել տները և բնակվել այնտեղ: Խորհրդային Ադրբեջանի դրածոն մերժեց այդ խնդրանքը: Դրա փոխարեն հարևան թուրքաբնակ և քրդաբնակ գյուղերից սկսեցին մահմեդականների տեղափոխել Շուշի և հայերի շուրջ 800 երկհարկանի կիսավեր տները տրամադրեցին նրանց¹:

Շուշին լիովին հայաթափելուց հետո խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը արգելեց Շուշին դարձնել ԼՂԻՄ կենտրոն:

Ավելին, ԼՂԻՄ սահմանները ճշտող հանձնաժողովի անդամ Միր Զաֆար Բադիրովը 1923թ. հոկտեմբերի 8-ին ԱԿ/Բ/Կ Կենտկոմին հայտնում է, որ անհրաժեշտ է Բերդաձորի և Ստեփանակերտի արանքում գտնվող թուրքաբնակ Խալփալու, Զարսլու, Մուսուլմանլար գյուղերը, ինչպես նաև Շուշի քաղաքն ընդգրկել Քրդստանի օկրուգի կազմի մեջ²:

Հայ ժողովրդի պարծանքը հանդիսացող հայաշունչ ու հայաբույր Շուշին խորհրդային ողջ ժամանակահատվածում, մինչև նրա ազատագրումը՝ 1920թ. մարտյան հայկական ջարդերից սկսած և հասած 1992թ. մայիսի 9-ը, արցախահայության համար դարձել էր համակենտրոնացման ճամբար, վախի, սարսափի, տխուր և անհեռանկար, անհույս ապագայի խորհրդանիշ:

1921թ. հունվարին Շուշիում տեղի ունեցած դեպքի ականատեսը պատմում է. “Ես և Լամբարոնը կանգնած էինք պատշգամբում և զրուցում էինք, երբ տեսանք մի մեծ խումբ մարդկանց՝ շրջապատված ասկյարներով, բերին “Խանեն աղջկա” աղբյուրի մոտ գտնվող ազատ տարածությունը: Բացի ասկյարներից, շրջապատել էր նաև թուրք ամբոխը և քարերով, փայտերով խփում էին այդ կապած կռներով մարդկանց: Ես և Լամբարոնը սարսափում էինք այդ տեսարանից, որը կատարվում էր մեր աչքի առջև: ... ամբոխը ծեծելով այդ մարդկանց՝ քեց դեպի բանտը:

Տրոնավարգ գյուղից բերած 60-65 մարդկանց քշելով հինավուրց բերդի մեջ՝ սկսեցին կոտորել քարերով, դագանակներով ու սրերով: Մի քանի մարդիկ, որոնք վիրավորված մնացել էին դիակների տակ, ուշքի գալով, դուրս են գալիս զիշերը ու փախչում”³:

Խորհրդային իշխանության կողմից Շուշիում ստեղծվել էր “հեղափոխական դատարան” կամ ավելի շատ հայտնի “տրոյկա”-ն, որը առանց դատ ու դատաստանի գնդակահարում էր բերդաքաղաք բերված հայերին: Իսկ արդեն 1960-ական թվականներին Բերդաձորի գյուղատնտեսը Շուշիի կենտրոնում

¹ Տե՛ս Կիսիբեկյան Աբրահամ, հ.1, Երևան, 2011, էջ 7, նույնը, հ.2, էջ 143:

² Տե՛ս WWW.irs-az.com/100331140534plf, Վ.Բալայան, Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, Ստեփանակերտ, 2012, էջ 178:

³ Կիսիբեկյան Աբրահամ, նշվ.աշխ, հ.2, էջ 158-159:

սպանվեց ԼՂԻՄ մարզգործկոմի նախագահ Ջ.Բեգլյարովի եղբոր կողմից և մնաց անպատիժ: Քաղաքում սպանել են երաժշտական տեխնիկումի հայ պահակին և որդուն: Ստեփանակերտի անտառտնտեսության ավտովարորդ Սուրեն Ուլուբաբյանին Շուշիում ատրճանակով սպանել են միայն այն պատճառով, որ նրա ազգանունը համապատասխանում էր Բագրատ Ուլուբաբյանի ազգանվան հետ:

Հայկական թաղամասը հողի երեսից վերջնականապես ջնջելու և ինքնատիպ ճարտարապետական կառույցները վերացնելու մարմաջով տարվա 1960-ական թվականներին քանդեցին հազարավոր հայկական շենքեր, շինություններ: Դա ավարտելուց հետո սկսեցին հաշվեհարդար տեսնել նաև քրիստոնեական 6 հայկական, 1 ռուսական, 1 հայ-ռուսական գերեզմանատների հետ:

Դեռևս 1950-ական թվականներից Բաքվի թերթերում տպագրվում էին “աշխատավորների” նամակներ, որոնցում կոչ էր արվում ոչնչացնել հայկական գերեզմանատները: Եվ ահա 1966թ. Բաքվում “Ստրոիտել” թերթում հրատարակվեց ոմն “ճարտարապետ” Բ.Սաիդովի “Մեռածները կերան ապրողներին” հոդվածը, որտեղ հեղինակը առաջարկում էր քանդել Շուշիի 8 գերեզմանատներից 7-ը և միայն թողնել գործող աղբբեջանականը¹:

Շուտով այդ վայրագ ծրագիրը իր արտացոլումը ստացավ 1974թ. կազմված Շուշիի գլխավոր հատակագծում: Նախատեսվում էր հայկական գերեզմանատների տեղը կառուցել բազմահարկ շենքեր և զբոսայգի: Շուշիի հյուսիսային հատվածում գտնվող գերեզմանատան միջով անց կացվեց նոր ճանապարհ, որի կարիքը քաղաքը ամենևին չէր զգում: Ռուսական գերեզմանատունը վեր էր ածվել անասունների փարախի:

Միայն Արցախի հայության պայքարի շնորհիվ² հաջողվեց փրկել գերեզմանատների մի մասը, որտեղ պահպանվող հայատառ գերեզմանաքարերը երբեմնի հայկական չնաշխարհիկ քաղաքի փառավոր անցյալի լուռ վկաներն են: Այսօր Շուշին նորից իր տերերի ձեռքում է և հառնում է ավերակների միջից:

Մարիետա Շահինյանը իրավացիորեն գրել է. “Բայց կանցնեն տարիներ, գուցե և տասնամյակներ, և Շուշի կգան զբոսաշրջիկներ, այս անգամ արդեն ոչ թե նրա գեղեցկության և կլիմայի համար, այլ նրանում եղած ամբողջ Անդրկովկասի համար ուսանելի դասի համար, այն դասի, որի նմանը մենք տեսել ենք Պոմպեյում և Հերկուլանում: Միայն թե այնտեղ գործող անձը եղել է բնության

¹ “Строитель”, н.9, 2 февраля, 1966.

² 1960թ. ամռանը Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն Վիկտոր Համբարձումյանի և Սերո Խանգադյանի ուղեկցությամբ եղել է Շուշի քաղաքում: Հայկական գերեզմանատների անխնամ վիճակը տեսնելով՝ կաթողիկոսը կշտամբանքի խոսքեր է ուղղել քաղաքի թուրք ղեկավարներին:

կույր տարերքը, իսկ այստեղ մարդկային զանգվածի կողմից գրգռված գազանի կույր տարերքը՝ մարդկային ստոր խոսքի օգնությամբ¹:

1921թ. Ս.Օրջոնկիձեն, լինելով Շուշիում, տեսնելով ավերված հայկական քաղաքը, գրել է. “Անցյալ տարի, նախքան խորհրդային իշխանության հաստատվելը, հայկական Շուշի քաղաքը խայտառակ ձևով ոչնչացնելը, բռնաբարություն, կոտորած, երեխաներին ու կանանց հորերն ու անդունդը գցելը,- այս է Անդրկովկասում նացիոնալիզմի տիրապետության անփառունակ շրջանը: Կանցնի ժամանակ, կրքերը կմեղմանան, և մեր սերունդները անեծքով կհիշեն նրանց, ովքեր եղել են այս նողկալիության հանցավորները”²:

Ցավոք, բոլշևիկյան կուսակցությունը և խորհրդային վարչակարգը Շուշիի հայկական ջարդերին իրավական գնահատական չտվեցին և հանցագործներին պատժելու համար համապատասխան քայլեր չձեռնարկեց: Ավելին, այդ ոճրագործության հեղինակների մի մասը բարձր պաշտոն ստացավ և դարձավ նորելուկ խորհրդային Ադրբեջանի հենասյուն: Խոսքով բեկ Սուլթանովը, Շուշիի ջարդերից երկու ամիս անց, դարձավ հեղկոմի ղեկավար: Եղեռնագործության կազմակերպիչները հետագայում դարձան Արցախի հարևանությամբ գտնվող խորհրդային Ադրբեջանի շրջանների ղեկավարները: Ժամանակակիցը գրել է. “Երկու-երեք տարի է ապրում եմ այս շրջանում՝ Աղդամում, եղել եմ ցարական և թե Ադրբեջանի իշխանության օրոք: Ցավով պիտի արձանագրեմ, որ ոչինչ չի փոխվել: Սուլթանովի տեղը Մամեդովն է, Մեխմանդարովի տեղը՝ Գադիմովը: Դերակատարները փոխվել են, դերերը մնացել են նույնը: ... Աղդամում նստած թուրք հայտնի կոմունիստ Մ.Թ. բեկն այն անձնավորությունն է, որ Ղարաբաղի կոնվներին Սուլթանովի աջ թևն էր, որն անձամբ թալանել է Շուշիում կոտորածի ժամանակ: Երբ պատահաբար տեսա այդ գորգերը, որոնց վրա հայերեն տառերով գրված էր “Շուշի” անունը, նա կարմրեց”³:

Շուշիի հայության՝ դարերի ընթացքում ստեղծածը մի քանի ժամերի ընթացքում ոչ միայն հրդեհվեց ու ավերվեց, այլև այդ ամենի մի մասը դարձավ թուրքերի սեփականությունը: Դա ոգևորիչ էր թուրքերի համար: Տարիներ անց՝ Շուշիում Ադրբեջանի գրողների արտագնա նստաշրջանում գրող Ռասուլ Ռզան Շուշիի 1920թ. մարտյան հայկական ջարդերը ներկայացրել է որպես ադրբեջանական ժողովրդի փառապանծ սխրանք, նշելով, որ “Ադրբեջանական ժողովուրդը այստեղ՝ Շուշիում է գրել իր պատմության ամենափառավոր էջը, և դուք պարտավոր եք այդ չմոռանալ երբեք”: Իսկ բանաստեղծ Նաբի Խազրին իր ցեղակիցներին պոետական խոսքով կոչ է անում. “Շուշվա ճանապարհին դու լավ ճանաչիր քո բարեկամին և թշնամուն”⁴:

¹ Մկրտչյան Շ., Արցախյան գրառումներ, Երևան, 2001, էջ 175:

² Օրջոնկիձե Գ., Ընտիր հոդվածներ և ճառեր, Երևան, 1950, էջ 75:

³ Խաչենցի, Ղարաբաղի դրությունը, “Դրոշակ”, հմ. 12, 1928, էջ 333-334:

⁴ Ուլուբաբյան Բ., Փորձության օրերի խորհուրդը, Ստեփանակերտ, 2010, էջ 92:

Արցախահայությանը երկար ժամանակ հոգեբանական տեսանկյունից գոհի կարգավիճակում պահելու, քաղաքի նախկին ազգաբնակչությանն իրենց օջախները վերադառնալու և վերաշինելու գործին խոչընդոտելու նպատակով Ադրբեյջանի իշխանությունների հրահանգով մինչև 20-րդ դարի 60-ական թվականների կեսերը Շուշիի ավերակները պահպանվեցին: Հրաշքով փրկված Ղազանչեցոց եկեղեցին ու Կանաչ ժամը երկար ժամանակ մնացին կիսավեր վիճակում: Այդ ամենի փոխարեն արագաթափ վերանորոգվեց Շուշիի մզկիթը: Հայկական հին շինությունների մի մասի կամարածն լուսամուտներն ու շքամուտքերը սլաքածն դարձրին՝ փորձելով դրանք ներկայացնել որպես մահմեդական ճարտարապետական արվեստի նմուշներ:

Մարիետա Շահինյանը քաղաքի ավերումից մի քանի տարի հետո, լինելով Շուշիում, “Լեռնային Ղարաբաղ” գրքում գրել է. “Ես տեսա Շուշիի կմախքը: Իմ առաջ հառնում էր երկու բլուր, որոնք ծածկված էին ավերված շենքերի կմախքներով: Քարից բացի ոչինչ չի մնացել, ոչ տանիք, ոչ դուռ, ոչ պատուհան, ոչ հատակ, ոչ երկաթ, ոչ ծառ, ոչ տախտակ, ոչ փայտամած, ոչ մեխ, միայն քարեր, քարեր ու քարեր՝ ինչպես անատոմիական կմախքի մաքրված ու կրծած չորացած ոսկորները:

Առաջինը, որից ապշեցի, լռությունն էր: Այդպիսի լռություն ես չեմ զգացել երբեք և ոչ մի տեղ: Այն անչափ անբնական էր: Հանկարծ մարդուն թվում էր, թե լռությունը քրտմնջում է, քարերը շշնջում են, օրորվում, խշխշում և գլխիդ մազերը ցից-ցից կանգնում են: Այստեղ 1920թ. մարտին երեք օրվա ընթացքում ավերվել ու հրկիզվել է 7 հազար տուն, և մորթվել են, թվերը տարբեր են, ոմանք ասում են երեք-չորս հազար, ոմանք էլ ավելի քան 12 հազար հայ: Փաստն այն է, որ երեսունհինգ հազար հայերից Շուշիում անգամ մեկ հայ չի մնացել”¹:

1930 թվականին Օսիպ Մանդելշտամը, լինելով Շուշիում, այդ հոգեցունց տեսարանները ներկայացրել է “Ֆայտոնչի” բանաստեղծության մեջ: Բանաստեղծի կինը՝ Նադեժդան, հետագայում գրել է. “... Այդ քաղաքում, որը ըստ երևույթին մի ժամանակ հարուստ էր ու բարեկարգ, ակնհայտ երևում էր ավերման ու կոտորածի պատկերը: ...Ասում են, որ ջարդերից հետո բոլոր ջրհորները լցված էին դիակներով: Իսկ նրանք, ովքեր ողջ են մնացել, փախել են մահվան քաղաքից...”²:

Անպատժելիությունը ծնեց նոր ոճագործություն: Եթե խորհրդային իշխանության արշալույսին ավերվեց քաղաքամայր Շուշին, ապա այդ նույն կարգերի մայրամուտին եղեռնագործության ենթարկվեցին Սումգայիթի, Բաքվի, Գանձակի և մյուս քաղաքների ու գյուղերի հայությունը:

Այսպիսով՝ Ադրբեյջանի մուսավաթական կառավարությունը, օգտվելով 1915թ. Մեծ եղեռնից հետո ստեղծված անպատժելիության մթնոլորտից,

¹ Шагинян М., Нагорный Карабах, Москва, 1930, стр. 41-42.

² Мандельштам, Сочинение в двух томах, т. 1, Москва, 1990, стр. 107.



առաջնորդվելով երիտթուրքական կուսակցության գործելաոճով, նույն դաժանությամբ 1920թ. մարտի 23-ին ոչնչացրեց հայոց Շուշին: Ժամանակին ծաղկող հայկական քաղաքը՝ “փոքրիկ Փարիզը”, ինչպես շատերը անվանում էին, հիմնովին կործանվեց, հայ ժողովրդի սրտում ավելացնելով նոր չսպիացած վերք, իսկ Ադրբեջանի համար այն մնաց որպես բարբարոսության, նախատինքի խարան:

Հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ դժվար է գտնել մեկ ուրիշ քաղաք, որն իրեն կերտող ժողովրդի կյանքում խաղացած լինի հակասական, ավելի ճիշտ՝ ճակատագրական դեր, ինչպես Շուշին: Այն մի կողմից հայոց բազմաբնույթ և բազմաշերտ կենսագրության ջրբաժան հանդիսացավ՝ նոր լիցք հաղորդելով հայ ժողովրդի ստեղծագործ ոգուն, մյուս կողմից էլ՝ կորուստների ու մաքառումների գողգոթա դարձավ:

Ամփոփում

Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը, օգտվելով 1915թ. Մեծ եղեռնից հետո ստեղծված անպատժելիության մթնոլորտից, առաջնորդվելով երիտթուրքական կուսակցության գործելաոճով, նույն դաժանությամբ 1920թ. մարտի 23-ին ոչնչացրեց հայոց Շուշին: Ժամանակին ծաղկող հայկական քաղաքը՝ “փոքրիկ Փարիզը”, ինչպես շատերը անվանում էին, հիմնովին կործանվեց՝ հայ ժողովրդի սրտում ավելացնելով նոր չսպիացած վերք, իսկ Ադրբեջանի համար այն մնաց որպես բարբարոսության, նախատինքի խարան:

Հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ դժվար է գտնել մեկ ուրիշ քաղաք, որն իրեն կերտող ժողովրդի կյանքում խաղացած լինի հակասական, ավելի ճիշտ՝ ճակատագրական դեր, ինչպես Շուշին: Այն մի կողմից՝ հայոց բազմաբնույթ և բազմաշերտ կենսագրության ջրբաժան հանդիսացավ՝ նոր լիցք հաղորդելով հայ ժողովրդի ստեղծագործ ոգուն, մյուս կողմից էլ՝ կորուստների ու մաքառումների գողգոթա դարձավ:

**Погромы армян Шуши 23 марта 1920г. как следствие
безнаказанности за Геноцид армян 1915г.**

Ваграм Балаян

Резюме

Начиная с конца мая 1918г. новообразованное мусаватское правительство, всеми возможными и невозможными способами, пыталось завладеть Арцахом. Местные армяне бескомпромиссно боролись сохранить свою государственность и независимость. С января 1919г. представитель мусаватского правительства Хосров бек Султанов, утверждаясь в Шуши с помощью англичан, пытался реализовать планы Азербайджана по уничтожению армян.

В начале 1920г. Султанов требовал от Национального Совета Карабаха полностью подчиняться Азербайджану. В то же время он приказал мусаватской армии передвигаться и централизоваться в военно-важных пунктах с целью вторжения в Зангезур.

В марте началось общенациональное восстание. Атака военных сил Азербайджана началась в ночь 22 марта 1920г. Так как руководители восстания не хорошо рассчитали соотношение сил, сначала потерпели неудачу.

Турки, централизуя большое количество войск, 23 марта 1920г. сожгли и ограбили армянский квартал. Была организована жестокая резня мирного населения.

Погибли тысячи армян, армянский квартал города был сожжен, спасенное от пожара имущество досталось туркам. Турки организовали этот геноцид уже имея соответствующий опыт, и пользуясь выгодными для них условиями и атмосферой безнаказанности пытались Восточную Армению удостоить судьбы Западной Армении.

Руководители мартовских погромов 1920г. руководствовались заранее обдуманым планом и такими же действиями, которые были молодыми турками во время геноцида 1915г.

К сожалению, большевистская партия и Советский режим не дали правовую оценку армянским погромам и не были приняты соответствующие меры для наказания преступников. Вдобавок, некоторые из организаторов преступления получили высокие должности и стали фундаментом новообразованного Советского Азербайджана.

Безнаказанность стала причиной нового преступления. Если на рассвете Советской власти был разрушен город Шуши, то на закате этого же режима были жестоко убиты армяне других городов и сел.

Очевидно, что армянский народ может сопротивляться таким бедствиям только в условиях национальной государственности.

Азербайджанское мусаватское правительство, пользуясь атмосферой безнаказанности за геноцид 1915г. и руководствуясь действиями партии молодых турков, такой же жестокостью 23 марта 1920г. уничтожили армянский город Шуши. В свое время процветающий город, как многие называли “Маленький Париж”, был полностью разрушен, добавив новую неизлечимую рану в сердце армянского народа, а для Азербайджана – это останется позорным вандализмом.

The Massacre of the Armenians of Shushi on March 23, 1920 as a Consequence of Impunity of the Armenian Genocide in 1915

Vahram Balayan

Summary

Beginning from the end of May in 1918 the newly-proclaimed Azerbaijani government, dominated by the Musavat party, aimed to occupy Artsakh with all possible and impossible means. The Armenians of the land uncompromisingly struggled to keep its statehood and independence.

From January 1919 the representative of the Musavat government Khosrov bek Sultanov, with the support of the British, was appointed as a governor in Shushi, tried to carry out anti-Armenian extermination programs.

At the beginning of 1920 Sultanov demanded from the National Council of Karabakh fully comply with Azerbaijan. At the same time he ordered Musavat army to move and centralize in militarily significant points with the intent of intruding Zangezur.

Nationwide uprising started in March. The attack of armed forces of Azerbaijan began in the evening of March 22, 1920. As the leaders of uprising didn't correctly calculate the balance of forces they failed.

The Turks, centralizing a large number of troops in Shushi on March 23, 1920, robbed and burnt the Armenian neighborhood. A brutal massacre of civilians was organized.

Thousands of Armenians were assassinated, the Armenian district of the city was burned and the salvaged from the fire property went to the Turks. The Turks organized this genocide, already having a proper experience, and taking the advantage of the favorable conditions and the atmosphere of impunity they tried to honor the fate of Eastern Armenia to that of Western Armenia.

In 1920 the organizers of the March pogroms in Shushi were guided by the same plan and actions used by Young Turks measures used on April 24, 1915 during the genocide. Unfortunately, the Bolshevik party and the Soviet regime didn't give a legal assessment of the Armenian pogroms and didn't take appropriate steps to punish the offenders. More, the organizers of the crime got high positions and became pillars for the newly formed Soviet Azerbaijan.

Impunity gave birth to a new crime. If at the dawn of Soviet Power Shushi was destroyed, then at the sunset of the regime the slaughter of Armenians of Baku, Sumgait, Gandzak and other Armenian cities and villages was organized.

It's obvious that Armenian people can withstand against such disasters only in a national state.

Azerbaijan, dominated by Musavat party, taking the advantage of the created atmosphere of impunity after the Great Genocide of 1915, leading by the actions of the young Turks party, on March 23, 1920, destroyed Shushi with the same cruelty. Once a thriving Armenian city, many people used to call «Small Paris», was completely destroyed, multiplying a new incurable wound in the heart of the Armenian people. As for Azerbaijan, it will remain a shameful vandalism.

1918 թ. ՄԵՊՏԵՄԲԵՐԻՆ ԲԱՔՎՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ
ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐՆ ԸՍՏ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ

ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ

Աշոտ Հայրունի

պ.գ.դ., պրոֆեսոր

ԵՊՀ

Բանալի բառեր. Պարաքլին, Բաքու, Կրես ֆոն Կրեսնենշտայն, Համո Օհանջանյան, կոտորած, հայկական պատվիրակություն, Աբդուլ Քերիմ, Նուրի փաշա, Ջաֆարով, Հայիլ փաշա

1918 թ-ի սեպտեմբերին թուրքական զորքերի կողմից Բաքվի գրավումից հետո այնտեղ տեղի ունեցած հայկական կոտորածների և հարակից դեպքերի մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Բաքվում արտակարգ իրավիճակների դեկավար, օսմանյան բանակի ավագ լեյտենանտ, ազգությամբ գերմանացի Պարաքլինը: Ինչպես նա վկայում էր սեպտեմբերի 26-ին գեներալ-լեյտենանտ ֆոն Ջեկտին ուղարկված իր ընդարձակ տեղեկագրում,¹ դեռ օգոստոսի 23-ին Մյուրցիլ փաշան իրեն հաղորդել էր, որ թաթարները մտադրվել էին թուրքական զորքի՝ Բաքու մտնելուն պես սկսել հայերի կոտորածը: Պարաքլինն այդ մասին բազմիցս տեղեկացրել էր դեպի Բաքու շարժվող թուրքական դիվիզիայի գլխավոր հրամանատար Նուրի փաշային՝ խնդրելով կանխիչ միջոցառումներ ձեռնարկել, և բացի այդ՝ նրան էր ներկայացրել քաղաքի գրավման հետ կապված միջոցառումների մի ծրագիր, որի դեպքում սկզբից նեթ կբացառվեին սպանդն ու կոտորածներ: Նուրին, սակայն, անտարբեր էր գտնվել թե՛ նրա նախագաղափարների և թե՛ վերոնշյալ ծրագրի հանդեպ: Քաղաքի թաթարների մեծագույն մասը, ինչպես վկայում էր Պարաքլինը, բնակվում էր 2 կմ երկարություն ունեցող պարիսպներով մեկուսացված մի բարձր թաղամասում: Թաղամասի մոտքերը գրավելու միջոցով ջարդարարներին վտանգագրեծելը որևէ դժվարություն չէր ներկայացնում: Հասկանալի է, որ նրա այդ առաջարկը նույնպես չէր ընդունվել:

Ըստ Պարաքլինի հաղորդման՝ դեռ թուրքական զորքերի կողմից Բաքու մտնելուց առաջ՝ սեպտեմբերի 16-ին, Բաքվում շարունակ կրակոցներ էին լսվում, մինչդեռ քաղաքի մոտ, մի բարձունքի վրա տեղակայված թուրքական հետևակային գունդն ու մյուս զորամասերը դրանց հանդեպ միանգամայն անտարբեր, այդ նույն ժամանակ զբաղված էին մահմեդական Կուրբան-բայրամ տոնին նվիրված ժամեր շարունակ տևող շքերթով:

Սեպտեմբերի 17-ի առավոտյան, երբ դեռ թուրքական զորքը քաղաք չէր մտել, թաթարական ամբոխն արդեն սկսել էր հայ բնակչության զանգվածային սպանող, հետապնդումներն ու կոտորածները, իսկ կեսօրից քաղաք մտած թուրք զինվորները բնավ չէին փորձում խանգարել դա: Ավելին, նրանք նույնպես միանում էին թալանին:²

¹ Deutschland und Armenien 1914-1918, Sammlung diplomatischer Aktenstücke, Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Potsdam, 1919, էջ 441-446:

² «Փողոցներում գրեթե մարդ չկար,- նշում էր Պարաքլինը Բաքվի գրավման ժամանակ մարտական գործողությունների վայր դարձած արվարձաններից մեկում այդ օրը առավոտյան իր կատարած շրջագայությունից հետո:- Խանութներն ու կրպակները համարյա առանց

«Փոխանակ բոլոր միջոցներով քաղաքում կարգ ու կանոնի հաստատմամբ զբաղվելու, փաշաները, քաղաքի պարետը, գլխավոր շտաբի բոլոր սպաները անգործ թրև էին գալիս հյուրանոցի սրահներում,- գրում է Պարաքվինը: Երբ բողոքներ և խնդրանքներ էին ուղղվում Նուրիին կամ պարետին, դրանք այնպիսի ներքին անտարբերության էին հանդիպում, որ իսկույն ևեթ ակնհայտ էր դառնում լուրջ նախանձախնդրության և ցանկության բացակայությունը: Կազմակերպվեց մի մեծ ճաշկերույթ, որին մասնակցեցին բոլոր գեներալները և շտաբները քաղաքի պարետի հետ միասին: Երգվեց «Կովկաս» երգը: Անթաքույց հրճվաճառով ինձ ներկայացրին դրա բովանդակությունը, այն է՝ Թուրքիան այսուհետ դարձյալ տներ է դառնում իր հին սեփականությանը՝ Կովկասին: Ճաշկերույթի ժամանակ և դրանից հետո քաղաքում սպանդն ու թալանը շարունակվում էր... : Ես չեմ կարող չհիշատակել բազմիցս բարձրաձայն հնչեցված այն տնտակետը, որ թուրքական ղեկավարությունը թաթարներին կամենում էր հնարավորություն տալ վրեժ լուծելու հայերից»:¹

Ինչպես փաստում էր Պարաքվինը, սպանդի, թալանի և բռնաբարությունների անարգել ընթացքը խրախուսվում էր գորքի անգործությամբ և նաև բազմաթիվ թուրք զինվորների մասնակցությամբ: Այդ պայմաններում հայերի դեմ զանգվածային գործողությունները սպառնում էին վերածվել առհասարակ քրիստոնյաների հետապնդումների: Քաղաքում գտնվող չեզոք երկրների հյուպատոսներն ու մյուս օտարերկրացիները, որոնց մեծ մասը հավաքվել էր Մետրոպոլ հյուրանոցում, օգնություն էին ակնկալում գերմանացիներից, մինչդեռ վերջիններս նույնպես ապահովված չէին, և Պարաքվինը կարողանում է հասնել միայն այն բանին, որ առանձին գերմանացիների բնակարանների մոտ պահակակետեր կանգնեցվեն: Նա մի գերմանական ընտանիքի խնդրանքով պահակակետ է կանգնեցնում նաև մի երիտասարդ հայ իրավաբանի տան մոտ, որին թաթարները նախկինում բազմիցս սպառնալիքներ էին ուղղել, իսկ տանտիրոջը տեղափոխում է Մետրոպոլ հյուրանոցը: Երեկոյան, այնուամենայնիվ, պարզ է դառնում, որ գեների սպառնալիքի ներքո կողոպտվել էին մինչև իսկ մի շարք գերմանացիների բնակարաններ: Գերմանացիների կյանքի և գույքի ապահովման առնչությամբ Նուրի փաշային ուղղված Պարաքվինի վճռական բողոքներն ու պահանջները, ի վերջո, որոշ արդյունք տալիս են: Քաղաքի պարետը հեռացվում է, և նրա փոխարեն պարետ է նշանակվում Նասիմ բեյը: Քաղաք են ուղարկվում սպաներ և նոր զնդեր: Հյուրանոցի առջև մի թաթար կողոպտիչ ցուցադրաբար կախաղան է հանվում: Այդ նույն ժամանակ, սակայն, քաղաքում կրակոցներն ու աղմուկը շարունակ ավելի մեծ չափեր էին

բացառության թալանված էին: Տարբեր տեղերում թալանված իրերի կույտեր էին կուտակված, որոնք հավանաբար թաթար կողոպտիչներից էին խլվել և մասամբ հսկվում էին առանձին թուրք զինվորների կողմից: ... Ձինվորներն ու թաթարներն անարգել փորժում էին և տանում էին, ինչ իրենց դուր էր գալիս: Արդեն այդ շրջագայության ժամանակ ի հայտ եկան մեծ անկարգությունների անուրանալի հետքերը: Ճանապարհին ընկած էին երկու սպանված երեխաներ: Մի կողմնակի նրբանցքում անմիջապես մեր կողքին որոտաց մի կրակոց: Մի պատուհանից կանաչք հուսահատ կերպով օգնություն էին կանչում: Մեր ավտոմեքենաները կանգնեցին, մենք շտապեցինք տուն, բայց ոճրագործները դեպի հետին կողմն էին փախել: Արդեն այն ժամանակ տիրում էր այն համընդհանուր համոզումը, որ քաղաքում յուրաքանչյուր կարգ ու կարգապահություն վերացել էր, և քրիստոնյա բնակչությունը թալանվում, բռնաբարվում ու սպանդի էր ենթարկվում: Անդ, էջ 441-442:

¹ Անդ, էջ 443:



ընդունում: Հատկանշական է, որ Նուրի փաշայի կարգադրությամբ զուգահեռաբար վերոնշյալ մահմեդական տոնի առթիվ կազմակերպվում էին հրազենային համագարկեր, ինչը նա պատրվակ էր դարձնում քաղաքի տարբեր վայրերում լսվող կրակոցները նույնպես այդ կերպ պատճառաբանելու համար:

Պարաքվինի բազմաթիվ բողոքներն ու պահանջները, սակայն, որևէ էական արդյունքի չհանգեցնելով, ի վերջո պետք է նրա դեմ ուղղվեին: Սեպտեմբերի 18-ի առավոտյան հայտնվում է Արևելյան բանակի հրամանատար գեներալ-լեյտենանտ Հալիլ փաշայի համհարզը և նրան է հանձնում սեպտեմբերի 17-ով թվագրված նրա պաշտոնագրվման հրամանը, որն ուներ հետևյալ բովանդակությունը. «Ձեր պահվածքը և բազմաթիվ բարեկամ ու օտար մարդկանց ներկայությամբ խլամական բանակի գլխավոր հրամանատար նորին գերագանցություն Նուրի Փաշայի դեմ ուղղված ձեր խոսքերը, ինչպես նաև Նուրի փաշայի պաշտոնական բողոքը ստիպում են ինձ վերջ դնել արտակարգ իրավիճակների ղեկավարի Ձեր պաշտոնին: Դուք այսուհետև կլինեք գլխավոր շտաբի տրամադրության ներքո: Ես նրանց արդեն հեռագրել եմ»:¹ Հրամանի կտրուկ բովանդակությունից ելնելով՝ Պարաքվինն անհնար է համարում իր ծառայությունը շարունակել մինչև գերմանական կառավարությանն այդ մասին տեղեկացնելը և պատասխան ստանալը: Ուստի, իր պարտականությունները փոխանցելով մի թուրքի՝ ավագ լեյտենանտ Բասրի բեյին, նա նույն օրը ևեթ հեռանում է քաղաքից:

Պարաքվինի՝ իբրև ականատեսի վկայությունները մի շարք ուշագրավ մանրամասներ են հաղորդում Բաքվում կատարվող իրադարձությունների վերաբերյալ՝ միաժամանակ փաստելով, որ այնտեղ հայերի կոտորածը վաղօրոք նախապատրաստված էր և իրագործվում էր թուրքական կանոնավոր բանակի՝ Նուրի փաշայի ու նրա զինվորականության աջակցությամբ:² «Անկարգությունները մեծ մասամբ տեղի էին ունենում տների ներսում,- գրում էր նա:- Այդ պատճառով փողոցներում համեմատաբար քիչ դիակներ կային: Դրանք մեծ մասամբ լցված էին փողոցների անկյուններում, այնպես որ հաճախ միայն հոտի միջոցով էին իրենց վրա ուշադրություն բեռնում: Մի տեղ ես տեսա յոթ դիեր, որոնք մեծ մասամբ մերկ վիճակում կիտված էին միմյանց վրա: Նրանց մեջ կային երեխաներ և մի ծննդկան: Գրեթե բոլոր դիակներն ունեին արյունահոսված տեղեր, որոնք առաջացել էին խզակոթի հարվածներից, և նաև ծակծկված էին: Նկուղներից դիերի հոտ էր փչում: Ես պետք է ընդգծեմ, որ սպանդի հետքերով գնալու համար շատ քիչ ժամանակ ունեի,

¹ Անդ, էջ 446:

² «Բաքվում ծանր զանցառություններն ու նողկալի իրադարձությունները չբնկացնելու և քաղաքի գրոհման հետ կապելու թուրքական կողմի փորձերի առնչությամբ,- գրում էր Պարաքվինը գեներալ ֆոն Ջելկոին ուղղված իր վերոնշյալ նամակում,- ես կկամենայի դարձյալ ընդգծել, որ կոտորածը դեռ շաբաթներ առաջ ծանուցվել էր և իրականացվեց առանց թուրքական առաջխաղացման հետ որևէ առնչություն ունենալու: Հիմնավորված չէ նաև այն պատճառաբանությունը, թե գորամասերին թույլ չեն տվել քաղաք մտնել, քանի որ նրանց հանդեպ վստահություն չէր տածվում: Անշուշտ չէր կարելի զինվորներին փոքր պարեկախմբերով քաղաք ուղարկել: Որտեղ դա տեղի ունեցավ, թուրք զինվորականությունը նշանդագին կերպով մասնակցեց կոդապուտին ու անարգումներին: Եթե նրանց գումարտակներով տեղակայեին մեծ հրապարակների վրա և այնտեղից սպաների ղեկավարությամբ ուղարկեին մեծ խմբերով, կարգ ու կանոնը կվերականգնվեր, և զորքը կպահվեր վերահսկողության ներքո»: Անդ, էջ 445-446:



քանի որ բոլոր կողմերից հեղեղված էի օգնության կանչերով: Այնուհանդերձ, անգամ իմ կարճ շրջագայությունների ժամանակ ես հանդիպում էի նախնիների այդ ակներև ապացույցներին: Փողոցները հատելու ժամանակ առանց այլևայլի այն տպավորությունն էր համակում, որ բոլոր տները՝ նկուղից մինչև տանիք, թալանված էին: ... Մի գերմանացի ինձ պատմեց, որ նա Նուրի փաշայի համհարզի հետ մտել է մի տուն, որտեղ, առանց տարիքի և սեռի խտրության, սպանված ընկած էին 13 վրացիներ: Երբ նա մատնանշել էր, որ նրանք վրացիներ, այսինքն՝ Գերմանիայի պաշտպանյալներ էին, ստացել էր հետևյալ պատասխանը. «Նրանց համարել են հայեր»:¹

Թե Բաքվում հայերն ինչպիսի հետևողականությամբ ու անգթությամբ էին հետապնդվում, և թե նաև գերմանացի դաշնակցի հանդեպ թուրքերն ինչպիսի «պատկառանք» ունեին, վկայում էր նաև երկու գերմանացիների գնդակահարության փաստը: Ըստ դանիական հյուպատոսի հաղորդման՝ նրանց տանը հայ զինվորներ էին ամրացել ու պաշտպանվում: Թուրքերի մոտենալու ժամանակ նրանք դիմել էին փախուստի, իսկ գերմանացի տանտերերն առանց այլևայլի, առանց հանգամանքների պարզաբանման ու հարցաքննության գնդակահարվել էին: Մեկ այլ դեպքում մի գերմանուհու հայ ամուսնուն սպանել էին, իսկ կնոջը երկու երեխաների հետ միասին առևանգել, որոնք այդպես էլ չէին հայտնաբերվել:²

Պարաքվինի իր տեղեկագրում հույժ անհրաժեշտ էր համարում թեկուզ հենց միայն Գերմանիայի տնտեսական շահերի պաշտպանության համար գերմանական զորամասեր ուղարկել Բաքու և, բացի այդ, ստեղծել մի հանձնաժողով, որը կզբաղվեր գերմանացիների և այլոց դեմ կատարված ոտնձգությունների քննությամբ: Նման նախաձեռնությամբ փորձեց հանդես գալ Կովկասում գերմանական ներկայացուցչության ղեկավար գեներալ Կրես ֆոն Կրեսենշտայնը: Տեղեկանալով Բաքվի իրադարձությունների մասին՝ սեպտեմբերի 20-ին նա մի շտապ հեռագիր ուղարկեց Նուրի փաշային՝ պահանջելով համաձայնություն տալ գերմանական զորամարտակի հրավիրման համար, որը կզբաղվեր բացառապես այնտեղ գտնվող գերմանացիների պաշտպանության հարցերով:³ Նույն օրը նա մի պաշտոնական գրություն ուղարկեց նաև Թիֆլիսում վրացական կառավարությանն առընթեր Օսմանյան կայսրության զինվորական և դիվանագիտական ներկայացուցիչ Աբդուլ Քերիմ փաշային՝ դրան կցելով Նուրի փաշային ուղղված իր հեռագրի պատճենը:

¹ Անդ, էջ 445:

² Ըստ Պարաքվինի հաղորդման՝ բազմաթիվ հայերի «խզակոթերով և մտրակներով» «ինչպես անասունների նախիր» բռնել և արգելափակել էին առանձին, այսպես կոչված, ճամբարներում, որտեղ նրանց դրությունը խիստ անմխիթար էր, և քաղաքում նաև իր մեկնման ժամանակ, այսինքն սեպտեմբերի 18-ին, շարունակվում էին կրակոցներն ու իրաքանցումը: Անդ, էջ 446:

³ «Ես հավաստի աղբյուրներից տեղեկացել եմ,- գրում էր նա,- որ դժբախտաբար Բաքվում տեղի ունեցած ջարդերի ժամանակ քաղաքի գրավումից հետո բազմաթիվ գերմանացիներ և Գերմանիայի նախկին քաղաքացիներ նույնպես դաժանությունների գոհ են դարձել և կորցրել են իրենց ունեցվածքը: Հաշվի առնելով այն փաստը, որ Ձերդ Գերագնացությունը չի կարողացել պաշտպանել Գերմանիայի քաղաքացիների կյանքն ու ունեցվածքը, Գերմանական կայսրության անունից պաշտոնապես պահանջում եմ տալ ձեր համաձայնությունը գերմանական զորամարտակի հրավիրման համար, որի նպատակը կլինի բացառապես իմ համերկրացիների շահերի պաշտպանությունը: Ինչ վերաբերում է արդեն տեղի ունեցած հանցագործություններին՝ ես դրանց կանդորադառնամ իմ կառավարության տված ցուցումներից հետո: Սպասում եմ ձեր պատասխանին»: Անդ, հավելված 3, էջ 448:



«Հավաստի աղբյուրներից ստացած իմ տեղեկությունների համաձայն՝ օսմանյան գորքերի քաղաք մտնելուց անմիջապես հետո թաթարները սկսել են դաժան կոտորածն ու թալանը,- գրում էր այնտեղ գեներալը:- Առաջին հերթին այդ անգլոթյուններն ուղղված են եղել հայերի դեմ, սակայն զոհերի թվում եղել են նաև բազմաթիվ այլազգիներ: Չնայած Նուրի փաշան ուներ բավականաչափ զորավարներ այդ անգլոթյուններին անմիջապես վերջ տալու համար ինձ անհասկանալի պատճառներով նա ժամանակին համապատասխան միջոցառումներ չի ձեռնարկել, այնպես որ մինչև անգամ սեպտեմբերի 17-ի երեկոյան Բաքվում դեռ կարգովանոն չէր հաստատվել»:¹

Գեներալն, ըստ այդմ, Աբդուլ Բերիմին խնդրում էր իր ազդեցությունը գործադրել, որպեսզի Նուրին համաձայնեի Բաքու գերմանական գումարտակ ուղարկելու իր առաջարկի հետ, իսկ մինչ այդ՝ գործնական օգնություն ցուցաբերել «այն խեղճ մարդկանց, ովքեր այս պահին տառապանքների են ենթարկվում կատաղի թաթարների կողմից և կարող են փրկություն ստանալ միայն օսմանյան կանոնավոր գործակալորդների պաշտպանության միջոցով»:²

Սեպտեմբերի 20-ին ֆոն Կրենսը մի գրություն ուղարկեց նաև Թիֆլիսում Ադրբեյջանի դիվանագիտական ներկայացուցիչ Ջաֆարովին՝ նրան խնդրելով իր կառավարությանը տեղեկացնել, որ ինքը հարկադրված է լինելու հատուցում պահանջելու Բաքվում թաթարների կողմից գերմանացիների և Գերմանիայի պաշտպանյալ հանդիսացող այլ անձանց հանդեպ իրագործված բռնարարքների համար:³

Ֆոն Կրենսի պաշտոնական գրություններին Աբդուլ Բերիմը գրավոր կերպով պատասխանեց սեպտեմբերի 21-ին, իսկ սեպտեմբերի 26-ին ստացվեց Նուրի փաշայի պատասխանը: Աբդուլ Բերիմը հավաստիացնում էր, որ Գերմանիայի քաղաքացիների և նրանց ունեցվածքի հանդեպ ռոնձգությունների վերաբերյալ գեներալին հասած լուրերը եղել են չափազանցված, և հայերի հանդեպ նույնպես ոչ մի դաժանություն չէր գործադրվել: Անհշան արյունալի միջադեպերը, որոնք տեղի էին ունեցել քաղաքի գրավման ժամանակ, ըստ Բերիմի, այդպիսի իրավիճակներում միշտ էլ եղել են, դրանում արտասովոր ոչինչ չկար, և այդ դեպքերը ճիշտ չէ կոտորած անվանել: Հավատացնելով, որ Բաքվում ամեն բան արվել է դրանց կրկնումը կանխելու և կարգապահություն հաստատելու համար, նա գտնում էր, որ այնտեղ գերմանական գումարտակ ուղարկելու որևէ անհրաժեշտություն չկար, և գումարտակի առկայությունն այնտեղ թուրքական կառավարության համար կստեղծեր միայն անհարմարություններ ու բամբասանքների տեղիք կտար:⁴

Նույն ոգով էր շարադրված նաև Նուրի փաշայի պատասխանը: Նա նույնպես հավաստիացնում էր, որ ֆոն Կրենսի ստացած տեղեկությունները չէին համապատասխանում իրականությանը: Թուրքական գորքերը, ըստ Նուրիի, թշնամու համար դիմադրության պայմաններում կարողացել էին միայն թեժ պայքարի գնով մտնել քաղաք: Որոշ մուսուլմաններ և հատկապես պարսիկներ, որոնք, իբրև թե 1918

¹ Անդ, հավելված 2, էջ 447:

² Անդ:

³ Անդ, հավելված 4, էջ 448-449: Այս դեպքում, իհարկե, խոսքը հայերին չէր կարող վերաբերել, քանի որ նրանք, ի տարբերություն վրացիների, գերմանական պաշտպանության ներքո չէին գտնվում:

⁴ Անդ, հավելված 5, էջ 449-450:

թ. մարտին հայերի կողմից իրականացված մուսուլմանների կոտորածից հետո հուսահատ վիճակում էին գտնվում, օգտվելով առիթից, դիմել էին վայրագությունների, բայց բանակի կողմից շտապ միջոցառումներ էին ձեռնարկվել: Հարյուրավոր մեղավոր մուսուլմաններ դատապարտվել էին մահվան, և դրանից հետո քաղաքում անդորր էր տիրում: Եթե, այնուամենայնիվ, ինչ-որ ոտնձգություն էր տեղի ունեցել նաև քաղաքում գտնվող գերմանացիների հանդեպ, ապա, ըստ Նուրի փաշայի, Ադրբեյջանի կառավարությունը պարտավոր էր փոխհատուցել պատճառված վնասները: Այս հավաստիացումներից հետո նա նույնպես պնդում էր, որ քանի որ թուրքական զորքերն արդեն կարգ ու կանոն էին հաստատել քաղաքում, անհրաժեշտություն չկար գերմանական գումարտակ ուղարկել այնտեղ¹:

Ինքնին հասկանալի է, որ Ֆոն Կրենը, չբավարարվելով Աբդուլ Քերիմի և Նուրի փաշայի պարզաբանումներով, հարկ էր համարում Բաքվի դեպքերի և դրանցում Նուրի փաշայի ու թուրքական զորամասերի դերակատարության մասին տեղեկացնել նաև գերմանական բարձրագույն զինվորական հրամանատարությանը: Սեպտեմբերի վերջին նա այդօրինակ մի հեռագիր է ուղարկում գերմանական նավահրանոթային հրամկազմի ղեկավարությանը՝ խնդրելով այն փոխանցել նաև բանակի գլխավոր հրամանատարությանը: Հրամկազմի ղեկավարը, հոկտեմբերի 2-ին ստանալով հեռագիրը, այն, որպես «հույժ գաղտնի» տեղեկություն, ուղարկում է ինչպես գլխավոր հրամանատարությանը, այնպես էլ կանցլերին: Այնտեղ նշվում էր, որ Բաքու մտած թուրքական զորքն այնքան անփույթ է գործել, որ նավահանգստում գտնվող ավելի քան հարյուր թշնամական նավեր հասցրել են փախուստի դիմել, և միայն փոքրաթիվ նավեր են ընկել թուրքերի ձեռքը: Այնուհետև տեղեկացնելով Բաքվի գրավումից անմիջապես հետո թաթարական հրոսակների կողմից կոտորածների սանձազերծման մասին ֆոն Կրենն ընդգծում էր, որ թուրքական զորքը ոչ միայն ոչինչ չէր ձեռնարկել դրանք կասեցնելու համար, այլև նրա առանձին զորամասեր մասնակցել են այդ կոտորածներին, որոնց ժամանակ սպանվել են նաև շատ գերմանացիներ ու Գերմանիայի պաշտպանյալներ: Նշելով Պարաքվինի հանիրավի պաշտոնանկության, ինչպես և այն մասին, որ Նուրի փաշան մերժել է Բաքվում գերմանացիների կյանքի և գույքի ապահովման համար այնտեղ գերմանական զորամաս ուղարկելու մասին իր դիմումը՝ Ֆոն Կրենը հեռագրում միաժամանակ խնդրում էր, որ նույն նախաձեռնությամբ հանդես գար նաև գլխավոր հրամանատարությունը²:

Ինչևէ, ինչպես վկայում են Բաքվի իրադարձությունները, Թուրքիան ունակ էր քամահրանքով վերաբերել մինչև իսկ Գերմանիայի քաղաքացիների կյանքի և գույքի ապահովությանը՝ այդ հարցում ի հայտ եկած «թերացումները» պատճառաբանելով իրադրության անվերահսկելիությամբ և այլ պատրվակներով:

Ինչ վերաբերում է գերմանական կառավարությանը, ապա արդեն սեպտեմբերի 29-ին գերմանական հրամանատարության գլխավոր շտաբում կայար Վիլհելմ II-ի, պետքարտուղար ֆոն Հինցեի, կանցլեր իշխան ֆոն Հերտլինգի, բանակի գլխավոր հրամանատար գեներալ-ֆելդմարշալ Պաուլ ֆոն Հինդենբուրգի և շտաբի պետ,

¹ Անդ, հավելված 6, էջ 450-451:

² Die Armenische Frage und der Genozid an den Armeniern. Dokumente aus dem politischen Archiv des deutschen Auswärtigen Amts, zusammengestellt und eingeleitet von Prof. Dr. Wardges Mikaeljan, Jerewan 2004, էջ 590-591:



բանակի «գլխավոր ստրատեգ» Էրիկ Լուդենդորֆի մասնակցությամբ տեղի ունեցած խորհրդակցությունում միանշանակորեն ընդունվել էր պատերազմում Գերմանիայի անխուսափելի պարտության փաստը, և նրանք զբաղված էին միայն «ջրից չոր դուրս գալու» համար ուղիներ փնտրելով: Ըստ այդմ, նույն խորհրդակցությունում ընդունվեց որոշում նախկինում ընդդիմական կուսակցությունների միջոցով նոր պառլամենտական կառավարության ձևավորման մասին, որը և պետք է ստանձներ խայտառակ պարտության պայմաններում գինադադարի կնքման և հաշտության պայմանագրի ստորագրման ողջ պատասխանատվությունը:¹ Ինքնին հասկանալի է, որ ստեղծված իրադրությունում Գերմանիայից հայկական խնդրի առնչությամբ որևէ միջամտություն այլևս չէր կարող ի հայտ գալ:

Բեռլինում գտնվող հայկական պատվիրակությունը, այնուամենայնիվ, հույսեր էր փայփայել ստանալու արքայազն Մաքս ֆոն Բադենի գլխավորությամբ հոկտեմբերի սկզբին կազմավորված նոր կառավարության աջակցությունը Թուրքիայի վրա ճնշում գործադրելու համար: Այդ հարցում փորձում էր իր աջակցությունը բերել նաև գերմերալ ֆոն Կրեմեր: Հոկտեմբերի 16-ին Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Զամալյանը Բաքվի հայ բնակչության ջարդերի վերաբերյալ մի նամակ-բողոք ուղարկեց Թիֆլիսում Ադրբեյջանի դիվանագիտական ներկայացուցչին, իսկ հաջորդ օրը դրա թարգմանված պատճենը հանձնեց ֆոն Կրեմերին՝ խնդրելով Գերմանիայի կառավարությանը տեղեկացնել նամակի և Բաքվի գրավման ժամանակ տեղի ունեցած անլուր դաժանությունների առնչությամբ հայկական կառավարության կողմից արտահայտված բողոքների մասին: Նույն օրը ևեթ՝ Հոկտեմբերի 17-ին, բողոքագիրը ֆոն Կրեմերի կողմից ուղարկվեց նաև կանցլեր Մաքսին:² «Որպես Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ, - նշում էր Զամալյանն այդ նամակում, - պատիվ ունեմ հայտնելու Վրաստանի կառավարությանն առնթրել Ադրբեյջանի դիվանագիտական ներկայացուցչին, որ Հայաստանի Հանրապետության կառավարության հավաստի տեղեկությունների համաձայն՝ Բաքվի գրավմանը հաջորդել է մուսուլմանական ամբոյսի կողմից հայ խաղաղ բնակչության դաժան կոտորածը՝ առանց տարիքային ու սեռային խտրության: Անխճորեն թալանվել են հայ բնակիչների բնակարանները: Ձոհերի թիվը հասնում է 25-ից 30 հազարի: Երեք օր շարունակ դաժան բարբարոսությունները չեն դադարել, և միայն դրանից հետո իշխանությունները միջոցներ ձեռնարկեցին, ու տեղում բռնված մի քանի ավագաններ պատժվեցին: Ադրբեյջանի կառավարության ձևավորման ընթացքում ձերբակալվել են բազմաթիվ հայեր, հատկապես մտավորականներ: Ինչ վերաբերում է ունևոր հայերին, դրամաշորթները նրանց ստիպել են մեծ գումարներ վճարել՝ սպառնալով մատնել իշխանություններին: Լքված, խնամքից զուրկ վիրավորները, փողոցներում մնացած երեխաները լրացնում էին քաղաքի դաժան պատկերը:

Հաշվի առնելով վերոհիշյալը՝ խնդրում եմ ձեզ Ադրբեյջանի կառավարությանը հայտնել Հայաստանի Հանրապետության բողոքը հայ խաղաղ ազգաբնակչության կոտորածի դեմ համապատասխան միջոցառումներ չձեռնարկելու համար: Հայաստանի Հանրապետության կառավարությունը նաև պնդում է, որ մեղավորները

¹ Informationen zur politischen Bildung, Überarbeitete Neuauflage, München, 2003, էջ 3:

² Deutschland und Armenien 1914-1918..., էջ 436-438:

պետք է խստորեն պատժվեն, և պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկվեն ողջ մնացած դժբախտ բնակչության դեմ իրականացվող բռնություններին վերջ դնելու համար»:¹

Հոկտեմբերի 19-ին Ա. Ջամալյանը դարձյալ մի բողոքագիր է ներկայացնում ֆոն Կրեխին, որտեղ, ողջունելով Բաքվի հայ բնակչության կոտորածը կասեցնելու համար նրա գործադրած ջանքերը, նրան խնդրում էր դարձյալ գերմանական կառավարությանը տեղեկացնել այնտեղ տիրող իրադրության մասին: Նա մասնավորապես նշում էր, որ Բաքվի հայ բնակչությունը շարունակում էր մնալ նույն «մղձավանջի» մեջ: Այնտեղ հայերի նկատմամբ անմարդկային արարքները շարունակվում էին, և մշտապես իշխում էր սարսափի մթնոլորտը: Ընդգծելով, որ բոլոր ազդեցիկ հայ մտավորականները ձեռքակալված էին և աներևակայելի խոշտանգումների էին ենթարկվում, Ջամալյանը թվարկում էր մի շարք մտավորականների անուններ, որոնք այդ առնչությամբ հաղորդվել էին իրեն:² Նա միաժամանակ գեներալին հավաստիացնում էր, որ բանտարկվածների մեծագույն մասը քաղաքականության հետ ոչ մի կապ չունեն: Նրանք, ովքեր կազմակերպել էին Բաքվի հայերի պաշտպանությունը, ժամանակին հեռացել էին քաղաքից, և մտավորականների ձեռքակալությունը նա համարում էր «անիմաստ ու դաժան վրեժխնդրություն»: Միաժամանակ հայտնելով, որ, ըստ իրեն հասած լուրերի, Բաքվի իշխանությունները մտադիր էին հայերին հավաքել համակենտրոնացման ճամբարներում, որտեղ նրանք մահվան բաժին էին դառնալու, Ջամալյանը գեներալին թախանձագին խնդրում էր «հայ ժողովրդին պաշտպանել նրանց կյանքի և ունեցվածքի հանդեպ կատարվող ոտնձգություններից»:

Հատկանշական է, որ ֆոն Կրեսը, գիտակցելով հանդերձ, որ առանց Բեռլինի և բանակի զլխավոր հրամանատարության գործունե աջակցության՝ թուրքերի վրա էական ազդեցություն գործել չէր կարող, սեփական նախաձեռնությամբ Բաքու է ուղարկում մի գերմանական պատվիրակություն ավագ լեյտենանտ բարոն ֆոն դեր Գոլթցի ղեկավարությամբ՝ նրանց հանձնարարելով անել հնարավորը հայերին օգնելու համար: Իսկ եթե դա հնարավոր չլիներ, ապա գեներալը հույս էր փայփայում, որ պատվիրակությունն իր ներկայությամբ գոնե բարոյական ճնշում կգործադրեր թուրքական զորքերի հրամանատարության վրա՝ նրան գերծ պահելով հետագա կամայականություններից:³ Բացի այդ, ֆոն Կրեսը հոկտեմբերի 21-ին կանցլերին է ուղարկում նաև Ջամալյանի նշված՝ հոկտեմբերի 19-ի բողոքագիրը:⁴

Նրա ձեռնարկումները, սակայն, էական արդյունք չտվեցին, և դա վկայում էր նաև Բեռլինի հայկական պատվիրակության կողմից, Համո Օհանջանյանի ստորագրությամբ հոկտեմբերի 30-ին Գերմանիայի արտգործնախարարությանը

¹ Անդ:

² Խոսքը վերաբերում էր Տիգրան Զաքարյանին (բժշկակագիտության թեկնածու), Ջումշուդ Հարությունյանցին (նախկին քաղաքապետ), Արտեմ Եղիազարյանին, Կոնստանտին Բալանթարյանին (ճարտարագետ), Մամառն Ամիրովին, Մերգել Մելիքովին, Գևորգ Մելիքովին, Պյոտր Ջուրաբովին, Ստեփան Տիգրանյանին (փաստաբան), Միքայել Աթաբեկյանին (կովկասի բանկի կառավարիչ), Կոնստանտին Ղիսանյանին (ճարտարագետ), Մանանդյանին (փաստաբան), Լույսարյանին (առևտրային բանկի կառավարիչ) և Գրիգոր Օհանջանյանին: St'u Deutschland und Armenien 1914-1918..., էջ 439:

³ Անդ, էջ 440:

⁴ Անդ, էջ 438-440:

ներկայացված ուղերձը: Վկայակոչելով հայրենիքից ստացված տեղեկությունները՝ Համո Օհանջանյանը նախ անդրադառնում էր Բաքվի գրավումից հետո այնտեղ հայ բնակչության դեմ սանձազերծված հալածանքներին ու կոտորածներին,¹ որից հետո նա բառացի հղում էր կատարում Հալիլ փաշային կցված մի գերմանացի սպայի՝ Հայաստանի Հանրապետության Թիֆլիսի ներկայացուցչին հաղորդած տեղեկություններից: «Բարբարոսությունը, որ կատարվեց Բաքվում, հնարավոր չէ նկարագրել,- նշել էր սպան: - Իմ ուժերից վեր է, որպես քրիստոնյա և եվրոպացի, հանգիստ կերպով դիտել նման ոճրագործությունները: Ես հենց այսօր երեկոյան Հալիլ փաշային կներկայացնեմ իմ հրաժարականը: Թե որքան հայեր են սպանվել, ես ճշգրիտ չեմ կարող ասել: Միգուցե նրանց թիվը շատ մեծ չէ, բայց սպանողը կատարվեց բարբարոսական կերպով, և ամբողջ քաղաքը թալանվեց: Ես մի փողոցում տեսա 20-ից 35 շղթայված հայերի և նրանց կողքին մի պահակի: Նրանց ճակատագիրը պարզ էր ինձ, և ինձնից մեծ ջանքեր պահանջվեցին նրանց փրկելու համար: Բայց քանի՞ այդպիսի դեպքերում են մարդիկ գրկված եղել փրկարար օգնությունից: Երբ մենք փողոցներով քայլում էինք, տների միջից շարունակ օգնության ճիչեր էինք լսում: Մենք մի քանի անգամ կարողացանք օգնության հասնել, բայց որքա՞ն դեպքերում էլ ոչ...: Մենք միայն չորս գերմանացիներ էինք և չէինք կարող մեծ օգնություն ցուցաբերել, քանի որ, ի վերջո, մեր հանդեպ նույնպես (մահմեդականների) վարքագիծը ապշեցուցիչ էր: Հալիլ փաշան ուղղակիորեն մեղավոր չէ այդ ոճրագործությունների համար: Ամբողջ պատասխանատվությունն ընկնում է Նուրի փաշայի և նրա շտաբի վրա: Եթե նրանք ուզենային, կարող էին արգելել կոտորածներն ու կողոպուտը: ... Ես այն տպավորությունն ունեմ, որ նախճիրը նախապես պլանավորված էր: Դա էր պատճառը, որ թուրքերն ամեն ինչ արեցին՝ արշավին (նկատի ունի Բաքվի վրա հարձակումը - Ա. Հ.) գերմանական զորամասերի մասնակցությունը խոչընդոտելու համար»:²

Հ. Օհանջանյանը, ուղերձին կից ներկայացնելով Նուրիի ու Արեշի (Ելիզավետպոլ) հայ հոգևորականների տեղեկությունները, ինչպես և Բաքվում հետագայում կատարված դեպքերին վերաբերող քաղվածքներ Թիֆլիսի «Кавказское Слово» թերթից, միաժամանակ ընդգծում էր, որ Բաքվի գրավումից հետո հայերի կոտորածներ են տեղի ունեցել նաև Նուրիի և Արեշի շրջաններում: Ըստ նրա հաղորդման՝ այնտեղի հայ քահանաներն և երևելիները սպանվել էին, կանայք և աղջիկները անարգվել, իսկ երեխաներին, մի տեղ հավաքելով, մահակներով էին սպանել: Մահմեդական հոգևորականները մինչև անգամ այն հայերին, որոնք իրենց կյանքը փրկելու խնդրանքով նրանց դիմել էին և համաձայնել իսլամն ընդունել, պատասխանել էին, թե իրենք «Նուրիի և Արեշի շրջաններում հայերին նույնիսկ մարդկանց հիշողությունից առհասարակ ջնջելու» էին:

¹ «Հազարավոր խաղաղ հայ բնակիչներ, այդ թվում անվանի հայ մտավորականներ, կանայք, երեխաներ և ծերունիներ սպանողի ենթարկվեցին,- նշված էր տեղեկագրում:- Հայերի բնակարանները, չնչին բացառություններով կողոպտվեցին, բանտերը լցվեցին հայերով, որտեղ նրանք դեռ այժմ էլ սարսափելի տառապանքների են մատնված: Ազերիներն ու թաթարները պնդում են, որ իրենց թույլատրվել է երեք օր շարունակ սպանել ու թալանել: Եվ նրանք դա արեցին հիմնավորապես ու անխնա կերպով»: Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 593-594:

² Անդ, էջ 594:

Այնուհետև Օհանջանյանը արտգործնախարարությանը ներկայացնում էր Հայաստանի Հանրապետության՝ Թիֆլիսի ներկայացուցիչ իր ստացած տեղեկություններն այն մասին, որ թուրքերը մտադրվել էին Ադրբեջանից վերադառնալու ժամանակ այնտեղ թողնել թուրքական հինգերորդ և տասնհինգերորդ դիվիզիաները, որպեսզի նրանք, իբրև թաթարական հանրապետության զինվորներ, թաթարական համագլխատով մասնակցեին հայերի, մասնավորապես Ղարաբաղի հայ բնակչության բնաջնջման ու թալանին: «Արդեն այժմ էլ Ղարաբաղից եկող լուրերը խիստ անհանգստացուցիչ են, - գրված էր այնուհետև ուղերձում: - Թուրքական զորամասերը Ասկերանի վրայով առաջ են շարժվել և ռմբակոծում են հայկական գյուղերը: Միանգամայն պարզ է, որ թուրքերը այդ տարածքում նույնպես նախատեսել են հայ բնակչությանը բնաջնջել: Իմ կառավարությունը ինձ հանձնարարել է բողոքել թուրքական զորքերի և թաթարների այդ նոր անմարդկային գործողությունների դեմ»:¹

Նույն օրը՝ հոկտեմբերի 30-ին, սակայն, Թուրքիան հարկադրված եղավ զինադադար կնքել, և իրավիճակը որոշակիորեն պետք է փոխվեր: Հատկանշական է, որ այդ իսկ օրը գեներալ Ֆոն Կրեսը կանցլերին է ուղարկում Բաքվի հայերի կոտորածի վերաբերյալ իր մոտ գտնվող նյութերը, նաև այդ առնչությամբ մի կողմից իր և մյուս կողմից՝ թուրքական հրամանատարների, դիվանագետների, ինչպես և ադրբեջական կառավարության միջև տեղի ունեցած գրագրությունները, որպեսզի դրանք արխիվավորվեն: Նա միաժամանակ արձանագրում էր, որ այդ կոտորածները կանխելու համար իր կողմից կատարված առաջարկները չեն իրագործվել սոսկ թուրքերի մերժողական կեցվածքի պատճառով, և որ ինքը դրանց իրագործումը հարկադրելու համար որևէ լծակ չի ունեցել:²

Ամփոփում

Հոդվածում լուսաբանվում են 1918 թ. սեպտեմբերին Բաքվում տեղի ունեցած հայկական կոտորածներն ըստ գերմանական վավերագրերի: Ներկայացվում են եղերական իրադարձությունների հանդեպ առանձին գերմանացի զինվորականների կողմից ցուցաբերված դիրքորոշումը և դրանք կասեցնելու նպատակով նրանց կողմից ձեռնարկված քայլերը: Գերմանացի ականատեսների՝ հոդվածում ներկայացվող արժեքավոր տեղեկություններն ու վկայությունները զգալիորեն ամբողջացնում են նախնիների ընդհանուր պատկերը և միաժամանակ օգնում լույս սփռելու դրա հետ կապված՝ մի շարք կարևոր իրողությունների վրա, որոնք պատմագիտության մեջ ամբողջական լուսաբանում դեռևս չեն ստացել:

¹ Ամդ, էջ 594-595:

² Deutschland und Armenien 1914-1918..., էջ 440:



**Резня армян в Баку в сентябре 1918г. согласно
немецким документалистам
Ашот Айруни
Резюме**

Ключевые слова: Параквин, Баку, Кресс-фон-Крессенштейн, Амо Оганджян, резня, армянская делегация, Абдул-Керим-Нури-паша, Джафаров, Халил-Паша.

В статье рассматривается резня армян в Баку в сентябре 1918 года по данным немецких документалистов. Представлены позиции отдельных немецких военных об этих трагических событиях и предпринятые ими меры по их предотвращению. Описанные в статье ценные сведения и свидетельства немецких очевидцев достаточно ярко дополняют всеобщую картину резни, проливающую свет на ряд важнейших фактов, касающихся этих событий, не получивших достаточного исторического освещения.

**1918 September Massacre of Armenians in Baku based on the German
Documentary Sources
Ashot Hayruni
Summary**

Key words: Parakvin, Baku, Kress von Kressenshteyn, Hamo Ohanjanyan, massacres, the Armenian delegation, Abdul-Karim Nuri pasha, Jafarov, Khalil Pasha.

The article discusses the massacres of Armenians in Baku in September 1918, based on German documentary sources. Positions of certain German military regarding these tragic events are presented as well as the measures taken to prevent them. The valuable information stated in the article and eyewitness testimonies of German quite clearly supplement picture of the massacre, enlightening a number of important facts concerning the events, that do not get enough of the historic lighting yet.

**ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՂԾԵԼՈՒ ԹՈՒՐԲԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ**

(1915-1922 ԹԹ.)

Սամվել Պողոսյան

պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ

ՀՊՄՀ

***Բանալի բառեր՝** Հայոց ցեղասպանություն, ժխտման քաղաքականություն, բրիտանացի դիվանագետներ, թուրքական պատմագրություն*

Թուրքական պատմագրությունը և պետական գործիչներն անընդմեջ փորձել են ժխտել 1915-1916թթ. հայոց ցեղասպանությունը և կեղծել փաստերը: Ժխտման քաղաքականությունը թուրքերը սկսել են այդ ահավոր ոճիրն իրականացնելուց անմիջապես հետո: Նրանք ոչ միայն փորձում էին ժխտել իրենց իրականացրած հրեշավոր հանցագործությունը, այլ նույնիսկ թուրքերին կոտորելու անհիմն մեղադրանքներ էին առաջ քաշում հայերի դեմ:

Դեռևս 1915թ. մայիսի 24-ին, երբ հայերի ոչնչացումը թուրքական իշխանությունները նոր էին սկսել, Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կառավարությունները համատեղ հայտարարությամբ հանդես եկան, որում թուրքական վայրագությունները որակեցին հանցագործություն մարդկության և քաղաքակրթության դեմ, իսկ թուրքական կառավարությանը պատասխանատու համարեցին դրա համար¹: Ամերիկյան դիվանագետ Լ. Էյնշտեյնը, որն այդ ժամանակ Կ. Պոլսում էր, վկայում է, որ Անտանտի երկրների հայտարարությունը մի փոքր բարկացրել և անհանգստացրել էր մեծ վեզիրին, սակայն մյուս թուրք պաշտոնյաները լիովին անտարբեր էին վերաբերվել դրան, իսկ Էնվերը, որը վերջին շրջանում գտնվում էր հայերին, նրանց հալածանքներն արդարացնում էր ռազմական անհրաժեշտությամբ²: Իր հուշերում Ու. Չերչիլը հետագայում խոստովանել է Դարդանելի օպերացիայի խաղացած բացասական դերը ցեղասպանության կազմակերպման գործում. «Ոչ մի կասկած չկա, որ այդ հանցագործությունը մշակված է քաղաքական նկատառումներով: Թուրքերը ժամանակը գտան հարմար ... երկիրը մաքրելու քրիստոնեական ռասայից ... Լիովին հնարավոր է, որ Գալիպոլիի թերակղզու բրիտանական գրոհն է՝ լավելի ուժեղացրեց թուրքական կառավարության կատաղությունը»³:

¹ William A. Schabas, *Genocide in International Law: The Crimes of Crimes* (Cambridge University Press, 2000), p. 16.

² Einstein L., *Inside Constantinople. A Diplomatist's diary during the Dardanelles Expedition*, April-September, 1915. New York, E. P. Dutton & Co., 1918, p. 126.

³ Արգումանյան Մ., Հայաստանը 1914-1917, Երևան, 1969, էջ 305:

Բրիտանացի դիվանագետ Մարկ Սայքսը, որը բազմիցս ճանապարհորդել էր Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և Մերձավոր Արևելքի այլ երկրներում, «Խալիֆների վերջին ժառանգությունը» գրքում մի քանի անգամ անդրադառնում է այն փաստին, որ թուրքական իշխանությունները՝ սուլթանական, ապա՝ երիտթուրքական, հարմար պահի էին սպասում հայերին ոչնչացնելու համար, իսկ մահմեդական ամբոխը լիովին պատրաստ էր դրան¹։ Փաստորեն, բրիտանացի ճանապարհորդ-դիվանագետի աչքի առաջ պարզորոշ գծագրվում էր մոտավորապես ցեղասպանության հնարավորությունը։ 1916թ. փետրվարին Մ. Սայքսը մտավախություն էր հայտնում, որ ռուսների կողմից Էրզրումի գրավումից հետո թուրքական իշխանությունները, ըստ իրենց սովորույթի, կարող էին կեղծ լուրեր տարածել, որ ռուսական բանակի հետ եկող կովկասահայերը մահմեդականների կոտորածներ են կազմակերպում և այդպիսով գրգռաբարձրվում, որոնք ցանկություն ունենին միանալ հակաթուրքական պայքարին։ Նա համոզված էր, որ հայերը, բնականաբար, կցանկանային իրենց հայրենակիցների վրեժը լուծել, սակայն նրանց արածը թուրքերը փութաջանորեն կչափազանցնեին քարոզչական նպատակներով²։ Ինչպես տեսնում ենք, Մերձավոր Արևելքի խոշոր գիտականներից Մ. Սայքսը կանխատեսել էր հայոց ցեղասպանության հնարավորությունը և, ծանոթ լինելով թուրքական մտածելակերպին ու գործելակերպին, համոզված էր, որ թուրքերը կփորձեն կեղծել իրենց իրականացրած հանցանքը և նույնիսկ իրենց գոհերին ներկայացնել որպես ոճրագործներ։

1918թ. մարտի 27-ին Փարիզից ուղարկած հեռագրում Հայ ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբարը Գևորգ Ե կաթողիկոսին, քաղաքական ու զինվորական մի շարք գործիչների տեղեկացնում էր, որ «Թուրքերը լայնածավալ քարոզչություն են իրականացնում, հավակնելով այն բանին, որ ապացուցեն, թե իբր հայերն են կոտորել մահմեդական բնակչությանը, որպեսզի հաշտության կնքումից առաջ այս ձևով հասարակական կարծիքը նախապատրաստեն իրենց օգտին»³։

Պատերազմից անմիջապես հետո սկսվեց թուրքական կեղծարարության տարածումը ամենաբարձրաստիճան թուրք պաշտոնյաների մակարդակով։ 1919թ. փետրվարի 12-ին Թուրքիայի վարչապետ Թևֆիկ փաշան Փարիզի հաշտության կոնֆերանսին հանձնեց թուրքական հուշագիրը, որով պահանջում էր պահպանել օսմանյան կայսրությունը, իսկ պատերազմի մեջ մտնելու հարցում

¹ Sykes M., The Caliphs' Last Heritage. A short history of the Turkish Empire, London, 1915, pp. 372, 547.

² Պեյերյան Ա, Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հատոր I, Երևան, 2005, էջ 262-263։

³ Պեյերյան Ա, Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հատոր II, Երևան, 2005, էջ 215։

մեղադրում էր միայն երիտթուրքերին: Թուրքական սովորույթի համաձայն փորձում էր ամեն ինչ ներկայացնել ծուռ հայելու մեջ, այդ թվում հայերի ցեղասպանությունը: Այնտեղ հետևյալ կեղծ և արտառոց միտքն էր զարգացվում, որը հետագայում թուրքերը փորձում էին ամենուրեք ներկայացնել: «Այն տարածքները, որոնք հայերը և հույները համարում են իրենցը և ցանկանում են Թուրքիայից անջատել իրենց համար, վիճակագրական տվյալների համաձայն, իրականում հանդիսանում են «մահմեդական»: ...Հայկական բանդաները կոտորել են ավելի քան մեկ միլիոն մահմեդական մինչև տեղահանության ուղղությամբ քայլեր ձեռնարկելը և հատկապես արևելյան նահանգներ ցարի բանակի ներխուժումից հետո»¹: Եթե հավատանք Թուրքիայի վարչապետին, ապա անգեն հայերը կոտորել են մեկ միլիոն մահմեդականների, որից հետո թուրքական իշխանությունները ստիպված են եղել կազմակերպել հայերի տեղահանություն: Ինչպես տեսնում ենք, թուրքական պետական գործիչների ֆանտազիան անսահման է:

1919-1920 թթ. Կ. Պոլսում տեղի ունեցավ երիտթուրքերի դատավարությունը, որի նյութերը տպագրվեցին «Թաքվիմ-ի վեքա» պաշտոնաթերթում: Երիտթուրք պաշտոնյաներին առաջադրված հիմնական մեղադրանքներից մեկը հայերի զանգվածային տեղահանություն և կոտորած կազմակերպելն էր: Այդ դատավարության ընթացքում պարզվեց, որ թուրքական իշխանությունների կողմից իրականացվել է հրեշավոր հանցագործության՝ փորձ է արվել ոչնչացնել մի ողջ ժողովրդի²: Համաշխարհային պատերազմում հաղթած Անտանտի երկրների և պարտված Թուրքիայի միջև 1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրված Սևրի պայմանագրի 230-րդ հոդվածը նախատեսում էր, որ թուրքական կառավարությունը Դաշնակիցների դատին պետք է հանձնեք պատերազմի ժամանակ զազանություններ իրականացրած պաշտոնյաներին³:

Կ. Պոլսի բրիտանական գերագույն կոմիսար Հորաց Ռամբոլդը 1921թ. հունվարի 29-ին ԱԳ նախարար Զ. Քերզոնին ուղարկած զեկուցագրում ներկայացնում է Օսմանյան ԱԳ նախարար Սեֆա բեյի հետ զրույցը, ուր անդրադարձ կա նաև Հայկական հարցին և թուրքական կեղծարարության հերթական փորձին: Երբ Հ. Ռամբոլդը մեղադրել էր թուրքերին հայերի նկատմամբ Առաջին աշխարհամարտի տարիներին իրականացրած կոտորածների համար, Սեֆա բեյն իբր գղջացել էր, որ հայերին կոտորել են, սակայն ավելացրել էր, որ դրանից հետո հայերը ավելի շատ դաժանություններ

¹ Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне, Полный перевод с французского текста под редакцией проф. Ю. В. Ключникова и проф. А. Б. Саванина со вступительной статьей проф. Ю. В. Ключникова, Издание Литиздат НКВД, Москва, 1927, ст. XV.

² Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա.Հ.Փափազյանի, ՀԳԱ հրատարակչություն, Երևան, 1988:

³ Севрский мирный договор..., ст. 67-68.

են կատարել և ավելի շատ թուրքեր են կոտորել, քան իրենք հայերի: Ռամբոլդը կասկած էր հայտնել այդ հայտարարության ճշմարտացիության նկատմամբ և նշել, որ Սեֆի բեյն այդ անելով ակնհայտորեն չի պատկերացնում հայ ազգի նկատմամբ կատարված դաժանությունների ողջ մեծությունը: Հասկանալով, որ չի կարող խաբել փորձառու բրիտանացուն, Սեֆի բեյը փորձել էր կոտորածների մեղքը բարդել Ռուսաստանի վրա, որ իբր թուրքերը շատ լիբերալ են եղել իրենց հպատակ քրիստոնյաների նկատմամբ և իրենց ներքին գործերին միջամտելու և մյուս տերություններին թուրքերից վանելու համար ռուսներն են գրգռել թե քրիստոնյաներին, թե կոտորածների կազմակերպիչներին: Բնականաբար, Ռամբոլդը լուրջ չէր վերաբերվել թուրքական կեղծարարությանը¹:

Փաստորեն, Սեֆա բեյի կարծիքով, պատերազմական վիճակում գտնվող հակառակորդ երկիրը՝ Ռուսաստանը, կարողացել է Թուրքիայի մահմեդական բնակչությանը, բանակին ու ոստիկանությանը դրդել իրականացնելու քրիստոնյա հայերի կոտորածը: Թուրք պաշտոնյաները նման անհավանական կեղծիքներով փորձում էին մոլորեցնել համաշխարհային հանրությանը:

1921թ. փետրվարի 7-ին Ջ. Քերզոնին ուղարկած նամակում Հ. Ռամբոլդը անդրադառնում է նաև Մուստաֆա Քեմալի կողմից ցեղասպանության փաստերը ժխտելու և խեղաթուրելու միտումին. «Մուստաֆա Քեմալի այն մերկապարանոց պնդումը, որ լայն մասշտաբով կոտորածներ են կատարվել հայերի կողմից, նույնպես արժանի է ուշադրության: Նման մերկապարանոց պնդումները հայերի և հույների վերաբերյալ, թերևս սահմանափակ հիմք ունենալով, թուրքական պրոպագանդայում նշանակալից դեր են խաղում: Հետզհետե մեծացող ձգտում կա պատերազմի ընթացքում թուրքերի հակաքրիստոնեական քաղաքականության դատապարտումը զուգակցել բացատրություններով, որոնք ձգտում են գրեթե արդարացնել դրանք և այնպես անել, որ, իբրև հակակշիռ, գազանություններից շատերի մեղքը բարդվի հայերի և հույների վրա: Ես առիթ եմ ունեցել զեկուցելու վերջերս այստեղ արտաքին գործերի մինիստրի հետ տեղի ունեցած մեր զրույցի մասին, արձանագրելու նույն ընդհանուր տենդենցը, որն օգտագործում է Սեֆա բեյը»²:

Թևֆիկի լկտիությունն այնտեղ հասավ, որ 1921թ. փետրվարին, Լոնդոնի կոնֆերանսի ժամանակ, «Դեյլի տելեգրաֆին» տված հայտարարության մեջ հայկական ջարդերի հանցավոր համարեց հայերին: Պ. Նուբարը նույն թերթի միջոցով հերքեց այդ կեղծիքը՝ վկայակոչելով դաշնակիցների նախկին հայտարարությունները³:

¹ Documents on British Foreign Policy 1919-1939. First series, vol. XVII: Greece and Turkey 1921-1922. Edited by W. N. Medlicott, Douglas Dakin and M. E Lambert, London, 1970, p. 41-42.

² Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, խմբագիր Ջ. Կիրակոսյան, Երևան, 1972, էջ 695:

³ Արզումանյան Մ., Դարավոր գոյամարտ, Երևան, 1989, էջ 586:

Ինչպես տեսնում ենք, պատմական իրականությունը կեղծելու տենդենցը ոչ թե առանձին թուրք անհատների փորձեր էին, այլ Թուրքիայում սկզբնավորվող պետական քաղաքականություն, որը շարունակվում է մինչև այժմ:

1922թ. մարտի 23-ին, Փարիզում Ֆրանսիայի, Բրիտանիայի, Իտալիայի արտգործնախարարների հանդիպման ժամանակ Քերզոնը ներկաների ուշադրությունը հրավիրեց թուրքական ջարդարարության և դրանք արդարացնելու փորձերի վրա: «Թուրքերը, երբ դեմ առ դեմ կանգնեցին կոտորածների փաստի հետ, անմեղի տեսք ընդունեցին և պնդեցին, որ այս դեպքերը տեղի են ունեցել զոհերի թշնամական գործողությունների կամ հանդգնության պատճառով: Բայց բանը դրանում չէր: Նա հիշեցրեց ֆրանսիացիների էվակուացումը Կիլիկիայի ծայրամասերից, հայերի կոտորածները Մարաշում ու Հաճընում, հույներինը՝ Բսնիկում, կրկին հայերինը՝ Ջեյթունում ու Մարգվանում և Կովկասից եկած հայ տարագիրների կոտորածը: Բացի այդ, գնդապետ Ռոուլինսոնը, որը քեմալականների կողմից մեկ և կես տարի բանտարկված էր, վերադարձի ճանապարհին սեփական աչքերով է տեսել հույների համատարած տարագրությունը, բռնությունը սովից մահացող և բախտի քմահաճույքին թողնված կանանց, երեխաների ու տղամարդկանց նկատմամբ: Կոտորածների և տարագրության միջոցով փոքրամասնություններից ձերբազատվելու թուրքական հին պլանը դեռևս լրիվ գործողության մեջ էր: Սա բարոյական պատասխանատվություն է դնում բոլոր դաշնակիցների վրա, և հասարակական կարծիքը չի հանդուրժի, եթե նրանք չփորձեն լուրջ և հնարավորին չափ բավարար պաշտպանություն ցույց տալ այս դժբախտ փոքրամասնություններին: Լորդ Քերզոնը բերեց սինյոր Տուտոցցիի կարծիքը, որ նա հայտնել էր սըր Հ. Ռումֆոլդին Անգորա կատարած այցից հետո, որ թուրքական վարվելակերպը և բնաջնջման նրանց քաղաքականությունը որպես թե փոքրամասնությունների պրոբլեմի միակ լուծումն է»¹:

Փաստորեն, քեմալական իշխանությունները մի կողմից փորձում էին հայերի կոտորածների մեղքը բարդել հայերի, ռուսների և այլոց վրա, բացի Ֆանմեղ՝ թուրքերից, իսկ մյուս կողմից շարունակում էին ջանադրաբար ոչնչացնել Թուրքիայում ապրող քրիստոնյա ժողովուրդներին:

1922թ. մարտի 22-26-ը Փարիզում տեղի ունեցած Ֆրանսիայի, Բրիտանիայի, Իտալիայի արտգործնախարարների կոնֆերանսը, որը քննարկում էր Սևրի պայմանագրի վերանայման և Թուրքիայի հետ նոր պայմանագիր կնքելու հարցը, հայկական խնդրի կապակցությամբ հետևյալ որոշումն ընդունեց. «Հայերի վիճակը պետք է հատուկ ուշադրության արժանանա, ինչպես պատերազմի ժամանակ դաշնակից տերությունների կողմից վերցված պարտավորությունների

¹ Documents on British Foreign Policy, pp. 680-681.



տեսքով, այնպես էլ հաշվի առնելով այդ ժողովրդի կողմից կրած դաժան տառապանքները¹:

Սակայն մեծ տերությունները բարի ցանկություններից ու հայտարարություններից այն կողմ չանցան հայերը հետ չստացան ցեղասպանության հետևանքով կորցրած տարածքները, իսկ թուրք ջարդարարները այդպես էլ չպատժվեցին:

Լոզանի կոնֆերանսում, 1922թ. դեկտեմբերի 13-ի ռազմատերիտորիալ հանձնաժողովի 14-րդ նիստում Իսմեթ փաշան, կեղծելով իրականությունը, փորձեց ապացուցել, որ հայերը և մյուս ազգային փոքրամասնությունները օսմանյան կայսրությունում ապրել են թուրքերի հետ համերաշխ, երջանիկ ու գոհ՝ կառավարության կողմից արժանանալով ամենաեղբայրական զգացմունքների, իսկ բոլոր հուզումները հարուցված են եղել Ռուսաստանի միջամտություններով և այժմ էլ թուրքերը բարյացակամ են տրամադրված հայերի հանդեպ: Լորդ Քերզոնը թուրքերին հիշեցրեց նրանց արյունոտ գործողությունները, որոնք վկայված էին նաև «Կապույտ գրքերի» մեջ և հեզնանքով հետևյալ հարցն ուղղեց թուրք պատվիրակներին. «Եթե երկու ժողովուրդների միջև միշտ գոյություն են ունեցել երջանիկ հարաբերություններ, ապա այդ ինչպե՞ս պատահեց, որ Փոքր Ասիայում ապրող երեք միլիոն հայերի թիվը նվազելով հասել է 130 հազարի: Արդյո՞ք նրանք ինքնասպանություն են գործել, թե՞ անհետացել են կամավոր կերպով: Ի՞նչ ճնշման տակ է տեղի ունեցել այդ նվազումը: Երբ ֆրանսիական զորքերը վերջերս էվակուացնում էին Կիլիկիան, ինչու՞ այդ երջանիկ ու գոհունակ ազգին պատկանող 60-ից մինչև 80 հազար մարդիկ գաղթեցին, գնալով ֆրանսիացիների հետևից, թողնելով իրենց տներն ու Կիլիկիայից դուրս իրենց ընտանիքները մատնելով մուրացկանի կյանքի: Ինչու՞ տեղահանության պատճառով այժմ հարյուր հազարավոր հայեր ցրված են բոլոր աշխարհամասերում, այն ժամանակ, երբ նրանք պետք է հետևեին թուրքական կառավարության սիրալիք հրավերներին: Վերջապես, ինչու՞ է հայկական հարցը հանդիսանում աշխարհի ամենամեծ խայտառակություններից մեկը»²:

Այդ ոճրագործությունը տեղի էր ունեցել ամբողջ մարդկության աչքի առաջ, զանգվածային կոտորածների կազմակերպման գործընթացը և իրականացման ամբողջ դաժանությունը բացահայտվել և դատապարտվել էն հենց թուրքական ռազմական դատարանի կողմից: Չնայած դրան՝ թուրքական իշխանությունները ի սկզբանե մինչև այսօր ամեն կերպ փորձում են կեղծել բացահայտ փաստերը և իրադարձությունները ներկայացնել ծուռ հայելու մեջ: Նրանց հանդգնությունը հասավ այնտեղ, որ նույնիսկ փորձում էիր մեղադրել զոհերին՝ հայերին, հույներն, ասորիներին, որ իբր նրանք են կոտորել «խեղձ» թուրքերին: Սակայն

¹ Севрский мирный договор ..., ст. XXV.

² Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 750:



թուրքական իշխանությունների կողմից հետպատերազմյան շրջանում իրականությունը խեղաթյուրելու և բրիտանական դիվանագետների ու պետական գործիչներին թյուրիմացության մեջ գցելու փորձերը հանդիպում էին արժանի հակահարվածի և ձախողվում էին:

Ամփոփում

Թուրքական պատմագրությունը և պետական գործիչները անդադար փորձում են ժխտել 1915-1916թթ. Հայոց ցեղասպանությունը և կեղծել փաստերը: Որոշ բրիտանացի դիվանագետներ կանխատեսել էին ցեղասպանության հնարավորությունը և նույնիսկ կեղծ քարոզչության հավանականությունը, որպեսզի գաղտնի պահեն հանցագործությունը: Թուրքական իշխանությունները ի սկզբանե մինչև այսօր ամեն կերպ փորձում են կեղծել բացահայտ փաստերը և իրադարձությունները ներկայացնել ծուռ հայելու մեջ: Սակայն թուրքական իշխանությունների կողմից հետպատերազմյան շրջանում իրականությունը խեղաթյուրելու և բրիտանական դիվանագետների ու պետական գործիչներին թյուրիմացության մեջ գցելու փորձերը հանդիպում էին արժանի հակահարվածի և ձախողվում էին:

British Diplomats' Reviews of Turkish Policy of Falsification of the Armenian Genocide (1915-1922)

Samvel Poghosyan

Summary

Key words: *Turkish historiography, Armenian genocide, British diplomats, manipulate, falsify the reality.*

The Turkish historiography and statesmen uncessantly tried to deny the Armenian genocide of 1915-1916 and falsified the facts. Some British diplomats had foreseen the possibility of genocide and even the probability of false agitation to keep in secret the crime. Turkish authorities have been trying since the very beginning until today to manipulate the obvious facts, presenting the events through the false mirror. However, the Turkish government's attempts to falsify the reality in the post-war period met counterblow and mostly failed.

**Отзывы британских дипломатов о турецкой политике фальсификации
Геноцида армян (1915-1922)**

Самвел А. Погосян

Резюме

Ключевые слова: Турецкая историография, геноцид армян, британские дипломаты, кривое зеркало, факты.

Турецкая историография и государственные деятели неизменно придерживаются политики отрицания геноцида армян 1915-1916гг. и фальсификации фактов. Некоторые британские дипломаты предвидели возможность геноцида и, даже, вероятность ложной агитации с целью скрыть имевшие место преступления. С самого начала и до сегодняшнего дня турецкие власти пытаются манипулировать очевидными фактами, представляя события сквозь кривое зеркало. Тем не менее, попытки турецкого правительства фальсифицировать действительность в послевоенный период встретили отпор и, в основном, провалились.

**ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ «ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՆ»
ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՀԱՐՅԻ ՇՈՒՐՋ**

Ավետիս Հարությունյան

Արմինե Ավանեսյան

պ. գ. թ., դոցն նտ, ՀՊՄՀ

ՀՊՄՀ

Բանալի բառեր՝ կոտորած, Վան, կամավորական, շարժում, Ա. Վռամյան, դավաճանություն, դաշնակցություն, ապստամբություն, դաշինք, բանակ, Յ.Լեփսիուս:

Իթթիհատի կենտրոնական կոմիտեն արևմտահայերի տեղահանության և բնաջնջման որոշումն ի կատար ածելուց առաջ պետք է ստեղծեր գաղափարական կեղծ մի «հիմնավորում»,՝ արդարացնելու համար կառավարության հանցագործ այն գործելակերպը, որը պատճառ դարձավ 1,5 մլն արևմտահայերի ոչնչացման: Ելակետ ընդունելով այդ սկզբունքը՝ թուրքական պատմագիտության մեջ տիրապետող և չհիմնավորված է բացահայտ անհիմն և շինծու այն շաղակրատանքը, որ Վան-Վասպուրականի կոտորածները, Կ.Պոլսի հայ մտավորականության և հեռագրատների գրաքննիչների 1915 թ. ապրիլի 11(24)-ի աքսորը, Էրզրումի, Բասենի, Դերսիմի տեղահանությունները և ընդհանրապես Հայոց մեծ եղեռնը պայմանավորված են եղել՝ ա) Կովկասյան ռազմաճակատում 1914 թ. կազմակերպված հայկական կամավորական ջոկատների ռազմական գործողություններով, բ) ըստ Վանգենհայմի՝ «հավանաբար ռուսական խարդավանքների հետևանքով, կազմակերպված՝ Վանի ազգաբնակչության 1914-1915 թթ. «ապստամբությամբ», որոնք իրականացվել են թուրքական իշխանությունների դեմ և նպատակ են ունեցել վտանգել թուրքական բանակի թիկունքը: Նույն Վանգենհայմը ռայխսկանցլեր ֆոն Բեթման Շոլվեգին ուղղված 1915թ. ապրիլի 30-ի հեռագրում ավելացնում է, որ «կառավարության որոշումների վրա չէին կարող ազդեցություն չգործել Վանի դեպքերը և այս օրերին ռուսների իրար հաջորդող հարձակումները Բոսֆորում, ինչպես նաև ֆրանսիացիների և անգլիացիների միացյալ հարձակումները Դարդանեղի վրա»,²: Ինչպես հետագայում Ա. Շիրակյանը կկոռահեր՝ «ետագային թրքական կառավարութիւնը պիտի շահագործեր Վանի դեպքը, զայն ներկայացնելով որպէս ծրագրուած հայկական ընդհանուր ապստամբութեան փորձ մը՝ որուն նպատակն

¹ Գերմանիան եվ Հայաստանը 1914 – 1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հրատարակությունը և ներածությունը՝ դոկտոր Յոհաննես Լեփսիուսի, թարգմանությունը գերմաներենից՝ Վալենտինա Մինայանի, հատոր I, Երեվան, 2006, էջ 150:

² Գերմանիան եվ Հայաստանը 1914 – 1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հրատարակությունը և ներածությունը՝ դոկտոր Յոհաննես Լեփսիուսի, հատոր I, էջ 162: :

էր թիկունքէն հարուածել թուրք բանակը,¹ :

Կեղծ քարոզչության արդյունքում՝ Վանում հայերի ինքնապաշտպանության լուրը էնվերն ու այլք տարածեցին աշխարհով մեկ: Ինչպես Ֆ. Նանսենն է նկատում՝ Վանի դեպքերը հայերի նկատմամբ թուրքերի բռնած դիրքի բնորոշ օրինակ է: Նրանք իրենց ուզածով այնպես շահարկեցին այսպես կոչված „Վանի ապստամբությունը,,՝ որպես հայերի „դավաճանության իրական ապացույց,, որ հայերը ներկայանան որպես խռովարարներ և դավաճաններ:² Ըստ այդմ առաջ քաշվեց, դավաճանության,, ճղճիմ խնդիրը:

Հիմնախնդիրը խորությամբ ընկալելու և այն հասկանալի դարձնելու համար, փորձենք ներկայացնել ինչպես Անտանտի, այնպես էլ Քառյակ միության երկրների պետական հայեցակարգային որոշ մոտեցումներ, որոնք պահպանվել են դիվանագիտական զեկուցագրերում և պատմագիտական աշխատություններում:

Ռուսաստանի արտգործնախարար Պ. Ն. Միլյուկովն իշխանություններին ուղղված իր՝ „Ռուսաստանին հայերի նվիրվածության և նրանց նկատմամբ ռուսական զինվորական իշխանությունների անարդար վերաբերմունքի մասին,, հոդվածում նշում է, որ Ռուսաստանի նկատմամբ հայերն իրենց կապվածությունը և նվիրվածությունը ցուցադրել են ոչ թե խոսքով, այլ „վճռական և ծայրահեղ պատասխանատու գործողություններով,,: Նրա հավաստմամբ՝ հայերը Ռուսաստանում կազմակերպել են իրենց սեփական կամավորական ջոկատները, իսկ Թուրքիայում բարձրացրել են ապստամբության դրոշ... իրենց տանը կատարել են հանցագործություններից ամենածանրագույնը. ճգնաժամային պահին, երբ քարտեզի վրա դրված էր Թուրքիայի ինքնագոյության խնդիրը, նրանք դավաճանել են պետությանը և զենքը ձեռքին ապստամբել են նրա դեմ և բացահայտ հանձնվել թշնամուն: Այդպիսի արարքները չեն ներվում, իսկ դրա արդյունքն առկա է,,³:

Ռուսաստանի Արտաքին գործերի նախարար Սազոնովը Հայկական հարցի վերաբերյալ Ռուսաստանի նախարարների խորհրդին ներկայացված իր 1916թ. հունիս-հուլիսի զեկուցագրում տեղեկացնում էր, որ „հայերը Թուրքիայում ոչ միայն կանգնած չէին թուրքերի կողքին, ինչն, ըստ էության, նրանց քաղաքացիական պարտքն էր, այլև կազմեցին բազմահազարանոց ջոկատներ, որոնք մեծ մասամբ կազմված էին թուրքահպատակ հայերից,,:

Բժիշկ Իսահակ Տերտերյանի և թուրք սպաներից մեկի միջև տեղի ունեցած

¹ Շիրակեան Ա., Կտակն էր նահատակներուն, Երևան, 1991, էջ 44:

² Նանսեն Ֆ., Խաբված ժողովուրդ. Ազգերի ընկերակցության գլխավոր հանձնակատարի հետազոտական ճանապարհորդությունը Վրաստան և Հայաստան, գերմաներենից թարգմանեց՝ Էվելինա Մակարյան, Երևան, 2003, էջ 273-274:

³ ЦГИА г. Москвы, ф. 579, оп. 1, д. 1878, л. 2-3, նաև ՀԱԱ, ֆ. 1120, ց. 1, գ. 93, թ. 3-4:

խոսակցությունից ակնհայտ երևում է, որ իթթիհատականները արևմտահայերին որակել են որպես դավաճաններ. „Բայց իմ կարծիքով, - նշում է թուրք սպան, - երբ հայերը ստացել էին իրենց ներքին ազատությունը՝ սահմանադրությունը, որը երաշխավորում էր նրանց կրոնական, ազգային և կրթական իրավունքները՝ լեզուն, դպրոցը, մշակույթը և այլն, նրանք պիտի հանգիստ ապրեին, չպիտի յեղափոխություն հրահրեին և օտարների միջամտության պատճառ լինեին... Եւ արդարև, դոկտոր, մի՞թե Ռուսաստանում հայերը աւելի լայն իրավունքներով են օգտուում, քան մեզ մոտ: Եւ եթէ չէ, ապա ռուսահայերը փոխանակ մեր դէմ կուելու... ինչու՞ չեն գնում Ցարի դէմ կուելու... Չէ՞ք գտնում, որ այս վերաբերմունքը հայերի կողմից մի ապերախտություն է մեր հանդեպ, եթէ չասիմ աւելին...»,¹:

Գնահատելով կատարվող իրադրության նշանակությունը՝ թուրքական գործիչներից մեկը՝ Ջևդեթ-բեյն ասում էր. „Ռուս զինվորի գնդակը հարվածում է մեր ոտքին, հայի գնդակը՝ ուղիղ մեր սրտին»,²:

Դեռ ավելին, դաշնակցությունն է մեղադրվում դավաճանության մեջ: Այսպես, Թալեաթը իթթիհատի ժողովներից մեկում փորձում է բացատրել, որ „տակաւին պատերազմի չմտած, հայերու Դաշնակցութեան ղեկավարներուն հետ համաձայնած եւ պատերազմի պարագային հայերու չէզոք մնալու եւ ո՛չ մեզի, ո՛չ ալ ռուսերուն օգնելու համար ստորագրուած Փրոթոգոլը՝ Էրզրումի մէջ գումարուող համաժողովին վաւերացնել տուած էին: Հիմա խնդիրը փոխեցին: Ռուս բանակին կամաւորներ դրկեցին, խօսքերնին չյարգեցին, խոստմնադրուծ եղան, այս պատճառաւ ռուս բանակին ընկերացող հայ կամաւորներու հետ շփման մէջ մտնելու եւ զանոնք համոզելով վերադարձնելու պատրուակով»,³: Հիմք ընդունելով թուրքական ստահող այս հերյուրանքները՝ խորհրդահայ որոշ հեղինակներ Հայոց Մեծ Եղեռնի ամբողջ պատասխանատվությունը բարդել են դաշնակցության վրա, նրան համարելով ցարական Ռուսաստանի անմիջական գործակալ, որն իր կործանարար ռուսամետ քաղաքականությամբ դարձավ 1.5 մլն արևմտահայերի ոչնչացման գլխավոր մեղավորը⁴:

Ստացվում է, որ հայկական կոտորածների „պատճառը,, հենց իրենք հայերն էին, թե ռազմական գործողություններին սպառնում էին հայկական

¹ Բժ. Տերտերեան Ի., Հայկական գոյամարտը. մեր ցեղի դառնադետ անցեալի սեղմ պատմութիւնը, Երկերի ժողովածու, վեցերորդ հատոր, Թեհրան, 1957, էջ 215:

² Ռուսաստանի Արտաքին գործերի նախարարության փաստաթղթերը Հայոց 1915-1916 թթ. ցեղասպանության մասին, կազմող, առաջաբանի, թարգմանության հեղինակ՝ Արմեն Մարուքյան, Երևան, 2001, էջ 70:

³ Մելլան Չատե Դիֆաթ, Օսմանեան յեղափոխութեան մուր ծալքերը եւ իթթիհատի հայաջինջ ծրագիրները, Երևան, 1990, էջ 93:

⁴ Цовикян Х.М., Младотурецкая революция и национальный вопрос, Тезисы на соискание степени кандидата исторических наук, Л., 1937, с. 13.

ժողովրդական տարրերի հեղափոխական շարժումները, որի հետևանքով էլ իբր պետական անվտանգությունը հայտնվել էր վտանգի տակ:

Ճիշտ է նկատում Վ. Տատրյանը, երբ նշում է, որ „նման բացարձակ անիմաստ ընդհանրացման ետևում ջատագովները հաճախ թաքցնում են անպաշտպան մարդկանց հանդեպ բռնակալների վայրենի գործողությունները,¹:

Վանի և շրջանի հայությունը, որն „ինքնագապողութեան հիանալի ընթացքով շարժեցան,² բնավ ապստամբելու նպատակ չի ունեցել և ոչ էլ առանձին պատրաստություն էր տեսել: Բանն այն է, որ Վանում տարիներ շարունակ գործունեություն ծավալած և, առաջին հայացքից, իրենցից կազմակերպված ուժ ներկայացնող հայ քաղաքական կուսակցությունների, մասնավորապես՝ դաշնակցության տեղական կազմակերպությունները ապստամբություն բարձրացնելու, թուրքական բանակին թիկունքից հարվածելու և ոչ մի գործնական մտադրություն չունեին:

Դաշնակցական դեկավար գործիչների խոստովանությամբ՝ պատերազմի նախօրյակին „Վանեն մինչև Կիլիկիա,, ապստամբական „հոգեբանությունը գոյություն չունէր, այսպիսի ծրագիր մը գծուած չէր: Հայութիւնն ու Հ.Յ. Դաշնակցութիւնն այսպիսի ձեռնարկ մը գլուխ հանելու համար պատրաստուած չէին: Երկվութիւնը և տատանումը մնացին իրենց ուժին մէջ,³:

Իթթիհատ-դաշնակցական համագործակցությունը, որ սահմանադրությունից ի վեր շարունակվում էր մինչև պատերազմի նախօրյակը, „ամլացրել,, էր այդ կուսակցությանը և նրան դարձրել նախաձեռնությունից զուրկ, հասունացող իրադարձությունների ետևից ընթացող մարդկանց խումբ:

Թուրքերն էլ հայերից բնավ վախենալու պատճառ չունեին, քանի որ հայերը, որպես կանոն, անգեն էին, իսկ տղամարդկանց մեծագույն մասը տարբեր վայրերում զինվորական ծառայության մեջ էր: Արամ Անտոնյանը նկատում է, որ „եթէ իրապէս ապստամբութեան ծրագիր մըն ալ ունեցած ըլլային, այդ ծրագիրը գործադրելու բացարձակապէս անկարող դարձած էին այն պատճառաւ, որ իրենցմէ 21 տարեկանէն մինչեւ 45 տարեկան այրերը արդէն իսկ դրօշի տակ կանչուած եւ զինուորական իշխանութեանց ձեռքն էին: Ապահովաբար

¹ Տատրյան Վ., Հայոց ցեղասպանության հերքման հիմնական փաստարկները, Աղավաղման և կեղծարարության ուսումնասիրություն, Երևան, 2005, էջ 21:

² Ամերիկեան դեսպան Սր. Սօրկընթաուի Յիշատակները եւ հայկական Եղեռնին գաղտնիքները, Կ.Պոլիս, 1915, էջ 246:

³ Սասունի Կ., Տաճկահայաստանը ռուսական տիրապետութեան տակ (1914-1918).

Տաճկահայ գաղթաշարժը եւ անոնց դերը Հայաստանի Հանրապետութեան կազմութեան մէջ, Բոստոն, 1927, էջ 25-26:

մանուկներով, կիներով, աղջիկներով եւ ծերունիներով չէ որ Հայերը պիտի կրնային ապստամբիլ,¹:

Վասպուրականի ամբողջ հայությունը՝ Օսմանյան խորհրդարանի անդամ, հայտնի դաշնակցական Ա. Վռամյանի և Արամի գլխավորությամբ, ոչ միայն դեմ էր ամենավորժր ապստամբական շարժում հրահրելուն, այլև „առանձին խոհեմությամբ և հեռատեսությամբ,, գաղտնի պատվիրակներ և նամակներ էր ուղարկում ս.Էջմիածին և Թիֆլիս՝ Հայոց կաթողիկոսի և Ազգային բյուրոյի ներկայացուցիչների մոտ, որպեսզի վերջ տան կամավորական շարժմանը և „վերապահ ու խոհեմ ընթացք բռնեն և չգրգռեն ոճրագործ իթիհատական ոճրաձարավ թուրք կառավարութեան,,²: Արամը „թրքահայ ժողովրդի համար կորստաբեր կը համարեր կամաւորական շարժումներու կազմակերպութիւնը եւ մանաւանդ գործօն մասնակցութիւնը՝ ենթարկուելով ռուսական բանակին,,³:

Արամի և Ա. Վռամյանի համար պարզ էր, որ կամավորական շարժումը մի գէնք էր լինելու Իթիհատի ձեռքին՝ հայերի հանդէպ իրենց թշնամական վերաբերմունքն արտահայտելու համար: Այդ գիտակցությամբ՝ Դաշնակցության ղեկավարներն արեցին հնարավորը ոչ միայն թափ առնող հայ կամավորականների շարժումը կասեցնելու համար, այլև թուրքական կառավարությանն ապացուցելու, որ „Թիֆլիսում (Ռուսաստանում) տեղի ունեցած հակատաճկական շարժումները ոչ մի կապ չունին տաճկահայ բուն ժողովրդի հետ, որն, ըստ ամենայնի, օրինակելի պարտաճանաչ էր իր պետութեան հանդէպ՝ կատարելով պատերազմի հետ կապուած ամենաձանր պահանջները,,⁴: Սակայն այդ նրանց չհաջողվեց, որովհետև, ինչպես Արամն է նշում՝ „Մեզի հարցնող չեղաւ ... մենք այստեղ բոլորովին անտեղեակ էինք եւ հակառակ էինք առնուած քայլին ... Ռուստոմ այնտեղ չէ. գործը մնացել է Ջամալեանի պէս գեաղա-գիւղաների ձեռքում,,⁵:

Ռուսական բանակի հարձակման հաջողության ժամանակ էլ Վանի հայկական հասարակական-քաղաքական ղեկավարների շրջանում հիմնականում իշխում էր թուրքական կառավարության հետ կապերը չիզելու, նրա դեմ ըմբոստացում թույլ չտալու տեսակետը, քանի դեռ ռուսական զորքերը չէին գրավել այդ վայրերը: „...Թէեւ մթնոլորտը լեցուած էր խռովութիւններու կանխանշաններով,- նկատում է

¹ Անտոնեան Ա., Մեծ ոճիրը, Հայկական վերջին կոտորածները եւ Թալէադ փաշա. պաշտօնական հեռագիրներ բնագիրներու ստորագրութեամբ եւ բազմաթիւ պատկերներով, Պոսթըն, 1921, էջ 125:

² Պալաքեան Գր. ծ. վարդ., Հայ գողգոթան, դրուագներ հայ մարտիրոսագրութենէն. Պեոլինէն դէպի Ջօր. 1914 1920, Ա հատոր, Վիեննա, 1922, էջ 61, նաև Հովհ. ալ. քհ. Հաճյան, Հայոց տաժանքի ճամբաներով, Ա հատոր, Թեհրան, 1965, էջ 374-375:

³ Փափագեան Վ., Բմ Յուշերը, Բ հատոր, Բոստոն, 1952, էջ 289-295:

⁴ Արամը. մահուան յիսնամեակին առթիւ, Երևան, 1991, էջ 68:

⁵ Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն. Յուշեր 1890 Էն 1940, Փարիզ, 1947, էջ 154-155:

Հ. Մորգենթաուն, բայց Հայերը ինքնագաղափարապես հիանալի ընթացքով շարժեցան... Հայ կղերը եւ քաղաքական պետերը... ժողովրդին մեջ մտան, նախագ•ուշացնելով հանդարտութիւն պահել, համբերատարօրէն հանդուրժել ամեն անարգանքի եւ նոյն իսկ ծայրայեղութիւններու, աստով չտալու համար Թիւրքերուն այն առիթը՝ զոր կը փնտռէին... Եթէ նոյն իսկ անոնք մեր մէկ քանի գիւղերը կրակի տան, կ'ըսէին այդ պետերը, փոխվրէժի մի՛ դիմէք, որովհետեւ աւելի լաւ է որ՝ մէկ քանի գիւղեր ոչնչանան, քան ամբողջ ազգը կոտորուի»,¹:

Երբ ռուսական բանակը, իր կազմում ունենալով Անդրանիկի խումբը, պատերազմի սկզբին գրավեց թուրք-պարսկական սահմանագլխի վրա՝ Վանից ոչ հեռու գտնվող Սարայ գյուղաքաղաքը, Վանում թուրքական իշխանությունները խուճապի մատնվեցին և պատրաստվեցին տեղափոխվել Բիթլիս: Այդ օրերին Վանում թուրքական ռազմական ուժ չկար, եթէ չհաշվենք չորս հարյուրի (400-ի) հասնող ոստիկաններին և, ինչպէս Արմենակ Եկարյանն է վկայում. „Մերինները կրնային ամեն բան ընել անարգել²: Սակայն, - շարունակում է Ա. Եկարյանը, - մեր վրա պարտականություն կծանրանար զգույշ կենալը, եթէ քաղաքի մեջ և մերձակայքը մենք կրնայինք մեր ուզածը ընել, չէինք կրնար սակայն պաշտպանել գյուղական շրջանները՝ զուրկ ինքնապաշտպանության ամեն միջոցէ, կղզիացած շատ տեղ, քրդական ծովու մեջ»,³:

Վանի ամերիկյան ուսումնական հաստատության միսիոներուի միս Նեփին հաղորդում էր, որ հայ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները „ցույց տվին գնահատելի խոհեմություն և իրենց տաք գլուխ երիտասարդությանը խաղաղեցնելու համար... արգելեցին ընդհարումները և հրամայեցին գյուղացիներին լռությամբ տանել ամեն բան: Խորհուրդ տվին հրկիզված գյուղերի համար վրեժխնդիր չլինել, որպեսզի իրենց կողմից որևէ փոխադարձությամբ ընդհանուր ջարդ առաջ չբերվեր»,⁴:

Կար նաև մի կարևոր իրողություն, որի մասին Յ. Լեփսիուսը շտապում է 1915 թ. հունիսի 22-ին հաղորդել Գերմանիայի արտգործնախարարության խոհրդական Ռոզենբերգին: Նա մասնավորապես նշում է, որ „Վանի տարածքի հայերը սկզբունքորեն պատրաստ են իրենց հարցը սահմանազատել ռուսների հարցից, քանի որ նրանք թուրքական գերիշխանությունը գերադասում են ռուսականից: Նրանք կռվում են ոչ թե ռուսների, այլ իրենց հայենակիցներին քրդերի հարձակումներից պաշտպանելու համար: Նաև ռուսահայերի առաջնորդներն են այդ տեսակետին, ինչպես հավաստիացնում են ինձ, և ապագայում կարող են

¹ Ամերիկեան դեսպան Մր. Մօրկընթաուի հիշատակները եւ հայկական եղեռնի գճաղտնիքները, էջ 246:

² Յուշեր Արմենակ Եկարեանի, Գահիրե, 1947, էջ 186:

³ Յուշեր Արմենակ Եկարեանի, Գահիրե, 1947, էջ 186:

⁴ Մեծ պատերազմը և հայ ժողովուրդը, Կ. Պոլիս, 1920, էջ 47::

հակվել գերմանաթուրքական շահերին»,¹:

Այսպիսով, չնայած բոլոր դժվարություններին, հայերը կատարում էին իրենց քաղաքացիական պարտքը և փորձում էին խուսափել անախորժություններից ու աղետներից:

Այն, որ կամավորական շարժումը պիտի բորբոքեր «թուրքերու մինչև այժմ գապուած բարբարոսական կիրքը»,² իրողություն էր: Թուրքերը չափազանցնում էին հայ կամավորների դերը: Նրանց էին վերագրում ռուսական բանակի հաջողությունները և ամեն կերպ աշխատում էին հետ կանգնեցնել նրանց ռուսական զորքի շարքերից: Այսպես, Վանի թուրք նշանավոր գործիչներից մեկը՝ Քեազիմ բեյը, Արմենակ Եկարյանին խոստովանում էր, որ «Հայերը իրենց այս խումբերովը մեծ վնաս պիտի հասցնեն մեզի, բայց պետք է գիտնալ թե շահողները Հայերը պիտի չլլան. այս անհեռատես շարժումը պիտի գրգռե մեր ժողովուրդը, որ պիտի ուզե բնաջնջել Հայը: Վնասուողները մեր երկու ժողովուրդները պիտի ըլլան»,³

Այն իրողությունը, որ ռուսական ուժերի մի մասը կազմված էր հայերից, անգուսպ գայրույթ էր պատճառում թուրքերին, որոնք էլ համոզված էին, որ «քրիստոնյաներին պետք է կոտորել»,⁴: Այսպես, Ջևդեթը հայերի ու թուրքերի միջև միջնորդ հանդիսացող Իտալիայի փոխհյուպատոս՝ Սպորտոնին և ամերիկացի միսիոներ Ըջերին հասցեագրված նամակում նշում էր, որ «Ըսեք հայերուն, թող չկարծեն թե չենք գիտեր. Թիւրքիոյ հանդէպ իրենց թշնամական դիրքը զաղտնիք մը չէ մեզի համար: Զինուած խումբերը կը պտտցնեն, զինավարժութիւններ կը կատարեն: Մեր զօրքերը հայերու դէմ է որ կը կռուեն աւելի քան ռուսերու, հայ կամավորներու գնդակներէն է, որ կսպանուեն մեր զօրքերու մեծ մասը: Ռուսին գնդակը մեր ոտքը կը ծակէ, իսկ հայոց գնդակները մեր սիրտը: Թող լաւ գիտնան հայերը, երբ ջարդ սկսի հայերու, նախորդին նման չպիտի լինի բնաւ: Այս անգամ կիներուն ու երեխաներուն ալ չպիտի խնայենք: Այս երկիրը կամ միւսիւրմաններուն պիտի ըլլայ բոլորովին, կամ քրիստոնիաներուն»,⁵:

2. Մորգենթաուն պետքարտուղարին հասցեագրված 1915 թ. հուլիսի 10-ի հեռագրում ընդհանրացնում է, որ Վանի նահանգում «սարսափելի վրեժ է

¹ Գուստ (Հր.) Վ., Հայերի ցեղասպանությունը 1915-1916. Գերմանիայի արտաքին •ործերի նախարարության քաղաքական արխիվի փաստաթղթերից, Երևան, 2005, էջ 82:

² Դարբինյան Ա., Հայ ազատա•րական շարժման օրերէն, Յուշեր 1890 էն 1940, էջ 154:

³ Յուշեր Արմենակ Եկարեանի, էջ 182:

⁴ ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 10, թ. 22:

⁵ «Վան-Տոսպ», Թիֆլիս, 1916, թիվ 16, էջ 3, նաև Գեղամեան Ե., Հայերի ազատագրական շարժումները XX դարում կամ Հայկական հարցի եօթներորդ շրջանը, մաս 2-րդ, էջ 624-625:

լուծվում,, այն բանի համար, որ որոշ հայեր՝ որպես կամավոր միացել են ռուսական բանակին և օգնել ռուսներին գրավելու Վանը¹:

Սակայն, եթե նկատենք, որ աշխարհի հայերի մոտավորապես կեսն այդ ժամանակահատվածում բնակվում էր Կովկասի ռուսական նահանգներում և որ նրանք՝ ռուսների նման ենթակա էին զինվորական ծառայության, անկասկած տրտունջի օրինավոր պատճառ չէր դառնար, քանի որ „այս հայ զինուորագիրները Ձարին հաւատարիմ (*bona fide*) հպատակներ էին,,²:

Տեղական իշխանությունները, ինչպես և բանակում եղած երիտասարդ թուրք գործիչները մի քանի անգամ դիմեցին Վանի դաշնակցականներին՝ առաջարկելով հետ կանգնեցնել կամավորական խմբերը Պարսկաստանից:

Այդ դիմումներից առանձնապես հետաքրքիր է մեկը: Ռուս-թուրքական պատերազմից անցել էր մեկ ու կես ամիս: Այդ միջոցին Բաշկալեում էր գտնվում երիտասարդ թուրքերի ներկայացուցիչ Նաջի բեյը, որը Բաջիրկանեում դեկավարում էր չեթեյական խմբերը և նրանց միջոցով Պարսկաստանում կազմակերպում էր խռովություններ ռուսների դեմ, Առաջին աշխարհամարտի սկզբին, Բուխար-Էդդիին և Հիլմի բեյի հետ մեկնեց Էրզրում՝ դաշնակցական ներկայացուցիչների հետ բանակցելու: Ահա այս Նաջի բեյը 1914 թ. դեկտեմբերի 4-ին Բաջիրկանեից „իր բարեկամ,, Ա. Վռամեանին ուղղեց հետևեալ հեռագիրը. „Մուսուլի բանակը և իմ տրամադրութեան տակ գտնուող զինուորներին ու չեթաները մինչև Մէլիամ եղած գիւղերը և Ճըստան գրաւեցին. Աստուծով աւելի առաջ պիտի երթանք: Ձեր և ձեր ընկերներուն Էրզրում և Վան գտնւած ատենս տւած խոստումներուն հաւատարիմ չըլլալը կը հասկցի: Բաշկալէի կողմերը եկող և 2 օր վերջ վնդուող թշնամին և այսօր Սալմաստ քաշուղ Սմբատի և իր ընկերներուն նայելով, եթե անոնց այս շրջաններուն մէջ կատարւածներուն նայլի, կը հասկցի որ դաշնակցականները գործով ռուսներու հետ ընկերակից են: Հայերը առիծը չսպանած կաշին բաժնելու պէս սխալի կը մղէք. Ֆահկիի (սուրհանդակ) Օսմանի վրա Իշխանին ուղղւած նամակը ձեռքս է. ասիկա ամբողջ միւսլիմաններուն և օսմանեան մամուլին ներկայացնելէ առաջ, վերջին անգամ ըլլալով ձեր ուշադրութեան յանձնել կուգեմ....,³:

Նման առաջարկություն տեղի ունեցավ նաև Վանի կուսակալ Ջևդետի կողմից: Ռազմական գործողությունները սկսվելուն պես Ջևդետն իր պաշտոնը հանձնեց Բաշկալեի մութասարիֆին և անձամբ գնաց պատերազմի դաշտ: Այդպես վարվեցին նաև մի քանի գայմագամներ, որոնց թվում և Շատախի գայմագամը,

¹ Ամերիկայի Միացյալ Նահանգների վավերագրերը 1915-1916 թթ. Հայոց ցեղասպանության մասին, Կազմող և ներածության հեղինակ՝ Տիգրան Զաքարյան, Երևան, 2002, էջ 36:

² Ամերիկեան դեսպան Սր. Մօրկընթաուի հիշատակները եւ հայկական եղեռնի գաղտնիքները, էջ 245:

³ Ա.-Դօ, Մեծ դեպքերը Վասպուրականում 1914-1915 թւականներին, Երեւան, 1917, էջ 97:

քանի որ այդ էր պահանջում նրանց հայրենասիրական պարտքը: 1914 թ. դեկտեմբերի կեսին Ջնդետը գտնվում էր Սարայում, որտեղից նա իր փոխանորդի միջոցով առաջարկեց Ա. Վռամյանին ու Արամին, որ նրանք ձի նստեն, գնան Սալմաստ և ցրեն կամավորական խմբերը: Այս առաջարկին Ա. Վռամյանն ու Արամը պատասխանեցին, որ իրենք պատրաստ են ճանապարհ ընկնելու միայն մի պայմանով՝ այն է, որ թույլ տրվի, որ թուրքահպատակ կամավորներն իրենց զենքերով հետ վերադառնան հայրենիք: Այս առաջարկությունը Ջնդետի կողմից չընդունվեց, իսկ Ա. Վռամյանն ու Արամն էլ իրենց տեղերից չշարժվեցին:

Զմոռանանք նաև, որ պատերազմի սկզբում՝ 1914 թ. օգոստոսին, իթթիհատական գործիչները Վանում և Կարինում կոչ էին անում հայ քաղաքական դեկավարներին տեղափոխվել Արևելյան Հայաստան և այնտեղ ռուսական կառավարության դեմ „յեղափոխության յուրացանելու փորձ կատարել“, ¹: Այսպես, „Միություն և առաջադիմություն“, կուսակցության անդամ Նաջի-բեյը և Վանի գեներալ-նահանգապետ Թահսիմ բեյը համոզում էին հայերին միանալ թուրքերին և կազմել կամավորական ջոկատներ՝ թեկուզ մի քանի հարյուր մարդուց բաղկացած, նրանց զինելով Թուրքիայի հաշվին: Ընդ որում, նրանք չէին էլ թաքցնում, թե քաղաքական և բարոյական ինչպիսի նշանակություն կունենա հայերի հանդես գալը՝ թուրքերի հետ ձեռք-ձեռքի տված: Երիտթուրքերը, վստահ լինելով իրենց հաղթանակի մեջ, մտադիր էին Ռուսաստանի սահմանները հեռացնել մինչև Կովկասյան լեռները և Անդրկովկասում ստեղծել երեք ինքնավար շրջաններ՝ հայկական, վրացական և թաթարական ²: Սակայն այն մերժվեց Էրզրումի 1914 թ. սեպտեմբերի համագումարում ³: Որպեսզի ռուսահայերի առաջնորդներից ձեռք բերվի արևմտահայերի դեմ կիրառվող միջոցառումները դադարեցնելու փոխհատուցում, ռուսահայերին առաջարկվում էր մոտ 120 ձերբակալված հայ առաջնորդների և մտավորականների ազատ արձակման և հետագա տեղահանումներից հրաժարվելու դիմաց դադարեցնեն իրենց գործողությունները Վանի տարածքում և իրենց գործունեությունը սահմանազատեն Ռուսաստանից ⁴: Դեռ ավելին, ըստ Ե. Տեր-Մինասյանի՝ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությանն ուղղված 1915 թ. նոյեմբերի 11-ի զեկուցագրի՝ երիտթուրքերի ներկայացուցիչներ Բեհաեդդին Շաքիրը, Հաջի (Նաջի) բեյը և Հիլմի բեյը կամավորական շարժման դիմաց հայերին խոստանում էին ինքնավար Հայաստան՝ բաղկացած Երևանի, Կարսի նահանգներից և

¹ ՀԱԱ, ֆ. 1120, ց. 1, գ. 76, թ. 37:

² Ռուսաստանի Արտաքին գործերի նախարարության փաստաթղթերը Հայոց 1915-1916 թթ. ցեղասպանության մասին, կազմող, առաջաբանի, թարգմանության հեղինակ՝ Արմեն Մարություն, էջ 69:

³ ՀԱԱ, ֆ. 1120, ց. 1, գ. 76, թ. 37:

⁴ Գուստ Վ., Հայերի ցեղասպանությունը 1915-1916. Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի փաստաթղթերից, էջ 81- 82:

Ելիզավետպոլի նահանգի արևմտյան մասից՝ դրանց միացնելով Վանի, Էրզրումի և Բիթլիսի վիլայեթների հարակից մասերը¹: Եվ քանի որ արևմտահայերը մերժեցին այդ առաջարկը, այն ավելի սաստկացրեց տիրող լարվածությունը: „Թիւրք Կառավարութիւնը չափազանցեց Վանի Հայերուն „դաւաճանական,, ընթացքը եւ մինչեւ իսկ զայն իբր չքմեղանք ծառայեցուց ամբողջ ցեղին հանդէպ իր վարմունքին,,²:

Փաստ է նաև այն, որ Թուրքիայի դեմ ռուսական բանակի կազմում կռվելու պատրաստակամ հայ կամավորների հիմնական մասը ոչ միայն Ռուսաստանի, այլև Եվրոպական և հյուսիսամերիկյան տարբեր երկրների քաղաքացիներ ու հպատակներ էին: Ըստ գերմանացի մայոր Լանգեի տեղեկությունների՝ ռուսական զորքերի կողմից կռվել են հիմնականում հրեաներ, լեհեր, վրացիներ, հույներ և նույնիսկ գերմանացիներ³: Այնուհանդերձ, ինչպե՞ս կարող էին այդ կամավորների շարքերում նախկինում օսմանյան հպատակներ հանդիսացող հայերի առկայությունը անվերապահորեն դարձնել օսմանյան բոլոր հայերին ուղղված մեղադրանք: „Դավաճան որակվածների թիվը այնքան ճղճիմ էր,- գրում է Ս. Ակունին, որ որևէ պարագայի տակ հավաքական պատասխանատվություն մը չէր կրնար հրավիրել երկու միլիոն Թուրքիո հայերու վրա,,⁴:

Կատարելով միանգամայն ճիշտ հարցադրում Վ. Տատրյանը նշում է, թե „ինչո՞ւ է անտեսվում այն փաստը, որ Թուրքիայի դեմ ռուսական բանակում կռվում էին հազարավոր ազերիներ և քրդեր: Նույնը կարելի է ասել Ռուսաստանից և Եվրոպայից ժամանած հազարավոր հրեա կամավորների մասին, ովքեր 1915 թ. Դարդանեղում Բրիտանական Արշավային ուժերի կազմում կռվում էին այդ նույն թուրքերի դեմ, իսկ 1918 թ.՝ բրիտանական զեներալ Ալլենբիի բանակում, նաև Պաղեստինի ճակատում: Չի՞ ենթադրում արդյոք այս ամենը, որ հայերին թիրախ դարձնելու և ցեղասպանության ենթարկելու որոշման հիմքում ընկած էր ոչ թե թուրքերի դեմ ռուսական բանակում կռվող մի քանի հազար հայ կամավորների առկայությունը, այլ սկզբունքային ու ռազմավարական տարաբնույթ նկատառումները,,⁵:

Այսպիսով՝ կեղծ քարոզչության և ցեղասպանության քաղաքականության նպատակադրության արդյունքում իթթիհատականներին հաջողվեց հասնել

¹ Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի եվ նյութերի ժողովածու Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երեվան, 1991, էջ 400:

² Ամերիկեան դեսպան Մր. Մօրկընթաուի հիշատակները եւ հայկական եղեռնի գաղտնիքները, էջ 245::

³ Գուստ Վ., Հայերի ցեղասպանությունը. աշխարհի հնագույն քրիստոնյա ժողովրդի ողբերգությունը, էջ 148:

⁴ Ակունի Ս., Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ.Պոլիս, 1920, էջ 17:

⁵ Տատրյան Վ., Հայոց ցեղասպանության հերքման հիմնական փաստարկները. Աղավաղման և կեղծարարության ուսումնասիրություն, էջ 22:

հասարակական մի այնպիսի կարծիքի ձևավորմանը, որը հայերին փորձում էր որակել „դավաճան“,:

Ամփոփում

Իթթիհատի կենտրոնական կոմիտեն արևմտահայերի տեղահանության և բնաջնջման որոշումն ի կատար ածելուց առաջ պետք է ստեղծեր գաղափարական կեղծ մի „հիմնավորում,՝ արդարացնելու համար կառավարության հանցագործ այն գործելակերպը, որը պատճառ դարձավ 1,5 մլն արևմտահայերի ոչնչացման:

Ելակետ ընդունելով այդ սկզբունքը թուրքական պատմագիտության մեջ տիրապետող և չհիմնավորված է բացահայտ անհիմն և շինծու այն շաղակրատանքը, որ Վան-Վասպուրականի կոտորածները և ընդհանրապես Հայոց մեծ Եղեռնը պայմանավորված են եղել ա) ռուսական ուժերի հետ օսմանյան հայերի քաղաքական հզոր դաշինքով, բ) Կովկասյան ռազմաճակատում 1914թ. կազմակերպված հայկական կամավորական ջոկատների ռազմական գործողություններով, գ) ռուսական զորքերի առաջխաղացմամբ, դ) Վասպուրականի հայության 1914-1915թթ. „ապստամբությամբ,, որոնք իրականացվել են թուրքական իշխանությունների դեմ և նպատակ են ունեցել վտանգելու թուրքական բանակի թիկունքը:

Կեղծ քարոզչության արդյունքում Վանի հայերը ներկայացան որպես խռովարարներ և դավաճաններ: Սակայն իրականում նրանք բնավ ապստամբելու նպատակ չեն ունեցել: Դեռ ավելին, Վանի հայ հասարակական-քաղաքական շրջաններում հիմնականում իշխում էր իթթիհատականների հետ կապերը չլսվելու և ըմբոստացում թույլ չտալու տեսակետը:

К вопросу обвинений армян провинции Ван в "измене"

А. Арутюнян, А. Аванесян

Резюме

Ключевые слова: Резня, Ван, добровольческое движение, А.Врамян, предательство, бунт, союз, армия, Е.Лепсиус.

До осуществления решения о выселении и уничтожении западных армян Центральный комитет Иттихада должен был создать ложное идеологическое обоснование для оправдания преступных действий правительства, которое стало причиной уничтожения 1,5 млн. западных армян. Принимая этот принцип как исходный, в истории Турции необосновано доминирует то притворное пустословие, что резня Ван-Васпуракана, и, вообще, Геноцид армян был заранее запланирован: а) политическим договором османских армян с русскими силами, б) военными действиями, организованными отрядами армянских добровольцев в 1914г на Кавказском фронте и успехами российских войск, в) восстанием 1914-



1915 гг. армян Васпуракана, которые были направлены против турецкой власти с целью поставить под угрозу тыл турецкой армии.

В результате лживой пропаганды армяне Вана представлялись как мятежники и изменники. Однако, на самом деле они не имели намерения организовывать восстание. Более того, в армянских общественно-политических кругах Вана в основном доминировала точка зрения не разрывая отношений с иттихадом и предотвратить восстание.

Round a Betrayal Problem of “Accusation” of Armenians’ of Van Province

Avetis Harutyunyan, Armine Avanesyan

Summary

Key words: *Slaughter, Van, volunteerism, A. Vramyan, betrayal, rebellion, union, army, E. Lepsius*

Before the implementation the decision of banishment and destruction of Western Armenians, the Ittihad’s Central Committee was to create a false ideological “reasoning” in order to justify the policy which became a cause for extermination of 1.5 million of Western Armenians. Taking this as a principle, in Turkish historical science it is predominant and not grounded the obvious unsubstantiated and false verbiage that Van – Vaspurakan carnages and, generally, Armenian Genocide were conditioned:

- a) by political alliance of Ottoman Armenians with Russian forces;
- b) by military activities of Armenian voluntary detachments organised on Caucasian front in 1914 and the success of Russian troops;
- c) by rebellion of Armenians of Vaspurakan in 1914 – 1915 which were implemented against the Turkish government and was to endanger the rear of Turkish army.

As a result of false propaganda, the Armenians of Van were presented as rebels and betrayers. But actually they didn’t have the aim of rebelling. Moreover, in Armenian public – political circles of Van there dominated the viewpoint of not breaking off relations with the Ittihad and not allowing rebellion.

**ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՂԲԵՋԱՆԻՑ:
1988թ. ԿԻՐՈՎԱԲԱԴԻ ՀԱՅԵՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԴԱՍԵՐԸ**

Հրանուշ Խառատյան

Պ.գ.թ.

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Բանալի բառեր-Կիրովաբադ, Ջնաբերդ, հայերի տեղահանություն, ինքապաշտպանություն, ինֆորմացիոն շրջափակում, պարետային ռեժիմ, Ադրբեջան

1988-1990-ի ընթացքում Խորհրդային Ադրբեջանից հայերի արտամղման և տեղահանության գործընթացը թե ձևով, թե բովանդակությամբ առայժմ քիչ է ուսումնասիրվել: Առավել հայտնի են գործընթացի սկիզբը դրած սումգայիթյան ջարդերը, և 1990-ի հունվարին Բաքվի հայկական ջարդերով՝ հայերի տեղահանման գործընթացի փաստացի ավարտը: Քիչ է ուսումնասիրվել, ի թիվս այլոց, նաև հետազոտողներին մատչելի աղբյուրների պակասի պատճառով: Առավել հայտնի տեղեկությունները վերաբերում են գլխավորապես 1990-1992-ին, մասնավորապես «Կոլցո» օպերացիային, երբ ԽՍՀՄ գրախոսությունից ազատվող և ազատված լրատվամիջոցները կարողանում էին համարյա ամենօրյա տեղեկատվություն հաղորդել Ղարաբաղի հյուսիսի և Շահումյանի շրջանի հայերի ջարդերով ուղեկցվող բռնի դեպորտացիայի մասին: Նույնիսկ 1990ի հունվարին Բաքվում ընթացող հայկական ջարդի մանրամասներն այսօր վերականգնվում են գլխավորապես գոհերի անձնական հիշողություններով:

Պակաս հայտնի են գլխավորապես 1988-ին, մասամբ՝ 1989ի ընթացքում Ադրբեջանի հայկական կամ հայաշատ շրջաններից հայերի արտամղման գործընթացի մանրամասները: Ընդունված է համարել, որ այն կրում էր «կամավոր տեղափոխության» բնույթ, որի ընթացքում Ադրբեջանի զանազան շրջանների քաղաքներում և գյուղական բնակավայրերում ապրող հայերին «կամավոր տեղափոխության» համար շրջանային ղեկավարության կողմից օգնություն էր առաջարկվում, չորս-հինգ ընտանիքին՝ մեկ բեռնատար մեքենա՝ մարդկանց և ընտանիքներին պատկանող որոշ իրեր մինչև Հայաստանի սահման տեղափոխելու համար: Ըստ էության, այդպես էին 1988ի աշնանը Հայաստանից հեռանում ադրբեջանցիները: Չի բացառվում, որ դա Մոսկվայից թելադրված և խորհրդային երկու հանրապետությունների՝ Հայաստանի և Ադրբեջանի կուսակցական իշխանությունների փոխհամաձայնեցված գործողություն էր: «Կամավոր» բառը տվյալ դեպքում նշանակում է՝ մարդկանց այլ ելք չէր թողնված, և նրանք «կամավոր ընտրության» հնարավորություն չունեին: Առավել ևս «կամավոր»ի մասին չի վկայում այն իրավիճակը, երբ մարդիկ ամենօրյա

ճնշումներից պաշտպանություն չգտնելով, «կամավոր» հեռանալ-փախչելու ելքեր էին փնտրում, ինչը հաճախ է հանդիպում Ադրբեջանից «կամավոր հեռացող» հայ բնակչության անձնական հիշողություններում: 1988ի փետրվարի սումգայիթյան ջարդերը այն կողմնորոշիչն էին, որ հուշում էին, թե ինչի կարող են հանգեցնել ադրբեջանական հեռուստա- և ռադիոթերալիյն դաշտը հեղեղած սպառնալիքները, հարևան ադրբեջանական բնակչության առանձին շերտերի ու տեղական իշխանությունների ամենօրյա դարձած ճնշումները: Սումգայիթից դաս առած հայերի մի մասը 1988-1989ին իսկապես իրենք էին Ադրբեջանից հեռանալ-փախչելու ելքեր փնտրում: Որոշ վերապահումով սա, թերևս, կարելի է «կամավոր» անվանել: Այս մարդիկ, սակայն, հիմնականում համեմատաբար բարեկեցիկ ապրող և ԽՍՀՄ տարածքում ազգականներ ունեցողներն էին: Ադրբեջանի հայ բնակչության մեծ մասն իրականում այդ հնարավորությունը չունեին, իսկ շատերն ուղղակի չէին ուզում լքել հայրենի տարածքը և տազնապով սպասում էին նոր սկսված կոնֆլիկտի հանգուցալուծմանը կամ իրենց անվտանգության ապահովման խնդրում՝ իշխանությունների միջամտությանը: Նրանք փորձում էին հավատալ, որ Սումգայիթում ինչ որ սխալ է տեղի ունեցել, անհնար էին համարում, որ ԽՍՀՄ իշխանությունները կարող էին թույլ տալ, առավել ևս կազմակերպել քաղաքացիների բացահայտ սպանդ:

1988ի աշնանը վիճակը կտրուկ լարվեց, իսկ նոյեմբերի 20-ից Ադրբեջանի պետական հեռուստատեսությամբ ուղղակի ու բացահայտ քննարկումներ ծավալվեցին թշնամի հայերի, Ադրբեջանում հայերի գոյության աննպատակահարմարության և հայաթափության մասին: Դրան զուգահեռ իշխանության շրջանային մարմինները հանդիպում էին հայկական գյուղերի պատասխանատուների հետ և առաջարկում, համոզում կամ սպառնում անմիջապես հեռանալ Ադրբեջանից՝ երբեմն խոստանալով օգնել հեռանալուն: Որոշ գյուղեր անմիջապես համաձայնեցին, որոշները՝ խոստացան մտածել, երրորդները մերժեցին հեռանալ: Ակնհայտ էր, որ «ի՞նչ անել»ու շուրջ հայերը որևէ ուղղորդող գաղափար չունեին, և նույնիսկ չգիտեին, թե ինչպիսի իրավիճակ է հարևան շրջաններում: Յուրաքանչյուր կոնկրետ դեպք, կոնկրետ բնակավայրի բնակչություն կամ առանձին ընտանիքներ իրենք էին իրենց համար լուծում փնտրում, ամենից ավելի հաճախ փորձելով Հայաստանի ադրբեջանցիների հետ բնակարանը փոխանակելու տարբերակ գտնել: Շուտով պարզ դարձավ, որ այն դեպքերում, երբ հայերը դանդաղեցնում էին տեղափոխությունը, կազմակերպվում էր «արշավ» բնակավայրի վրա, հարձակում, ծեծ ու ջարդ, թալան, ստեղծվում էր կոնկրետ վախի մթնոլորտ, որից հետո շրջկոմները սկսում էին վերաբանակցել հայերի հետ՝ խոստանալով հեռանալու դեպքում օգնել նրանց իրենց գույքը տեղափոխելու գործում: 1988-ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսները հայկական բնակավայրերի բնակչության համար դարձան չափազանց վտանգավոր, ուստի մինչև փոխանակություն կազմակերպելը կամ ապրելու որևէ տեղ գտնելը՝ հայկական բնակավայրերի բնակիչները պահակակետեր էին

սահմանել իրենց բնակավայրերի շուրջը և տղամարդիկ գիշերները հսկում էին գյուղերի բնակչության անվտանգությունը՝ երբեմն-երբեմն ետ մղելով փոքրաթիվ թալանչիական խմբավորումների գրոհները: Այդպիսի գրոհներ շատ են եղել, որոնցից սույն համառոտ հոդվածում կներկայացվեն մի քանի առավել տիպական օրինակներ:

Դաշքեսան քաղաքի և Դաշքեսանի շրջանի Բանանց և Կուշչի գյուղերում, օրինակ, ըստ բնակչության պատմածի. «Մենք մեր գյուղից՝ Բանանցից, դուրս ենք եկել երկրաշարժից հետո՝ 1988-ի դեկտեմբերի 10-ին: [Մինչ այդ] Վեց ամիս չենք քնել, շորեր չենք հանել, էս երեխեքս պոստերում կանգնած մեծ-մեծ մարդկանց հետ... Էս երեխես 9ը տարեկան էր, մեծ-մեծ մարդկանց հետ պոստ ա կանգնել, էն մեծս էլ 12 տարեկան էր, էլի կանգնել ա պոստ: Մեկը փետով էր կանգնում, որը կացնով էր կանգնում, ով ինչով կարար... մեկը իրենց որսորդական հրացանով էր կանգնում: Բայց հետո իրանց [իշխանությունների] թուրք միլիցեքը եկան, գիտեին, նենց մարդ կար, որ իրանց մոտ գրած էր, որ ունի հրացան, եկան, անուն ազգանունով տանիցը հավաքեցին, տարան: Երևանից վերտալյոտով այլուր էին բերում մեզ, պապիրոս, յուղ, բերում էին իջեցնում հայկական հողամասի տարածքում, որ ժողովուրդը սոված չմնա... Մեր գնալուց հետո գյուղում մի քանի հայեր էին մնացել: Մեկը զոքանչս էր, բռնում են ծեծում, ջահել աղջկերանց բռնում են, կոխում են ջրի մեջ, որ խեղդեն, երևի մի թուրք խղճով ա եղել, ազատել ա տենց, փախել են, եկել: Էնքան ծեծել են մարդկանց, որ եկան ստեղ մահացան: Քա՜նի հոգի եկան Երևան մահացան: Գյուղսովետի նախագահին բռնել ծեծել էին, պեչատը վերցրել էին ձեռից թուրքերը: Եկավ խեղճ մարդը, ըսկի մի ամիս էլ չմնաց, մահացավ: Շատ էին ծեծել: Ինքն էլ քերծի նման մարդ էր, անունը՝ Սեյրանյան Ստեփան»¹:

«1988թ. նոյեմբերի 23-ին ժամը 21.30 Դաշքեսանում դեմոնստրացիա էր, միտինգ: Հետո Դաշքեսանի Ռուդնիկ ավանում ադրբեջանցիները հարձակվեցին Դաշքեսանի վրա: Ջարդեցին Ղազարյան Ժորայի, Կարապետյան Հովհաննեսի, Մահդեսյան Լևոնի և այլ բնակիչների տները: Շրջկոմի առաջին քարտուղար Իսլամ Սադիխովը, դատախազ Նադի Կուլինը հայերին զգուշացրին, որ փախչեն... Հաջորդ օրը՝ արդեն [19]88ի նոյեմբերի 24ին, Դաշքեսանի հայերը դիմում են ավանային սովետի նախագահ Ամրանի Էլդարովին, 26րդ համագումարի անվան սովխոզի դիրեկտորին՝ Ֆիզուլի Ջաֆարովին, օգնության համար: Նրանց միջամտությամբ՝ մոտավորապես ժամը 14ի արանքում հայ բնակչության առաջ հանդես է գալիս շրջգործկոմի նախագահ Սիավուշ Ալեկսեյերովը և մի ինչ-որ կին՝ հուսադրելով, որ ոչ մի տեղ չգնաք, որ ոչ մի բան էլ չի լինի, արդեն միջոցներ են ձեռնարկվել: Նույն օրվա 19.00-ին տեղի թուրքերը հարձակվեցին հայերի տների վրա՝ կազմակերպելով ջարդ ու թալան: Նույն

¹ Բանանց գյուղից գաղթած Ռուբիկ և Անո Բեկնազարյանների հետ 08.07.2006 ին զրուցել է Թ. Վարդանյանը:

Ժամին երևում է միլիարդի աշխատող էյդար Բեգարի, չգիտեմ, ինչովը: Թալանում են Առաքելյան Սերգեյի, Հակոբյան Միխայելի, Բալասանյան Արկադիայի տները: Նույնիսկ լավերի (խուլ ու համբերի-Հ.Խ.) են թալանում: Հաջորդ օրերին նրանք միտինգներ են կազմակերպում իրանց մոտ: Գլխավոր բժիշկ Ասաբ Յուսուպովը հայտարարել է. «Կուշչին մերկացրեք, Չովդարը թալանեցեք: Նրանք ոչ մի բան չպիտի տանեն էստեղից...»: Մեր հարևան գյուղից մոտավորապես 120, թե շատ ընտանիքներ, (ցուցակն ունեմ) փախել են մեզ մոտ (Կուշչի): Նրանց մեջ էին շրջկումի երկրորդ քարտուղարը, շրջխորհուրդի նախագահի տեղակալը, որոնք հայ էին... Ուրեմն, նոյեմբերի 21-ից հետո, թուրքերը գիշերը հարձակվում են Վերին Քարհատի վրա: Տվել էին ապակիները, բանը ջարդել: Ասում են, թե մեկ ա, ուզում ենք տները մտնենք: Դե՛, հարևան թուրքեր են լինում, մի կերպ էլ խուժան-մուժանին քշում են, բայց ժողովուրդը փախնում են մոտիկ ձորը... Ու՛ր գնանք, ու՛ր չգնանք՝ որոշում են գալ Կուշչի: Ես էլ կազմակերպեցի կոլխոզ-սովխոզի մեքենաները՝ մի 20-ից ավելի, ուղարկեցի, դրանց իրերը բերեցին մեր գյուղ: Էդ մարդկանց ծեծել էին, ջարդել էին, կապտած եկել էին մեզ մոտ: Էդ մարդկանց էլ վերցրի, բաժանեցի տների վրա: Մի երեխայի վրա տաք-տաք ջուր էին շալտել: Դրա մասին թերթում գրեցին, թե վառված բերեցին, երկու-երեք շաբաթ մեր գյուղում մնաց, մի քիչ բուժեցինք, ու տեղափոխվեցին Երևան: Վերին Քարհատի գյուղացիները մի ամիս մեր գյուղում ապրեցին, հետո աստիճանաբար հեռացան Ադրբեջանից: Ամեն մարդ ինքն իր համար տեղ գտավ»¹:

Ծանր գրոհ է եղել Նախիջևանի Ձնաբերդ գյուղի վրա. «Մուսգայիթից հետո մեր գյուղն արդեն պատրաստ էր, որ մեզ էլ են մի օր գալու այդպես անեն: Լույս չկար, լույսերը գիշերները կտրում էին, ժամը յոթից հետո լույս չէին տալիս: Ժողովուրդը, այստեղ-այնտեղ խարույկ վառելով, գիշերը մի կերպ պահում էին գյուղը: Հիմնականում պահում էին գյուղը ջահելները, խմբեր կազմած սարերում էին: Հերթով պահակություն էին անում: Ձենքը ինքնաշեն էին սարքել, մեկ էլ մի երկու մարդ որսորդական հրացան ուներ: Դանակով, փայտով են դուրս եկել առաջները ի՞նչ անեին: Մուսգայիթից հետո ոչ կարողանում էինք գյուղից դուրս գալ, ոչ կարողանում էինք հիվանդներին Նախիջևան տանել, մեզ այնտեղ չէին ընդունում, մենք արդեն այնտեղ չէինք էլ գնում. ճանապարհներն էին կտրում, վերադարձնում էին: Լուսոյին, որ տարան, օպերացիա արեցին, բերեցին, բժիշկը՝ Ջաբարը, տարել էր օպերացիան շուտ արել, բերել էր, ասել էր՝ մի թողեք այստեղ, թե չէ որ գան տեսնեն՝ ինձ էլ կվնասեն... Նույն օրն էլ բերել էին: Խոսքաղի սեզոնին ծեծեցին, չթողեցին խոտ քաղեին, ավտոներից թափեցին ինչ որ կբերեին: Չեմ հիշում՝ Խաչի՞կի ավտոն էր, ծեծել էին, աղջիկներին թափել,

¹ Կուշչի գյուղից Բոյախյան Սյոմայի հետ ՀՀ Վարդենիսի շրջանի Ծափաթաղ գյուղում 2006ի հունիսին զրուցել է Լ.Խառատյանը:

պաժառ էին տվել, տղաներին ծեծել էին, դրանից հետո ժողովուրդը սկսեց կամաց-կամաց դուրս չգալ: Երեվան - Ջնաբերդ երթուղային ավտոբուսը ճանապարհին գլորել էին, ինչքա՞ն ծեծեցին էդ վարորդին՝ Սերգեյին, մի խելոք մարդ էր: Չի հասցրել մտնել Ղարաբաղլար, այնտեղ արդեն դուրս էին եկել, ծեծել էին, ավտոբուսը գլորել: Ավտոբուսի մեջիններին ծեծել էին: Ով հասցրել էր, փախել էր վիրավորված՝ որի թևը, որի ոտը, որի գլուխը.... Գյուղ լուր բերեցին, տղաներով գնացել էին մեքենաներով բերել: Ամուսինս՝ Մկրտչյան Մկրտիչը, վարորդ էր, կթվոր էր տանում սարը: Մի օր էլ թուրքերը դեմը կտրում են, վրեն դանակ պահում, թե՛ էդ կանանց իջացրու: Կողքի Թազա, Խնջաբ, Սուսք գյուղերի թուրքերից էին: Ինքն ասել էր՝ խնդրում եմ՝ ինձ սպանեք, մենակ թե իմ մոտս էդ ջահելներին մի՛ կպեք: Էդ ընթացքում կանայք փախչում են այս ու այն կողմ, ինքն էլ վախից կաթված է ստանում: Դա 88-ի հոկտեմբեր-նոյեմբերն էր: Նոյեմբերի 18-ին էլ Հայաստանից հարս էին բերում մերոնք, Սաթիկենց հարսանքն էր: Զինվորական մեքենայով էին, մտածել էին, որ զինվորական մեքենան չեն կանգնեցնի: Բայց եկել էին մեքենայի դեմը կտրել, բարձարացել էին մեքենայի մեջ, կին-տղամարդ ծեծել էին, մագերից քաշքշել: Մի կին էլ մահացավ դրանից, Գառնիկի կինը՝ Մանյակը: Ծեծվածներին բերել էին լցրել հիվանդանոցը: Երևանից հարսանիքի հետ մարդիկ էին եկել, դրանց էլ գիշերը ետ վերադառնալիս էին բռնել ծեծել: Նոյեմբերի 22-ի ցերեկը մեր գյուղացի Սարոյին Նախիջևանի տարեց թուրքերն զգուշացրել էին, որ ինչ- որ ջահելների հավաք է եղել, որոշել են այդ գիշեր Ջնաբերդը վերցնել: Գիշերը լույս չկար, ժողովուրդը, խարույկներ վառած, դրսերում էր: Մեկը հավատաց, մեկն ասեց՝ չեն կարող, Գարբաշովը որ չի ընկել, չի մահացել, ո՞նց կարող է իրենք մեզ այստեղից քշեն, պետությունը հո ընկած չի: Մեկը մենք՝ չհավատացինք: Կրակն արել էինք բարձր, կողքը կանգնած էինք, հետո հարսիս հետ տուն մտանք, դու մի ասի՝ գյուղամեջում արդեն բոլորը փախչում են դեպի սարերը, մեքենաները լցրած ժողովրդին տանում են... Դրսից արդեն հարձակումն սկսվեց: Ամեն ինչ էլ դրանք (հարձակվողները-Հ.Խ.) ունեին, դեռ երևի դրանց հետ կար բանակի օգնությունը, որովհետև ցերեկվա ընթացքում բերեցին տանկեր պահեցին, իբր թե գյուղն են պաշտպանում: Դա իրենց կողմից տակտիկա էր, իբրև թե գյուղն են պաշտպանում: Հետո եկավ մեր գյուղ էդ տանկը, բանից պարզվեց, որ ոչ թե մեզ պաշտպանելու համար է, այլ իրենց օգնելու: Բա որ մի հատ էլ հայ տղա կա՞ր (տանկիստների հետ): Էդ հայ տղեն էլ որ եկավ, ասեցինք՝ «ցավդ տանեմ, բա կարո՞ղ է թողես մեր էս հայերին կոտորեն»: Ասեց՝ «Այ մորքուր ջան, ի՞նչ կարամ անեմ, ինձ հրաման չունեմ, ի՞նչ կարամ անեմ, ոչինչ էլ չեմ կարող անել, ավելի լավ է՝ փախեք սարերը, թողեք, գնացեք»: Գիշերվա կեսին ժողովուրդը՝ կին, երեխա, որը ոնց հասցրել են՝ մեքենաները լցրել են, հասցրել սարերը: Էդ որ կողմից, ասում էին, գյուղ պետք ա մտնեին, էստեղ խաղողի այգիներն էին, ուղղակի մեր տղաները հերոսի պես պահեցին: Եթե թուրքը մտներ էդ այգիների մեջ, գյուղից հաստատ հետք չէր մնա: Էդ այգիներն անցել էին մերոնք, դեմներն

առել էին... Անպատրաստ էինք: Տուն կար, որ նույնիսկ ջահելը փախել էր, պառավին, հիվանդին չէր կարողացել տանել, երեխաները վերցրել էին ու փախել: Գիշերվա կեսին մեզ լցրեցին մեքենաները, սարի ճանապարհներով... ճանապարհ չի իրականում, տակերն անդունդ է, եթե վարորդը վախենա կրակոցից՝ մի սխալ շարժումը կործանում է... թուրքերն արդեն հարձակվել էին, կռվում էին, կրակոցների ձայնը մենք լսում էինք սարի վրա: Գիշերվա 4-ն էր, 5-ն էր՝ հասել ենք Խնձորուտ. դա Հայաստանի առաջին գյուղն է մեր կողմից: Այ այդ գյուղն ենք էկել, էկել ենք հարսիս հերանց տուն: Երևանում սովորող մեր գյուղի տղաները եկան հասան: Գիշերը մենք որ փախչում էինք, տղաները էկան «Ուրալ» մեքենայով: Բայց երկար դիմադրել չկարողացան: Գյուղն այդպես գաղթեց, մեզ գյուղից հանեցին...»¹: Ձնաբերդ գյուղից մեկ այլ կին, փախուստից հետո ՀՀ Եղեգնաձորի շրջանի Նորավան գյուղում հաստատված Լենա Գևորգյանը պատմում է. «Տների փոխանակելը ես չեմ իմանում: Մենք միանգամից դուրս ենք եկել, թուրքերն այնպես էին թափվել, որ մնալ հնարավոր չէր: Մենք բարձրացանք սարերը, իսկ տղամարդիկ մնացել էին՝ գյուղը պաշտպանելու: Մի հատ էլ փոքր էրեխա կար՝ նոր ծնված, հիվանդանոցից հանել էին, բերել: Էդ էրեխեն էլ մեր հետ էր, էն ինչ ձևի էր լացում ամբողջ գիշեր: Լուսադեմին կրակոցները դադարեցին, ոմանք սարից գյուղ վերադարձան: Ես էլ եմ վերադարձել: Բայց այդ դեպքից հետո մեր տղամարդիկ կանանց չթողեցին մնալ, մի օրվա մեջ բոլորին ուղարկեցին Հայաստան: Տղամարդիկ որոշ ժամանակ մնացին, փորձեցին պայքարել գյուղի համար, բայց շուտով բոլորը հեռացան, մնալ հնարավոր չէր: Մարդիկ կային, որ տան գույքը կարողացան իրենց հետ տանել, բայց իմ ամուսնու եղբայրը մահացել էր, մենք թաղումով էինք զբաղված, չկարողացանք իրերը բերել: Հետո ամուսինս գնաց, մեր տանը արդեն թուրքեր էին ապրում: Թուրքի կինը, երեխան գրկին, ամուսնուս ասել էր. «Շուտ դուրս արի տնից, թե չէ երեխայիս կմորթեմ, կասեմ՝ հայն է արել»: [19]88ի նոյեմբերն էր»²:

1988-ի նոյեմբերի 23-ին գյուղացիների համար լիովին անակնկալ հարձակում է եղել Իսմայիլիի շրջանի Քյալբանդ գյուղի վրա. «Եկել են, զենքով մտել են, փոքր մեքենաներով ու ավտոբուսներով: Մարդ չեն սպանել, բայց կրակում էին... Մենք գյուղի ներքևի մասով փախել ենք ձորը: Մեր գյուղում համարյա երիտասարդներ չկային, մեռնող գյուղ էր, բոլորն արտագաղթում էին: Հիմնականում տարեցներ էին: Գյուղում միայն մի քանի մարդ չհասցրեց փախչել, դրանց շատ ծեծել են, տան գույքը ջարդուփշուր են արել: Մենք փախանք այգիները, Վերիշեն գյուղ կար

¹ Ձնաբերդ գյուղից փախստական Ադուն Գևորգյանի հետ Երևանում գրուցել է Լ.Խառատյանը 2006-ի հունիսին:

² Ձնաբերդ գյուղից Լենա Գևորգյանի հետ (Վայոց ձորի մարզ, քաղաք Եղեգնաձոր, Նորավան, տուն 13բ) գրուցել է Լ.Խաչատրյանը 2006-ի հունիսի 28-ին:

այնտեղ, [19]15ի փախեփախի ժամանակ¹ այդ գյուղն ավերել ու հրդեհել էին, մնացել էին ավերակները, Հին գյուղ է կոչվում, գնացինք այդ ավերակները: Այդ զիշեր տղամարդիկ կրակ բերեցին, ծառերի տակ փոքր երեխաներին հավաքեցինք, մի փոքր տաքացանք: Մի կերպ լուսացրինք, բայց սոված ենք, բոլորը փախել էին մի հագուստով, խուճապի մեջ ուտելիք չէինք վերցրել: Առավոտյան ջահելները թաքուն գյուղ գնացին, տներից մի քիչ ուտելիք բերեցին, ջուր բերեցին: Մի քանի օրից հետո մեր շրջանի ղեկավարները եկան, մեզ գտան, թուրքեր են բոլորը, մեջները հայ չկա: Եկել են այդ ղեկավարները, մեզ ասում են՝ «մի վախեցեք, դե՛ ոչինչ, որ եկել են, ձեզ ծեծել են, բայց հո չեն սպանել: Եկեք ձեր գյուղը, մենք մեքենա կտանք, ինչ որ կարող եք՝ վերցրեք, գնացեք Հայաստան»: Հենց այդպես բաց տեքստով էլ ասում էին՝ գնացեք Հայաստան: Ոչ պաշտպանել, ոչ օրենք, ոչ մի բան: Ի՞նչ կարող էինք անել, դեկտեմբերի 1ին գյուղից դուրս եկանք: Մինչև այդ մնացել ենք անտառներում, վախենում էինք գյուղ գնալ: Ինքնաթափ մեքենաներ բերեցին, մի քանի իր ենք վերցրել ու դուրս եկել: Մեզ վրա ճանապարհին հարձակում չի եղել, բայց մեզնից առաջ գնացող ուրիշ մեքենաների վրա Կիրովաբադում հարձակվել են, իրերը թալանել, մարդկանց ծեծել են: Մեր ճանապարհը Կիրովաբադի միջով էր, իսկ այնտեղ հայերի ջարդ էր գնում: Մենք դրանից հետո մտանք Կիրովաբադ, ռուս զենեղներ կային, մեզ պահեցին զիշերը Կիրովաբադում, մեքենաների մեջ մնացինք: Լույսը բացվեց, նոր ասեցին՝ գնացեք: Թե չէ մեր վրա էլ էին հարձակվելու: Բերեցին Իջևանի սահմանին մեզ թափեցին...²: Որոշ ժամանակ անց գնացել եմ մեր գյուղը, տեսնեմ մեր տանը թուրքեր են ապրում: Նոյեմբերյանի թուրքերից էին, Հայաստանից: Ասեցի՝ լավ, գոնե տան փողը տվեք: Մեր տունը շատ լավ տուն էր՝ երկու հարկանի, նոր սարքած, գազը, ջուրը...Մեր գյուղի ամենալավ տունն էր: 4000 քառակուսի մետր միայն այգի էր, 70 հատ նռան ծառ կար: Ընկույզ, թուզ...Բայց այդ թուրքն ասաց՝ «ես իմ տունը չեմ ծախել, երբ որ կծախեմ, փողը կտամ»: Այդպես 18 տարի է՝ աչքս ճանապարհին է: Ամուսինս էլ մեկուկես տարի հետո մահացավ: Շատ էր վախեցել, սիրտը վախից ճաքել է»³:

Իսմայիլիի շրջանի Ղալազա գյուղից Վաչիկ Թավարյանը պատմում է. «Մեր շրջանի Քյալբանդ գյուղի վրա հարձակվել էին, գյուղացիները փախել, լցվել են

¹ Նկատի ունի 1918թ. ջարդերը: Քանի որ հայոց Ցեղասպանության տարեթիվը՝ 1915թ. զիտակցության մեջ խիստ ակտիվ է, քսաներորդ դարասկզբի բոլոր կոտորածների մասին խոսելիս մարդիկ հաճախ ակամա 15թ. են հիշատակում: Շամախու հայ բնակչության ջարդերի մասին տես ՀՀ Ազգային արխիվ, ֆ. 223, Յ. 1, Գ. 106, թ. 7: Օրիգինալ, ձեռագիր; ֆ. 278, Յ. 1, Գ. 32, Թ. 23: Պատճեն, ձեռագիր: Հրատարակված է «Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918–1920 թթ.», Փաստաղթերի և նյութերի ժողովածու, կազմել են Ս.Միրզոյան, Ա.Ղազիյան, Երեւան, 2003, էջ 457, 463–464:

² Հայաստանի և Ադրբեջանի սահմանը:

³ Քյալբանդ գյուղացի Մարգարիտա Ավանեսի Քոչարյանի հետ ՀՀ Արմավիր քաղաքում (Հայրենյաց փողոց, 26) 2006թ. հուլիսին զրուցել է Ա.Հակոբյանը:

անտառները, մի կին նույնիսկ անտառում է ծննդաբերել... Ավտոբուսը թուրքերով լցված հարձակվել են Գիրք գյուղի¹ վրա, որպեսզի բռնի տեղահանեն: Գյուղում Այոշա անունով մարդ կար, որսորդական հրացանից կրակել էր ավտոբուսի վրա, դրանք էլ սկսում են ավտոբուսից կրակել: Այոշան դիրք է մտնում քարի ետևը, բայց վիրավորվում է: Բայց թուրքերը վախենում են, ետ են վերադառնում: Դրանից հետո այդ գյուղի բնակչությունը, մեկ էլ Քյալբանդ գյուղի բնակիչները մի շաբաթից ավել մնում են անտառներում: Իրենց հենց անտառներից էլ տեղափոխեցին, բայց Ղազախում ավտոբուսներից իջեցրին: Ղազախում դրանց ահավոր ծեծի են ենթարկել, և գիրքեցիներին, և քյալբանդցիներին՝ իմանալով, որ էդ դեպքերը եղել են: Մեր գյուղ էլ շրջանի ղեկավարությունից շուտ-շուտ գալիս էին, երկու ամիս համարյա միշտ գալիս - գնում էին: Ռայկոմի քարտուղարը, միլպետը... Գալիս ասում էին՝ «մենք չենք կարող պատասխան տալ ձեր կյանքի անվտանգության համար, իրադրությունը լավ չի: Մենք միայն կարող ենք ձեզ միջև հարևան շրջանը ուղեկցել, որպեսզի դուք դուրս գաք: Մեքենաներ տրամադրենք՝ ինչքան կարողանում ենք, որպեսզի մեր շրջանից դուրս գաք առանց կոնֆլիկտի»: Համարյա մի ամիս գնում - գալիս էին, որպեսզի ժողովրդին համոզեն, հավաքում էին գրասենյակում, համոզում էին դիմում գրել, որ իբր մեր հոժար կամքով բնակության վայրը փոխում ենք: Դե, ովքեր գրել են, ովքեր չեն գրել: Անձամբ ես չեմ գրել, շատ մարդիկ կան, որ չեն գրել: Արդեն տեսնում ենք, որ Սովետական Միության ոչ մի օրենք չի գործում, ոչ մեկի կողմից ոչ մի օգնություն չենք կարող սպասել: Տեսնելով, որ իրադրությունը շատ է սրվում, նոյեմբերին մեր գյուղում՝ Ղալագայում, ոնց որ կոմիտեի նման մի բան ստեղծվեց, ինքնապաշտպանության համար: Կոլխոզը, քանի որ մեծ տնտեսություն էր մեր մոտ, տեխնիկա ուներ, տրակտոր, բուլդոզեր..., զիջերը դրանցով փակում էինք գյուղ մտնող ճանապարհը և մարդիկ հսկում էին: Որսորդական հրացաններ կային: Շրջկենտրոնից ուզել էին այդ տեխնիկան տանել, բայց մենք չթողեցինք, միայն վերջին պահին ենք դրանք թողել: Մեծից փոքր անցել էինք պաշտպանության, ամեն մարդ գիտեր, թե ինքը երբ և որտեղ

¹ Հայկական Սովետական հանրագիտարանի հ. 3, էջ 89ում կարդում ենք, որ Իսմաիլիի շրջանի Գիրք գյուղում են ծնվել Բաքվի կոմիսարներից Ա.Մ.Ամիրյանը և Թ.Մ.Ամիրովը: Իրականում Թ.Ամիրովը դաշնակցական էր և չէր կարող Բաքվի բոլշևիկ կոմիսարներից լինել: 1918ի սեպտեմբերի 14ին Բաքու թուրք-մուսավաթական համատեղ զորքերը մտնելու օրը հենց նրա նավով են փախել Բաքվի հայտնի կոմիսարները: Այդ մասին հետագայում պատմել է Ստեփան Շահումյանի քարտուղարուհի Օ.Շատունովսկայան. ««Թուրքմեն» ջերմանալով դաշնակ Թադևոս Ամիրովի ջոկատն էր տեղավորվում, իսկ մեր խմբում նրա եղբայր Արսեն Ամիրովն էր, «Բակինսկի ռաբոչի» թերթի խմբագիրը: Նստում են այդ նավը: Մերոնք բոլորը, այդ թվում Միկոյանը: Իսկ մենք՝ երիտասարդներս, քսան հոգի, մնում ենք» («Об ушедшем веке рассказывает Ольга Шатуновская», Составители: Джана Кутыина, Андрей Бройдо, Антон Кутын. Берлин, La Jolla, 2001, էջ 43-44, - <http://www.sakharov-center.ru/asfcd/auth/?t=page&num=1698>):

պիտի կանգնի, հսկի: Մեր գյուղը պատմական գյուղ էր, 1918ի ջարդերի ժամանակ թուրքերից շատ է ինքնապաշտպանվել, փորձ ունեինք: Մենք երկու հայկական գյուղերի՝ Նորշենի և Ուշտալի հետ մի գծի վրա էինք, միմյանց հետ պայմանավորվել էինք: Նախկինում այդ երեք գյուղերը մի ընդհանուր կոլխոզ էին, 1988 թվին անջատեցին, ամեն գյուղի վրա մի կոլխոզի նախագահ դրին: Իմաստն էն էր, որ իրար հետ չշփվեին, երեք գյուղի միասնություն չլինի: Մենք էլ պայմանավորվել էինք, որ եթե հանկարծ հեռախոսակապը կտրվի, գիշերները հարձակումների մասին խարույկ վառելով միմյանց լուր տանք: Խաղողի չոր ճյուղերը դարսել էինք, կողքը շշով բենգին դրել՝ վտանգի դեպքում վառելու և միմյանց օգնելու համար: Ցերեկը վտանգավոր չէր, թե մենք կտեսնեինք, թե հարևան գյուղերից լուր կտային: Հարևան գյուղերում թուրքեր չկային: Մալականների գյուղից՝ Իվանովկայից, զանգում էին: Մալականները: Եղել է՝ ավտոբուսներ լցված թուրքերը եկել են մինչև այնտեղ, բայց Իվանովկան կանգնել է, ասել է՝ չպիտի գնաք, եթե գնաք էլ, իրենք պաշտպանվում են, չէք իմանում, թե վերջն ինչ կլինի: Երկու-երեք անգամ ամբողջ գյուղը տրեվոգա (տագնապ-Հ.Խ.) է բարձրացել, գիշերվա կեսին երեխեքին, ծերերին ասել ենք՝ դուք գնացեք ձորը: Բայց լույսերը չէինք հանգցնում, որ իմանան տներում մարդ կա, իսկ տղամարդիկ մնում էին պոստերում:

Ուղղակի մեր շրջանը բազմազգ շրջան էր, դա թուրքական շրջան չէր, թուրքական գյուղերը մատների վրա կարելի էր հաշվել, երևի մի չորս-հինգ հատ կլինեին: Ընդհանրապես մինչև Շամախի, Շամախուց այն կողմ, թե այդտեղ ադրբեջանցի կոչեցյալը եղել է՝ չգիտեմ, բայց էդ տարածքում, մեր ապրած տարածքում ընդհանրապես թուրք բառը գոյություն չի ունեցել: Հիմնականը իհարկե, հայերն էին, 14 գյուղ կար հայկական, կար մի հատ մալականների գյուղ, կար մի 4-5 հատ լեզգիների գյուղ, մի հատ լախիճ կոչվող ազգության գյուղ կար, և երկու գյուղեր կային, ես ընդհանրապես չգիտեմ, թե դրանց պատմության մեջ ինչպես են կոչում, մենք հափտու/հափթու էինք ասում, հափթու¹: Դա շատ փոքր

¹ Հափութիներ. խոսում են արևելակովկասյան լեզգիական խմբի հափութիերեն լեզվով, ապրում են հիմնականում Ադրբեջանի Ղուբայի շրջանի Հափութ (Haput, Гапут) գյուղում, ինչպես նաև Խաչմասի, Իսմայիլիի շրջաններում և քաղաքներում: 19-րդ. առաջին կեսին Ղուբայի շրջանում կար հափութիական չորս բնակավայր (Ягодынский П.Н. Экономический быт государственных крестьян северной части Кубинского уезда Бакинской губернии, МИЭКБЗКЗК, т.ВЫ, ч.1, Тифлис, 1884, էջ.166), Գյոքչայի և Շամախու շրջաններում՝ հինգ բնակավայր (Абелов Н.А. Экономический быт государственных крестьян Геокчайского и Шемахинского уездов Бакинской губернии, МИЭКБЗКЗК, т.ВЫ, ч.2, Тифлис, 1887, էջ.15), Նուխիում (Շաքի)-երկու բնակավայր (Арасханианц А.А. Экономический быт государственных крестьян Нухинского уезда Елисаветпольской губернии, МИЭКБЗКЗК, т.ВЫ, ч.1, Тифлис, 1887, էջ.19): XIX դ. կեսերին հափութիների մի մասը բնակություն հաստատեց այսօրվա Իսմայիլի և Աղդաշի շրջաններում և հիմնեցին Հափութլու-մելիքլու, Հափութլու-Շեթես-Ղաջար, Հափութլու-Մոլլա Իսաղլի և այլ

ժողովուրդ է, միայն Ադրբեջանում կա, երկու գյուղ Իսմայիլիի շրջանում են, երևի մեկ էլ Կուբայի շրջանում հափթունների մի հատ գյուղ կար... Հափթունները մեզ օգնել են, նույնիսկ երեխաներին մի քանի օրով տարել, իրենց տներում պահել են, մինչև վտանգը անցնի: Մի անգամ էլ գիշերը Մոլլա Մադլի գյուղի հափթունները իրենց մեքենայով եկան, կանանց ու երեխաներին տարան իրենց գյուղ: Հափթունները մեզ աջակցում էին, թե՛, ասենք, ինֆորմացիայով, թե՛ իրենց տեխնիկայով: Տեխնիկան, օրինակ, ամենագնաց, «Վիլիս» որ ասում ենք, այդ մեքենայից, օրինակ, բերեցին: Մարդիկ կային՝ գալիս էին մեզ հետ, անգամ մինչև առավոտը պոստում կանգնում, մարդկանց հետ զրուցում, հոգեբանորեն տրամադրում էին, որ չվախենան, խուճապի չենթարկվեն, քանի որ հարձակում լինելու դեպքում նախ իրենց գյուղերով պետք է անցնեին: Նրանք զգուշացնում էին թուրքերին, որ մեր գյուղով հանկարծ ոչ մեկը չգա, որովհետև մենք չենք թողնելու, որ անցնեն: Ճիշտ է, իրենք էլ էին մուսուլման, բայց արտաքինով տարբեր էին, կապույտ աչքերով, սպիտակ մաշկով, թուրքերի նման սև չէին, եմիշբաշ¹ չէին մի խոսքով:

Կամ թեկուզ լեզգիներ կային, մեր հետ էլ ապրողներ կային: Մեր գյուղում 15-20 ընտանիք լեզգի կար: Հայերեն էին խոսում էդ մարդիկ, հայերի հետ մերված: Ճիշտ է, սկզբում գյուղում չէին բնակվում, բայց հետագայում՝ 1960-ից հետո, արդեն գյուղի մի ծայրամասում իրանց հող էին հատկացրել, իրենք որպես մի թաղ ապրում էին: Գալիս էին մեզ հետ, պոստերին կանգնում էին: Դե զգում էին, որ իրենք փոքրամասնություն են, համախմբվում են, երևի դրանից էր, թե ինչ, շատերը հայերեն էին խոսում: Լեզգիներն արդեն մի մասը չեզոք էին, բայց ովքեր սերտորեն կապված էին հայերի հետ, դեպքերի ժամանակ նրանք ինչով

բնակավայրերը (Ягодынский П.Н. Экономический быт государственных крестьян северной части Кубинского уезда Бакинской губернии, МИЭБЗКЗК, т.ЫЫ, ч.1, Тифлис, 1884, էջ.166). 19-րդ. 80-ական թթ. Մուշկուրում ապրում էին 1433 հափութի (Списки населенных мест Российской империи, т.65, Бакинская губерния, Тифлис, 1870, էջ.96), իսկ Գեոքչայի և Շամախու մարզերում՝ 710 հափութի (Абелов Н.А. Экономический быт государственных крестьян Геокчайского и Шемахинского уездов Бакинской губернии, МИЭБЗКЗК, т.ЫЫ, ч.2, Тифлис, 1887, էջ.15). Բրոկհաուզ-Եֆրոնի հանրագիտարանի տեղեկություններով Ելիզավետպոլի նահանգում 1886-ին հափութիները կազմում էին բնակչության 0,21 %-ը (1520 մարդ), իսկ Ղուբայի և Բաքվի նահանգներում՝ 1,2% (2100 մարդ) (http://gatchina3000.ru/big/056/56804_brockhaus-efron.htm): Այսպիսով՝ 19-րդ. ներկայիս Ադրբեջանի տարածքում ապրում էին առնվազն 6.000 հափութիներ: Ադրբեջանի պաշտոնական մարդահամարների ցանկում հափութիները երբեք չեն ընդգրկվել, սակայն ըստ այլ աղբյուրների, 2005 թվականին կրիզների և ջեկերի հետ միասին հափութիներն Ադրբեջանում 10-15 հազար թիվ են կազմել («The Sociolinguistic Situation of the Kryz in Azerbaijan»:<http://istovvjavtor.tk/naxsko-dagestanskije-narody/kryzy#more-184>; <http://istovvjavtor.tk/structure/naxsko-dagestanskije-narody>):

¹ Մեխագլուխ, երկարագլուխ:

կարողացել են, աջակցել են: Այդպես մնացել ենք մինչև 1989ի փետրվար ամիսը, մինչև իրենք էլ (իշխանությունները-Հ.Խ.) համոզվեցին, որ մենք հենց այնպես չենք գնալու, մեքենաներ բերեցին, և մենք շարասյունով դուրս եկանք: Տները, անասունները թողել ենք: Մենք, երևի, աղբբեջանի հայկական գյուղերից վերջին դուրս եկողներն ենք եղել: Արդեն Կիրովաբադի հայերն էլ էին գնում: Արդեն լսել էինք, որ բոլոր հայկական գյուղերը գնացել են, Շամխորի, Խանլարի... շրջաններում այլևս հայություն չկար: Հետո, գաղթից հետո, ոմանք ետ են գնացել, հարցեր են ունեցել լուծելու, թեկուզ տան փոխանակություն, թեկուզ պարտքեր են ունեցել, տարբեր կարիքներ: 1989-ի ընթացքում դեռ գնալ-գալ կար: Ես էլ եմ երկու անգամ գնացել: Մեր տեղի լեզգիները, հափթուները կրկին օգնում էին: Իրենց տներում պահում էին, կերակրում էին, չէին թողնում՝ որևէ մեկը ձեռք բարձրացնի: Թաքուն էին պահում, ճիշտ է: Քանի որ այդ գյուղերում գաղթից հետո արդեն Հայաստանից տեղափոխված թուրքեր էին, նրանք չէին ճանաչում, թե իրար հետ ման եկող այդ մարդիկ հայ են, լեզգի են... »¹ :

«Շաքի քաղաքում էդ դեպքը պատահեց նոյեմբերի 21ից 26ը: Ամեն օր միտինգներ էին, առավոտը՝ միտինգ, կեսօրին՝ միտինգ, երեկոյան դեմ՝ միտինգ, պահանջում էին՝ «Հայեր, ռադ եղեք», «մահ հայերին»: Եղանակն էլ էնպես լավ եղանակ էր, արևոտ, սովորաբար նոյեմբերին միշտ ցուրտ էր լինում, այդ տարի շատ լավ եղանակ էր անում: Մեծիրիբանյան Կարոյի տները իմ աչքի առաջ վառեցին. մեր տնից երևում էր: Քաղաքի ամենահարուստ հայն էր: Հետո սկսեցին թալանել, ով ինչ հավանեց՝ տանում էր, փողոցով արդեն երևում էր: Մինչև անգամ գդալներ, ամաններ, կաթսաներ՝ հավաքած տանում էին: Երեկոյան կողմ էն մեր մյուս հարևանի տունը վառեցին. երկու տղա ուներ, երկու տուն էր սարքել: Մեկինը վառեցին, մյուսինը հանգցրեցին, էլ չվառեցին: Սարգսյան Մուրադ էր անունը, Սարգսյան Մնացական, քույրը Սարգսյան Սվետան էր, այստեղ՝ Հայաստանում, մահացավ: Մեր մեքենան՝ «Ժիգուլի», տարան, վառեցին, հարևանի մեքենան՝ «06», նույնպես տարան: Մեր հարևան թուրքերը՝ Ալահվերդիև Ռաուֆ, Ալահվերդիև Քյամալ, հիմա արդեն չկան, մահացել են, հայտնեցին մեքենաների մասին ջահելներին, դրանք էլ տարան: Ռաուֆը համալսարանում էր սովորում, ավարտում էր արդեն: Իր տատը հայ էր, պապը՝ թուրք, հայրն էլ ուսուցիչ էր Շաքիում: Հայերի տներին կավիճով խաչ էին դնում, որ այդտեղից հայերին հանեն: Մեր տան վրա էլ կար: Նույն Ռաուֆն էր անողը ...Մեր ընտանիքը պատրաստվել էր արդեն, որ առավոտյան պիտի գնանք, գիշերը եկան մեր հետևից: Մի անձրևանոց ենք հագել խալաթի վրայից ու տնից դուրս եկել: Ես եմ, քույրիկս է, հարևաններն են՝ հայր ու աղջիկ, եղբայրս, ողորմածիկը այստեղ մահացավ, իր կինն էր, աղջիկն էր: Չորս օր մնացել ենք մի փոսի մեջ, ծածկված: Իբր թաքնվել էինք: Մի պարսիկ հարևան ունեինք, մեզ

¹ Վաչիկ Թավարյանի հետ ՀՀ Տավուշի մարզի Աղավնավանք գյուղում 2006ի հուլիս 5ին զրուցել է Ա.Հակոբյանը:

համար ուտելիք էր բերում: 4-րդ օրն արդեն պարետային ժամ հաստատվեց և մենք դուրս եկանք: Դուրս եկանք գիշերը՝ ժամը 1ին, տեսանք փողոցում կանգնած ԲՏՌ-ներ կան, ավտոբուսներ կան, լիքը հայեր են... տեղավորեցին ավտոբուսում, ԲՏՌ-ները մեզ տարան կենտրոն: Գիշերը մնացինք մի շենքի մեջ: Ամբողջ գիշեր այդ շենքի ապակիները փշրեցին, քարերով: Ամբողջ գիշեր քարեր էին նետում: Առավոտը շուտ տեսանք զորքը կանգնած, մեքենաները կանգնած, ավտոբուսների մեջ մեզ ճանապարհում էին: Գաղթելիս արդեն անձնական մեքենա չէր մնացել: Ոմանք իրենց մեքանաներով հասցրել էին գնալ, բայց շատերինը տարել էին: Ոմանք լացում էին մեր հետևից, ոմանք քարեր էին գցում, նայած՝ ոնց... Մեր տան բանալին թողեցինք մեր հարևան պարսիկի՝ Այուբի մոտ: Բերեցին մեզ Հայաստան՝ Այրում: Դրանից հետո իմ նախկին աշակերտը՝ Գրիգորյան Էդիկ, հիմա Մոսկվայում է ապրում, ինքն իր մեքենայով էր փախել, դեղին գույնի «Տիգուլի» ուներ, չորս անգամ ինձ տարավ Շաքի ու ետ բերեց: Մենք, դե՛, տներ ունեինք, որ պիտի ծախեինք: 1989-ի հունվարի 6-ին, ապրիլի 13-ին, հուլիսի 6-ից մինչև 12-ը մնացել ենք, որ տները ծախենք, բայց չենք կարողացել: Գնացել եմ տեսել՝ ոչ մի բան չկա տանը, ուղղակի մենակ մի... Իմ նկարները և հայերեն գրքերը: Մի գդալ չգտանք, որ դեղ խմենք: ...Էդ պարսիկը մեր տանը ոչ մի բան չէր թողել, լրիվ տարել էր: Նրա աղջկա հագին իմ մուշտակը տեսա: Բայց տարածը քթից եկավ: Թևը կտրեցին նրա, հետո փոքր տղան սիրահարված է լինում մի աղջկա, քույրը չի թողում նրա հետ ամուսնանա, վիճելիս դանակով խփում սպանում է եղբորը, հայրն էլ աղջկան է սպանում: Երկու զոհ միանգամից... Մեր տները շատ լավ տներ էին, թանկարժեք: Միայն 1993-ին կարողացա վաճառել: Արդեն գնալ-գալ հնարավոր չէր, գնորդը եկավ Թիֆլիս, ես էլ գնացի այնտեղ: 200 հազարանոց տները տվեցի 70 հազար ռուբլով, փողը Թիֆլիսում բանկ դրեցի, այդպես էլ կորավ գնաց՝... : Ճիշտն ասած, Շաքի գնալիս ինձ շատ լավ են ընդունել: ...Ժպտում էին, համբուրում էին, լացում էին, մանավանդ իմ աշակերտները... Շաքիում մի քանի ընտանիք ուղի² կար, ուղի

¹ Նկատի ունի 1993ի ռուբլու արժեզրկումը:

² Ուղի, ուղիներ, ինքնանունը՝ ուղի, լեզուն՝ ուղիբեն, արևելակովկասյան լեզգիական խմբի լեզուներից է: Կովկասյան Աղվանքի պատմության շրջանից ուղիները Կովկասյան Աղվանքի այն բացառիկ ժողովուրդն է, ով տևական դիմադրել է մահմեդականացման և թրքալեզվացման քաղաքականությանը, և մինչև այսօր ուղիական ինքնագիտակցությունը պահել են բացառապես քրիստոնյա մնացածները: Դեռևս 18-19դդ. Շաքիի, Վարդաշենի (այսօր՝ Օդուզական) և Կուտաշենի (այսօր՝ Ղաբալայի) շրջանների 40ից ավելի գյուղերում ապրում էին 50.000ից ավելի քրիստոնյա ուղիներ: Ադրբեջանի բոլոր հակահայկական տրամադրությունները և ագրեսիվ գործողությունները միշտ տարածվել են նաև ուղիների վրա, այդ թվում՝ 1988-92թթ., երբ դեռևս գոյատևող ուղիների մեծ մասը ստիպված էր հեռանալ իր հազարամյակների հայրենիքից: 2002 թ. ՌՖ-ում կար 3721 ուղի (<http://www.perepis2002.ru/index.html?id=17>): Ադրբեջանում այսօր ապրում են ուղիներին կիսով չափ մնացած միակ բնակավայրում՝ Նիժում: Ուղիների մասին տես Հ.Առաքելյան,

ընտանիք, նրանք էլ գնացին: Ճիշտն ասած, հիմա էլ չեմ կարող ասել, թե ինչու մենք մինչև վերջ չէինք հավատում, որ այդպես բան կպատահեր: Վստահ էինք, որ Սումգայիթը դիպված էր, անցավ գնաց: Շաքիի համարյա բոլոր հայերն էլ [19]18ի թուրքերի հարձակումներից զոհեր են ունեցել: Իմ ընտանիքը՝ նույնպես: Թուրքերը հարձակվել են հայերի գյուղերի վրա: 40, չէ, 40-ից ավելի հայերի գյուղեր կային: Շագինյան Երվանդ կար, դրա ծնողները իրենց երեք երեխային թողել էին թփերի տակ, փախել, որ երեխաների լացի ձայնից թուրքերը չհարձակվեն ու դրանց կոտորեն: Փախել էին Վրաստան: Իմ հորաքույրն էլ իր երեք երեխաներին այն ժամանակ ջրի մեջ էր գցել, որ լացի ձայնը թուրքերը չառնեն ու չհարձակվեն: Ինքը փախել էր, թաքնվել և հետո եկել եկեղեցում մնացել: Մամիս, իրա քրոջը և եղբորը մի թուրքի մարդ Աշըղա Քյունգուս գյուղում թոնրի մեջ խոտով ծածկել պահել է, հետո ծածուկ ուղարկել Հայաստան: 13 օր ոտով ճանապարհ են եկել, պապաս ու մամաս միասին, Երևանում մանկատանն են եղել ...Հայրս էլ, մայրս էլ մեզ միշտ պատմել են¹: Բայց մեկ է՝ պատրաստ չէինք²:

Այս բոլոր օրինակները քաղված են Ադրբեջանի տարբեր վայրերից ու իրավիճակներից փախստական հայերի՝ սեփական կյանքի պատմությունից, բայց բոլորն էլ վկայում են նույն ձեռագիրը՝ հայերին քշել՝ հնարավորություն չտալով իրենց գույքը վերցնելու կամ բնակարանները վաճառելու, փոխանակելու: Նույն այդ օրերին Ադրբեջանի՝ մեծությամբ ու բնակչության թվով

Եղիշե առաքյալի պաշտամունքն ուղիների մեջ և Ուտի գավառի տեղադրության հարցի շուրջ, «Լրաբեր» հասարակական գիտությունների, ՀՀ ԳԱԱ, 1991, #6; Հ. Խառատյան, Ուղիների էթնո-և դավանական պատկանելության որոշ հարցեր (19-20դդ.), Հայկազյան հայագիտական հանդես, Ի հատուր, Պեյրուք, 2000; Г.С.Харатян, Этно-конфессиональная характеристика зоны Шеку-Кабала, «Научная мысль Кавказа», 2003, # 3; Հ.Խառատյան, Եղիշե Առաքյալը և նրա առաքելությունը, «Հայոց սրբերը և սրբավայրերը», Երևան, 2001; Հ.Խառատյան, Ուղիների ողիսականը 18-19դդ., (Պատմություն¹ն, էթնիկ գոյատևում²ն, ինքնահաստատում³ն), Հայոց Մեծ եղեռն-90, Երևան, 2005; Հ. Խառատյան-Առաքելյան, Ուղիների կրօնը եւ Հաւատալիքները ԺԹ.-Ի դարերում, «Հանդես Ամսօրեա», Վիեննա-Երևան, 2010, էջ 435-495; Հ.Խառատյան, Եղիշե առաքելի, Գրիգորիսի եւ Կովկասեան Աղուանքի քրիստոնէացման հարցի շուրջ, «Բազմավեպ», Վենետիկ, 2010թ., էջ 19-75; Харатян Грануш, Удины: крах всех усилий самосохранения, М.: издательство «Центриздат», 2015:

¹ Շաքիի հայերի 1918–1920թթ. կոտորածների մասին տես «Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918–1920 թթ.»; Հ.Խառատյան-Առաքելյան, Ուղիների ողիսականը; Յուրիկ Ղուլյան, Հայ փախստականների խնդիրը Ադրբեջանում (1918թ. մայիս – 1919թ. մայիս), Բանբեր Հայաստանի արխիվների, N 1 (121) 2013, էջ 152-159 (<http://www.armarchives.am/UserFiles/File/Banber%20-%2001-2013+.pdf>):

² Շաքի քաղաքի Ձերժինսկի փողոց փակուղի 3, տ. 3 հասցեով նախկին բնակիչ Ելենա Գրիգորի Գասպարյանի հետ ՀՀ Արմավիր քաղաքում 2006ի հունիսի 23ին գրուցել է Ա.Հակոբյանը:

երկրորդը համարվող Կիրովաբադ քաղաքում, որտեղ ապրում էին շուրջ քառասուն հազար հայեր, դեպքերի զարգացումները սպառնում էին երկրորդ սումգայիթով, եթե շտապ լուծումներ չգտնվեին: Սումգայիթյան փորձն արդեն սովորեցրել էր, որ ոչ միայն իշխանությունների վրա հույս դնել չի կարելի, այլև պետք էր զգուշանալ նախ և առաջ հենց իշխանություններից: Այս գիտակցությունը 1988ին դեռևս անորոշ էր, և մարդիկ սեփական կաշվի վրա զգացին, թե ինչ է լինում այն հայերի հետ, ովքեր ամիջապես չեն ենթարկվել տեղահանվելու առաջարկությանը:

Կիրովաբադի հայ բնակչությունը 1988-ի նոյեմբերին նույնպես դեռևս չէր պատկերացում, թե ինչ սպառնալիք է իրենց վրա կախված: Նրանք նույնպես դեռևս հավատում էին, որ ԽՍՀՄը պետություն է, և, որպես այդպիսին, պետք է պաշտպանի և անպայման կպաշտպանի իր անմեղ քաղաքացիներին: Սակայն 1988-ի նոյեմբերի 21-ին Կիրովաբադի Լենինի անվան հրապարակում՝ քաղաքային և կուսակցական իշխանությունների շենքերի դիմաց տեղի ունեցող առավոտյան ցույցին մասնակցում էին կուսակցության քաղաքային կոմիտեի բյուրոյի անդամներ, քաղաքային գործադիր կոմիտեի նախագահ Ս.Վ.Մամեդովը, Կիրովաբադ քաղաքի Քյապյազի շրջանային կուսակցական կազմակերպության առաջին քարտուղար Ս.Հուսեյնովան, քաղաքի խոշոր արտադրական համալիրների տնօրենները, քաղաքի դատախազ Ֆաթալիևը, ներքին գործերի վարչության (ոստիկանության) բազմաթիվ աշխատակիցներ և այլ պատասխանատու անձիք, ովքեր խրախուսանքով լսում էին հոետորների «Հայեր, ռադ եղեք» և «Մահ հայերին» կոչերը: Նրանց ներկայությունը ցույցին արդեն իսկ զգուշացում էր: Կեսօրին ցուցարարներից երիտասարդները ավտոճանապարհային ոստիկանության մեքենաների ուղեկցությամբ շարժվեցին դեպի հայկական թաղամաս, իսկ «Հայեր, ռադ եղեք» և «Մահ հայերին» սպառնալիքն արդեն հնչում էր ոստիկանական մեքենաների բարձրախոսներից: Քաղաքն էլեկտրակացված էր, բնակչությունը՝ լարված սպասումի մեջ: Մինչ ցուցարարներից առանձնացած երիտասարդական խումբը Շահումյան փողոցով շարժվում էր դեպի հայկական թաղամաս՝ Թագաշեն (պաշտոնական անունը՝ Կարմիր գյուղ), Շահումյան փողոցի մայրերին շարվել էին ցույցի հոետորներին մի քանի ժամ լսած բնակիչները և սպասում կամ հետևում էին դեպքերի զարգացումներին: Երիտասարդների ձեռքերին երկաթյա ձողեր կային: Որոշ երիտասարդներ փորձեղ արեցին դուրս գալ երթից շարքերից, բայց ոստիկանները նրանց ետ վերադարձրին գրոհայինների շարք: Բորբոքված երիտասարդները գրոհեցին հայկական եկեղեցին, Խանլար անունով ոստիկանական մայրի գլխավորությամբ քարեր նետելով տապալեցին քահանային, ջարդուփշուր արեցին նրա բնակարանի գույքը, որպես ավար պոկեցին եկեղեցու խաչը, ջարդեցին № 10 հայկական դպրոցի բակի խորաքանդակը, ճանապարհին խմբով հարձակվեցին ծեծեցին միայնակ մարդու պահեստի փոխգնդապետ Սեմյոն Բաբաքեխյանին, երկու հարյուր հոգով

հարձակվեցին Օկտյաբրսկայա փողոցի թիվ 55 տան բնակիչ Ռոզա Մելքումյանի տան վրա՝ կողոպտելով այն, իսկ տանտիրուհին սպանվեց երկաթյա խողովակով քունքին հասցված հարվածից: Այդ ընթացքում մարդասպանների այդ խմբի հետ էր Կիրովաբադի Քյափազի շրջանի ոստիկանական բաժնի քրեական հետախուզության պետ Միրբալան: Սպանված կնոջը տեսնելով՝ վերջինս հայտարարեց, որ ոչինչ չի պատահել, բայց ետ կանչեց կատաղած ռիմակը: Ավելի ուշ Ռոզա Մելքումյանի որդի Վլադիմիր Մելքոնյանը մոր մահվան մասին դատաքննչական փորձաքննության տեղեկանք ստացավ, որում որպես մահվան պատճառ նշված էր սրտի կաթվածը: Այդ ընթացքում հայկական թաղամասի բնակիչները դուրս թափվեցին տներից և մեծ խմբով դեմ դիմաց կանգնեցին կատաղած բանդայի առաջ: Վերջիններս առաջին իսկ դիմադրությանը բախվելով՝ սպառնալիքներով ետ վերադարձան՝ ճանապարհին քարերով ջարդելով տների ապակիները, իսկ Ֆիդլետով փողոցի №68՝ Ֆիդլետով-Ջափարիձե խաչմերուկում գտնվող Դանիելյանի տունը այրեցին: Երեկոյան հայկական թաղամասը շրջապատվեց զինվորականներով: Լենինի հրապարակում հակահայկական բազմամարդ ցույցը շարունակվում էր՝ ավելի ու ավելի բորբոքելով կրքերը:

Նոյեմբերի 22-ի առավոտյան հայկական թաղամասում գտնվող հայկական եկեղեցու բակն արդեն լեցուն էր ծեծված, դանակահարված, վիրավոր հայերով: Գիշերը գրոհիլ էին ենթարկվել ադրբեջանական թաղամասում ապրող հայ բնակիչների տները: Քաղաքում զինվորականների կողմից պարետային ժամ հայտարարվեց և սահմանափակվեց բնակչության գիշերային տեղաշարժի հնարավորությունը:

Կիրովաբադի «հայկական թաղամասը» ձևավորվել էր 70-80 տարի առաջ՝ 1905-1906-ի հայ-թաթարական ազգամիջյան բախումներից և 1917-1920-ի հայկական ջարդերից հետո: Այդ ժամանակ որոշվել էր, որ քաղաքի հայերն ու թաթարները (ետնագույն ադրբեջանցիները) ապրեն առանձին թաղամասերով: Ուշագրավ է, որ ինչպես հիշյալ երկու, այպես էլ 1980-ականները հեղափոխական ժամանակաշրջաններ էին. Ռուսաստանի 1905-1906-ի հեղափոխական իրավիճակը, 1917-ին Ռուսական կայսրությունում տեղի ունեցած փետրվարյան բուրժուա-դեմոկրատական, ապա հոկտեմբերյան բոլշևիկյան հեղափոխությունը, որից հետո կայսրությունը կազմալուծվեց, և Կովկասում ինքնահռչակվեցին երեք հանրապետություններ՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի, իսկ 1980-ականներին ընթանում էր, այսպես կոչված «վերակառուցման հեղափոխությունը», ինչին հաջորդեց ԽՍՀՄ փլուզումը, և Կովկասում կրկին ինքնահռչակվեցին նույն երեք հանրապետությունները:

Ուշագրավ է, որ 1905-1906-ի հայ-թաթարական ընդհարումների և 1917-1920-ի հայկական ջարդերի մասին անհամեմատ ավելի շատ տեղեկություններ կան, քան 1988-ի Կիրովաբադում տեղի ունեցած իրադարձությունների մասին: Անհավատալի է, բայց քսաներորդ դարասկզբի թերթերը շատ ավելի իրազեկ էին

երևույթների ընթացքին, շատ ավելի կազմակերպված, ճկուն և արագ էին արձագանքում իրադարձություններին, քան զարգացած համարվող քսաներորդ դարավերջի զանգվածային լրատվամիջոցները: Դարասկզբի հայալեզու և ռուսալեզու թերթերի տեղեկությունների միջոցով կարելի է վերականգնել դեպքերի համարյա ամենօրյա ընթացքը¹: Դրան հակառակ 1988-1989-ին Կիրովաբադում կատարվող դեպքերի մասին փաստացի ոչինչ չի հաղորդվել և չի գրվել: Մյուս կողմից՝ նույնքան արագորեն գրվեցին դարասկզբի դեպքերն ու երևույթները վերլուծող գրքեր, բազմաթիվ հոդվածներ²: Մինչդեռ նույնիսկ 1988-ի Սումգայիթի ջարդերը³, 1988-1989-ի իրադարձությունները, 1990-ի հունվարյան սոսկալի ջարդերը⁴, նույնիսկ 1991-ի «Կոլցո» օպերացիան հայկական վերլուծական դաշտում դեռևս սպասում են հետազոտողների անդրադարձին: Իսկ 1988-1990-ին Հարավային Կովկասում տեղի ունեցող ահռելի մարդկային տեղաշարժերի, կրքոտ բախումների, ցասումնալից ցույցերի, սպանությունների և այդ ամենին՝ իշխանությունների ուղղակի կամ անուղղակի մասնակցության

¹ «Մշակ» (1872–1920, Թիֆլիս); «Նոր Դար» (1883–1916, Թիֆլիս), «Աղբյուր» (1883–1918, Թիֆլիս), «Մուրճ» (1889–1907, Թիֆլիս), «Լուսա» (1896–1912, Թիֆլիս), «Արմենիա» (1885–1923, Փարիզ), «Հնչակ» (1887–1915, 1935–1940, Ժնև), «Դրօշակ» (1891–1914, 1925–1934, Ժնև); «Санкт-петербургские ведомости» (մինչև 1728 թ. «Ведомости», 1728 - 1914 թթ. «С.Петербургскія Ведомости», 1914-1917, «Петроградскія Ведомости»), «Русское слово» (1895–1918, Մոսկվա); «Биржевые ведомости» (1861–1879 և 1880–1917, Պետերբուրգ); «Тифлисский листок» (1886–1916, Թիֆլիս); «Сын отечества» (1905 թ. հրատարակվում էր «С. О.» անունով, Պետերբուրգ); «Кавказские минеральные воды» (1902–1906, Պյատիգորսկ); «Новое обозрение» (1901–1906, Թիֆլիս); «Знамя Труда» (1918–1919, Բաքու); «Արև» (Բաքու); «Գործ» ամսագիրը (Բաքու), «Бакинский рабочий» (1906-ից մինչև այսօր, Բաքու), «Борьба» (1905, Մոսկվա); «Наше время» (1890-1907, Պետերբուրգ), «Աշխատանք» (Բաքու) և այլն:

² А. В. Амфитеатров. Армянский вопрос. СПб., 1906; И. Алибеков. Елисаветпольские кровавые дни пред судом общества. Тифлис, 1906, <http://www.genocide.ru/lib/alibegov/elizavetpole.html> (далее – Алибеков); Г. Е. Старцев. Кровавые дни на Кавказе. СПб, 1907; Ա.-Դ.Ռ, Հայթորքական ընդհարումը Կովկասում, Կովկասում (1905-1906 թթ.). (Փաստական, վիճակագրական, տեղագրական լուսաբանություններով), Երևան, 1907; М. С. Ордубади. Кровавые годы, 1911 (<http://www.karabakh-doc.azerall.info/ru/azerpeople/ap061-1.php>); Г. Чалхушьян. Красная книга. Ростов на Дону, 1919; Б. Ишханян. Великие ужасы города Баку. Тифлис, 1920; Դ. Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը (1901–1918), հ. Գ, Վենետիկ, 1926 և այլն:

³ Մեծ հաշվով հրապարակի վրա է միայն Ս.Շահմուրադյանի կազմած «Сумгаитская трагедия глазами очевидцев. Ереван, 1989 և Հ.Ուլուբաբյանի, Ս.Զոլյանի և Ա.Արշակյանի կազմած «Сумгаит... Геноцид... Гласность? Ереван, 1990 նյութերի ժողովածուները:

⁴ И. Мосесова, Армяне в Баку: Бытие и исход. Ереван, 1998:

մասին դեպքերին համընթաց՝ շատ չնչին տեղեկություններ են հաղորդվել, եղածի զգալի մասն էլ՝ հաճախ ուշացած և գաղափարախոսական պաթոսով լեցուն: Իսկ Կիրովաբադի մասին, կարելի է ասել, դեպքերին համընթաց մամուլում որևէ տեղեկություն չի հայտնվել, ճիշտ ու ճիշտ թանձր խորհրդային ավանդույթով, երբ մարդկային մեծ զանգվածներ բխվում էին միմյանց, գորքերի միջոցով ճնշումներ էին իրականացվում, իսկ խորհրդային մամուլը խաղաղ, հաշտ ու համերաշխ գրում էր համագումարների պլանների կատարման մասին: Մինչդեռ հայտարարված «վերակառուցման» ու «հրապարակայնության» ժամանակաշրջան էր, իսկ տեղեկատվության համար «դեպքերն» ավելի քան արժանի էին մեծ ուշադրության: Կոնկրետ Կիրովաբադում կատարվող դեպքերի շուրջ ինֆորմացիոն շրջափակումը կատարյալ էր:

Նոյեմբերի 22-ին մի խումբ հայեր, հավաքվելով եկեղեցում, Տեր Սահակ քահանայի հետ խորհրդակցելով, որոշեցին ինքնապաշտպանվել: Կիրովաբադից հայերին իշխանության լեզվով դեռևս չէին առաջարկել «հեռանալ», խորհրդային մամուլը գրում էր հայ և ադրբեջանցի եղբայր ժողովուրդների ավանդական և ընթացիկ բարեկամության մասին, կիրովաբադցիները նույնիսկ չգիտեին, թե ինչ է տեղի ունենում ադրբեջանահայության այլ հատվածների հետ, բայց «վեցերորդ զգայարանով» հասկացան, որ լուրջ ամպեր են կուտակվում, և կարծես թե որևէ տեղից օգնության սպասելիք չկա: «Ինքնապաշտպանական խումբը» արագ որոշեց քաղաքի ադրբեջանական մասում ապրող հայերին օգնել տեղափոխվելու հայկական թաղամաս, բաժանել հայ ընտանիքների վրա, պահակություն սահմանել քաղաքի հայկական մասի բոլոր թաղամասերում՝ հարձակումները կանխելու կամ դիմադրելու համար, ահրաժեշտ վայրերում բարիկադներ ստեղծել, եկեղեցուն կից նախապատրաստել «ղաշտային հոսպիտալ» ծեծվածների համար, «ղաշտային խոհանոց»՝ իրենց բնակարաններից վռնված հայերին կերակրելու համար, դեղորայք, տաք հագուստ և մթերք պաշարել, հայկական թաղամասում և եկեղեցու շուրջը կուտակվող հայությանը ամենօրյա տեղեկություններ տրամադրել իրավիճակի շուրջ, կապ պահպանել զինվորական պարետի հետ՝ անելիքները քննարկելու, հրնթացս որոշել անելիքները: Նոյեմբերի 22-ից մինչև դեկտեմբերի կեսերը սույն «նախաձեռնող խումբը» ոչ միայն իրականացրեց հիմնական ինքնապաշտպանական գործողությունները, այլև փաստացի կանխարգելեց և ձգձգեց քաղաքային իշխանությունների որոշումը՝ արագ, անաղմուկ և առանց գլխացավանքի դուրս վռնել քաղաքի քառասունհազարանոց հայ բնակչությանը և նրանց բնակֆոնդն ու գույքը յուրացնել: Պարետատան հետ բանակցելով՝ նրանք հիստուն մարդու անունով անցագրեր ստացան՝ գիշերը, պարետային ռեժիմի պայմաններում, քաղաք դուրս գալու և հարձակման ենթարկված անօգնական մարդկանց փրկելով՝ հայկական թաղամաս տեղափոխելու համար: Միայն նոյեմբերի 22-ի գիշերը այս մարդիկ, իրենց կյանքը վտանգի ենթարկելով, եկեղեցի են տեղափոխել 77 տարեցների, երեխաների, ծեծված կիսամեռ մարդկանց: Այդպես շարունակվել է

մինչև նոյեմբերի 28-ը: Նոյեմբերի 22ին հայկական եկեղեցում ապաստանելու եկան նաև փախստական ժուռներ, ուկրաինացիներ:

Նոյեմբերի 23-ին հայերի բնակարաններում անջատվում են գազը, էլեկտրահոսանքը, ջրամատակարարումը: Հայկական թաղամասում ապաստանած փախստական հայերի թիվը շուտով հասավ չորսուկես հազարի: Փախած գալիս էին բռնաբարված կանայք, ջարդված, դանակահարված տղամարդիկ, վախից կիսախելագար, պատռտված հագուստով, բոբիկ... Մեծ մասը՝ զանգուղեղի վնասվածքով: Հարյուրավոր ծեծված մարդկանց համար երկրորդ «հիվանդանոցի» կարիք առաջացավ: Որպես այդպիսին «բռնագրավեցին» եկեղեցու կողքի ուսումնարանի շենքը, որտեղ տեղավորեցին առավել ծանր տուժածներին: Կամավորաբար խնամում էին հայ բժիշկներն ու հայ ու ռուս բուժքույրերը, կազմվել են բոլորի «հիվանդության պատմությունները»: Նոյեմբերի 24-ին հրոսակախմբերի գրոհների քարտեզը հասել էր Լենինի պողոտային: Թիվ 87 շենքի բնակչուհի Աննա Ալեքսեյի Իլյուխինան կարողացավ փախչել հայկական եկեղեցի: Նրա բնակարանն էլ, մյուսների նման, կողոպտված էր, ապակիները՝ ջարդված: Բայց Լենինի պողոտայի 93 Դ շենքի բնակչուհի Ռ.Օ.-ն չէր հասցրել փախչել, նրան սարսափելի ծեծելուց հետո բռնաբարել էին... շշով: Կիսախելագարված, արյունահոսող, բոբիկ ու մերկ կնոջը տարել էին ոստիկանական բաժանմունք, որտեղ նրան ծաղր ու ծանակի ենթարկող ոստիկանները ողջ գիշեր ստիպել էին նստած սպասել... անհայտ է՝ ինչին սպասել: Ողջ գիշեր ցուրտ սենյակում մերկ նստած կիսամեռ կինը առավոտյալ լսել է փողոցով անցնող տանկի հռնոյունը և մի կերպ վազել դեպի այն: Երիտասարդ տանկիստը, «Мама, ты армянка?» հարցնելով, վերարկուն նետել է կնոջ ուսերին և հայկական եկեղեցի հասցրել զրահամեքենայով: «Շտապ օգնությունը» հրաժարվել էր կնոջը օգնություն ցուցաբերել: Զինվորականները ստիպված էին հայկական եկեղեցի տեղափոխել նաև քաղաքացիական հիվանդանոցներում պառկած հիվանդ հայերին նրանց առաջարկվել էր արագ լքել հիվանդանոցի տարածքը:

Հատկապես դժվար օր էր չորրորդ օրը՝ նոյեմբերի 25-ը: Այդ օրը Բաքվի հեռուստատեսությամբ ելույթ էին ունեցել գրողներ Բախտիար Մահմուդ Մահմուդօղլու Վահաբգադեն և Էլչին Իլյասօղլու Էֆենդիևը, հատուկ պաթոսով խրախուսել էին աղբբեջանը հայերից մաքրելու գործողությունները, հերոսացրել հրոսակներին: Այդ օրը աղբբեջանական թաղամասում դեռևս թաքնվող հայերի նկատմամբ ջարդերը աչքի էին ընկնում առանձնահատուկ սաղիզմով: Ցերեկը միայն ռուսական բանակի զինվորները կարող էին տանկերով շրջել փողոցներում և փորձել փրկել հայերին, եթե վերջիններս ինչ-որ հրաշքով կարողանային վազքով հասնել տանկերին: Հայտնի էր դարձել, որ զանգվածային ջարդերին մասնակցում են հրդեհաշեջները, ճանապարհային ոստիկանության և նույնիսկ «Շտապ օգնության» աշխատակիցները: Պարետային հսկողությունն իրականացնող զինվորականների կողմից բռնված և ոստիկանական

բաժանմունքներին հանձնվող հրոսակներին անմիջապես ետ էին ուղարկում՝ ջարդերն ու թալանը շարունակելու: Լսելով սպանվածների մասին և տեսնելով հատուկ սաղիզով ծեծվածներին՝ հայկական թաղամասում հավաքված փախստականները սկսեցին քննարկել հայկական թաղամասում ապրող աղբբեջանցիների հետ նույն կերպ վարվելու անհրաժեշտությունը՝ գուցե դա զսպի հրոսակներին: Դժվարությամբ, բայց հաջողվեց կանխել վրեժխնդրության գործողությունները:

Նոյեմբերի 26ին քաղաքի պարետ Պ.Պ.Պոլեխը հանդիպեց հայկական թաղամասում ապաստանածներին: Վերջիններս միաբերան խնդրում էին, որ որևէ խորհրդային թղթակից գա, իրենց հետ հանդիպի, իրենց վիճակի մասին տեղեկացնի ԽՍՀՄ հանրությանը, ԽՍՀՄ ղեկավարությանը... Հերթական անգամ շրջանցելով տեղեկատվության խնդիրը՝ Պոլեխը հայերին հայտնեց, որ այդ գիշեր միայն բռնաբարություններ են եղել, դանակահարության դեպք կա, բայց սպանվածներ չեն եղել: «Բերման են ենթարկվել» 26 մարդ: «... среди вашего населения, среди армян не было нарушителей, не было задержанных, так держитесь... был задержан злостный нарушитель товарищ Алиев, который был вооружен пистолетом с двумя патронами и имел при себе около пяти тысяч денег в багажнике машины. Его задержали, он находится под следствием. Были задержаны молодые ребята, у которых были обнаружены финские ножи, а те все 140 задержанных с оружием, все под следствием, а всего было задержано 305 человек. Остальные товарищи были допрошены и отпущены»: Ոչ մի կողոպտող, թալանչի, ջարդարար, մարդասպան, հանցագործ..., հայերի ավելի քան հազար տուն ավերած մարդկանցից ոչ մեկը, չնայած պարետային ռեժիմին, չի ձերբակալվել: Իսկ նրանք շարունակում էին քաղաքում շրջել ոհմակով ու... «չնկատվել»: Մարդկանց հարցերին՝ թե ինչու հայերի հեռախոսահամարներն անջատված են, պարետը պատասխանեց՝ արդեն միացված են: «Ո՛չ, միաբերան գոչեցին հավաքվածները, -կապ չկա»: «Կստուգենք, կվերականգնենք...»: Նոյեմբերի 26-ին կողոպտված ու ջարդված բնակարանների թիվն անցավ 1000-ից: Եվ նույն օրը քաղաքի պարետը պահանջեց, որ եկեղեցում հավաքվող ինքնապաշտպանական նախաձեռնող խումբը ցրվի և հայկական թաղամասի փողոցներում սարքված բարիկադները հանվեն: «Թող գնան իրենց տները», - պահանջեց նա: Ջարդված ապակիներով ու դռներով թալանված տները: «Մենք վերահսկում ենք իրավիճակը», - պարետի հայտարարությանն արդեն դառը քմծիծաղով պատասխանեցին:

Մոսկվայից ժամանեցին ԽՍՀՄ դատախազության յոթանասուն քննիչներ: Տուժած հայերի հետ զրույցներում նրանք ասում էին, որ Սումգայիթի սպանդի բացահայտման ամենամեծ դժվարությունը լրատվության պակասն էր: Լրատվամիջոցների բացարձակ լռությունն իրենց անելանելի վիճակի մասին հուսահատության էր հասցնում հայկական թաղամասում հավաքված հայերին. «Нас удручало абсолютное молчание в средствах массовой информации о нашем

безвыходном положении. Неужели так и будут молчать? Знают ведь, раз послали следователей из Москвы! А следователи утверждали, что «молчанка» по делу Сумгаита сыграла очень плохую роль. Так почему же молчат сейчас? Мы никак не могли понять, Москва ли заинтересована в молчании, и зачем? Или это влияние Азербайджана на Москву так велико? Было абсолютно непонятно, как можно, как возможно вообще умолчать тотальный антиармянский террор в Азербайджане вот уже седьмые сутки»:

Մինչ Կիրովաբադում ամբողջ թափով ընթանում էին հայկական հալածանքներն ու ջարդերը, իսկ ողջ ԽՍՀՄ-ում, այդ թվում՝ Հայաստանում ԶԼՄ-ները խոնարհորեն քննարկում էին վերակառուցման առավելությունները, նոյեմբերի 25ին Բաքվի «Կոմունիստ», իսկ նոյեմբերի 26ին «Бакинский Рабочий» թերթերում լույս տեսավ տնտեսագիտության դոկտոր Ա.Զարգարովի հոդվածը («Злой умысел, чуждые голоса: Армянские националисты и их покровители сеют яд розни между народами»), որում, բացարձակապես շրջանցելով Ադրբեջանի հայկական բնակավայրերում և կոնկրետ Կիրովաբադում հենց այդ պահին ընթացող հայկական ջարդերը և այդ մասին լրատվամիջոցների համերաշխ լրությունը, գրում է. «У меня нет никаких оснований обвинять средства массовой информации и пропаганды Азербайджана в злонамеренном искажении происходящих в Нагорном Карабахе и вокруг него событий...» և, որպես հայ ժողովրդի անհնջելի ամոթալի մեղք, տեղեկացնում Ադրբեջանի հանրությանը, որ «В армянских колониях за рубежом выдвигаются требования об открытии в крупных странах Запада консульств Армянской ССР, создании в республике нациоанальных воинских частей, солдаты которых проходили бы службу на ее территории. Раздаются голоса о необходимости флага «независимой Армении», провозглашенной в 1918 году и исчисления даты образования республики с того же года»:

Հայաստանի անկախացման կոչերի «ծանրագույն մեղքերի» համար հայերին, իհարկե, պետք էր պատժել, և ԽՍՀՄ-ին «նվիրյալ» Կիրովաբադի հրոսակները նոյեմբերի 27-ին, արյունից և անպատժելիությունից արբած, արդեն շրջում էին հայերից դատարկված քաղաքում՝ փորձելով գտնել թաքնվածներին: Հայկական եկեղեցում այդ օրը գրանցեցին 1120րդ կողոպտված և ջարդուփշուր արված բնակարանի հասցե: Մրանք այն բնակարաններն էին, որոնց տերերը հասցրել էին որևէ կերպ «ընկնել» հայկական թաղամաս: Իրական թվի մասին ոչ ոք պատկերացում չուներ: Այդ օրը հայկական թաղամասում կրկին հայտնվեցին փախստական ռուսներ՝ Լարիսա Յուրայի Պրոխորովան, Լիդիյա Ալեքսանդրի Վելիչկոն, Անժելա Մերգելի Գալկինան, Լյուդմիլա Նիկոլայի Գոնկովիևան, ուրիշներ: Նրանք 36978 ռազմական մասի ավիաարհեստանոցի աշխատակիցներն էին: Պատմեցին, որ հիմա արդեն ցույցերը տեղափոխվել են գործարաններ, պահանջում են «Հայեր և ռուսներ, դուրս գործարանից»: Հայկական եկեղեցուն կից հիվանդանոց տեղափոխեցին ծեծված Եվգենի Տիխոնի

Կոլոսովին: Հայերի նվազելով ջարդարարների հարվածի սլաքն ուղղվել էր ռուսներին: Լուրեր տարածվեցին, որ իր սաղիզմով հատկապես աչքի ընկնող Ջիգան Ալիին՝ Ալի Հուսեյնովին զինվորականները բռնել են և հանձնել ոստիկանությանը: Հայերը համոզված էին, որ թեկուզ ձևի համար աղբբեջանական ոստիկանությունը հետաքննություն կսկսի նրա դեմ, բայց... մեկ ժամ էին պահել ոստիկանությունում, մեկ ժամից նա կրկին գլխավորում էր ջարդարարների խումբը:

Քաղաքի պարետ Պոլեխին փոխարինել էր Վ.Ս.Օմելչենկոն: Եկեղեցու հայերը խնդրեցին իրենց օգնել սննդով ու դեղորայքով, բայց նա պատասխանեց, որ դա իրենց պարտականությունների մեջ չի մտնում: Փոխարենը սպառնաց, որ եկեղեցում հայերի կուտակումը պարետային ռեժիմի խախտում է և առաջարկեց ցրվել: Ու՛ր ցրվել: «Ամսի 22-ից մի շաբաթ անցել էր, եղ Կիրովաբադի կամենդանտը, Օմելչենկո էր ազգանունը, եկավ հայոց մաս ու միկրաֆոնով ասեց՝ «Ժողովո՛ւրդ, դուք պետք է թողնեք քաղաքը, հարկավոր է ծերերին և երեխաներին հանել քաղաքից, որովհետև Ադդամի կողմից գալիս է 50 հազարանոց բանակ, մենք չենք կարող դրանց դեմն առնել»¹: Իրականում դա նաև իշխանությունների բարձրաձայնած առաջին կիսապաշտոնական առաջարկն էր՝ հեռանալ Կիրովաբադից: «Ադդամի կողմից 50 հազարանոց բանակի» գրոհի մասին հայտարարությունը վախեցնելու նպատակ ունեցող սուտ էր, իհարկե, բայց քաղաքային իշխանությունները քառասուն հազար հայերին անաղմուկ հեռացնելու ծրագրի իրականացումից արդեն հուսահատվել էին և, չհամարձակվելով գնալ հայկական թաղամաս, զինվորական պարետի համագործակցությամբ սպառնում էին: Մարդկանց մեջ, այնուամենայնիվ, խուճապ սկսվեց, ամեն կերպ փորձում էին փախչելու ելքեր գտնել: Նրանց առաջարկվեց ինքնաթիռներով անվճար տեղափոխություն: Միայն թե պետք էր ստորագրել, որ իրենք կամավոր են գնում և քաղաքային իշխանությունների տնօրինությանն են թողնում իրենց բնակարանները: Ոմանք այդպես էլ արեցին: Սկսվեցին թոհչքները: Առաջին ինքնաթիռներով ուղարկվեցին երեխաներ և երիտասարդ աղջիկներ: Օրական թոչում էր մոտ 1.000 մարդ: Բայց ինքնապաշտպանական «նախաձեռնող խումբը» նոյեմբերի 30ին վճռականորեն առարկեց իշխանությունների այդ առաջարկությանը՝ պահանջելով քննչական կոմիտեի միջոցով կազմել թալանված գույքի և կողոպտված բնակարանների գույքագրում, գործեր հարուցել, խնայորամարկդերից հայերին վերադարձնել նրանց գումարները, վերականգնել գողացած կամ ոչնչացված փաստաթղթերը, աշխատանքային գրքույկները, չստացված աշխատավարձերը: Նոյեմբերի 30-ին հայկական եկեղեցի հասավ Ալեքսանդր Տարատով անունով մի մարդ, խնդրեց իրեն ելույթի հնարավորություն տալ. «Братья! Сестры! Отцы! Матери! Я сам

¹ Ծատուրյան Սեդայի հետ 09.07.2006 ՀՀ Գյումրի քաղաքի «Մուշ -2», քուեջներ թաղամասում գրուցել է Թ. Վարդանյանը:

русский, моя жена армянка, я прожил с ней 12 лет, у нас четверо детей. Я прошу вас, поймите меня правильно, мою квартиру разграбили, теперь местные власти пришли ко мне и говорят, что я должен, как русский, написать заявление, что моя квартира была разграблена не азербайджанцами, а армянами...»: Նույն օրը եկեղեցում հավաքվածներին մի հայ կին պատմեց իր տեսածը. «Զգույշ եղեք: Մեր բակում մի քանի աղբբեջանցիների բնակարաններից որոշ գույք էին հանել, թափել բակում, իսկ գույքի տերերը իրենց գույքի մոտ կանգնած կամերաների առաջ պատմում էին, թե ինչպես են հայերն իրենց թալանել»: Ինչպե՞ս զգույշ լինել այդ իրավիճակում, երբ հայերի համար իրենց կորուստներից ավելի թանկ էին դարձել անհասանելի ժուռնալիստները, իսկ քաղաքային իշխանությունները անարգել նախապատրաստում էին «կիրովաբաղյան ջարդերի» իրենց տարբերակը:

«Ինքնապաշտպանական խմբի» վճռականությունը ազդեց և դեկտեմբերի մեկից դադարեցին հայերից պահանջել կամավորաբար հրաժարվել իրենց բնակարաններից, միաժամանակ դադարեցին անվճար թոփչքները: Փոխարենը հաջորդ օրն առաջարկվեց, որ Հայաստան ուղարկվեն ինքնաշեն հիվանդանոցներում գտնվող տուժածները: «Նախաձեռնող խումբը» ծանր ընտրության առաջ հայտնվեց: Մի կողմից իբրև թե քննություն է ընթանում, իսկ ծեծված-ջարդված մարդկանց դեռևս չեն հարցաքննել: Պարզ էր, որ մոսկովյան քննիչներին և քննությանը ցանկալի է անմիջական ֆիզիկական զոհերի հետ գործ չունենալ: Չկան տուժողներ, չկան զոհեր: Մյուս կողմից վերջանում է դեղորայքը, իսկ հիվանդանոցային պարզունակ հնարավորությունները բավարար չեն հիվանդների համար: Դեկտեմբերի երեքին, սակայն, անվճար թոփչքները վերջնականապես դադարեցին: Հասկանալով, որ խուճապահար մարդիկ պատրաստ են ամեն գին վճարելու՝ այդ դժոխքից ազատվելու համար, մեկնելու ցանկություն ունեցողներին զինվորականների ուղեկցությամբ ավտոբուսներով տանում էին օդակայան, եռակի թանկ տոմսեր վաճառում և ինքնաթիռ նստելուց առաջ պահանջում ստորագրել, որ իրենց ոչ ոք չի նեղացրել, չի բռնացել իրենց կամքին, իրենք կամավոր մեկնում են հայրենիք՝ Հայաստան, և որևէ պահանջ իշխանություններից չունեն: Չստորագրողներին ետ էին վերադարձնում: Մեկնողների թիվն անմիջապես նվազեց. թալանված ու զինվորականների օգնությամբ փողոցներից փախած մարդկանց մոտ փող չկար: Դեկտեմբերի վեցին սպառվում են նաև դեղորայքը և ուտելիքը: Դժվարությամբ հաջողվեց պարետին համոզել մեքենա և ուղեկցորդ տրամադրել՝ Գետաշեն գյուղից ուտելիք բերելու նպատակով:

Տեսնելով, որ մեկնող հայերի թիվը նվազում է և ինքնապաշտպանական խումբը համառորեն պնդում է վնասի գույքագրման և հայերի այլ պահանջները կատարելու մասին, բախվելով հայերի կոլեկտիվ կամքին՝ անպայման ԽՍՀՄ քննչական մարմիններին տրամադրել բռնությունների մասին տեղեկությունները, քաղաքային իշխանությունները փոխեցին տակտիկան:



Նրանք սկսեցին համոզել փախստականներին՝ աշխատանքի վերադառնալ: Իսկ դեկտեմբերի յոթին բոլորը լսեցին Հայաստանում տեղի ունեցած զարհուրելի երկրաշարժի բոթը: Նույն պահին զինվորական պարետը երկու մեքենա էր ուղարկել հայկական թաղամաս՝ «պարետային ռեժիմի» կարգը հնարավոր խախտողներին ձերբակալելու: Երկրաշարժի բոթը ավելի, քան որևէ սպառնալիք՝ կոտորեց ինքնապաշտպանվողների կամքը:

Երկրաշարժից հետո քաղաքային իշխանություններին պարզ դարձավ, որ անհնար է այդ պայմաններում, երբ ողջ աշխարհի ուշադրությունը Հայաստանի վրա է, Կիրովաբադի քառասուն հազարանոց հայ բնակչությանը միանգամից քշել ավերված Հայաստան: Դեկտեմբերի տասին Մոսկվայից ժամանած քննչական կոմիտեն տեղափոխվեց քաղաքի ադրբեջանական մաս: Պարզ էր, որ հայերից ոչ մեկը չէր գնա այնտեղ ցուցմունք կամ վկայություն տալու: Քննությունը տապալված էր:

Դեկտեմբերի 13-ին հայերից առաջին համարձակները սկսեցին դուրս գալ աշխատանքի: Դեկտեմբերի 14-ին եկեղեցու բակում կայացավ վերջին հավաքը. «նախաձեռնող խումբը» հաշվետու ելույթ ունեցավ հավաքվածների առաջ և առաջարկեց այսուհետ անհատական լուծումներ փնտրել բնակարանները փոխանակելու կամ տեղափոխվելու հարցերում, և պատրաստականություն հայտնեց դժվարին իրավիճակներում օգնության հասնել:

Կիրովաբադի չճարագրավորված ինքնապաշտպանությունը մեծ հաշվով խաղաց անսովոր և նույնքան չճարագրավորված դեր. այն կտրուկ փոխեց Ադրբեջանից հայերի տեղահանության տրամաբանությունը: Մեկ այլ հոդվածով կանդրադառնանք 1989-ի զարագացումներին: Կիրովաբադի ինքնապաշտպանության գործընթացի փաստաթղթերին կարելի է ծանոթանալ САМООБОРОНА АРМЯН КИРОВАБАДА В 1988–1989 гг. ГЛАЗАМИ ОЧЕВИДИЦЕВ (25-летию самообороны армян Кировабада посвящается), Составители: Грануш Харатян, Гриша Оганезов, ЕРЕВАН, 2014:

Ամփոփում

1988-1990թթ. Խորհրդային Ադրբեջանից հայերի արտամղման և տեղահանության գործընթացը տեղի է ունեցել իշխանությունների և ադրբեջանական հասարակության ստորին սոցիալական շերտերի համաձայնեցված գործողություններով ու ԽՍՀՄ բարձրագույն իշխանությունների թողտվությամբ, ինֆորմացիոն շրջափակման պայմաններում: Հոդվածում քննարկվում են Նախիջևանի Զնաբերդ, Դաշքեսանի Բանանց ու Կուշչի, Իսմայիլիի շրջանի Քյալբանդ և Ղալազա, Շաքի և Կիրովաբադ քաղաքների հայ բնակչությանը բռնի ուժով տեղահանելու դեպքերը և Կիրովաբադ քաղաքի հայերի ինքնապաշտպանությունը 1988թ. նոյեմբերի 21-ից մինչև դեկտեմբերի 14-ը, ինչը ազդել է հայերի տեղահանության իշխանությունների տակտիկայի վրա:



Депортация армян из Азербайджана. Уроки самообороны армян Кировабада в 1988г.

Грануш Харатян

Резюме

Ключевые слова - Знаберд, Кировабад, депортация армян, самооборона, информационная блокада, комендантский режим, Азербайджан

Процесс депортации армян в 1988-1990гг. из Советского Азербайджана происходил при совместных согласованных действиях властей и социально низких слоев азербайджанского общества, с попустительства высших структур власти СССР, в условиях информационной блокады. В статье рассматриваются случаи силовой депортации армян из сел Знаберд, Нахичевана, Бананц и Кушчи Дашкесанского, Кйалбанд и Галага Исмаилинского районов, городов Шаки и Кировабада, организация самообороны армян Кировабада от 21 ноября по 14 декабря, которое повлияло на тактику властей по депортации армян и изменило ход событий.

Displacement of Armenians from Azerbaijan.

Lessons from the Self-Defence of Kirovabad Armenians in 1988

Hranush Kharatyan

Summary

Key words - Znaberd, Kirovabad, displacement of Armenians, self-defense, informational blockade, curfew, Azerbaijan.

The process of expelling and dislocation of Armenians from the Soviet Azerbaijan during 1988-1990 was carried out through mutually agreed actions of the authorities and lower social classes of Azerbaijani society, with a permission from the highest USSR authorities and in an informational blockade. The article examines the cases of forcible displacement of Armenians from Znaberd village of Nakhijevan, Banants and Kushchi villages of Dashkesan, Qyalband and Ghalaga villages of Ismaili region, and the cities of Shaki and Kirovabad. It also reviews the organization of self-defense of Kirovabad Armenians from November 21 to December 14 of 1988, which had an impact on the tactics of the authorities with respect to the displacement of Armenians.

ԱՐՄԵՆՈՑԻԴԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ.
ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՄԵՐԸ, ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ
ՀԱԶՈՂՎԱԾ ՓՈՐՁԸ

Մհեր Հարությունյան

Դոցենտ («Կաճառ» գիտական կենտրոն, ԼՂՀ)

***Բանալի բառեր.** Եղեռն, պանթուրքիզմ, հանցագործություն, ուրացում, հատուցում, պատմական դասեր, հայրենատիրություն, պայքար, պատմական հիշողություն, պետականություն, բանակ, միացյալ Հայաստան*

Արդեն հարյուր տարի է, ինչ պահանջատեր հայ ժողովուրդն անդադրում հետամտում է պատմական արդարության վերականգնմանը: Երկարատև ու դժվարին պայքարը տվել է իր առաջին արդյունքը. բազմաթիվ երկրներ ճանաչել ու դատապարտել են քսաներորդ դարի առաջին ցեղասպանությունը, որին միայն 1915-ին զոհ է գնացել մեկ և կես միլիոն հայ: Իսկ 1895-1923 թվականների շարունակական ջարդերի ու էթնիկական գտումների անմեղ զոհերի թիվը մի քանի միլիոն է...

Բազմաթիվ երկրների առաջադեմ հասարակություններն այդ մեծ ոճիրը իրավամբ համարում են ոչ միայն հայ ժողովրդի, այլև համայն մարդկության դեմ գործված հանցագործություն, որը վաղեմության ժամկետ չունի: Մեր ժողովուրդը համոզված է, որ մի օր կգա հատուցման պահը և թուրք ոճրագործների նյութերեբրը կկայանա... Սակայն, դեռ երկար ճանապարհի ունենք անցնելու, ազգովի՝ Եվ այդ երկար ճանապարհին մեզ անհրաժեշտ է լինելու հիշել անցյալի դասերը: Չէ՞ որ անցյալը սոցիալական կյանքի կուտակած փորձի մարմնացումն է: Մեր ժողովրդի՝ դարերի ընթացքում կուտակած փորձի ընդհանրացումն ու վերափմաստավորումը երիցս անհրաժեշտ են մանավանդ ցեղասպանության 100-րդ տարելիցին¹: Միայն այդ ճանապարհով կարելի է

¹ Թեմային մեր կողմից անդրադարձներ եղել են նաև նախկինում. տես Մեծ եղեռն-80.- «Մարտիկ», 21-27.04. 1995 թ., հմ. 16, էջ 1, Ի՞նչ է մեզ հուշում Հայոց մեծ եղեռնը- «Մարտիկ», 19-24 ապրիլ, 2004 թ., հմ. 17(571), էջ 4, Արմենոցիդի քաղաքականության ուրացումը և ապստամբության առասպելը (Շուշիի մարտյան ողբերգության 85-րդ տարելիցի առթիվ), «Ազատ Արցախ», 24 մարտի 2005, հմ. 34(1703), նույնը՝ «Մարտիկ», 19 – 26 մարտ 2005, թիվ 11(618), էջ 4 և գիտական տարբերակը՝ «Լրատու» (Գիտական հոդվածների ժողովածու), Ստ., 2008, հմ. 1, էջ 71-78, Отступление от политики арменоцида и миф о восстании (К годовщине мартовской трагедии в Шуши). «Азат Арцах», 26 марта 2005, но. 20(489), стр. 4, Վերստին Հայոց մեծ եղեռնի քաղաքական դասերի մասին, Հայաստան-Արցախ. պատմության և արդիականության զուգահեռներում (հոդվածների ժողովածու), գիրք առաջին, Ստ., «Դիզակ պյուս», 2009, էջ 40-43, Շուշի-1920 թ.՝ պետականորեն կազմակերպված ահաբեկչության ու էթնիկական գտումների հերթական զոհը, «ԼՂՀ դատական իշխանություն», հմ. 1(5), 2012, էջ 23-30, Մեծ եղեռնի պատմաքաղաքական մի



գտնել արդիականության ամենահրատապ հարցերի պատասխանները: Այս առումով՝ ցեղասպանության պատմությունը ոչ միայն մեր ժողովրդի հիշողությունն է, նրա կենսագրության մռայլ էջը, այլ նաև ներկայի վրա ներագոյո՞ղ և ապագան ուրվանշող հզոր գործոն:

Այդ ողբերգական իրադարձության վերաիմաստավորումը կարևոր է հատկապես պատմական դասերի վերհանման առումով: Անտեսելով դրանք, մենք կարող ենք դատապարտվել ցեղասպանության ողբերգությունը վերստին ապրելուն: Հենց այս մտահոգությամբ էլ Արցախի հայ ազգաբնակչությունը մայրաքաղաք Ստեփանակերտում և հանրապետության այլ բնակավայրերում հերթական տարելիցի առթիվ իր հարգանքի տուրքն է մատուցում Հայոց մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակին և վերստին փաստում ցեղասպանության հետևանքների վերացման ու հանուն պահանջատիրության անդադար պայքարելու իր վճռականությունը:

Ներկա սերունդը գիտակցում է, որ հզոր և բարգավաճ պետականության կերտումը Հայրենասիրության առաջին և կարևոր փուլն է, Հայոց ցեղասպանության հետևանքները հաղթահարելու՝ մեր ժողովրդի բարոյական պարտքի կատարման, Եղեռնի միջազգային ճանաչման ու դատապարտման, ինչպես նաև Թուրքիային պատասխանատվության ենթարկելու երաշխիքը: Ակնհայտ է, որ առանց ազգային պետականության հնարավոր չէ կանխել ցեղասպանության վտանգը: Պետականության կորստի աղետալի հետևանքների գիտակցումը մեզ պետք է աչալուրջ պահի, անպայման գերակայի քաղաքական հովերին:

Թվում է, թե հասկանում ենք, որ դարեր շարունակ մեր ժողովրդի ձախողումների հիմնական պատճառը նրա միասնականության, համախմբվածության խաթարումն է եղել: Նաև գիտակցում ենք, որ պատմականորեն հատվածական հոգեբանություն ձեռք բերած մեր ժողովրդի պարագայում բազմակուսակցականությունը և այլախոհությունը, մանավանդ եթե դրանք խարսխված են անհանդուրժողականության ու հիվանդագին մրցակցության վրա, աղետալի հետևանքներ կարող են ունենալ: Բայց դեռևս չենք հանգել այն համոզմանը, որ համաժողովրդական համախմբումը պետք է կատարվի ազգային մեկ գաղափարի կամ գաղափարախոսության շուրջ, որի առանցքը կարող է լինել ամուր պետությունը, Հայոց մեծ եղեռնի հետևանքների վերացումը կամ Հայրենասիրությունը: Մեր հայրենիքին վերատիրելու դատապարտվածությունը հրամայաբար պահանջում է լինել մշտական պատրաստականության վիճակում, միահամուռ՝ մեր ազգային նպատակներին հասնելու գործում: Մանավանդ, որ պատմությունն էլ համառորեն ապացուցում է, որ ոչ թե օրհասական պահին պետք է համախմբվել՝ վերահաս ողբերգությանը դիմագրավելու, այլ՝ նախօրոք, այն կանխարգելելու, նրա

իրականացմանը խոչընդոտելու համար¹: Իսկ որպեսզի դա հաջողությամբ պսակվի, պետք է նաև կանխատեսել կարողանալ, ինչի համար էլ հենց կոչված են քաղաքական գործիչները: Քանիցս պատմությունը մեզ ուսուցանել է, իսկ Հայոց մեծ եղեռնի քաղաքական դասը՝ կրկին հուշել, որ միշտ էլ աղետալի հետևանքներ են ունենում օտար տերությունների ռդորմածության վրա հույս դնելը, նրանց միջամտության վրա հաշվարկներ կառուցելը: Դասագրքային ճշմարտություն է այն, որ Հայկական հարցը միջազգային դիվանագիտության համար եղել է Թուրքիայի նկատմամբ ճնշում գործադրելու, արտաքին-քաղաքական հարցեր լուծելու միջոց:

Հայոց մեծ եղեռնի քաղաքական գլխավոր դասերից մեկը, թերևս, այն է, որ մեր պահանջատիրության համար պետք է ստեղծենք իրական հիմքեր, այսինքն՝ այն պետք է արտահայտվի մեր ժողովրդի ու պետության հնարավորությունների չափով, բխի մեր ներուժից և ուղիղ համեմատական լինի մեր պատրաստականությանը: Ցավոք, հաճախ մեր պահանջատիրությունը ուտոպիական է եղել, կառուցված օտարի հնարավոր միջամտության (աջակցության) և սխալ հաշվարկների վրա: Այսօր էլ այն մտայնությունն է, թե միջազգային հանրությունը և տերությունները, եթե ճանաչեն Հայոց ցեղասպանության փաստը, մեր պահանջատիրությունը կստանա նյութական-առարկայական հիմք: Բայց դա, ինչպես վկայում է մեր անցյալը, ինքնախաբեություն է, պատրանք, ցանկալին իրականության տեղ դնելու մոլորություն: Ասվածն ամեննին չպետք է հասկանալ որպես Հայոց մեծ եղեռնի միջազգային ճանաչմանը հասնելու համար պայքարի հանդեպ թերահավատության արտահայտություն, մանավանդ, որ այդ պայքարը, փաստորեն, Ադրբեջան-ԼՂՀ հակամարտությունում Թուրքիայի կողմնակալ մոտեցումներին հակադրելու միջոցներից մեկն է դարձել: Մակայն, հետամտելով այդ քաղաքականությանը, հարկ է զուգահեռաբար և, իհարկե, նաև հնարավորինս՝ առաջանցիկ կերպով մեծացնել Հայոց պետականության ներուժն ու հնարավորությունները, որպեսզի հարկ եղած դեպքում, մեզնից ազդեցիկ ուժ և վճռորոշ գործոն ներկայացնելով, կարողանանք այլևս թույլ չտալ մեր խնդիրը տերությունների միջև հարաբերություններ պարզելու միջոց (գործիք) դարձնելու արատավոր պրակտիկայի նոր դրսևորումներ:

Անհուսալի ու երիցս արդարացված չէ անվերապահորեն որևէ երկրի ռազմական օժանդակությանն ապավինելը, որովհետև օտարը չի կարող պաշտպանել մեր հայրենիքը այնպես, ինչպես՝ մենք ինքներս: Հետևաբար՝ մենք զօր ու զիշեր պետք է նախապատրաստվենք սեփական ուժերով մեր պետականությունը պաշտպանելուն և միշտ աչքի առաջ ունենանք հենց այդ հեռանկարը:

¹ *Հարությունյան Մ. Ա.*, Միասնության գերագույն արտահայտությունը՝ ինքնիշխան ու ազգային պետությունն է,- տես Հայաստան-Արցախ. պատմության և արդիականության զուգահեռներում (հոդվածների ժողովածու), գիրք առաջին, էջ 45-46:

Կասկած չի հարուցում այն, որ վերահաս ողբերգությանը կարելի է դիմագրավել երկարատև ու համառ պայքարի ոգու, հավատի ու ինքնավստահության միջոցով: Ցավոք, այդ որակներն ազգի մեջ դաստիարակելու գերխնդիրը լուծել չկարողացան ո՛չ հայ քաղաքական կուսակցություններն ու հոսանքները, ո՛չ հայ եկեղեցին ու ո՛չ էլ ազգային կրթական համակարգը: Դա էր, թերևս, հիմնական պատճառը, որ ժողովրդի դիմադրական շարժումը՝ ինքնապաշտպանությունը, տարերային ու տեղաբնույթ էր, ինչն, անշուշտ, բավական չէր այնպիսի մեծ խնդիրների լուծման համար, ինչպիսին Հայրենիքի պաշտպանությունն էր ու ժողովրդի փրկությունը կոտորածներից:

Դժվար չէ նկատել, որ ազատագրական պայքարի կամ համընդհանուր զինված ինքնապաշտպանության մարտավարությունը, ըստ էության ու հանգամանորեն չմշակվեց, ժողովուրդը դրան հետևողականորեն չնախապատրաստվեց, ինչը հաջողության գրավական կարող էր լինել: Սրանից ելնելով՝ գոնե այսօր մենք պարտավոր ենք հստակեցնել մեր նպատակներն ու պահանջները Թուրքիայից, բարոյական հատուցում ակնկալելու մակարդակից դրանք տեղափոխելով միջազգային-իրավական հարթություն:

Արմենոցիդի հետևողական քաղաքականության իրողությունը մեզ հուշում է, որ չի կարելի եվրոպական միջավայրի քաղաքական գործընթացները կուրորեն ընդօրինակել ու փորձել դրանք կիրառել Ասիայում, մանավանդ՝ նրա ամենահետամնաց ու վայրենի մասում Թուրքիայում: Այսինքն՝ մշտապես պետք է հաշվի առնել այն փաստը, որ Եվրոպան և Թուրքիան տարբեր միջավայրեր են՝ պատմական, սոցիալ-տնտեսական, ազգային և կրոնական անհամատեղելիությամբ: Ուստի, կարելի է վստահաբար պնդել, որ Թուրքիան չի հետևի Գերմանիայի օրինակին... Միանշանակ սնանկ են այն հույսերը, թե երբևէ Թուրքիան իբր այնքան քաղաքակիրթ կդառնա, որ ինքնակամ կճանաչի Հայոց ցեղասպանությունը (ի դեպ, այն ուրանալը և ժխտելը ևս հանցակցություն է): Զղջումը կարող է լինել սոսկ այն դեպքում, երբ Թուրքիան ծնկի բերվի մեր ռազմաքաղաքական, գիտատեխնիկական ու տնտեսական հզորության առաջ: Այսօր դա պետք է լինի մեր գերակա, համազգային խնդիրը: Այլ կերպ, քան զավեշտ չենք կարող որակել այն արհեստական վիճակը, երբ միջազգային որոշ կազմակերպություններ և նույնիսկ հայ քաղաքական գործիչներից ոմանք, ապարդյուն ջանում են հավատացնել, թե հնարավոր է բարիդրացիական հարաբերություններ ունենալ Թուրքիայի և Ադրբեջանի հետ, մինչդեռ Հայոց մեծ եղեռնը, դրա շարունակությունը մինչև 1920-ական թվականները, այդ թվում՝ նաև Արևելյան Անդրկովկասում, ընդհուպ մինչև 20-րդ հարյուրամյակի 80-90-ական թվականները, անդադար ահազանգում են ճիշտ հակառակի մասին: Պետք է հիշել, որ Թուրքիան և նրա կողմից ուրիշ ժողովուրդների տարածքներում ստեղծված Ադրբեջանը կմնան հայրենազրկված ազգերի դիսերիմ թշնամիները, քանի դեռ չեն ազատել նրանց պատմական հայրենիքը: Անկախ նրանից, թե ինչպիսի վարչակարգ է Թուրքիայում, նրա հետ համագործակցությունը լի է կանխատեսելի և անկանխատեսելի վտանգներով:



Հայաստանի ու Թուրքիայի հակամարտության հիմնական պատճառը պանթուրքիզմն է, որը գնալով ավելի սքողված, բայց և ահագնացող վտանգի բնույթ է ստանում:

Վերջին տարիներին հայագիտությունը զգալի ուշադրություն է դարձնում ցեղասպանության պատմության և միջազգային դատապարտման հասնելու հիմնախնդիրներին: Դա բխում է նաև ցեղասպանության մասին խոր գիտելիքներ և ճիշտ պատկերացումներ ունենալու անհրաժեշտությունից, ինչը թույլ կտա հենց վաղ դրսևորումներից ճանաչել այն և կանխել ողբերգությունը: Փաստը, որ 1915-ը շարունակություն ունեցավ ու կրկնվեց նաև Հայկական լեռնաշխարհի այլ մասերում և անգամ փորձարկվեց 1988-1992 թվականներին, վկայում է մեր անցյալը վատ գիտենալու և, ցավոք, պատմության դասերն անտեսելու մասին...

Մինչդեռ հարկ է մշտապես արթուն պահել պատմական հիշողությունը, նպատակային քարոզչությամբ, տեղեկատվությամբ ժողովրդին խանդավառել մայր հայրենիքին վերատիրելու գաղափարով, տոգորել նրան սեփական երկիրը սիրելու, հողին տեր կանգնելու, Հայրենիքի պաշտամունքի զգացմունքներով՝ արմատախիլ անելով օտարամոլությունը, հատկապես դժվար պահերին տաքուկ անկյուններ չվելու հակումը: Անցյալից դասեր քաղելը մշտական բնույթ պետք է կրի, ինչը թույլ կտա հրատապ սրբազրույթներ մտցնել հետագա զարգացման մարտավարության և ռազմավարության մեջ: Պարտավոր ենք մշտապես հիշել, որ թիկունքից ևս մի հարված հասցնելու համար մեր թուլացմանը սպասող, թշնամի հարևաններ ունենք:

Տարածված մտայնություն է Հայոց ցեղասպանությունը հրեական ողջակիզման հետ համեմատելը: Եթե երևույթի նմանության մասին կասկած լինել չի կարող, ապա ցեղասպանությունից դասեր առնելու առումով զգալիորեն զիջում ենք հրեաներին: Այսօր Իսրայելը հզոր երկիր է բազմամիլիոնանոց արաբական աշխարհի կենտրոնում, տիրապետում է ազգային անվտանգության ապահովման գլխավոր միջոցի՝ միջուկային զենքի, և ոչ երկրորդական ազդեցություն ունի համաշխարհային գործընթացների վրա: Դա արդեն ցեղասպանության հետևանքները վերացնելու լուրջ հայտ է: Անկասկած, հրեաների նպատակասլաց գործելու օրինակը պետք է հրապուրի մեզ՝ որպես ազգ ու պետություն հզոր լինելու մեր ձգտումներում: Մնում է հուսալ, որ Հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակի ոգեկոչումը, անցյալի դասերի սերտումը ազգային համախմբման, հավատի ու վստահության խթան կդառնան, հզոր ու բարգավաճ պետություն կերտելու ճանապարհով մեր ազգային անվտանգությունն ու արժանապատվությունը մեր իսկ ոգեղեն կամքի և բազկի միջոցով ապահովելու պատգամ կլինեն:

Ադրբեջանի նախահարձակմանը դիմագրավելու համար հայ ժողովուրդը 1988-1994 թվականներին մղեց իր հայրենական պատերազմը և ոչ միայն պաշտպանեց իր հայրենիքում ապրելու անկապտելի իրավունքը, այլ նաև ազատագրեց թուրք-ադրբեջանական զավթիչների կողմից 1918-1923 թվականների ընթացքում էթնիկական գոտումների, ցեղասպանության ու

պետական ահաբեկչության միջոցով բռնազավթված բուն հայկական մի շարք տարածքներ, որոնք կազմում էին պատմական Հայաստանի մասը... Ներկա և գալիք սերունդներն ուղղակի դատապարտված են վաղ թե ուշ հետ բերելու կամ ազատագրելու մեր պատմական հայրենիքի բոլոր եզերքները... Սա է արմենոցիդի քաղաքականության հետևանքների վերացման միակ ուղին, որը նպատակաուղղված է Հայրենատիրության գերնպատակի հետևողական իրականացմանը...

Թուրքական սվիհների միջոցով ստեղծված Ադրբեջանը, որը 1918 թվականից սկսած Արևելյան Հայաստանում իրականացնում է հայ ազգաբնակչության էթնիկական գտումներ, ցեղասպանություն և հայրենագրկում, որպես Թուրքիայի որդեգրած արմենոցիդի քաղաքականության շարունակություն, նախահարձակման անցնելով և ներխուժելով պատմական Արցախի տարածքները, սկսեց թուրքերին յուրահատուկ դաժանությամբ բռնատեղահանել ու կոտորել բնիկ հայ ազգաբնակչությանը: Պաշտպանական ու ազատագրական բազմաթիվ մարտերով Արցախի հայ ազգաբնակչությունը, համայն հայության աջակցությամբ, խափանեց Ադրբեջանի գավթողական նկրտումները, տապալեց գենքի ուժով Արցախյան հիմնահարցը լուծելու Բաքվի պլանները, պաշտպանեց հող հայրենին և վերընձյուղված Հայոց պետականությունը, այնուհետև, ռազմական ծանր պարտությունների մատնելով նախահարձակ հակառակորդի զինված ուժերին, անվտանգության հուսալի գոտի ստեղծեց ԼՂՀ-ի շուրջ, լեցրեց ազգաբնակչության համար մահացու վտանգ ներկայացնող բազմաթիվ թշնամական կրակակետեր, ազատագրեց պատմական հայրենիքի որոշ տարածքներ: Մարտնչող ժողովուրդը հարկադրեց Ադրբեջանին, որը Թուրքիայի հրահրմամբ շարունակ համառում ու խուսափում էր ռազմական գործողությունների անհապաղ դադարեցումից, ի վերջո, վարել բանակցություններ և համաձայնության գալ հրադադարի շուրջ: Հիմնականում այդ հաղթանակների, պատերազմի ընթացքում գծված ու ժամանակի քննությանը դիմացած բնական սահմանների և ԼՂՀ պաշտպանության բանակի մարտունակության շնորհիվ տարածաշրջանում հաստատված հրադադարը պահպանվում է ավելի քան երկու տասնամյակ, ինչը, նախ և առաջ, ուժերի հավասարակշռության արդյունք է: Պաշտպանական ու ազատագրական մարտերի շնորհիվ արցախցին վերահաստատեց իր բնօրրանում ապրելու, ազատ ու անկախ գոյավիճակի իր իրավունքը, ստանձնեց նախնյաց սխալների ու բացթողումների սրբագրման առաքելությունը՝ վերստին իրական նախադրյալներ ստեղծելով ու հույսեր առաջացնելով Միացյալ Հայաստանի վերականգնման համար...

Հավատացած ենք, որ դա վաղ թե ուշ լինելու է, իսկ մինչ այդ մեզ անհրաժեշտ է, նախ և առաջ, ամրապնդել ու պաշտպանել բոլոր ձեռքբերումները, զարգացնել ու հզորացնել Հայոց պետականությունը, ունենալ մարտունակ ու զորեղ բանակ, հայրենասեր, համակողմանիորեն պատրաստակամ միլիոնավոր սերունդներ, մրցունակ ու առաջացիկ տնտեսություն, ինչպես նաև վերաբնակեցնել ու հայրենիք դարձնել ազատագրված բոլոր տարածքները...

Ամփոփում

Արդեն հարյուր տարի է, ինչ պահանջատեր հայ ժողովուրդն անդադրում հետամտում է պատմական արդարության վերականգնմանը: Մեր ժողովրդի՝ դարերի ընթացքում կուտակած փորձի ընդհանրացումն ու վերափմաստավորումը անհրաժեշտ են մանավանդ ցեղասպանության 100-րդ տարելիցին: Միայն այդ ճանապարհով կարելի է գտնել արդիականության ամենահրատապ հարցերի պատասխանները: Այս առումով ցեղասպանության պատմությունը ոչ միայն մեր ժողովրդի հիշողությունն է, այլ նաև ներկայի վրա ներազդող և ապագան ուրվանշող հզոր գործոն:

Ադրբեջանը, որը 1918 թվականից սկսած Արևելյան Հայաստանում իրականացնում է հայ ազգաբնակչության էթնիկական գտումներ, ցեղասպանություն և հայրենագրկում, Թուրքիայի որդեգրած արմենոցիդի քաղաքականության շարունակողն է: Ադրբեջանի նախահարձակմանը դիմագրավելու համար հայ ժողովուրդը պաշտպանեց իր հայրենիքում ապրելու իրավունքը, նաև ազատագրեց 1918-1923 թվականների ընթացքում, էթնիկական գտումների, ցեղասպանության ու պետական ահաբեկչության միջոցներով բռնազավթված բուն հայկական մի շարք տարածքներ, որոնք կազմում էին պատմական Հայաստանի մասը: Սա է արմենոցիդի քաղաքականության հետևանքների վերացման միակ ուղին, որը նպատակաուղղված է Հայրենատիրության գերնպատակի հետևողական իրականացմանը...

Императив – ликвидация арменогена: политико-исторические уроки, удавшийся опыт Арцахской войны

Мгер Арутюнян

Резюме

***Ключевые слова:** Геноцид, пантюркизм, преступление, отречение, возмещение, уроки истории, борьба, историческая память, государственность, армия, единая Армения.*

На протяжении ста лет армянский народ требует восстановления исторической справедливости. Обобщение и переосмысление многовекового опыта очень важно для нашего народа, тем более сейчас, накануне 100-летия Геноцида армянского народа. Только таким путем можно найти ответы на актуальные вопросы современности. Геноцид - не только историческая память нашего народа, но и фактор, влияющий на настоящее и определяющий ее будущее.

Продолжая проводимую Турцией политику арменогена, Азербайджан с 1918 года, осуществляет в Восточной Армении политику этнических чисток и геноцида армянского населения. Отразив военную агрессию Азербайджана, армянский народ не только защитил неотъемлемое право жить на родной земле, но и освободил часть исконно армянских земель, захваченных азербайджано-турецкими агрессорами в 1918-1920 годах. И это единственно правильный путь, направленный на ликвидацию последствий политики арменогена и достижение сверхцели – стать хозяевами своей страны.

Imperative: The Urgency of the Liquidation of the Armenocide (Armenian Genocide): Political-Historical Lessons, the Artsakh War Useful Experience

Mher Harutyunyan

Summary

Key words: *Genocide, Pan-Turkism, crime, disavowal, compensation, lessons of history, struggle, historical memory, statehood, army, united Armenia.*

The Armenian people have been demanding to restore the historical justice for a hundred years. On the eve of the Armenian Genocide 100th centenary it has become particularly important for our people to sum up the centuries-long experience and to ponder it over.

Only that way we can find the solutions for the most actual issues of present day. The Armenian Genocide is not only the historical memory of our nation but it is also a mighty factor which affects our present and determines our future.

Being the successor of the Armenocide policy of Turkey, Azerbaijan has been carrying out the programs of the ethnical cleansing and genocide of the Armenian population since 1918.

Resisting the military aggression of Azerbaijan the Armenian people not only defended their ultimate right to live on their native land but also liberated part of the historical Armenian territories which were occupied by Azeri-Turkish forces from 1918-1920.

Only defense and resistance can make it possible to liquidate the consequences of the Armenocide and to reach the all-Armenian supreme goal-that is to become the master of our own land, our motherland.

**ՊԱՆԹՈՒՐՔԻԶՄԸ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴԲԵԶԱՆԻ ՆՎԱՃՈՂԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴԲԵԶԱՆԱԿԱՆ
ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ**

Արմինե Առստամյան

պ.գ.թ, դոցենտ

ԱրՊՀ

Բանալի բառեր՝ պանթուրքիզմ, ցեղասպանություն, նվաճողական քաղաքականություն, հայկական տարածքներ, պատմագիտություն:

Պանթուրքիզմը՝ որպես երիտթուրքերի կողմից որդեգրված ծավալապաշտական, ազգայնամոլական գաղափարախոսություն, պատճառ հանդիսացավ 20-րդ դարի սկզբի մեծագույն ողբերգության՝ 1915թ. հայոց ցեղասպանությանը: Պաշտոնապես ընդունելով պանթուրքիզմը՝ երիտթուրքերը նպաստավոր պահի էին սպասում դրա իրականացման համար: Օսմանյան Թուրքիան շատ որոշակի պլաններով մտավ համաշխարհային պատերազմի մեջ՝ ստեղծելու թուրքական մեծ կայսերապետություն՝ Մեծ Թուրանը: Երիտթուրքական արկածախնդիրների ճանապարհին որպես մեծ խոչընդոտ ընկած էր հայ ժողովուրդը: Հիմնականում բնաջնջելով արևմտահայությանը և հայաթափելով Արևմտյան Հայաստանը՝ երիտթուրքական վարչակարգը օրակարգ մտցրեց արևելահայության ոչնչացումը: Օգտվելով այն հանգամանքից, որ ռուսական զորքերը դատարկել էին Կովկասյան ռազմաճակատը, թուրքերը պահը հարմար համարեցին ռուսական զորքերի կողմից Արևմտյան Հայաստանի ազատագրված շրջանները ոչ միայն վերանվանելու, այլև պանթուրքական մոլագար ծրագիրը կենսագործելու համար, այն է՝ բնաջնջել նաև հայ ժողովրդի արևելյան հատվածը, իսպառ վերացնել Թուրքիան՝ Ռուսաստանի կազմում գտնվող թուրքալեզու ժողովուրդներից բաժանող հայկական խոչընդոտը:

«Ադրբեջան» կոչված արհեստածին կազմավորումը բացարձակապես օտար երևույթ էր մերձկասպյան տափաստաններում, և նրա, այսպես կոչված, կայացումը համաթուրքական-համաթուրանական արյունարբու ծրագրով կապված էր տարածքային բռնազավթումների հետ: Պանթուրքիզմը դարձավ ոչ միայն արևմտահայերի ցեղասպանության, արևելահայերի կոտորածների, այլև Արցախի, Զանգեզուրի նկատմամբ Ադրբեջանի նվաճողական քաղաքականության դրդապատճառ:

Ի տարբերություն Ադրբեջանի պետության ստեղծման շարժառիթների, Ադրբեջանի որդեգրած գաղափարախոսության և նվաճողական քաղաքականության՝ Արցախյան շարժման պատմական, քաղաքական, իրավական նախադրյալները բխում են ազգային ինքնության գիտակցությունից և պատմական արդարության պահանջներից: Արցախահայության պայքարը իր պատմական հոգում ազգային անկախության վերականգնման նպատակն էր

հետապնդում: Հայաստան համահայկական ամբողջության մի մասը կազմող Արցախը, 1921թ. հուլիսի 5-ի անօրինական որոշմամբ, կտրվել էր այդ ամբողջությունից և տրվել Ադրբեջանին: Արցախյան շարժումը որպես համահայկական ազգային շարժում միանգամայն արդարացի էր, այն իր մեջ չէր պարունակում ծավալապաշտական ագրեսիվ միտումներ: Շարժմանը խթանող գաղափարախոսությունը միտված էր պատմական արդարությունը վերականգնելուն, իր մեջ բովանդակում էր ազգային ինքնորոշման, ազգային անկախության, իր պատմական տարածքում ազատ ապրելու օրինական դրույթները: Ի տարբերություն թուրք-ադրբեջանական ծավալապաշտական, զավթողական գաղափարախոսությունների, որոնց իրականացման արդյունքը ենթադրում է այլ ազգերի գոյատևման համար լուրջ վտանգ, հայոց ազգային գաղափարախոսությունն, որը սնունդ տվեց արցախյան շարժմանը, ենթադրում էր մեկ կարևոր դրույթ՝ անկախության վերականգնումը, պատմականորեն իրեն պատկանող տարածքում պետականության վերականգնումն ու կերտումը: Ազգային խոր ինքնագիտակցություն՝ սա է հատուկ հայոց ազգային-ազատագրական շարժումներին, այդ թվում և Արցախյան շարժմանը:

1918 թվականը կարելի է համարել առանցքային՝ արցախյան հիմնահարցի ծագման առումով, երբ ռուսական կայսրության փլուզման հետևանքով Անդրկովկաս ներխուժած թուրք-գերմանական ուժերը ստեղծեցին Ադրբեջան պետությունը՝ Հյուսիսային Իրանի համանուն նահանգի անունով՝ նպատակ ունենալով հետագայում ռազմակալման ենթարկել վերջինիս: Ադրբեջանական հանրապետության ստեղծումը 1918թ. արդյունք չէր ազգային ինքնագիտակցության հասունացման, ինչպես փորձում են ներկայացնել պատմության ադրբեջանցի կեղծարարները, այլ արդյունք էր Թուրքիայի հետապնդած ծավալապաշտական և զավթողական գաղափարախոսության՝ ի դեմս պանթուրքիզմի: Թուրքիայում իրագործված հայոց ցեղասպանության շարունակությունը նախատեսված էր իրագործել Անդրկովկասում: Ադրբեջանցի պատմաբան Ա.Բալաևը 1918թ. Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության հռչակումը ներկայացնում է որպես ազգային ինքնագիտակցության հասունացման և ազգային շարժման արդյունք¹: Այս հակագիտական բնորոշումը դժվար չէ հակաճառել նաև այն պատճառով, որ ադրբեջանական ազգային շարժում լինել չէր կարող, նման շարժման առաջացման համար նախ անհրաժեշտ էր ազգ՝ իր կենսական տարածքով ու պատմական անցյալով: Կովկասյան թաթարների էթնիկ հանրությունը գուրկ էր ազգային ինքնագիտակցությունից: Հենց ադրբեջանական պատմաբանի տեսակետներն անհիմն հնչողություն են ձեռք բերում իր իսկ կողմից: Այսպես, մեջբերելով ադրբեջանական ազգային խորհրդի ղեկավար Ռասուլզադեի միտքը՝ Բալաևը համաձայնվում է նրա հետ՝ հակասելով ինքն իրեն: Իսկ միտքն այդ հանգում է

¹ Балаев А., Азербайджанское национальное движение 1917-1918гг., Баку, 1998, с. 5.

հետևյալին. «Եթե որևէ աղբբեջանցու հարցնես, թե ինչ ազգի ես պատկանում, կպատասխանի մուսուլմանական, ինչ լեզվով ես խոսում, դարձյալ կպատասխանի մուսուլմանական, ինչ կրոնի ես պատկանում, դարձյալ՝ մուսուլմանական և ավելացնում, որ, փաստորեն, ինքը՝ աղբբեջանցին, զուրկ է ազգային ինքնագիտակցությունից, հետևաբար և պետականության արմատներից»¹: Հատկանշական է նաև անգլիական դիվանագիտության ներկայացուցիչ գեներալ Թոմսոնի արտահայտությունն Աղբբեջանի հանրապետության ստեղծման կապակցությամբ. «Հանրապետություն, որը ստեղծվել է աղբբեջանական ժողովրդի ընդհանուր կամքի համաձայն, գոյություն չունի, այլ կա ընդամենը թուրքական ինտրիգների արդյունքում ծնված կառավարություն»²: Ցավոք, այս ճշմարտացի գնահատականից անգլիական դիվանագիտությունը շուտով հրաժարվեց՝ հովանավոր կանգնելով նորաստեղծ աղբբեջանական կառավարությանը: Անդրկովկասում հակառուսական միտումներ հետապնդող Անգլիան «նավթի գործոնի» կարևորման շահադիտական կեցվածքով դարձավ արհեստածին աղբբեջանական պետության դաշնակիցը՝ հովանավորելով վերջինիս նվաճողական նկրտումները:

Ստեղծված լինելով թուրքական նվաճողական ու ծավալապաշտական քաղաքականության և պանթուրքիզմի գաղափարախոսության հիմքի վրա՝ Աղբբեջանը հենց սկզբից էլ նվաճողական նկրտումներ հանդես բերեց բացարձակապես հայկական հողերի նկատմամբ: Բոլշևիկյան հեղաշրջումը և ռուսական զորքերի կողմից ռազմաճակատի լքումը, աղբբեջանական մուսավաթականների և նրանց թիկունքում կանգնած թուրքերի համար Հայաստանը անդամահատելու և ստրկացնելու նպաստավոր պայմաններ ստեղծվեցին³: Ռուսական զորքերի նահանջը շահեկան էր թաթար և թուրք բնակչության համար: Աղբբեջանցի պատմաբան Բալաևը իր աշխատության մեջ, որտեղ բացահայտ կերպով խեղաթյուրվում են պատմական փաստերը, նշում է, թե հայերի համար չափազանց կայուն միտք էր դարձել առաջին աշխարհամարտում Ռուսաստանի՝ մինչև վերջ մասնակցությունը և հաղթականորեն պատերազմից դուրս գալը: Վերջինս ցինիկաբար նշում է, թե Հայ Յեղափոխական Դաշնակցությունը կողմ էր պատերազմը Ռուսաստանի կողմից շարունակելուն՝ հույս ունենալով, թե այդ պատերազմում Թուրքիան պարտություն կկրեր, և հայերին կհաջողվեր իրականություն դարձնել «այսպես կոչված «Մեծ Հայքի» ստեղծման գաղափարը, իսկ բոլշևիկների իշխանության գալով, այդ գաղափարը ի չիք դարձավ: Այլ կերպ ասած, աղբբեջանական պատմագիտությունը ոգևորությամբ է արձանագրում Ռուսաստանի՝ I

¹ Նույն տեղում, էջ 17:

² Балаев А., նշվ. աշխ., էջ 31:

³ Հարությունյան Հ., Լեոնային Ղարաբաղը 1918-1921թթ., Եր., 1996, էջ 12:

աշխարհամարտից դուրս գալը և ռուսական զորքերի՝ Անդրկովկասից հեռանալը: Անդրկովկասը թուրք-մուսավաթական նվաճողական քաղաքականության կիզակետում հայտնվեց. այն մի կամուրջ էր, որը պետք է օժանդակեր պանթուրքիզմի ծավալմանը: Այդ ժամանակ անդրկովկասյան ժողովուրդներին միավորող Անդրկովկասյան Սեյմը իրական քաղաքական ուժ իրենից չէր ներկայացնում: Սեյմում հայերը, վրացիները և մահմեդականները ներկայացված էին իրենց ազգային կուսակցություններով: Մահմեդականների մեջ գերիշխող էին կովկասյան թաթարների կողմից 1911թ. ստեղծված «մուսավաթ» կուսակցության ներկայացուցիչները: Մուսավաթական կուսակցության և երիտթուրքական կուսակցության հեռահար նպատակները նույնն էին. մուսուլմանական աշխարհի միավորումը և այդ ճանապարհին առկա «խոչընդոտների» վերացումը¹: Դեռ ավելին, իթթիհատը որդեգրել էր մուսավաթի մի շարք ծրագրային դրույթներ: Ասվածից միանգամայն պարզ է մուսավաթական կուսակցության որդեգրած ագրեսիվ, ծավալապաշտական էությունը: Թուրքիզմը կուսակցության առանցքային հիմնադրույթն էր: Փաստորեն, պանթուրքիզմի հետադիմական, հանցավոր գաղափարախոսությունը որդեգրած մուսավաթական կուսակցության նպատակը հայ տարրի բնաջնջումն էր: Թուրք-մուսավաթական միավորման նպատակը պանթուրքիզմի ցեղասպան գաղափարախոսության իրականացումն էր: Այդ հեռահար նպատակի իրականացման մտադրությամբ էր, որ Թուրքիան պահանջում էր Անդրկովկասյան Սեյմի անկախացումը Խորհրդային Ռուսաստանից: Դաշնային պետության տեսքով Անդրկովկասի անկախացումը թուրքական պլաններում դիտվում էր որպես երկրամասում նոր թուրքական պետություն հիմնելու առաջին քայլը²: Հայ-թաթարական ընդհարումների և տիրող անիշխանության պայմաններում անհրաժեշտություն ստեղծվեց ստեղծել համաարցախյան իշխանության մարմին: 1917թ. դեկտեմբերին Շուշիում կայացած հայ քաղաքական ուժերի հավաքը ստեղծեց տեղական իշխանության մի մարմին, որն անվանվեց «Հայ հեղափոխական կուսակցությունների և կազմակերպությունների ժամանակավոր խորհուրդ»³, որը հետագայում կոչվեց Միջկուսակցական բյուրո: Խորհրդի նախագահ ընտրվեց Հայ Հեղափոխական Դաշնակցության անդամ Հայրապետ Մուսայեյանը: Խորհրդակցության հիմնադիր նիստում միաձայն ընդունվեց գործունեության հետևյալ ծրագիրը.

ա/ Ամեն գնով պաշտպանել հայ և թուրք ժողովուրդների համերաշխությունը
բ/ Վերջ տալ քաղաքում և շրջաններում գլուխ բարձրացրած անիշխանությանը
գ/ Ամրապնդել երկրամասի ինքնապաշտպանությունը⁴:

¹ Балаев А., նշվ. աշխ., էջ 31:

² Մանասյան Ա., Ղևոնդյան Ա., Լեոնային Ղարաբաղ. ինչպես է դա եղել, Եր., 2011, էջ 16:

³ Լ.Ղ. անցյալը, ներկան և ապագան, Միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., 2007, էջ 45:

⁴ Հարությունյան Հ., նշվ. աշխ., էջ 18:

Փաստորեն արցախահայ իրականության մեջ ստեղծված իշխանության այս մարմինը Արցախի աշխարհի տնտեսական, քաղաքական, սոցիալական հարցերի լուծման նպատակն էր հետապնդում և անիշխանությունը վերջ տալը: Այն չունեի որևէ նվաճողական կողմնորոշում: Այն արցախյան պետականության փորձի հիման վրա ստեղծված իշխանության մարմին էր: Լեռնային Ղարաբաղին սպառնացող պանթուրքիստական վտանգն առավել խորացավ Ադրբեջանի անկախ հանրապետության ստեղծումից հետո: Նորաստեղծ Ադրբեջանի մուսավաթ կառավարությունը ստեղծման իսկ պահից ձգտում էր բռնությամբ իր հանրապետությանը միացնել Լեռնային Ղարաբաղի, Զանգեզուրի գավառները: 1918թ. հուլիսի 16-ին ինքնալուծարման ենթարկված Միջկուսակցական բյուրոյի փոխարեն ստեղծվեց մի մարմին, որը կոչվեց «Ղարաբաղի հայ ժողովրդական ժամանակավոր կառավարություն» կամ «Կոմիսարների խորհուրդ»¹:

1918թ. թուրքական ինտերվենցիայի պայմաններում մուսավաթականները խափանեցին Սեյմի գործունեությունը և Թիֆլիսում հռչակվեցին երեք պետություններ (մայիսի 26-ին՝ Վրաստանի Հանրապետությունը, մայիսի 28-ին՝ Հայաստանի Հանրապետությունը և Ադրբեջանի Դեմոկրատական հանրապետությունը): 1918թ. հուլիսի 22-ին Լեռնային Ղարաբաղի բնակչության լիազոր ներկայացուցիչների առաջին համագումարը հայտարարեց, որ Լեռնային Ղարաբաղը ինքնուրույն վարչաքաղաքական միավոր է և երբեք ադրբեջանական հանրապետության մաս չի կազմի: Համագումարը ընտրեց ազգային խորհուրդ և լուծարեց հին կառավարությունը: Կառավարությունը բաղկացած էր 7 հոգուց, նախագահն էր Եղիշե Իշխանյանը: Երկրամասի բնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարները սոսկ չէին մերժում զինաթափվելու և Ադրբեջանական հանրապետության իշխանությունն ընդունելու թուրքական զորահրամանատարության վերջնագրերը: Բոլոր համագումարները, բացառությամբ յոթերորդի, Արցախը հայտարարում էին Հայաստանի հանրապետության մաս: Մուսավաթական Ադրբեջանի նվաճողական նկրտումները պաշտպանություն գտան անգլիացիների կողմից: Արցախահայությունը մշտապես անսասան գտնվեց իր պահանջատիրության հարցում: 1919թ. մարտի 26-ին Ղարաբաղի Ազգային խորհրդի նախագահ Ասլան Շահնազարյանի գլխավորած պատվիրակության և Թոմսոնին փոխարինած գեներալ Շատելվորդի միջև տեղի ունեցած բանակցությունների ժամանակ վերջինս հարցրել է, թե ինչի է ձգտում Ղարաբաղի հայությունը: Ազգային խորհրդի նախագահը պատասխանել է. «Դեպի Մեծ Հայաստանը, որի հետ ամեն ինչ ընդհանուր է»²: Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ֆիզիկական գոյությունը սպառնացող վտանգն առավել խորացավ թուրքերի կողմից Բաքուն գրավելուց հետո: 1918թ. սեպտեմբերին (15-18) Բաքուն գրավելու ժամանակ

¹ Նույն տեղում, էջ 23:

² Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը 1917-2000, Գիրք Ա, 1917-1923, Եր., 2003, էջ 123:

հայերի սպանող իրականացվեց, որին զոհ գնացին շուրջ 25-30.000 հազար հայեր: Բաքվի անկումը լիովին ազատ արձակեց թուրք-մուսավաթական նվաճողների ձեռքերը¹: Չնայած այն դաժանագույն պայմաններին, որի մեջ հայտնվել էր Արցախն ու Զանգեզուրը, Արցախի ժողովուրդը հերոսաբար մինչև վերջ հավատարիմ մնաց իր երազանքին, Հայաստանի հանրապետության հետ միավորմանը՝ մարտահրավեր նետելով պանթուրքիզմի դրոշի ներքո միավորված թուրք-մուսավաթական ուժերին: Բաքվում, Ղարաբաղում տեղի ունեցած հայերի ջարդերը հայոց ցեղասպանության շարունակությունն էր, որն իրագործվում էր թուրք-մուսավաթական ուժերով: Ադրբեջանի Հանրապետությունը, որ ոչ մի (քաղաքական, վարչական, տնտեսական, վերահսկող) պատմական իրավունք չունեւր Լեռնային Ղարաբաղի նկատմամբ, որդեգրելով պանթուրքիզմի քաղաքականությունը, միանգամայն անհիմն տարածքային նկրտումներ հանդես բերեց, որին արցախահայությունը անկախ միանգամայն աննպաստ պատմական պայմաններին, պատասխանեց իր անհողողող կամքով՝ չընդունել մահմեդական իշխանությունը, քանի որ այն խորթ է, օտարահունչ պատմական հայկական նահանգին: Ադրբեջանի պատմաբաններից Ի.Նիֆտալիեվը՝ պատմության կեղծաբանման դիրքերից գրված իր աշխատության էջերում նշում է, թե Լեռնային Ղարաբաղում պայքարը (համահայկական բնույթ) հրահրված էր Հայ Յեղափոխական Դաշնակցության կուսակցության հրահրմամբ, այլ կերպ ասած՝ դրսից ներմուծված և հրահրված պայքար էր²: Այս թյուր հիմնավորումը դժվար չէ միանգամից հակաճառել: Հենց արցախահայության համաժողովրդական պայքարը, հրավիրված համագումարները լավագույն կերպով ապացուցում են, որ արցախահայության պայքարը նեղ կուսակցական կամ դասակարգային չէր, այլ իսկապես համաժողովրդական բնույթ ուներ:

Այն, որ արցախյան հիմնահարցը 1918-1920թթ. և Ադրբեջանի նվաճողական քաղաքականությունը պատճառ էր Թուրքիայի որդեգրած պանթուրքիստական գաղափարախոսության, ակնառու է ադրբեջանական պատմագիտության էջերում: Այսպես, ադրբեջանական պատմաբան Նիֆտալիեվը, վերլուծելով Թուրքիայի քաղաքականությունը, նշում է, թե «հայտնի է, որ այդ շրջանում Թուրքիան ազգային-ազատագրական պայքար էր մղում Անտանտի երկրների դեմ իր անկախության և տարածքային ամբողջականության համար: Բայց չնայած դրան՝ Մուստաֆա Քեմալի կառավարությունը ձգտում էր պահպանել եղբայրական Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը»: Թուրք պատմաբան Մ.Սարայը գրել է, թե «...Թուրքիան չի կարող անտարբեր մնալ Ադրբեջանի ճակատագրի նկատմամբ, քանի որ «Ադրբեջանը և ադրբեջանական

¹ Հարությունյան Հ., նշվ. աշխ., էջ 55:

² Нифталиев И., Азербайджанская ССР в экспансионистских планах армян (20-е годы XX века), Баку, 2010, с. 20.

թուրքերն այն կամուրջն են, որով Թուրքիան կմիավորի թուրքերի հետ»¹: Մուստաֆա Քեմալը իր մտահոգությունն ու դժգոհությունն է հայտնել՝ ասելով, թե Խորհրդային Ռուսաստանը փորձում է Թուրքիայի և Ադրբեջանի միջև ստեղծել հայկական պետություն: Փաստորեն, միանգամայն ակնհայտ հենց ադրբեջանական և թուրքական պատմագիտությունն արտահայտում է Թուրքիայի որդեգրած քաղաքականությունը:

Հայկական պետություն, ըստ պանթուրքիզմի, Թուրքիայի ու Ադրբեջանի միջև չպիտի լիներ: Հասկանալի է, որ թուրք-ադրբեջանական այս զավթողական, բարբարոսական քաղաքականության արդյունքն էր Արցախում ստեղծված կացությունը: «Մենք ձգտում ենք ստեղծել անկախ Ադրբեջանական հանրապետություն, դրա համար էլ մենք պետք է անհրաժեշտ կապեր ստեղծենք ռուսների հետ... Հարկավոր է այնպես անել, որ որոշ տարածքներ, ինչպիսին է Ղարաբաղը, գտնվի Ադրբեջանական պետության ազդեցության ներքո»²:

«Թուրքիայի նպատակն էր ինքնակոչ Ադրբեջանի Հանրապետության թափառող կառավարությունը հաստատել մայրաքաղաք հռչակված Բաքվում, գերմանացիների հետ միասին տիրանալ Բաքվի նաֆթին, դուրս մղելով Ռուսաստանին Կովկասից, միանալ Անդրկովկասի, Հյուսիսային Կովկասի մահմեդականներին և անարգել ուղի բացել դեպի Թուրանական աշխարհ և վերջնականապես վերացնել վերոհիշյալ խնդիրները լուծելու ճանապարհին ընկած ամենամեծ խոչընդոտը՝ հայությունը»³: Մուսավաթական Ադրբեջանի որդեգրած պանթուրքիզմի քաղաքականությունն անցավ Խորհրդային Ադրբեջանին: Անկախ քաղաքական համակարգից՝ Ադրբեջանը շարունակում է զավթողական կեցվածքը հայկական տարածքների նկատմամբ: Ինչպես իրավացիորեն ասել է ՀՀ արտաքին գործերի նախարար Համո Օհանջանյանը Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմ Զիչերինին. «Այժմ, թաքնվելով Խորհրդային Ռուսաստանի հեղինակության ներքո, նրա ռազմական ուժերի համագործակցությամբ՝ Խորհրդային Ադրբեջանի կառավարությունը մտադիր է ավելի լայն մասշտաբով իրականացնելու մուսավաթի նախատեսած պլանները և Հայաստանից իլլել նրա պատմական հողերը»⁴: Առավել ևս մի կապակցությամբ Նարիմանովը նշել է, որ Ադրբեջանի խորհրդայնացումից հետո իրենց համար ավելի շահեկան վիճակ կստեղծվի: Շահեկան վիճակ ասելով՝ վերջինս նկատի ուներ, որ քեմալա-ադրբեջանական միությունը կամրապնդվեր

¹ Նույն տեղում, էջ 78:

² Нифталиев И., նշվ. աշխ., էջ 78:

³ Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920թթ., Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, պատասխանատու խմբագիր Ա.Վիրաբյան, Եր., 2003, էջ 4:

⁴ Нагорный Карабах в международном праве и мировой политике, Документы и комментарий, том 1, М., 2008, с. 481.

խորհրդաքեմալական ուժեղ կապով: Հայ-ռուսական բանակցությունները, որոնք ընթանում էին Մոսկվայում և Երևանում, անընդհատ խոչընդոտվում էին Ադրբեջանի կողմից: Համաշխարհային սոցիալիստական հեղափոխության «ջահակիր» հռչակված Թուրքիան այդ դերակատարության քողի ներքո Ադրբեջանի հետ ձեռք մեկնած, նպատակ ուներ խժոեղ հայկական տարածքները: Սա լավ էր հասկանում Զիչերինը. «Ադրբեջանին բավարարելու երկու ուղի կա, որոնցից առաջինն այն է, որ Ադրբեջանը իր թաթարական ուժերը ուղղի հայերի դեմ, մյուս ուղին՝ այդ տարածքները (նկատի ունի Ղարաբաղ, Զանգեզուր) գրավելն ու նվիրելն է Ադրբեջանին, ինչին ձգտում է Նարիմանովը»: Մոսկովյան ընթացող հայ-ռուսական բանակցությունների հանդեպ իր բողոքն արտահայտելով՝ Նարիմանովը Զիչերինին 1920թ. հունիսի 18-ին գրած դիմումում նշել է, թե փոխանակ Ադրբեջանը վերածելու Արևելքում դասակարգային հեղափոխության կենտրոնի, նրա տարածքները բաժանում են Հայաստանին և Վրաստանին: Ահա թե ինչպիսի կեղտոտ հնարքներով էր աշխատում Բաքվի կառավարությունը՝ իր զավթողական պլանները փորձելով իրականացնել Խորհրդային Ռուսաստանի՝ տարածաշրջանը խորհրդայնացնելու քաղաքականությանը աջակցելու ծառայությունների դիմաց:

Այսպիսով՝ ադրբեջանական պատմագիտության այն հերյուրանքները, թե Ադրբեջան պետությունը իբր ստեղծվել է ադրբեջանական ազգային շարժման արդյունքում, բացարձակ սուտ է: Ադրբեջան պետության մասին (ինչպես իրավացիորեն նշում է Յու.Ուլյանովան) մինչև 1918թ. ոչ մի պատմական տեղեկություն չկա: Ադրբեջանական պետության ստեղծումը, նրա զավթողական քաղաքականությունը չունի ազգային բովանդակություն: Ադրբեջանին և նրա հավակնություններին ծնունդ տվեց պանթուրքիզմը և սա միանգամայն տարբերվում է Արցախի և նրա լիիրավ տերերի՝ հետապնդած արդարացի և օրինավոր պահանջներից: Բերված փաստերը վկայում են, որ արցախյան հիմնահարցը և նրա շուրջ հայության բարձրացրած պայքարը սերվում է պատմականության ակունքներից, ունի ազգային բովանդակություն, իսկ Ադրբեջանի որդեգրած քաղաքականությունը 1915թ. ցեղասպանություն իրագործած գաղափարախոսության արդյունք էր:

Իր մեջ վառ պահելով պետականության պաշտպանության գաղափարը՝ Լեոնային Ղարաբաղը մինչև վերջ պայքարեց բռնակցման դեմ: 1918-1920թթ. Լեոնային Ղարաբաղը ինքնուրույն վարչաքաղաքական միավոր էր՝ ինքնիշխանության բոլոր խորհրդանիշներով¹:

1920թ. նոյեմբերի 30-ին Խորհրդային Ադրբեջանի կառավարությունը, չնայած իր հռչակած դեկլարացիային, ըստ որի հրաժարվում է Լեոնային Ղարաբաղի, Նախիջևանի և Զանգեզուրի նկատմամբ հավակնություններից ի նշանավորումն

¹ Մանասյան Ա., Ղևոնդյան Ա., նշվ. աշխ., էջ 18:

Հայաստանում խորհրդային իշխանության հաղթանակի, այդուհանդերձ շարունակեց այդ հավակնությունները:

1921թ. հունիսի 15-ին Հայկական ԽՍՀՄ կոմունիստական կուսակցության կենտկոմը ընդունեց որոշում, ըստ որի Լեոնային Ղարաբաղը հռչակվեց ՀԽՍՀ անբաժանելի մաս: 1921թ. հուլիսին Ադրբեջանական ԽՍՀ-ը պահանջեց Ղարաբաղյան հարցը քննարկել ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյում: 1921թ. հուլիսի 4-ի նիստում քվեարկությամբ թեև վճռվեց Լեոնային Ղարաբաղը միացնել Խորհրդային Հայաստանին, սակայն հաջորդ օրը Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն.Նարիմանովի սպառնալիքներից հետո հարցը առանց քննարկման վերանայվեց հոգուտ Ադրբեջանի: Այսպիսով՝ Կովբյուրոյի անօրինական որոշմամբ՝ 1921թ. հուլիսի 5-ին Լեոնային Ղարաբաղը բռնակցվեց Ադրբեջանին: Որոշման մեջ ասված էր. «Ելնելով Մուսուլմանների և հայերի միջև խաղաղության հաստատման անհրաժեշտությունից, Լեոնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանական ԽՍՀ սահմաններում՝ տալով նրան լայն ինքնավարություն՝ Շուշի վարչական կենտրոնով»¹:

Պատմականորեն հայկական տարածքները անցան Ադրբեջանին, ոտնահարվեց հայ բնակչության ինքնորոշման իրավունքը, ինչպես նաև արցախահայության հրավիրած համագումարները, որտեղ յուրաքանչյուր անգամ հստակ դրվում էր Լեոնային Ղարաբաղի՝ Հայաստանի Հանրապետության անբաժանելի մաս ճանաչելու պահանջը: Հայոց ազգային շարժումը, որը ծավալվեց արցախյան հիմնախնդրի շուրջ, բախվեց տարածաշրջանային շահերին և ազատության կամքն ու ինքնորոշման իրավունքը ստորադասվեց ծավալապաշտական պանթուրքիզմի գաղափարախոսությանը: Արևելքում հեղափոխության և սոցիալիզմի կառուցման հետագնա նպատակը միավորեց Խորհրդային Ռուսաստանին և Քեմալական Թուրքիային, իսկ վերջինիս հետ նաև Ադրբեջանին: Հայտնի է, որ Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն.Նարիմանովը Լեոնային Ղարաբաղը Ադրբեջանին միացնելու պահանջի հետ մեկտեղ հանդես էր գալիս սպառնալիքներով, եթե Լեոնային Ղարաբաղը տրվի Հայաստանի հանրապետությանը, ապա «Ադրբեջանի ժողկոմխորհը իրենից հանում է պատասխանատվությունը, քանի որ հարցի լուծման նման տարբերակում մենք Ադրբեջանում կվերականգնենք հակասովետական ուժերը»²:

Ի վերջո երկրամասը Ադրբեջանին միացվեց ապօրինաբար. Լեոնային Ղարաբաղում 1921թ. ամռանը տեղի չի ունեցել հանրաքվե, արցախահայության կամքը հաշվի չի առնվել, այն ամենակոշտ կերպով ոտնահարվեց խորհրդային կառավարության կողմից: Թուրք-ադրբեջանական և բոլշևիկյան շահերը վեր

¹ Авакян М., Нагорный Карабах, . правовые аспекты, Ер., 2014, с. 12.

² Пономарев В., Социально-политические причины возникновения межэтнического конфликта в Нагорном Карабахе и вокруг него в конце 1980-х начале 1990-х: исторический аспект, Вестник КемГУ, N 2 (46), 2011, с. 34.



դասվեցին ազգային ինքնորոշման մարդկային պարզ իրավունքներից: Ընդ որում որոշման խիստ անօրինականությունը քողարկվեց մտացածին տնտեսական կապերի առկայությամբ, որոնցով իբր թե կապված էր Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի հետ:

Այսպիսով՝ Լեռնային Ղարաբաղի և հարակից հայկական տարածքների նկատմամբ ադրբեջանական հավակնությունները բխել են պանթուրքիստական գաղափարներից, որոնք որդեգրվել են Ադրբեջանի կողմից: Պանթուրքիզմի արդյունքը դարձավ հայոց ցեղասպանությունը, հայկական տարածքների նկատմամբ զավթողական քաղաքականությունը, պատմության խեղաթյուրումը թուրք և ադրբեջանցի պատմագիրների կողմից:

Ամփոփում

1894-1923թթ. Թուրքիայում և Անդրկովկասի հայաշատ տարբեր շրջաններում տեղի ունեցան հայության սոսկալի ջարդեր: 1915թ. հայոց ցեղասպանությունը Արևմտյան Հայաստանում իր շարունակությունը գտավ Արևելյան Հայաստանում: Ցեղասպանության պատճառը երիտթուրքերի կողմից որդեգրված պանթուրքիզմի ծավալապաշտական գաղափարախոսությունն էր: Այդ գաղափարախոսությունը որպես պետական քաղաքականություն որդեգրվեց նաև Ադրբեջանի կողմից, որի ստեղծումը նույնպես մտնում էր թուրքական հեռագնա քաղաքական ակնկալիքների մեջ: Ադրբեջանի կողմից որդեգրված պանթուրքիզմի քաղաքականության արդյունքը վերջինիս զավթողական հավակնություններն էին միանգամայն հայկական տարածքների նկատմամբ և հայկական ջարդերի կազմակերպումը: Ադրբեջանական պատմագիտության ներկայացուցիչները, քողարկելով Ադրբեջանի նվաճողական քաղաքականությունը, կեղծաբանում են պատմական փաստերը և «ադրբեջանական» հայտարարում հայ ժողովրդի պատմական հայրենիքի մի մասը՝ Արցախը:

Пантюркизм как направление захватнической политики Азербайджана и азербайджанской истории

Армине Арустамян

Резюме

Ключевые слова: пантюркизм, геноцид, захватническая политика, армянские территории, историография.

1894-1923гг. в Турции и в преобладающим армянским населением регионах Закавказье произошли жестокие погромы армян. Армянский геноцид 1915-ого года в Западной Армении нашел свое продолжение в Восточной Армении.



Причина геноцида является принятое младотурками экспансионистская идеология пантюркизма. Это идеология как государственная политика была принята со стороны Азербайджана, создание которого тоже входило в долгосрочные политические ожидания Турции. Результатом принятой идеологии пантюркизма со стороны Азербайджана стали захватнические претензии по отношению к армянским территориям. Представители азербайджанской историографии, маскируя захватническую политику Азербайджана, фальсифицируют исторические факты и объявляют азербайджанским часть исторической родины армянского народа – Арцах.

Panturkism as the Direction of Expansionist Policy of Azerbaijan and Azerbaijani History

Armine Arstamyan

Summary

Key words: *panturkizm, genocide, land-grabbing policy, Armenian territories, historiography.*

From 1894 to 1923 in Turkey and in different regions of Caucasus, populated by Armenians, took place terrible massacres. Western Armenian Genocide in 1915 found its continuation in Eastern Armenia. The reason of the Genocide was the expansionist ideology of Panturkizm, adopted by the Young Turks. This ideology as a state policy was also adopted by Azerbaijan, the creation of which was included in Turkish far-reaching political expectations. The result of Panturkizm policy adopted by Azerbaijan was the expansionist ambitions towards Armenian territories and the organization of the Armenian massacres. The representatives of Azerbaijan historiography, masking the expansionist policy, falsify historical facts and declare Azerbaijani part of Armenian historical homeland - Artsakh.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ ԵՎ ՔՐԴԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԹՈՒՐԲԻԱՅՈՒՄ

Ռուդիկ Յարալյան

Պ.գ.թ., իրանագետ

ԵՊՀ

Բանալի բառեր - ՔԱԿ, քրդեր, Թուրքիա, ազգայնականություն, քարոզչություն

Թուրքական քարոզչամեքենան տարիներ շարունակ ջանքեր չի խնայել համոզելու աշխարհին, որ գոյություն ունի հայ-քրդական ռազմական համագործակցության իրողություն՝ ընդդեմ պաշտոնական Անկարայի: 1980-ական թվականներից ի վեր Թուրքիայի քաղաքական օրակարգում կարևոր տեղ է զբաղեցրել և անընդմեջ շահարկվել հայկական և քրդական կազմակերպությունների, մասնավորապես՝ Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի (ASALA - Armenian Secret Army for the Liberation of Armenia) և Քուրդիստանի աշխատավորական կուսակցության (PKK) միջև «սերտ համագործակցության» խնդիրը, որը զուրկ է եղել փաստարկված հիմնավորումներից:

Այդ համատեքստում կարելի է համաձայնել ավստրիացի քաղաքագետ Ֆ. Բիբերի¹ այն համոզման հետ, համաձայն որի՝ «առաջին հերթին թուրքական կառավարությունն է փորձել կապակցել ՔԱԿ-ի և հայության շահերն՝ ուռճացնելով հայերի դերը Թուրքիայի ներքին գործընթացներում, որպեսզի այդպիսով հնարավոր լինի մշակել և ամբողջացնել թուրքական պետության դեմ դավադրության տեսությունը: Հետևաբար Անկարայի կրոնաազգայնական քարոզչության շրջանակներում հայերը, որպես ոչ իսլամադավան ամենամեծ համայնք ներկայացնող միավոր, ստանձնել են կարևոր դերակատարում»²:

Ակնհայտ է, որ արդի ժամանակաշրջանի թուրքական ազգայնականության առաջնահերթություններից է համահավասարեցնել և միևնույն բարոյաիրավական հարթության մեջ քննարկել հայկական ու քրդական պահանջատիրության խնդիրները, որը, մակերեսային ընկալմամբ, Անկարային միևնույն «գործիքակազմով» երկու տարբեր ուղղությամբ աշխատելու հնարավորություններ է ընձեռում: Հարցի առավել համակողմանի քննության դեպքում, սակայն, բացահայտվում է, որ Թուրքիայի՝ հայկական և քրդական

¹ Ավստրիայի Գրացի համալսարանում գործող Հարավարևելյան Եվրոպայի ուսումնասիրությունների կենտրոնի տնօրենն է, որի մասնագիտական հետաքրքրություններն ընդգրկում են միջէթնիկ հարաբերությունների, էթնիկ հակամարտությունների և ազգայնականության ոլորտները:

² St' u Bieber F., Religious Minorities between the secular state and rising Islam: Alevis, Armenians and Jews in Turkey (<http://doku-archiv.com/kehilot/turkei/TY-mind.htm>)



հիմնախնդիրները համահավասարեցնելու հստակ միտումները նպատակաուղղվել են հայ-քրդական հակասությունների խորացմանը՝ նախ և առաջ հաշվի առնելով պատմական Արևմտյան Հայաստանի և Հյուսիսային Քուրդիստանի¹ գործոնները, որոնց սահմանների և ապագա կարգավիճակի վերաբերյալ հայերի և քրդերի մոտ բացակայել են ընդհանուր գաղափարական մոտեցումներն ու փոխադարձաբար ընդունելի հայեցակարգային պատկերացումները:

Հիշյալ իրողությունները հակահայկական և հակաքրդական գործունեության լայն դաշտ են բացել թուրքական իշխանությունների առջև, որոնց քայլերը ուղղորդվել են դեպի «Արևմտյան Հայաստան» և «Հյուսիսային Քուրդիստան» ձևաչափերի գաղափարական հակադրում և հայերի ու քրդերի կողմից միասնական հակաթուրքական գործողություններ իրականացնելու հավանականության վերացում:

Հարկ է նկատել, որ Թուրքիայի վերոնշյալ քաղաքականությունը տվել է որոշակի արդյունքներ, քանի որ հայ-քրդական համագործակցության զարգացման հնարավորությունները ցայժմ բավարար չափով չեն օգտագործվել: Չի կարելի անտեսել, նաև, միմյանց փոխլրացնելու սկզբունքով հայ-քրդական միասնական հակաթուրքական թիրախային քարոզչության և լոբբինգի բացակայության իրողությունը, որից թուրքական կառավարությունն առավելագույնս կարողացել է օգտվել՝ շրջանառության մեջ դնելով սեփական քարոզչական գաղափարները:

Հայ-քրդական հարաբերությունների անբավարար արդյունավետության պատճառները բացահայտելու նպատակով անհրաժեշտ է պատմական շրջայց կատարել դեպի XX դարի 20-ական թթ.:

1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրված Սևրի միջազգային պայմանագիրը, որն, ըստ էության, լուծում է առաջարկել Հայկական հարցին և քրդական հիմնախնդրին, առայսօր չի ստացել ելակետային նշանակության փաստաթղթի ընկալում, որի հիման վրա կարելի կլիներ որոշակիացնել հայկական և քրդական պահանջատիրության խնդիրները, հստակեցնել նպատակները և որոշ դեպքերում էլ համատեղել ջանքերն ընդդեմ թուրքական իշխանությունների մերժողական քաղաքականության: Հակառակ այդ տրամաբանությանը՝ Սևրի պայմանագիրը չի արժանացել հայ և քուրդ հասարակությունների տարբեր շերտերի, այդ թվում՝ մտավորականության կողմից միանշանակ ընդունելիության², քանի որ կողմերի մոտ գերակայել է այն մտայնությունը, որ

¹ «Հյուսիսային Քուրդիստան» եզրույթը կիրառվել է Սևրի պայմանագրով «Քուրդիստան» ճանաչված աշխարհագրական տարածքները նախանշելու բովանդակային իմաստով:

² Հայ մտավորականության տարբեր ներկայացուցիչներ քննադատել են Սևրի պայմանագրի առանձին ձևակերպումներ: Նիկողայոս Ադոնցը նկատել է, որ Դերսիմի և Խարբերդի սանջակներն էթնոաշխարհագրական առումով կազմել են Հայկական

պատմական Արևմտյան Հայաստանի և Հյուսիսային Քուրդիստանի խնդիրները միմյանց հակասում են, անհամադրելի են և չեն կարող ստանալ միաժամանակյա լուծում:

Ակնառու է նման հիմնավորումների ոչ բավարար փաստարկված լինելը. ճիշտ է, հայկական և քրդական տարրերը թուրքիայում տարբեր պատմական ուղիներ են հաղթահարել, որը կարող է ենթադրել հայկական և քրդական հիմնախնդիրների հանգուցալուծման ոչ միանման վերջնական արդյունք, սակայն դա որևէ կերպ չի կարող բացառել երկու հիմնախնդրի համադրումն ու հայ-քրդական հնարավոր համագործակցությունը: Հայկական և քրդական գործոնների շուրջ ծավալված գործընթացներն այն տիրույթում, որտեղ թուրքական քարոզչամեթոդային ջանքերով արհեստականորեն բարոյա-իրավական միևնույն հարթություն են տեղափոխվել և իրար հակադրվել հայկական ու քրդական հիմնախնդիրները, այլևս դարձել են համատեղելի և համադրելի:

Ավելին, տարիների ընթացքում գրեթե նույնն են պահպանվել թուրքական իշխանությունների գործելաճան ու գործողությունների տրամաբանությունը երկրի ներսում ոչ թուրքական ծագում ունեցող ժողովուրդների նկատմամբ: Այդ համատեքստում ավելորդ չէ հիշել Ս. Կ. Պողոսյանի հետևյալ նկատառումը, որը տեղ է գտել նրա՝ քրդերին և Հայկական հարցին նվիրված աշխատության մեջ. «Ժամանակակից թուրքիայում քրդերի նկատմամբ ոչնչացման նույն քաղաքականությունն է իրականացվում, ինչ տասնամյակներ առաջ հայերի հանդեպ: Ձեռագիրը նույնն է: Երևույթ, որ մեկ անգամ ևս ապացուցում է, որ թուրքական իշխանությունների հայաջինջ քաղաքականության հիմնական պատճառը ոչ թե կրոնական էր, այլ քաղաքական»¹:

1980-ական թվականներին պատմական Արևմտյան Հայաստանում և Հյուսիսային Քուրդիստանում ծավալված իրադարձությունները, մասնավորապես՝ ՔԱԿ-ի կողմից անցումը զինված պայքարի, ազդակ են դարձել թուրքական իշխանությունների համար՝ կրկնելու հայերի նկատմամբ կիրառված քաղաքականության որոշ դրսևորումներ: Խոսքը վերաբերում է XIX դարում Արևմտյան Հայաստանում «բարենորոգումներ»² կատարելու Օսմանյան իշխանությունների նախաձեռնությանը, որով նրանք փորձել են ժամանակ շահել, որպեսզի հետագայում հնարավոր լինի իրագործել բարեփոխումների տրամաբանությանը ճիշտ հակառակ քաղաքականությունը:

բարձրավանդակի անբաժանելի մասը, ուստի դրանք չեն կարող Քուրդիստանի մաս կազմել՝ Սևրի պայմանագրի համաձայն (տե՛ս Ադոնց Ն., Հայկական հարցը Սևրում, Հայկական հարցի լուծման շուրջ, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 1989, էջ 20):

¹ Տե՛ս Պողոսյան Ս. Կ., Քրդերը և Հայկական հարցը, «Հայաստան», Երևան, 1991, էջ 329

² «Բարենորոգումների» քաղաքականության վերաբերյալ տե՛ս Լեոյի «Հայոց հարցի վավերագրերը» (Թբիլիսի, 1915) աշխատության 339-357 էջերում:

Հայերի դեպքում այդ քաղաքականությունը տվել էր ցանկալի արդյունք, որը թուրքական իշխանությունների կողմից ընկալվել է որպես դրական նախադեպ քրդերի նկատմամբ ծավալված քաղաքականության համատեքստում:

Թուրք լրագրող Մեհմեդ Ալի Բիրանդի «Քրդական հարցը հնարավոր չէ լուծել ռազմական գործողություններով» վերտառությամբ հոդվածը, կարծես, նախանշել է Թուրքիայի «Բարենորոգումների» քաղաքականության շրթայական շարունակության ընդհատված սկիզբը: Հեղինակն իր հոդվածում պաշտոնական Անկարային առաջարկել է հրաժարվել քրդական հիմնախնդիրը ռազմական ճանապարհով լուծելու կարծրատիպերից և այն տեղափոխել հասարակական-քաղաքական հարթություն: Մ. Ա. Բիրանդը նշել է. «Որքան էլ պաշտոնապես խոսենք «լեռնային թուրքերի» մասին, մեր առջև Քրդական հարցն է, որը տարածքային, սոցիալական, տնտեսական և քաղաքական հարց է, սովորական ավագակային դեպք չէ:

Մոտ ապագայում Քրդական հարցը դառնալու է տարածաշրջանի կարևորագույն հիմնահարցը, հետևաբար հարկավոր է հրաժարվել զինված պայքարի քաղաքականությունից, մշակել հեռանկարային տնտեսական, սոցիալական և մշակութային ծրագրեր: Միաժամանակ, քրդերին պետք է թուրքերեն սովորեցնել, կրթել և երկրի հարստություններից օգտվելու որոշակի հնարավորություններ տալ»¹:

Կասկածից վեր է, որ քրդերը ներկայում հանգրվանել են Թուրքիայի կրկնվող քաղաքականության այն անցումային կետում, որտեղ հայերն են գտնվել XIX դարում: Անշուշտ, քրդերի համար պատմության ողբերգական էջերի կրկնությունները կանխելու լավագույն ձևերից մեկը կարող է դառնալ հայ-քրդական համագործակցությունը, որն ունի թուրքական ազգայնականության ծայրահեղական դրսևորումներին դիմակայելու համապատասխան ներուժ:

Եթե նախկինում թուրքական իշխանությունների համառ ջանքերի շնորհիվ տապալվել են հայերի և մյուս ոչ թյուրքական ծագման ժողովուրդների (մասնավորապես՝ քրդերի) միասնական հակաթուրքական ճակատ ստեղծելու փորձերը, ավելին, հաջողվել է քրդական ցեղերին օգտագործել հայերի դեմ և հայ-քրդական հարաբերություններում լարվածություն առաջացնել², ապա այժմ հնարավոր չէ մինևույն տրամաբանությամբ առաջնորդվել հետևյալ պատճառներով՝

1. XIX դարի երկրորդ կեսին և XX դարասկզբին թուրքական իշխանությունների հետ առերեսման խնդիր են ունեցել առաջին հերթին հայերը, որոնց գլխին կախված է եղել ֆիզիկական բնաջնջման վտանգը: Քրդերը հիմնականում ընկալվել են որպես Հայկական հարցի լուծմանը նպաստող կամ

¹ Birand M. A., Kürt Sorununu Askeri Harekatla Çözemeyiz, Milliyet, 04.03.1987

² Կիրակոսյան Ա., Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը, պատմաիրավական եռալեզու տեղեկանք, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Երևան, 2006, էջ 13

խանգարող գործոն: Այդ ժամանակ հայ-քրդական դաշինքի չկայացման գլխավոր պատճառներից մեկը եղել է քրդերի մոտ ցեղակլանային մտածելակերպի գերակայության և պատշաճ մակարդակի իրավագիտակցության բացակայությունը: Ներկայում հայերի և քրդերի մոտ դերերի փոփոխություն է տեղի ունեցել, ֆիզիկական ոչնչացման վտանգի առջև կանգնել է քուրդ հանրությունը, որը հայության աջակցության կարիքն ունի: Այլ հարց է, թե որքանով է քրդական հասարակական-քաղաքական ընկալումներում գերիշխող հայերի հետ գործակցության անհրաժեշտության գիտակցումը:

2. Ներկայում այլևս չի գործում հայ-քրդական հարաբերությունների նախկին տրամաբանությունը, որի շրջանակներում քրդական ավատական դասի համար հայ բնակչությունը հանդիսացել է շահագործման օբյեկտ, բեկերի և աղաների հարստության առատահոս աղբյուր¹:

3. Ռուս քրդագետ Վ. Նիկիտինի այն համոզմունքը, որ Առաջին աշխարհամարտի տարիներին երիտթուրքերի կրոնական կարգախոսներն են արթնացրել քրդերի մարտական ոգին ընդդեմ այլադավանների², չի կարող բնորոշել ներկա ժամանակների գործընթացները: Այսօր Թուրքիայում չկա այլադավանների այն խնդիրը, որը եղել է XX դարասկզբի առաջին քառորդին, սակայն այդ իրողությունն առայսօր որևէ կերպ չի ազդել Թուրքիայում քրդական հարցի սրության վրա: Փաստորեն, կրոնադավանակցության գործոնը, որ Օսմանյան իշխանությունների, այնուհետև երիտթուրքական կառավարության կողմից լայնորեն օգտագործվել է քրդական հանրության մոտ հակահայկական տրամադրություններ զարգացնելու նկատառումներով, այլևս ժամանակավրեպ է:

4. Ներկայիս Թուրքիայում գոյություն ունի քրդական ազգայնական գաղափարների կայուն տեմպերով զարգացման և ընդլայնման որոշակի գործընթաց, որը բխում է հայ-քրդական համագործակցության խորացման շահերից: Նախկինում քրդական ցեղապետերը տարբեր աշիրետներ են ներկայացրել, որոնք հայերի նկատմամբ հաճախ ցուցաբերել են միմյանց հակադիր դիրքորոշումներ, իսկ հիմա ազգայնական գաղափարների տարածման արդյունքում զգալի չափով լուծվել է քրդերի նույնատարրության խնդիրը, որին մեծապես նպաստել է քրդական քաղաքական կուսակցությունների և առաջին հերթին՝ ՔՄԿ-ի դերակատարումը: XIX դարի երկրորդ կեսին և XX դարասկզբին քրդական առանձին աշիրետների հետ արևմտահայության գործակցության փորձերը մեծապես ձախողվել են հենց այն պատճառով, որ համազգային գաղափարները խորթ են եղել քուրդ ցեղապետերին, առավել ևս՝ ցեղերի շարքային անդամներին: Հակառակ թուրքական քաղաքական վերնախավերի

¹ Բայբուրդյան Վ., Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, Երևան, 2008, էջ 182

² Никитин В., Курды, перевод с французского И. О. Фаризова, «Прогресс», Москва, 1964, с. 290



ապագայի վերաբերյալ ունեցած տեսլականին՝ այսօր կարելի է տապալված որակել XX դարասկզբի համաթուրանական (պանթուրքիստական) գաղափարախոսության այն սկզբունքը, որը ենթադրել է քրդերի միաձուլում և թրքացում, քանի որ դրանից անցել է շուրջ մեկ դար, բայց այդ ընթացքում քրդական ազգայնականությունը ոչ միայն չի խեղդվել իր բնօրրանում, այլև շարունակել է աստիճանաբար ամրապնդվել:

Ամփոփում

Արդի թուրքական ազգայնականության առաջնահերթություններից է միևնույն բարոյաիրավական հարթության մեջ քննարկել հայկական ու քրդական պահանջատիրության խնդիրները, որը նպատակաուղղվել է հայ-քրդական հակասությունների խորացմանը: Այդ համատեքստում նախ և առաջ հաշվի է առնվում պատմական Արևմտյան Հայաստանի և Հյուսիսային Քուրդիստանի գործոնները, որոնց սահմանների և ապագա կարգավիճակի վերաբերյալ հայերի և քրդերի մոտ բացակայել են ընդհանուր գաղափարական մոտեցումներն ու փոխադարձաբար ընդունելի հայեցակարգային պատկերացումները:

Ներկայում, սակայն, թուրքական ազգայնականությունը չի կարող առաջնորդվել միևնույն տրամաբանությամբ՝ պայմանավորված մի շարք իրողություններով, որոնց շարքում առանձնահատուկ կարևորություն ունի քրդերի ցեղակլանային մտածելակերպի վերացման գործընթացը:



Армянский вопрос и курдская проблема в Турции

Рудик Яралян

Резюме

Ключевые слова – РПК, курды, Турция, национализм, пропаганда.

В рамках политики углубления армяно-курдских противоречий в числе приоритетов современного турецкого национализма особое место занимает обсуждение проблемы морально-правового уравнивания их национальных претензии к турецкому правительству. В этом направлении *способствующим* обстоятельством для Турции являются политические факторы исторической Западной Армении и Северного Курдистана, о границах и будущего правового статуса которых в армяно-курдских кругах отсутствуют взаимоприемлемые идеологические подходы и концептуальные соображения.

Однако, на сегодняшний день турецкий национализм не может руководствоваться прежней логикой из-за ряда факторов, среди которых особенно важно отметить процесс упразднения племенно-кланового образа мышления курдов.

Armenian Question and the Kurdish Problem in Turkey

Rudik Yaralyan

Summary

Key words – KWP (PKK), Kurds, Turkey, nationalism, propaganda.

One of the priorities of the modern Turkish nationalism, in the framework of its policy of deepening the Armenian-Kurdish contradictions, is a problem of moral-legal equalization of their national claims. In this context, the political factor of historical Western Armenia and Northern Kurdistan is a contributing factor for Turkey because there are no mutually acceptable ideological approaches between Armenians and Kurds over the borders and future legal status of the above mentioned regions.

However, now the Turkish nationalism can't be guided by the former logic, due to several factors, one of which is the process of gradual elimination of the Kurdish tribal mentality.

**ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇԵՍ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԴԵՍ
ՈՒՂՂՎԱԾ ԾԱՆՐԱԳՈՒՅՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ**

Նունե Սարումյան

պ.գ.թ., դոցենտ

ԱրՊՀ

Բանալի բառեր: Ոճրագործություն, ցեղասպանություն, հանցագործություն, երիտթուրքեր, արևմտահայություն, դատավճիռ, միջազգային ռազմական տրիբունալ, կոնվենցիա, Ռաֆայել Լեմկին, բռնագաղթ, կոտորած, ժխտողականություն, դատապարտում

Մարդկության պատմության մեջ իր նախադեպը չունեցող ոճրագործությունը, որն իր վրա բևեռեց համաշխարհային մտավորականության ուշադրությունը, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքական ճիվաղների կողմից իրագործված արևմտահայության ժողովրդասպանությունն էր՝ Հայոց Մեծ եղեռնը՝ հարյուր տարի առաջ իրագործված ցեղասպանությունը, որը կաթվածահար արեց հայ ժողովրդին:

Դարի աննախադեպ ոճրագործությունը¹ մեր նորագույն պատմության առանցքն է կազմում և պահպանում է իր քաղաքական այժմեականությունը:

Հայոց ցեղասպանության հետ կապված իրադարձությունները իրենց լուսաբանումն են գտել հայրենի և արտասահմանյան պատմագրության մեջ: Խնդրո առարկա հարցի նկատմամբ հետաքրքրությունը ավելի է մեծացել սկսած 1965 թվականից, երբ հայ և համաշխարհային հանրությունը լայնորեն նշեց հայերի 1915թ. ցեղասպանության 50-ամյակը:

Հայերի ցեղասպանության և Հայկական հարցի բազմապլան խնդիրների ուսումնասիրությամբ առաջացել է պատմական մեծաքանակ գրականություն՝ աշխատություններ, փաստաթղթերի ու վավերագրերի ժողովածուներ, հուշագրություններ և այլ հրապարակումներ: Խնդիրը ուսումնասիրել և ուսումնասիրում են ոչ միայն հայ պատմաբանները, այլև օտարները՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Եվրոպական և մերձավորարևելյան երկրների գիտնականները: Իրադարձությունների իր տեսակետն է առաջ քաշում նաև թուրքական պատմագրությունը, որը ձգտում է ամեն կերպ արդարացնելու

¹ Օսմանյան կայսրությունում և նրան հարակից շրջաններում 1915-1923 թթ. տեղի ունեցած հայերի զանգվածային բռնագաղթը և կոտորածներն ու բռնի կրոնափոխումն անվանում են Հայոց ցեղասպանություն:

Այդ կոտորածները ծրագրվեցին և կազմակերպվեցին Օսմանյան կայսրությունում երիտթուրքերի, իսկ հետագայում ավարտին հասցվեցին քեմալական կառավարության կողմից:



Թուրքիայի ղեկավար շրջանների հանցավոր գործողությունները, նրանց հակահայկական քաղաքականությունը:

Բազմաթիվ երկրներում ստեղծվող պատմական գրականությունը վկայում է, որ Հայկական հարցը և հայերի ցեղասպանության խնդիրը մնում են միջազգային պատմագրության, հետևաբար և միջազգային հանրության ուշադրության կենտրոնում:

Ցեղասպանությունը (գենոցիդ՝ հունարեն *ge'nos*-տոհմ, *ցեղ* և *լատիներեն caedo*-սպանում եմ բառերի համակցումից է կազմված) միջազգային հանցագործություն է, որի բնորոշ գործոններն են որևէ ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբի լիակատար կամ մասնակի ոչնչացման գործողությունները¹: ՄԱԿ-ի՝ 1948թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայով բնորոշվող ցեղասպանության գործողություններ մարդկության պատմության մեջ շատ են եղել՝ հնագույն ժամանակներից սկսված, հատկապես ավերիչ պատերազմների ու ամայացնող արշավանքների, էթնիկական ու կրոնական ներքին ընդհարումների, եվրոպական տերությունների կողմից գաղութատիրական կայսրությունների ստեղծման և աշխարհի բաժանման ու վերաբաժանման ժամանակ, ինչը հանգեցրել է երկու համաշխարհային պատերազմների և այլն:

Ցեղասպանություն եզրույթը առաջին անգամ շրջանառության մեջ է դրել լեհական իրավաբան, քրեական և միջազգային իրավունքի մասնագետ, փաստաբան, ծագումով հրեա Ռաֆայել Լեմկինը 20-րդ դարի 30-ական թվականներին, իսկ համաշխարհային պատերազմից հետո ստացել է միջազգային իրավական կարգավիճակ՝ որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն²:

Ռ.Լեմկինը այս եզրույթով ցանկանում էր նկարագրել համակարգված սպանությունների և բռնությունների նացիստական քաղաքականությունը՝ նկատի ունենալով նաև 1915 թ. Օսմանյան կայսրությունում հայերի հանդեպ իրագործված կոտորածները, ապա և հրեաների ոչնչացումը ֆաշիստական Գերմանիայում 1939-1945թվականների Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին և պատերազմի տարիներին՝ հիտլերականների կողմից գրավված երկրներում:

1945-ին, երբ Նյուրնբերգի միջազգային ռազմական տրիբունալը նացիստական ղեկավարությանը մեղադրեց մարդկության հանդեպ կատարված հանցագործությունների մեջ, «ցեղասպանություն» բառը ներառվեց դատավճռում, սակայն որպես նկարագրական, այլ ոչ թե իրավական եզրույթ:

¹ Հայկական հարց հանրագիտարան, Երևան, 1996, էջ 448:

² Նույն տեղը:

1948 թ. դեկտեմբերի 9-ին Երկրորդ աշխարհամարտի տարիներին իրականացված լայնածավալ կոռուստների հիշողության ազդեցությամբ ՄԱԿ-ի ընդունած «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայով ցեղասպանությունը սահմանվում է որպես միջազգային հանցագործություն, և այն ստորագրող պետությունները պարտավորվում են կանխել, ինչպես նաև պատժել ցեղասպանություն իրականացնողներին¹:

Կոնվենցիայի ընդունումից հետո որոշ գիտնականներ առաջարկել են ավելի համընդգրկուն սահմանումներ: Մասնավորապես 1959 թ. իրավագետ Փիթեր Դրոստը սահմանել է ցեղասպանությունը որպես «մարդկանց՝ որևէ խմբի պատկանելության համար կյանքից կանխամտածված զրկելը»²:

Անվանի ցեղասպանագետ, «Ցեղասպանության հանրագիտարանի» խմբագիր Իսրայել Չառնին առաջարկել է հետևյալ սահմանումը. «Ցեղասպանությունը, ընդհանրական իմաստով, զգալի թվով մարդկանց զանգվածային սպանությունն է, որը չի իրագործվել թշնամու զինված ուժերի դեմ ռազմական գործողությունների ընթացքում, այլ զոհերի անպաշտպանվածության և անօգնականության պայմաններում»³:

Հարկ է նշել, որ ՄԱԿ-ի կոնվենցիան քաղաքական խմբի անդամների սպանությունը չի սահմանում որպես ցեղասպանություն, սակայն շատ ցեղասպանագետներ պնդում են՝ ցեղասպանության սահմանման մեջ պետք է ներառել նաև այդ կետը: Ըստ նշանավոր ցեղասպանագետ և սոցիոլոգ Լեո Կուպերի՝ ժամանակակից աշխարհում քաղաքական տարաձայնություններն առնվազն նույնքան կարևոր հիմք են կոտորածների և ոչնչացման համար, որքան ռասայական, էթնիկ կամ կրոնական տարբերությունները: Ի լրումն կոնվենցիայում քաղաքական խմբի սպանությանը որպես ցեղասպանություն դիտվող սահմանման բացակայության՝ այս ոլորտի մասնագետներ, գիտնականներ Թեդ Գուրը և Բարբարա Հարֆը շրջանառության մեջ են դրել «Պոլիտիցիդ» եզրույթը⁴:

Այսպիսով՝ ցեղասպանությունը մարդկանց կազմակերպված բնաջնջումն է՝ նրանց կոլեկտիվ գոյությանը վերջ դնելու հիմնական նպատակով: Հետևաբար ցեղասպանության իրագործման համար անհրաժեշտ է կենտրոնացված ծրագիր և դրա իրագործման ներքին կառուցակարգ (մեխանիզմ), ինչն էլ ցեղասպանությունը դարձնում է պետական հանցագործություն, քանի որ միայն պետությունն է օժտված այն բոլոր ռեսուրսներով, որոնք կարելի է օգտագործել այս քաղաքականությունն իրականացնելու համար:

¹ <http://www.genocide-museum.am/arm/genocide.php#sthash.tRB8zu6n.dpuf>:

² Նույն տեղը:

³ Նույն տեղը:

⁴ Նույն տեղը:

20-րդ դարի առաջին ցեղասպանություն է համարվում 1,5 մլն հայերի ոչնչացումը Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության մյուս հայաբնակ վայրերում այն կազմակերպել և ծրագրավորված իրականացրել են երիտթուրքական կառավարողները: Այսինքն՝ մեկուկես միլիոն հայ է սպանվել՝ հայ լինելու համար:

Ցեղասպանություն էր նաև Արևելյան Հայաստանի հայ բնակչության զանգվածային սպանությունները, որ իրագործել են 1918թվականին Այսրկովկաս ներխուժած թուրքական զորքերն ու 1920 թվականի սեպտեմբեր-դեկտեմբերին Հայաստանի Հանրապետության դեմ ագրեսիա սանձազերծած քեմալականները, ինչպես նաև 1918 թվականին և 1920 թվականին Բաքվում և Շուշիում մուսավաթականների կազմակերպած հայ բնակչության ջարդերը¹:

Ցեղասպանության գործողություններ էին 1988 թվականի փետրվարին հայերի զանգվածային սպանությունները, ջարդերն ու բռնաբարությունները, տեղահանությունները Սումգայիթում, 1989 թվականին Կիրովաբադում ու Ադրբեջանի մյուս հայաբնակ վայրերում, ինչպես նաև 1990 թվականի հունվարին Բաքվում, որ իրականացրին ադրբեջանական ազգայնամոլները ԱդրԽՄՀ պաշտոնական իշխանությունների և իրավապահ մարմինների թողտվությամբ:

Այդ գործողությունները լիովին համապատասխանում են ՄԱԿ-ի 1948 թվականի Կոնվենցիայի 2-րդ հոդվածի երեք կետերին՝ 1. խմբի անդամների սպանություն, 2. նրանց մարմնական լուրջ վնասվածք կամ մտավոր խանգարում պատճառելը, 3. Խմբի համար այնպիսի կենսապայմանների ստեղծումը, որոնց նպատակն է այդ խմբի լիակատար կամ մասնակի ֆիզիկական ոչնչացումը: Ուստի և այդ գործողությունների ոգեշնչողները, հրահրողներն ու կազմակերպիչները, այդ թվում՝ Ադրբեջանի ժողովրդական ճակատի պարագլուխները ենթակա են քրեական պատասխանատվության որպես միջազգային հանցագործներ²:

Միջազգային զինվորական ատյանի հրովարտակի 6-րդ կետի համաձայն՝ մարդկության դեմ ոճրագործություն են ճանաչվել «պատերազմից առաջ կամ պատերազմի ընթացքում քաղաքական բնակչության սպանությունը, բնաջնջումը, ստրկացումը, տեղահանությունը և նրա դեմ գործադրված այլ անմարդկային գործողությունները, կամ քաղաքական, ռասայական, կրոնական շարժառիթներով հալածանքները»³: Հրովարտակի այդ կետը հիմք է

¹ Հայկական հարց հանրագիտարան, Երևան, 1996, էջ 448:

² Նույն տեղը, էջ 449:

³ Հրովարտակն ընդունվել է 1945թ. օգոստոսի 8-ին և հանդիսանում է պատերազմական գլխավոր հանցագործներին դատելու ու պատժելու մասին ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, ԽՍՀՄ-ի և Ֆրանսիայի միջև կնքված համաձայնագրի անկապտելի մասը: Տես՝ Հայկական հարց հանրագիտարան, Երևան, 1996, էջ 332:



հանդիսացել «ցեղասպանություն» հասկացության՝ որպես միջազգային հանցագործության իրավական նորմի մշակման համար:

Հայերի ցեղասպանության թուրքական քաղաքականությունը պայմանավորված էր մի շարք գործոններով, որոնց մեջ կարևոր նշանակություն ուներ պանիսլամիզմի և պանթուրքիզմի գաղափարախոսությունը, որը 19-րդ դարի կեսից դավանում էին Օսմանյան կայսրության կառավարող շրջանները: Պանիսլամիզմի մարտաշունչ գաղափարախոսությունն առանձնանում էր ոչ մահմեդականների նկատմամբ անհանդուրժողությամբ և քարոզում էր բացահայտ ազգայնամոլություն, բոլոր ոչ թուրք ժողովուրդների թուրքացման կոչ անում:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին երիտթուրքերի կառավարությունը, ջանալով պահպանել քայքայվող Օսմանյան կայսրության մնացորդները, որդեգրեց պանթուրքիզմի և ազգային միատարր քաղաքականությունը: Այն ծրագրում էր հսկայածավալ մի կայսրության ստեղծում, որը, տարածվելով մինչև Չինաստան, իր մեջ կներառեր Կովկասի, Միջին Ասիայի բոլոր թուրքալեզու ժողովուրդներին: Ծրագիրը նախատեսում էր քրիստոնյա և իսլամացված ու այլ փոքրամասնությունների թրքացում: Հայ բնակչությունը դիտվում էր հիմնական խոչընդոտ այս ծրագրի իրականացման ճանապարհին:

Մտնելով պատերազմի մեջ՝ Օսմանյան կայսրության երիտթուրքական կառավարությունը «Մեծ Թուրան» ստեղծելու հեռուն գնացող ծրագրեր ուներ: Մասնավորապես նախատեսվում էր կայսրությանը միացնել Այսրկովկասը, Հյուսիսային Կովկասը, Միջին Ասիան, Ղրիմը, Պոլովոժիեն: Եվ այդ նպատակի իրականացման ճանապարհին նվաճողներին հարկ կլինեին ոչնչացնելու նախ և առաջ հայ ժողովրդին, որն ուներ ռուսական կողմնորոշում և հակադրվում էր պանթուրքիստների զավթողական ծրագրերին:

Փաստորեն պատմությունը խաչաձևեց թուրքերի և հայերի ազգային շահերը: Հայոց պատմական հայրենիքում կամ թուրքը պետք է կառուցեր իր ազգային պետականությունը, կամ էլ հայերը պետք է վերականգնեին իրենց կորցրած պետականությունը¹:

Թուրանական պետության ստեղծման համար պետք է ոչնչացվեին արևմտահայությունը և որպես նվազագույն պայման նվաճվեին Կարսը, Արդահանը, Սուրմալուն, Նախիջևանը, Զանգեզուրը և Լեռնային Ղարաբաղը: Այդ տարածքների բնակչությունը ևս պետք է ոչնչացվեր: Իսկ առավելագույնը թուրքիայի համար ամբողջ հայ ժողովրդի և Հայաստանի ոչնչացումն էր այդ էր պահանջում պանթուրքիզմի գաղափարախոսությունը²:

¹ Հայոց ցեղասպանությունը, Ուսումնասիրություններ, Երևան, 2001, էջ 13:

² Նույն տեղը, էջ 20:

Հայ ժողովրդի երկու հատվածները՝ արևմտահայությունը և արևելահայությունը պետք է ոչնչացվեին: Արևմտահայության ոչնչացումը պետք է կազմակերպեր և իրագործեր Թուրքիան, արևելահայության ոչնչացումը՝ Թուրքիան՝ Ադրբեջանի օժանդակությամբ:

1914թ սկզբին տեղական իշխանություններին ուղարկվել է հայերի նկատմամբ գործադրվելիք միջոցառումների հատուկ հրահանգ: Եվ հենց այն փաստը, որ հրահանգն ուղարկվել է մինչև պատերազմի սկիզբը, անհերքելիորեն վկայում է, որ հայերի ոչնչացումը ծրագրավորված քայլ էր և թելադրված չէր կոնկրետ պատերազմի իրադրությամբ¹:

Երիտթուրքերի կողմից Մեծ եղեռնի նախապատրաստման և իրականացման վերաբերյալ վիթխարի քանակությամբ նյութերի՝ վավերագրերի, ակնատեսների և ցեղասպանությունից փրկվածների վկայությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արևմտահայության ֆիզիկական բնաջնջման ուղղությամբ երիտթուրքերը գործնական քայլերի դիմեցին իշխանության գլուխ անցնելու առաջին իսկ օրից: Ադանայի 1909թ. կոտորածը այդ քաղաքականության գործադրման առաջին լուրջ փորձն էր²:

Դեռևս 1894-1896 թվականներին սուլթան Աբդուլ Համիդի թելադրանքով իրականացված ջարդերը, ապա և 1915-1918 թվականներին երիտասարդ թուրքերի կազմակերպած հայերի ցեղասպանությունը մնացին անպատիժ, որը հետագայում կրկնվեց Ադուլֆ Հիտլերի կողմից՝ հրեաների նկատմամբ:

Պետք է նշել, որ Ա.Հիտլերն ինքը հրապարակորեն հավանություն տվեց հայերի ցեղասպանությանը՝ 1939 թվականին հրամայելով վարվել այնպես, ինչպես օսմանյան թուրքերը հայերի նկատմամբ վարվեցին 1915 թվականին: Ֆյուրերը հայտարարեց. «Այսպես, կազմ ու պատրաստ վիճակում են «մահվան ջոկատները» (նկատի ունի ՍՍ-ի զինվորական հատուկ կազմավորումները), առայժմ միայն Արևելքում, որոնց հրամայված է առանց խղճահարության սպանել լեհական ծագման ու լեհերեն խոսող տղամարդկանց, կանանց ու երեխաներին: Միայն այսպես մենք կկարողանանք ձեռք բերել մեզ անհրաժեշտ հողային կենսատարածությունը: Վերջիվերջո, ո՞վ է այսօր հիշում հայերի ցեղասպանությունը»³:

Հիտլերի հռետորական հարցը ոչ եզակի և ոչ էլ պատահական մի դիտողություն էր և ունեցել էր գոնե մեկ նախօրինակ: Նրա հիշատակումները հայերի ցեղասպանության վերաբերյալ հարկ է դիտել նրա մտածելակերպի ավելի լայն կոնտեքստում, որտեղ ի սկզբանե գերիշխում էր անտիսեմիտիզմը, արիացիների գերազանցության համոզմունքն ու գերիշխանություն ձեռք բերելու

¹ Հայկական հարց հանրագիտարան, Երևան, 1996, էջ 305:

² Պողոսյան Ս.Կ., Գոյատևման պայքարի քառուղիներում, Երևան, 1989, էջ 366:

³ Լանգ Դ.Մ., Ուոքեր Բ.Ջ., Հայերը, Երևան, 1992, էջ 7:

մոլուցքը¹: Ավելին՝ անհրաժեշտ հողային կենսատարածության տեր դառնալու միակ միջոցն էր դա:

Անդրադառնալով անցյալի վայրագությունների իրագործման ձևերին՝ զարմանալի չպետք է թվա այն հանգամանքը, որ Հիտլերը ի մտի է ունեցել նաև հայկական ջարդերի օրինակը, երբ թուրքական իշխանությունները հատուկ միջոցներ էին ձեռնարկել, որպեսզի մի կողմից՝ այդ գործողություններին օրինական տեսք տրվեր, իսկ մյուս կողմից՝ բռնագավթվող ունեցվածքի անհրաժեշտ չափաբաժին ապահովվեր:

Հայ ժողովրդի ամբողջ ունեցվածքը բռնագավթելու համար անհրաժեշտ էր այդ ունեցվածքը ոչ պիտանի հայտարարել: Այդ նպատակի համար 1915թ. մայիսի 26-ին (նոր տոմարով) Օսմանյան կայսրության Ներքին գործերի նախարարը իր հրահանգով առաջարկեց մեծ վեզիրին ընդունել օրենք, որը կթույլատրի հայ ժողովրդի գաղթը: Պառլամենտը «օրենքը» չընդունեց, չնայած որ դա պահանջում էր Սահմանադրության 36-րդ հոդվածը: Գաղթի մասին իրավաբանական հիմք չունեցող այդ ժամանակավոր օրենքի հիման վրա՝ «ստեղծված պատերազմական և քաղաքական լարված իրավիճակի հետևանքով հայ ժողովրդի կողմից թողնված շարժական և անշարժ գույքի նկատմամբ վերաբերմունքի մասին» 1915 թ. հունիսի 10-ին մտցվեց նոր լրացուցիչ օրենք: Հայերի ամբողջ ունեցվածքը հայտարարվեց «բարձիթողի» ու բանտարկվեց: Նախատեսվում էր ստեղծել հատուկ կոմիտեներ, որոնք պիտի հաշվառման վերցնեին ու պահպանեին հայերի ունացվածքը սեփականատերերի անունով, անասունները պետք է անհապաղ վաճառվեին, իսկ միջոցները ապահով պահպանվեին, մինչև իսկական տերերի վերադարձը...

Սակայն այս և նմանատիպ օրենքների ընդունումը Թուրքիայում արդեն իսկ խոսում էր անօրինականության մասին, որովհետև հայերը սեփական կամքով երբեք չէին հրաժարվի իրենց ունեցվածքից:

Իրականությունը հետևյալն է. տեղահանությունից հետո Անատոլիայի երևելիները բռնագրավել ու կիսել են հայերի ունեցվածքը, վերցրել նրանց տներն ու դաշտերը: Մի մասը գնալու ժամանակ էր տիրացել գույքին, մի մասն էլ վերցրել էր գույքը՝ նրանց սպանելով:

Արդեն երեք տարի հետո՝ 1918թ. նոյեմբերի 4-ին, երբ Թուրքիան պարտություն կրեց պատերազմում ու երիտթուրքերը փախուստի դիմեցին, Օսմանյան կայսրության պառլամենտը 1915թ. այդ փաստաթուղթը ընդունեց ոչ սահմանադրական և իրավաբանորեն անվավեր²:

Անժխտելի փաստերը վկայում են, որ հայ բնակչության զանգվածային կոտորածների ու տեղահանության տարիներին երիտթուրքական

¹ Բարդակյան Գ.Պ., Հիտլերը և հայերի ցեղասպանությունը, Ե., 1991, էջ 33:

² <http://novostink.ru/armenian-genocide>. Տես՝ Բարսեղով Յու., Հայերի ցեղասպանությունը հանցագործություն է ըստ միջազգային իրավունքի, Մոսկվա, 2015:



կառավարությունը ձգտել է ոչնչացնելու նաև հայկական քաղաքակրթության նյութական վկայությունները: Ջարդարարները ղեկավարվել են Թալեաթի՝ Հալեպի տեղահանության գործերով կոմիտեին ուղղված հրահանգով. «...ամեն կերպ ջանալ ոչնչացնել բուն «Հայաստան» անվանումը Թուրքիայում»:¹

Երիտթուրքերի ձեռնարկած միջոցառումներն ուղղված էին ոչ միայն հայերի ֆիզիկական բնաջնջման իրագործմանը, այլև նրանց գույքի և ունեցվածքի թալանին, ազգային-հոգևոր մշակույթի ոչնչացմանը:

Գիտակցելով եկեղեցու դերը հայ ժողովրդի կյանքում՝ նպատակամղված կոտորել են հայ հոգևորականներին, ոչնչացրել եկեղեցիներն ու վանքերը, եկեղեցական գույքը, ձեռագիր մատյանները:

Հայ ժողովուրդը իր բազմադարյան պատմության ընթացքում ստեղծել է պատմության, գրականության, արվեստի, բնական գիտությունների վերաբերյալ տասնյակ հազարավոր ձեռագիր մատյաններ, հոգևոր և աշխարհիկ բնույթի երկեր: Ժամանակ առ ժամանակ տարբեր նվաճողներ ոչնչացրել են այդ ձեռագրերը, սակայն դրանց մտածված ու ծրագրված ոչնչացումը կատարվեց 1915 թ. հայ ժողովրդի ցեղասպանության հետ զուգընթաց:

Եվ հայ ժողովրդի հսկայական զանգվածներին կոտորելուց բացի՝ ոչնչացվեցին նաև հազարամյակների ընթացքում ստեղծված մշակութային արժեքներն ու հուշարձանները:

Երիտթուրքական կառավարության այդ քաղաքականության հետևանքով թուրք և քուրդ ջարդարարները թալանել են 66 քաղաքների և 2500 գյուղերի հայ և այլ քրիստոնյա ազգաբնակչությանը, կողոպտել ու քանդել ավելի քան 2000 եկեղեցի ու վանք, 1500 դպրոց ու վարժարան: Նյութական վնասը կազմում էր 15 մլրդ ֆրանկ (1919թ. դրությամբ)²: Ըստ Ամերիկյան Համալսարանի իրավաբանական ֆակուլտետի դեկան դոկտոր Թովմաս Սամուելյանի տեղեկության՝ հայ ժողովրդին հասցված վնասը 1919թ. դրությամբ կազմում էր ավելի քան 19 մլրդ ֆրանսիական ֆրանկ (որից գրեթե 14,6 միլիարդը՝ Թուրքահայաստանի հայերին հասված վնասն էր, իսկ 4,5 միլիարդը՝ Հայաստանի Կովկասյան Հանրապետության), իսկ 2015 թ. հաշվարկներով՝ 3տրիլիոն դոլլարից ավելի³:

Նման ցեղասպանական գործողությունները հետապնդում են երկու նպատակ. ցույց տալ, որ Արևմտյան Հայաստանը չի եղել հայերի հայրենիքի մի մասը, և չի եղել հայերի ցեղասպանություն:

Հայերի՝ թուրքական իշխանությունների կողմից իրականացված ցեղասպանության հետևանքով զոհվեց 1,5 մլն մարդ, մոտ 600 հազար հայեր

¹ Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, 1991, էջ 562:

² Հայկական հարց հանրագիտարան, Երևան, 1996, էջ 164:

³ <http://novostink.ru/armenian-genocide>.

գաղթական դարձան: Արևմտյան Հայաստանը ցեղասպանության հետևանքով զրկվեց իր բնիկ հայ բնակչությունից, Արևմտյան Հայաստանը հայաթափվեց: Հայոց պատմական Հայրենիքը զրկվեց իր իսկական տերերից և հայտարարվեց թուրքական հայրենիքի բաղկացուցիչ մաս:

Արդեն 1915թ. օգոստոսին ներքին գործերի նախարար Թալեաթը լկտիաբար հայտարարում էր, թե «հայերի նկատմամբ գործողությունները հիմնականում իրականացված են և Հայկական հարց այլևս գոյություն չունի»:¹

Արևմտահայության ոչնչացումից հետո օրակարգ մտավ արևելահայության ցեղասպանության իրականացման խնդիրը: Այդ կապակցությամբ Վեհիբ փաշան նշում էր. «Եվ դուք՝ հայերդ, կանգնած եք մեր այդ ճամբուն վրա: Պահանջելով Վանը՝ դուք կփակեք մեր ճամբան դեպի Պարսկաստան: Պահանջելով Նախիճևանն ու Ջանգեզուրը՝ դուք արգելք կը դառնաք մեզի իջնելու Քուրի հովիտը եւ երթալու Բաքու: Կարսն ու Ախալքալաքը կը փակեն մեր ճամբան դեպի Ղազախ ու Գանձակ: Դուք պետք է մեկ կողմ քաշուիք եւ մեզի ճամբա տաք:...»²

Եվ գուցե երիտթուրքերին փոխարինած Մուստաֆա Քեմալի, որ հետևողականորեն շարունակում էր իր նախորդների պանթուրքիստական, հակահայկական քաղաքականությունը, արևելահայության ցեղասպանության կազմակերպման ծրագրին խոչընդոտ հանդիսացավ ՀՀ-ի խորհրդայնացումը, և հայ ժողովուրդը փրկվեց վերջնական կործանումից: Եվ նա չկարողացավ Թալեաթի նման ի լուր աշխարհի հայտարարել, որ «այդ տարածքներում չկա հայություն, ուրեմն և չկա Հայկական հարց»³:

Խորհրդային կարգերը արգելք հանդիսացան պանթուրքիստական գաղափարախոսության ծրագրի իրագործման համար, և քանի որ սահմանային հարցերի լուծումը պանթուրքիստների ուժերից վեր էր, ուստի նրանք ձեռնամուխ եղան այդ շրջանների հայաթափման քաղաքականության իրականացմանը:

Հայության ֆիզիկական եղեռնը փոխարինվեց «սպիտակ եղեռնով»: Խորհրդային իշխանության տարիներին հայաթափվեց Նախիջևանը: Նույն վտանգի առաջ կանգնեց նաև Լեռնային Ղարաբաղը, որի հայ բնակչության տոկոսը 95-ից իջավ 75-ի: Միաժամանակ նշանակալից էր Ջանգեզուրի ադրբեջանական բնակչության աճը:

Կազմակերպված ձևով իրագործվում էր ազգային-մշակութային եղեռն նաև 1918 թվականին ստեղծված Ադրբեջանում: Ադրբեջանում, ինչպես և Թուրքիայում հայ մշակույթի ոչնչացումը կատարվում էր երկու ձևով.

¹ Նույն տեղը, էջ 308:

² Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 86:

³ Հայերի ցեղասպանությունը, Ուսումնասիրություններ, Ե., 2001, էջ 28:



հուշարձանների ոչնչացմամբ և հայ մշակութային գործիչների ու արժեքների յուրացմամբ¹:

Հայերի՝ Թուրքիայում և Ադրբեջանում կատարվող ազգային-մշակութային եղեռնի նպատակն էր հայ ժողովրդի ստվար զանգվածներին կոտորելը, հայկական տարածքները յուրացնելուն զուգընթաց հայ ժողովրդի ստեղծած մշակութային արժեքները վերացնել և յուրացնել, որոնք հայկական քաղաքակրթության գոյության նյութական արտահայտություններն են, որպեսզի չմնան «անհետացած» ժողովրդի վկաները:

Մենք չենք կարող մեր ժողովրդին գրել պատմական հիշողությունից: Նա իր սրտի ու հիշողության գաղտնարաններում մշտապես ու սրբությամբ վառ պահեց ու կպահի անմեղ նահատակների հիշատակը և ամբողջ աշխարհում՝ Եվրոպայի, Ամերիկայի, Մերձավոր և Միջին Արևելքի շատ երկրներում, Ավստրալիայում, Բարձրագրեց տասնյակ ու տասնյակ քարեղեն հուշարձաններ:

Ցեղասպանությունը վաղեմության ժամկետ չունի: Տարբեր ազգերի, տարբեր քաղաքակրթությունների պարտքն է ճանաչել ցեղասպանությունը:

Եթե հայերի զանգվածային սպանությունները դրանց կատարման պահին միջազգային իրավունքի կողմից համարվել են հանցագործություն, ապա դրանից բխում է, որ անկախ հանցագործության անվանումից և նրա կատարման ժամանակից՝ ներկայումս գործող միջազգային իրավունքը չի կարող այդ գործողությունները դիտարկել իբրև օրինական և ոչ հանցավոր²:

Միջազգային առաջին արձագանքը 1915թ. հայոց ցեղասպանության իրադարձություններին Ֆրանսիայի, Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի՝ 1915թ. մայիսի 24-ի համատեղ հայտարարությունն էր, որտեղ հայ ժողովրդի նկատմամբ կատարված բռնությունները բնորոշվեցին որպես «հանցագործություն մարդկության և քաղաքակրթության դեմ»: Հաագայի կոնվենցիայի ու մասնավորապես «Մարտենսի վերապահման» ոգով էր, որ կողմերը 1915թ. մայիսի 24-ի հայտարարությամբ կատարված հանցագործության համար

¹ Ադրբեջանցի «մասնագետները» հայ որոշ գիտնականների, մշակույթի գործիչների համարում են աղվանցի գործիչներ, հայկական եկեղեցիներն ու քարերը՝ աղվանական մշակույթի նմուշներ, իսկ ադրբեջանցիներին՝ աղվանների հետևորդներ, հետևաբար, ըստ նրանց, այդ ամենը ադրբեջանական են: Բացի դրանից՝ Ադրբեջանում հրատարակվում են հակագիտական քարտեզներ, որտեղ Ադրբեջանի «տարածք» են համարվում Հայաստանի Հանրապետության արևելյան և հարավ-արևելյան տարածքները: Հայ բնակչության և հայկական մշակույթի կոթողների ոչնչացման ընթացքն Ադրբեջանում ուժեղացավ 1988 թվականից, երբ Ղարաբաղի հայ բնակչությունը, իրագործելով ժողովուրդների ինքնորոշման վերաբերյալ միջազգային իրավունքների ընձեռած հնարավորությունը, որոշեց վերամիավորվել ՀՀ-ի հետ:

² Մարության Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Ե., 2014, էջ 11:

դատապարտում և պատասխանատու էին համարում թուրքական կառավարությանը¹:

Այդ հռչակագրով Անտանտի տերությունները Օսմանյան կայսրությունում կատարվող հայերի զանգվածային կոտորածներին տալիս էին թե քաղաքական և թե՝ իրավական գնահատական՝ դա հանցագործություն է՝ ուղղված մարդկայնության և քաղաքակրթության դեմ: Այս փաստաթղթի հրապարակումը բուն կոտորածների ընթացքում, ևս մեկ ապացույց է այն բանի, որ հայերի հետ կատարվածը համարվել է հանցագործություն՝ համաձայն տվյալ պահին գործող միջազգային իրավական նորմերի:

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո կնքվեցին Վերսալի, ապա Սերի հաշտության պայմանագրերը՝ համապատասխանաբար Գերմանիայի ու Թուրքիայի հետ, և դրանցում հստակորեն նշված էր, որ պետք է ստեղծվեին միջազգային դատական ատյաններ պատերազմական հանցագործներին դատելու համար²: Թերևս սրանից վախենալով՝ Թուրքիան հապճեպ ձեռնարկեց երիտթուրքերի դատավարությունը՝ հայերի զանգվածային սպանությունների պատասխանատվությունը բարդելով միայն «Միություն և առաջադիմություն» կուսակցության և նրա առաջնորդների վրա ու փորձելով խուսափել թուրքական պետության պատասխանատվությունից, ինչը կարող էր ծագել միջազգային ատյանում նման դատավարություն սկսելու պարագայում:

Այսպիսով՝ ցեղասպանության հանցագործությանը տրված «մարդկության դեմ կատարված հանցագործություն» որակումը, որն առկա է 1899 թ. և 1907թ. Հաագայի համապատասխանաբար երկրորդ և չորրորդ կոնվենցիաներում և 1915թ. մայիսի 24-ի Անտանտի տերությունների համատեղ հայտարարության մեջ, ոչ պատահականորեն, այլ օրինաչափորեն արտացոլվեց նաև ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» (1948թ.) ու «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» (1968թ.) կոնվենցիաներում: Ուրեմն հայերի զանգվածային սպանությունները անկախ «գենոցիդ» տերմինի կիրառումից, համարվել են հանցագործություն՝ համաձայն մինչև Հայոց ցեղասպանությունը, ցեղասպանության ընթացքում և դրանից հետո գործող միջազգային իրավունքի

¹ Տես՝ Международные отношения в эпоху империализма, Документы из архивов Царского и Временного правительства. 1878-1917, М.-Л. 1931-1940, серия III, т.7, ч.2, с. 252. Տես նաև՝ Մարտիյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Ե., 2014, էջ 36:

² Հովհաննիսյան Վ., Սերի 1920թ. օգոստոսի 10-ի հաշտության պայմանագիրը և Հայոց պահանջատիրությունը, «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները» (գիտագործական միջազգային գիտաժողով), Գիպրոս-Նիկոսիա, 18-19 ապրիլի 2008թ., «Գիտական զեկուցումների ժողովածու», Մոսկվա, 2008, էջ 20: Տես նաև՝ Մարտիյան Ա., նշվ. աշխ., էջ 37:

նորմերի: Ուստի ներկայումս գործող միջազգային իրավական նորմերը թույլ են տալիս հենվել նաև հենց ցեղասպանության կատարման պահին գործող նորմերի վրա և համապատասխան գնահատական տալ 20-րդ դարասկզբին կատարված հանցագործությանը:

Չնայած Հայոց ցեղասպանության միջազգային դատապարտման շարունակվող գործընթացին՝ Թուրքիան շարունակում է ամեն կերպ պայքարել Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ, պատմության նենգափոխման, հակահայ քարոզչության, քաղաքական և տնտեսական, լոբբինգի և այլ միջոցներով: Ազգայնական հանցագործ, հենց Թուրքիայի արդարադատության կողմից ամենատարբեր մեղադրանքներով բազմիցս դատապարտված, բայց դրան զուգահեռ նաև ազգայնական կուսակցություն և կազմակերպություններ ներկայացնող հայտնի հայատյաց, Թուրքիայի աշխատավորական կուսակցության նախագահ Դոդու Փերինչեքի գործը փորձում են դարձնել Հայոց ցեղասպանության հարցին դատարանի իրավական դիրքորոշման հարց¹:

2000թ. նոյեմբերի 16-ին Իտալիայի պատգամավորների պալատը Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող որոշում է ընդունել: Իսկ ահա 2015թ. փետրվարի 11-ին Իտալիայի Սենատը 234 կողմ, 8 ձեռնպահ և 3 դեմ ձայներով ընդունել է Հոլոքոստի և ցեղասպանությունների ժխտումը քրեականացնող օրինագիծ: Այն պատիժ է սահմանում Հոլոքոստը, մարդկության դեմ իրագործված հանցագործությունները, պատերազմի ոճիրները ժխտողների

¹ Հիշեցնենք, որ Դոդու Փերինչեքը, որը նաև ընդգծված հակահայ գործունեություն ծավալող թուրքական «Թալեաթ փաշա» կոմիտեի հիմնադիրներից մեկն է, 2005 թվականին Շվեյցարիայում հայտարարել էր, որ Հայոց ցեղասպանությունը «իմպերիալիստական սուտ է»: Այս խոսքերի համար շվեյցարական դատարանը նրան 90-օրյա ազատազրկման էր դատապարտել, և որպես այլընտրանք՝ Փերինչեքը պետք է վճարեր ցեղասպանությունները ժխտողների համար օրենքով սահմանված տուգանքը:

Սակայն 2013 թվականի դեկտեմբերի 17-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բավարարել էր Փերինչեքի հայցն ընդդեմ Շվեյցարիայի՝ պատճառաբանելով, թե իբր Շվեյցարիան խախտել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը, այսինքն՝ խոսքի ազատության իրավունքը:

Այս որոշումից հետո Շվեյցարիայի կառավարությունը դիմեց ՄԻԵԴ՝ բողոքարկելու Փերինչեքի գործով որոշումը: Նախորդ տարվա հունիսին ՄԻԵԴ-ի հինգ դատավորներից բաղկացած կազմը կայացրեց գործի քննությունը դատարանի Մեծ պալատ ընդունելու մասին որոշում:

Թուրքիայի վճարեկ դատարանը ժամանակին «Էրզենեքունի» գործով ցմահ ազատազրկման դատապարտված, սակայն 2014 թվականին դատարանի որոշմամբ երկիրը չլքելու պայմանով ազատ արձակված Փերինչեքի վրա դրված արգելքը դատական նիստից մի քանի օր առաջ չեղյալ էր հայտարարել <http://allturkey.am/bd/#sthash.tNMMyQZB3.dpuf>

նկատմամբ¹: (Այս մասին հաղորդում է «Արմենպրեսը»՝ վկայակոչելով II Sole 24 Ore-ը և Սենատի պաշտոնական կայքը:) Օրինագծի՝ բոլոր ատյաններում ընդունման դեպքում երեք տարվա ազատագրվում է սպառնում անձանց, ովքեր «մասամբ կամ ամբողջությամբ կժխտեն Հոլոքոստը, կիրահրեն կամ կկատարեն ռասայական խտրականության վրա հիմնված արարքներ»²:

Ներկայումս Ֆրանսիայում օրինագիծ է շրջանառվում, որը պատիժ կսահմանի նաև Հայոց ցեղասպանությունը ժխտողների նկատմամբ:

Ժխտողականությունը ոչ միայն քաղաքական թուլության և անլիարժեքության բարդությունների դրսևորում է, այլև իրավական կատեգորիա: Այն կապում է Թուրքիայի գործող իշխանությունները ցեղասպանության հանցագործությունը կատարած իրենց նախորդների հետ, դարձնում նրանց մեղսակից մարդկության դեմ այդ ծանրագույն հանցատեսակում: Եվ հենց դրանով էր Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ներկայումս զբաղված Թուրքիայի Հանրապետությունը:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ աշխարհի հայությունը պետք է ավելի ուժեղացնի աշխատանքներն այդ ոճրագործության միջազգային ճանաչման ու դատապարտման ուղղությամբ: Ֆրանսիան և Գերմանիան եվրոպական այն երկրների թվում են, որոնք քրեականացրել են Հոլոքոստի ժխտումը:

Այս հարցում թուրքագետ Ռուբեն Սաֆրաստյանը կարևորում է այն հանգամանքը, որ հարցի միջազգային ճանաչումից պետք է անցում կատարել դեպի իրավական դաշտ և իրավական տիրույթում լուծել Հայոց ցեղասպանության հարցը: «Պետք է կյանքի կոչել «Պահանջում եմ և դատապարտում» կարգախոսը, և այդ առումով ներգրավել նաև միջազգային իրավաբանների և, ստեղծելով խումբ, միջազգային դատարանում քննել Հայոց ցեղասպանության հարցը»³,– «Արմենպրես»-ի հետ զրույցում ասել է նա:

Անդրադառնալով Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցին՝ Ռուբեն Սաֆրաստյանն ասել է, որ 2014թ. Հունաստանի խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության ժխտման քրեականացումը և Բոլիվիայի խորհրդարանի

¹ Օրինագիծը դեռ պետք է հավանության արժանանա Բոլալիայի խորհրդարանի ստորին պալատի կողմից: Սենատորները քվեարկության ժամանակ հստակ ընդգծել են՝ օրինագծի ընդունումը չի խաթարում խոսքի ու ազատ արտահայտվելու իրավունքը: Օրինագծի ջատագով Ջուզեպե Լումիան, ով արդարադատության հանձնաժողովի անդամ է, նշել է, որ օրինագծի ընդունումը բեկումնային է Բոլալիայի համար: «Հոլոքոստի և ցեղասպանությունների ժխտումը կպատժվի ինչպես և շատ երկրներում»- ասել է Լումիան:

² Տես՝ Ապառաժ, 23 Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնական կայքէջ, 13 փետրվարի 2015թ., <http://aparaj.am/>

³ Արմենպրես, Երևան, 26 դեկտեմբեր 2014:



կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը քայլեր են, որոնք Սփյուռքի և հայ դիվանագետների կատարած մեծ աշխատանքի արդյունքն են:

Ցեղասպանության հետևանքների հաղթահարման իրավական պահանջները ներկայացնելու հայեցակարգը՝ անհատական, համայնքային և պետական մակարդակներով, արտացոլվելու է ցեղասպանության հանձնաժողովի որոշմամբ ձևավորված և աշխատանքներն իրականացնող հայ իրավաբանների հանձնախմբի կողմից պատրաստվող համապարփակ թղթածրարում, որի նախապատրաստման ընթացքի մասին հատուկ զեկույցով հանդես եկավ հանձնախմբի ղեկավար, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի նախագահ պարոն Գագիկ Հարությունյանը:

2015 թվականին ընդառաջ՝ թուրքական կողմն ակտիվացրել է Հայոց ցեղասպանության դեմ պայքարը տարբեր ճակատներում, այդ թվում և՛ գիտական ուղղությամբ: Թուրքիան տպում է Ցեղասպանությունը ժխտող բազմալեզու գիտական գրականություն, անցկացնում տեղական և միջազգային սեմինարներ ու գիտաժողովներ: Թուրքիան նաև ֆինանսավորում է միջազգային կարևորություն ունեցող համալսարաններում Ցեղասպանության փաստի ժխտմանն ուղղված քայլերը:

Բացի դրանից՝ աշխարհի տարբեր երկրներում բնակվող թուրքերը նաև Անկարայի միջամտությամբ կազմակերպում են հակահայկական ակցիաներ, միջոցառումներ:

Եվրոպական ժողովրդական կուսակցությունը մարտի 3-ին (ԵԺԿ) Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված բանաձև է ընդունել¹, որով դատապարտվում է հայ ժողովրդի նկատմամբ իրականացված ցեղասպանությունը, դրա ժխտումը, պատասխանատվությունից խուսափելու և իրականացված ոճրագործությունները մոռացության մատնելու կամ արդարացնելու փորձերը:

«Հայոց ցեղասպանության ժխտումը խարխլում է երկարատև խաղաղության ու անվտանգության հիմքերը՝ առավել հավանական դարձնելով ոճրագործությունները նաև ապագայում»², - այս մասին էլ հայտարարել է ԱՄՆ-ի կոնգրեսական Ռոբերտ Դոլը, ով հանդիսանում է Հայոց ցեղասպանության վերաբերյալ ԱՄՆ-ի կոնգրեսին ներկայացրած նոր բանաձևի նախաձեռնության հեղինակը:

Այսպիսով՝ անհրաժեշտ է ընդգծել, որ ցեղասպանության ժխտումը նոր ցեղասպանություն գործելու առաջին քայլն է: Աններելի է, որ ոչ ոք չի պատժվել, չեն պատժվում նաև ցեղասպան պետությունների իրավահաջորդ՝ ժամանակակից Թուրքիայի կառավարողները, որոնք համառորեն ժխտում են հայերի ցեղասպանությունը:

¹ <http://civilnet.an/author/civilnet/03.03.2015>.

² Ապառաժ, Ստեփանակերտ, 20 մարտի, 2015 թ.



Եթե Թուրքիայի կողմից հայոց ցեղասպանությունը ճանաչվի ու դատապարտվի, ապա դա նոր էջ կբացի հայ և թուրք ժողովուրդների պատմական հաշտեցման գործընթացում:

Հայոց ցեղասպանությունը միջազգային հանրության կողմից պետք է քննադատվի ու դատապարտվի: Դա հարցի քրեական կողմն է: Միաժամանակ գոյություն ունի նաև հարցի քաղաքացիական կողմ. դա հայ ժողովրդին հասցված վնասների փոխհատուցումն է, որը գոհերի փաստական և իրավական հիմքեր ունեցող անբաժանելի իրավունքն է: Դա հասարակության պարտականությունն է և տուժող կողմի փոխհատուցում ստանալու իրավունքը:

Ամփոփում

Հոդվածում փորձ է արվում մեկնաբանելու Հայոց ցեղասպանությունը՝ որպես մարդկության դեմ գործադրված հանցագործություն: Նախ տրվում են ցեղասպանություն տերմինի բացատրությունը, նրա կիրառման հանգամանքը միջազգային փաստաթղթերում, որի իրավական հիմքը դրեց լեհ իրավաբան Ռաֆայել Լեմկինը: Այնուհետև ցույց է տրվում, որ Երիտթուրքերի ձեռնարկած միջոցառումներն ուղղված էին ոչ միայն հայերի ֆիզիկական բնաջնջման իրագործմանը, այլև նրանց գույքի և ունեցվածքի թալանին, ազգային-հոգևոր մշակույթի ոչնչացմանը:

Հայերի՝ Օսմանյան կայսրությունում կատարված հայերի զանգվածային կոտորածներն համարվել են հանցագործություն՝ համաձայն տվյալ պահին գործող միջազգային իրավական նորմերի:

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո կնքվեցին Վերսալի, ապա Սևրի հաշտության պայմանագրերը՝ համապատասխանաբար Գերմանիայի ու Թուրքիայի հետ, և դրանցում հստակորեն նշված էր, որ պետք է ստեղծվեին միջազգային դատական ատյաններ պատերազմական հանցագործներին դատելու համար:

Հոդվածում անդրադարձ է կատարվում նաև ցեղասպանության հանցագործությանը տրված «մարդկության դեմ կատարված հանցագործություն» որակմանը՝ ըստ միջազգային փաստաթղթերի: Այն առկա է 1899 թ. և 1907 թ. Հաագայի համապատասխանաբար երկրորդ և չորրորդ կոնվենցիաներում և 1915 թ. մայիսի 24-ի Անտանտի տերությունների համատեղ հայտարարության մեջ, որն արտացոլվեց նաև ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» (1948 թ.) ու «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» (1968 թ.) կոնվենցիաներում:

Ուստի ներկայումս գործող միջազգային իրավական նորմերը թույլ են տալիս հենվել նաև հենց ցեղասպանության կատարման պահին գործող նորմերի վրա և

համապատասխան գնահատական տալ 20-րդ դարասկզբին կատարված հանցագործությանը:

Геноцид как тягчайшее преступление против человечества

Нуне Сарумян

Резюме

***Ключевые слова:** Преступление, геноцид, младотурки, западные армяне, приговор, международный военный трибунал, конвенция, Рафаэль Лемкин, депортация, резня, отказ, осуждение*

Статья представляет собой попытку интерпретировать Геноцид армян как преступление, совершенное против человечности. Прежде всего, дается определение понятия “Геноцид”, его имплементация в международных документах, правовой фундамент которого заложил Рафаэль Лемкин. Далее, в статье освещается деятельность младотурков, направленная не только на физическое уничтожение армян, но и на грабеж собственности и имущества и уничтожение национальной культуры.

Массовые убийства армян в Османской империи признавались преступлением в соответствии с действующими международными правовыми нормами.

После первой мировой войны были подписаны Версальский, а также Севрский мирные договоры, соответственно с Германией и Турцией, где четко была обозначена необходимость создания международного арбитража для разбирательства военных преступлений.

Определение геноцида как "преступление против человечества" присутствует во второй и четвертой Гаагских конвенциях 1899г. и 1907 г. , и в совместном заявлении стран Антанты от 24 мая 1915 года, отраженной в конвенциях ООН "О предотвращении и наказании преступления Геноцида " (1948) и «О неприменении иска давности к военным преступлениям и к преступлениям, совершенным против человечности" (1968).

Таким образом, в настоящее время международные правовые нормы позволяют опираться на нормы, действующие на момент совершения геноцида и дать соответствующую оценку преступлению начала 20 века.

The Genocide as the Gravest Crime against Humanity

Noune Sarumyan

Summary

Key words - *crime, genocide, Young Turks, Western Armenians, sentence, International Military Tribunal, convention, Raphael Lemkin, deportation, slaughter, failure, condemnation*

The article tries to interpret the Armenian Genocide as crime against the humanity. It particularly explains of the term “genocide”, its implementation in the international documents, the legal foundation of which was laid by Rafael Lemkin. Then, the article highlights the activity of the Young Turks directed not only to the realization of the physical extermination of the Armenians, but looting of the property and assets, and destruction of the national culture.

According to the modern legal norms Armenian massacres in the Ottoman Empire were considered as a crime.

The definition of genocide is found in the second and the fourth The Hague Conventions of 1899 and 1907 and in the joint statement of the Powers on May 24 1915, reflected in the UN Conventions on the Prevention and Punishment of the Crime of Genocide (1948) and on the Nonuse of the claim limitations to War crimes committed against humanity (1968).

Thus, at present the international legal norms allow to built on the rules existing at the time of the genocide and to give appropriate assessment to the crime of the early 20th century.

After the World War I the treaty of Versailles as well as Treaty Sevres were signed between Germany and Turkey and it was clearly mentioned that international judicatures must be created for adjudicating the martial criminals.

ԹԱԹԱՐԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ 1905-1906 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ. ՊԱՏՄԱՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Նելլի Բաղդասարյան

պ.գ.թ., դոցենտ

ՄՄՀ

Բանալի բառեր՝ թաթարա-հայկական ընդհարումներ, սոցիալ-տնտեսական պատճառներ, կրոնական պատճառ, Արցախ, Շուշի, Վարանդա, Խաչեն, Դիզակ, պանթուքիզմ, ինքնապաշտպանություն, Ռուսաստան, Օսմանյան Թուրքիա

Թուրքական հիմնարար ազգային գաղափարախոսությունները՝ պանօսմանիզմը, պանիսլամիզմը և պանթուքիզմը, գործող են հատկապես անպատճելիության մթնոլորտում: 19-րդ դարի վերջին մեծ տերությունների լուռ ներկայության և թողտվության պայմաններում տեղի ունեցան արևմտահայության կոտորածներ: Ազգային գոյի քաղաքականության փորձի դրսևորում էր 1905-1906 թթ. Անդրկովկասի մի շարք տարածքներում, այդ թվում Արցախում տեղի ունեցած թաթարա-հայկական¹ ընդհարումները, որոնք իրականացվել են ցարական իշխանությունների հովանավորության և լուռ ներկայության պայմաններում:

1905-1906 թթ. Արցախում տեղի ունեցած թաթարա-հայկական բախումների հետևանքով Արցախում զոհվել է 320 հայ, հասցվել մեծ նյութական վնաս, տուժել են մշակութային ժառանգություն ներկայացնող հուշարձանները: Ընդհարումները տեղի են ունեցել Շուշի քաղաքում, Վարանդայում, Խաչենում, Զանգեզուրում, Դիզակում²: Թաթարա-հայկական ընդհարումներին հայ պատմագիտությունը էջեր է նվիրել, ուստի հոդվածում պատմաքննական վերլուծության փորձն է առաջնահերթվել, ինչն իրականացրել ենք ստորև:

Թաթարա-հայկական ընդհարումներում ընդգծված տեղ ունեն սոցիալ-տնտեսական հիմքերը: Բնիկ հայկական տիրույթում առկա եկվոր թաթար քոչվորությունը ինքնահաստատման միակ ուղին տեսնում էր հայության հասարակական-տնտեսական գերիշխող դիրքին հակադրելու մեջ: Ընդհարման պատճառների քննությունը սոցիոլոգիական հարթակում թույլ է տալիս օրինաչափորեն գնահատել ստեղծված իրավիճակը. հողագործական և անասնապահական մշակույթների համակեցությունն անհնարին էր, հետևաբար սա նաև տնտեսաձևերի անխուսափելի առճակատում էր: Հատկանշական է, որ Ղարաբաղի մահմեդական բնակչությունը դասեր էր ստանում իր թուրք

¹ Աղբյուրներում հիշատակվող թաթար անվան տակ պետք է հասկանալ կովկասյան թաթարներին: «Թաթարա-հայկական ընդհարումներ»՝ համարժեք է «թուրք-հայկական ընդհարումներ» անվանմանը:

² Բալայան Վ. Արցախի պատմություն, Երևան, 2002, էջ 275:

հավատակիցներից, որոնք վկայակոչում էին, որ նրանց աղքատության պատճառը հայերն են, հետևաբար պետք է տիրանալ նրանց ունեցվածքին, ուստի թաթարական խուժանը հրահրվում էր հարուստ ավարի գաղափարով: Հատկանշական է, որ այս ճանապարհին թաթարները չէին խորշում իրենց ցեղակիցներին թալանելուց: Կոտորածի հիմնական օջախները տվյալ դեպքում հայկական շուկաներն էին: Հատկանշական է նաև, որ թաթարա-հայկական ընդհարումները տեղի ունեցան Ղարաբաղի առավել հարուստ գյուղերում և Շուշի քաղաքում: Ինչ վերաբերում է Շուշի քաղաքին, ապա դեռևս 19-րդ դարի 50-60-ական թթ. Շուշին դարձել էր Անդրկովկասի առևտրական կապիտալի կուտակման կենտրոններից մեկը՝ շնորհիվ հայ նշանավոր առևտրական տների: 19-րդ դարի 80-ական թթ. Բաքվի վերածումը նավթարդյունաբերության խոշոր կենտրոնի նպաստել էր Ղարաբաղից ու Զանգեզուրից արտագնա աշխատանքի մեկնողների մեծ թվին¹: Արտագնա աշխատանքի մեկնողները մեծ թիվ էին կազմում Շուշի քաղաքից և հատկապես Վարանդա գավառից:² Այս հանգամանքը, եթե մի կողմից հանգեցրել էր տեղում արտադրության ծավալների կրճատմանը, մյուս կողմից նպաստել էր կապիտալի հոսքին, ինչն արտահայտվում էր այս շրջանների բնակչության բարեկեցությամբ: Հատկանշական է, որ Ղարաբաղում կենտրոնացված պատկառելի դրամագլուխը սպառում էր գտնում Բաքվում՝ նավթարդյունաբերության մեջ Արցախից տեղափոխված հայ առևտրականների ներկայացվածությամբ: Կապիտալի շրջանառությունը և կուտակումն էլ թերևս պատճառներից մեկն էր, որ ընդհարումները ծավալվեին Վարանդայում, Խաչենում և Շուշիում:

Թաթարա-հայկական բախումներն իրենց խորն արմատներն ունեն, մանավանդ կրոնական դրդապատճառների առումով: Հայ և թաթար բնակչության միջև կրոնական հողի վրա տեղի ունեցած դեպքերի առիթով ժամանակագրությունը մատուցում է բազմաթիվ փաստեր: Այս հանգամանքը ցարիզմի կողմից որպես պատճառ օգտագործվեց իր մեղսակցությունը քողարկելու համար: Վկայակոչենք սենատոր Կուզմինսկու 1905 թ. Բաքվի ջարդերի մասին հայտնի զեկույցից մի հատված. «...Բայց ինչքան էլ կողքից թվա նրանց միմյանց հետ համերաշխ լինելը, միևնույն է, մուսուլմաններին հատուկ կրոնական ֆանատիզմը և նրանց մշտական կախվածությունը հայերից առևտրական և փողային ոլորտներում միշտ արթնացնում են անվստահություն միմյանց նկատմամբ և թաքնված չարություն, որոնց արտահայտման համար հաճախ բավական է ամենաչնչին պատճառը՝ հայերի և թաթարների մեջ լուրջ բախումներ բռնկվելու համար...»³:

¹ Ստեփանյան Գ., Բաքվի հայությունը 19-րդ դարի երկրորդ կեսին, Երևան, 2010, էջ 127:

² Լալայան Ե., Երկեր, հ. 2, Արցախ, Երևան, 1988, էջ 136:

³ Միմոնյան Հր., Ազատագրական պայքարի ուղիներում, Երևան, 2003, էջ 143:

Թաթարա-հայկական ընդհարումները հրահրվեցին թուրքական ազգային հիմնարար գաղափարախոսությունների և ռուսական կայսերապետական քաղաքականության դաշինքի պայմաններում, ընդ որում վերջինս հետագայում միայն հասկացավ այդ գաղափարախոսության վտանգի լրջությունը: Հատկանշական է, որ Ցարական իշխանությունները, անկարող լինելով սեփական ուժերով ճնշելու տեղում վերելք ապրող հասարակական-քաղաքական միտքը, հետագայում հասկացան, որ ազգայնական ընդհարումները, հետագայում կարող են ուղղվել իրենց դեմ: Վերլուծելով ստեղծված իրավիճակը՝ կատարենք մի շարք նկատառումներ. թաթարա-հայկական ընդհարումները ժամանակագրական առումով ուղիղ համեմատական են Օսմանյան Թուրքիայում երիտթուրքերի «Միություն և առաջադիմություն» կուսակցության ձևավորման շրջանին, հետևաբար չենք բացառում այն հանգամանքը, որ այն մեծապես սնվել է այս աղբյուրներից: 1905-1906 թթ. թաթարա-հայկական ընդհարումների պատճառների հիմքում ընկած էին թուրքական ազգային հիմնարար գաղափարախոսությունները. օսմանիզմ, պանիսլամիզմ և պանթուրքիզմ: Համիսլամականության մեծ գաղափարներին հակադիր ռուսական կայսրությունն իսկույն կուլ տվեց խայծը և վերոնշյալ հանգամանքները հաշվի առնելով ակամա հայտնվեց համիսլամիզմի կողմնակիցների կողքին: Իրականում համիսլամականության գաղափարախոսներն իրենց նպատակներն ունեին այս հարցում. ցարիզմի պարտությունը ռուս-ճապոնական պատերազմում, հեղափոխական շարժումների աճը նպաստում էին նրան, որ համիսլամականության գաղափարախոսները կանխագրում էին ռուսական կայսրության մոտալուտ վախճանը, ուստի չէր բացառվում Օսմանյան Թուրքիայի գլխավոր դերակատարություն այս հարցում: Ռուս-ճապոնական պատերազմի ընթացքում Օսմանյան սուլթանական կառավարության ուղարկված գործակալների միջոցով Բաքվում ստեղծվել էր համիսլամական կազմակերպություն, որի առաջնորդները «Կասսայի» թերթի խմբագիրներն էին Ալի Մարդան Թոփչիբաշև, Ահմեդ Աղան, Իսրաֆիլ Հաջին, Հաջի Ասլան Աշուրով և այլն: Առաջադրված նպատակն էր մեծապես նվազեցնել քրիստոնյա տարրի թիվը մասնակի կրոնափոխության և ջարդերի միջոցով, քաղաքական նպաստավոր պայմանների դեպքում Կովկասից քրիստոնյաներին դուրս մղել դեպի Ռուսաստան, վերոնշյալ նպատակներին հասնելու համար միավորել Կովկասի շիա և սյուննի մահմեդականներին¹: Կովկասին տիրելու հեռագնա ծրագրերում Օսմանյան Թուրքիայի կողքին կանգնած էր Գերմանիան: Կ. Պոլսում գերմանացի սպաների օգնությամբ մշակված Կովկասի վերաբերյալ ծրագրի համաձայն, նախատեսվում էր մի կողմ թողնել Կարսի բերդը, Անդրկովկաս ներխուժել Բայազետի կողմից, անցնել Երևան, վերցնել Նախիջևանը, Ղարաբաղը, Բաքուն և հաստատվել

¹ Միմոնյան Հր., նշվ. աշխ., էջ 347:

Դադստանում: Իրենց առաջխաղացման ճանապարհին անհրաժեշտ էր համարվում ոտքի հանել 5-6 միլիոն կազմող մահմեդականներին: Օսմանյան թուրքերի ներխուժման ծրագիրն ընդհատվեց Պորտսմուտի անսպասելի հաշտությամբ¹: Այստեղ խնդիրը ոչ թե այս ծրագրի իրատեսականության աստիճանի մեջ էր, այլ նրա, որ հայ-թաթարական ընդհարումների առաջին տարում համիլամականությունը ձևափոխվեց համաթուրանականության, ինչն առավել վտանգավոր բնույթ ուներ Ռուսական կայսրության համար: Փաստորեն ընդհարումների հիմքում դարձյալ ընկած էր տարածքային խնդիրը, այսինքն թուրքական ազգային հիմնարար գաղափարախոսությունները նպատակ ունեին իրենց ճանապարհին ընկած ժողովուրդների հայրենագրկման ճանապարհով ընդարձակվել: Հատկանշական է, որ այս դեպքում թուրքական հիմնարար գաղափարախոսությունների իրականացումը համընկել էր Ռուսաստանի վարած անդրկովկասյան քաղաքականության հետ: Անհրաժեշտ է նշել, որ հրահրված ընդհարումները լայնածավալ բնույթ ստացան և այլևս հնարավոր չէր դրանք արգելակել կամ խաթարել:

Թաթարա-հայկական բախումներում ռուսական քողարկված դերակատարության և Շուշիի կոտորածից հետո Ռուսաստանի կողմից Գանձակի նահանգում գեներալ-նահանգապետ նշանակված վրացի Տակաշվիլու մասին ժամանակի նշանավորներից մեկը՝ ուսումնարանատեր Ներսես Մելիք-Ալլահվերդյանցը, գրում էր. «...Կարելի է ասել, որ այս մարդը իրաւ որ ցանկանում է խաղաղութիւն քցել մեր երկրում, բայց ցաւալին այն է, որ նախ սորա վարմունքը թուրքերի վերաբերեալ շատ թոյլ է, օրինակ. որքան էլ մեղաւոր թուրքը հանցաւոր է լինում, որքան էլ անմեղ հայը աշխատում է իրան արդարացնել, բայց և այնու նկատում է, որ նա ոչ միայն չի ուզում թուրքին պատժել, այլև ցանկանում է նրան արդարացնել և երկրորդն էլ, որքան էլ այս մարդը քարոզում է ամենուրեք, յորդորում է ժողովուրդին համերաշխ սիրով ապրել, թողնել իրանց անառակ ու անվայել գազանաբարոյ վարմունքը, սակայն դորա ասածները մնում են «ձայն բարբառոյ յանապատի»: Նա հեռանում է թէ չէ, կրկին թուրքերը, կարծես գիտութեամբ, թափվում են հայերի վրայ, կոտորում, թալանում ու կրակի են ենթարկում նրանց կայքը, որից ստիպուած հայերը դիմում են *ինքնապաշտպանութեան* և երբեմն էլ, հակառակ բոլորիս ցանկութեան, վրէժխնդիր են լինում թուրքերից, աւերելով նրանց գյուղերը»²:

Մեր կողմից ինքնապաշտպանության փաստի ընդգծումը պատահական չէ: Հատկանշական է, որ այս դեպքում հայության զոհերի մեծ թիվը պայմանավորված էր թուրք-թաթարական համագործակցությամբ, որն արտահայտվել էր ոչ միայն գաղափարական աջակցությամբ, այլ նաև

¹ Նույն տեղում, էջ 353:

² Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, Հայ առաքելական եկեղեցու Արքայի թեմը /1813-1933 թթ./ Երևան, 2001, էջ 444-445:

թուրքական զանգվածի գործուն ներգավաժությամբ: Հայ բնակչության համարժեք դիմադրությունը որոշակի առումով տուժում էր կապված զենքի սակավության, ինչպես նաև կազմակերպված դիմադրության հարցում հապաղելու մարտավարության հետ: Ինքնապաշտպանության բացակայության դեպքում հատվածական-տեղական բնույթ կրող ջարդերը կարող էին վերաճել իրական ցեղասպանության: Թուրքական ազգային հիմնարար գաղափարախոսությունների իրագործումը ենթադրող ցեղասպան քաղաքականության շարունակությունն իր դասական օրինակով չկարողացավ դրսևորվել Արցախում: Այս առումով տեղին է ընդգծել Արցախի տվյալ ժամանակաշրջանի իրադրությունը իրատեսորեն գնահատող մեր վավերագրի շարունակությունը, որտեղ, դիմելով կաթողիկոսին, Մելիք-Ալլահվերդյանցը նշում էր «...թուրքերը ներքևում-Կուր գետի ավերում, մեծ պատրաստութիւններ են տեսնում թէ՛ զենքի, թէ՛ հացի և թէ՛ մարդկանց, որպէսզի մօտ ապագայում իրանց վար ու ցանքսը վերջանալուց յետոյ, մեծ օրդուով թափուեն հայ զիւղօրայից վրայ և միանգամայն կործանեն, ջնջեն հայերին...», ապա շարունակում է. «իշխանութիւնը անտարբեր է դէպի այդ եղելութիւնը և մի գուցէ ցանկանում էլ է, որ թուրքերը իրագործեն իրանց նպատակը»¹: Այս դեպքում արցախահայության սխալն էր միասնական դիմադրության կազմակերպման ուշացումը: Զենք ձեռք բերելու նպատակով դրամական միջոցներ հատկացնելու համար հայ մեծահարուստներին ուղղված ղեկավար կորիզի դիմումներն անպատասխան էին մնում: Արցախահայության ազգային ինքնագիտակցության մակարդակի բարձրության մասին է խոսում հայ-թաթարական ընդհարումների ժամանակ արտաքին վտանգի դեմ համախմբվելու անհրաժեշտության գիտակցումը: Ինքնապաշտպանական կազմակերպված մարտերը խաչնում, Վարանդայում Ասկերանի կիրճում, Դիզակում ստիպում էին թաթարներին դիմելու «խաղաղութեան պատվիրակութեան» փորձված մեթոդին²: Հատկանշական և օրինաչափ է նաև այն երևույթը, որ հայության ինքնապաշտպանությունը արդյունավետ էր պատմական հայրենիքի կորիզում միայն: Թրքության համար հայությունը թիրախային խումբ է հատկապես այն վայրերում, որտեղ հայությունը, երբեմն նույնիսկ թվական գերակշռություն ունենալով, սոցիալական խնդիր էր լուծում և դրամատեր էր:

Հայ-թաթարական ընդհարումների ընթացքում, հատկապես Արցախում դասական իմաստով հայության «ցեղասպանություն» տեղի չունեցավ, հակառակը՝ հայությունը վերացրեց ձևավորված «զոհ լինելու բարդույթը»: Դ. Անանունին գրում է. «Հայը և թուրքը հավասարաբարժեք դարձան: Յեղական առավելության առասպելը ջնջվեց հրացանների որոտով: Դա՝ բացառապես

¹ Վաերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը /1813-1933 թթ./ էջ 444-445:

² Արշալույս, 1905, 31, 6 հոկտեմբերի

հայերի համար: Այս կետում թուրքությունը նահանջեց և պատկառանքով տոգորվեց հայության նկատմամբ»:¹ Հետևաբար տեղի ունեցածը «չստացված ցեղասպանություն» էր:

Անհրաժեշտ է հաշվի առնել այն իրողությունը, որ թաթարա-հայկական ընդհարումները պատմականորեն օրինաչափ էին. կայսրությունների գոյության վերջին փուլին բնորոշ են ազգամիջյան հակասությունները՝ որպես կայսերապետական փլուզվող համակարգը պահելու միջոց: Կայսերապետական դեկավար կենտրոնի նման մարտավարությունը կարճաժամկետ ծրագիր էր. օրինաչափ երևույթը կիրառվեց նաև ցարական ծայրագավառներում և կանխատեսելիորեն քաղաքական հակադարձ ազդեցությունն ունեցավ կայսրության կազմալուծման գործում: Յարական Ռուսաստանի դեպքում այս ընդհարումները պատճառ հանդիսացան, որ հասարակական-քաղաքական շրջանակներում առաջադիմական գաղափարախոսություններն առավել մեծ թափ ստանան՝ իրենց գաղափարներով սնելով համակիր լայն զանգվածներին:

Հռովաժի խնդիրն է նաև ցույց տալ, որ պատմական այս ժամանակաշրջանում «թուրքական ազգային հիմնարար գաղափարախոսությունները» տրամաբանական զուգորդության մեջ չեն հայության՝ «ցեղասպանված ժողովուրդ» լինելու եզրույթին: Ուսումնասիրությունը Արցախի օրինակով ցույց է տալիս, որ սրանք բախումներ էին, որոնց ընթացքում հայությունը նվազ ռազմական միջոցներով, սակայն ինքնապաշտպանության կազմակերպված, ծրագրված եղանակներով արժանի հակահարված տվեց կայսերական զինապահեստներից սնված թուրք-թաթարական ուժերին: Պատմագիտության մեջ այն անհրաժեշտ է որակել որպես «թաթարա-հայկական ընդհարումներ», ինչպես նաև ժամանակաշրջանը չբնութագրել «ցեղասպանություն» եզրույթի սահմաններում:

¹ Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. II, /1901-1918/, էջ 263:

Ամփոփում

Հոդվածում իրականացվել է 1905-1906 թթ. Արցախում տեղի ունեցած թաթարահայկական ընդհարումների պատմաքննական վերլուծությունը: Որպես ընդհարումների պատճառ ընդգծվել են սոցիալ-տնտեսական, կրոնական հիմքերը, թուրքական ազգային հիմնարար գաղափարախոսությունների և ռուսական կայսերապետական քաղաքականության դաշինքի առկայությունը: Հատկանշվել են փայլուն ինքնապաշտպանության դեպքերը, որոնց բացակայության դեպքում ջարդերը կարող էին վերաճել իրական ցեղասպանության: Փաստորեն Արցախում դասական իմաստով հայության <<ցեղասպանություն>> տեղի չունեցավ, հակառակը՝ հայությունը վերացրեց <<զոհի>> կարգավիճակում լինելու բարդույթը:

Tatar-Armenian Clashes in Artsakh in 1905-1906:

Historical-Research Analysis

Nelly Baghdasaryan

Summary

Key words: *Tatar-Armenian clashes, socio-economic causes, religious causes, Artsakh, Shoushi, Varanda, Khachen, Dizak, Pan-Turkism, self-defense, Russia, Ottoman Turkey*

The article represents a historical-research analysis of Tatar-Armenian clashes having in Artsakh in 1905-1906. Socio-economic, religious bases and the presence of the alliance of Turkish national fundamental ideology and Russian imperialistic policy as causes of collisions have been outlined. Bright cases of self-defense in absence of which pogroms could be escalated into a real genocide, have been specified. In fact, the Armenian Genocide in the classical sence has not taken place, and conversely, Armenians came out of the position of the victim.

Татаро-армянские столкновения в Арцахе в 1905-1906 гг.:

Историко-исследовательский анализ

Нелли Багдасарян

Резюме

Ключевые слова- *Татаро-Армянские столкновения, социально-экономические причины, религиозный мотив, Арцах, Шуши, Варанда, Хачен, Дизак, пантюркизм, самооборона, Россия, Османская Империя*

В статье проводится историко-исследовательский анализ татаро-армянских столкновений в Арцахе в 1905-1906 годах. В качестве причин столкновений были подчеркнуты социально-экономические, религиозные основы, наличие союза турецкой национальной фундаментальной идеологии и русской империалистической политики. Уточняются блестящие случаи самообороны, в отсутствие которых погромы переросли бы в реальный геноцид. Фактически, “геноцид” армян в Арцахе в классическом смысле не состоялся, наоборот, армяне вышли из положения “жертвы”.

**2014 թ. ՄԻՆՋԱՐԻ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՔՅԱՆ ԵԶՂԻՆԵՐԻ
ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԲՈՒՆԱՐԱՐՔՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Մարգիս Գրիգորյան

ԵՊՀ

***Բանալի բառեր – եզդիներ, ցեղասպանություն, Իսլամական պետություն,
Սինջար:***

Եզդիներն Իրաքում

Եզդիներն իրենց յուրահատուկ հավատամքի պատճառով պատմական տարբեր փուլերում ենթարկվել են բռնությունների և բնաջնջումների¹: 2014 թ. օգոստոսին *եզդիական համայնքն Իրաքում նույնպես անմասն չմնաց ճնշումներից և հալածաքննություններից*: Եզդիներն Իրաքում հաշվվում են մոտ 560.000 և համարվում են երկրորդ ամենամեծ կրոնական համայնքը քրիստոնյաներից հետո²: Իրաքի հյուսիսում ծայրահեղ արմատական գաղափարներով առաջնորդվող իսլամականների կողմից 2014 թ. կեսերից սկսված բռնությունները եզդիների դեմ ուղղված հերթական ցեղասպանական գործողություններն էին³:

Իսլամականների կողմից 2014 թ. Իրաքի հյուսիսում իրականացրած ռազմական գործողությունները: Իրաքյան եզդիաբնակ շրջանները ԻՊ-ի զինյալների թիրախում

2014 թ. սկզբից իսլամականների վերահսկողության տակ անցան իրաքյան սուննիաբնակ ալ-Անբար նահանգի որոշ հատվածներ, իսկ 2014 թ. հունիսի սկզբից իսլամականները լայնամասշտաբ ռազմական գործողությունների անցան Իրաքի հյուսիսային շրջաններում. հունիսի 10-ին ԻՇԻՊ-ին հաջողվեց ամբողջությամբ իրեն ենթարկել Իրաքի երկրորդ խոշոր քաղաքը՝ Մոսուլը: Հուլիսին իրաքյան

¹St' u Travis H., Genocide in The Middle East, The Ottoman Empire, Iraq and Sudan. Carolina Academic Press; 1st edition, 2010, pp. 242-243, 544.

²Sa'ad Salloum, Minorities in Iraq. Memory, Identity and Challenges, Masarat for Cultural and Media development, 2013, pp. 66-79.

³**ՄԱԿ** Գլխավոր ասամբլեայի 1948 թ. [դեկտեմբերի 9-ին](#) ընդունված Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայի 2-րդ հոդվածում նշվում է՝ Սույն Կոնվենցիայում ցեղասպանություն նշանակում է հետևյալ գործողություններից ցանկացածը՝ կատարված ազգային, էթնիկական, ցեղական կամ կրոնական որևէ խմբի, որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ. (ա) այդ խմբի անդամների սպանությունը, (բ) այդ խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտավոր վնաս պատճառելը և այլն (St' u http://www.un.org/res/un%20Treaties/III_1.pdf):

Մինջար քաղաքը (համարվում է տարածաշրջանի խոշոր եզդիաբնակ կենտրոն¹⁾ նվաճելու իսլամականների տարածած հայտարարություններին զուգահեռ իրաքյան քրդական զգալի թվով զորամիավորումները (փեշմերգա), ներխուժեցին Մինջար²: 2014 թ. օգոստոսի 2-ին ԻՊ-ի³ զինյալները, անցնելով հարձակման իրաքյան հյուսիսային բնակավայրերի նկատմամբ՝ իրենց վերահսկողությունը հաստատեցին հիմնականում եզդիաբնակ և քրիստոնեաբնակ մի շարք բնակավայրերի նկատմամբ՝ անմիջապես սպառնալով եզդիաբնակ Մինջարին:

Սկզբնական շրջանում եզդիներից կազմված ինքնապաշտպանական խմբերը պայքարեցին ԻՊ-ի զինյալների դեմ, սակայն որոշ ժամանակ անց զինամթերքի սպառման հետևանքով Մինջարի հարավային որոշ ինքնապաշտպանական խմբեր ստիպված եղան նահանջել: Օգոստոսի 3-ին Մինջարի հարավային հատվածն անցավ ԻՊ-ի վերահսկողության տակ: Եզդիները ստիպված հեռացան դեպի լեռներ, իսկ չհեռացողներին իսլամականները սպանեցին: Իրաքյան քրդական փեշմերգան, որը մինչ այդ իրականացնում էր եզդիաբնակ տարածքների պաշտպանությունը, առանց կովի հեռացավ այս տարածքներից՝ որևէ կերպ չօգնելով եզդի աշխարհագորին դիմակայելու իրենց վրա հարձակվող իսլամականներին⁴: Օգոստոսի 3-ից Քուրդիստանի ինքնապաշտպանական ուժերն ու սիրիական ԺՊԶ-ի (Ժողովրդական պաշտպանության ջոկատներ) զինյալներն անցան Մինջարի պաշտպանությանը: Վերջիններին հաջողվեց անվտանգության միջանցք ստեղծել, որպեսզի մազապուրծ եղած եզդիները կարողանան պատսպարվել լեռներում: Օգոստոսի 8-ին քրդական ստորաբաժանումները հակազդոհի անցան իսլամականների ուղղությամբ սիրիական ալ-Ջազիրայի և իրաքյան Մինջար լեռան կողմից, որի հետևանքով բացված միջանցքով մեծ թվով եզդիներ կարողացան դուրս գալ ռազմական գործողությունների գոտուց⁵: Սիրիայից և Թուրքիայից Իրաքի այս հատվածում հայտնված ՔՄԿ-ի (Քուրդիստանի աշխատավորական կուսակցություն) և դրա ռազմական թևը հանդիսացող ՔԴՄ-ի (Քուրդիստանի դեմոկրատական միություն) զինյալների շնորհիվ մոտ 20.000 եզդիներ կարողացան անվտանգ դուրս գալ ռազմական գործողությունների շրջանից՝ տեղափոխվելով Սիրիա և Թուրքիա:

¹Տե՛ս Над езидами нависла угроза геноцида, <http://ezdixannews.com/nad-ezidami-navisla-ugroza-genocida/>, 17.06.2014., (Մուտք՝ օգոստոսի 3, 2014 թ.):

²Տե՛ս Исторический момент для Шангала, <http://ezdixannews.com/istoricheskij-moment-dlya-shangala/>, 13.06.2014., (Մուտք՝ օգոստոսի 9, 2014 թ.):

³ԻՇԻՊ-ը 2014 թ. հունիսի 29-ին իր կողմից վերահսկվող Իրաքի և Սիրիայի տարածքներում հայտարարեց Իսլամական խալիֆայության ստեղծման մասին՝ վերանվանվելով «Իսլամական պետություն»:

⁴Ջագրոս, օգոստոս, 2014, թիվ 8(84), Հայաստանի մայրաքաղաք Երևանում անցկացված հանրահավաքը, էջ 4:

⁵Ջագրոս, դեկտեմբեր, 2014, թիվ 11-12(87-88), Ժողովրդական ինքնապաշտպանական ուժերի գլխավոր հրամանատար Մուրատ Կարայիլան. «Մեր պարտքն է փրկել Շանգալը»:

Օգոստոսի 8-ին ԻՊ-ի զինյալները հարձակվեցին իրաքյան Քուրդիստանի մայրաքաղաք Էրբիլի ուղղությամբ: Նույն օրը ԱՄՆ-ի կողմից ղեկավարվող միջազգային կոալիցիոն օդուժն առաջին հարվածները հասցրեց Իրաքի հյուսիսում լայնամասշտաբ ռազմական հարձակման անցած իսլամականների դիրքերին, ինչը ստիպեց իսլամականներին դադարեցնել հարձակումն Էրբիլի ուղղությամբ՝ ծրագրելով երկրորդ խոշոր հարձակումը իրաքյան հյուսիսային հիմնականում եզդիաբնակ գյուղերի նկատմամբ: Իրենց վրա հարձակվող իսլամականներից փրկվելու համար եզդիներից շատերը լքեցին իրենց բնակավայրերը՝ շարժվելով առավել ապահով իրաքյան Քուրդիստան, եզդիների մի ստվար հատվածն էլ բարձրացավ Սինջար լեռը՝ պատսպարվելով ԻՊ-ի զինյալներից: Իսլամականների կողմից գերեվարված եզդիներին առաջարկվեց հանձնել զենքն ու ընդունել իսլամ, իսկ շատերին էլ ուղղակի սպանեցին:

Դեռևս հստակ չէ իսլամականների կողմից Իրաքի հյուսիսում սպանված եզդիների թիվը: Ըստ որոշ գնահատականների՝ 2014 թ. օգոստոս ամսին սպանվել են մոտ 500 եզդիներ, 100-ից ավել եզդի կանայք վաճառվել են ստրկության, մոտ 40.000 եզդիներ տարհանվել են իրենց բնակավայրերից¹: Սակայն սպանված եզդիների թիվն անհամեմատ ավելի մեծ կարող է լինել՝ հաշվի առնելով, որ ԻՊ-ից ազատագրված իրաքյան տարածքներում հայտնաբերվում են եղբայրական գերեզմաններ, որտեղ թաղված են մեծ թվով եզդիներ, իսկ իսլամականների տիրապետության տակ հայտնված բազմաթիվ եզդիների ճակատագրեր մնացել են անհայտ: 2015 թ. ապրիլի 1-ի դրությամբ իրաքյան եզդիաբնակ որոշ բնակավայրեր դեռևս գտնվում են ԻՊ-ի վերահսկողության տակ, իսկ Սինջար լեռան վրա դեռևս շարունակում են մնալ մեծ թվով եզդիներ, որոնց կյանքը նույնպես վտանգված է իսլամականների կողմից:

Եզրակացություն

- 2014 թ. օգոստոս ամսին իսլամականների կողմից Իրաքի եզդիների հանդեպ բռնությունները ցեղասպանություն էր: Այն ուղղված էր Իրաքի այլադավան էթնոկրոնական փոքրամասնություններից մեկին՝ եզդիներին բնաջնջելուն և Իրաքի այս հատվածը եզդիներից մաքրելուն:

- Իսլամական ծայրահեղ արմատական գաղափարներով առաջնորդվող ԻՊ-ի կողմից Իրաքի եզդիները դիտարկվեցին որպես «անհավատներ», որոնց իսլամականները կանգնեցրին երկընտրանքի առաջ՝ ընդունել իսլամ, կամ սպանվել: Իսլամականները նման վարքագծով փորձում են իրենց կողմից վերահսկվող տարածքներում ձեռքբազառվել անցանկալի ոչ մուսուլման էթնոդավանական փոքրամասնություններից:

- Իսլամականների նման վարքագիծը ձեռնտու էր ներիրաքյան որոշ ուժերին, մասնավորապես ՔՌԿ-ին: Վերջինը երկար տարիներ փորձել է Իրաքի

¹Rasheed A., Islamic State kills 500 Yazidis, burying some alive, claims human rights minister, The Sydney Morning Herald. Retrieved, August 11, 2014.



հյուսիսային հատվածները բնակեցնող եզդիների թվաքանակը քաջանելուն համար նպատակաուղղված քաղաքականություն իրականացնել:

• Էթնիկ փոքրամասնությունների համար Իրաքում ստեղծվել է վտանգավոր իրավիճակ: Ասվածի համատեքստում իրաքյան զարգացումներն ընդհանրապես և իսլամականների կողմից վերահսկվող իրաքյան տարածքներում մասնավորապես միտում ունեն վերածվելու էթնո-դավանաբանական հակամարտության, որը դառնում է լուրջ սպառնալիք իրաքյան ազգային փոքրամասնությունների, տվյալ դեպքում եզդիների համար:

Ամփոփում

Եզդիներն իրենց յուրահատուկ հավատամքի պատճառով պատմական տարբեր փուլերում ենթարկվել են բռնությունների: 2014 թ. օգոստոս ամսին եզդիները նորից կանգնեցին բնաջնջման վտանգի առաջ «Իսլամական պետության» զինյալների կողմից: Իրաքում ստեղծված իրավիճակը դեռևս լուրջ սպառնալիք է իրենից ներկայացնում երկրի ազգային փոքրամասնությունների, այդ թվում եզդիների համար:

Реальность Синджара 2014г. в контексте насилия против иракских езидов

Саркис Григорян

Резюме

Ключевые слова - езиды, геноцид, Исламское государство, Синдjar.

По причине своеобразного вероисповедания, езиды на разных исторических этапах подвергались насилию. В августе 2014 г. езиды вновь столкнулись с опасностью физического уничтожения со стороны боевиков «Исламского государства». Создавшаяся в Ираке ситуация пока еще представляет серьезную угрозу для национальных меньшинств, в том числе и езидов.

The Reality of Sinjar 2014 in the Context of Violence against Iraqi Yazidis

Sargis Grigoryan

Summary

Key words – Yazidis, genocide, Islamic State, Sinjar.

For their peculiar religion Yezidis were subjected to violence in different historical stages. In August 2014 the Yezidis once again were faced with the physical destruction danger by the fighters of the "Islamic state." The situation in Iraq still remains dangerous for the ethnic minorities, including Yezidis of the country.

**ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱԿԱՐԳՎԱԾ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ
Լենա Սուլեյմանյան**

Մեսրոպ Մաշտոց Համալսարան, ԼՂՀ

Բանալի բառեր. ցեղասպանություն, կանայք, վկայություններ, բռնություններ, դաջվածքներ, հանցագործություն

«Մայրիկիս...

Անհունի աղջամուղջին մեջ յիշատակդ իսկ թառամելու, առ յաւէտ կորսուելու գաղափարէն զարհուրած՝ փնտռեցի քեզ, մայր իմ... Թափառեցայ երկրէ երկիր, անապատէ անապատ: Անցայ մեր տարաբախտ ու ավերակոյտի վերածուած հայրենիքի քաղաքներն ու գիւղերը, սարերն ու ձորերը... Ջուր եղան իմ բոլոր որոնումները... Դառնօրէն ռդբացի ի տես մարդկային պատմութեան մեջ տեղի ունեցած արհաւիրքներու այս ամենագարհուրելիէն: Տատանումներ ունեցայ մինչեւ յուսահատութեան անփառունակ ոլորտները տանող, բայց կսկիծը ռդբերգութեան ահաւոր տեսարանները ցնցեցին իմ հոգին, ուժ ու կորով ներշնչեցին ինձի՝ ապրելու, կեանքը շարունակելու մարմաջը պարտադրելով: Թերեւս անոր համար, որ առիթը ունենամ քեզի հանդէպ, մայր իմ, եւ քեզ հետ բիրաւոր հայ մայրերու, որոնք խաչուեցան հայ գողգոթային վրա, իմ՝ հայ զաւակի՝ տարրական պարտականությունս կատարելու... որեւէ ձեւով յաւերժացնելու յիշատակը թափուած արեան գետերու...»

Սողոմոն Թեհլիրյան¹

Ցեղասպանության դարաշրջան անվանյալ 20-րդ դարն ամենաանողորձ գտնվեց հայ ժողովրդի հանդեպ: Արդեն իսկ քաղաքակիրթ համարվող արդյունաբերական նոր ժամանակաշրջանում Օսմանյան Թուրքիայում գործնական բնույթ է ստանում «Թուրքիան թուրքերի համար» սկզբունքը: Այս համատեքստում, իրավամբ, համիդյան բարենորոգումների խոստումները՝ հայերին Թուրքիայի հպատակի նոր արտահագուստ հագցնելու ձեռնարկումները, երեսպաշտ խաղեր էին, մանրագնսին դիտարկված, համակարգված մեծագույն ոճիրի նախերգանք:

Աշխարհի վերաբաժանման մոլուցքով տարված գերտերությունները չափազանց շատ էին զբաղված, որ թույլ չտային ամբողջ պատմության մեջ «հիվանդ մարդ» որակված Օսմանյան Թուրքիային՝ հրաժարվելու արարող, հենց նույն Թուրքիային կերակրող մի ամբողջ ժողովրդի ցեղասպանությունից:

Դեռևս 1902թ. հուլիսին Բյուսեղում գումարված «Հայաստանի բարեկամների կոնգրեսում» մասնակիցները նորից կանգ առան թուրքական կառավարության արարքների վրա և ընդգծեցին, որ բանը հասնելու է հայերի համատարած բնաջնջմանը, ինչպես մտադիր է թուրքական կառավարությունը, իսկ Եվրոպան

¹ Թեհլիրյան Ս, Վերհիշումներ /Թալեաթի ահաբեկումը/, Եր., 1993, էջ 25-26:

չի պարտավորվում միջամտել¹: Թուրքերի Բալկանյան թերակղզուց վտարվելու, ընդամին նաև մարդկային և նյութական ահռելի կորուստներ կրելու հանգամանքը ոչ միայն լրջորեն սթափեցրեց, այլև Իթթիհադի ղեկավարության համար իսկական ցնցման պատճառ հանդիսացավ: Այս հանգամանքը ստիպեց երիտթուրքերին փնտրելու ելքեր ու միջոցներ, ու թույլ չտալ նմանօրինակ գործընթացներ նաև ասիական Թուրքիայում: Արդյունքը եղավ ռազմատենչ ազգայնամոլության հանդես գալը, որը ձգտում էր հայկական հարցը լուծելու ուժի մեթոդով²: «Մենք՝ հեղափոխականներս, հանուն թուրք ազգի և օսմանյան պետության ազգային իդեալների՝ ստեղծեցինք Իթթիհատի իշխանությունը: Մեր ազգային մշակույթում մենք կարող ենք հանդուրժել միայն թուրքական սերմի ծաղկումը: Մենք պարտավոր ենք մեր հայրենիքը մաքրել անցյալից մնացած ազգերից, արմատախիլ անել նրանց, ինչպես մոլախոտերի»³, - ասում է Իթթիհատական կուսակցության տեսաբան, դոկտոր Բեհաեդդին Շաքիրը: 1910թ. արդեն իսկ կայսրության ոչ իսլամ ժողովուրդների մահավճիռն արձակված էր. մնագործի սառնասրտությամբ նախագծվում ու մշակվում էր բնաջնջման գործընթացը: Պատեհ առիթը հանդիսացավ Առաջին աշխարհամարտը: Պատերազմի նախօրեին Օսմանյան կայսրությունում ապրում էր երկու միլիոնից ավելի հայ: Շուրջ մեկուկես միլիոն հայ սպանվեց 1915-1923 թթ., իսկ մնացյալ հատվածը կա՛մ բռնի կերպով հավատափոխ եղավ, կա՛մ ապաստան գտավ տարբեր երկրներում⁴:

Հայերի Ցեղասպանությունը գործադրվեց փուլերով. **երրորդ փուլը** նշանավորվեց կանանց, երեխաների, ծերերի տեղահանությամբ ու ջարդերով: Ցեղահանության ընթացքում հարյուրհազարավոր մարդիկ սպանվեցին թուրք զինվորների, ոստիկանների, քրդական ավագակախմբերի ու տեղի բնակչության կողմից, մյուսները մեռան սովից, համաճարակային հիվանդություններից: Հազարավոր կանայք ու երեխաներ ենթարկվեցին բռնության: Տասնյակ հազարավոր մարդիկ բռնի կերպով հավատափոխ եղան՝ դառնալով մուսուլման:

Ժամանակի բոլոր ականատեսները, օտարերկրյա պաշտոնյաները, միսիոներները իրենց վկայություններում առանձին ցավով են խոսում հայ կանանց զրկանքների, անմարդկային խոշտանգումների մասին: Ցեղասպանության մոռացված կամ անտեսված այս երեսի շուրջ վերջերս կարևոր ուսումնասիրություններ են կատարվում, որոնք ի հայտ են բերում նոր փաստեր: Ուսումնասիրությունները հրապարակ են հանում հայ կանանց՝ դժվարություններով լեցուն և մոռացված պատմությունները: Հայ կանանց գողգոթան սկսվեց տեղահանությամբ՝ որպես իրողություն, ժամանակաշրջանի և անասելի ցավի ու

¹ Ֆիրբուլխեր Հ., Հայաստանը 1915-ին, Եր., 2000, էջ 98:

² Дадрян В., История армянского геноцида, Ер., стр. 253.

³ Մահակյան Ռ., Ցեղասպանության պատմությունից, Եր., 1990, էջ 127:

⁴ Տե՛ս՝ www.genocide-museum.am/arm

գրկանքի պարտադրմամբ անցավ «անլուտ» վկայության փուլը, և նորագույն շրջանում հետադարձվեց տատ-թռներ հիշողությունների վերաբժնորմամբ:

Իրողություն

Այսօր, երբ հետադարձ հայացքով դիտում ենք տեղահանությունների և կոտորածների պատկերը, հստակորեն տեսնում ենք դրա ծրագրված լինելը՝ համատարած բնաջնջում, սպանդի ամենաեժան և դյուրին միջոցների կիրառում, աշխարհի հայացքից ոճի ջանադիր քողարկում: Ֆրանսիացի հայտնի պատմաբան Ռենե Պինոն իրավացիորեն նկատում է. «Կանանց, երեխաների, ծերերի տեղահանությունը խարդախորեն քողարկված մահվան դատավճիռ էր: Կոտորածը տեղում ավելի մարդկային կլիներ: Համենայնդեպս նա մարդկանց կազատեր սարսափելի տառապանքներից»¹: «Գերմանական ժողովրդի պաշտոնական ներկայացուցիչներին» իր դիմումում դոկտոր Մարտին Նիպագեն գուր էր կոչ անում իր կառավարությանը՝ միջամտելու կես միլիոն կանանց ու երեխաների մահի կանխելու համար²: Ցեղասպանության ականատես գերմանացի սպա Հայնրիխ Ֆիրբուխերը անթաքույց կսկիծով պիտի գրեր. «Մի ամբողջ ժողովրդի բնաջնջումը կանանց ու երեխաների գիտակցված սպանողով – այս առաջադիմության համար բարբարոս անցյալը չէր «հասունացել»: Բոլոր մեկնաբանությունների փորձերի դեպքում, սպանության հաճույքի, թալանի տենչի, կրոնական աստվածության, իշխանասիրության և բթամտության գործոնների գործարկման դեպքում դեռ այնքան անըմբռնելի բան է մնում, որ մեզ համար 1915թ. Ողբերգությունը պիտի ներկայանա որպես պատմության բոլոր հանելուկներից ամենաարյունահեղը և ամենասահմոկեցուցիչը»³: Ուշագրավ են հայ ժողովրդի մեծ բարեկամ Յ.Լեփսիուսի տեղեկագրերը. «Թուրքերը կատարյալ զառանցանքի մեջ են, անկարելի է նկարագրել այն նեղությունները, որոնք կրում են տարագիրները: Օրակարգում դրված են՝ բռնի պղծություններ, կանանց և երիտասարդ աղջիկների առևանգումներ, բռնադատված կրոնափոխություն: Մեծ թվով ընտանիքներ իսլամությունն ընդունել են իրական մահից ազատվելու համար»⁴: Անպատմելի այս ողբերգությունը ցնցել էր օտարերկրյա միսիոներներին, նրանց այն հարցին, թե «եթե որոշել էք կոտորել նրանց, ինչու իրենց գյուղերում չեք դա անում: Ինչի համար են այս տաժանելի տառապանքները, թուրքերը պատասխանել են. «Այդպես ճիշտ է, նախ պետք է ստորագցնել»⁵:

Հայ կանանց ահասարսուռ գողգոթայի մասին են վկայում գերմանա-ամերիկյան տեղեկագրերը. «Թուրքերն արդեն երեխաներից ու դեռահաս

¹ Տես՝ Սահակյան Ռ., նշվ. աշխ., էջ 130:

² Նույն տեղում՝ էջ 135:

³ Ֆիրբուխեր Հ., նշվ. աշխ., էջ 59-60:

⁴ Լեփսիուս Յ., Հայ ժողովրդի ջարդերը, Եր., 2003, էջ 15-16:

⁵ Զոմմեր Է., Ճշմարտությունը աշխարհամարտի ժամանակ Թուրքիայում հայ ժողովրդի կրած տառապանքների մասին, Եր., 2002, էջ 40:

աղջիկներից ամենագեղեցիկներին ջուկել-վերցրել են: Նրանք թուրքերին պիտի ծառայեն իբրև գերիներ, եթե ավելի ստորին նպատակների չծառայեն»¹: Պարսիկ պատմաբան, գրող Իսմայիլ Ռայինը անհուն ցավակցությամբ նկատում է. «Ներկա սերունդը հիտլերյան Գերմանիայի համակենտրոնացման ճամբարներում կիրառած, հրեահալած դաժանությունների մասին շատ բան է կարդացել և լսել, սակայն այս սերունդը հազիվ թե իմանա, որ հայերի հալածանքը օսմանյան Թուրքիայում ավելի դաժան ու անմարդկային բնույթ է ունեցել, քան հրեաներինը՝ ֆաշիստական Գերմանիայում»²:

Պահպանվել է ժամանակի ամենահայտնի հայ գրողներից Զաբել Եսայանի՝ Փարիզի համաժողովում հայկական պատվիրակությունը ներկայացնող Պողոս Նուբար փաշային ուղղված զեկույցը, որտեղ պատմվում է այն բռնությունների մասին, որոնց ենթարկվել են կանայք 1915թ. և հետագայում:

Զ.Եսայանը գրում է, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը պատերազմը սկսվելուց ի վեր համակարգված ձևով ոչնչացնում է ոչ մուսուլման ժողովուրդներին, երիտասարդ կանանց ու երեխաներին բռնի փախցնում են, նրանց թիվը թեն հստակ չէ, սակայն երկու հարյուր հազարից ավելի է: Եսայանը նշում է, որ այս անձանց մեծամասնությունը եղել է հայ, թեն նրանց հետ եղել են նաև բազմաթիվ հույն, ասորի և նեստորական կանայք ու երեխաներ: Հայտնելով, որ վերոհիշյալ կանանց և երեխաներին տարբեր ձևով են փախցրել, գրողը դասակարգում է.

1. Բազմաթիվ կանանց և երեխաների փախցրել են իրենց բնակության քաղաքներից և գյուղերից: Խուճապի ժամանակ անտեր մնացած երեխաներին վայրկենապես փախցրել են, երիտասարդ աղջիկներին՝ բռնությամբ տարել /թիրախում հայտնվել էին հատկապես մեծատուն հայ ընտանիքների աղջիկները/:

2. Տղամարդկանց առանձնացրել են կանանցից և երեխաներից: Տղամարդկանց անխղճորեն սպանել են: Իսկ երեխաներին, երիտասարդ կանանց և աղջիկներին գողացել են ոճրագործները: Նրանք, ովքեր կարողացել են փախչել այս անպատվությունից, ճանապարհներին են սպանվել: Քարավաններին ուղեկցող ոստիկանները նրանց մեկ-երկու օր քայլել տալուց հետո ջրի մոտ կանգնեցնում էին, սակայն արգելում էին ջուր խմել: Ջուր խմելու գինը չգիտեմ քանի երիտասարդ աղջկա իրենց հանձնելն էր: Այս սարսափելի մեթոդը կիրառվել է համակարգված ձևով:

3. Երբ այս խեղճերը հասնում էին որևէ հավաքակալանի, ենթարկվում էին քրդերի, չերքեզների, չեչենների ու ռումելիական քոչվոր մուսուլմանների հարձակումներին, ոստիկանները աչք էին փակում սրա վրա: Նրանց վրա ինչ որ

¹ Լեփսիուս Յ., նշվ. աշխ., էջեր 27, 33, 96, 124, 128:

² Ռային Իսմայիլ, Հայերի կոտորածները, Եր., 1999, էջ 69: Աշխատության երրորդ գլխի ՄԱՀՎԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ մասում մանրամասն ներկայացնում է հայ կանանց կրած տառապանքների մասին, էջ 71-84:

կար, վերցնում, տանում էին, անգամ գողանում էին նրանց վրայի հագուստը: Որպեսզի մյուսներին դաս լինի, մահապատիժներն իրականացնում էին մյուս կանանց աչքի առաջ:

Զեկույցում տեղ է գտել նաև զանգվածային բռնաբարությունների մասին հաղորդումը: Այն կինը, որին մուսուլմանը քանի դեռ չէր տարել կամ քանի դեռ չէր վաճառվել, ու, այդպիսով, ճակատագիրը դեռ անհայտ էր, զանգվածային բռնաբարության հավանական գոհն էր¹:

Քրդական արմատներով թուրք լրագրող Մուճկան Հալիսը Հայոց ցեղասպանությանը նվիրված հոդվածում գրում է. «Հայոց ցեղասպանության մինչ օրս անտեսված հուշերից մեկը սեռական կողմն է, այսինքն՝ ցեղասպանության կանացի դեմքը: Այ՛ն, ցեղասպանությունը հայ կանանց համար կրկնակի ցավ էր, որովհետև նրանց համար այն միաժամանակ բռնաբարություններ, բռնի ամուսնություններ, ստրկացում էր նշանակում»: Հեղինակը հիշատակում է նաև գերիների շուկաների առկայության մասին. հայ կանանց աշխատեցնում էին իբրև սեռական հարաբերությունների ստրուկներ: Թուրքիայում 1909թ.-ից պաշտոնապես փակված ստրուկների շուկաները մինչև պատերազմի ավարտը հայ կանանց և երեխաների համար բացվեցին»²:

Այսպիսով՝ Կ.Պոլիսը սրբազան պատերազմ էր հայտարարել և դրանով իսկ սանձազերծել մահմեդականների կատաղությունը քրիստոնյաների հանդեպ: Այն ժամանակ «ցեղասպանություն» հասկացությունը գոյություն չուներ: Սիրիական անապատներում, սեփական հայրենիքից վտարված, հող ու ջրից, ամենափոքր իսկ մարդկային գոյությունից զրկված հայ կանայք հարության հույսով, ստանձնել էին խաչի ճամփան: Հայ և օտարագրի ականատեսների վկայությունները գալիս են կրկին համոզելու, որ մարդկության դեմ իրագործված առաջին մեծ ոճրագործությունը սոսկ ցեղի սպանություն չէր, Թուրքիան հարձակվել էր հայ ավանդական ընտանիքի ինստիտուտի, ավանդական բարոյականության վրա: Օրակարգում դրված էր հայ գենի ոչնչացումը, այս գաղափարի իրագործմանն էր ուղղված հենց հայ կանանց՝ իբրև սերնդագործողների հանդեպ, անմարդկային ու քստմենտի բռնությունների մեթոդը:

Հետագա ժամանակներում ոճիրի անպատժելիությունը նպաստել է նրան, որ պատմության մեջ զանգվածային սեռական բռնությունները բազմիցս կրկնվեն: Խնդրի նկատմամբ միջազգային հանրության և մասնագետների հետաքրքրությունը մեծացավ նախկին Հարավսլավիայում /1991-1994թթ./ և Ռուանդայում /1994թ./ տեղի ունեցած բռնություններից հետո: Փորձելով սահմանել դրանց պատճառներն ու նպատակները՝ որոշ հեղինակներ զանգվածաբար և պարբերաբար իրականացվող բռնաբարությունները դիտար-

¹ Տես՝ akunq.net/am, 100 տարի անց գտնվել է զեկույց, որը բովանդակում է 200 հազարից ավելի հայի սպանությունը:

² Տես՝ horizonweekly.ca, Հայոց ցեղասպանությունն ու հայ կանանց կրկնակի ցավը. Քուրդ լրագրողի անդրադարձը:

կում են որպես ցեղասպանության իրականացման միջոցներից մեկը և մեկնաբանում որպես մշակված քաղաքականություն, հանցագործություն մարդկության դեմ, թաքնված ցեղասպանություն: 2008թ. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1820-րդ բանաձևով ռազմական բախումների ու ցեղասպանությունների համատեքստում իրականացվող բռնաբարությունները և սեռական այլ բռնությունները համարվեցին պատերազմական հանցագործություն, հանցագործություն մարդկության դեմ կամ ցեղասպանության իրականացման բաղկացուցիչ գործողություն¹:

«Անլուռ» վկաները

Ըստ երևույթին, երբ մոզոնում էին հայերի ցեղասպանության ծրագիրը երիտթուրքերը, կանխակալ վախ ունեին նաև հայոց վրիժառու բազուկից: Անհիմն չէր Թալեաթի մտավախությունը. «Նրանցից ոչ ոքի կենդանի չըողնեք, առանձնապես 5-7 տարեկանից բարձր երեխաներին, հակառակ դեպքում նրանք կարճ ժամանակում հասակ կառնեն և կփորձեն վրեժ լուծել»²: Ի պատասխան երիտթուրքերի չղատապարտված գործողությունների և իբրև արդար վրիժառուություն հայ ժողովրդի անլուր տառապանքների՝ գործողության մեջ դրվեց «Նեմեսիսը», և 1919-1922թթ. մայրասպան թուրք ցեղասպանագործները իրենց արժանի պատիժը ստացան: Սա հայկական գենի առաջին հաղթական դիմահարվածն էր թուրքական ամենաջարդ մեքենային:

Ստալինյան բռնապետության տարիներին և դրանից հետո ԽՍՀՄ-ում խիստ արգելվում էր խոսել Հայոց ցեղասպանության մասին, սակայն, չնայած թուրքական կառավարության գերջանքերին հակառակ, նման մեծ չափերի ոճիրը ծածկելը հնարավոր չէր:

Վերջին տարիներին հատկապես ավելի է մեծացել հետաքրքրությունը Հայոց ցեղասպանության նկատմամբ, տարբեր լեզուներով հրապարակվող պաշտոնական փաստաթղթերին, համապարփակ ուսումնասիրություններին ու հետազոտություններին առնթրել պատմական անհերքելի արժեք են ներկայացնում նաև վերապրածների հաղորդած վկայությունները: Այս առումով անգնահատելի են Վ.Սվազյանի ուսումնասիրությունները³: Ցեղասպանության անմիջական ականատեսների ու վերապրածների հուշերն ամբողջացնում են զուլումի այն ահավոր, անվերջանալի օրերը, որոնցով ստիպված էր անցնել հայ կինը: Տարիներ ու ժամանակ էր պետք լռության այդ թանձր շղարշը պատռելու, իսկական ճշմարտությունը մի ազգի գողգոթայի մասին ի լուր աշխարհի

¹ Տես՝ Գրիգորյան Հ., Ոճրագործների վարքային դրսևորումներն Օսմանյան կայսրությունում հայերի դեմ իրականացված կոտորածների ու ցեղասպանության ընթացքում. Մեռական բռնությունները, akunq.net/am:

² Տես՝ Սահակյան Ռ., նշվ. աշխ., էջ 9:

³ Սվազյան Վ., Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, Եր., 2000: Свазлян В., Геноцид армян и историческая память народа, Ер., 2005.

ներկայացնելու, պահանջատեր լինելու համար: Ցեղասպանության այս գոհերը ակամայից դարձել են Մեծ Ոճրի «անլուռ» վկաները:

Պատմական փաստերի համադրումը բացահայտում է 1915թ. հայ կնոջ կերպարը: Այսպես. ստույգ մահվան գիտակցությունը հերոսաբար դիմադրած՝ բնակավայրերում երիցս հերոսացրեց հայ կանանց. Մուսա լեռան կռիվները՝ իգական սեռը կա՛մ մարտնչում էր դիրքերում, կա՛մ հոգում կռվողների կարիքները, եթե մի ամբողջ ամիս տևեց Ուրֆայի հերոսամարտը, ապա դրա մեջ իրենց բաժինն ունեն Ուրֆայի հայուհիները նրանք կամ ընկան դիրքերում, կամ օրհասական վերջին գրոհից հետո թույն ընդունեցին, իսկ շատերն էլ իրենց զավակների ձեռքից բռնած նետվեցին իրենց ձեռքով հրդեհված տների բոցերի մեջ¹: Առևանգման և իսլամացման թիվ մեկ թիրախը եղել են հայ կանայք և աղջիկները. բազմաթիվ են վկայություններն այն կանաց ու աղջիկների մասին, որոնք բռնապղծվելու սպառնալիքից իրենց կամավոր մահը գտան Եփրատի ջրերում, անդնդախոր ձորերում կամ թույն ընդունելով²:

Հայագիտության մեջ այսօր չկան հստակ թվական տվյալներ իսլամացած, առևանգված կամ բռնապղծված կանանց մասին: Թուրքագետ Ռ.Մելքոնյանը տեղեկացնում է, որ իսլամացված հայ կանաց մասին բավականին թվով փաստեր չկան, որոնք են գալիս ավելի ուշ, երբ պարտված Օսմանյան կայսրությանը պարտադրվում է քայլեր անել մուսուլմանների տներում պահվող հայ կանանց վերադարձնելու ուղղությամբ: Կանանց վերադարձի մասին կան բազմաթիվ փաստաթղթեր, դիվանագիտական զեկուցագրեր, որոնք փաստում են, որ այդ գործընթացը բախվել է բազմաթիվ խոչընդոտների և ընթացել բավականին բարդ³: Ջ.Եսայանը ևս հաղորդում է. «Չափահաս կանանց հանձնումը /ընտանիքներին, կամ ազգի պաշտպանությանը/ դժվարին խնդիր է: Մի մասին ուստիկանները կարող է վաճառած կամ հանձնած լինեն լավ նպատակներ հետապնդող մուսուլմանների, որոնք լավ կյանք են խոստացել, հետևաբար այս կանայք իրենց մահվան ճանկերից փրկված այս մարդկանց երախտապարտ են: Մի մասը կորցրել է իր ողջ ընտանիքին և չգիտի, թե իրեն ինչ ապագա է սպասվում: Մի մասը մուսուլման ամուսիններից երեխա է ունեցել և չի ուզում լքել երեխային:

Մի մասը կրած ստորացումներից հետո ամաչում է վերադառնալ իր ազգակիցների մոտ: Իսկ ոմանք, ընդհակառակը, կորցրել են իրենց բարոյական նորմերն ու ամոթ կոչվածը: Վստահ չեն, որ իրենց երկրում ապահով են լինելու»⁴:

¹ Կարապետյան Մ.Ս., Հայաստանը 1912-1920 թվականներին, Եր., 2003, էջ 151, 164:

² Տես՝ akunq.net/am, 100 տարի անց գտնվել է զեկույց, որը բովանդակում է 200 հազարից ավելի հայի սպանությունը:

³ Մելքոնյան Ռ., Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները, Եր., 2010, էջ 40:

⁴ Տես՝ akunq.net/am, 100 տարի անց գտնվել է զեկույց, որը բովանդակում է 200 հազարից ավելի հայի սպանությունը:

Ցեղասպանության տարիներին առևանգված կամ միայնակ մնացած հայուհիների հետ կապված մյուս ցավալի և միևնույն ժամանակ նուրբ խնդիրը նրանց շրջանում մարմնավաճառների կամ ստիպված թեթևաբարո կյանք վարողների հարցն է, որը քիչ է արծարծված:

Առաջին աշխարհամարտից հետո հայկական միություններն ու միսիոներական կազմակերպությունները փորձեցին ազատել առևանգված կանանց: Հատկապես դանիացի միսիոներ Քարեն Եփփեն, արաբ ցեղախմբերի ղեկավարների հետ համաձայնության գալով, 2000 կին է ազատում¹: Աղբյուրների վկայությամբ՝ Ուրֆայի որբանոցում չկար գեթ 12 տարեկանից բարձր աղջիկ երեխա, որը եղած չլիներ որևէ մուսուլմանի կին: Ոմանք նաև 10 տարեկանում դարձել էին ինչ-որ մեկի կինը²: Մանկահասակ հայ աղջնակների համար սա առանձնապես խոր հոգեբանական ցնցում էր, որը հնարավոր չէր ազդի հաղթահարվելու անգամ հայկական միջավայրում: Այս առումով ուշագրավ է բեմադրիչ Սյուզան Խարդալյանի «Տատիկիս դաջվածքները» ֆիլմը, որը յուրօրինակ ընտանեկան բացահայտումների ճամփորդություն է: Մեզ հետ զրույցում Սյուզանն անկեղծանում է /տատիկի մասին իմացել է մոր պատմածներից/. «Խանըմ նենեն բոլորի նման չէր: Ես նրան իբրև չար սիրտ ունեցող կին եմ հիշում: Ֆիզիկական շփումն ատում էր: Երբեք չէր գրկախառնվում կամ համբուրում: Այժմ գիտեմ, թե ինչու էր տատիկս շատ լավ քրդերեն խոսում: 12 տարեկանում Եփրատի ափին բռնաբարության էր ենթարկվել, նրա՝ օգնություն հայցող աղաղակներին արձագանքած քուրդը նրան փախցրել է: Այդ տղամարդու հետ ստիպված ապրել է 7 տարի, ապա անգլիացի միսիոների օգնությամբ փախել է: Տատիկս տարիներ շարունակ գերու կյանքով է ապրել: Թուրքերը տատիկիս ոչ միայն ձեռքերը, այլև ճակատագիրն են խարանել: Նրա հիշողության մեջ բռնություն, ամոթ և վախ են դաջել»: Անդրադառնալով ֆիլմի ստեղծման պատմությանը՝ հեղինակը հաղորդում է. «Ես շատ շփոթվեցի, երբ լսեցի Ռուսնդայի պատմությունները: Մի պահ ինձ թվաց, թե նույն պատմություններն են, ինչ լսել էի Հայոց ցեղասպանության մասին: Իմ ուշադրությունը գրավեց հատկապես գերմանացի միսիոների կողմից արված լուսանկարը՝ մի շատ տխուր կին՝ ձեռքերը փորի վրա դրած: Այս նկարը ինձ շփոթեցրեց մի պահ: Հետո հասկացա, որ այդ դաջվածքները շատ ծանոթ են ինձ, ես մի տեղ տեսել եմ, ինքնաբերաբար հիշեցի տատիկիս, ում 20 տարի է՝ արդեն հիշողությունիցս ջնջել էի: **Հիշում եմ՝ տատիկս սպիտակ ձեռնոցներ ուներ, որոնց տակ թաքցնում էր ձեռքերի դաջվածքները: Իրականում դաջել էին ոչ միայն նրա ձեռքերը, այլև նրա կյանքն էին դաջել՝ հիշողության մեջ թողնելով մոլորական, սարսափի, վախի և ամոթի դրոշմ:**

¹ Տես՝ horizonweekly.ca, Հայոց ցեղասպանությունն ու հայ կանանց կրկնակի ցավը. Քուրդ լրագրողի անդրադարձը:

² Մելքոնյան Ռ., նշվ. աշխ., էջ 42:

Ուսումնասիրելով դաջվածքները Սյուզանը պարզել է, որ ամեն մի ցեղախումբն իրենն ունի ու իր ձեռքն ընկած կնոջ դեմքին, ճակատին, ձեռքերին իր դաջվածքն է թողել: Հետո նաև փորձել է ուսումնասիրել դաջվածքներով կանանց հետագա ճակատագրերը:

«Դեռ 1919 թվականին «Նյու Յորք Թայմս»-ում հոդված կա, որ հազարավոր հայ աղջիկներ, ովքեր դաջված են, տարվում էին Կուբա, որովհետև ոչ մի երկիր չի ցանկացել նրանց ընդունել, այստեղից էլ հետագայում տեղափոխվում են Ֆրեզնո: Երբ ես Ֆրեզնոյում մարդկանց այս մասին հարցնում էի, պատասխանում էին, որ շատ սովորական երևույթ է, ամերիկացիները նույնիսկ դաջված հայ կանանց կոչում էին «the blue lips», այսինքն՝ «կապույտ շրթնավորները»: Խոսել եմ նրանց ընտանիքների հետ, ընտանիքները խիստ լռություն էին պահանջում, այդ դաջվածքները ամոթ էին»¹ ինչպես և իմ ընտանիքի համար:

Ամոթի խարանի պատճառով բազմաթիվ կանայք հրաժարվում էին հայկական միջավայր վերադառնալուց: Խնդրի շուրջ հասկապես հետաքրքիր է Վահե Թաշճյանի ուսումնասիրությունը, որտեղ խոսվում է այն մասին, թե ինչպես հայ կանայք, որոնք վերադարձել են հայության գիրկը, մերժվում էին հայ տղամարդու կողմից²:

Վերապրած կանանց պատմությունները նման են իրար: Առաջին սերնդի մոտ այնքան մեծ է եղել հոգեկան ցնցումը, որ այս մասին չի ցանկացել խոսել: Երկրորդ սերունդը կամաց-կամաց սկսել է ինքն իրեն գտնել, իսկ երրորդ սերունդը, որն այս ամենից մի քիչ հեռացած էր, միաժամանակ կարողացավ այս ամենի մասին գրել ու խորհել:

Մերնդափոխություն. թոռները

Կանանց ճակատագրի հարցը ինչ որ մի ձևով կարծես թե անընդհատ շրջանցվում էր հայագիտության մեջ: 100-ամյա հեռավորությունից այսօր այդ անողոք լռությունը խախտում են վերապրածների թոռները: Հայ և թուրք իրականություններում այլևս անհնար է լռել մի փաստի մասին, որն ավելի խոսուն է, քան կարելի էր պատկերացնել: Երկար ժամանակ այս կանայք վախի կամ ամոթի արդյունքում խուսափում էին իրենց անցյալի, արմատների մասին խոսելուց: Ցեղասպանության այս հոգեցնցումը նրանցից ոմանք կարողացան հաղթահարել և խոսել իրենց թոռների հետ:

Չնայած պաշտոնական Թուրքիայի ժխտողական քաղաքականությանը՝ նորագույն շրջանի թուրքական գրականության մեջ հայկական թեմատիկան ընդունում է նոր ծավալներ: Վերապրած կանանց պատմությունները, որոնք վերջին տարիներին են հայտնվել Թուրքիայի գրական, հասարակական և քաղաքական օրակարգում, մասն են կազմում բանավոր պատմությունների

¹ Տես՝ Ս. Խարդայանի հետ հարցազրույցը, <http://womennet.am>

² Այդ մասին մանրամասն տես՝ Tachjian V., Gender, nationalism, exclusion: the reintegration process of female survivors of the Armenian genocide, Nation and Nationalism, 2009, #15, p. 60-80.

Ժանրի, որոնք լսելի են դարձնում հասարակության հատկապես լուր և արհամարհված անդամների ձայնը¹: Բեկումնային եղավ հատկապես Ֆեթիյե Չեթինի «Մեծ Մայրս», հեղինակի և Այշե Գյուլ Ալթընայի «Թոռներ» հուշագրությունները, որոնք նեղ շրջանակներին անգամ խորհելու տեղիք տվեցին, որ հայ որդեգրված երեխաները վկայությունն են այն բանի, որ տեղի ունեցած ողբերգությունը թվացյալից շատ ավելի մեծ է²:

2014թ. Ստամբուլում կայացած «2015թ-ից 1 պակաս. Մեր անցյալն ու ապագան» խորագրով գիտաժողովում Գ.Չալքքմանն, անդրադառնալով այսօր կանանց իրավունքների պաշտպանությանն ուղղված պայքարին, հայտնում է. «Երբ այսօր Ստամբուլի փողոցներ ենք դուրս գալիս և պաշտպանում բռնաբարված երեխաներին ու կանանց, երիտասարդ տարիքում բռնի ամուսնացված աղջնակների իրավունքները, ես այս պայքարի շրջանակներում բարձրաձայնում եմ նաև բռնության ենթարկված այդ հայ կանանց բողոքը»: Բանախոսը հետաքրքիր դիտարկում է կատարում նաև ցեղասպանություն վերապրած երեխաների գենետիկ հիշողության, հայկական սովորույթներն ու ավանդույթները ենթագիտակցական մակարդակով պահպանելու և առօրյայում ծածուկ կիրառելու վերաբերյալ. «Շատ եմ մտածել, թե 6 տարեկան երեխան ինչպես կարող էր հիշել և հետագայում մոր պես չորեք /Ձատկվա խմորեղեն/ պատրաստել: Կարծում եմ՝ հայ ընտանիքները, վտանգված գոյության ենթագիտակցական բնագոյով, շատ վաղ տարիքից իրենց երեխաներին փոխանցում են շատ մեծ գենետիկ ինֆորմացիա մեր սովորույթների, մշակույթի մասին»³: Տեղին է նշել գրականագետ Ռ.Շառոյանի պապերի երկիր կատարած այցի մի դրվագը /*բառացի մեջբերում* /«...Չգիտեմ, բայց երևի ճիշտ արեցի, որ գնացի: Գտա մեր տունը, իշխան Շառոյի գերեզմանը՝ Սուրբ Պետրոս առաքյալ եկեղեցու բակում, բայց այդքանից հետո մի պահ, քանի դեռ էնտեղ էի, կորցրել էի երկիրը: Իմ սասունցի ընկերը Սասնո բարբառով ասաց. «Էդ ա երկիրը, որ ասում էի՝ շուն կապես էնտեղ, չի մնա, կփախնի»: Չես կարող արդեն մնաս էնտեղ, ապրես, էլի քո երկիրն է, բայց չես կարող: Երբ այդ Մեծ Մայրը, անունը՝ Ախու, ով 14 տարեկանից հայերեն չի խոսել, ողնաշարը կոտրած, պառկած իր տեղաշորի մեջ, հանկարծ 107 տարեկանում Սասնո բարբառով խոսում է: Եվ խոսում է, որովհետև իր քուրդ գավալը ասում է, «էս տները ծախեմ ձեզ՝ որպես տան տիրոջ, առեք», Մեծ Մայրը հանկարծ Սասնո բարբառով ասում է, «Լառ, չառնիք, ըղորոնք քուրդ ին, քուրդ, ըսօր կծախին ձեզի, գիշեր քնիք՝ ձեր տուն կգան, մորթին ձեզի»⁴: Նմանատիպ օրինակները բազմաթիվ են վերապրածների հուշերում: Ժամանակին ականատեսներից մեկը մարգարեաբար նկատել էր, որ

¹Տես՝ Մելքոնյան Ռ., Հայոց ցեղասպանության թեման թուրքական հետմոդեռնիստական արձակում /Էլիֆ Շաֆաքի ՀԱՅԲԸ ԵՎ ԱՊՕԲԻՆԻ ԶԱՎԱԿԸ վեպը/, akunq.net/am

² Տես՝ Չեթին Ֆեթիյե, Մեծ մայրս, Եր., 2008: Ալթընայ Այշե Գյուլ և Չեթին Ֆեթիյե, Թոռներ, Եր., 2011:

³ akunq.net/am

⁴ Տես՝ Ռ. Շառոյանի հետ հարցազրույցը, yerkir.am

Թուրքիան, ոչնչացնելով իր բնակչության լավագույն մասին, կործանում է իրեն: Այսօր իրավամբ կարող ենք փաստել, որ հայ վիրավոր գենը հարություն է ապրում՝ ի հեճուկս Թուրքիայի ժխտողականությանն ու կեղծարարությանը:

Ինչ է փոխվել այսօր Թուրքիայում: Թվում էր, թե քաղաքակիրթ կոչված նորագույն ժամանակները կարող էին փոխել թուրքերի ազգային նկարագիրը: Մինչդեռ եղեռնագործ թուրքական գործոնը այս պարագայում ևս իրեն քողարկել չի կարողանում: Թուրք-ադրբեջանական հայատյաց քաղաքականությունն իր գազաթնակետին հասավ դարաբաղյան հակամարտության տարիներին, ծավալվեց նաև տարծաշրջանային հակամարտությունների շրջանում: Բավական է դիմել քաղաքական խորհրդատու Թիերի Մեյսայի դիտարկմանը. «Բոսնիա-Հերցեգովինայի պատերազմի ժամանակ /1992-1995թթ./ թուրքական զորքերն աջակցում էին Ուսամա Բեն Լադենի «Արաբական լեգեոնին», որն էթնիկ զտումներ էր իրականացնում երկրում՝ ուղղափառ սերբերի սպանություններ իրագործելով:

1998թ. թուրքական զորքերը մասնակցեցին Կոսովոյի ազատագրական բանակ/ԿԱԲ/ կազմավորումներին, որն էլ դուրս քշեց ուղղափառ սերբերին և պղծեց նրանց սրբավայրերը: 2013թ. սեպտեմբերին Սիրիական ազատ բանակի հարյուրավոր ջիհադականներ Թուրքիայից ներխուժեցին Սիրիա, որտեղ նրանք, զավթելով Մալուլա գյուղը, բռնաբարում էին կանանց, սպանում տղամարդկանց, պղծում եկեղեցիները: 2014թ. մարտին հարյուրավոր ջիհադականներ թուրք զինվորականների գլխավորությամբ Թուրքիայից ներխուժեցին Սիրիա և շրջապատեցին Քեսաբ քաղաքը: Բնակչությունը հեռացավ քաղաքից և խուսափեց զանգվածային սպանություններից: Քեսաբում ապրում են հայեր, որոնք լքել էին իրենց երկիրը երիտթուրքերի կողմից իրականացված զանգվածային սպանությունների ժամանակ»¹:

Թուրք հայտնի մտավորական, գրող, հրապարակախոս Ռազրփ Ջարաքուլուն իրավացիորեն նկատում է. «Ցավալի է, որ թուրքական մերժողականությունը հասնում է նրան, որ ցեղասպանության տրավման փոխանցվում է նոր սերունդներին: Թուրքիան իրավունք չունի այդպես վարվելու, դա շատ դաժան է սերունդների նկատմամբ»²: Արդի Թուրքիայում հայ կանանցից ծնված սերունդները ձևավորել են խառնածինների մեծ բանակ, որը երբեմն ունենում է նաև ինքնության ճգնաժամի երևույթներ³:

Նկատենք, որ հայ երիտասարդության շրջանում արդեն իսկ ընկալելի է դառնում Թուրքիայում ապրող իսլամադավան հայ եզրույթը⁴:

¹ Թիերի Մեյսան, Արդյո՞ք զանգվածային սպանություններն Անկարայի համար քաղաքական միջոց են հանդիսանում, Գլոբուս, 11-12/2014:

² www.ilur.am

³ Մելքոնյան Ռ., նշվ. աշխ., էջ 45:

⁴ Տե՛ս Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց, մաս 1, Եր., 2011:

Ցեղասպանություն տեսած ժողովուրդը թերևս բոլորից շատ է շահագրգռված վիճելի բոլոր հարցերը միջազգային իրավական նորմերի սահմաններում, բանակցությունների միջոցով լուծելու գործում: Դա ոչ միայն ցեղասպանության հետևանքները վերացնելու, այլև, դրա կրկնությունն անհնար դարձնելու անուղղակի ցանկություն է: Դա ընդդեմ համամարդկային անբարո մոռացումի հոգու ճիշ է, քաղաքակիրթ աշխարհի սառը հայացքի առջև մարդկության հիշողությունը պղծել-ապականել այլևս թույլ չտալու տագնապի կանչ, պատմության սխալ մեկնաբանման դեմ ընդվզում, զոհի դերի հետ չհաշտվելու ենթագիտակցական քայլ:

«Տարօրինակ է, թե ինչպես այն տեղերն ու անունները, որ կեանքիս մէջ չեմ տեսած՝ մտքիս մէջ դրողմուած են: Կարսի, Վանի, Ադթամարի, Մալաթիոյ, Մարաշի եւ Ատիեամանի աներեւոյթ քարտէսները դրողմուած են մարմնիս վրայ: Անգիր գիտեմ զանոնք: Հաւանաբար հին քարտէսներ են, ամենայնդէպս այսօրուան Թուրքիոյ մէջ գտնուող վայրերու քարտէսներ են: Հայրենիքէն եկած տարօրինակ մանրամասնութիւններ, ձայներ եւ բոյրեր, ինծի փոխանցուած են: Ես գիտեմ Վանայ ծովի հրաշալի ձուկերուն մասին, Տիգրանակերտի վիթխարի ձմերուկներուն մասին, իսկ մօտաւորապէս կրնամ շնչել գետնին բոյրը երբ կ'անձրեւէ Սասնոյ մէջ:

Ինչպէ՞ս կրնամ այսքան տեղեկութիւններ ունենալ, երբ ես զանոնք անձնապէս չեմ ապրած:

Պարզապէս քանի որ ես ծնած եմ մէջս ունենալով այս յիշողութիւնները: Երկրի եւ կորսուած տան յիշողութիւնը:

Հօրենական կողմէ նախահայրերս Մարաշէն եւ Ատիեամանէն են, իսկ մօրենական կողմէ՝ Մուսալեռէն եւ Պէլէնէն:

Չորսն ալ իրենց զաւակներուն եւ թոռներուն սորվեցուցած են սիրել ու փայփայել կորուսեալ հայրենիքը: Իմ մեծ հայրս փոքր մանչ մըն էր Մարաշէն, որքի զաւակ մը, որ կորսնցուցած էր իր ամբողջ ընտանիքը՝ 11 եղբայրներ եւ բոյրեր: Իր հայրը անհետ կորսուած էր, իսկ մայրը սառելով մահացած էր տարագրութեան ճամբաներուն վրայ: Մեծ մայրս առեւանգուած եւ բռնաբարուած էր, երբ ան միայն 12 տարեկան էր: Ան երբեք չծիծաղեցաւ, չժպտաց, իր կեանքին մէջ: Ան երբեք զիս չգրկեց: Ան քալող դիակ էր: Անոր բառերը իր լոռութեան մէջ էին: Իմ մեծ հայրս դատախազ մըն էր, որ դատարանին մէջ մահապատժի ենթարկուեցաւ իր օգնականին հետ: Իմ մեծ հայրերէս խլուեցաւ կեանքի իրաւունքը, արժանապատիւ ուսման իրաւունքը, իրենց ուրախութեան եւ բնականոն կեանքի առիթը:

Ես մեծ բեռ մը ուներուս վրայ շաղկած մեծցայ: Ծնողքս եւ մեծ հայրերս մէկ խնդրանք ունէին. Չմոռնալ: Երբեք չմոռնալ անապատի աւազներուն մէջ կորսուած սիրելիներուն յիշատակը, մահուան դաշտերուն մէջ կորսուած մարդոց յիշատակը:

Այսօր ես կը հասկնամ թէ ինչ կը նշանակէ ընտանեկան գերեզման չունենալը: Գերեզմանը այն տեղն է, ուր կը տեսնես ինքզինքդ, ներկադ, անցեալդ եւ

ապագադ: Ինձմէ խլուածը այս շարունակականութիւնն է, պատկանելիութեան զգացումը: Այսօր ես երկրագունդի վրայ կը պտտիմ եւ զիս սնուցանող արմատներ կը փնտռեմ՝ մեր մտքերն ու հոգիները սնուցանող արմատներ: Կը յուսամ որ թուրք ժողովուրդը պիտի հասկնայ այս վիճակը: 1915-ի պատճառած ցար չէ անհետացած, հակառակը՝ այն դարձած է տեւական եւ քրոնիկ: Միակ բուժումը արդարութիւնն է: Օգնեցէք մեզի որ վերադառնանք, կարենանք մեր մեռելները գտնել եւ իրենց յարգալից թաղում մը կատարել: Թոյլ տուէք որ գտնենք հաւաքական գերեզմանները եւ զանոնք յարգանքի յուշակոթողներ դարձնենք:

Մենք կ'ուզենք տուն վերադառնալ:

Ես կ'ուզեմ տուն վերադառնալ:

Ստոքհոլմ, 23 ապրիլի, 2014թ., Սյուզան Խարդալյանի ֆէյսբուքյան էջ»:

Ա մ փ ո փ ու մ

Բանալի բառեր. ցեղասպանություն, կանայք, վկայություններ, բռնություններ, դաջվածքներ, հանցագործություն

Ցեղասպանագիտության ոլորտի մերօրյա ուսումնասիրությունները հրապարակ են հանում հայ կանանց՝ դժվարություններով լեցուն և մոռացված պատմությունները: Օրակարգում դրված էր հայ գենի ոչնչացումը, այս գաղափարի իրագործմանն էր ուղղված հենց հայ կանանց իբրև սերնդագործողների հանդեպ, անմարդկային ու քստմնելի բռնությունների մեթոդը:

Սույն հոդվածը անդրադառնում է հայ կանանց գողգոթային, որը սկսվեց տեղահանությամբ, ժամանակաշրջանի անասելի ցավի ու գրկանքի պարտադրմամբ անցավ «անյուռ» վկայության փուլը, և նորագույն շրջանում հետադարձվեց տատ-թոռներ հիշողությունների վերաբժնորմամբ:

Планомерное уничтожение женщин в период Геноцида армян

Лена Сулейманиян

Резюме

Ключевые слова: *геноцид, женщины, свидетельства, насилия, татуировки, преступность*

Современные исследования в области геноцидоведения выявляют забытые и полные трудностей истории армянских женщин. На повестке дня стоит вопрос уничтожения армянского генофонда, на реализацию которого были направлены бесчеловечные и мерзкие методы, нацеленные именно против армянских женщин как на творительниц нового поколения.

Данная статья раскрывает трагическую судьбу армянских женщин, которая началась с изгнания, прошла этап безмолвного свидетельства, вызванного периодом непередаваемой боли и вынужденных лишений, а в новейшее время перевоплотилась в переоценку воспоминаний бабушек-внуков.

Sistemized Women Annihilation during the Armenian Genocide

Lena Suleymanyan

Summary

Key words: *genocide, , women, evidence, violence, tattoos, crime,*

Contemporary research in the sphere of genocidology reveals the forgotten stories of Armenian women full of challenges. The annihilation of the Armenian gene was put on the agenda and for the implementation of this idea inhumane and appalling violation methods were applied towards Armenian women as generation givers.

The article under consideration touches upon the "Golgotha" of the Armenian women which started with deportation and, the "unsilent" testimony stage passed with the imposition of the timeframe, untold pain and hardship, reflecting modern period with the reevaluation of grandparent-grandchildren memories.



**АРМЕНОЦИД (h' ayaspanutyun)
(генезис, эволюция, развязка)**

Ширинян Левон

*Д. п. н., к. ф. н., профессор
Армянский государственный педагогический
университет имени Х.Абовяна*

*«Армения-авангард Европы в Азии».
Это давно предложенная формула правильно
определяет положение армянского народа в нашем мире.
Историческая миссия армянского народа, подсказанная
всем ходом его развития искать и обрести синтез
Востока и Запада (подчеркнуто мной. Л.Ш.)
В.Брюсов*

Ключевые слова: Арменоцид, армянский холокост, турецкая (оттоманская, кемалистская), стратегия, столкновение цивилизаций, Вильсоновская Армения.

В наши дни стало модным говорить о диалоге цивилизаций, однако не стоит забывать о несовместимости культур и цивилизаций, зачастую приводящей к конфликтам с трагическими последствиями.

Одним из таких фактов является и арменоцид, среди многих причин которого был и культурный фактор. По сути дела, он стал следствием затяжного конфликта между армянами-христианами и турками-суннитами. Оказавшись не в состоянии поглотить чуждую ей культуру, националистическая турецкая верхушка со временем взяла стратегический курс на ее уничтожение и искоренение.

Итак, 24 апреля 1915 года в Западной Армении, армянской Киликии и на остальной части Оттоманской империи, по решению правительства этой страны и по воле турецкого народа развернулись события, направленные на окончательное решение Армянского вопроса, то есть тотальное истребление разоруженного и беззащитного народа, события, которые в Декларации правительств держав-союзниц – России, Великобритании и Франции – от 24 мая 1915 г. охарактеризованы как преступление «перед человечеством и цивилизацией».

Действия турок были заранее продуманы и детально спланированы, цель была ясна: «уничтожить целый народ» полностью, раз и навсегда покончить с самим названием «Армения» и стереть с лица земли ее цивилизацию, превратить Западную Армению в логическую нелепость – «Восточная Анатолия», присвоить ее культуру¹, с помощью традиционного турецкого грабежа и насилия захватить огромные материальные богатства армян империи².

¹ Немецкий искусствовед Эрнст Дитц считает, что искусство сельджуков – продолжение армянского. См. Ernst Dietz, Сельджукское искусство (на нем. яз.), К.-поль, 1948.

² Общая стоимость разграбленного турками в годы геноцида имущества армян составила примерно 5 млрд. американских золотых долларов. Часть этих богатств прикарманили сами грабители и властная верхушка, а львиная доля была использована для нужд кемалистского движения, в частности для войны, развязанной турками против Восточной Армении.

Изохренный турецкий ум вынашивал это злодеяние десятилетиями и начал с намеренного изменения топонима страны и искажения демографии. В 1862 году была осуществлена коренная реорганизация губерний империи. В результате бывшая огромная по территории губерния «Эрменистан эйалет» подверглась раздроблению на Эрзрумскую, Битлисскую и Ванскую, к каждой из которых с целью изменения демографического состава были присоединены – «кривыми, искусственно проведенными» границами – районы с исламским населением. Затем в 1878-м, спустя два года после Берлинского конгресса, дабы еще более сократить удельный вес коренного населения, в Западной Армении были проведены новые административно-территориальные деления. А в 1880-е годы было запрещено употребление слова «Айастан» (Армения). До поры до времени подобные действия имели целью растворить живущих на своей земле армян в чуждой среде, среди разноплеменного сброда, именуемого «мусульманами».

Поводом для «корректировки» турецкой позиции в этом вопросе стал заметный экономический и цивилизационный подъем армян, начавшийся в середине 19 века. Английский священник Б.Барейль отмечает, что принятие Национальной Конституции западных армян (1860) «ознаменовало собой революцию в привычках и обычаях Востока». Поэтому «вскоре армяне стали подозрительным элементом как для Турции, так и для России, и с этого дня у них больше не было спокойной жизни»¹.

Воистину общеизвестная турецкая зависть и желчь сыграли исключительную роль в подготовке этно-психологической почвы для арменоцида*. А «главным аргументом» было все-таки неудержимое желание турок «присвоить» родину армян – Армению, отобрать ее у законных хозяев. Поголовное истребление армянского населения ясно показало: в Турции могли меняться султаны и правители, их политическая окраска, пол, вера и национальность, но только не главная цель – уничтожение Армении.

И когда в период сотрудничества Ленина и Ататюрка перспектива окончательного уничтожения Армении и армян обрела реальные и окончательные очертания, министр иностранных дел уже кемалистской Турции Ахмед Мухтар «объяснил» командующему восточным фронтом Кязиму Карабекиру (дело теперь касалось Восточной Армении): «Армения находится на обширных мусульманских территориях (представляете?), а потому **ее нужно уничтожить как политически, так и физически**. Следует учитывать, что общая политическая обстановка и наша сила благоприятствуют реализации этого плана»².

Отметим, что план уничтожения Армении сформулировал и начал претворять в жизнь Абдул Гамид. Его соратники и последователи, вплоть до Кемалья, только продолжили начатое им дело. Процесс стабилизации и объединения империи, трещавшей по швам под мощным давлением европейских сил (политика великих держав, национально-освободительные войны и т.д.), Гамид «направил» на восток.

¹ См. М. Орманьян. Армянская церковь. К.-поль, 1911, с. 15-16.

* Впервые этот термин ввел в научный оборот сирийско-арабский ученый-историк Муса Принс (Moussa Prince) в 1967г.

² См. Саркисян Е., За кулисами: как рождался Московский договор 1921 г., «Литературная Армения», 1991, N1, с.76-77.

Его целью был выход к *Западной Аравии, мусульманским святыням* и Армении¹. Балканские войны только укрепили его в этом намерении. «Я не буду сожалеть о потере Балканских стран, высасывающих все наши силы», – говорил Абдул Гамид. *«Мы хотим остаться в Анатолии и должны жить отдельно»*, – провозгласил «кровавый султан»².

Гамидовская идея-установка встретила понимание в Европе. В этом плане весьма красноречиво обращение барона Ганса фон Вангенгейма к «предвестнику» германского национал-социализма – Центральному комитету «Иттихата» (в канун войны 1914 года): «Вам выгоден союз с Болгарией. Необходимо выйти к черте Берлин – Константинополь, вооружив проливы, лишить Россию помощи извне и совместными усилиями раздавить ее. *Отдавая вам Кавказ, мы хотим открыть вам путь к Турану. Вы должны уничтожить препятствующий единению Турции элемент (армян – Л.Ш.), а затем захватить и Персию...*»³.

Итак, в 1914 году посол Германии говорил о том, что двумя годами раньше предугадал великий армянский поэт Ованес Туманян (...Армянский вопрос – одна из главных головных болей Турции, и со временем она будет усиливаться, пока турки будут вынуждены отступать в эти края»). А европейские державы в согласии друг с другом выдавливали из Старого Света цивилизационно чуждый им элемент – средневекового янычара. Направляли его на Восток. На этом пути лежала Армения. А потому помощь христианской Европы библейской стране, «колыбели цивилизации» (Дэвид Ленг) – Армении, была умеренной.

Между тем жаждущий крови турок взял на вооружение соответствующую тактику и осуществил ее в три этапа:

1.1876-1915 гг.: локальная, но имеющая тенденцию к расширению и развертыванию политика депортации армян, их насильственной исламизации и резни;

2.1915-1918 гг.: всеобъемлющий процесс окончательного решения Армянского вопроса. Турки не преуспели в этом отчасти ввиду сопротивления оставшихся армян (испытанных во многих сражениях солдат и офицеров добровольческих полков: почти восьмимесячные бои армянских воинских частей от Ерзнка (Эрзинджана) до Сардарапата и Баку, прорыв «Армянским легионом» сирийско-палестинского фронта 19 сентября 1918 года), а отчасти в силу международной обстановки;

3.1919-1923 гг.: с одной стороны, кемалистская политика уничтожения греков, продолжения неоконченного арменоцида в Восточной Армении и Закавказье и захвата новых земель, с другой – отрицание вины и ответственности турецкого государства и нации.

Отныне, по замыслу геноцидного турецкого государства «задача состояла в том, чтобы добиться примирения армян с фактической ситуацией. Нужно было принудить самих армян в обмен на признание их карликового государства (имеется ввиду республика 1918г.-Л.Ш.) отказаться от своих территорий в пользу Турции. Почти

¹ См. *Раздел Азиатской Турции* По секретным документам б. МИД., под ред. Адамова Е.А., М., 1924, с.29.

² См. *Язычян Г.*, Кровавый султан Абдул Гамид II (на арм.яз.): Бейрут: 1980, с. 812, 827.

³ Рифат Мевлан заде, Темные страницы османской революции и программы Иттихата по уничтожению армян (на арм.яз.): Ереван, 1990, с.18.

полная дебелляция и аннексия могли таким образом представляться как цессия – добровольная уступка территорий, а геноцид армянского населения этих территорий – как достойные сожаления события прошлого» (Ю.Барсегов)¹.

Однако Геноцид породил вопрос об ответственности Турции и турок:

а) уголовное наказание физических лиц, задумавших и осуществивших потрясшее мир преступление. Они понесли наказание лишь отчасти (операция «Немезида», армянский Нюрнберг, осуществлялась в условиях активного сопротивления Советского правительства);

б) политическая ответственность турецкого государства и создание Армении в соответствии с арбитражным решением Вудро Вильсона;

в) материальная ответственность в виде реституции (восстановление прав армян, возвращение насильственно отнятого имущества и т.д.)².

Ясно, что дальнейшая борьба армян во многом будет обусловлена вторым и третьим пунктами. Это приведет к ликвидации последствий первого в мире геноцида – арменоцида³ и раз и навсегда предотвратит повторение подобных преступлений.

Знаменательны звучащие как завет слова Вудро Вильсона: «Армения должна получить то, на что она имеет историческое право. Она имеет больше прав на жизнь, чем Турция... Рано или поздно Турция предстанет перед трибуналом и будет давать отчет, и тогда от нее потребуют возвращения награбленного своему истинному хозяину»⁴.

Резюме

В статье представлен вопрос армянского геноцида на фоне столкновения цивилизаций. Акцент ставится на оценке геноцида армян (24 апреля 1915г.) как тяжелого преступления против “человечества и цивилизации”, каким был Холокост (1915г.). В статье раскрывается сущность турецкой (оттоманской, кемалистской) стратегии реализации и отступничества армянского геноцида.

Արմենցիկ Լևոն Շիրինյան Ամփոփում

¹ Подробнее см. *Барсегов Ю.Г.*, Геноцид армян – преступление по международному праву. М., 2000.

² *Геноцид армян*: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарии. В 2-х т., Том 4 Часть 2., Комментарии к Сборнику документов проф. Ю.Г.Барсегова. М. 2005, с.215.

³ Примечательно, что «по горячим следам» массовой резни цивилизованный мир начал говорить о геноциде армян и охарактеризовал эти события как «сжигание заживо» (holocaust), мерзкое, чудовищное «сжигание заживо» («ghastly holocaust»). См. Hocking Joseph, The path of glory («Путь к славе»), London, New York, Toronto, 1918, с.216, 240 .

⁴ См. Чалхушьян Г., Красная книга. Ростов-на-Дону, 1919, с. 183-184.

Բանալի բառեր և բառակապակցություններ. Արմենոցիդ՝ հայկական հոլոքոստ, Թուրքիա (օսմանյան, քննական), ռազմավարություն, քաղաքակրթությունների բախում, Վիլսոնյան Հայաստան:

Հոդվածում քաղաքակրթությունների բախման ֆոնի վրա ներկայացված է Արմենոցիդը: Շեշտը դրվում է հայերի ցեղասպանության (1915, մայիսի 24), որպես «մարդկայնության և քաղաքակրթության» դեմ ծանր հանցագործության, (ինչպիսին Հոլոքոստն է 1918) գնահատման վրա: Բացահայտվում է Արմենոցիդի իրականացման և ուրացման թուրքական (օսմանյան, քննական) ռազմավարության էությունը:

Armenocide
Levon Shirinyan
Summary

Key words: *Armenocide, Armenian Holocaust, Turkey (Ottoman, kemalist) strategy, clash of civilizations, Wilsonian Armenia*

The article presents the issue of Armenocide on the background of the clash of civilizations. Reference is made to assess the Armenian Genocide as a grave crime against “humanity and civilization” (1915, May 24), as the Holocaust (1918). The article reveals the essence of the Turkish (Ottoman, kemalist) strategy of realization and abjuration of Armenocide.

**ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐԳԱԿԱՆ
ՇՈՎԻՆԻԶՄԻ ԵՎ ՌԱՍԻԶՄԻ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆ Է**

Շահեն Աբրահամյան

փ.գ.թ., պրոֆեսոր

ԱրՊՀ

Բանալի բառեր՝ ցեղասպանություն, պանիսլամիզմ, պանթուրքիզմ, պանգերմանիզմ, քրիստոնեական հովանավորություն, էթնոցենտրիզմ, էքստրեմիստական ռեժիմ, ռեակցիոն շովինիզմ, թուրքական ռասիզմ, բոլշևիկյան իշխանություն

Ցեղասպանությունը մարդկային հասարակության պատմության ամենախոցելի հասարակական երևույթներից մեկն է: Հանրագիտական բառարանում ցեղասպանությունը բնութագրվում է որպես մարդկության հանդեպ գործադրված ամենադաժան հանցագործություններից մեկը՝ բնակչության ամբողջական կամ առանձին խմբերի ոչնչացում՝ ռասայական, ազգային, էթնիկական կամ կրոնական, ինչպես նաև գիտակցաբար կանխագծված պայմանների ստեղծում՝ մարդկանց խմբերի լրիվ կամ մասնակի ֆիզիկապես ոչնչացման համար:¹ Ցեղասպանության ամենավայրագ միջոցը էթնոսի ֆիզիկական ոչնչացումն է: Ցեղասպանության միջոց է համարվում նաև կենսական եղանակով մայրերին պտղագրկումն ու բռնի միջոցներով դավանափոխությունն ու ազգությամբությունը: Ցեղասպանության եղանակով դարերի ընթացքում բազում էթնոսներ ու ժողովուրդներ հեռացել են մարդկության պատմությունից: Ցեղասպանության ծագման ու կայացման պատճառահետևանքային կապերի մասին հասարակագիտության մեջ արտահայտվում են տարբեր մոտեցումներ, սակայն բոլոր մոտեցումներում իշխող կարծիքն այն է, որ երևույթը վերջին հաշվով, պայմանավորվում է ռեակցիոն ազգայնամոլության դրսևորումով: Պրոֆեսոր, ազգագրագետ Այրաթ Ակլանի կարծիքով էթնիկ խմբի նկատմամբ <<թշնամու կերպարի>> կարծրատիպ վերաբերմունք է ստեղծվում, խեղաթյուրված հատկանիշներ են վերագրվում հակառակ կողմին, համոզելով, որ այդ հատկանիշները հատուկ են ողջ խմբին, Ստեղծելով <<թշնամու կերպարը>>՝ այդ կերպարին վերագրվում է այն, ինչը վերագրող կողմն է ցանկանում: Միակ մեղքը, որով մեղադրվում է ողջ խումբն այն է, որ նա պատկանում է տվյալ էթնոսին:² Ամերիկյան քաղաքագետ Էնտոնի Սմիթը ցեղասպանությունը համարում է էթնոցենտրիզմի զաղափարախոսության իրողություն, այսինքն՝ հայացքների համակարգ, որը կենսական բոլոր երևույթները դիտարկում է իր էթնիկական պատկանելիության պրիզմայով, անվանելով այն էտալոն՝ իր ապրելակերպը գերադասելով

¹ Советский энциклопедический словарь. Москва, 1989, с. 290.

² Аклаев А., Этнополитическая конфликтология. Москва, 2008, с. 295-296.

մյուսներից:¹ Ավստրիական նշանավոր հոգեբան-փիլիսոփա Զ.Ֆրեյդը ռեակցիոն նացիոնալիզմի դրսևորումը պայմանավորում է հոգեկանի արտահայտությամբ: Հոգեկան պրոցեսը վերածվում է սոցիալական գործունեություն կատարելու միջոցի: Մարդու հոգեկանի մեջ առաջանում է մեծ լարվածություն՝ վերածվելով մեծ թշնամանքի և ատելության:²

Երկրորդ աշխարհամարտից հետո ստեղծված միջազգային ամենահեղինակավոր կազմակերպության՝ ՄԱԿ-ի Գերագույն խորհրդի նստաշրջանի 1946թ. դեկտեմբերի 11-ին ցեղասպանության մասին ընդունած բանաձևում ասված է, որ «ցեղասպանություն» նշանակում է մերժել մարդկային խմբերի ապրելու իրավունքը: Ցեղասպանությունը համարվում է հանցագործություն և դատապարտվում է քաղաքակիրթ աշխարհի կողմից, անկախ նրանից, թե ինչպիսի անհատների կողմից է կազմակերպվել և ինչպիսի մոտիվներով է կազմակերպվել: Իսկ 1948թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի Գլխավոր խորհուրդը հաստատել է <<Ցեղասպանության հանցագործության նախագգուշացման և պատժման մասին>> կոնցեպցիան, որը, հենվելով 1946թ. ընդունած բանաձևի վրա, ցեղասպանությունը համարվում է այնպիսի գործողություն, որը խախտում է միջազգային իրավունքի բոլոր նորմերը և հակասում է ՄԱԿ-ի ոգուն ու նպատակներին:³ Սակայն ամենահեղինակավոր միջազգային կազմակերպության հայտարարություններով չեն վերացվել ցեղասպանության տարատեսակների դրսևորումները աշխարհի տարբեր տարածաշրջաններում, որոնցից ամենաողբերգականները կարելի է համարել Կոմբոջայում 1970-ականներին ծայրահեղ ձախ էքստրիմիստական ռեժիմի պարագլուխ Պոլ Պոտի՝ սեփական ժողովրդի նկատմամբ կիրառած ֆիզիկական բնաջնջումը, որին զոհ դարձավ մոտ մեկուկես միլիոն մարդ: Էթնիկական հողի վրա միլիոնավոր մարդիկ ցեղասպանության զոհեր դարձան Սուդանի և Շրի Լանկայի հանրապետություններում:

Արշուրան, Ալի Հուսեյին Ջադեն, Իսմայիլ Գասպրինսկին և այլք: Թյուրքական ժողովուրդների միավորման առաջին մունետիկը դարձավ «Թարջուման» («Թարգմանիչ») թերթն իր «Միասնություն մտքով, խոսքով և գործով» կարգախոսով, այն 1883-ից սկսեց հրատարակվել Ղրիմում, Բախչիսարայում, Իսմայիլ Գասպրինսկու կողմից: Սակայն նույնիսկ այս գործիչներն իրենց գիտելիքներն ու պանթյուրքիզմի գաղափարով ոգեշնչումն ստանում էին եվրոպական ուսումնական հաստատություններում: XIXդ. եվրոպական այնպիսի երկրներում, ինչպիսիք են Ֆրանսիան, Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Դանիան, որպես արևելագիտության ուղղություններից մեկը սկսում է զարգանալ թյուրքագիտությունը: Այս համատեքստում կուզենայի հիշեցնել Լեոն Կախոնի գիրքը թյուրքական ռասայի մասին, Ռադլովի թյուրքական լեզուների բառարանը և այլն: Օսմանյան կայսրությունում թյուրքիզմի առաջին գաղափարախոսներից էր ռազմական ուսումնարանների գլուխ կանգնած Սուլեյման փաշան: Թյուրքիզմի և պանթյուրքիզմի գաղափարները նա սկսեց տարածել հենց ռազմական ուսումնարանների սաների շրջանում, ինչը պայմանավորված էր թյուրքական հասարակությունում բանակի ազդեցիկ դիրքով: Սուլեյման փաշան առաջինն Օսմանյան կայսրությունում նկարագրեց թյուրքերի պատմությունն իր «Աշխարհի պատմությունը» գրքում (1874թ.) և հանդես եկավ իր պետությունում ընդդեմ «օսմաներեն լեզու» տերմինի կիրառման. նա կարծում էր, որ օսմաներեն լեզուն ընդամենը արաբերենի, պարսկերենի և թուրքերենի խառնուրդն է, և առաջարկեց օգտագործել «թուրքերեն լեզու»¹ բառակապակցությունը: Խոսելով Օսմանյան կայսրությունում պանթյուրքիզմի զարգացման մասին՝ չենք կարող չհիշատակել Սուսթաֆա Ջելալետդին փաշային (1826-1876): Նրա իսկական անունն է Կոնստանտին Բոժեցկի, սերում էր լեհ շլյախտիչների տոհմից: 22 տարեկանում նա մասնակցում է լեհական ապստամբությանը Ռուսական կայսրության դեմ և ապստամբության ճնշումից հետո տարագրվում Ստամբուլ: Նա ծառայության է անցնում օսմանյան բանակում և իսլամ, դրա հետ միասին՝ նաև նոր անուն է ընդունում: Ջելալետդին փաշային է պատկանում «թուրք-արիանիզմի» գաղափարը, որի համաձայն՝ եվրոպական և թյուրքական ժողովուրդները մեկ ռասա են կազմում, իսկ արևմտյան մշակույթը «թուրք-արիացիների» մտավոր գործունեության արգասիքն է: Նա նաև պնդում էր, որ իսլամ ընդունած թյուրքերի մի մասն աղերսներ ունի սեմիտական մշակույթի հետ: Նա նաև առաջարկում էր Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդներին կապել թյուրքական տարրերին մշակութային-լեզվական կապերով կամ պարզապես ուժացմամբ:

XIX դարում Օսմանյան կայսրությունում սկսեց զարգանալ նաև օսմանիզմի գաղափարախոսությունը, որի էությունն այն էր, որ կայսրության

¹ Мухамметдинов, Зарождение и эволюция тюркизма, Казань, 1995, с. 32.

բոլոր ժողովուրդները պետք է ձեռք բերեին վերագրային ինքնություն, այսինքն՝ ինքնություն, որն ընդհանուր կլինեի բոլորի համար՝ անկախ ազգային և կրոնական պատկանելությունից: Որպես այդպիսին տեսնում էին օսմանյան ինքնությունը: Սակայն այդ գաղափարախոսությունը չարդարացրեց իրեն և չկարողացավ զսպել քրիստոնյա ժողովուրդների անկախության ձգտումը: Այս իրավիճակում Օսմանյան կայսրությունում սկսեց զարգանալ իսլամիզմը, որի հիմնական ջատագովը արյունարբու սուլթան Աբդուլ Համիդ II-ն էր: Իսլամիզմն ինչ-որ չափով շահավետ էր եվրոպական տերություններին, քանի որ այդ գաղափարախոսությունը երկու ճամբարի էր բաժանում օսմանյան հասարակությունը՝ մուսուլմանների և քրիստոնյաների, ինչը հնարավորություն էր ընձեռում միաժամանակ աջակցել քրիստոնյա ժողովուրդների՝ Օսմանյան կայսրությունից անջատվելու ձգտմանը և, մյուս կողմից, օսմաններին ուղղել ընդդեմ Ռուսական կայսրության: 1908թ. հեղափոխությունից հետո իշխանության եկան երիտթուրքերը:

Բալկանյան քրիստոնյա ժողովուրդների ազգային-ազատագրական պատերազմը և դրան հաջորդած՝ Օսմանյան կայսրության կողմից Բալկաններում իր տիրույթների մեծ մասը կորցնելը 1912թ. վերջնականապես թաղեցին օսմանիզմի գաղափարը: Մի ինչ-որ պահի երիտթուրքերը վերստին փորձեցին վերադառնալ իսլամիզմի գաղափարին: Սակայն այդ գաղափարն այս անգամ կործանվեց մուսուլման ժողովուրդների, մասնավորապես՝ արաբների և ալբանացիների ապստամբությամբ: Դա էլ ուժգին խթանեց պանթուրքիզմի գաղափարախոսության զարգացումն Օսմանյան կայսրությունում:

Թյուրքիզմի սերմանումն ընթանում էր պանթուրքիզմի ակտիվ քարոզչությանը զուգահեռ, ինչն իրականում շատ բարդ գործընթաց էր: Բավական է նշել, որ այն ժամանակ «թուրք» բառն օսմաներենում ամենավիրավորական արտահայտություններից էր¹: Այդ պլանների իրականացման համար անհրաժեշտ էր առաջին հերթին ստեղծել ընդհանուր «ցեղակցային» սահման Օսմանյան կայսրության և Անդրկովկասի ու Իրանի թյուրքերի միջև: Սա պանթուրքական պլանների հաջող ավարտի առանցքային պայմանն էր: Գլխավոր պատճենն այս ճանապարհին հայ ժողովուրդն էր, որն իր հայրենի՝ միաեթնիկ տարածքով Օսմանյան կայսրության թյուրքերին բաժանում էր Իրանի և Անդրկովկասի իրենց եղբայրակիցներից, որոնց միջոցով կարելի էր հասնել Միջին Ասիայի թյուրքերին:

Պանթուրքական գաղափարների նյութականացման առաջին փորձը ձեռնարկվեց Զինաստանում, Սինցզյանում, XIX դարի 60-ական թթ. վերջին-70-ական թթ. սկզբին: XIXդ. երկրորդ կեսին Սինցզյանը ներառվել էր խոշոր

¹ История человечества, под общей редакцией Г.Гельмольта, том V, Юго-Восточная и Восточная Европа, С-Петербург, типо-литография книгоиздательского товарищества «Просвещение», 1905, сс. 117, 122.

ապստամբությունների մի ամբողջ շարանի մեջ, որոնց արդյունքը դարձան թեոկրատական իսլամական Եթիշար (Յոթնաքաղաք) պետության ի հայտ գալն ու գոյությունը 1865-1878թթ., որի մայրաքաղաքն էր Քաշգար քաղաքը: Այն ժամանակ առաջինը Քաշգար եկան Օսմանյան կայսրության ներկայացուցիչները: 1869թ. Յաղուբ բեկի՝ Եթիշարի կառավարչի հատուկ բանագնաց Սայիդ Յաղուբ խանին անձամբ ընդունեց օսմանյան սուլթան Աբդուլ Ազիզը, որը պաշտոնապես ճանաչեց Եթիշարն ու նրա կառավարչին: Ի նշանավորումն Եթիշարի ճանաչման, Աբդուլ Ազիզը դեսպանի հետ ընծա և բարձրաստիճան սպաներ ուղարկեց Քաշգար՝ Յաղուբ բեկին, նոր պետության զինված ուժերի ստեղծմանն օգնելու համար: Պետության խորհրդանիշերը նույնպես հիշեցնում էին օսմանականը, իսկ դրոշմը ճիշտ Օսմանյան կայսրության, ավելի ուշ՝ նաև Թուրքիայի դրոշի պատճենն էր: 1874թ. Յաղուբ բեկը պաշտոնապես հայտարարում է նոր քաղաքական կարգավիճակի ճանաչման մասին. Եթիշարը Թուրքիայի պրոտեկտորատն էր ճանաչվում: Քաշգարում, ի պատիվ սուլթան Աբդուլ Ազիզի, նրա պատկերով դրամ հատեցին: Բայց Չինաստանը կարողացավ վերացնել այս պետությունը 1878թ.: Այստեղ միշտ էլ կարևորել են Մինցզյանի նկատմամբ վերահսկողությունը՝ մտածելով, որ դրա կորստյամբ սպառնալիքի տակ կհայտնվեին նաև երկրի այլ տարածաշրջանները: XIXդ. չինացի ստրատեգները նշում էին, որ եթե Մինցզյանը մնար չամրագրված Չինաստանին, ապա Մոնղոլիան սպառնալիքի, իսկ Գանայու և Զժիլի (չինական Հեբեյ նահանգի անվանումը մինչև 1928թ.- Դ.Բ.) նահանգների անվտանգությունը՝ կասկածի տակ կհայտնվեն¹:

Ակնհայտ է, որ պանթյուրքական պլանների իրականացման համար թուրքերը պետք է ոչնչացնեին մեր ժողովրդին: 1915թ. Հայոց ցեղասպանությունը պանթյուրքական գաղափարների իրականացման առաջին և ցայսօր ամենաաղաղակող դրսևորումն է²:

Ռուսական կայսրությունը և պանթյուրքիզմը

Սակայն ակնհայտ է, որ գլխավոր պատենշը պանթյուրքիստների ճանապարհին Ռուսական կայսրությունն էր: Հարկ է նշել, որ Ռուսական կայսրությունը ևս մի շարք կարևոր քայլեր արեց՝ նվազեցնելու համար պանթյուրքիզմի սպառնալիքը: Ռուսական կայսրությունում ազգային հողի վրա ոչ քրիստոնյա ժողովուրդների զանգվածային ազգային ապստամբություններ չկային: Կովկասի լեռնցիների առավել զանգվածային ընդվզումներն ավելի շուտ կրոնական շարժում էին, այլ ոչ թե ազգային:

¹ Մանրամասն տե՛ս Хожамберди Кахарман, Уйгуры. Этнополитическая история с древнейших времен до наших дней, Алматы, 2010, с. 189.

² Ходжаев А., Цинская империя, Джунгария и Восточный Туркестан, Москва, 1979, с. 70.

Նկ. 4

Ռուսական կայսրության մեծ զինանշանը



Բացի այդ, Ռուսական կայսրությունը ոչ միայն իրեն համարում էր թյուրքական խանությունները հնազանդեցրած երկիր, այլև հնազանդեցված թյուրքական երկրների ժառանգորդ: Պատահական չէ, որ Ռուսական կայսրության զինանշանի վրա որպես առաջնային զինանշաններ պատկերված էին նաև Կազանի (Նկ. 5), Աստրախանի (Նկ. 6) և Սիբիրի (Նկ. 7) խանությունների խորհրդանիշերը¹:

Նկ. 5



Նկ. 6



Նկ. 7



¹ Ռուսական կայսերական հերալդիկայի մասին մանրամասն տե՛ս Дворянские роды Российской империи, СПб., 1993; Гербальдика.ру կայքը; П.П. фон Винклер, Гербы городов Российской империи, СПб. 1900 (վերահրատարակվել է Մոսկվայում, 1991):

Ազգային-ազատագրական շարժման համախմբմանը դիմակայելու մեթոդներից մեկն էր համապատասխան վարչատարածքային քաղաքականությունը: Ռուսական կայսրության սահմանները, հատկապես ազգային ծայրամասերում, չէին համապատասխանում այնտեղ ապրող ժողովուրդների էթնիկ տարածքին: Դրանք խառն էին: Բացի այդ, նահանգների անվանումներից աստիճանաբար հանվում էր ազգային տարրը: Եթե Ռուսական կայսրությանն Անդրկովկասի միացվելուց հետո այստեղ ստեղծվեցին այնպիսի կազմավորումներ, ինչպիսիք էին Հայկական մարզը, Վրաց-իմերեթական նահանգը, ապա այնուհետև նահանգներն ստացան իրենց վարչական կենտրոնների անունները: Ի դեպ, այստեղ երբեք «Ադրբեջան» անվամբ վարչական կազմավորում չի եղել: Կար Կասպյան մարզ, բայց ոչ երբեք, ինչպես նշեցինք, «Ադրբեջան»:

Պանթյուրքիզմն Առաջին աշխարհամարտի շրջանում

Գործնականում կիրառվելու առավել իրական հնարավորություն պանթյուրքիստական գաղափարախոսությանն ընձեռեցին Առաջին համաշխարհային պատերազմը և հոկտեմբերյան հեղափոխությունը Ռուսաստանում: Հենց այդ ժամանակ Անդրկովկասի, Կովկասի, Իրանի և Միջին Ասիայի թյուրքական ժողովուրդների միավորման իրական հնարավորություն ստեղծվեց՝ թյուրքական բանակի կողմից այդ տարածքները զավթելու միջոցով¹: 1914թ. «Միասնություն և առաջընթաց» կուսակցության բարձրաստիճան ներկայացուցիչներից մեկը Ահմեդ Քամալը, կազմակերպության գործուղմամբ գնում է Քաշգարիայի Արտուշ քաղաք՝ աշխարհիկ դպրոցներում համաթյուրքական «ժառանգության» ուսումնասիրումը կազմակերպելու նպատակով: Արտուշի հոգևորականության և մտավորականության հետ միասին նա դպրոց է բացում և դասավանդում պանթյուրքիզմի գաղափարները: Շուտով նրա հետևից Մինցգյան են գնում հարյուրավոր կամավորներ՝ համաթյուրքական միասնության գաղափարի տարածման համար, և արդեն XX դարի 20-ական թթ., թուրք էմիսարների ակտիվ գործունեության արդյունքում, Մինցգյանի շատ քաղաքներում ստեղծվեց դպրոցների, դասընթացների, խմբերի ցանց²: Այդ հաստատություններում դասավանդվում էր թյուրքական ժողովուրդների ընդհանուր պատմությունը, քարոզվում էր նրանց մշակութային, լեզվական և կրոնական ընդհանրության, հանուն ազատագրման համատեղ պայքարի և միասնական դաշնային թյուրքական պետության (որի մեջ կմտնեն նաև Կենտրոնական Ասիայի,

¹ St' u, op'isul, Pomiankowsky I., Der Zusammenbruch des Ottomanischen Reiches (The Total Collapse of the Ottoman Empire), Wien, 1928, pp. 29-30; Hostler Ch., Turkism and the Soviets, London, 1957, pp. 146-148.

² Хожамберди Кахарман, Уйгуры. Этнополитическая история с древнейших времен до наших дней, Алматы, 2010, с. 340.

Ղազախստանի, ողջ Սինցզյանի և Արևմտյան Մոնղոլիայի տարածքները) ստեղծման գաղափարը:

Այնուամենայնիվ, պանթուրքական պլանների իրագործման առաջին օղակը Կովկասն էր: Այս համատեքստում էր, որ Արևելյան Անդրկովկասում ստեղծվեց «Ադրբեջան» անվամբ երկիրը, որը ոչ մի կապ իրանական Ադրբեջանի՝ պատմական Ատրպատականի հետ չունեւ: Նպատակը մեկն էր. եթե կա կովկասյան և իրանական Ադրբեջան, ապա դրանք պետք է միավորվեն, իսկ այդ միավորված կազմավորումը Թուրքիան մտադիր էր միացնել իրեն և դուրս գալ դեպի Միջին Ասիա և այդպիսով ստեղծել միասնական պանթուրքական պետություն: Բնական է, որ Թուրքիայի ծրագրերը և գործողություններն առաջ էին բերում հարևան երկրների, մասնավորապես՝ Իրանի բացասական հակազդեցությունը: Գերմանիայի ռեյխսկանցլերին հասցեագրված զեկույցում Կովկասում Գերմանիայի պատվիրակության ղեկավարը մասնավորապես նշում է. «Պարսկաստանում դժգոհություն էր առաջացրել այն փաստը, որ թուրքերն «Ադրբեջան» են անվանել անդրկովկասյան ամենաարևելյան հանրապետությունը՝ պարսիկների հանդեպ տարածքային պահանջները հիմնավորելու համար: Դժգոհությունը խորացնում է նաև այն հանգամանքը, որ պարսիկները թաթարների¹ բարեկամը չեն (*այդպես էին անվանում Ադրբեջանի թուրք բնակչությանը մինչև 1930-ական թթ. երկրորդ կեսը* – Դ.Բ.):»:

Սակայն Անդրկովկասում «Ադրբեջանի» կազմավորումը, բացի պանթուրքական տերության ստեղծումից, նախատեսում էր նաև իր կազմի մեջ ներառել Իրանը: Բանն այն է, որ պատմական Ատրպատականը բավական երկար ժամանակ Իրանի հոգևոր-քաղաքական կենտրոնն էր: Սասանյանների օրոք Ատրպատականը զրադաշտականության կենտրոնն էր: Որոշ առասպելների համաձայն՝ Ուրմիա քաղաքը համարվում էր Զրադաշտի հայրենիքը: Ատրոպատենայի տարածքում էր գտնվում զրադաշտականների կրակի կարևոր տաճարներից մեկը՝ Ադուր Գուշնասպը (ժամանակակից Թախտ-ի Սուլեյման քաղաք)²: Այն համարվում էր զրադաշտական երեք գլխավոր տաճարներից մեկը, ընդ որում՝ ամենամեծը, քանի որ պատկանում էր արքայական ընտանիքին և ռազմիկների դասին, այնինչ մյուս երկուսը՝ Ադուր Ֆարնբադը Ֆարսում և Ադուր Բուրզնմիհրը Խորասանում, պատկանում էին, համապատասխանաբար, մոզերի և արհեստավորների ու երկրագործների դասերին: Իրանական Ադրբեջանը նաև այն պետությունների կենտրոնն էր (Հուլավյաններ, Չոբանյաններ, կարա-կոյունլուներ,

¹ Կենտրոնական ռեզիստր. 1918-A-48749, դեսպանության/հյուպատոտության՝ սերիական համարը՝ J. Nr. D. 1629.

² P.Фрай, Наследие Ирана, М., 1972, с. 197, 253.

ակնյուրություններ, Մեֆյաններ), որոնք կազմավորվել էին Իրանի և Առաջավոր Ասիայի տարածքում քոչվոր մոնղոլների և թյուրքական ցեղերի կողմից:

Հենց վերջին պետական կազմավորումն էլ դարձավ Մեֆյանների դարաշրջանում իրանական պետականության վերածնունդի կորիզը: Հասկանալի է, որ պատմական Ադրբեջանի վերահսկողությունը մեծացնում էր ողջ Իրանին վերահսկելու հնարավորությունը, ընդ որում՝ ոչ միայն քաղաքական, այլև պատմահոգեբանական տեսանկյունից: Վերջին պարագայում պանթյուրքիստները հնարավորություն էին ստանում «լեգիտիմացնելու» ողջ Իրանի հանդեպ իրենց պահանջը՝ այդ պետությունների պատմությունը ներկայացնելով որպես մոնոլիտ թյուրքական ժառանգություն, պետություններ, որոնց համար էթնիկ պատկանելությունը ոչ մի դեր չէր խաղում, և որոնք թշնամի էին և՛ մեկը մյուսի, և՛ օսմանցիների հետ: Հենց այդ նպատակով էլ կազմավորումն արևելյան Անդրկովկասում, օսմանցիների թելադրանքով, վերցրեց «Ադրբեջան» անվանումը, այլ ոչ թե, ասենք, Կովկասյան կամ Անդրկասպյան Թուրքեստան, կամ Թաթարստան: Զե՞ որ այդ դեպքում ուսնձգությունն Իրանի դեմ շատ ավելի դժվար կլիներ: Բացի այդ, հենց Իրանի տարածքն էր բազմաթիվ հարյուրամյակներ կապող կամուրջ հանդիսացել Փոքր Ասիայի (Անատոլիա) և Կովկասի թյուրքերի և Կենտրոնական Ասիայի միջև. այն թյուրքերի համար պատմական հայրենիք դարձած Կենտրոնական Ասիայից ներգաղթյալների նոր հոսքերով էր սնում թյուրքերի զավթած տարածքները:

1918թ. սեպտեմբերին թյուրքական զորքերը գրավեցին Բաքուն: Բայց Առաջին աշխարհամարտում կրած պարտությունը թույլ չտվեց նրանց իրականացնել իրենց պլանները: Սակայն առաջին փուլը՝ թյուրքիզմը, հաջողվեց գործնականում իրականացնել, և Թուրքիայում ստեղծվեց առանձին թյուրքական «ազգ»: Սակայն պանթյուրքիզմի գաղափարից և դրա հնարավոր կիրառումից չհրաժարվեցին ո՛չ Թուրքիայում, ո՛չ նրա սահմաններից դուրս: Հաշվի առնելով այն, որ Թուրքիայում թյուրքիզմը հաղթանակեց, իսկ խորհրդային պետությունում թյուրքական ժողովուրդների զարգացման նոր և բավական ինտենսիվ փուլ սկսվեց, որում կրոնական բաղադրիչն իսպառ բացառվում էր ազգային ինքնության ձևավորման գործընթացից, արտաքին ուժերի համար պանթյուրքիզմը դառնում էր պայքարի հարմար լծակ կոմունիզմի և խորհրդային պետության դեմ: Թուրքիան, որը պարտվել էր Առաջին աշխարհամարտում և գրկվել ընդարձակ տարածքներից, պանթյուրքիզմի մեջ էր տեսնում երբեմնի մեծության վերածննդի հնարավորությունը:

Այս գործոնն օգտագործելու համար անհրաժեշտ էր, որ Թուրքիան «էթնիկ» սահման ունենար Անդրկովկասի և Իրանի թյուրքական ժողովուրդների հետ: Այս համատեքստում հիմնական խոչընդոտը Հայկական հարցն էր, այսինքն՝ այն ժամանակվա մեծ տերությունները շահագրգռված չէին, որ պատմական հայկական հողերը վերցվեն Թուրքիայից: Դրա համար էլ

Սևրի պայմանագրի, ինչպես նաև Միացյալ Նահանգների նախագահի իրավարար վճռի դրույթները, որոնցով Հայաստանին պետք է անցնեի Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի վիլայեթների մեծ մասը, մնացին թղթի վրա: Եվրոպական մեծ տերությունները (Ֆրանսիան, Անգլիան և Իտալիան) ոչ միայն ի կատար չածեցին դրանք, այլև նույնիսկ հակառակվեցին, որ Հայաստանը մտնի Ազգերի լիգա՝ հայտարարելով, թե չեն կարող երաշխավորել նրա սահմանները, որին, եթե Հայաստանն ընդունվեր Լիգա, Լիգայի անդամներին պարտավորեցնում էր պայմանագրի 10-րդ հոդվածը: Այս քաղաքականության արդյունքում Հայաստանը պարզապես ճգնվեց Սովետների ու քեմալականների ընդհանուր ջանքերով և բաժան-բաժան արվեց նրանց միջև: Ինչ վերաբերում է արևմտահայերի ճակատագրին, ապա նրանց համար դաշնակիցները 1921թ. Լոնդոնի կոնֆերանսում մտածում էին ստեղծել «ազգային օջախ» Թուրքիայի՝ արևելյան սահմանին, բայց արդեն 1922թ. Փարիզի կոնֆերանսում այդ օջախի՝ արևելյան սահմանին գտնվելու մատնանշումը հանվեց, իսկ Լոզանի կոնֆերանսում մեծ տերություններն ընդհանրապես հրաժարվեցին հայկական օջախի մտքից:

Այսպիսով, Առաջավոր, Ասիայում ռազմավարապես կարևոր տարածաշրջանի մեծ մասը՝ Հայկական լեռնաշխարհը, մնաց թուրքերի ձեռքում, որոնց մտադիր էին օգտագործել բոլշևիկների դեմ: Պանթյուրքիզմը, այսպիսով, ընկալվում էր որպես բոլշևիզմի դեմ քաղաքական-գաղափարախոսական պայքարի ճակատներից մեկը:

Խորհրդային Միությունը և պանթյուրքիզմի գաղափարախոսությունը

Բայց բոլշևիկներն էլ ձեռքները ծալած չէին նստել: Եթե թուրքերը մտադիր էին նորաստեղծ Ադրբեջանն օգտագործել պանթյուրքիստական նպատակների իրականացման համար, ապա բոլշևիկները հանձին Ադրբեջանի տեսնում էին լավ հնարավորություն՝ Իրանում և ողջ Մերձավոր Արևելքում բոլշևիզմի տարածման համար: Հարկ է ասել, որ այս կարծիքին բոլշևիկները հանգեցին ոչ անմիջապես, ինչն առաջին հերթին դրսևորվեց Ադրբեջանի բոլշևիկների մոտեցումներում: Այսպես, նրանք, կանխատեսելով արագ սովետականացումն ու փորձելով որոշել այդ նորաստեղծ պետության քաղաքական ապագան, որոշեցին մտնել ՌԽՖՍՀ կազմի մեջ՝ որպես Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներ, ինչպես Ռուսական կայսրության ժամանակ էր: Այնինչ, հայ և վրացի կոմունիստները հանդես էին գալիս Հայաստանի և Վրաստանի խորհրդային պետությունների կազմավորման օգտին: Կենտրոնը սկզբում չէր առարկում նման սցենարին: Դա, ի դեպ, ցույց տվեց Ադրբեջանի՝ որպես պետության, արհեստականությունը, և այն, որ այդ անվանումը գոյության մեկուկես տարվա ընթացքում այդպես էլ «չի կպել» այդ երկրին: Խորհրդային Ադրբեջանի ստեղծման անհրաժեշտության գործում վճռական դեր խաղաց Անաստաս Միկոյանը, որը կարողացավ Ստալինին և Օրջոնիկիձեին

համոզել, որ հենց այդ մոտեցումն է նպատակահարմար: Վերջիններիս միջոցով նա կարողացավ ի վերջո համոզել նաև Լենինին¹:

Խորհրդայնացումից և Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմավորումից հետո այդ հանրապետությունը վերածվեց Մերձավոր Արևելքում բոլշևիզմի տարածման հենակետի²: Այս մասին խոսում էին բոլշևիկյան գրեթե բոլոր առաջնորդները: Բաքվում տեղի էր ունենում Արևելքի ժողովուրդների համագումարը, վերապատրաստվում և ուսուցանվում էին ամենատարբեր ստրկացված երկրների ու Արևելքի ժողովուրդների ներկայացուցիչները:

Այս համատեքստում Ադրբեջանին վերապահվում էր առանցքային արտաքին քաղաքական դեր, և այդ կազմավորումը պետք է դառնար մուսուլմանական սոցիալիստական երկրի օրինակելի նմուշ գաղութային երկրների համար: Դրա հետ մեկտեղ, Ադրբեջանը ԽՍՀՄ կազմավորման պահին միակ միութենական մուսուլմանական հանրապետությունն էր, և դրա համար էլ Կենտրոնը բավարարեց այդ կազմավորման գրեթե բոլոր պահանջները, հատկապես տարածքային առումով՝ նրան հանձնելով մի շարք հայկական պատմական հողեր (Արցախ՝ Ղարաբաղ, Նախիջևան, Ուտիք), վրացական մի շարք տարածքներ և Դաղստանի մի մասը (Ղուբայի գավառը, Զաքաթալայի օկրուգը և այլն):

Սակայն առաջին շրջանում խորհրդային իշխանությունը բավական հետաքրքիր քաղաքականություն էր վարում: Ադրբեջանում, օրինակ, ամեն կերպ աջակցվում էին էթնիկ այլազանությունն ու ազգային ինքնագիտակցությունը³: Յուրաքանչյուր ազգություն, օրինակի համար, իրավունք ուներ տեղական և հանրապետական պետական հաստատություններում գործավարությունը

¹ Մանրամասն տե՛ս, օրինակ, Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսակցական արխիվ (ՄԼԻ ՀՄԿՍ), ֆ.1, ց.48, պ.մ. 265ա, թ.5; ՄԼԻ ՀՄԿՍ, պատճ. ֆոնդ, փ. 164, թ. 248; Микоян А., «Бакинское подполье при английской оккупации (1919 год)», журнал «Июность», N10, 1968, с. 87; Киров С., Статьи, речи, документы, т.1, Москва, 1936, с. 144; Орджоникидзе С., Путь большевика, Москва, 1967, с. 267; Гулиев Дж., Борьба коммунистической партии за осуществление ленинской национальной политики в Азербайджане, Азербайджанское государственное издательство, Баку, 1970, сс. 278-290; Борьба за победу Советской власти в Азербайджане 1918-1920 гг., Документы и материалы, Баку, 1967, с. 138:

² Ленин В., Полное собрание сочинений, т. 51, Издательство политической литературы, Москва, 1970, с. 227; Первый съезд народов Востока. Стенографические отчеты, Петроград, 1920, с. 8; ՄԼԻ ՀՄԿՍ, ֆ. 7, ց. 1, պ.մ. 5, թ. 3

³ Տե՛ս Собрание узаконений и распоряжений рабоче-крестьянского правительства Азербайджанской ССР, Баку, N1, 1920, с. 5; Собрание узаконений и распоряжений рабоче-крестьянского правительства Азербайджанской ССР, Баку, N2, 1921, сс. 24-25; Резолюции 2-го съезда АКП(б), Баку, 1920, с. 6; Орджоникидзе Г., Статьи и речи, Моск-ва, 1956, т. 1, с. 296; ЦГАОР (Центральный государственный архив Октябрьской революции) СССР, ф. 1318, оп. 1. д. 657, л. 29-30; ՄԼԻ ՀՄԿՍ, ֆ. 14, ց. 1, պ.մ. 8, թ. 65; ЦГАОР Азерб.ССР, ф. 57, оп. 1. д. 44, л. 3.



տանել մայրենի լեզվով: Ավելին, Ադրբեջանական ԽՍՀ-ում ստեղծվեցին հայկական երկու ինքնավար կազմավորումներ՝ Նախիջևանի ԻԽՍՀ-ն և Լեռնային Ղարաբաղի ԻՄ-ն: Իհարկե, այժմ ադրբեջանական իշխանություններն ու պատմաբաններն ամեն կերպ փորձում են ժխտել, որ Նախիջևանի ԻԽՍՀ-ն հայկական է, բայց այն, որ այդ կազմավորումը հայկական էր, վկայում է, մասնավորապես, նրա պետական սիմվոլիկան՝ զինանշանը և դրոշը:

Ինչպես հայտնի է, նախկին ԽՍՀՄ ինքնավար հանրապետությունների զինանշաններն ու դրոշները նման էին այն միութենական հանրապետությունների զինանշաններին ու դրոշներին, որոնց կազմի մեջ մտնում էին:

Նկ. 8

Նախ. ԻԽՍՀ դրոշը
մինչև 1937թ.



Նկ. 9

Նախ. ԻԽՍՀ զինանշանը
մինչև 1938թ.



Տարբերությունը միայն այն էր, որ միութենական հանրապետության լեզվով արված մակագրության կողքին կար նաև ինքնավար հանրապետության հիմնական ազգության լեզվով արված մակագրություն: Նախիջևանի Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Սահմանադրության 112-րդ հոդվածում՝ ընդունված 1937թ. սեպտեմբերի 18-ին, Նախիջևանի ԻԽՍՀ Սովետների Արտակարգ X համագումարում, տրված էր այդ ինքնավարության դրոշի հետևյալ նկարագրությունը. «Նախիջևանի Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության պետական դրոշը Ադրբեջանական ԽՍՀ պետական դրոշն է՝ կարմիր պաստառ, ձախ անկյունում, վերին փայտիկի մոտ, ոսկյա մուրճն ու մանգաղը և մակագրություն ադրբեջաներեն ու հայերեն լեզուներով. «Ադր. ԽՍՀ», որի ներքևում ավելի փոքր տառաչափով գրված է «Նախիջևանի ԻԽՍՀ» ադրբեջաներեն և հայերեն»¹:

Նույնն էր վիճակը նաև Նախիջևանի Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Սահմանադրության 111-րդ հոդվածում (հաստատված 1941թ. ապրիլի 7-ին Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի IV նստաշրջանի կողմից), որտեղ կար հետևյալ նկարագրությունը. «Նախիջևանի

¹ St' u «Нахичевань», Russian Centre of Vexillology and Heraldry, <http://www.vexillographia.ru/azerbaij/nahic.htm>.

Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության պետական զինանշանը Ադրբեջանական ԽՍՀ պետական զինանշանն է, որը պատկերում է մուրճ ու մանգաղ, նավթաշտարակ ծագող արևի ֆոնին՝ շրջանակված բամբակով և ցորենի հասկի պսակով, ադրբեջաներեն և հայերեն մակագրություններով. «Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն», «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» և «Նախիջևանի ԻԽՍՀ»: Զինանշանի վերին մասում հնգաթև աստղն է»¹:

Միևնույն ժամանակ, խորհրդային կառավարությունն առաջին տարիներին աջակցում էր ԽՍՀՄ սահմաններում գտնվող թյուրքական ժողովուրդների պանթյուրքական միասնությանը: Այդ միասնությունը դրսևորվում էր, օրինակ, մշակութային-լեզվական առումով, ինչը կրկին իր արտացոլումն էր գտնում խորհրդային պետության պետական խորհրդանշաններում: Այսպես, ԽՍՀՄ 1924թ. Սահմանադրության 11-րդ գլխի դրույթների համաձայն՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության պետական զինանշանը պատկերում էր մուրճ ու մանգաղ երկրագնդի վրա, արևի շողերի մեջ և շրջանակված հասկերով, վեց լեզվով (որոնք նշված են 34-րդ հոդվածում) «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» մակագրությամբ:

Զինանշանի վերին մասում հնգաթև աստղ կար: Վեց լեզուները, որոնցով գրված էր կարգախոսը, ռուսերենը, ուկրաիներենը, բելոռուսերենը, վրացերենը, հայերենը և թյուրք-թաթարերենն (արաբագիր) էին: Տաջիկական ԽՍՀ կազմավորումից հետո ավելացվեց յոթերորդ ժապավենը՝ տաջիկերեն մակագրությամբ, որի գիրն այն ժամանակ ԽՍՀՄ տարածքում լատինացվել էր: Բայց դա միակ փոփոխությունը չէր: ԽՍՀՄ Սովետների 1931թ. մարտի 31-ին տեղի ունեցած 6-րդ համագումարի «Սահմանադրական հարցերի մասին զեկուցման վերաբերյալ» որոշմամբ բավական հետաքրքիր փոփոխություններ են մտցվում ԽՍՀՄ Սահմանադրության տեքստում, այն է. «ԽՍՀ Միության Սահմանադրության 70-րդ հոդվածում «վեց լեզուներով մակագրություն» բառերը փոխարինել «միութենական հանրապետություններում բոլորի կողմից կիրառվող լեզուներով մակագրություն» բառերով: Այս որոշմամբ փոխվում էր նաև միութենական հանրապետություններում բոլորի կողմից օգտագործվող լեզուների ցանկը՝ շարադրված ԽՍՀՄ Սահմանադրության (Հիմնական օրենքի) 34-րդ հոդվածում, որն սկսեց ներառել «ռուսերենը, ուկրաիներենը, բելոռուսերենը, վրացերենը, հայերենը, ադրբեջաներենը, ուզբեկերենը, թյուրքմեներենը և տաջիկերենը (ֆարսի)»:

Ադրբեջաներեն, ուզբեկերեն և թյուրքմեներեն լեզուները ներկայացված էին միասնական ժապավենով՝ արաբագիր թյուրքերեն (թյուրք-թաթարերեն)

¹ Տե՛ս, օրինակ, «Нахичеванская автономная республика», Официальный сайт русского центра флаговедения и геральдики, <http://www.heraldicum.ru/azerbaij/index.htm>; Поцелуев В., Гербы Союза ССР: Из истории разработки, Издательство политической литературы, Москва, 1987.

լեզվով մակագրությամբ: Կարգախոսի ռուսերեն տարբերակը փոխադրվեց ժապավենի կենտրոնական հանգույց¹: Այնուհետև թյուրք-թաթարերենի արաբական գրաֆիկան փոխարինվեց լատինականով:

Այստեղ հստակ երևում է թյուրքական համերաշխությունը պահելու և դրա երկփեղկման դիլեման: Նախ՝ ի հայտ եկան առանձին թյուրքական լեզուների անվանումներ՝ աղբրեջաներեն, ուզբեկերեն և թուրքմեներեն: Բայց դրանք դեռ շարունակում էին մնալ միասնական թյուրք-թաթարական զանգվածի մասը՝ ներկայացնելով այս բոլոր ժողովուրդներին ԽՍՀՄ զինանշանի վրա:

Ո՞րն էր խորհրդային պետության նման քաղաքականության իմաստը: Այստեղ վառ արտահայտվել է զսպումների և հակակշիռների համակարգը՝ պանթյուրքիզմի գաղափարախոսության համատեքստում: Բանն այն է, որ Խորհրդային Միությունը, որքան էլ տարօրինակ հնչի, սկսած 1920-ական թթ. մինչև 1930-ական թթ. առաջին կեսը, դարձավ պանթյուրքիզմի գաղափարախոսության իրականացման ջատագովը: Բայց խորհրդային պանթյուրքիզմը տարբերվում էր «դասական» պանթյուրքիզմից նրանով, որ այլ գաղափարախոսական ուղղվածություն ուներ: Դա մի տեսակ կոմունիստական պանթյուրքիզմ էր: ԽՍՀՄ կազմի մեջ էին գտնվում թյուրքական ժողովուրդների մեծ մասը և նրանց պատմական «նախահայրենիքը» «Թուրանը»: Ավելին, «համաշխարհային հեղափոխության» տարածման միջոցով Խորհրդային Միությունն ըստ էության կարող էր իր կազմի մեջ ներառել թյուրքական բոլոր ժողովուրդներին և այդպիսով կենսագործել միասնական տերություն ստեղծելու պանթյուրքիստների երազանքը: Ընդ որում՝ այդ տերությունը, թեկուզև ոչ թյուրքական, բայց այնուամենայնիվ, ազգային էլ չէր լինի: Դա թյուրքական ժողովուրդներին հնարավորություն կտար զարգանալ՝ օգտագործելով ոչ միայն և ոչ այնքան իրենց ռեսուրսները, որքան նաև այլ ժողովուրդների պոտենցիալը: Դրա հետ մեկտեղ, հեռանկարում նրանք կկարողանային, զորեղանալով, անջատվել այդ երկրից:

Մինևույն ժամանակ, հավանաբար զգալով բոլշևիզմի հիմնական

երազանքների և նպատակների իրականացման անհնարիությունը, ինչպիսիք էին, օրինակ, նացիոնալիզմի ոչ բռնի վերացումը, կոմունիզմի գաղափարների սերմանումը և այլն, շատ կարճ ժամանակի ընթացքում խորհրդային ստրատեգներն սկսեցին ներդնել զսպումների և հակակշիռների համակարգը, որոնց մեջ առավել գործունը թյուրքական զանգվածի բաժանումն էր տարբեր ժողովուրդների և վարչական միավորների: Հետագա գլոբալ

¹ ԽՍՀՄ միութենական և ինքնավար հանրապետությունների զինանշանի մասին ավելի մանրամասն տե՛ս, օրինակ, Сборник законов СССР 1938-1967, Москва, изд. «Известия», 1968; Поцелуев В., Гербы Союза ССР: Из истории разработки, указ. соч.; Болотина С., «Как создавался наш герб», Наука и жизнь, N11, 1983.

աշխարհաքաղաքական միտումները վերջին սցենարն ավելի նպատակահարմար և ինչ-որ իմաստով անայլընտրանք դարձրին: Մեծ տերությունների միջև գլոբալ պայքարում կրկին կարևոր դեր սկսեցին հատկացնել պանթյուրքիզմին՝ որպես ԽՍՀՄ-ի դեմ պայքարի արդյունավետ միջոցներից մեկի:

Պանթյուրքիզմի գաղափարը «պտտեցնում» էին տարբեր երկրներ, ընդ որում՝ հիմնականում ԽՍՀՄ-ի դեմ պայքարի համատեքստում: Այսպես, 1920-ական թթ. այդ պայքարի կողմնակիցն էր Ճապոնիան: Այն տարիներին Տոկիոն ակտիվորեն մշակում էր «Թուրանական կայսրության» (Սինցզյանի, Մոնղոլիայի, Միջին Ասիայի և Ղազախստանի ներառմամբ) ստեղծման պլանը Ճապոնիայի հովանու ներքո: Դեռ 1918թ. Ճապոնացիներն ստեղծեցին «Թուրան» միությունը, Տոկիոյում բացվեց ուլդուրական դպրոց ազգային կադրեր պատրաստելու համար, լույս էր տեսնում ամսագիր Սինցզյանի մասին, իսկ Տոկիոյում ապրող Օսմանների դինաստիայի ներկայացուցիչ Աբդուլ Քերիմին պատրաստում էին գահակալության¹: Պատահական չէ, որ Առաջին աշխարհամարտի ավարտից հետո չինական իշխանությունները խստագույն արգելք դրեցին արտասահմանից Սինցզյան կրոնական բնույթի գրականություն ներկրելու վրա, որը մինչ այդ այստեղ էր բերվում Տաշքենդից, Կազանից և Թուրքիայից²:

Պանթյուրքիստական գաղափարների իրականացման նոր ակտիվ փուլ սկսվեց 1930-ական թթ. առաջին կեսին: 1933թ. նոյեմբերի 12-ին Սինցզյանում հռչակվեց Արևելյան Թուրքեստանի իսլամական հանրապետությունը (ԱԹԻՀ): Այդ կազմավորման մայրաքաղաքը դարձավ Քաշգար քաղաքը: Այս պետության ստեղծման գործում էական դեր խաղաց Թուրքիան: Հանրապետության առաջնորդներ Սաբիթ Դամուլլան և Մուհամադ Բուդրան դեռ 1933թ. սկզբին գաղտնի իրենց ներկայացուցիչներն են ուղարկում Թուրքիա, իսկ Անկարայից Քաշգար է գալիս մի խումբ՝ կազմված քաղաքական գործիչներից, զինվորականներից և մասնագետներից: Նրանց մեջ էին հայտնի քաղաքական գործիչներ Մուսթաֆա Քենթլին, Ալի Բեյը և Հարբիյադին Մահմուդը: Մի շարք ուլդուր գիտնականներ և հետազոտողներ պնդում են, որ Թուրքիայի ներկայացուցիչները լուրջ ազդեցություն են գործել այդ պետության կազմավորման և անվանման վրա³: Արևելյան Թուրքեստանի թյուրքական իսլամական հանրապետության առաջնորդները ենթադրում էին, որ Թուրքիայի քեմալական կառավարությունը միջոցներ կձեռնարկի միջազգային ասպարեզում արտաքին ագրեսիայից նոր պետությունը պաշտպանելու

¹ Петров В., Мятежное сердце Азии. Синьцзян: краткая история народных движений и воспоминания, М., Крафт+, 2003, с. 345.

² St' u Жизнь национальностей, N14, 1922, с. 2.

³ Хожамберди Кахарман, Уйгуры. Этнополитическая история с древнейших времен до наших дней, указ. соч., с. 342.

համար, և միննույն ժամանակ նրանից սպասում էին զգալի ռազմատնտեսական օգնություն: Մակայն անկախ պետության ի հայտ գալը, որի գաղափարախոսությունը պանթյուրքիզմն ու պանիսլամիզմն էր, բնականաբար, բացասաբար ընկալվեց ոչ միայն Չինաստանում, այլև ԽՍՀՄ-ում: Արդյունքում՝ ԱԹԻՀ-ը հայտնվեց երկկողմանի՝ թե՛ Չինաստանի, թե՛ ԽՍՀՄ հարվածի տակ: Հենց ԽՍՀՄ միջամտության շնորհիվ Արևելյան Թուրքեստանի թյուրքական իսլամական հանրապետությունը վերացվեց:

Բայց այս խնդիրը հատկապես ակտուալացվեց 1933թ. նացիստների իշխանության գալով, ինչն արդեն դարձավ նոր համաշխարհային պատերազմի անխուսափելիության հաստատումը, որ կարող էր կրկնվել 1918թ. սցենարը, երբ առհասարակ պանթյուրքական պլանների իրականացման գործընթաց էր գնում: Այն, որ այն ժամանակ և՛ Գերմանիան, և՛ Թուրքիան իսկապես մտադիր էին կրկին գործի դնել պանթյուրքիզմը, արդեն բոլորին հայտնի փաստ է: Այսպես, օրինակ, 1941թ. նոյեմբերի 24-ին Թուրքիայում Գերմանիայի դեսպանության աշխատակիցներն ուղերձ են հղում Բեռլին, որում հաղորդվում էր այն աշխատանքի մասին, որը կատարվել էր ադրբեջանական թուրքերի կողմից՝ Կովկասը խորհրդային իշխանությունից ազատագրելու ուղղությամբ, ընդ որում՝ Թուրքիան դառնում էր տարածաշրջանի փաստացի տերը¹: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում գերմանական ԱԳՆ որոշ փաստաթղթեր, որոնք վերաբերում են մուսավաթական էմիգրացիայի գործունեությանը Երկրորդ համաշխարհային պատերազմի շրջանում: Այսպես, օրինակ, Թուրքիայում Գերմանիայի դեսպան ֆոն Պապենի 1941թ. օգոստոսի 5-ի՝ արտգործնախարարություն ուղարկված նամակում ասվում է. «Նկատի ունենալով գերմանացիների հաջողությունները Ռուսաստանում՝ թուրքական կառավարական շրջանակներն էլ ավելի են զբաղվում թուրք-ռուսական սահմանից այն կողմ գտնվող իրենց հայրենակիցների և հատկապես ադրբեջանական թյուրքերի ճակատագրով»: Այնուհետև նամակում նշվում էր, որ այդ շրջանակները հակված են վերադառնալ 1918թ. իրադարձություններին՝ նկատի ունենալով «այդ մարզը, հատկապես նավթի արժեքավոր նավթահանքերն իրենց միացնելը»²:

Այս համատեքստում ԽՍՀՄ-ն սկսում է իրականացնել լայնածավալ էթնոքաղաքական նախագծեր թյուրքական «ճակատում»: Ի հայտ են գալիս թյուրքական նոր պետական կազմավորումներ: Թյուրքական միութենական

¹ «Ադրբեջանական թյուրքերի ղեկավարը Կովկասի ազատագրման մասին», թարգմ.՝ գերմաներենից, պատճեն, Գերմանիայի դեսպանատուն, Անկարա, փաստաթուղթ №A6032, 24 նոյեմբերի 1941թ., տեղեկատվությունը վերցված է «Наша победа» վեբ կայքից, <http://9may.ru/unsecret/m10011709>.

² Документы министерства иностранных дел Германии. Выпуск II. Германская политика в Турции (1941-1943гг.), М., Огиз, Политиздат, 1946, с. 34.

հանրապետությունների ընդհանուր թիվը ԽՍՀՄ-ում հասնում է հինգի՝ Թուրքմենիա, Ուզբեկստան, Կիրգիզիա, Ղազախստան և Ադրբեջան: Թյուրքական ինքնավար կազմավորումներ կային ՌԽՖՍՀ կազմում՝ Թաթարստան, Բաշկիրիա, Չուվաշիա, Յակուտիա (վերջին երկուսում քրիստոնեություն դավանող թյուրքեր են): Կովկասում պանթյուրքիզմին դիմակայելու համար խորհրդային իշխանությունները թյուրքական մասսան «տարրալուծեցին» մի շարք վարչական կազմավորումներում: Այդպիսին էին Դաղստանը, Կաբարդինո-Բալկարիան և Կարաչաևո-Չերկեսիան: Դաղստանի ինքնատիպությունն այն էր, որ բազմազգ այս ինքնավար կազմավորման սահմաններում ապրում են տասնյակ ազգություններ, որոնք չունեն իրենց հստակ էթնոքաղաքական սահմանները: Ինչ վերաբերում է Կաբարդինո-Բալկարիային և Կարաչաևո-Չերկեսիային, ապա այստեղ թյուրք բալկարներն ու կարաչաևցիները միավորվել էին կաբարդիների և չերկեսների կովկասյան ազգություններին ընդհանուր վարչատարածքային կազմավորման մեջ:

Բայց միայն նոր կազմավորումների ստեղծմամբ չէ, բնականաբար, որ գործն ավարտվում էր: Իրենց միութենական և ինքնավար հանրապետություններն ստացած ժողովուրդները թևակոխեցին ազգային-պետականակերտման որակապես այլ փուլ, սկսվեց պատմության վերիմաստավորումը, նոր ազգակ հաղորդվեց մշակույթի զարգացմանը և այլն: Այսպիսով, Խորհրդային Միությունը մասնատեց ինչպես թյուրքական զանգվածի միասնությունը, այնպես էլ իսլամական համերաշխությունը, չէ՞ որ մեկ միասնական վարչատարածքային միավորի սահմաններում հայտնված տարբեր մուսուլմանական ժողովուրդների մեջ հաճախ ծագում էին քաղաքական, տնտեսական, էթնոմշակութային և այլ բնույթի մինչ այդ չնկատված լուրջ հակասություններ: Առայսօր նման հակասություններ կան նախկին խորհրդային միութենական և ինքնավար նշված բոլոր հանրապետություններում: Նոր միութենական հանրապետությունների ի հայտ գալուց հետո համապատասխան փոփոխություններ արվեցին երկրի զինանշանի վրա: ԽՍՀՄ Սահմանադրության մեջ հաստատված 1936թ. դեկտեմբերի 5-ի ԽՍՀՄ Սովետների արտակարգ VIII համագումարում, զինանշանի վրայի ժապավենների թիվը դարձավ 11 և այն ձեռք բերեց իր արդեն ավելի սովորական ուրվագիծը:

Ադրբեջանի դերն ու տեղը համաշխարհային պանթյուրքիստական աշխարհաքաղաքականության համատեքստում

Ադրբեջանական ժողովրդի ստեղծման աշխարհաքաղաքական «հրամայականները»

Միջազգային իրադրության փոփոխությունը 1930-ական թթ. և դրա հետ կապված՝ ԽՍՀՄ մարտավարության և ռազմավարության փոփոխությունը պանթյուրքիզմի հանդեպ փոքր-ինչ ինքնատիպ ձևով անդրադարձան Ադրբեջանի վրա: Այստեղ Խորհրդային Միությունը հատուկ մոտեցում

դրսևորեց՝ մշակելով և սկսելով պատմության մեջ աննախադեպ՝ նոր ժողովրդի ստեղծման (տարբեր էթնազգային խմբերից) նախագծի իրականացումը:

Պետք է ասել, որ խորհրդային պետությունը նման փորձարկումներ առաջ էլ էր արել, ընդ որում՝ փորձարկումը կրկին թյուրքական ժողովուրդների վրա էր արվել: Այսպես, Միջին Ասիայում նոր ազդակ հաղորդվեց ուզբեկ ժողովրդի ձևավորմանը, որի կազմի մեջ մտցրին, օրինակ, սարթերին¹, բավական մեծաթիվ նստակյաց մի խումբ, որը թյուրքական և իրանական ժողովուրդների սիմբիոզն էր: 1921թ. Թուրքեստանի ԻԽՍՀ և Մինցզյանի միացյալ ուղղորական Տաշքենդյան կոնֆերանսում, որը կազմակերպվել էր պետական և հասարակական գործիչ, լուսավորիչ և հրապարակախոս Աբդուլա Ռոզիբաքիևի նախաձեռնությամբ, թյուրքագետ Սերգեյ Մալովի անմիջական մասնակցությամբ, որոշում ընդունվեց ժողովրդի «ույղուր» պաշտոնական ինքնանվանման՝ որպես համազգայինի, վերականգնման վերաբերյալ²: 1923թ. ՌԿ(բ)Կ Կենտկոմի Միջինասիական բյուրոն հատուկ նստաշրջանում ընդունեց հատուկ բանաձև «ույղուր» էթնոնիմի վերաբերյալ: Պետք է նշել, որ ընդհուպ մինչև XX դարի 30-ական թթ. Մինցզյանում մուսուլմանական ժողովուրդների մեջ ազգային ինքնությունն արտահայտվում էր շատ ինքնատիպ ձևով: Հայտնի կենտրոնաասիական փիլիսոփա, ակադեմիկոս Ազիզ Նառինբաևը, խոսելով այն ժամանակվա Մինցզյանի մասին, գրում է. «Տեղի բնակիչներն աղոտ պատկերացում ունեին միասնական ազգին իրենց պատկանելության մասին: Ազգային պատկանելության մասին հարցին շատերը պատասխանում էին. քաշգարցի, խոտանցի, յարքենդցի, քուշարացի և այլն, և այլն, անվանում էին այն վայրը, որտեղի ծնունդ էին իրենք»³: Այդ իրավիճակում հատուկ ակտիվություն էին դրսևորում պանթյուրքիստները, որոնք փորձում էին օգտվել իրավիճակից և ինքնության հայրենակցական համակարգը փոխադրել թյուրքիզմի վերազգային համակարգ: Պանթյուրքիստական առաջնորդներից մեկը՝ վերոնշյալ Մուհամադ Բուդրան, ասում էր. «Մեր հայրենիքը Թուրքեստանն է, մեր ազգությունն է թուրք, մեր կրոնը՝ իսլամ»⁴:

Բայց խնդիրն Ադրբեջանում շատ ավելի բարդ էր: Հիմնական պատճառն այդ պետական կազմավորման էթնիկ առանձնահատկությունն էր: Ադրբեջանը

¹ Սարթերի և ուզբեկների հետ նրանց միաձուլման մասին մանրամասն տե՛ս, օրինակ, Бартольд В., «О преподавании туземных наречий», газета «Окраина», N19, 1894; Бартольд В., Сочинения, том II, часть 2, Москва, 1964, сс. 303-305; Bregel Y., «The Sarts in the Khanate of Khiva», Journal of Asian History, Vol.12, N2, 1978; Ильхамов А., «Археология узбекской идентичности», Этнический атлас Узбекистана, Ташкент, 2002, сс. 268-302.

² Хожамберди Кахарман, Уйгуры. Этнополитическая история с древнейших времен до наших дней, указ. соч., с. 354.

³ Տե՛ս Нарынбаев Азиз, Избранные произведения, Бишкек, 2004, с. 513.

⁴ Хожамберди Кахарман, Уйгуры. Этнополитическая история с древнейших времен до наших дней, указ. соч., с. 343.

նախկին ԽՍՀՄ միակ հանրապետությունն էր, որի անվանումը չէր ածանցվում էթնոխմբի անունից: Որպես օրինակ նշենք, որ «Հայաստանը» «հայ» բառից է ածանցվում, «Ուկրաինան»՝ «ուկրաինացի»-ից և այլն: Ի տարբերություն խորհրդային մյուս հանրապետությունների, Ադրբեջանը բնակեցնում էին թյուրքական, կովկասյան, իրանական ծագման էթնոխմբեր, ինչպես նաև հայեր, վրացիներ, ռուսներ և հրեաներ: Բնակչության մոտ 55%-ը թյուրքալեզու ժողովուրդներն էին՝ միավորված «Խորհրդային Ադրբեջանի թուրքեր» անվան տակ: Հատկանշական է, որ 1920-ական թթ. մարդահամարի տվյալների համաձայն՝ անգամ Պարսկաստանի թյուրք բնակչությունը, որն ապրում էր Ադրբեջանում, հիշատակվում է որպես առանձին էթնիկ խումբ՝ Պարսկաստանի թյուրք բնակչություն¹:

Խորհրդային իշխանությունները բավական վճռական և արագ էին գործում: 1936թ. Ադրբեջանական ԽՍՀ մուսուլմանական բոլոր ժողովուրդները միավորվեցին մեկ ժողովրդի մեջ՝ ադրբեջանցի անվան տակ²: Տրամաբանությունը շատ պարզ էր: Նոր ժողովուրդը ոչ միայն միավորում էր թյուրքական և բնիկ կովկասյան ու իրանական ժողովուրդներին, այլև կարծես դառնում էր տարածաշրջանում ապրած և ապրող ժողովուրդների մշակութային-պատմական և հասարակական-քաղաքական հարուստ ժառանգության ժառանգորդը: Ադրբեջանական ԽՍՀ-ում պաշտոնապես անհետացան բնիկ (ավտոխտոն) շատ ժողովուրդներ, ինչպիսիք էին, օրինակ, թաթերն ու իրանական մի շարք այլ և դադատանյան ժողովուրդներ, ինչպես նաև այստեղ հաստատված քրդերը: Կտրուկ կրճատվեց թալիշների, լեզգիների և այլոց թիվը:

1920-30-ական թթ. մարդահամարներում մեսխեթցի թուրքերը հիշատակվում էին որպես թյուրքեր, այնուհետև այս ժողովրդի տարաբնակեցման շրջաններում բացվեցին թյուրքական դպրոցներ, որոնք հետագայում դարձան ադրբեջանական թյուրքական դպրոցներ³, իսկ այդ ժողովուրդը նորաստեղծ «ադրբեջանցի» ժողովրդի մի մասը⁴: Բայց, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, մի քանի տարվա մեջ թյուրքական զանգվածի այս հատվածը նոր «ադրբեջանցի» ժողովրդի մեջ ձուլվելն անհնարին եղավ, և 1944թ. նրանց արքայացին՝ մեղադրելով Թուրքիային համակրելու մեջ, այսինքն՝ ելնելով պանթյուրքիզմի երկյուղից: Մեսխեթիայի թյուրքերին նոր

¹ Տե՛ս, օրինակ, Большая советская энциклопедия, том 1, раздел «Азерб. ССР», Акционерное общество «Совет-ская энциклопедия», М., 1926, с. 641.

² Տե՛ս Алекперов А., Исследования по археологии и этнографии Азербайджана, Издательство Академии наук Азербайджанской ССР, Баку, 1960, с. 71.

³ «Турки-месхетинцы», Энциклопедия Народы России, М., Научное издательство «Большая Российская Энциклопедия», 1994, сс. 342-344.

⁴ “Meskhetians” in Minahan James, Encyclopedia of the Stateless Nations, Vol. 3, Greenwood Press, Westport, Con-necticut, London, 2002, p. 1239.

անվանումն ու նոր ինքնությունը հարիր չէին, և արտոգրավայրերում նրանք սկսեցին համախմբվել նոր էթնոխմբում՝ «մեսխեթցի» անվամբ, իսկ 1950-60-ական թթ. նրանք արդեն պաշտոնապես իրենց անվանում էին մեսխեթցի թուրքեր¹:

Այն բանից հետո, երբ պաշտոնապես «կազմավորվեց» նոր «ադրբեջանական ազգը», Կենտրոնն ամեն կերպ աջակցում էր դրա ամբողջականությանը՝ օժանդակելով նոր՝ «ադրբեջանական» ինքնության սերմանմանը: Ազգային փոքրամասնությունների հանդեպ երբեմնի հանդուրժողականությունն անհետացավ: Ցանկացած անհնազանդություն դաժանաբար պատժվում էր:

Հայկական գործոնը ադրբեջանական ժողով պանթյուրքիզմի զսպման գործընթացում

Նոր «ադրբեջանական ժողովրդի» «կազմավորման» գործընթացում հատուկ նշանակություն էր ձեռք բերում հայկական գործոնը: Ի տարբերություն Ադրբեջանական ԽՍՀ-ում հոծ բնակվող այլ ժողովուրդների, հայերը չէին կարող դառնալ նորաստեղծ ադրբեջանական ժողովրդի մասը: Նախ՝ հայերը քրիստոնյաներ էին, երկրորդ՝ հայ ժողովուրդը պետականության հազարամյակների պատմություն ուներ: Նման ժողովուրդը չէր կարող դառնալ նոր ժողովրդի մի մասը, ի տարբերություն մուսուլմանական ժողովուրդների, որոնց, առնվազն, միավորում էր ընդհանուր հավատը, ինչն այն ժամանակ, թեկուզև ծածուկ, բայց դեռ կարևոր դեր էր խաղում:

Խորհրդային պետությունը երկակի մոտեցում մշակեց հայկական գործոնի հանդեպ: Նոր ադրբեջանական ժողովրդի ստեղծման համատեքստում հայկական գործոնը թե՛ լուրջ խոչընդոտ էր, թե՛ հնարավորություն՝ արդյունավետորեն կառավարելու պլանավորված գործընթացները: Խոչընդոտն այն էր, որ Ադրբեջանական ԽՍՀ-ում գոյություն ունեին հայկական երկու վարչական-պետական կազմավորումներ՝ Նախիջևանի ԻԽՍՀ-ն և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը, որոնք երկուսն էլ այն ժամանակ սահմանակցում էին Հայկական ԽՍՀ-ին²: Եթե դրան ավելացնենք նաև հոծ հայ բնակչությունը Հյուսիսային Արցախում և Ադրբեջանական ԽՍՀ այլ շրջաններում, ապա նորաստեղծ ժողովրդի համար միանգամայն դյուրաբեկ իրավիճակ էր ստեղծվում: Ստացվում էր, որ այդ հանրապետության գրեթե ողջ արևելյան մասը չէր հանդիսանում «նորաստեղծ ժողովրդի» էթնոմշակութային տարածքի օրգանական մասը, որը պետք է «բնիկություն» ստանար իր հանրապետության ամբողջ տարածքում:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն, որ այդ տարածքները մշտապես եղել են Հայոց Հայրենիքի՝ հայկական էթնոքաղաքական-մշակութային

¹ Նույն տեղում, с. 1237, 1240.

² См. у, орինակ, քարտեզները «Азерб. ССР» и «Арм. ССР» բաժիններում (Большая советская энциклопедия, 1926 года издания, том 1 и том 3, указ. док.).

տարածքի օրգանական մասը և կարևորագույն դեր են խաղացել հայ ժողովրդի պատմության մեջ, ապա դժգոհության առաջացման իրական վտանգ էր ստեղծվում ինչպես Ադրբեջանական ԽՍՀ սահմաններում բռնի ներառված հայ բնակչության, այնպես էլ նորաստեղծ «ադրբեջանական ժողովրդի» կողմից:

Այս իրավիճակում բոլշևիկների համար, ելնելով սեփական աշխարհաքաղաքական նկատառումներից, գերադասելի դարձավ ադրբեջանական «բնիկության» «լեգիտիմացման» տարբերակը, ինչի արդյունքում հայ ժողովրդին ու պետականությանն ուժգին հարված հասցվեց: Դրա գլխավոր ուղղությունը դարձավ հայոց պետականության նպատակապահ վերացումը Նախիջևանում: Արդեն 1938թ. օգոստոսին, իսկ այլ տվյալներով՝ 1939թ. հուլիսի վերջին փոփոխություններ մտցվեցին Նախիջևանի ԻԽՍՀ պետական խորհրդանշաններում (զինանշան, դրոշ): Դրանցից հանվեցին հայերեն մակագրությունները և մնացին միայն ադրբեջաներեն լեզվովները, որոնց հետագայում ավելացվեցին նաև ռուսերեն մակագրությունները¹: Համապատասխան փոփոխություններ մտցվեցին, բնականաբար, նաև Նախիջևանի Ինքնավար Հանրապետության սահմանադրությունում: Ի հետևանք, ինչպես արդեն հայտնի է, Նախիջևանում տեղի ունեցավ «սպիտակ ջարդ», որի արդյունքում երկրամասն ամբողջովին հայաթափվեց: Նույնիսկ այժմ, երբ այդ շրջանում ոչ մի հայ չի մնացել, ադրբեջանական իշխանությունները շարունակում են ցեղասպանության քաղաքականությունը, հիմա էլ հայկական մշակութային ժառանգության հանդեպ՝ բարբարոսաբար ոչնչացնելով եկեղեցիները, խաչքարերը և այլ հուշարձաններ:

Խորհրդային իշխանությունների դիրքորոշումը Նախիջևանի հարցում, այնուամենայնիվ, ավելի շատ հարցեր, քան թե պատասխաններ է առաջացնում: Օրինակ, 1930-ական թթ. Թուրքիան ակտիվ քայլեր նախաձեռնեց Նախիջևանի հետ ընդհանուր սահման ստեղծելու ուղղությամբ: 1932 և 1937թթ. Թուրքիայի և Իրանի միջև երկու պայմանագիր ստորագրվեց, որոնց համապատասխան՝ Թուրքիան, մի շարք տարածքներ զիջելով Իրանին, Նախիջևանի հետ ընդհանուր սահման ստացավ²: Այս քաղաքական քայլը հստակ ցույց է տալիս Թուրքիայի մտադրությունները:

Եվ այս ամենի ֆոնին ԽՍՀՄ-ը լիովին և կենտրոնացված ձևով թյուրքացնում է Նախիջևանն այն բանի փոխարեն, որ պահի նրա երկազգի լինելը՝ Ադրբեջանին անհրաժեշտ աշխարհաքաղաքական հունով զսպելու լծակներ

¹ «Нахичевань», Russian Centre of Vexillology and Heraldry, <http://www.vexillographia.ru/azerbaij/nahic.htm>, указ. док; «Нахичеванская автономная республика», Официальный сайт русского центра флаговедения и геральдики, <http://www.heraldicum.ru/azerbaij/index.htm>, указ. док.

² St. u, օրինակ, International Boundary Study, Iran – Turkey Boundary, The Geographer Office of the Geographer Bureau of Intelligence and Research, US Department of State, N28, February 3, 1964, pp. 6, 7.

ունենալու համար: Թե ինչով էր պայմանավորված նման որոշումը՝ դժվար է ասել: Որպես Թուրքիային սիրաշահելու մեխանիզմ այն ամենաարդյունավետը չէր, մանավանդ որ պատերազմի մեջ Թուրքիայի հնարավոր մուտքը հազիվ թե դրանից կախված լիներ: Պատերազմի մեջ մտնելու պատրվակ առանց այդ էլ կգտնվեր:

Իսկ ահա Իրանը տարածքներ փոխանակեց խոր աշխարհաքաղաքական վերլուծության հիման վրա: Բանն այն է, որ մինչև սահմանների փոփոխությունը Թուրքիան քաղաքական և ժողովրդագրական սահման չունեցող Անդրկովկասի թուրքական բնակչության հետ, և միակ կամուրջը, որը Թուրքիան կապում էր Անդրկովկասի ու Միջին Ասիայի թուրքական բնակչության հետ, հենց Իրանն էր: Սա Իրանը դարձնում էր պանթուրքիզմի գլխավոր թիրախը և չէր կարող չանհանգստացնել այդ երկրին: Եվ գտնվեց միանգամայն արդյունավետ ելք. Թուրքիային դեպի Նախիջևան ելք տրամադրել և այդպիսով այլընտրանքային ճանապարհ բացել: Այդ ելքը շատ գայթակղիչ էր Թուրքիայի համար: Նրան Ադրբեջանից բաժանում էր ընդամենը Հայաստանի ոչ մեծ տարածքը: Եթե նույնիսկ քաղաքական առումով անմիջապես չհաջողվեր վերացնել այդ խոչընդոտը, ապա հաշվի առնելով խորհրդային պետության ինտերնացիոնալ բնույթը և վերջինի կողմից ադրբեջանական ժողովրդի ստեղծման ակնհայտ խրախուսումը, ընդհանուր սահմանի ստեղծումը ժողովրդագրական առումով միանգամայն իրական էր: Իսկ դրա փոխակերպումը քաղաքականի կարող էր միայն ժամանակի հարց լինել: Այս համատեքստում կուզենայի մեջբերել Աթաթուրքի խոսքերը՝ ասված դեռ 1933թ., երբ հայտարարել էր, թե խորհրդային կայսրությունը կփլուզվի և «եղբայրական Ադրբեջանը կդառնա ազատ»¹:

Արցախը (Լեռնային Ղարաբաղ) յոթ տասնամյակ դիմադրություն ցուցաբերեց Ադրբեջանի ոտնձգությունների դեմ: Ադրբեջանն արցախահայության դեմ կիրառում էր պայքարի ամենաճարտար մեթոդները՝ տնտեսական և ժողովրդագրական ճնշումից մինչև հիդրոահաբեկչություն²: Ադրբեջանական ԽՍՀ կազմում գտնվելու ողջ ընթացքում այստեղ անհետացել է 85 հայկական գյուղ (մոտ 30%), բայց նույնիսկ մեկ ադրբեջանական գյուղ չի վերացել: 1970-79թթ. մարդահամարների միջև ԼՂԻՄ հայ բնակչության թվաքանակն ավելացել է 1,7%-ով (2 հազ. մարդ), իսկ ադրբեջանցիները՝ 37%-ով (10 հազ. մարդ): Խորական քաղաքականությունն այս ոլորտում հատկապես սաստկացավ այն ժամանակ, երբ իշխանության եկավ Հեյդար Ալիևը: Ադրբեջանի ներքին գործերի նախարար Ռամիլ Ուսուբովը, ներկայացնելով

¹ Տե՛ս, օրինակ, «Посольство Турции: Турция, сближаясь с Арменией, хочет ускорить развязку карабахского конфликта», Ae.az, http://www.aze.az/news_posolstvo_turcii_turciya_27331.html, 6 ноября 2009.

² Տե՛ս, մասնավորապես, Բաբայան Դ., Ջրի խնդիրը դարաբաղյան հակամարտության կարգավորման համատեքստում, Ստեփանակերտ, «Դիզակ Պլյուս», 2007:

Այլևս ավագի քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղում, այն բնութագրեց հետևյալ կերպ. «Կարելի է առանց չափազանցելու պնդել, որ միայն Հեյդար Ալիևի՝ Ադրբեջանի ղեկավար դառնալուց հետո Ղարաբաղի ադրբեջանցիներն իրենց երկրամասի իսկական տեր զգացին: 70-ական թթ. մեծ աշխատանք էր կատարվում: Այդ ամենը դեպի Լեռնային Ղարաբաղ ադրբեջանական բնակչության մեծ հոսք առաջացրեց շրջակա շրջաններից՝ Լաչինից, Ադդամից, Ջաբրայիլից, Ֆիզուլիից, Աղջաբեդից և այլն: Այս բոլոր միջոցառումները, որոնք իրականացվում էին Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Հեյդար Ալիևի հեռատեսության շնորհիվ, նպաստում էին ադրբեջանական բնակչության հոսքին»¹: Ինքը՝ Ալիևը, այսպես է բնութագրել այն ռազմավարական նպատակները, որոնք հետապնդում էր Լեռնային Ղարաբաղում՝ Ադրբեջանի կոմունիստական առաջնորդ եղած ժամանակ. «Երբ ես ղեկավարում էի Ադրբեջանը... մենք մեծ ուշադրություն էինք հատկացնում Ղարաբաղին: Ճիշտ է՝ որոշ դիլետանտներ ինձ մեղադրում էին դրանում: Ես այդպես էի անում, որովհետև, նախ, Լեռնային Ղարաբաղը հարկավոր էր բնակեցնել ադրբեջանական բնակչությամբ, և երկրորդ՝ հայերին չթողնել, որ բարձրացնեն այդ հարցը»²: Թե ինչով ավարտվեց այդ ամենը՝ լավ հայտնի է:

Պանթյուրքիզմի համար նոր ազդակ հանդիսացավ ԽՍՀՄ փլուզումը: Ինչպես Թուրքիայում, այնպես էլ Ադրբեջանում պանթյուրքիզմի նոր ալիք բարձրացավ: Բելովեժյան համաձայնագրերից անմիջապես հետո Թուրքիայի վարչապետ Թուրգութ Օզալը հռչակեց «Մեծ Թուրքեստան՝ Միջերկրական ծովից մինչև Չինական պարիսպ» կարգախոսը (հասկանալի է՝ Անկարայի հովանու ներքո): Այն պաշտպանում էին նաև երկրի քաղաքական այլ գործիչներ՝ Ս.Դեմիրելը, Բ.Էջևիրթը, Ն.Էրբաքանը: Նրանք բոլորն էլ համամիտ էին «Մեծ Թուրանի» կամ «Թուրանական գոտու», այսինքն՝ թյուրքական ժողովուրդների աշխարհաքաղաքական դաշինքի կազմավորման հարցում՝ Թուրքիայի հովանու ներքո³: Թուրքիայի նախագահ Դեմիրելն, օրինակ, երբ նախագահ էր, 1999թ. հոկտեմբերին, Բաքվի օդանավակայանի բացման ժամանակ դիմելով Ադրբեջանի ժողովրդին, հայտարարեց հետևյալը. «Ձեր վիշտը մեր վիշտն է: Եթե ձեզ ասեղը ծակի, մեզ համար դա հավասար կլինի բզով ծակվելուն»⁴: Նույն Դեմիրելը, 1994թ. պաշտոնական այցով գտնվելով Մոլդովայում, հայտարարել էր. «Թուրքիան իր շուրջ ստեղծում է խաղաղ գոտի՝ Բալկաններից մինչև Սև ծով, Կովկաս ու Մերձավոր Արևելք»⁵:

¹ Усубов Рамиль, «Нагорный Карабах, миссия спасения начиналась в 70-е годы», «Панорама», 12 мая 1999.

² Заседание Милли Меджлиса Азербайджана, посвященное нагорно-карабахскому урегулированию, Первая программа азербайджанского телевидения AzTV1, 23 февраля 2001.

³ Ульянов Н., Турция – история и современность, М., 2002, с. 21.

⁴ Istanbul Milliyet (Ankara Edition) in Turkish, October 19, 1999.

⁵ Московские новости, N23, 5-12 июня 1994 года.

Իրենց թուրք գործընկերներից հետ չէին մնում նաև ադրբեջանական ղեկավարները: 1992թ. ժողովրդական ճակատի իշխանության գալով (Աբուլֆազ Էլչիբեյի գլխավորությամբ)՝ նոր էլիտան բացահայտ թուրքամետ կողմնորոշում որդեգրեց: Պետական լեզու հռչակվեց թուրքերենը, կյուրեղյանը փոխարինվեց լատինական այբուբենով, իսկ թուրք գեներալները սկսեցին ստեղծել ադրբեջանական բանակը: Հեյդար Ալիևի երկրորդ գալուստը իշխանություն 1993թ. քիչ բան փոխեց իշխող քաղաքական էլիտայի կողմնորոշման մեջ: Հատկապես մեծ ժողովրդականություն էր վայելում «Մեկ ազգ, երկու պետություն» կարգախոսը: Միայն 1997թ. Ադրբեջանի նախագահ Ալիևն արժանացել է Թուրքիայի 19 բարձրագույն պարգևների¹: Ինչպես իր նախորդը, Ալիևն ադրբեջանական բանակն ստեղծելիս հիմնական շեշտադրումը կատարում էր թուրքական գեներալների վրա: Այսպես, նա խնդրեց թուրքական բանակի բրիգադի գեներալ Յասար Դեմիրբուլաղին, որն Էլչիբեյի զինվորական խորհրդականն էր, ստեղծել ադրբեջանական բանակը: Դեմիրբուլաղը դարձավ նաև Ադրբեջանի Հանրապետության անվտանգության խորհրդի անդամ²: Իլհամ Ալիևը նույնպես ընտրեց պանթուրքիզմը՝ որպես Ադրբեջանի հիմնական արտաքին քաղաքական դոկտրին: Այս մասին են վկայում նրա բազմաթիվ ճառերն ու ասությունները: Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Մուսթաֆա Քեմալ Աթա-թյուրքի հուշարձանի բացման արարողության ժամանակ արտասանած ճառում, որը տեղի է ունեցել 2010թ. մայիսին Բաքվում, Իլհամ Ալիևն ասել է հետևյալը. «Ճակատագիրն այնպես ուզեց, որ որոշակի ժամանակով պատմությունը և պատմական իրադարձությունները բաժանեն մեզ: Բայց, չնայած այն բանին, որ Ադրբեջանը գոյություն ունի որպես անկախ երկիր ընդամենը մոտ 20 տարի, մեր սրտերը բաբախել են միասին նաև նախկինում: Ոչ մի քաղաքական կարգ կամ քաղաքական նախաձեռնություն չի կարողացել փոխել բարեկամության և եղբայրության հարաբերությունները, որոնք մենք տածում ենք մեկս մյուսի նկատմամբ: Պատահական չէ, որ Ադրբեջանի կողմից իր պետական անկախության վերականգնումից հետո առաջինը մեր անկախությունն ընդունեց եղբայրական Թուրքիան: Այդ ժամանակվանից առայսօր մենք առիավետ և բոլոր ուղղություններով համատեղ ենք գործում... Մենք պետք է այնպես անենք, որ միշտ միասին լինենք՝ գալիք տարիներին, հարյուրամյակներ շարունակ: Սա են մեզ պատգամել թուրքական աշխարհի մեր մեծ առաջնորդները»³:

¹ Տե՛ս «Бакинский Рабочий» թերթը, 8 сентября 1998, с. 3.

² Sapmaz Ifran, “Aliev is Having a Turkish General Establish an Army,” Hurriyet, October 13, 1993, p. 13.

³ «Речь Президента Ильхама Алиева на церемонии открытия памятника основателю Турецкой Республики Мустафе Кемалю Ататюрку», Официальный вебсайт Президента Азербайджана, <http://ru.president.az/articles/55/print>, 17 мая 2010.

Սակայն պետք է խոստովանել, որ պանթյուրքիզմի գաղափարն ակնկալվող աջակցությունը չստացավ նախկին ԽՍՀՄ թյուրքալեզու ժողովուրդների մեծամասնության մեջ, հատկապես Միջին Ասիայում: Այդ երկրներին դուր չի գալիս կրտսեր եղբոր դերը, որը նրանց հատկացնում է Անկարան: Թեև վերջին տարիներին Անկարան փոքր-ինչ շտկել է իր հռետորաբանությունը՝ ներկայանալով ոչ որպես ավագ, այլ հավասար մյուս թյուրքական ժողովուրդների մեջ, էական արդյունքներ չեն նկատվում: Մա պարզ ցույց է տալիս, որ այս գաղափարը կարող է նյութականանալ միայն դրսից աջակցության պարագայում: Այսօրվա դրությամբ Թուրքիան ոչ տնտեսական, ոչ գաղափարախոսական, ոչ ռազմական առումով ի վիճակի չէ դա անել սեփական ուժերով: Բացի այդ, Կենտրոնական Ասիայի՝ անկախ և բնական ռեսուրսներով հարուստ թյուրքալեզու երկրները հաճախ իրենք են վիճարկում առաջնայնությունը թյուրքական աշխարհում և նույնիսկ մրցակցում են Թուրքիայի հետ: Հաճախ նման դիրքորոշում են ցուցադրել Ուզբեկստանը և Թուրքմենիան: Ուզբեկստանն, օրինակ, անգամ մայրաքաղաք Տաշքենդի Աթաթյուրքի անունը կրող կենտրոնական փողոցներից մեկը վերանվանել է Զարաֆշանի անունով, ինչը համապատասխանում է, ըստ պաշտոնական ձևակերպման, հարևանությամբ գտնվող համալիրի անվանմանը¹: Պարզ է, որ նման քայլը զուտ քաղաքական բնույթ է կրում:

Պանթյուրքիզմն ավելի տարածված է թյուրքալեզու այն ժողովուրդների շրջանում, որոնք ձգտում են անկախության, ինչպես նաև Ադրբեջանում: Վերջինի պարագայում դա կապված է մի շարք գործոնների հետ, որոնցից հիմնականն այն փաստն է, որ նոր ադրբեջանական ազգի ձևավորման գործընթացն առաջօր ավարտված չէ: Չնայած բազմաթիվ ժողովուրդների ձուլմանը՝ Ադրբեջանում մնացել են հոծ բնակվող և իրենց ազգային ինքնությունը պահպանող ազգային փոքրամասնություններ: Այդպիսին են կովկասյան լեզվով խոսող լեզգիները և ավարներն Ադրբեջանի հյուսիսում՝ Դաղստանի սահմանին, ինչպես նաև իրանալեզու թալիշներն Ադրբեջանի հարավում՝ Իրանի սահմանին: Ընդհանուր տարածքը, որ զբաղեցնում են այս ազգությունները, կազմում է Ադրբեջանի տարածքի մոտ 22%-ը, իսկ նրանց թիվը կազմում է այդ երկրի բնակչության մեկ քառորդը:

Ընդ որում՝ Ադրբեջանն ապրում է այդ ազգերի ինքնորոշման մշտական սպառնալիքի մեջ, որն սպառնում է փլուզել պետությունը: Այսպես, XX դարում թալիշները երկու անգամ պետականություն հռչակեցին՝ 1919 և 1993թթ.: 1991թ. սեպտեմբերին լեզգիները հայտարարեցին միացյալ Լեզգիստանի ստեղծման մասին: Սակայն այդ փորձերը հաջողությամբ չպսակվեցին: Թալիշների

¹ «В столице Узбекистана переименовали улицу Ататюрка», ИА Регнум, <http://www.regnum.ru/news/fd-abroad/1406283.html>, 19 мая 2011.

հաջողվեց պետականությունը պահել մի քանի ամիս, իսկ լեզգիների որոշումը միայն թղթի վրա մնաց: Սակայն վերոնշյալ փաստերը բավարար չեն՝ գիտակցելու համար Ադրբեջանում տիրող իրական էթնոքաղաքական իրավիճակը: Ազգային փոքրամասնությունները շարունակում են պայքարը հանուն իրենց իրավունքների ճանաչման: Որպես օրինակ նշենք, որ թալիշները պարբերաբար դիմում են տարբեր երկրների և միջազգային հանրությանն ընդհանրապես՝ հեղինակավոր կառույցների ուշադրությունը հրավիրելով ադրբեջանցիների կողմից գործադրվող մշտական ճնշումների վրա: 2008թ. նրանք դիմել են եվրոպական երկրների ներկայացուցիչներին¹, 2009թ.՝ միջազգային հանրությանը²:

Նման դիմումներով հանդես են եկել նաև մյուս ազգային փոքրամասնությունները: 2008թ. ավարները դիմեցին Դադստանի նախագահին՝ խնդրելով պաշտպանել իրենց բռնի ադրբեջանականացումից, որն իրականացնում են Բաքվի իշխանությունները³: Հենց դրա համար էլ Ադրբեջանում հաճախ են լսվում ռասիստական հայտարարություններ ազգային փոքրամասնությունների վերաբերյալ: Այս համատեքստում կուզենայինք մեջբերել Իսֆենդիյար Վահաբգադեի խոսքերը՝ ասված ՄԱԿ Ժնևի բաժանմունքի Ադրբեջանի մշտական ներկայացուցիչ եղած Ժամանակ: Նա տարատեսակ հիմնախնդիրների (որոնց բխվում էր պաշտոնական Բաքուն միջազգային ասպարեզում) պատճառը բացատրում էր նրանով, որ ազգային դիվանագիտությունում տեղ են գտել ոչ իսկական ադրբեջանցիները: Ադրբեջանի խորհրդարանի նախագահ Մուրթուզ Ալեքսերովին 2001թ. ամռանը գրած իր նամակում պրն Վահաբգադեն ասում էր, թե ադրբեջանական դիվանագետների շարքերում քիչ չեն նրանք, որոնց երակներում օտար արյուն է հոսում: Դա անթույլատրելի է, քանի որ դիվանագետները, որոնց մայրերը հայ են, հրեա, ռուս, էլ չենք խոսում արդեն փոքրաթիվ ժողովուրդների մասին, չեն կարող արժանապատվորեն և արդարամտորեն ծառայել Ադրբեջանին արտասահմանում, կարծում է Վահաբգադեն⁴: Այնինչ, Վահաբգադեն ոչ միայն Ադրբեջանի քաղաքական, այլև ինչ-որ չափով նաև ստեղծագործական ընտրանու ներկայացուցիչն է, քանի որ Ադրբեջանի ժողովրդական բանաստեղծ Բախտիյար Վահաբգադեի որդին է:

¹ «Европа, ты должна услышать наш правый голос!», Толыш Пресс, <http://tolishpress.org/news/364.html>

² «Заявление Талышского национального движения, адресованное всем международным организациям, всем правозащитным организациям и правозащитникам мира», Толыш Пресс, <http://tolishpress.org/news/671.html>, 15 апреля 2009.

³ «Аварцы Азербайджана просят президента Дагестана защитить их от азербайджанизации», Кавказский узел, <http://www.kavkaz-uzel.ru/newstext/news/id/1223420.html>, 18 июня 2008.

⁴ Sē'u, օրինակ, Усейнов Ариф, «Чужая кровь», Время МН, Баку, 5 июня 2001 года; Аббасов Ш., «Отозван поспред Азербайджана в ООН Эльдар Гусейнов», интернет-газета «Эхо» от 5 июня 2001 года.

Ադրբեջանական ժողովրդի «ձևավորման» գործընթացի անավարտությունն իր դրոշմն է թողնում նաև ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման վրա: Ադրբեջանցիները Լեռնային Ղարաբաղն ընկալում են որպես իրենց պետության գոյության գլխավոր սպառնալիք: Ադրբեջանը չի կարող ճանաչել Լեռնային Ղարաբաղի անկախությունը, քանի որ այդ դեպքում այլ ազգությունները կհետևեն վերջինի օրինակին: Այն նաև ինքնավարություն չի տա Ղարաբաղին, անգամ չնայած այն բանին, որ բացարձակապես անընդունելի է Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության համար: Ի դեպ, Ադրբեջանի և Արցախի միջև հաստատված ռազմաքաղաքական հավասարակշռությունը և դրա պահպանումը բխում են գլոբալ դերակատարների շահերից: Ինչպես հայտնի է, Անդրկովկասը կարևորագույն նշանակություն ունի ինչպես Արևմուտքի, այնպես էլ Ռուսաստանի, ինչպես նաև Իրանի համար: Այս տարածաշրջանն այսօրվա դրությամբ դեպի Կենտրոնական Ասիա (Ռուսաստանը և Իրանը շրջանցելով) Արևմուտքի միակ անմիջական ելքն է: Անդրկովկասը սահմանակից է նաև Հյուսիսային Կովկասին ու Իրանի հյուսիսարևմտյան շրջաններին: Ինչպես Ռուսաստանի Դաշնության, այնպես էլ Իրանի Իսլամական Հանրապետության համար այդ շրջանները էթնոքաղաքական առումով խոցելի են, այստեղ ցանկացած լուրջ անկայունություն հղի է անկանխատեսելի հետևանքներով: Անկայունությունն Անդրկովկասում, հաշվի առնելով, օրինակ, ինչպես տարածաշրջանում, այնպես էլ Հյուսիսային Կովկասում և հյուսիսարևմտյան Իրանում ապրող բազմաթիվ ժողովուրդների առկայությունը, կարող է փոխադրվել նաև հարևան երկրներ: Ուստի, կայունության պահպանումը Անդրկովկասում կարևորագույն հրամայական է թե՛ Ռուսաստանի, թե՛ Իրանի համար: Սակայն գործունե կայունությունը պահելու համար առավել արդյունավետ մեխանիզմ է թվում տարածաշրջանում ուժերի գոյություն ունեցող հավասարակշռության պահպանումն ինչպես մեծ տերությունների ազդեցության, այնպես էլ տարածաշրջանային պետությունների փոխհարաբերությունների կտրվածքով, մասնավորապես՝ ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության գոտում:

1994թ. մայիսից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև հաստատված ռազմաքաղաքական և տարածքային հավասարակշռությունն Արևելյան Անդրկովկասում մի կողմից՝ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի, մյուս կողմից՝ Ադրբեջանի միջև, աշխարհաքաղաքական չեզոքությունը պահելու բաղադրիչներից է: Ուժերի ստեղծված դասավարտության փոխվելու պարագայում Անդրկովկասում կարող է լրիվ նոր իրավիճակ գոյանալ՝ լի անկայունության և անկանխատեսելիության բարձր աստիճանով: Բանն այն է, որ սույն դասավորվածության փոփոխությունը, այսինքն՝ պարզապես վերադարձը 1988թ. իրավիճակին, երբ Լեռնային Ղարաբաղն անկլավ էր՝ ամբողջովին շրջապատված Ադրբեջանով, գրեթե

կվերացնի ոչ միայն Ղարաբաղի, այլև Հայաստանի գործոն հանդիսանալու պարագան և այդպիսով Արևելյան Անդրկովկասում գերիշխող դիրք կգրավի Ադրբեջանը, որն աշխարհաքաղաքական առումով չափից ավելի հավակնոտ պետություն է: Այդ հավակնոտությունը մասնավորապես արտահայտվում է պանթուրքիզմի գաղափարախոսության արդեն հիշատակված քարոզչությունում, ինչն իր հերթին արտահայտվում է Իրանի՝ թյուրքալեզու ազգություններով բնակեցված հյուսիսարևմտյան շրջանների հանդեպ հավակնություններով: Այս թեման հաճախ է շոշափում Ադրբեջանի քաղաքական ընտրանին: Այսպես, 2008թ. սեպտեմբերին Ադրբեջանի միասնական ժողովրդական ճակատ կուսակցության առաջնորդ, նախագահի թեկնածու Ղուդրաթ Հասանղուլին իր ընտրական ծրագրում առաջարկում էր՝ փոխել «Ադրբեջան» անվանումը «Հյուսիսային Ադրբեջանով»: Ըստ նրա՝ անվանման փոփոխությունը կնշանակի, որ Հյուսիսի առկայությունը ենթադրում է նաև Հարավի գոյությունը¹:

Հասկանալի է, որ եթե հավասարակշռություն չլինի ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության գոտում, ապա Ադրբեջանը վտանգավոր աշխարհաքաղաքական պտույտներ կկատարի մեկ մի, մեկ մյուս կողմի վրա, ինչը կարող է նաև անկայունություն առաջացնել այդ պետության ներսում, մասնավորապես արդեն հիշատակված լեզգիների, ավարների և

թալիշների շրջանում: Առաջին երկուսը Դաղստանի հիմնական ժողովուրդներից են, այսինքն՝ լեզգիների և ավարների լուրջ հիմնախնդիրներն Ադրբեջանում կարող են խռովել նաև Դաղստանի նրանց եղբայրներին, իսկ դա արդեն կարող է անմիջականորեն Ռուսաստանին ներքաշել այդ գործընթացների մեջ: Նույնը վերաբերում է նաև թալիշներին: Իրանում մոտ 2,5-3 մլն թալիշ է ապրում, որոնք նույնպես անտարբեր չեն Բաքվի մշտական ճնշման ներքո գտնվող իրենց եղբայրակիցների ճակատագրի հանդեպ: Հասկանալի է, որ թալիշական գործոնը կարող է գործընթացի մեջ ներքաշել Իրանին: Ակնհայտ է, որ այնպիսի տերությունների ներքաշումը, ինչպիսին են Ռուսաստանը և Իրանը, միանգամայն այլ իրավիճակ կստեղծի՝ լի անկանխատեսելի հետևանքներով: Այս ամենից ելնելով՝ Արևելյան Անդրկովկասի աշխարհաքաղաքականության և չեզոքության պահպանման առավել գործունե երաշխիքը ներկայիս ռազմաքաղաքական հավասարակշռության պահպանումն է ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտությունում:

Գրեթե նույն շահերն են առկա նաև ԱՄՆ պարագայում: Վաշինգտոնին ներկա փուլում անհրաժեշտ է Կովկասի կայունությունը, հատկապես ամերիկյան

¹ Сенджаплы Тамилла, «Гудрат Гасангулиев: «Азербайджан должен изменить название», Day.Az, <http://www.day.az/news/politics/130533.html>, 15 сентября 2008.

քաղաքականության իրանական վեկտորի ակտիվացման ֆոնին: Ինչպես ավելի վաղ նշել ենք, Խորհրդային Միության փլուզման պահից Արևմուտքն Անդրկովկասը դիտարկել է որպես դեպի Կենտրոնական Ասիա տանող կամուրջ՝ Ռուսաստանի և Իրանի շրջանցմամբ: Սակայն այս միջանցքը չափից ավելի խոցելի է և չի կարող դեպի կենտրոնաասիական տարածաշրջան տանող միակ հուսալի ելքը լինել: Ուստի, հիմա Արևմուտքին հարկավոր է ավելի հուսալի ելք: Այդպիսին կարող է լինել միայն Իրանը: Դրա համար էլ, եթե Միացյալ Նահանգները կարողանա Իրանը ներառել իր շահերի ոլորտում, ուժային կամ այլ ճանապարհով, ապա Վաշինգտոնն արմատապես կփոխի ուժերի հավասարակշռությունը ոչ միայն տարածաշրջանում, այլև, կարելի է ասել, աշխարհում՝ հոգուտ իրեն և հաջորդ տասնամյակներում սեփական ձեռքերում կպահի ռազմավարական նախաձեռնությունը: Իսկ նման հեռանկարին, իհարկե, դժվար է դիմակայել: Այս իրավիճակում ԱՄՆ-ը խիստ շահագրգռված է Կովկասի կայունությամբ, ամերիկա-իրանական հարաբերությունների զարգացման հարցում հուսալի թիկունքի ստեղծմամբ: Անգամ իրանական նախաձեռնության հաջողության պարագայում, ինչի արդյունքում կարող է խիստ գորեղանալ թուրք-ադրբեջանական գործոնը, հատկապես Իրանի Իսլամական Հանրապետության հյուսիսարևմտյան շրջաններում, Վաշինգտոնին հարկավոր կլինի գործուն հավասարակշռություն ստեղծել ընդդեմ թուրքադրբեջանական տանդեմի:

Այս հավասարակշռության առանցքային և բնական բաղադրիչներից մեկը հայկական գործոնն է՝ երեք հիմնական մասից բաղկացած. Հայաստանի Հանրապետություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն և հայկական Սփյուռք: Սակայն 1988թ. իրավիճակին վերադարձի պարագայում հայկական գործոնը, ինչպես արդեն նշել ենք, ամբողջովին կվերացվի: Հայաստանի Հանրապետությունը և Սփյուռքը, էլ չենք խոսում Արցախի մասին, այնպիսի ռազմաքաղաքական ցնցում կստանան, որից դուրս գալ չեն կարողանա: Բնականաբար, իրավիճակի նման զարգացումը չի բխում ԱՄՆ շահերից՝ անգամ կտրված իրանական աշխարհաքաղաքականությունից, հատկապես Թուրքիայի՝ դեպի իսլամ և թուրքիզմ շարժի և դրա հետ կապված՝ ԱՄՆ առանցքային դաշնակիցների (ինչպիսին է, օրինակ, Իսրայելը) երկյուղների համատեքստում: Ակնհայտ է, որ ուժերի ներկա դասավորության պահպանումն ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության գոտում բխում է նաև ԱՄՆ և նրա դաշնակիցների շահերից:

Ամփոփում

Պանթյուրքիզմը համաշխարհային քաղաքականության առավել ակտիվ գաղափարախոսություններից է: Այն մշակվել և ներդրվել է Օսմանյան կայսրությունում՝ ելնելով գլոբալ աշխարհաքաղաքական նպատակներից, որոնք

փոքր-ինչ փոփոխված ձևով շարունակում են ակտուալ լինել նաև այսօր: Չնայած պանթյուրքիզմի սաղմնավորման և ներդրման ժամանակաշրջանի և ներկա աշխարհաքաղաքական իրավիճակի էական տարբերություններին՝ Թուրքիայի ռազմավարական հրամայականները շատ չեն փոխվել: Թուրքիայի համար այդ գաղափարախոսությունը մնում է գլխավոր երազանքը, որն ամեն կերպ փորձում է իրականացնել: Պանթյուրքիզմն առավել պարարտ հող գտավ Ադրբեջանի Հանրապետությունում, պետություն, որը հայտնվեց որպես պանթյուրքիզմի գաղափարախոսության հոգեզավակ: Արցախյան պետականությունը, լինելով հայկական պետականության և հայկական գործոնի առանցքային բաղադրիչներից մեկը, միևնույն ժամանակ նաև գլխավոր խոչընդոտներից է պանթյուրքիզմի գաղափարախոսության գործնական իրականացման ճանապարհին: Հայաստանի գործոն հանդիսանալը, այդ թվում և այս համատեքստում, համապատասխանում է զլոբալ և տարածաշրջանային մի շարք տերությունների շահերին: Այս փուլում կարևոր դերը պատկանում է Արցախի ու Ադրբեջանի միջև ռազմավարական հավասարակշռության պահպանմանը: Դրանից է կախված նաև աշխարհաքաղաքական հավասարա կշռության պահպանումը ողջ Անդրկովկասում՝ հաշվի առնելով դրա կարևորությունը համաշխարհային քաղաքականությունում՝ նաև զլոբալ ասպարեզում: Այս ամենը լրացուցիչ հնարավորություններ է ստեղծում հայկական պետականության ամրապնդման և համաշխարհային քաղաքականության մեջ գործոն հանդիսանալու համար:

Арцахская проблема и идеология пантюркизма

Давид Бабаян

Резюме

Пантюркизм является одной из наиболее активных идеологий в мировой политике. Данная идеология была разработана и задействована в Османской империи исходя из геополитических целей, которые в несколько модифицированном виде продолжают оставаться актуальными и сегодня. Несмотря на существенные отличия нынешней геополитической ситуации от эпохи зарождения и внедрения пантюркизма, стратегические императивы Турции мало изменились. Для Турции данная идеология остается главной идеологической мечтой, которую она всячески пытается осуществить. Наиболее плодородную почву пантюркизм нашел в Азербайджанской Республике – государстве, само появление которого является детищем идеологии пантюркизма.

Эта идеология своей агрессивностью породила и Арцахскую проблему, которая с 1918г. является одной из основных проблем в закавказском регионе и далеко за его пределами. Вместе с тем, арцахская государственность, будучи одним из ключевых компонентов армянской государственности, является в то же самое время одним из главных препятствий на пути практического осуществления идеологии пантюркизма.



Армянский фактор, в том числе и в этом контексте, в стратегических интересах глобальных и ряда региональных держав. В поддержании же армянского фактора на данном этапе ключевая роль принадлежит поддержанию стратегического баланса между Арцахом и Азербайджаном. От этого зависит также поддержание геополитического баланса во всем Закавказье, а учитывая его важность в мировой политике – и на глобальной арене. Все это создает дополнительные возможности для укрепления армянской государственности и ее роли в мировой политике.

The Artsakh Problem and the Ideology of Pan-Turkism

David Babayan

Summary

Pan-Turkism is one of the most active ideologies in the world politics. It remains the main ideological dream which Turkey tries to carry out in every possible way.

Pan-Turkism found the most fertile soil in the Azerbaijan Republic – the state which emerged as a result of the ideology of Pan-Turkism.

The aggression of the ideology generated the Artsakh problem. The Artsakh statehood was one of the key components of the Armenian statehood and the Armenian factor, simultaneously being one of the main obstacles on the way of practical implementation of the ideology of Pan-Turkism.

The Armenian factor, in this context, represents the strategic interests of the global and a number of regional powers. The main function in supporting the Armenian factor in the current phase is maintaining the strategic balance between Artsakh and Azerbaijan. The geopolitical balance in Transcaucasia in whole also depends on this, and taking in account its importance in the global politics, the balance in world arena does as well. All these create additional opportunities for strengthening the Armenian statehood and its significance in the global politics.

**ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՄԱՆԿՑՈՒՆԻՑ**

Սոսի Ալեքսանյան

ԱրՊՀ

Բանալի բառեր. հայերի ցեղասպանություն, Թուրքիայի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետություն, դատապարտում, մեղավոր երկիր, կոնվենցիա, մարդու իրավունքներ, նոր ցեղասպանություններ

Համաձայն «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու մասին» ՄԱԿ-ի 1948 թվականի դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի 2-րդ հոդվածի՝ ցեղասպանության տակ հասկացվում են այն գործողությունները, որոնք կատարվում են որևէ ազգային, էթնիկական, ցեղային կամ կրոնական խումբ, որպես այդպիսին լիովին կամ մասամբ ոչնչացնելու մտադրությամբ.

ա/ նման խմբի անդամների սպանությունը.

բ/ նման խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտավոր խանգարում պատճառելը.

գ/ որևէ խմբի համար կանխամտածված այնպիսի կենսապայմանների ստեղծումը, որոնք նախորոշված են նրան լիովին կամ մասամբ ֆիզիկապես ոչնչացնելու համար.

դ/ նման խմբի միջավայրում մանկածնությունը կանխելու նպատակով նախորոշված միջոցները.

ե/ երեխաների բռնի հանձնումը մարդկանց մի խմբից մյուսին:

Իսկ նույն կոնվենցիայի 3-րդ հոդվածը թվարկում է պատժելի համարվող գործողությունները: Դրանք են՝

ա/ ցեղասպանությունը.

բ/ ցեղասպանություն կատարելու նպատակով նյութվող դավադրությունը.

գ/ ցեղասպանություն կատարելու ուղղակի և հրապարակային հրարումը.

դ/ ցեղասպանություն կատարելու հանցափորձը.

ե/ հանցակցությունը ցեղասպանությանը:

Ինչպես երևում է կոնվենցիայի դրույթներից, Օսմանյան կայսրության կողմից 1878-1923 թթ. հայ ժողովրդի հանդեպ գործած քաղաքականությունը լրիվությամբ համապատասխանում է կոնվենցիայի 3-րդ հոդվածի դիսպոզիցիային և չի կարող որակվել այլ կերպ, քան ցեղասպանություն: /Նշված կոնվենցիայի հայրն ու <ցեղասպանություն> հասկացության հեղինակը համարվում է լեհական հրեա իրավաբան Ռաֆայել Լեմկինը, ով 1944 թվականին ստեղծելով <ցեղասպանություն> եզրույթը, հիմք ընդունեց 1915

թվականի հայերի ոչնչացումը, որպես հիմնարար օրինակ/¹: Ցեղասպանությունը պատճառում է մարդկային, նյութական, քաղաքական, տարածքային, սոցիալական, իրավաբանական ու բարոյական հսկայական կորուստներ: Հայ ժողովուրդն այդ ամենը վերապրել է, երբ սովի, տանջահարման, տեղահանումների, համաճարակների, անօթևան կյանքի ու համակենտրոնացման ճամբարների պատճառով անմեղ զոհերի թիվն անցավ երկու միլիոնից: Սակայն ամենից մտահոգիչն այն է, որ ոչ միայն զոհման, ավստասանքի ու փոխհատուցման մասին ոչ մի խոսք չհնչեց մեղավոր երկրի իշխանություններից, այլ ընդհակառակը, հանցագործության հենց ամենասկզբից փորձ արվեց փաստերը ներկայացնել ճիշտ հակառակ ձևով: Թուրքական հրատարակություններում փորձ էր արվում միջազգային հանրության ուշադրությունը շեղել իրադարձությունների բուն ընթացքից, աղավաղել փաստերը կամ պարզունակ կերպով հերքել հայերի ոչնչացման գործում թուրքերի դերակատարությանն առնչվող ցանկացած մեղադրանք:

Փաստերի խեղաթյուրման ամենից հայտնի տարբերակները հետևյալն էին՝ զոհ ժողովուրդն ինքն էր մեղավոր ճանաչվում, թուրքական քաղաքական և պատմական հրապարակախոսությունը հայերի վրա է բարդում մինչև երկու միլիոն մահմեդականների սպանությունը, թուրքական մամուլը նպաստում է երկրում հակահայկական միտումների պահպանմանը, պարբերաբար տեղեկություններ հրապարակելով հայերի բռնությանը զոհ դարձած թուրքերի զանգվածային թաղումներն էրզրումի տարածքում և այլուր հայտնաբերելու մասին²: Ընդ որում, պետք է նշել, որ հայերի ցեղասպանության հարցում պետք է դատապարտել ոչ միայն դրա անմիջական կատարող Թուրքիային, այլ նաև նրա դաշնակից Գերմանիային, ով տեղյակ լինելով Թուրքիայում հայերի վերաբերյալ ծրագրին, բացարձակ անտարբերության մատնեց մի ամբողջ ժողովրդի ոչնչացման փաստը:

Գերմանիայի կառավարությունն ու արտաքին գործոց նախարարությունը ոչ միայն ոչինչ չնախաձեռնելով դիտում էին, թե ինչպես է ընթանում հայերի ամբողջական ոչնչացման թուրքական ծրագիրը (կոտորած, բռնագաղթ, մնացած բնակչության բռնի մահմեդականացում), այլև գրաքննությանն ու մամուլին ցուցումներ տալու միջոցով հոգ էին տանում, որպեսզի գերմանական ժողովուրդը ոչինչ չիմանա թուրք դաշնակիցների կողմից դավանակից հայերի բնաջնջման մասին³:

¹ Տես՝ Վիքիպեդիա Ազատ հանրագիտարանից, http://hy.wikipedia.org/wiki/%D5%8C%D5%A1%D6%86%D5%A1%D5%B5%D5%A5%D5%AC_%D4%BC%D5%A5%D5%B4%D5%AF%D5%AB%D5%B6

² Տես՝ Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում մարդու իրավունքների տեսանկյունից. Թեոսա Հոֆման /Արևմտյան Բեռլին/. Լ, Հ Գ 1990 -4 /62/, էջ 62

³ Տես՝ նույն տեղում, էջ 64

Գերմանական լրագրային հրատարակչության նախագահ դոկտոր Ֆարերի հարցմանը, թե ինչպես պիտի մամուլը ներկայացնի Գերմանիայի արտաքին գործոց նախարարության վերաբերմունքը հայերի ոչնչացման հանդեպ, պետական քարտուղար Ա. Ցիմերմանը որպես արտաքին գործոց նախարարության խոսնակ 1915 թ. հոկտեմբերի 4-ին գրավոր պատասխանեց. «Որքան էլ ցավալի կարող է լինել քրիստոնյայի տեսակետից այն, որ նաև անմեղ մարդիկ են տուժում թուրքական միջոցառումների ընթացքում, մեզ համար ավելի մոտ են մեր սեփական որդիներն ու եղբայրները, որոնց սրբազան ու արյունահեղ կռվին Ֆրանսիայում և Ռուսաստանում օգնում է թուրքերի ռազմական օժանդակությունը»¹:

Երիտթուրքերի կողմից հայերի ցեղասպանության իրականացման պատճառը թուրքական ազգայնամոլությունն ու ռասիստական այն համոզմունքներն են, որ անհրաժեշտ է իրականացնել պանթուրքիզմի ծրագիրը կամ օսմանյան բազմազգ կայսրությունը դարձնել «Թուրքիա թուրքերի համար»: Երկրորդն՝ այս ոճրագործությանը նպաստեց, մանավանդ այն հանգամանքը, որ ցեղասպանության իրականացման ժամանակաշրջանը համընկավ առաջին համաշխարհային պատերազմի հետ, երբ բացակայում էր միջազգային համերաշխությունն ու խաղաղությունը: Պատերազմի մասնակից պետություններից ոչ մեկի համար 1914—1923 թվականների ժամանակահատվածում հայերը և հայերի գոյության իրավունքը ավելի կարևոր չեն եղել, քան սեփական շահերի հետապնդումը: Այս հանգամանքը և երիտթուրքերի՝ ցեղասպանություն գործելու վճռականությունը հասցրին մեկ և կես միլիոն հայերի կործանմանը և պատմական Հայաստանի տարածքի 9/10-ի կորստին²:

Հայերի ցեղասպանությունը դարձավ պետական հանցագործության մի նոր ձև ու այն որակվեց որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն: Մարդկության դեմ ուղղված հանցագործությունների հայեցակարգն առաջին անգամ օգտագործվել է 1915 թվականի մայիսի 24-ին՝ Բրիտանիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի կողմից հրապարակված համատեղ հռչակագրում՝ թուրքական իշխանությանը նախազգուշացնելով, որ նրանք պատասխանատվություն են կրելու հայկական ջարդերի համար: Նույն կերպ, Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, Նյուրնբերգյան դատարանը պատերազմի նացիստական հանցագործներին մեղադրեց Մարդկության դեմ ուղղված հանցագործությունների, այլ ոչ թե ցեղասպանության իրագործման համար: Հարկ է ընդգծել, որ հայկական ու հրեական ցեղասպանությունների միջև կան զուգահեռներ ինչպես իրականացման մեթոդների, այնպես էլ

¹ Տես՝ Trumpener Ulrich: Germany and the Ottoman Empire 1914 -1918. Princeton/New J e r s e y , 1968, p. 221.

² Տես՝ Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում մարդու իրավունքների տեսանկյունից. Թեսսա Հոֆման /Արևմտյան Բեռլին/. Լ Հ Գ 1990 -4 /62/, էջ 67

դրդապատճառների առումով: Եվ երիտթուրքերը և նացիստները սեփական ժողովուրդը ներկայացրել են որպես մարմին, որի վրա ազգային փոքրամասնությունը հիվանդության հարուցչի պես է ազդում: <Գոյության ոչ արժանի կյանքի> կամ <թերաթեք ռասայի¹> վերացումը յուրաքանչյուր ցեղասպանության գաղափարախոսության լեզվագաղափարական ակունքն է²:

Յավոք, հայերի ցեղասպանությունը միակը չէ համաշխարհային պատմության մեջ: Հաշվի առնելով ցեղասպանություն հանցագործության մասշտաբն ու հետևանքները, դրա վերաբերյալ ցանկացած հետազոտություն չի կարող ունենալ միայն ակադեմիական բնույթ: Իրավաբանների, պատմաբանների, քաղաքագետների, ցեղասպանագետների և ընդհանրապես այդ հարցի բոլոր հետազոտողների ու քաղաքական գործիչների գլխավոր խնդիրը պետք է լինի ցեղասպանության սկզբնապատճառների որոնումն ու վերլուծումը՝ դրա հետագա կրկնումն, որպես մարդկության դեմ ուղղված մեծագույն հանցագործություն, կանխելու համար: Ցեղասպանությունն իրենից ներկայացնում է մարդու համալիր իրավունքների ոտնահարում: Այստեղ խոսքը գնում է մարդու և քաղաքացու միաժամանակյա այնպիսի հիմնարար իրավունքների և ազատությունների ոտնահարման մասին, ինչպիսիք են կյանքի, սեփականության, ազգային և էթնիկական ինքնությունը պահպանելու, ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու, խոսքի, իր կարծիքն ազատորեն արտահայտելու, ընտանիք կազմելու և սերունդը շարունակելու, բնակարանի անձոնմխելիության, անձնական ազատության և անձեռնմխելիության, տպագրության, կրթության, արժանապատվության, իրենց իրավունքների դատական պաշտպանության, օրենքի առջև բոլորի հավասարության իրավունքների, մտքի, խղճի և դավանանքի ազատության և այլն: Այսինքն, ցեղասպանություն գործելով, պետությունը լրիվությամբ խախտում է մարդու իրավունքների վերաբերյալ բոլոր միջազգային հեղինակավոր պայմանագրերը, կոնվենցիաները, հռչակագրերը և այլ միջազգային փաստաթղթերը: Եթե այս իրավունքներից որևէ մեկի պաշտպանության համար պետությունը պատրաստ է իրավախախտի նկատմամբ կիրառել օրենքով սահմանված ամենախիստ պատժիչ միջոցները՝ ընդհուպ մինչև ցմահ ազատազրկում կամ մահապատիժ, ապա ինչ պատիժ պետք է նախատեսել այն ոճրագործության համար որը կոչվում է ցեղասպանություն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքակիրթ երկրներից շատ շատերը վաղուց արդեն ճանաչել են երիտթուրքերի կողմից հայոց ցեղասպանության իրագործման փաստը /առաջին անգամ դա պաշտոնապես կատարվեց 1915 թվականի մայիսի 15-ին

¹ Steu` D a d r i a n V a h a k n N. The Role of Turkish Physicians, p. 175.

² Steu` Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում մարդու իրավունքների տեսանկյունից. Թեսսա Հոֆման /Արևմտյան Բեռլին/. Լ Հ Գ 1990 -4 /62/, էջ 67

Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի համատեղ հոշակագրով¹, ապա կարող ենք ասել, որ վաղուց արդեն անցել է հայերի ցեղասպանության ճանաչման ժամանակաշրջանը: Այժմ հերթը հասել է ցեղասպանության դատապարտման ու փոխհատուցման ժամանակը: Ու այն, գլխավորապես պետք է կատարվի ոչ թե միջազգային հանրության կողմից /որը, վերջին հաշվով, նյութապես ոչինչ չի տալիս/, այլ հենց ոճրագործ երկրի՝ Թուրքիայի Հանրապետության կողմից:

Հայոց ցեղասպանությունը ճանաչած ու դատապարտած երկրներից են՝ ԱՄՆ՝ 1920 թ. մայիսի 11-ին /Մենատի 359-րդ բանաձևով/, 1984թ. սեպտեմբերի 12-ին /ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի համատեղ բանաձևով/, Ուրուգվայը՝ 1965թ. ապրիլի 20-ին /Մենատի և Ներկայացուցիչների պալատի բանաձևով/, այնուհետև՝ 2004թ. մարտի 26-ին /Օրենքով/, Կիպրոսը՝ 1982 թ. ապրիլի 22-ին /Ներկայացուցիչների պալատի բանաձևով/, ՌԴ՝ 1995թ. ապրիլի 14-ին /Պետական Դումայի բանաձևով/, Հունաստանը՝ 1996թ. ապրիլի 25-ին՝ /Խորհրդարանի բանաձևով/, Լիբանանը՝ 1997թ. ապրիլի 3-ին /Խորհրդարանի բանաձևով/, հետո՝ 2000թ. մայիսի 11-ին /Պատգամավորների պալատի բանաձևով, Բելգիան՝ 1998թ. մարտի 26-ին /Մենատի որոշմամբ/, Վատիկանը՝ 2000թ. հունվարի 10-ին /Լորին Սրբություն Հռոմի Պապ Հովհաննես Պողոս II-ի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեզին Բ Կաթողիկոսի համատեղ հայտարարությամբ/, Իտալիան՝ 2000թ. նոյեմբերի 16-ին /Պատգամավորների պալատի բանաձևով/, Ֆրանսիան՝ 2001թ. հունվարի 29-ին /Օրենքով/, Կանադան՝ 2002թ. հունիսի 13-ին /Մենատի բանաձևով/ և 2004թ. ապրիլի 21-ին /Համայնքների պալատի բանաձևով/, Արգենտինան՝ 2003թ. օգոստոսի 20-ին /Մենատի բանաձևով/, 2007թ. հունվարի 11-ին /Ազգային օրենքով/, Շվեյցարիան՝ 2003թ. դեկտեմբերի 16-ին /Ազգային Խորհրդի բանաձևով/, Սլովակիան՝ 2004թ. նոյեմբերի 30-ին /Խորհրդարանի բանաձևով/, Նիդերլանդները՝ 2004թ. դեկտեմբերի 21-ին /Խորհրդարանի բանաձևով/, Լեհաստանը՝ 2005թ. ապրիլի 19-ին /Խորհրդարանի բանաձևով/, Գերմանիան՝ 2005թ. հունիսի 1-ին /Խորհրդարանի բանաձևով/, Վենեսուելան՝ 2005թ. հուլիսի 14-ին /Ազգային ժողովի բանաձևով/, Լիտվան՝ 2005թ. դեկտեմբերի 15-ին /Մեյմի բանաձևով/, Չիլին՝ 2007թ. հունիսի 5-ին /Մենատի բանաձևով/, Շվեդիան՝ 2010թ. մարտի 11-ին /Խորհրդարանի բանաձևով/, ինչպես նաև ԱՄՆ 43 նախագ, այլ պետական կազմավորումներ ու միջազգային կազմակերպություններ²: Իսկ 1987 թվականի հունիսի 18-ին Եվրոխորհրդարանը պաշտոնապես ճանաչեց Հայոց ցեղասպանությունը:

¹ Տես՝ Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում ժողովածու. Կազմող՝ Վ. Քոչարյան Երևան 2014, էջ 8

² Տես՝ նույն տեղում, էջ 19-54

Ինչ վերաբերվում է Թուրքիային <<Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու մասին> ՄԱԿ-ի 1948 թվականի դեկտեմբերի 9-ի կոնվենցիային համապատասխան դատապարտելուն և այդ կոնվենցիայի հետադարձ ուժի մասին, ապա համաձայն <Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին> ՄԱԿ-ի 1968 թվականի նոյեմբերի 26-ի կոնվենցիայի առաջին հոդվածի, վաղեմության ոչ մի ժամկետ չի կիրառվում պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ:

Նշված կոնվենցիան ուշադրություն է դարձնում այն հանգամանքին, որ պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների համար հետապնդման և պատժի մասին հռչակագրերից, փաստաթղթերից կամ կոնվենցիաներից ոչ մեկը չի բովանդակում վաղեմության ժամկետին վերաբերող դրույթ, միջազգային իրավունքի տեսանկյունից այն դիտարկվում է որպես ծանրագույն հանցագործություն: Կոնվենցիան, պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների համար արդյունավետ պատիժը կարևոր գործոն է համարում նմանատիպ հանցագործությունները կանխելու, մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները պաշտպանելու, վստահությունը խրախուսելու, ժողովուրդների միջև համագործակցությանն աջակցելու և միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը նպաստելու համար: Այդ պատճառով էլ, ՄԱԿ-ը հիշյալ կոնվենցիայով միջազգային իրավունքում շրջանառության մեջ է դրել պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու սկզբունքը:

Ցեղասպանությունն ամենից առաջ իրենից մարդկային կորուստներ է ենթադրում: Սակայն, այն որպես հետևանք պարունակում է նաև հսկայական նյութական կորուստներ: Ցեղասպանության նպատակներից մեկն է նաև ցեղասպանության ենթարկված ժողովրդի տարածքների ու սեփականության յուրացումը: Թուրքիայի Հանրապետությունը, որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդ, ունի միջազգային իրավական պարտավորություններ: Համաձայն միջազգային իրավունքի, հանցագործությունների համար պատասխանատվությունն ընկնում է դրանք իրականացրած երկրի կամ նրա իրավահաջորդ երկրի վրա: Կարևոր է նշել այն հանգամանքը, որ ցեղասպանության իրականացման հենց սկզբից հայ ժողովուրդը չիրաժարվեց իր նյութական փոխհատուցում ստանալու իրավունքից: Այսպես, Լոզանի պայմանագրի կնքումից /1923 թվականի հուլիսի 24/ անմիջապես հետո Փարիզի վեհաժողովում Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավար Ավետիս Ահարոնյանը պաշտոնական գրությամբ /1924 թվականի օգոստոսի 8/

դիմել է գլխավոր դաշնակից ուժերի արտաքին գործերի նախարարներին և վերահաստատել հայոց իրավունքներին հավատարիմ մնալը:¹

Պահանջատիրության /կյութական փոխհատուցում ստանալու/ իրավունքը շարունակում է արդիական ու հիմնավոր մնալ մինչ օրս: Թուրքիայի Հանրապետության փոխհատուցման պարտավորությունը ներկայիս Հայաստանի Հանրապետության նկատմամբ, որպես Հայաստանի առաջին հանրապետության իրավահաջորդի, կազմում է առնվազն 41 միլիարդ 514 միլիոն 230 հազար 940 ամերիկյան դոլար:²

Այժմյան հայկական իշխանությունների կողմից շատ ողջունելի է այնպիսի փաստաթղթի ընդունումն ինչպիսին է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը: Այս Հռչակագիրը նախադեպը չունեցող իրավական ակտ է, քանի որ դրա ընդունմանը մասնակցել են և՛ ՀՀ պետական բոլոր մարմինները, և՛ եկեղեցին, և՛ սփյուռքի խոշորագույն հոգևոր, բարեգործական, կուսակցական, մշակութային և այլ կառույցները: Հանձնաժողովում հաստատվելուց հետո այն հրապարակվելու է 7 լեզվով, այդ թվում արևմտահայերեն:

Համահայկական հռչակագրի ընդունման հիմքում դրվում են այնպիսի իրավական ակտեր, ինչպիսիք են ՀՀ անկախության հռչակագիրը և Սահմանադրությունը, ՄԱԿ-ի 1948թ դեկտեմբերի 10-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1946 թվականի դեկտեմբերի 11-ի 96 /1/ բանաձևը, 1948 թվականի դեկտեմբերի 9-ի <Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին> ՄԱԿ-ի կոնվենցիան, 1968 թվականի նոյեմբերի 26-ի <Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին> ՄԱԿ-ի կոնվենցիան, ինչպես նաև 1966 թվականի դեկտեմբերի 16-ի <Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին> միջազգային դաշնագիրն ու մարդու իրավունքներին վերաբերող այլ միջազգային ակտեր:³

Համահայկական հռչակագիրը դատապարտում է 1894-1923 թվականներին Օսմանյան կայսրության և Թուրքիայի տարբեր վարչակարգերի կողմից ծրագրված ու հայ ժողովրդի դեմ շարունակաբար իրականացված ցեղասպանական քայլերը, հայրենագրվումը, հայության ոչնչացմանն ուղղված

¹ Տես՝ Արա Պապյան Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները /Հոդվածների ժողովածու/ Երրորդ, լրամշակված հրատարակություն, <Հայ ժողովրդի կյութական կորուստները Հայոց ցեղասպանության ժամանակ> Երևան 2009 . էջ 75

² Տես՝ նույն տեղում, էջ 75

³ Տես՝ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կայքէջի հետևյալ հղումը՝ <http://www.genocide-museum.am/arm/29.01.2015-hrchakagir.php>

զանգվածային կոտորածները, էթնիկ զտումները, հայկական ժառանգության ոչնչացումը, ինչպես նաև ցեղասպանության ժխտումը, պատասխանատվությունից խուսափելու, կատարված հանցագործություններն ու դրանց հետևանքները լռության մատնելու կամ արդարացնելու բոլոր փորձերը՝ որպես հանցագործության շարունակություն և նոր ցեղասպանություններ իրականացնելու քաջալերանք: Հռչակագիրը վերահաստատում է Հայաստանի և հայ ժողովրդի հանձնառությունը՝ շարունակելու միջազգային պայքարը ցեղասպանությունների կանխարգելման, ցեղասպանության ենթարկված ժողովուրդների իրավունքների վերականգնման և պատմական արդարության հաստատման համար: Հռչակագիրը հույս է հայտնում, որ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը կարևոր մեկնակետ կդառնան հայ և թուրք ժողովուրդների պատմական հաշտեցման գործընթացի համար: Մեղավոր երկրի կողմից մնում է միայն ճանաչել ու դատապարտել իր նախնիների կողմից հայ ժողովրդի հանդեպ իրագործած ցեղասպանությունը: Քանի որ հրաժարվելով պատմական իրողությունից, դրանով Թուրքիան պարարտ հող է ստեղծում ինչպես ահաբեկչության զարգացման, այնպես էլ մարդկության և խաղաղության դեմ նոր հանցագործությունների շարունակման, խրախուսման ու կատարման համար: Թուրքերի կողմից հայերի ցեղասպանության ճանաչման ու դատապարտման բացակայությունը հիմք հանդիսացավ ինչպես այլ ազգերի կողմից նոր ցեղասպանություններ իրագործելու համար /հրեաների, հույների, բուլղարների, լեհերի, գնչուների, ասորիների, աֆրիկյան մի շարք ցեղերի նկատմամբ/, այնպես էլ իր եղբայրակից ազգի՝ ազերիների կողմից արցախահայության նկատմամբ ջարդերի ու կոտորածների իրագործման համար /1988-1990 թթ. Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում և այլուր/: Ավելին, 21-րդ դարում ևս թուրքերը շարունակեցին իրենց հակամարդկային արարքները՝ իրագործելով մշակութային ցեղասպանություն Արևմտյան Հայաստանի պատմաճարտարապետական հուշարձանների նկատմամբ:

Այսպիսով, կարելի է վստահորեն ասել, որ ցեղասպանությունն իրենից ներկայացնում է մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն: Այն իր մեջ պարունակում է մարդու բոլոր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի ոտնահարում: Հայերի ցեղասպանությունը ոչ թե պատմականորեն մեկուսացված երևույթ է, այլ վերաբերվում է ողջ միջազգային հանրությանը: Ցեղասպանության չդատապարտումը հիմք է հանդիսանում զանգվածային անկարգությունների, ահաբեկչության, նոր ցեղասպանությունների ու մարդկության և խաղաղության դեմ ուղղված նոր հանցագործությունների խրախուսման և առաջացման համար: Օրինակները բազմաթիվ են: Մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ոչ մի կազմակերպության գործունեություն, լինի դա ներպետական, պետական, տարածաշրջանային կամ միջազգային մակարդակի, արդյունավետ չի լինի, եթե

այն չդատապարտի թուրքերի կողմից հայոց ցեղասպանության իրականացումը որպես մարդու բնական իրավունքների պաշտպանության հիմք:

Թ. Հռֆմանը եզրահանգել է, որ «բոլոր դեպքերում այսօր հայկական ճակատագիրը, ըստ երևույթին, կրում է համաշխարհային հասարակայնության մոռացկոտ հիշողության կնիքը, որը դրանով նպաստել է ապագա բոլոր ցեղասպանություններին»¹:

Ամփոփում

Ցեղասպանությունը հանդիսանում է մարդկության դեմ ուղղված մեծագույն հանցագործություն:

Հայերի ցեղասպանությունը ոչ թե պատմականորեն մեկուսացված երևույթ է, այլ վերաբերվում է ողջ միջազգային հանրությանը: Ցեղասպանության չդատապարտումը հիմք է հանդիսանում զանգվածային անկարգությունների, սահաբեկչության, նոր ցեղասպանությունների ու մարդկության և խաղաղության դեմ ուղղված նոր հանցագործությունների խրախուսման և առաջացման համար: Մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների աճող ակտիվությունը սկսել է ազդել միջազգային հանրության վրա ի օգուտ հայերի: Հայերի և այլ ժողովուրդների /հրեաների, հույների, լեհերի, գնչուների, ասորիների, աֆրիկյան որոշ ցեղերի/ նկատմամբ իրագործված ցեղասպանությունները վկայում են, որ միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների առաջնահերթ խնդիրը պետք է լինի հայերի հանդեպ բռնության դադարեցումը:

¹ Հղումն ըստ Ս. Ս. Ստեփանյանի «Հայոց ցեղասպանությունը և բեռլինյան դատավարությունը» հոդվածի հղման՝ Der Völkermord an den Armeniern vor Gericht. Der Prozess Talaat Pascha. Gesellschaft für bedrohte Völker, Göttingen, 1980, S. 5.



Осуждение геноцида армян с точки зрения прав человека

Соси Алексанян

Резюме

Ключевые слова: геноцид, Республика Турция, Республика Армения, осуждение, Конвенция, права человека, новые геноциды.

Геноцид является тяжчайшим преступлением против человечества.

Геноцид армян—это явление не исторически изолированное, а относящееся к международному содружеству вообще. Не осуждая геноцид армян, таким образом он является основой для массовых беспорядков, терроризма, новых геноцидов и новых преступлений против мира и человечества. Растущая активность правозащитных организаций начала влиять на международное общественное мнение в пользу армян. Дальнейшие проявления геноцида армян и других народов /евреев, греков, поляков, цыган, ассирийцев, некоторых африканских племен/ свидетельствуют, что безотлагательной задачей международных правозащитных организаций должно являться пресечение насилия в отношении армян.

The Conviction of the Genocide of Armenians
from the Human Rights Viewpoint

Sosy Alexanyan

Summary

Keywords: *genocide, the Republic of Turkey, the Republic of Armenia, the condemnation, the Convention, human rights, new genocides.*

Genocide is the heaviest crime against humanity.

The genocide of Armenians is a phenomenon not historically isolated, but concerning international concord generally. Not condemning Armenian genocide, so it is the basis for mass riots, terrorism, new genocides and new crimes against the peace and humanity. The growing activity of human rights organizations began to influence on the international public opinion in favor of the Armenians.

Further manifestation of the Armenian Genocide and other nations /Jews, Greeks, Poles, Roma, Assyrians, some African tribes/ indicate that the immediate task of the international human rights organizations should be combating violence against Armenians.

ГЕНОЦИД АРМЯН В ВОСТОЧНОМ ЗАКАВКАЗЬЕ В XX в. И НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНАЯ БОРЬБА КАК СПОСОБ САМОСОХРАНЕНИЯ НАЦИИ

Давид Карабекян

АрГУ

Ключевые слова: *геноцид армян, Восточное Закавказье, Восточная Армения, Западная Армения, советский период, постсоветский период, преступление геноцида, преступление по международному праву, армянские погромы.*

Безнаказанность младотурецкого правительства, организовавшего и осуществившего в 1915г. геноцид армян в Западной Армении, породила у вождя национал-социалистов Германии А. Гитлера и его соратников уверенность в безнаказанности политики этнических чисток в отношении славян и евреев.

Известный специалист по международному праву Ю.Барсегов назвал геноцид армян “первым в новой истории широкомастштабным международным преступлением, совершенным с целью уничтожения целого народа по политическим мотивам”¹.

В ряде публикаций он доказал, что хотя термин “геноцид” был предложен польским юристом доктором Р. Лемке после того, как был завершен процесс прямого физического уничтожения армянского населения во всей Западной и на части территории Восточной Армении, на самом деле, как сам термин, так и определение состава этого преступления тесно связаны именно с геноцидом армян².

“Защитники организаторов и исполнителей геноцида армян”, отрицая правомерность юридической квалификации как преступления геноцида физического уничтожения турецким государством армянского населения подвластной ему Западной Армении в 1878 – 1922 гг., тем самым отрицают и правомерность квалификации как международного преступления геноцида и всех других случаев массового уничтожения национальных групп, совершенных до вступления в силу Конвенции о предупреждении преступления геноцида и наказания за него”³.

Данный тезис ученый обосновал тем, что, хотя описание геноцида впервые было предложено польским юристом Рафаэлем Лемке на Пятой конференции по унификации международного уголовного права в Мадриде 14-20 октября 1933г. - спустя 10 лет после геноцида армян - не может возникнуть и тени сомнений по поводу того, что речь шла именно о геноциде армян в Османской империи⁴. Лемке внес предложение об объявлении действий направленных на уничтожение или разрушение расовых, религиозных или социальных групп, варварским преступлением по международному праву – *delicta juris gentium*.

То обстоятельство, что в своем докладе доктор Лемке имел ввиду именно геноцид армян Ю. Барсегов объяснил следующим образом: а) элементарная логика

¹ Барсегов Ю.Г. “Геноцид армян - преступление против человечества” О правомерности термина и юридической квалификации, Ер.- 1990 – с.7

² Там же с.6

³ Там же с.5

⁴ Там же с.7

подсказывает, что не термин, каким бы удачным он ни был, создает преступление, а преступления ведут к принятию термина¹, б) единственное крупномасштабное преступление, которое доктор Лемке мог иметь в 1933г. в качестве реальной основы предложенного им определения и которое содержало состав преступления геноцида, было уничтожение армянского населения порабощенной Турцией части Армении², в) приход фашистов к власти заставил вспомнить кровавые дела их предтеч – младотурок. Стало очевидным, что если человечество не сделает должных выводов и не примет необходимых мер пресечения, за геноцидом армян последуют новые акты геноцида³.

Весьма важно также следующее замечание ученого: “Первым документом международного характера, в котором применяется термин “геноцид”, был обвинительный акт от 18 октября 1945г. против главных немецких военных преступников, представших перед Нюрнбергским военным трибуналом, но и он использовал этот термин *post factum*⁴.”

Приводимые ученым описание и признаки геноцида позволяют сделать вывод о том, что на территории Восточной Армении Турцией и Азербайджаном также проводилась политика геноцида армян.

В монографии **“Геноцид армян – преступление по международному праву”** ученый указывает на то, что главной целью геноцида, осуществленного в 1915-1923гг., был захват армянской территории⁵. Первая мировая война и крушение Российской империи создали возможность беспрепятственного продолжения геноцида в находящейся в составе Российской империи части Армении.

Наиболее массовыми и жестокими актами истребления армян на территории Восточной Армении в этот период была резня армян в г.Баку в 1918г. и в г.Шуши 1920г.. В результате которых в обоих армянских городах было уничтожено 30000 и 20000 армян. На Парижской мирной конференции 1919г., за подписями Председателя Делегации Республики Армения Ав. Агароняна и председателя Армянской национальной делегации Погоса Нубара примерная оценка подлежащего репарации и компенсации ущерба за 1915-1919гг., причиненного армянской нации на территории турецкой Армении и Армянской Республики Кавказа ... по предварительным и далеко неполным подсчетам, она составила 19 130 932 000 французских франка, из коих на долю армян Турецкой Армении приходилось 14 598 460 000, а на долю кавказской Республики Армения – 4 532 472 000 франка⁶.

В 1918 – 1921 гг. Азербайджан и Турция осуществили ряд массовых истреблений и изгнаний в Нагорном Карабахе и армянонаселенных районах Восточного Закавказья.

Наиболее жестокими из них была резня армян в Шуши 20 -23 марта 1920г. - одним из крупнейших торговых, культурных, духовных, образовательных центров

¹ Там же

² Там же.

³ Там же.

⁴ Указ. соч.– с.5.

⁵ Барсегов Ю.Г. “Геноцид армян – преступление по международному праву” М. – 2000 с. 218.

⁶ там же сс. 196-197.

Закавказья, а также административном центре НК и в Баку - одном из крупнейших центров нефтедобычи в мире и портов на побережье Каспийского моря.

После установления советской власти в Закавказье, включения НК в состав Аз.ССР в результате неправового и волюнтаристского акта – решения Кавказского бюро РКП(б) от 5 июля 1921, вхождения ЗСФСР в состав СССР, азербайджанские власти начали политику «белого» геноцида коренного армянского населения НК и других районов Восточного Закавказья.

История с точностью повторилась и в предверие развала СССР в 1988 – 1991гг. - почувствовав вседозволенность, иногда и прямое попустительство центрального руководства, Азербайджан совершил очередной акт геноцида.

В феврале 1988г. азербайджанские власти организовали армянские погромы во втором по численности и масштабам промышленности центре Азербайджанской ССР г.Сумгаите.

Погромы, продолжавшиеся три дня, удалось остановить только после вмешательства советских войск. Отсутствие должной оценки и реакции высшего руководства СССР привели к тому, что волна армянских погромов прошла по всей подконтрольной Азербайджану территории.

В результате прямого физического насилия, а также шантажа и угроз армяне покинули свои исконные земли в Северной части Нагорного Карабаха (Ханларе, Геташене, Вардашене, Шамхоре, Гандзаке/ныне Гяндже, Дашкесане) и собственно нынешней НКР (бывшей НКАО и Шаумяновском районе Аз.ССР).

Население Шаумяна было полностью депортировано. Убийства, похищения, взятие в заложники, незаконные аресты, истязания людей происходили по всему Нагорному Карабаху.

Летом 1991г. ситуация была настолько критической, что Исполком Совета Народных Депутатов НКАО обратился к иностранным государствам и правительствам с просьбой о предоставлении армянам НК политического убежища.

Объектом враждебных и агрессивных действий стала не только НК, но и Армения. Характер враждебных действий Азербайджана против НК и в Армении в точности совпадал.

При поддержке частей Советской Армии и Внутренних Войск подразделения азербайджанского Отряда Милиции Особого Назначения брали заложников собственно на территории Армении, большинство из них составляли не бойцы отрядов самообороны, а гражданские лица и сотрудники милиции. Ярким примером сказанному служит трагедия села Воскепар¹ Ноемберянского района Арм.ССР.

По свидетельству депутата Верховного Совета РСФСР, а затем и Государственной думы РФ А.Шабада, который в период проведения карательной операции - 27 апреля по 6 мая 1991г. находился в селе - это была армейская операция, в ходе которой одиннадцать милиционеров было убито, трое получили тяжелые ранения, а оставшиеся 10 были возвращены на Родину спустя три с половиной месяца².

¹ [http://karabakhrecords.info /gallery/трагедия-воскепара-20-лет-спустя/](http://karabakhrecords.info/gallery/трагедия-воскепара-20-лет-спустя/)

² Там же.

В Гянджинском изоляторе ноемберянские милиционеры увидели своих товарищей, это были 29 сотрудников РОВД, которые, как выяснилось потом, сдались в заложники, чтобы спасти село Воскепар от уничтожения¹³.

Акция, по мнению российского депутата, явилась реакцией на отказ руководства Армении подписать новый Союзный договор¹. Он также указывает – “все это это время в Арцахе и в Армении продолжалась операция “Кольцо”, в ходе которой было насильственно депортировано почти 30 армянских сел с населением более 10 тысяч человек, а приграничные районы Армении подвергались непрерывному обстрелу, нападениям, депортациям и насилию. Только в 20-х числах августа, с провалом ГКЧП, операция была прекращена: лишившись поддержки советских войск, азербайджанцы пошли на попятную, отлично понимая, что им не удастся справиться с набравшей силу самообороной армян”²...

Как писал другой очевидец событий Алексей Рогов; в мае 1991 года дислоцированными на территории Азербайджана подразделениями 4-ой армии советских войск с применением вертолетов, танков и тяжелой артиллерии до основания было уничтожено село Воскепар Ноемберянского района Армении. Были расстреляны сотрудники милиции Армянской ССР³.

Наиболее драматичные события начались после развала СССР, когда Азербайджан почувствовал возможность беспрепятственного осуществления планов по ликвидации НКАО.

Азербайджанские власти обвинили армянскую сторону в уничтожении азербайджанского вертолета МИ-8 над селом Каракенд 23 ноября 1991г⁴, и уже на третий день после катастрофы - 26 ноября того же года - Верховный Совет Азербайджана принял закон об упразднении Нагорно-Карабахской автономной области, согласно которому НКАО ликвидировалась как национально-территориальное образование, а районы Нагорного Карабаха переименовывались и переподчинялись новообразованным административным центрам⁵. (В постановлении от 28 ноября 1991г. Комитет конституционного надзора СССР осудил этот акт законодательного органа Азербайджана как нарушающий закрепленный в Конституции СССР статус НКАО⁶.)

Тот факт, что авиакатастрофа была лишь поводом для принятия закона, свидетельствует содержание Закона о государственной независимости АР, в котором все подвластное АР население провозглашалось “народом Азербайджана”, а территория и все совокупное достояние - частью территории, экономики и т.д. Азербайджана. Распорядиться ими, согласно данному Закону, могли “только власти АР”. Изменение границ, общественно-политического, административно-территориального деления АР и пр. могло производиться исключительно властями АР, но только на основе **референдума среди всего населения Азербайджана**. Иначе говоря, население НК лишалось права на существование, вернее это право ему могли

¹ Там же.

² Там же

³ Там же

⁴ <http://www.xocali.net/RU/h9.html>

⁵ <http://www.nkr.am/ru/the-war-of-19911994/83/>

⁶ Там же

предоставить только власти АР на основе референдума среди всего населения Азербайджана.

Из заявлений азербайджанского лидера(Аязя Муталибова) видно, что заверения официального Баку о том, что насилие над армянами стало ответом руководства Азербайджана на вооруженные вылазки мифического армянского экспедиционного корпуса, специально заброшенного из Армении в НКАО и сопредельные армянонаселенные территории, а также действия местных отрядов самообороны - лишены смысла.

Складывающаяся после развала СССР вокруг НК ситуация по существенным признакам напоминала обстановку вокруг Западной Армении, когда победившие в революции 1908г. младотурки, пытаясь получить поддержку западных стран, а также национальных меньшинств и политических партий внутри страны, начали формально осуществлять свои обещания о проведении демократических преобразований в Турции.

Они начали парламентскую, военную, административную и другие реформы, и даже разработку проекта Конституции, которая призвана была стать олицетворением идеалов революции, гарантировать равные права всех граждан Турции вне зависимости от их вероисповедания, национальной принадлежности, языка и т.д.

Естественно, что младотурки заявили о готовности выполнить все взятые Турцией международные обязательства, в том числе положения международных актов по Армянскому вопросу.

Как в начале 20-го века в Турции, так и в Азербайджане, в конце единственным средством самосохранения армян была организованная борьба. Ее целью должна быть консолидация армян и их национальное освобождение. Если в первой половине 19-го основными центрами борьбы выступали местные общины, аристократы, патриоты –пассионарии, церковные институты, отдельные священнослужители-католикосы, архиереи, иереи и другие, то в середине и концу 19-го века возникла необходимость в выработке детально-проработанной, целостной, созвучной требованиям времени и чаяниям всего армянства национальной идеологии и программы освобождения. В этот период за границами Армении и собственно в Восточной и Западной Армении возникают и начинают действовать армянские политические партии “Гнчак”(Колокол), Арменакан, Дашнакцүцюн, Рамкавар-азатакан.

Следует отметить, что безотносительно к различиям своих философско-мировоззренческих основ они были едины в трех вопросах: необходимости освобождения армян из-под иноземного господства, создания единого, независимого армянского государства и проведения широких экономических, культурных, правовых, социальных, политических реформ.

Данные партии выступили в качестве организаторов вооруженной борьбы. Они координировали не только политическую деятельность своих местных, а затем и территориальных ячеек, но и создавали отряды самообороны.

Благодаря этому, например, во время армяно-татарских столкновений 1905-1906гг. удалось избежать значительно большего количества жертв среди армянского населения.

Кроме того, деятельность партий позволила расширить арсенал методов борьбы за независимость, включая террор в отношении должностных лиц, парламентскую деятельность, лоббирование армянских национальных интересов и идей национально-освободительной борьбы армян в странах Запада и т.д..

После развала Российской империи наличие на всех армянонаселенных территориях разветвленной сети партийных ячеек и отрядов самообороны позволило за относительно короткий промежуток времени создать временные органы управления и самообороны НК и Армении, на базе которых впоследствии сформировались национальные/государственные/ органы самоуправления и регулярная армия.

Временное правительство в г.Шуши было создано в октябре 1917г. за 8 месяцев до официального распада Закавказского сейма и провозглашения независимости Азербайджана, Армении, Грузии.

При Временном правительстве были учреждены органы, ответственные за организацию самообороны НК. После Октябрьской революции и падения Российской империи в НК был образован Национальный Совет.

Судьба армянства, оказавшегося после советизации Закавказья на подконтрольной Азербайджану территории, доказала, что ни факторы морального, ни факторы политического порядка не препятствовали политике ликвидации армянской самобытности.

После победы советской власти изменились формы проведения, но не сущность этой политики. Свидетельством чему служит судьба Нахичевани, в которой до революции 1917г. армяне составляли 40 процентов населения, а в 1990-х гг. всего 1,5 процента.

Даже в начале 21-го, когда в Нахичевани не осталось армян, об'ектом агрессии Азербайджана стали достояния армянской истории и культуры - хачкары в Нор-Джуге, которые использовались азербайджанскими военными в качестве мишеней.

При этом именно Баку(дабы указать отличия проблемы НК от проблемы Нахичевани) постоянно подчеркивает, что статус Нахичевани, в отличие от НК, был определен международным договором и обязательствами АР.

В другой книге - "Право на самоопределение - основа демократического решения межнациональных проблем. *К проблеме Нагорного Карабаха*" - Ю. Барсегов приводит следующие факты систематической политики выживания армян в Нагорном Карабахе: если бы демографические изменения в Нагорном Карабахе определялись только естественным приростом населения, то к переписи населения 1979г. численность армянского населения была бы 620 238, а не 123 100 человека, а азербайджанского, напротив, должна была быть 27 176 чел., вместо 37 200 чел., т.е. меньше фактической на 26,9 процентов. Остается добавить, что к 1989г. армян в Нагорном Карабахе должно было быть 731 959, а азербайджанцев только 32 548, что составляло бы только 4,45 процента населения¹.

Результатом политики азербайджанизации населения стало сокращение доли армянского населения края с 95 процентов, в 1921г. (в год включения НК в состав

¹ Барсегов Ю. Г. "Право на самоопределение основа демократического решения межнациональных проблем. *К проблеме Нагорного Карабаха*". сс.88-89, 99 – 101.



Азербайджана), до 76 процентов в 1989г., тогда как доля азербайджанского населения увеличилась 5,5 – 6 раз. Добавим, что перманентно сокращалась также территория автономии.

Резюме

Главной целью геноцида армян в Западной и Восточной Армении был захват армянских территорий для распространения турецкого влияния на Кавказе и в Центральной Азии.

Политика геноцида армян также продолжалась после прихода к власти большевиков и советизации Закавказья на территориях, подконтрольных азербайджанским властям.

В период развала СССР и образования в Закавказье новых независимых государств эта политика приобрела более массовый и открытый характер.

Հայերի ցեղասպանությունը Արևելյան Անդրկովկասում 20-րդ դարի սկզբում և ազգային-ազատագրական պայքարը որպես ազգի ինքնապահպանման միջոց

Դավիթ Կարաբեկյան

Ամփոփում

Բանալի բառերը՝ հայերի ցեղասպանությունը, Արևելյան Անդրկովկաս, Արևելյան Հայաստան, Արևմտյան Հայաստան, խորհրդային շրջան, հետխորհրդային շրջան, ցեղասպանության հանցագործությունը, հանցագործությունը ըստ միջազգային իրավունքի, հայկական ջարդեր:

Արևմտյան և Արևելյան Հայաստանում Հայոց ցեղասպանության հիմնական նպատակն էր հայկական տարածքների գրավումը և թուրքական ազդեցության տարածումը Կովկասում ու Կենտրոնական Ասիայում:

Ադրբեջանական իշխանություններին ենթակա տարածքներում հայոց ցեղասպանությունը շարունակվել է նաև բոլշևիկների իշխանության գալուց և Անդրկովկասի խորհրդայնացումից հետո:

ԽՍՀՄ փլուզման և Անդրկովկասում նորանկախ պետությունների ձևավորման շրջանում, այդ քաղաքականությունը ստացել է ավելի զանգվածային եւ բաց բնույթ:

**The Armenian Genocide in the East Transcaucasia at the Beginning of the XX c.
and the National Liberation Struggle as the Way of Self-Preservation of the Nation**

David Karabekyan

Summary

Key-words: *the Armenian genocide, Eastern Armenia, Western Armenia, Eastern Transcaucasia, Armenian massacres, Soviet period, postsoviet period, crime of genocide, crime under international law*

The main goal of the Armenian Genocide in Western and Eastern Armenia was the capture of Armenian territories to spread and Turkish influence in the Caucasus and Central Asia.

The policy Armenian Genocide also continued after the Bolsheviks came to power and Sovietization of Transcaucasia, on the territories controlled by the Azerbaijani authorities.

During the collapse of the USSR and the formation the newly independent states in Transcaucasia, this policy has become more massive and open nature.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՊՈՆԶԻԱՅՈՒՄ

Սոկրատ Խանյան

Բ. գ. դ., պրոֆեսոր

ԱրՂՀ

Բանալի բառեր. 1915թ., ապրիլի 24, ցեղասպանություն, Դեր-Ջոր, բանաստեղծներ, 100-րդ տարելից, սփյուռք, Սումգայիթ, Բաքու, Արցախյան պատերազմ, հաղթանակ

2015 -ի ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցն է: Դա համազգային անանց ցավի տարելիցն է, մեկ ու կես միլիոն անմեղ հայերի բզկտված սրտերի ճիչը, Տիգրանված ու Մաշտոցված կորուսյալ երկրի մշտադողանց կանչը, որն ունի արյունամած սկիզբ, սակայն սփոփանքի վերջ՝ երբեք: Այստեղից էլ այն մշտամոռմոք երևույթը, որն առնչվում է մեր գրականության հետ, կոնկրետ այն երևույթի, որ 20-րդ դարի սկզբի հայրենապատումը հազեցվեց կորստի մրմուռով, վշտի զգացումով: Ինչպես բնութագրել է Սիամանթոն, պահանջ զգացվեց «մաքրափայլ թերթերի վրա ցեղին ցավը և ցեղին ուժը բանաստեղծել»: Մեր պատմությանը գումարվեց ժողովրդի ողբերգական ներկայի հառաչանքն ու ցավը: Սիամանթոն «Կարմիր լուրեր բարեկամես» ժողովածուում բերեց իր հոգու կսկիծը, ազգային ճակատագրի ծանրությունը, մահվան տեսիլները, կոտորածների սարսափները:

Դանիել Վարուժանը, ժողովրդի նոր ողբերգության կսկիծը սրտում, գրեց «Զարդը» բանաստեղծությունը: Ե՛վ Սիամանթոն, և՛ Վարուժանը ամեն դեպքում վստահ էին, որ վերջ կդրվեն հայկական ջարդերին Օսմանյան Թուրքիայում: Սակայն թուրքը մնաց թուրք: Սուլթան Համիդի ժառանգորդ երիտթուրքերը ավելի դաժան գտնվեցին հայ ժողովրդի, նրա մտավորականության հանդեպ: 1915-ի գոհերը դարձան նաև մեր ականավոր գրողները:

1915 թվականից հետո հայ գրականության մեջ սկիզբ առավ Հայոց մեծ ցեղասպանությունը դատապարտող պոեզիան: Հայ ժողովրդի անբուժելի ցավի ճիչը, կորուսյալ հայրենիքի կարոտը, Դեր-Ջորի անապատում անթաղ մնացած հազարավոր մայրերի ու մանուկների վիշտը, վրեժի կանչը, հույսի ծփանքը պատկերվեցին մեր գրողների երկերում: Այդ պոեզիայում բիբլիական Արարատը խորհրդանշվեց որպես եղեռնական պատանդ: Հայ գրականության կանգուն պոետների՝ Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի, Ե. Չարենցի, Վ. Թերեյանի, Ն. Զարյանի և մյուս մեծությունների սրտերում արյուն կաթեց: Մեծ Լոռեցին ժամանակից շուտ ճերմակած գլուխը խոնարհեց ավերված երկրի առջև, կրակ առավ «Հայոց հրդեհի կարմիր բոցերից», կրծքի տակ վառեց «Հայոց աշխարհի մեծ կերոնները... Մասիսն ու Արան, Սիփանն ու Սըրմանց, Նեմրոյթ, Բանդուրեք», հոգու աչքերով նրանց փնշերին տեսավ միլիոնավոր անմեղ գոհերին, որդիաբար ու հայրաբար աղոթեց ու կարդաց իր հոգնահանգիստը.

Հանգն՝ ք, իմ որբն՝ ր... իզո՛ւր են հուզմունք, իզո՛ւր և անշահ...

Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էսպես կմնա...¹

Վ. Տերյանը, որ մինչև Առաջին համաշխարհայինը սրտի ցավով բացականշել էր՝ «Մի՞թե վերջին պոետն եմ ես, Վերջին երգիչն իմ երկրի», Մեծ եղեռնից անմիջապես հետո գրեց ավերված ու հրկեզ հոգու երգը.

Տեսնում եմ ահա գյուղերը մեր խեղճ,

Եվ թուխ դեմքերն այն տխրության սովոր,

Իմ ժողովուրդը անել վշտի մեջ,

Երկիրն իմ անբախտ ու աղետավոր...²

Տաղանդավոր բանաստեղծի «Երկիր Նաիրի» շաբթնամսական ամբողջության մեջ հնչեց որպես տագնապ, որպես այրող կարոտ «արնաներկ» երկրի վերաբերյալ, անմարում սեր դեպի արքայական մեր լեզուն, լուսն հավատ՝ գալիքի հանդեպ:

Հայոց խոր գիշոր խոցեց Ավ. Իսահակյանի զգայուն սիրտը: Նա լացեց «ավեր հայրենիքի», «անհուն, անծիր տառապանքի, զարհուրանքի ու եղեռնների» զոհ դարձածների վիշտը և տեսնելով, որ հայրենիքը չար ուժերի դեմ մնացել է մենակ, ցավով ընդհանրացրեց. «Իմ հայ ժողովուրդ, Քաջ հայրերիդ պես կռվում ես և դու, Սակայն չգիտես՝ Ով է թշնամիդ...»:³

Վարպետը խիստ քննադատեց եվրոպական պետությունների ապերախությունն ու սառնասիրտ վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ:

Հիշտ է նկատված, որ 20-րդ դարն սկսվել է ոչ թե 1900թ. հունվարի 1-ից, այլ՝ 1914թ. օգոստոսի 1-ից՝ Սարանյի կրակոցից: Դա առավելագույնս վերաբերում է հայ ժողովրդին:

Հավատալով Ռուսաստանի օգնությամբ անդունդի եզրին գտնվող հայրենիքը փրկելու ակնկալիքներին՝ բազմահազար հայ կամավորականներ մեկնեցին ռազմաճակատ՝ ռուս զինվորների հետ համատեղ մարտնչելու Օսմանյան Թուրքիայի հրոսակների դեմ: Կամավորականների շարքերում էր 18-ամյա Ե. Չարենցը: Զինվոր բանաստեղծի առջև Երկիր Նաիրիի փոխարեն փռվեց այրույնտ «Կապուտաչյա հայրենիքը»՝ որպես զարհուրելի դժոխք, ու ծնվեց նաև «Դանթեական առասպել» պոեմը: Չարենցը տեսավ իր մայր ժողովրդի բնաջնջումը, ու հոգու շերտերում կախվեց ինչու-ների շարքը.

Ինչո՞ւ է երազն այս աշխարհավեր

Կախվել մեր գլխին այսպես կոտորեն,

Ինչո՞ւ են փռում այսքան ցավ, ավեր,

Հողմերը այս չար ե՞րբ պիտի լռեն:

Եվ ո՞վ է լարում այսպիսի դավեր,-

Կյանքը դարձնում նզովյալ գեհեն:⁴

Այս հարցումը հայ ժողովրդին անլուր տառապանքներ բերող պատերազմի դեմ է: «Դանթեական առասպել»-ին հաջորդում է Չարենցի «Աթիլլա» երկը: Բանաստեղծի բացատրությամբ՝ «նրանում պատկերված է հոների արքա հզոր Աթիլլը՝ որպես պատերազմի ահավոր սպառնալիք, որ կախված կմնա, քանի արդարությունը չի մտել հունի մեջ»:

¹ Հ. Թումանյան, Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 2, «Հայաստան» հրատ., 1969, էջ 222:

² Նույն տեղում, էջ 224:

³ Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 1, «Հայաստան» հրատ., 1973, էջ 281:

⁴ Ե. Չարենց, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 2, ՀՍՍՌ, ԳՍ հրատ., 1963, էջ 17:

Հայոց մեծ ցեղասպանությունը տարբեր ժամանակներում և տարբեր առիթներով խոցել է Չարենցի սիրտը: Այդ են վկայում նրա «Ազգային երագ»-ը, «Ողջակիզվող կրակ»-ի առաջին մասը, «Երկիր Նաիրի» վեպը, «Պատմության քառուղիներով», «Մահվան տնակի» պոեմները: Չարենցի երկվություն ապրող սիրտը բզկտվում էր: 1918թ. «Ողջակիզվող կրակ»-ի մեջ նա դիմում է իր հայրենակիցներին.

*Ինչպե՞ս պիտի արդյոք հնչեն
Այս, այս երգերը իմ կարմիր -
Իմ ավերակ, իմ ո՞րք երկրում...¹*

Իսկ «Անկումների սարսափից» խորագիրը կրող բանաստեղծության մեջ նա հարցնում է.

*Ի՞նչ է ուզում ինձանից կապույտ մորմոքը հրի,
Ի՞նչ է ուզում քո հոգին, հազարամյա Նաիրի:
Եվ ինչո՞ւ ես դու փռել իմ դեմ քո բույրը բույր,
Եվ իմ մորմոքը վառել թախծներով ասեղներ:²*

Չարենցը չէր կարող անտարբեր մնալ հայրենիքի կործանման սարսափի և անկման մահագույժի հանդեպ: Նրա հայացքի առաջ միշտ արյունաքամ ժողովուրդն ու հայրենիքն է եղել՝ ծվատված, բզկտված թուրքական դաժան արշավանքի հետևանքով: Հայաստանի ողբերգական կացությունը նրան հուզել է անգամ այն պահերին, երբ իրեն հայտարարել է հեղափոխության երգիչ: Այդ ապրումի բանաստեղծական խտացումը չե՞ն, արդյոք, 1920-21 թթ. ստեղծված «Տաղարան»-ի հետևյալ տողերը.

*Ո՛ր էլ լինեմ, չեմ մոռանա ես ողբածայն երգերը մեր,
Չեմ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր,
Ինչքան էլ սուր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր,
Էլի ես որք ու արնավառ իմ Հայաստան յարն եմ սիրում:³*

Հայոց մեծ ողբերգությունը ցավի ու վշտի տարբեր երանգներով արտացոլվել են Ն. Զարյանի, Գ. Մահարու, Գ. Սարյանի, Թ. Հուրյանի, Հ. Ծիրագի, Պ. Սևակի, Հ. Սահյանի, Գ. Էմինի, Ս. Կապուտիկյանի, Վ. Դավթյանի և ուրիշ անվանի բանաստեղծների ստեղծագործություններում: Սփյուռքահայ բանաստեղծներն օտար ափերում 1920-ական թթ. սկզբին դեռ փայփայում էին մի օր Արևմտյան Հայաստան վերադառնալու հույսը: Ռ. Որբերյանը Փարիզում վերադարձի այդ փափագն արտահայտել է այսպես.

*Կարոտակեց զավակդ քեզ պիտի գա,
Չի մարեցավ դեռ հոգվույն խորն հույսին հուր,
Ու կը հափտա գարուններուն ապագա...:⁴*

Վերադարձի այդ հույսն աստիճանաբար վերածվում է անհուն կարոտի: Կորուստը շատ մեծ է: Դա հող-հայրենիքի, պապերի աճյունների, անցյալի կորուստն է: Լևոն Զավեն Սյուրմեյանն Ամերիկայում գրում է երգեր, որոնց քնարական հերոսը տնկում է խնձորի ծառ՝ ուշքն ու միտքը ավերված հայրենիքում: Նա աղոթում է առ Աստված և

¹ Ե. Չարենց, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 1, ՀՍՍՌ, ԳԱ հրատ., 1962, էջ 167:

² Նույն տեղում, էջ 209:

³ Նույն տեղում, էջ 246:

⁴ «Ցեղին սիրտը», Արևմտահայ բանաստեղծություն, «Արևիկ» հրատ., 1991, էջ 176:

շնչում. «Մեղեցիկներու իբրև խաչ՝ ես այս ծառը տնկեցի»։ Սփյուռքի հայ բանաստեղծը գիտակցում էր, որ օտար հողի վրա ունի կորուսյալ անցյալ ու ապագայի չմարող հույս։ Նա մի կողմից իր հոգու աշխարհում վերստեղծում է գերված երկրի պատկերը, մյուս կողմից սրտի ափերով շոյում Արագածի լանջերին փրկված փոքրիկ Հայաստանը։ Մուշեղ իշխանը այդ զգացումն արտահայտել է հետևյալ տողերում.

*Լիբանանի սա հեռավոր լեռներեն
Ողջույն ձեզի, Հայաստանի բանվորներ,
Դուք դեռ հազիվ անցած արյան ծովներեն,
Նոր ձև ու կյանք կուտաք երկրին մեր ավեր։¹*

Գնալով Մեծ եղեռնի թեման հայ բանաստեղծների երգերում պատկերվում է որպես Հայ Դատի պահանջ, որը խաբսխված է հայրենի հողին, ինչպես ներկայացնում է Զահրատը.

*Այս հողը հողեղեն ամենն կապույտն է,
Կապույտը երկնքիդ ծովերուդ նման է,
Հերկե՛ հոգիս, հերկե՛ - այս հողը կապույտ է,
Հող չէ՛ - քու կյանքդ է...²*

Սփյուռքի բանաստեղծները, որ իրենց հոգիներում ունեն հարստահայ գրականության լավագույն ավանդույթները, պետք է ստեղծեին նաև իրենց նոր ճակատագրին համահունչ երգը։ Բայց ինչպե՞ս։ Հայ գրողը հետ էր նայում, հիշողության մեջ կրակներից ճարճատում էին մեր դարավոր քաղաքներն ու շենքերը, կոպերի տակ տեսիլքի փոխված՝ երևում էին միլիոնների արյունոտ, անթաղ դիակները՝ Մասիսի լանջերից մինչև Դեր-Զոր։ Ահա այդ համազգային ընդհանուր վշտի մեջ սփյուռքահայությունը ոչ միայն կարողացավ ոտքի կանգնել, շտկել մեջքը, այլև ուժ գտավ հնչեցնելու իր քնարը կարոտի բազմաշերտ երանգներով։ Հնչեց նրա նորօրյա երգը՝ կորստյան ահավոր երանգներով։ Սփյուռքահայ գրողները կորուսյալ հայրենիքի կարոտն առնելու համար առաջին հերթին դիմեցին հայրենի բնությանը՝ նրան ներդաշնակելով իրենց ցաված հոգիները։ Այդ մասին դիպուկ է ասել Համաստեղը. «Մենք, ինչքան նման ենք ծովին, որ խաղաղ է մեր հոգիին պես, տխուր մեր հոգիին պես, մտածկոտ՝ իր գեղեցիկ կոպտության մեջ։ Ծովը իր մեջ ամբողջ երկինք մը աստղերով ծանրացավ, ճիշտ մեր հոգիին պես»։³ Ծովի տխրությունը, խորհելը, հառաչելը, փոթորկվելը, հիրավի, հայոց հոգու բանաստեղծական ածանցումն է։ Վերհուշը դարձավ ցավից հայրենապատումի անցման հիմնական զարկերակը, որի բաբախումների մեջ կարելի է լսել Վահան Թեքեյանի, Ժազ Հակոբյանի, Վահե Վահյանի, Անդրանիկ Ծառուկյանի, Բյուզանդ Թոփալյանի, Կոստան Զարյանի, Գեղամ Աթմաճյանի, Միսաք Մանուշյանի և այլոց սրտերի տրոփյունը։ Այդ զարկերից ստացած առաջին զգացումը ցավի և վշտի թրթռներն են։ Վ. Թեքեյանը առաջիններից էր, որ բանաստեղծական պատկերի մեջ ներկայացնում էր իր հոգին, որտեղ մարում էին «Երկնքի լուսերն ալ մի առ մի»։ Հուսահատության այս նոտաները բնական ու հասկանալի են։ Անարդար աշխարհի առջև գլխատվեց մի ողջ ժողովուրդ, որի բեկորները անապատների միջով մագապործ հանգրվանեցին

¹ Վ. Գաբրիելյան, Սփյուռքահայ գրականություն, «Լույս» հրատ., 1994, էջ 333:

² Նույն տեղում, էջ 211:

³ Համաստեղ, Աղոթարան, Բեյրութ, 1957, էջ 151:

աշխարհի տարբեր ծագերում: Հայ բանաստեղծների մտահոգությունն օտար ափերում ազգային ոգու պահպանումն էր: Դիմելով ընթերցողին՝ Վ. Թեքեյանը հնչեցնում էր այն ամուր պահելու կոչը: Բանաստեղծը հայտարարում է հայ ոգու շարունակվող գոյությունը՝ ի հեճուկս բոլոր դաժանությունների: 1920-1940-ական թթ. սփյուռքահայ իրականության մեջ հայրենիքի ճակատագրի բանաստեղծական նկարագրի բոլոր երանգները կարելի է տեսնել Վ. Թեքեյանի, Լ. Զարյանի, Մ. Իշխանի ստեղծագործություններում: Այդ տարիներին որպես սփյուռքահայ պոեզիայի տաղանդավոր ներկայացուցիչներ՝ նրանք ճանապարհ էին հարթում ստեղծագործող նոր սերունդների համար: Պատմությունն ապացուցում էր, որ կորուսյալ Մեծ Հայքի մի կտոր փրկված հողի վրա՝ Արագածի շուրջ՝ գերված Մասիսի դիմաց, մի բուռ դարձած հայ ժողովուրդը ոչ միայն վերընձյուղվում է, այլև մագնիսական ուժով դեպի իրեն է ձգում սփյուռքի այն մտավորականների ուշադրությունը, ովքեր թերահավատ էին խորհրդային Հայաստանի հանդեպ: Այդ առումով նշանակալից երևույթ էր Վ. Թեքեյանի «Ներկա Հայաստանին» շարքը՝ բաղկացած երեք սոնետից: Նա արդեն գրկաբաց ընդունում էր կրակների միջից փյունիկի պես ծնված երկիր-իրողությունը: Եվ Ս. Կապուտիկյանը, ողջունելով սփյուռքահայ գրողներին, ընդգծեց.

*Դուք հայրենիքի ծաղկումին ի տես՝
Ուրախությունից մանկացած այրեր,
Ուր տարիներով բռնկացած քայլել,
Ու մեզ եք գալիս ուխտավորի պես,-
Զգաստանում եմ ես ձեր հայացքից,
Երկյուղած, սիրով ու հավատացող,
Որ Հայաստանի ամեն մի ծաղկին
Այնպես է իջնում, ինչպես լույսի շող.¹*

Հայ պոետների մեջ Մեծ եղեռնի թեմայի ամբողջական արծարծման ուղղությամբ առանձնապես աչքի ընկան Հ. Ծիրազը, Պ. Սևակը, Վ. Դավթյանը, Գ. Էմինը:

Հայ ժողովրդի բախտի ոլորանները, Հայաստանի գերված սարերն ու գետերը, աշխարհով մեկ սփռված հայերի ճակատագիրը, հայ մարդու պահանջատիրությունը նորոպի հնչեցին Հ. Ծիրազի պոեզիայում: Ազգային խոր ցավը մինչև իր կյանքի վերջն ուղեկցեց մեծ բանաստեղծին: Ծիրազը, հետևելով Ե. Զարենցին, նրա օրինակով ստեղծեց մի նոր Դանթեական: Պոեմի բնաբան ընտրելով «Հայերի դատը մարդկության դատն է» արտահայտությունը՝ Ծիրազը դժոխքի պատկերը ներկայացրեց հանձին եղեռնված Հայոց աշխարհի: Դանթեին դիմելով՝ բանաստեղծը սրտաճմլիկ էպիգրոֆների օգնությամբ ցույց տվեց մի կողմից անմեղ հայերի անլուր տառապանքները, մյուս կողմից ցատումով ներկայացրեց թուրքերի գազանություններն ու անմարդկային արարքները մեր արդարադատ ժողովրդի հանդեպ, որոնց պատճառով Արևմտահայաստանը «դարձավ դժոխքի դժոխքը դժխեմ»:

Անդրադառնալով կորուսյալ հայրենիքի թեմային՝ Ծիրազը դատապարտում է ցեղասպանությունը և կրծքի տակ օրորում կորուսյալ մեր երկիրը վերադարձնելու հույսը: Բանաստեղծը խենթորեն ձուլվում է Հայաստանին, Հայաստանն էլ՝ իր երգիչ

¹ Ս. Կապուտիկյան, Երկերի ժողովածու 2 հատորով, հ. 1, <<Հայպետհրատ>>, 1972, 403:

որդուն: Ու թվում է, թե հայոց գերված սարերն ու գետերը ոչ թե Արաքսի այն կողմն են, այլ Շիրազի հոգում: Այստեղից էլ՝ մեր ազգային խորհրդանիշ Մասիսի կերպարի բազմակողմանի դրսևորումը նրա ստեղծագործություններում: Արարատի հանդեպ ունեցած սերը Շիրազը ներկայացնում է որպես մոր կաթի հետ իր արյանն անցած ավիշ: Բանաստեղծը նայելով Մասիսին՝ մռնչում է աշյուծի պես ու ծածանում նրա ազատագրման փափագը. «Նա է կարոտն իմ անսահման՝ քարերն ի վեր, ի վեր Մասիս... »:

Շիրազի պոեզիայում շունչ են առնում Սիսն ու Մասիսը, Անին ու Վանը, Եփրատն ու Տիգրիսը, Աղթամարն ու Նարեկը, մի ամբողջ կորուսյալ հայրենիք: Զգայուն ողբասաց չէ բանաստեղծը, նա հայրենիքը գերությունից փրկելու կոչն է հնչեցնում.

*Հագար տարվա կարոտ ունի իմ նրազը հազարաթև,
Ախ, թեկուզ յուր, դեռ ավերակ, տեսնեմ Անին ու նոր մեռնեմ,
Անցնեմ դարեր ոտք չդրած հող ու հանդով իմ պապերի,
Հայոց խոփի համբույրի տակ տեսնեմ Անին ու նոր մեռնեմ,
Կրծքիս սեղմեմ բերդերս ավեր, բուրի տեղ տոխակ դառնամ,
Որպես նրզ ու վարդի քաղաք՝ տեսնեմ Անին ու նոր մեռնեմ:¹*

Հայոց Մեծ եղեռնի թման իր նոր, յուրահատուկ արտացոլումը գտավ Պ. Սևակի «Եռածայն պատարագ» և «Անլուրի զանգակատուն» պոեմներում: Բանաստեղծը «Զանգակատունը» նվիրեց հայ ժողովրդի համար խորհրդանիշ դարձած Կոմիտասի կյանքին ու նրա կատարած գործի պատմական ու արդիական նշանակությանը: Պ.Սևակն իր անգուցական տաղանդի հզոր ուժով Կոմիտասի ողբերգական ճակատագրի մեջ խտացրեց հայ ժողովրդի ճակատագիրը և ցեղասպանությանը հայտարարեց՝ ո՛չ: Բանաստեղծը բացեց հայկական ոգու առեղծվածը՝ ընդգծելով հայ ժողովրդի անմահության գաղափարը.

Վ. Դավթյանն իր պատմական պոեմներում երիցս անդրադարձել է ժողովրդի պատմական ճակատագրին: Նա դեռևս «Կոմիտաս» պոեմից առաջ գրել էր «Բալլադ Կոմիտասի մասին» գործը: Ծարունակելով Չարենցի ավանդույթը՝ Վ. Դավթյանը Կոմիտասի կերպարն ստեղծեց եղեռնի ենթարկված ժողովրդի ցավի ու ողբերգության համապատկերին: Բանաստեղծը, պատկերելով Կոմիտասի խելագարության պահը, նրան ներկայացնում է որպես խորհրդանիշ: Պոեմը թեկուզ սեղմ, սակայն ընդգրկում է, ներգործող, ցավի և վշտի մի համանվագ:

1977թ. Վ. Դավթյանը ստեղծեց «Ռեքվիեմ» պոեմը, որը 1915թ. մեր ժողովրդի ապրած ողբերգության գեղարվեստական ինքնատիպ վավերագրություններից է: Բանաստեղծին հաջողվել է տեսիլքային պատկերների հնարանքով լեզու հաղորդել մեր անանցանելի կորուստներին: Ստեղծելով ոսկոր-սրինգ-քամի-ողբ պատկերը՝ Դավթյանն ընդգծել է այն գաղափարը, որ անտարբեր աշխարհի աչքի առաջ երիտթուրքական հրոսակները սրի քաշեցին մեկուկես միլիոն անմեղ հայերի, և արյունաքամ ողբում են ոչ միայն ապրողները, այլև ամբողջ երկիրը՝ կորուսյալ մի ողջ հայրենիք՝ Արևմտյան Հայաստան անունով... Ողբում են նրա սարերը, դաշտերը, անթաղ ոսկորները, հողն ու երկինքը: Այդ անմռառալի վիշտն իր կրծքի տակ կրում է սքեմավոր մի այր, որը ծնկի է իջնում անապատում և սկսում «մի սուրբ պատարագ»:

¹ Հ. Շիրազ, Երկերի ժողովածու 5 հատորով, հ. 2, «Հայպետհրատ», 1982, էջ 327:

Պոեմը տեղին ու ճիշտ է գնահատել անվանի գրականագետ Դ. Գասպարյանը՝ ընդգծելով. «Ռեքվիեմ»-ը հիշատակի պատարագ է, որ բանաստեղծը կատարում է ողբի անապատում և կատարում է խոսքով, նրգով ու աղոթքով, կատարում է՝ դառնալով խաչ ու խաչքար, խունկ ու բուրվառ»:¹ Հայ ժողովրդի նոր հարության փառապանծ մի էջ է Արցախյան շարժումը Ադրբեյջանի կողմից մեր ժողովրդին պարտադրված պատերազմի դեմ, որը վերածվեց ողջ հայության կողմից մղվող ազատագրական պայքարի: Երիտթուրքերի օրինակով բաղիրավները, էլիքները, ալիները հայ ժողովրդի հանդեպ կազմակերպեցին Սուլթան Համիդի ու նրա ժառանգորդների արյան խրախճանք Սուլթանիթում, Բաքվում, Գետաշենում, Գանձակում, Մարաղայում և հայաշատ այլ բնակավայրերում: Գորբաշովի ու նրա արբանյակների թողովությամբ ազերի-թուրքերը ձգտեցին Արցախը դարձնել հայկական գերեզմանոց, սակայն պատմական դառը փորձը հուշեց մեր ժողովրդին, որ 1915 թվականը չպետք է կրկնվի: Ոտքի ելավ արցախահայությունը, արթնացավ հայկական ավարայրված ու սարդարապատված ոգին, դողանջեց համայն հայության միասնության օրհներգը, թևաբախեց մարտական նրգը: Բանաստեղծներ Գ. Գաբրիելյանը, Վ. Հակոբյանը, Հ. Բեգլարյանը, Ս. Խանյանը, Դ. Միքայելյանը, Ա. Հովհաննիսյանը, Ն. Ավագյանը, Ն. Գասպարյանը, Հ. Ալեքսանյանը, Ա. Արսենին, Ժ. Բեգլարյանը և ուրիշներ գրեցին պոեմներ, ասքեր, բալլադներ: Անդրանիկի ու Նժդեհի ժառանգորդները հանդիսացող հայ զինվորների անունից պոետ-ազատամարտիկ Ռ. Եսայանը գրեց.

*Հայոց երկրի շուրթը արկել աղբն աղել՝
Ժամանակը խոսքն է նետի պես արձակում,
Որ սուրալով տարածքներում տիեզերքի՝
Չի գտնում ծով լայնության մեջ խղճի մի կետ,
Որտեղ խրվի ցավամոռաց ու նրերա.
«Արդարություն, թող նս թքնեմ քու ճակատիդ»:²*

Իսկ ուսանող բանաստեղծ Կոմիտաս Հակոբյանը Ջրաբերդի բարձունքներում հայրենիքի երգը շուրթերին՝ իր գլուխը դրեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության լինելության գոհասեղանին, որ աշխարհով մեկ սփռված հայությունը հավերժության մեջ հնչեցնի դեռևս մեծ ողբերգության օրերին հանճարեղ Թումանյանի ցավի ու արցունքի միջից ծնված լավատեսական այս աղոթքը.

Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած,
Հազար-հազար լուսապայծառ հոգիներով ճառագած,
Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,
Կենսաժրպիտ իր շողերը պիտի ժպտան առաջին,
Ու պոետներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անեծքով
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով.

*Իմ նո՛ր հայրենիք,
Հրգո՛ր հայրենիք... :³*

¹ Դ. Գասպարյան, <<Վահագն Դավթյան>>, Կրթության Ազգային Ինստիտուտ, 2007, էջ 253:

² Ռ. Եսայան, Հարության ժամանակը, <<Դիզակ Պլուս>>, 2011, էջ 161:

³ Հ. Թումանյան, Երկեր 4 հատորով, հ. 2, «Հայաստան» հրատ., 1969, էջ 214:

Ամփոփում

Սույն հոդվածում նշվում է, որ Օսմանյան Թուրքիայում իրականացված Հայոց ցեղասպանությունը դատապարտող պոեզիան հայ գրականության մեջ սկիզբ է առել 1915թ. հետո: Նրանում վերլուծվում են Վ. Տերյանի «Երկիր Նաիրի» շարքը, Ավ. Իսահակյանի ֆիդայական երգերը, Ե. Չարենցի «Դանթեական առասպել», «Աթիլա», «Ազգային երազ» պոեմները և այլ բանաստեղծություններ: Քննարկվում են Հ. Շիրազի «Հայոց դանթեականը», Պ. Սևակի «Անլուելի զանգակատուն», Վ. Դավթյանի «Ռեքվիեմ» պոեմները: Ուշադրության կենտրոնում են նաև սփյուռքահայ բանաստեղծներ Վ. Թեքեյանի, Սուշեղ Իշխանի և մյուս անվանի բանաստեղծների ստեղծագործությունները: Հոդվածի հեղինակն ընդգծում է այն միտքը, որ այդ թեման հայ պոեզիայում խիստ խարազանում է ցեղասպանությունն ընդհանրապես:

Геноцид армян в армянской поэзии

Сократ Ханян

Резюме

Ключевые слова: 1915г., 24 апреля, геноцид, Дер-Дзор, поэты, поэзия, столетие, диаспора, Сумгаит, Баку, Арцахская война, победа.

В данной статье отмечается, что армянская поэзия, бичующая геноцид армян в Османской Турции, берет свое начало после 1915 года. В статье разбирается цикл стихов Теряна “Страна Наири”, песни о фидаинах Ав. Исаакяна, поэмы Чаренца “Дантовский миф”, “Атилла”, “Национальный сон”.

Обсуждаются поэмы “Дантовская Армения” Ов. Шираза и “Несмолкающая колокольня” П.Севака. В статье отмечается, что эту тему затрагивали также поэты армянской диаспоры - такие, как В.Текеян, М.Ишхан и другие. Эта тема в армянской поэзии вырастает до резкого осуждения геноцида вообще.

The Armenian Genocide in Armenian poetry

Sokrat Khanyan

Summary

Keywords: 1915, April 24, genocide, Der-Dzor, poets, poetry, centenary, diaspora, Sumgait, Baku, Artsakh war, victory

The article notes that the Armenian poetry which condemns the Armenian genocide in Ottoman Turkey, appeared after 1915. The article sorts out the cycle of poems by Teryan and "Country Nairi", a song about the "fedayeen" Av. Isahakian's poem, Charents "Dante's Myth", "Attila", "National Dream", which condemn the policy of the Young Turks.

The poems "Dante Armenia" by H. Shiraz, "Never abating Bell Tower" by P. Sevak, "Requiem" by V. Davtyan are studied and discussed in the article. The author of the article focuses on the idea that the issue of the genocide was highly condemned in Armenian poetry in general.

ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀ

Անահիտ Աթայան

բ.գ.թ., պրոֆեսոր

ԱրՊՀ

***Բանալի բառեր.** Հայոց մտածողություն, Հայկական հարց, ցեղասպանություն, մտավորականություն, պաշտոնական փաստաթղթեր, տեղահանվել, արքայվել, դատապարտյալներ, թուրքահայություն, բանակցություններ:*

1915թ. ապրիլի 24-ը՝ պատմության մեջ թերևս ամենաարյունոտ տարեթիվն ու օրը, լեցուն է հոգեվարքի ու մահվան ճիչերով, որոնց եղերականության չափը չի տեղավորվում քիչ թե շատ քաղաքակրթված մարդու ուղեղում:

1914թ. թուրքական կառավարությունը կայսերական Գերմանիայի թելադրանքով ծածուկ պատրաստում է արևմտահայությանը տեղահանելու, կոդուպտելու, կոտորելու հրեշավոր ծրագիր: Հայկական հարցի լուծում՝ նշանակում էր Արևմտյան Հայաստանը թողնել առանց հայերի, կամ Վիլհելմ կայսրի խոսքերով՝ «հայերից կենդանի թողնել միայն մի հոգու, այն էլ թանգարանում պահելու համար»:

Հայ ստեղծագործ ժողովուրդը չէր կարող պատկերացնել այն ահավոր ոճրագործությունը, որ նախապատրաստվում էր: Մտավորականությունը խաբված ու մոլորված էր, կողմնորոշվելը՝ դժվար: Ըստ ամերիկյան դեսպան Մորգենթաուի՝ Թալեաթը ցինիկորեն հայտարարում էր, որ հայկական հարցը լուծելու համար ինքը 3 ամսվա մեջ ավելի գործ տեսավ, քան Աբդուլ Համիդը 30 տարվա մեջ:

Թուրքի հայտնի ու փորձված քաղաքականությունն է «Եթե ուզում ես ընկճել ազգը, գլխատիր նրանց գլուխներին...»:

Մեծ եղեռնի գոհերից մեկը՝ Հարություն Շահիրիկյանը գրել է, որ մեծ ազգերի պատմությունը նրանց մեծ դեմքերի պատմությունն է: <<Ջնջեցեք Կեսարների, Ալեքսանդրների, Արիստոտելների պատմությունը, կջնջվի և հռոմեական, մակեդոնական, հունական մեծությունների ու փառքերի փայլը>>:

1915թ. ձերբակալվեց ու արքայվեց արևմտահայ մտավորականության սերուցքը, կասեցվեց անտիկյան մի ժողովրդի հոգևոր սլացքը: Չարիքի արմատը խորն էր խրվել աշխարհի բորենիների ուղեղներում...

1915թ. հունիսի 2-ին մի խումբ հայեր Թալեաթին հեռագիր են ուղարկում, որում մասնավորապես ասվում է. «Ո՞վ կազմակերպեց այս կոտորածները: Ո՞վ է պատասխանատու այս վայրագությունների... Ո՞վ տարածեց սգո այս քողը ամբողջ Հայաստանի վրա, Կիլիկիայից մինչև Արաքս և Արարատ լեռը: Ո՞վ է հանցավորը: Ամբողջ աշխարհը...», - կարդում ենք Ա.Կ.Պողոսյանի «Գոյատևման պայքարի քառուղիներում» գրքում:¹[1]

1. ¹ Ա.Կ.Պողոսյան, Գոյատևման պայքարի քառուղիներում, Երևան, 1988, էջ 421

Բազմաթիվ պատմական փաստեր, ինչպես նաև Պոլսի Զավեն պատրիարքի տեղեկությունները, վկայում են, որ Թալեաթը, Էնվերը, նրանց մարդասպան գործակիցները ամեն ինչ անում էին Պոլսի հայ մտավորականներին ապակողմնորոշելու համար: Թուրքին բնորոշ կեղծավորությամբ ու խարդախությամբ Թալեաթը հայտարարում էր, թե կոտորած չի կարող լինել, թե հայոց դեմ որևէ մասնավոր քաղաքականություն չունեն: Նույնպիսի ցինիկ հավաստիացումներ էր անում Էնվերը, որը պատրիարքի հետ հանդիպումներում հավաստում է իր «հարգանքը» հայ ժողովրդի նկատմամբ՝ վկայակոչելով Հովհաննես հիսնապետի կողմից իր կյանքը փրկելը, շատ հայ բարեկամներ ունենալը:

Ամեն ինչ թատերախաղ էր, սակայն...

Իթթիհատի կենտրոնը որոշել էր առաջին հարվածը հասցնել արևմտահայ ժողովրդի ղեկավար ուժին՝ Պոլսում կենտրոնացած հայ մտավորականությանը, ասպարեզից վերացնել ինչպես հայ, այնպես էլ թուրքական մշակույթի զարգացման գործում անգնահատելի ծառայություններ ունեցող հայ անվանի մարդկանց, հասարակական-քաղաքական գործիչների, խեղդել նրանց ձայնը նախապատրաստվող նախաճիրի ժամանակ:

Մարդասպան Թալեաթը հարմար վայրկյան էր փնտրում՝ աքսորելու այն անձանց, ովքեր կարող էին դեր խաղալ: Ավելի ուշ գերմանական թերթին տված հարցազրույցում Թալեաթը ցինիկորեն հայտարարում է, թե իրենք չեն տարբերել անմեղներին մեղավորներից, որ ղեկավարվել են «ով անմեղ է այսօր, վաղը կլինի մեղավոր» սկզբունքով, որ պետք է ամեն ինչ անել, որպեսզի հայերը 50 տարի այլևս բարեփոխումների համար գլուխ չբարձրացնեն:

Մի շարք աղբյուրներ վկայում են, որ սկսած 1915թ. ապրիլի 24-ի գիշերից մինչև 29-ը ձերբակալվեցին, այնուհետև խումբ-խումբ Անատոլիայի խորքերն աքսորվեցին տարբեր մասնագիտությունների տեր ավելի քան 800 հոգի: Գ.Զոհրապը և շատերը համոզված էին, թե դատարանում կկարողանան մերկացնել թուրքական կառավարության անօրինակ դաժանությունները, սակայն զուր հույսեր էին դրանք: Կառավարությունը մտածված ծրագրով Պոլսից տեղահանեց, ապա չարամտորեն խողխողեց հայ անվանի գրողների, արվեստագետների, հասարակական-քաղաքական գործիչների, որոնց թվում էին ականավոր գրող-հրապարակախոս, իրավաբան, օսմանյան պառլամենտի պատգամավոր Գ.Զոհրապը, գրող, լեզվաբան-քննադատ Մարգիս Մինասյանը, բանաստեղծ-լրագրող Լևոն Լարենցը, բժշկական բազում գրքերի հեղինակ Կարապետ Փաշայանը, լրագրող Համբարձում Համբարձումյանը, բանաստեղծ-քննադատ, արձակագիր Արտաշես Հարությունյանը, երգիծաբան Գրիգոր Թորոսյանը, գրող-քննադատ Տիգրան Զեկուրյանը, ազգային ու կրթական գործիչներ Պետրոս Գալֆայանը, Համբարձում Պոյաճյանը, Ներսես Փափագյանը...

Պոլսից տեղահանված ու արքայազն, ապա չարամտորեն խողխողված հայ անվանի մտավորականների շարքերում էին նաև տաղանդավոր բանաստեղծ Սիամանթոն, բանաստեղծ, ուսուցիչ Դանիել Վարուժանը, մանկավարժ, գրող, հրապարակախոս Ռուբեն Զարդարյանը, բժիշկ, բանաստեղծ Ռուբեն Սևակը, մանկավարժ Թլկատինցին, նովելիստ, խմբագիր, ուսուցիչ Երուխանը, բազմաթիվ եկեղեցական գործիչներ, անգամ կանայք. քույրեր Կամելա Փիլիպոսյան, Շուշան, Մաքրուհի, Համասփյուռ, Էմիլիա, ովքեր իրենց նվիրել էին քրիստոնեական սուրբ գործին: Հայ մտավորականներից շատերը ժամանակին պայքարել էին արյունոտ Սուլթան Համիդի բռնակալական ռեժիմի դեմ, երկար տարիներ ապրել վտարանդիության մեջ և 1908թ. հեղափոխությունից հետո հավատացել երիտթուրքերին ու վերադարձել Թուրքիա՝ հռչակելու նրանց իսկ ձեռքով: Ու երբ շարունակվեց սպանող, շատ մտավորականներ մղձավանջի մեջ էին, չէին հավատում, կարծում էին՝ ջրերը կպարզվեն:

Զարուհի Գելենքերյանը «Ապրած էջերես» հուշագրության մեջ նշում է, որ 1915-ին Վարուժանին հանդիպելիս զարմացել է, որ վերջինս հավատում ու վստահում է թուրքական կառավարությանը: «Ես վարանոտ ու կասկածոտ էի իթթիհատականներու՝ վերջին վերաբերմունքներեն դատելով... Ես ունեի փորձառություններ թուրքերու ներքին զգացումներուն և հայատյաց բնագոյներու մասին»:

Վարուժանը հանգստացնում է նրան՝ ասելով.

-Տակավին նախորդ երեկո Զոհրապ Թալեաթին հետ ծունկ ծունկի բոքեր խաղացեր են. Լավ են իթթիհատական տրամադրությունները մեր մասին: Ապահով քնացեք, տիկին, մենք շատ բարեկամներ ունինք բարլամենթին մեջ:

Քանի մը օր հետո», կիրակի կեսօրվան մոտ Մերութան Պարսամյան ըսավ հանկարծ.

-Իմացա՞ք, տիկին, երեկ գիշեր ձերբակալել են Կոմիտաս Վարդապետը, Վարուժանը... Սարսափը հետզհետե կաճեր, ձերբակալությունները կը շարունակվեին:¹ Ձերբակալվել էր նաև Գր. Զոհրապը:

Վարուժանի մասին հուշերում պատմվում է նրա վերջին օրերի ապրումների մասին: Նա արդեն գիտեր, որ «մեռնելու կերթա»: «Նոր զավակ մը ունեցած եմ, թող անունը Վարուժան դնեն», - ասում է նա:

Հանճարեղ գրողին ստիպեցին, որ իր ձեռքով փորի իր գերեզմանը, ապա սրախողխող արին այն հանճարին, ում բոլոր էջերը հյուսված էին հայրենիքի կարոտից, հայ հոգու ցավից, պայքարից, արյունից, աղոթքից ու անեծքից, ով պետք է գրեր իր երկրորդ «Հացին երգը», որի սևագրությունները նրա հետ միասին կորան...

¹ Շարուրյան, Միսաք Մեծարենցը և Դանիել Վարուժանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1986, էջ 248

Հր. Թամրազյանը «Միամանթո» աշխատության մեջ ներկայացնում է հայ մտավորականության Գողգոթան: Միամանթոն էլ մյուսների նման լավ չէր պատկերացնում աղետի մեծությունը, կարծում էր, թե թյուրիմացաբար է բանտարկվել:

«Միամանթոն աշխարհից հեռանում էր բոլորովին երիտասարդ՝ անավարտ թողնելով մտքի մի հոյակապ տաճար, իր հետ տանելով այնքան ծաղկուն երազներ, գալիք արշալույսների այնքան կարոտ ու սեր...»¹

Իսկ Հեկտոր Ռշտունին իր «Միամանթո» աշխատության մեջ գրում է. «Գիտե՞ր արդյոք Միամանթոն, որ իր ամենամեծ «հանցանքը» հենց հայ բանաստեղծ և հայ մտածող լինելն է, այն էլ խոշորագույն...»²

Գերմանացի մեծ հայրենասեր դոկտոր Լեփսիուսը գրեց գիրք սարսափների մասին: Գրաքննությունը ջանք չխնայեց այդ գրքի տարածումը սահմանափակելու համար և ամեն կերպ աշխատեց, որ գերմանական մամուլի մեջ թուրքերի մասին հանրային կարծիքը «չպղտորվի»:

Լեփսիուսը հիշատակում է մի շարք պատմական փաստեր, թե ինչպես Արդուլ Համիդի օրոք պետությունների կողմից առաջադրված հայկական բարենորոգումներին նախորդել ու հաջորդել են հայերի կոտորածները՝ վերջապես հասնելով երիտասարդ թուրքերի օրոք հայ ժողովրդի բնաջնջմանը: Նա նկարագրում է հայ մտավորականների տարագրությունն ու ջարդերը:

Ճակատագրով դատապարտված հայ բանաստեղծի վաստակն է ընդգրկում «Ռուբեն Սևակ» գիրքը, որի առաջաբանում (հեղ. Ալ. Թոփչյան) կարդում ենք այն մանրամասները, որոնք կապված են եղեռնագարկ բանաստեղծի դաժան ճակատագրի հետ:

1914թ. Ռ.Սևակը ընտանիքով վերադառնում է Պոլիս, թեպետ այստեղ արդեն զգացվում էր կոտորածի մղձավանջը: Առաջին համաշխարհայինի սկսվելուց հետո Սևակը կանչվում է թուրքական բանակ՝ որպես զինվորական բժիշկ: Այնուհետև ձերբակալվում և ուղարկվում է Զանդըրը: Այդ օրերի մասին վկայություններ է թողել նրա հետ աքսորված Միքայել Շամտաճյանը: Զանդըրում Սևակը բուժում է մի թուրք չեթեճիի աղջկան: Թուրքը «խանդաղատանքի զգացումներ» հայտնելով բժշկին, համոզում է մահմեդականություն ընդունել՝ անխուսափելի սպանությունից փրկվելու համար: Սևակը հրաժարվում է հավատափոխությունը համարելով ազգադավություն: Օգոստոսի 26-ին՝ հինգշաբթի առավոտյան, 5 հոգի 2 կառքով ուղարկվում են Այաշ, որոնց մեջ էին Ռուբեն Սևակն ու Դանիել Վարուժանը: Երեկոյան հասնում է նրանց սպանության լուրը: Ականատես Հասան անունով կառապանի պատմությունը բացում է սպանության հանգամանքները, որի ծրագիրը նախապես մշակված էր: Հինգ գոհերից «երիտասարդ մըն էր սև մորուքով և վառվռուն աչքերով»: Հավանաբար Ռ.Սևակն էր: Կառապանը հեռվից

¹ Հր.Թամրազյան, Միամանթո, Երևան, 1969, էջ 228-229

² Հ.Ռշտունի, Միամանթո, Երևան, 1970, էջ 12

դիտում էր սարսափելի տեսարանը: Հինգ դահիճները հարձակվում են հինգ զոհերի վրա, մերկացնում, կապում ծառերին: «Հետո չեթևապետը և իր մարդիկը իրենց դաշույնները մերկացրին և սկսան դանդաղորեն և հանդարտ կերպով զանոնք մորթոտել: Դատապարտյալներու աղաղակը և անոնց հուսահատական կատաղությունը սիրտս ճմլեին», - կարդում ենք Ալ.Թոփչյանի գրքի առաջաբանում:¹

Միյուռքահայ գրող-հրապարակախոս Արամ Անտոնյանը Տեր-Ձորի անապատում մահվան ճիւղաններից ազատված հատուկներտ մարդկանցից էր: Նրա «Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա» գիրքը ամփոփում է Մեծ եղեռնի վերաբերյալ մի շարք արժեքավոր վավերագրեր, վկայություններ, հրամանագրեր, ծածկագրեր, հեռագրեր, նամակներ ու գրություններ, որոնք ուղեկցվում են 1915-ի ջարդերից հրաշքով փրկված հեղինակի մեկնաբանություններով: Դրանք Հալեպի գաղթականների տեսչության նախորդ գլխավոր քարտուղար Նաիմ Պեյի տեղեկագրերն էին:

«Գեշ մարդ չէր», - գրում է Ա.Անտոնյանը: «Շաբաթներ տևած նրա խոստովանությունների ընթացքում նա հանձնեց շատ պաշտոնական հեռագրեր, պաշտոնագրեր, որոնցով բարբարոսները ձգտում էին պատմության երեսից ջնջել հայ ցեղը»:

Մեջ ենք բերում Նաիմ Պեյի խոսքերը. «... Չէի հասկցած այն ոճիրներուն նպատակը: Անոնց բնույթն ու հոգին ետքեն կրցա ըմբռնել:

Հասած գաղտնի ծածկագիրները քանի՜ կարձանագրեի, դող կուգար վրաս: Մեծ ազգ մը, իր կիներով և ձագուկներով մահուան դատապարտուած էր»:² Արամ Անտոնյանը նշում է, որ անհնար է առանց սարսափալու կարդալ այդ հրամանագրերը, որոնք պատմության մեջ իրենց նմանը չունեն: Անգամ թուրքերը հազիվ թե երկրորդ անգամ կարողանան հասնել բարբարոսության այն աստիճանին, որով կատարեցին այս անգամվա ջարդերը: «Երանի թե իրենց «կարապի երգը» ըլլային»:

«Այդ բարբարոսությունը կրնա զարհուրանքի ցնցումը տալ նույնիսկ իրենց նախահայրերուն, որոնք ապահովաբար պզտիկ բարբարոսներ չեն եղած, գրեթե մարդկութիւն մը ջարդած են հինգ-վեց դարու ընթացքին», - կարդում ենք նշված գրքում:

Մեծ ողբերգության ականատեսը, ժամանակակիցը և իր անձի վրա կրողներից էր Ե. Օտյանը, որն իր հուշերում, նամակներում, գեղարվեստական երկերում ներկայացրեց մի ամբողջ արյունալի ժամանակահատված: Օտյանն անցել է արհավիրքի միջով, տեսել արյունալի սպանդն ու սարսափները: Զարմանալի է,

¹ Ռուբեն Սևակ, երկեր, Երևան, 1985, էջ 6

² Ա.Անտոնյան, Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա, Երևան, 1990, էջ 12

թե ոնց է ողջ մնացել մահվանն այդքան մոտ գտնված մտավորականը: Օտյանագետները բազմիցս խոսել են այդ մասին: Բավականին հավաստի ու մանրամասն տեղեկություններ ենք քաղում Ս.Մուրադյանի «Երվանդ Օտյան. Կյանքը և գործը» աշխատությունից: Գրականագետը խոսում է նաև Օտյանի հարկադրված կրոնափոխության մասին ունեցած կարծիքի շուրջ, որ կատարվել է քաղաքական նկատառումներով: «Հիշեցեք լավագույն օրինակը մեր ազգային պատմութենեն սպարապետ Վարդան Մամիկոնյան և իր զինակիցները ճարահատ այս միջոցին դիմած էին, նեղ պահն անցրնելու և ապա իրենց հայրենի հավատքին վերադառնալու համար, որպեսզի փրկեին իրենց անձը և հնարավորություն ունենային ծառայելու հայրենիքին և ազգին, - կարդում ենք Ս.Մուրադյանի գրքում:¹

Հայոց մեծ եղեռնի օրերին մեծանուն գրող, հրապարակախոս, 1908-1915թթ. թուրքական պառլամենտի անդամ Գր.Զոհրապը ծանրածանր պայմաններում միշտ էլ ժողովրդի հետ էր: Շատ անգամներ է նա հայ ժողովրդի ճակատագրի հարցով դիմել տարբեր պետությունների դեսպանություններին:

-Վայ հայ ժողովրդին, եթե համաեվրոպական պատերազմ ծագի, թուրքերը իթթիհատին դեկավարված անպատճառ կմիանան Գերմանիո, և թրքահայության համար մահացու վտանգ կա այն ատեն»: Վտանգն, իրոք, արդեն կար:

Զոհրապը պայքարել է նաև միջազգային ռեակցիայի դեմ, հատկապես Դրեյֆուսի հայտնի դատի առթիվ: Նա այդ դատի մեջ տեսնում է ոչ միայն հրեաների, այլև փոքր ազգերի հալածանքի փաստը: Զոհրապը ձգտում է համերաշխություն ստեղծել հատկապես հայ և թուրք ազգերի միջև, նրա նախաձեռնությամբ Պոլսում ցույց է կազմակերպվում, ուր հանդես է գալիս իր քաղաքական առաջին ճառով: Նրա պառլամենտական ճառերի մեծ մասը խիստ քննադատություններ էին ժամանակի կառավարության վարած քաղաքականության դեմ:

«Այս հոգեկան տրամադրության տակ, բոլորովին գրգռված, հուզված, իր բոլոր զայրույթը կարտահայտե օր մը Իթթիհատի ընդհանուր քարտուղար Միահաթ Շյուքրի Պեյի և ներքին գործոց նախարար Թալեաթ Պեյի և անոնցմե հաշիվ և բացատրություն կպահանջե հայոց նկատմամբ գործադրված այդ անսահման և անվախճան ոճիրներուն համար», - գրում է Ա.Զոպանյանը «Գրիգոր Զոհրապ» (հիշատակներ) հուշագրության մեջ:²

«Հետևյալ օրը (մայիսի 20) կձերբակալվեր Զոհրապ՝ Կարնո մեպուս Վարդգեսի հետ և ուղղակի կառախումբ կդրվեր, որկվելու համար դեպի Տիարպեքի, որուն պատերազմական աստանեն իբր թե հարցաքննության կկանչվեին: Իթթիհատը վճռած էր մեջտեղեն վերցնել զանոնք, հաշիվ պահանջող ոչ ոք ձգելու համար»:

¹ Ս.Մուրադյան, Ե.Օտյան, կյանքը և գործը, Երևան, 1996, էջ 58

² Արշակ Զոպանյան, Երկեր, 1988, էջ 767

1915թ. հուլիսի 7-ին վայրենիների ձեռքով ընդհատվեց Ձոհրապի կյանքը: Հանձարը կյանքից զրկվեց նախամարդու գործիքով՝ քարով: Սպանության ճշգրիտ մանրամասնությունները հաղորդել է թուրք պատմագիր Ահմեդ-Բեֆիզը, բուն ոճրագործի՝ Չերքեզ Ահմեդի խոսքերից ելնելով:

«Կոմիտասյան դրաման» գրքի հեղինակ Առաքել Պատրիկը հավաստում է, որ Թալեաթ փաշան առիթ առ առիթ գովում էր օսմանյան կայսրության հայ հպատակներին՝ նրանց մատուցած ծառայությունների համար և հույս հայտնում, որ այսուհետև նույնպես կշարունակեն ծառայել հավատարմորեն: «Ո՞վ կարող էր կասկածել, որ նույն ճառախոսն այդ պահին իր գրպանում կրում էր հայերին բնաջնջելու հրեշավոր ծրագիր ու հազիվ մեկ և կես տարի անց անձնապես պիտի ղեկավարեր պատմության մեջ աննախընթաց եղենագործությունը...», -գրում է Ա.Պատրիկը:¹

1914թ. հունվարից սկսած ոստիկանները Պոլսի բոլոր վայրերում արձանագրում էին ներքին գավառներից եկած աշխատավորներին, ուսանողներին...

Հատուկ մտածված ծրագրով ոստիկանությունը ամեն ինչ կատարում էր գաղտնի, անշշուկ, գիշերային ուշ ժամերին, ամենախաբեական միջոցներով:

Աքսորի ճանապարհին ծանր ապրումներից Կոմիտասը կորցնում է հավասարակշռությունը: Տեղահանված հայ քստրականների վիճակը ծանր է ազդում Կոմիտասի վրա, տակնուվրա անում նրա հոգին: Դրան գումարվում է երաժշտական ուսումնասիրությունների կորուստը:

Իսկ երբ Պոլսի Զավեն պատրիարքը Կոմիտասի մոտ կարդում է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Սահակի նամակը, որում սրտամորմոք տողերով նկարագրում է հայ տեղահանված ժողովրդի ծանր վիճակը, գուժում Ձոհրապի, Վարդգեսի, բժիշկ Տաղավարյանի նահատակության ահռելի դրվագները, Կոմիտասը շանթահարվում է.

«Ուղեղը կարծես հրեղեն արյամբ էր ողողված: Հանկարծ կրծքից մի հեղձամաղձուկ ձայն բարձրացավ: Դա ձայն չէր. այլ ամպրոպ, մարդկային կրծքից պոկված երկնային որոտ...»

-Ո՛չ, ո՛չ, մենք չենք մահանա, մենք չենք ոչնչանա, որքան էլ սպանեն մեզ, մենք հարություն կառնենք, որովհետև մեր ազգը միայն մարմին չէ, այլ՝ անպարտելի ոգի...

Ա.Պատրիկը, լինելով ժամանակակիցն ու ականատեսը 1908-1915թթ. արևմտահայության ողբերգական ապրումների, «Կոմիտասյան դրաման» փաստավավերագրական վիպակում ներկայացրել է դժնդակ ժամանակաշրջանը և Կոմիտասի երաժշտական գործունեությամբ բացահայտել նրա դրամատիկ ճակատագիրը՝ կապված հարազատ ժողովրդի ճակատագրի հետ:

¹ Ա.Պատրիկ, Կոմիտասյան դրաման, Երևան, 1985, էջ 117



-Միթե մարդկային հոգին կարող էր տոկալ լեռնակուտակ այդքան վշտին, այն էլ Կոմիտասի նման գերզգայուն հոգու տեր մի անձի:

Արդարև, ոճրագործ, ասիական աշխարհում երաժշտության հրաշակերտ այդ տաճարը հանկարծ փուլ եկավ... - ընդհանրացնում է իր երկը հեղինակը:¹

Հայ ժողովրդի մտավոր վերածնության մեծ գործին մասնակից մտավորականության ստվար հատվածը այսպես կուլ գնաց յաթաղանին, այն հատվածը, որ ստեղծեց գրական ամսաթերթեր, կազմեց տարեգիրք, երաժշտանոցներ ու դպրոցներ հիմնեց, ստեղծեց ժողովրդի մնայուն պատմություն, գեղեցիկ գրականություն ու արվեստ՝ համոզված, որ «Կայսրության բոլոր ժողովուրդները արտոնված են ազատորեն զարգացնելու իրենց ազգային մշակույթը»...

Մեկընդմիջտ աշխարհը համոզվեց, որ թուրքական սահմանադրության հոչակած ազատական բարձր օրենքները կեղծելու, խաբելու համար են եղել:

Անցան տարիներ... ճեղքված սառույցի միջից հառնեց ճշմարտությունը, որի քողարկումը մեղքերից ծանրագույնն է: Զոհերը միշտ էլ խոսում են փառքի մեջ՝ անմահների լեզվով: Մա ոգու հաղթանակ է, որքան էլ ամոթով լոխ աշխարհը, լռեն դահիճները:

Հայ մտավորականության, հայոց հանճարների կորստով մանգաղվեցին հայոց արտերը, արյունոտվեցին հայոց վերջալույսները...

Այս էլ որբերոդ անգամ հայ ժողովուրդը պիտի հիշի Մեծն բանաստեղծի խոսքերը.

Որքա՜ն ծաղիկ պիտի բուսներ, որ չբուսավ էն հողին,
Ի՞նչ պատասխան ես պիտի տամ հող ու ծաղիկ տվողին...

Ամփոփում

«Հայ մտավորականությունը ցեղասպանության զոհ» հոդվածը քննում է 1915թ. ցեղասպանության զոհ դարձած հայ մտավորականության ճակատագիրը: Ձերբակալվեց և աքսորվեց արևմտահայ մտավորականության սերուցքը՝ ամենաբարբարոս ձևով ոչնչացվելով անապատներում: Թուրքի հայտնի քաղաքականություն է. «Եթե ուզում ես ընկճել ազգը, գլխատիր նրանց գլուխներին»: Այս քաղաքականության զոհը դարձան հայտնի գրողներ, արվեստագետներ, իրավաբաններ, մանկավարժներ, հոգևոր գործիչներ, բժիշկներ՝ տարբեր մասնագիտությունների տեր ավելի քան 800 հոգի:

20-րդ դարի մարդկության պատմության մեջ գրվեց մի արյունոտ էջ՝ ցեղասպանություն, որով կասեցվեց անսխիկյան մի ժողովրդի հոգևոր սլացքը:

Армянская интеллигенция - жертва геноцида

Анаит Атаян

¹ Նույն տեղում, էջ 117



Резюме

Ключевые слова: армянское мышление, Армянский вопрос, геноцид, интеллигенция, официальные документы, выселить, сослать, осужденные, турецкое аермянство, переговоры.

Статья «Армянская интеллигенция - жертва геноцида» рассматривает судьбу армянской интеллигенции, ставшей жертвой геноцида 1915г. Были схвачены и высланы сливки армянской интеллигенции – самым жестоким образом уничтожены в пустынях.

Известна политика турок: если хочешь сломить нацию – обезглавь ее верхушку». Жертвами этой политики стали выдающиеся писатели, искусствоведы, юристы, педагоги, духовные деятели, доктора – более 800 человек различных специальностей.

В историю XX в. была вписана кровавая страница - геноцид, которым было остановлено духовное продвижение древнего народа.

The Armenian Inteligensia as a Victim of the Gienocide

Anahit Atayan

Summary

Key words: *Armenian mentality, Armenian issue, genocide, inteligensia, official documents, deportation, to religate, prisoners, Armenians of Turkey, negotiations.*

The article «The Armenian inteligensia as a victim of the Genocide» discusses the fate of Armenian intellectuals who became victims of the Genocide in 1915. The Armenian intellectuals were arrested and executed in the most barbaric way annihilating them in deserts.

It is a well – known Turkish policy «If you want to oppress a nation, behead the leaders». Famous writers, artists, lawyers, pedagogies, spiritual leaders, doctors and people of 800 different professions became the victims of this policy.

In the history of mankind there was written a bloody page - Genocide, with which the spiritual flight of ancient people was stopped.

**ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ
ՌՈՒՍ ԳՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Լենա Գրիգորյան

բ. գ. թ., պրոֆեսոր

ԱրՊՀ

Բանալի բառեր. *Արևմտյան Հայաստան, Թուրքիա, Անդրկովկաս, ցեղասպանություն, ռուս գրողներ, ցավ, կարեկցանք, դատապարտում, հատուցում, արդարություն, հաղթանակ:*

Հայերի ցեղասպանության թեման ռուս գրականության մեջ իր արձագանքն է գտել դեռևս 1890-ական թվականների երկրորդ կեսին, երբ արյունարբու սուլթան Աբդուլ Համիդը 1894-96թթ. Արևմտյան Հայաստանի ողջ տարածքում զանգվածային կոտորածներ սանձազերծեց՝ նպատակ ունենալով ճնշել հայոց ազգային- ազատագրական շարժումը և ի չիք դարձնել Հայկական հարցը: Այդ դիվային պատուհասի մասին գրված առաջին գեղարվեստական գործը Ե. Ալիբեկովայի «Ժամն է» (1896) ծավալուն բանաստեղծությունն է, որի մեջ խտացված է ողջ հայ ժողովրդի ապաքախտ ճակատագիրը 19-րդ դարավերջին: Բանաստեղծուհին հայերի փրկությունը տեսնում է Ռուսաստանի օգնությամբ և «բարի Ռուսիային» կոչ է անում չհապաղել, ձեռք մեկնել հավատակից եղբայրներին: Ցավով ու անհանգստությամբ են տոգորված նաև Ե. Մորոզովի, Գ. Կանսոնի, Վ. Շուֆի, Յու. Վեսելովսկու բանաստեղծությունները:

Յուրի Վեսելովսկին (1872-1919), որ սովորել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում ու տիրապետում էր հայոց լեզվին և հետագայում պիտի դառնար հայ գրականության ու մշակույթի անխոնջ, նվիրյալ ջատագով – տեսաբան, հայ գրողներին նվիրված մենագրությունների առաջին ռուս հեղինակը, ուսանողական տարիներից էր սկսել հետաքրքրություն ցուցաբերել դեպի իր համար առեղծվածային հինավուրց երկիրը՝ Հայաստանը: Արդյունքում ծնվում է երիտասարդ բանաստեղծի հայկական շարքը՝ «Հայերին», «Հայաստանում», «Հայ ժողովրդին», «Ավերակների վրա», «Ծեր հայը՝ փոքրիկ տղային», «Վարդան Մամիկոնյանի դիմանկարի առջև», «Գիշերը Ավարայրի դաշտում» և այլն: Հետագայում գրած «Հայաստան» (1911), «Հայ կալանավորի մտորումները» (1916), «Նոր տարվա շեմին» (1918) բանաստեղծություններում հեղինակը, ցատումով դատապարտելով թուրք մարդակերների անօրինակ զազանությունները, իր աներեր հավատն է արտահայտում տառապյալ հայ ժողովրդի վերածննդի անխուսափելիության նկատմամբ:

Հայաստանի ու հայ ժողովրդի հանդեպ մի առանձին սեր էր տածում Վասիլի Նեմիրովիչ-Ղանչենկոն (1845-1936): 1876 -77թթ. ռուս – թուրքական պատերազմի տարիներին լինելով զինվորական թղթակից՝ նա բազմիցս ականատես է դարձել թուրքական բարբարոսություններին: Դրոնք էլ հիմք են ծառայել գրելու որդիական սիրով ու անհուն ցավով աղեցուն (գրողի մայրը հայուհի էր) «Ինչի՞ համար»,

«Փոքրիկ պոեմներ», «Տարագրի աղոթքը», «Երգեր Հայաստանին», «Գարնանը» և այլ բանաստեղծություններ, որոնք հանգում են մի ընդհանուր մարդասիրական պահանջի՝ վերականգնել հայերի ազգային ազատությունն ու անկախությունը, վերջ տալ կոտորածներին ու հալածանքներին: «Դժբախտ երկրի վշտով» է շաղախված նաև հեղինակի արձակը, ահավասիկ՝ «Հայուհի Գայանեն» պատմվածքը: Չենթարկվելով մուսուլմանական վայրենի *աղաթին*՝ հայ աղջիկը ինքնասպան է լինում, որպեսզի հարեմական հարձ չդառնա:

1915թ. Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաշատ վայրերում մոլեգնած աննախադեպ աղետի դեմ առաջիններից մեկը հանդես եկավ Վալերի Բրյուսովը (1873-1924), ով Մ. Գորկու հորդորանքով արդեն ձեռնամուխ էր եղել «Հայաստանի պոեզիան» անթոլոգիայի կազմման աշխատանքներին և ում ներդրումը ռուս-հայկական մշակույթային կապերի պատմության մեջ առ այսօր էլ մնում է չգերազանցված: Բավական է ասել, որ նա թարգմանել, ռուս ընթերցողի սեփականությունն է դարձրել քառասունից ավելի հայ բանաստեղծների շուրջ երկու հարյուր գործեր՝ Գր. Նարեկացուց մինչև Վ. Տերյան ու Ե. Չարենց, հեղինակել «Հայ ժողովրդի պատմական բախտի տարեգրությունը» հիմնարար աշխատությունը (1918), «Հայաստանի պոեզիան» ժողովածուի բազմաէջ ներածական ակնարկը (1916)՝ չհաշված հայ գրականության ու մշակույթի թեմաներով կարդացած բազում դասախոսություններն ու զեկուցումները՝ դրանցով իսկ ճանաչելի դարձնելով բախտի չար խաղով «թափառող ցեղերի» խառնամբոխի մեջ հայտնված հայ ժողովրդին, որի մասին ոչինչ կամ գրեթե ոչինչ չգիտեր ռուս հասարակությունը: Հայաստանն ու նրա պատմական անցյալը մեծ մարդասերին ոգեշնչել են գրելու բանաստեղծական շարք: «Հայաստանին»(1915), «Հայերին», «Տիգրան Մեծ», «Ազատություն և պատերազմ», «Արարատին», «Արարատը Երևանից», «Հաղթանակը Կարսի մոտ», «Արքայի աղոթքը» (բոլորը՝ 1916) և մյուս գործերում վստահություն է հայտնում, որ՝

*Տիգրանի ազգը հաղթական
Հողմից, մուժից դուրս կգա հար,-
Հանուն սիրո անապական
Ու սիրանքի նոր ու պայծառ:¹*
(թարգմ. Մ. Տարոնցու)

Բանաստեղծ, Կովկասյան ճակատի ռազմական գործողությունների մասնակից, ռուսական բանակի զեներալ Ա. Կուլեբյակինը անսքող հիացմունք ուներ Հայաստանի, նրա ժողովրդի և մշակույթի նկատմամբ, ինչի առիավատյան 1916թ. Թիֆլիսում լույս տեսած «Վանի արձագանքներ» գիրքն է: Հեղինակը

¹ Վ. Բրյուսով, Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Ե., 1976, էջ 11:

գովերգում է հայոց անկրկնելի բնության գեղեցկությունները, պատմական – հոգևոր կոթողները («Վանա լճում», «Վանա ժայռ», «Աղթամար», «Վարազավանք»), սրտի կսկիծով պատկերում հոշոտվող երկրի ողբերգությունը («Վանի անկումը», «Կույր կինը», «Հին Վանը»), սրտաբուխ տողեր նվիրում

մայր ժողովրդի պաշտպանության համար մարտչող անվեհեր հայորդիներին («Վանի պաշտպանությունը»): 33 մաս ներառող «Մեծի դուռը» պոեմում բանաստեղծը նպատակ է ունեցել ռուս ընթերցողին ծանոթացնել մեր ժողովրդի հերոսական անցյալին, գուգահեռներ անցկացնելով Փոքր Մեծի և ռուսական բիլինաների հերոս Սվյատոգորի միջև: Կուլեբյակինի գիրքը «անկասկած, մեծ հետաքրքրություն է ներկայացնում, -նշել է Ս. Գորոդեցկին,- մանավանդ հիմա, երբ Ռուսաստանն սկսում է ճանաչել ու սիրել Հայաստանը»:¹

1919թ. գրած «Արաքս», Հովհ. Թումանյանին նվիրված և այլ բանաստեղծություններ ներծծված են «արևոտ երկրի» լուսավոր ապագայի հանդեպ խոր հավատով:

Մաքսիմ Գորկին (1868-1936) մեկ անգամ չէ անդրադարձել հայ ժողովրդի բեկված ճակատագրին, հանդես եկել նրա շահերի պաշտպանությամբ: Դեռևս 1905թ., դառնալով ցարական իշխանությունների հրահրած հայ – թաթարական ընդհարումներին՝ «Կովկասյան իրադարձությունների մասին» հոդվածում գրել է. «Մակաբյոծների չար ուժը յուր դրությունը պաշտպանելու համար կանչում է երկրի ամենավայրենի, ամենատխմար մարդկանց (իմա՝ Կովկասի թաթարներին – Լ. Գ.) այն մարդկանց (հայերի – Լ. Գ.) դեմ, որոնք անկեղծորեն և անշահ ցանկանում են իրենց երկրի ու ժողովրդի համար բարիք և ազատություն»:²

«Ռուսական ցարը» պամֆլետում (1906) Գորկին դատապարտել է ցարական կառավարության՝ «Հայաստանն առանց հայերի» ստոր քաղաքականությունը: 1929թ. գրած «Դիլիջանի կիրճում» ակնարկում անվանի գրողն իր մերժողական վերաբերմունքն է արտահայտել թուրք կառավարող շրջանների հանդեպ: Գորկու խմբագրությամբ հրատարակված «Հայ գրականության ժողովածուն» (1916) ևս յուրովի բողոք էր երիտթուրքերի հայաջինջ քաղաքականության դեմ:

Իվան Բունինը (1870-1953), «Ոլորուն ականջներ» (1916) պատմվածքում խստորեն դատապարտելով թուրք ելուզակների հեղինակած ցեղասպանությունը՝ այն դիտում է իբրև համայն մարդկության դեմ գործած ոճիր և դնում հանցագործներին պատասխանատվության կանչելու խնդիրը:

Արևմտահայությանը վիճակված գեհեներ խորապես հուզել է և ռուս այլ մտավորականների: Ցավով ու կարեկցանքով են հազեցած Կոնստանտին Սայանսկու «Հայաստան», «Մոռացվածը», «Մեծ նահատակին», «Մեռյալների երթը», Յակով Բարանովսկու «Հայ ժողովրդին», Վլադիմիր Կիպլինովի

¹ Ս. Գորոդեցկի, Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Ե., 1980, էջ 91:

² Տես՝ Կ. Դանիելյան, Արցախը՝ չսանձած նժույգ, Ե., 2001, էջ 51:

«Փախստականները», Ալեքսանդր Կուշլյուի «Վանի գաղել», «Ավերված Վանը», Սերգեյ Պերիվերդիևի «Ուրախացիր արևով» բանաստեղծությունները, Եվգենյա Բակովոյի «Ի պաշտպանություն թուրքահայերի» պոեմը: Ստեփան Կրոտկին «Ողջույն Հայաստանին», «Հանուն հայրենիքի երջանկության» և այլ գործերում հույս է հայտնում, որ տանջահար, բայց գեղեցիկ և իր համար շատ սիրելի Հայաստանը ուժ կգտնի վերածնվելու, որ հայ ժողովրդի համար կգան երջանիկ օրեր: Լավատեսությամբ են համակված Եկատերինա Ալեքսենայի՝ 1916-17թթ. գրած «Մայր Հայաստան», «Բնչո՞ւ էք լռում», «Հայաստան», «Զինվորներին» և հայկական շարքի մյուս բանաստեղծությունները: Հեղինակը հավատում է հայ ժողովրդի կենսական ուժին, ֆիզիկական ու հոգևոր վերածննդին, որ շուտով «այդ հպարտ երկրում կցրվի գիշերային մշուշը»՝ տեղի տալով հարության ցայգալույսին: Այդ ոգով են շնչում նաև Կոնստանտին Բալմոնտի (1867-1942)՝ Հայաստանին ձոնված բանաստեղծությունները:

Ռուս, հատկապես հայերի սարսափելի ողբերգությանն ակնատես գրողների ստեղծագործություններում առանձնահատուկ տեղ է գրավել ազատության համար մեր ժողովրդի մղած համառ պայքարը: Հայ կամավորական ջոկատներից մեկի հրամանատար Քեռուն (Արշակ Գաֆալյան) են նվիրված Յուրի Վերխովսկու «Քեռու հիշատակին», Սերգեյ Զարովի «Քեռու մահը» բանաստեղծությունները: Վ. Յազվիցկին «Հայ կամավորներին» բանաստեղծության մեջ փառաբանում է ժողովրդական վրիժառուների՝ ֆիդայիների սխրանքները, «Հայ հերոսը» ակնարկում վեր հանում հայդուկապետ Անդրանիկ Օզանյանի լեգենդար կերպարը: Բանաստեղծ Ս. Կրոտկովը ցավով, սիրով ու պատկառանքով է արտահայտվել հայ ժողովրդի մասին, իր շատ գրչակիցների նման շեշտելով նրա՝ ազատության հասնելու անկոտրում կամքը, ինչի վկայություն կարող են դառնալ «Ուտքի, Հայաստան», «Հայ ջոկատայինների երգը», «Ազատություն», «Հրաժեշտ», «Հայուհու օրորոցայինը», «Հայաստանի պատկերը», «Բնչի՞ համար», «Լուսաբաց» ստեղծագործությունները: Ալեքսանդր Պոպովը՝ Միք. Նալբանդյանի «Իտալացի աղջկա երգը» («Մեր հայրենիք») հիշեցնող «Հայ աղջկա երգը» բանաստեղծության մեջ պատկերում է, թե մարտի մեկնող եղբոր համար աղջիկն ինչպես է գիշերներ լուսացնելով՝ խաչակիր դրոշակ հյուսում, որի հովանու ներքո պիտի կովեն հայ կամավորականները՝ հանուն հայրենիքի փրկության:

Միանգամայն ճիշտ է այն կարծիքը, որ ցեղասպանության թեման անհամեմատ ամբողջական է ներկայացված Սերգեյ Գորոդեցկու (1884-1967) ստեղծագործություններում, ով մեծ վաստակ ունի հայ գրականությունը ուս հասարակության շրջանում մասսայականացնելու, երկու ժողովուրդների մշակութային կապերը սերտացնելու գործում: Նա՝ որպես զինվորական թղթակից, շրջելով Արևմտյան Հայաստանում, անձամբ ակնատես է եղել տասնյակ հազարավոր գաղթականների ողբալի վիճակին, ամայացած քաղաքներին, մեռած գյուղերին և տեսածի ծանր տպավորությունները, մտորումները, տազնապներն ու հույսերը հանձնել թղթին՝ իր անկեղծ սերն արտահայտելով ոչնչացման եզրին

կանգնած մի խաղաղասեր , քաղաքակիրթ ժողովրդի, նրա պատմության, բնության, դարերով ստեղծված նյութական ու հոգևոր արժեքների նկատմամբ, զայրույթով ու պարսավանքով դատապարտելով եղեռնագործներին: 1916-ին «Արմյանսկի վեստնիկ» հանդեսում տպագրված «Դրախտի երգեր» խորագիրը կրող բանաստեղծական շարքում և 1918-ին Թիֆլիսում լույս տեսած «Հայաստանի հրեշտակը» ժողովածուում հեղինակը էջ առ էջ ներկայացնում է բզկտված երկրի պատկերը: Անհնար է առանց ապրումի կարդալ «Երեխան», «Խելահեղը», «Աղջկա ձեռքերը», «Այգի», «Արճակ», «Պանդխտուհին» գործերը: Բանաստեղծը «ամենադժբախտ երկրում» տեսավ նաև ծագող ուժեր, կյանքի խլրտում և հավատաց, որ հայ ժողովուրդը չի պարտվել, կշարունակի ապրել, հարատևել («Հայաստան», «Հայաստանի հրեշտակը»): «Երբեք չեն կործանվում այն ժողովուրդները, որոնք կարողանում են ծանր աղետների և ստորացումների պահերին պահպանել ազգային արժանապատվությունը: Չի կործանվի և Հայաստանը»¹, - նշել է Գորոդեցկին: 1915թ. արհավիրքն ավելի ընդգրկուն կերպով իր արտացոլումն է գտել հեղինակի «Գետակների և հրաբուխների երկրում» ակնարկաշարում, «Շամիրամի այգիները» (1924) անավարտ վեպում, բազմաթիվ այլ հրապարակումներում:

Ս. Գորոդեցկին՝ մարգարեաբար կանխագգալով հայության դեմ ուղղված՝ Աթաթուրքի և Լենինի միջև (իմա՝ թուրք- բոլշևիկյան) խմորվող անբարո սիրախաղը, ինչի հետևանքով պիտի տարածքներ կորցնեք արդեն Արևելյան Հայաստանը, 1919թ. մարտին «Կավկասկոյե սլովո» թերթում հրապարակում է «Ղարաբաղ» հոդվածը, որին հնարավորություն ունեցանք ծանոթանալու խորհրդային կայսրապետության փլուզումից հետո միայն: «Լինելով միասնական ազգագրորեն, տնտեսապես ու լեզվով, Ղարաբաղը դարձել է Հայաստանի միջնաբերդը, նրա արևելյան թևը: Այդպիսին էր նա անցյալում, այդպիսին է այժմ, այդպիսին կլինի ընդմիշտ: -Գրում է Գորոդեցկին, ապա և հիշեցնում:- Եթե Հայաստանը կորցնի Ղարաբաղը, ապա ազգերի ինքնորոշման գաղափարը խիստ կոտնահարվի»²: Աշխարհը, սակայն, ժամանակ չունեք զբաղվելու նման «մանր» հարցերով, ու այդ հակամարտկային աղաղակող սխալը ստիպված էին 70 տարի անց շտկել մեր ազատամարտիկները և պոլսահայ բանաստեղծ Զահրատի բառերով ասած՝ դրանով իսկ վրեժ լուծել 1915-ի դիմաց:

Հարավային Կովկասում 1918-20թթ. ասիական ու տեղական թուրք ջարդարարների կողմից իրականացված հայերի զանգվածային կոտորածները նույնպես անարձագանք չնմացին: Ուշադրության են արժանի մանավանդ Օսիպ Մանդելշտամի (1891-1938) բանաստեղծությունները և առաջին հերթին՝

¹ Ս. Գորոդեցկի, նույնը, էջ 11:

² Տես՝ Հանրագիտակ օրացույց – 1990 (կազմ. Հ. Խաչատրյան), Ե., 1989, էջ 112-113:

ավերակված Շուշի քաղաքին նվիրված «Ֆայտոնչին» (1931), որը ոչ այլ ինչ է, եթե ոչ մի կատարյալ ապուսակ-անեծք՝ ընդդեմ հանցավոր ժամանակի.

*Քառասուն հազար մեռյալ լուսամուտ՝
Ակնախոռոչներ անթիվ – անվերջ,
Դառը տքնանքի բոժոժը հմուտ
Թաղված է այնտեղ՝ լեռների մեջ:
Անամոթաբար շիկնում արևից,
Մերկ տներն են վեր նայում անթարթ,
Միգամածում է երկինքը վերից
Որպես մուգ – կապույտ ուն ժանտախտ:¹
(թարգմ. Հր. Բեյլերյանի)*

Հետագա տարիներին էլ Հայաստանին ու հայ ժողովրդին նվիրված ստեղծագործություններում ռուս գրողները այս կամ այն կերպ անդրադարձել են ցեղասպանության թեմային: Վոլֆ Էռլիխի «Ալազգազի պատումներ»(1931), Նիկոլայ Զարուդինի «Երբ ծաղկում է որթատունկը»(1934), Իվան Կատանի «Յոթ գարունների երկրում» (1934) գեղարվեստական ակնարկները, Նիկոլայ Տիխոնովի «Հայտնության օրեր»(1962) ճամփորդական նոթերը, Վասիլի Գրոսմանի «Բարին ընդ ձեզ»(1962), Անդրեյ Բիտովի «Հայաստանի դասերը» (1969), Ալեքսանդր Դրմշիցի «Հայաստան, սեր իմ» (1978) գրքերը, Յուրի Կարաբչիկսկու «Հայաստանի կարոտը» (1978) վիպակը ասվածի ապացույցներ են:

Բանաստեղծ Ալեքսանդր Գիտովիչի (1909-1966) «Խնջույքները Հայաստանում» (1944) և «Արաքսի ձախ ափին» (1964) շարքերում ամփոփված են հեղինակի հայաստանյան տպավորությունները՝ զուգորդված դարասկզբին տեղի ունեցած քստմենտի իրադարձությունների դառը վերհուշով: Արսենի Տարկովսկին (1907-1989) «Կոմիտաս» բանաստեղծության մեջ խտացրել է ողջ հայ ժողովրդի ողբերգությունը: Սրտացավությամբ են հագեցած Միխայիլ Մատուսովսկու (1915-1990) «Խաչքարեր, խաչքարեր», «Ծերերը Գոշում», «Գոշի առասպելը», «Չարենցի կամարը», «Ծիծեռնակաբերդի հուշարձանը» բանաստեղծությունները, որոնք տեղ են գտել նրա «Տողեր տաք թոնրից» (1985-86) շարքում: Հայի բարդ ճակատագրի մասին է Բորիս Զիչիբանինի «Սաղմոս Հայաստանի» շարքը, նրանց մասին, ովքեր յաթաղանազարկ են եղել սոսկ նրա համար, որ այլ ազգության էին պատկանում:

Վերա Զվյագինցևան (1894-1972), որ նշանակալից ավանդ ունի հայ դասական և նոր ժամանակների պոեզիայի լավագույն նմուշները ռուս ընթերցողին ներկայացնելու գործում, և ում մտերմաբար *Հայաստանի բանաստեղծ* էին անվանում, «Իմ Հայաստանը», «Հայ ժողովրդին», «Ստամբուլ» (1960) և այլ գործերում անհաշտորեն նշավակում է ցեղասպանություն իրականացնողներին: Վլադիմիր Կոռնիլովի «Ռադիոհաղորդում» (1987) բանաստեղծության մեջ

¹ Հայկական հարց, Ե., 1996, էջ 249:

մերկացվում է թուրքական պետության քաղաքականությունը, որն ամեն կերպ փորձում է ժխտել, թաքցնել 1915-ի հետ կապված իրողություններն ու փաստերը:

Ցեղասպանության թեմային արձագանքել են նաև Մարիա Պետրովիխը («Մեկ Հայաստան կա աշխարհում միայն», 1957), Մեմյոն Լիպկինը («Երևանյան վարդ», 1965, «Հայերի վշտի տարելիցը», 1972), Նիկոլայ Տարասենկոն («Քարերի երկիր Հայաստանը», 1968), Ալեքսանդր Կուշները («Հեշտ է գետին իրեն կուլ տալ», 1988), Անատոլի Շչերբակովը («Նամակ», 1989), Եվգենի Եվտուշենկոն և այլք:

Սումգայիթով ծայր առած մերօրյա (հուսանք, որ վերջին) ցեղասպանությունը բառիս բուն իմաստով շփոթեցրել էր ռուս գրողներին. մի թե նման բան կարելի էր սպասել աշխարհի «ամենադեմոկրատական» երկրում: Ահա թե ինչու այն բավական ուշ գրական թեմա դարձավ: Թերևս բացառություն էր Միխայիլ Դուդինը (1916-1994), հայ ժողովրդի ազնիվ բարեկամը, ում սրտին ավելի մոտ էին հայության ապրումներն ու ակնկալիքները: Պատահական չէ, որ ռուս մտավորականներից առաջինը նա այցելեց փոթորկվող Հայաստան, Արցախ: Եկավ ոչ միայն ցավակցելու մեզ, այլև տեսնելու, հրճվելու, ողջունելու, սատարելու՝ մեր համաժողովրդական շարժումը դիտելով որպես փրկության սպեղանի: Այդ շարժառիթով գրած շարքում բանաստեղծը հավատում է, որ հայ ժողովուրդն իր երդվյալ թշնամիներից վրեժխնդիր կլինի ապրելով, արարելով, հարատևելով (քանզի, ինչպես Գ. Էմինը կասեր՝ մեր ոսոխները չեն հասկանում, չեն կարող հասկանալ, որ հայ ժողովուրդը ոչ այնքան քանակ է, ինչքան որակ)¹.

...Բայց դու գտնում ես քո մեջ միշտ

Չգտում հացի ու երգի:

Եվ ես սիրում եմ քեզ վաղուց

Կյանքի հանդեպ հավատի համար, Հայաստան:²

(տողացի թարգմ.)

Հետագայում՝ ի պաշտպանություն Արցախի ազգային – ազատագրական շարժման հանդես եկան Անդրեյ Նույկինը, Գալինա Նույկինան, Բննեսա Բուրկովան, Յուրի Չեռնիչենկոն, Վալենտին Օսկոցկին, Անատոլի Շաբադը, Կիրիլ Ալեքսևսկին, Կոնստանտին Վոնոգոսկին, Կիմ Բակշին, Մարինա Կուդիմովան, ռուս արդի գրականության այլ ներկայացուցիչներ:

Ամփոփում

Հոդվածում խոսվում է ինչպես 1890-ական թթ. և 1915թ. Արևմտյան Հայաստանում ու Թուրքիայի այլ հայաշատ վայրերում, այնպես էլ 1918-20թթ. և 1988-90թթ. Հարավային Կովկասում իրականացված հայերի ցեղասպանությանը նվիրված ռուս գրողների ստեղծագործությունների մասին, որոնց հեղինակները՝ խորին ցավ ու կարեկցանք արտահայտելով, ցատումով դատապարտում են թուրք

¹ Գ. Էմին, Յոթ երգ Հայաստանի մասին, Ե., 1981, էջ 62:

² М. Дудин, Земля обетованная, Е., 1989, стр. 411:



և աղբիւջանցի ոճրագործներին ու վստահություն հայտնում հայ ժողովրդի ոտնահարված իրավունքների վերականգնման, արդարության հաղթանակի հանդէպ:

Тема геноцида армян в произведениях русских писателей

Лена Григорян

Резюме

Ключевые слова: *Западная Армения, Турция, Закавказье, геноцид, русские писатели, боль, сострадание, осуждение, возмездие, правосудие, победа*

В статье говорится о произведениях русских писателей, посвященных геноциду армян как в Западной Армении и на многих территориях Турции в 1890-е и 1915 годы, так и на Южном Кавказе в 1918-20, 1988-90гг. Авторы данных произведений, выражая глубокую боль и сочувствие, гневно осуждают турецких и азербайджанских преступников и выражают уверенность в том, что поправленные права армянского народа будут восстановлены и справедливость восторжествует.

The Armenian Genocide in the Works of Russian Writers

Lena Grigoryan

Summary

Keywords: *Western Armenia, Turkey, Transcaucasia, genocide, Russian writers, pain, compassion, conviction, retribution, justice, victory*

The article dwells upon Russian writers' works devoted to the Genocide of Armenians both in Western Armenia in 1890 and 1915, and in the South Caucasus in 1918-1920, 1988-1990. The authors of these works, expressing their deep sympathy and pain to the Armenian people, angrily condemn Turkish and Azerbaijani criminals, and are confident that the violated rights of the Armenian people will be restored and justice will win.

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿ:
ԲԱԶՄԱԴԻՏԱԿԵՏԱՅԻՆ ՄՕՏԵՑՄԱՆ ՓՈՐՁ**

Շահան Գանտահարեան

Բեյրութ, “Ազդակ” օրաթերթի գլխավոր խմբագիր

Բանալի բառեր. Հայոց ցեղասպանություն, նահատակներ, թանգարան, Կոմիտաս, Թուրքիա, Իսլամ, Հայաստանի Հանրապետություն, հզորացում

1. Հայաստանի Հանրապետություն

Արդարացի է ժողովրդային ակնկալությունը, որ Հայոց ցեղասպանության 100-ամեակը իրաւամբ պետք է նոր բարձրակետ նուաճէ եւ արտակարգ հնչեղություն ապահովէ իր տարողունակութեամբ եւ ձգելիք արձագանգներով:

Խնդիրը նշումի տարողութեան, ոչ հայկական՝ պետական, հասարակական, զանգուածային առաւելագոյն շրջանակներ ներգրաւելու վրայ կը կեդրոնանայ: Եւ այս առումով, պարզ է, որ հայ մարդը կը սպասէ առաւելագոյն կարելին, թէ՛ իբրեւ բարձրորակ, թէ՛ իբրեւ իւրայատուկ եւ թէ՛ իբրեւ արձագանգում ապահովող հսկայածաւալ ձեռնարկներու շարք:

Քանի մը տարիէ ի վեր 100-ամեակի պետական թէ տարածաշրջանային յանձնաժողովները կը քննարկեն, կը ծրագրեն եւ կ'իրականացնեն տարբեր բնոյթի հաւաքներ, խորհրդաժողովներ, մշակութային ձեռնարկներ, խորքին մէջ քանի մը տարուան կտրուածքով 100-ամեակի շրջանակներուն մէջ տեղադրելու համար այն բոլորը, որոնք ցեղասպանութեան հետ կ'առնչուին:

Պետական յանձնաժողովի պարագային բարձրակետի տանող նախատեսուած ծրագիրները կը կեդրոնանան.

Ա. Ցեղասպանագէտներու միջազգային ընկերակցութեան տարեկան համագումարը Երեւանի մէջ կազմակերպելու,

Բ. Հայոց ցեղասպանութեան նահատակները սրբադասելու,

Գ. Ցեղասպանութեան հիմնարկ – թանգարանը ժամանակակից յարմարութիւններով յագեցած մասնաշէնքով օժտելու,

Դ. Ցեղասպանութեան խորհրդանիշի վերածուած հանճարեղ Կոմիտասի թանգարանի հաստատումին,

Ե. Երեւանը ցեղասպանագիտութեան բարձրագոյն ուսման եւ մասնագիտացման կեդրոնի վերածելու,

Զ. Աշխարհի տարբեր կեդրոններու մէջ գտնուող Ցեղասպանութեան վերաբերող արխիւներու կրկնօրինակներու Երեւան համալսման եւ մէկտեղման,

Է. 100-ամեակին նշումին միջազգային քաղաքական բնոյթ ապահովելու եւ միջազգային հանրութեան լուսաբանման կարգով հասանելի դառնալու վրայ:

Այս կետերը ամփոփ բանաձևերն են տեղի ունենալիք նշումներն միայն հիմնականներուն: Պարզ է սակայն, որ ձեռնարկներու կազմակերպումով չի սահմանափակուի թուականի այս շրջադարձը:

100-ամեակը պատմութեան էջերուն պիտի նշուի նաեւ կարեւորագոյն երկու փաստաթուղթով: Առաջինը, Համահայկական հռչակագիրն է, որ խորքին մէջ Հայ դատի յղացքի ժամանակակից եւ համահայկական ընկալումն է, եւ որ իբրեւ ուղենիշ կը ճշդէ թէ՛ պետական գերատեսչութիւններուն եւ թէ՛ հասարակական կազմակերպութիւններուն հետագայ աշխատանքներուն հիմնադրոյթները: Հռչակագիրին նշանակութիւնը կ'անդրանցնի 100-ամեակը եւ կը նախանշէ նոր ձեւաչափերով համազգային հիմնախնդիրներու հետապնդման համար աշխատելու եղանակներու որդեգրումը:

Երկրորդ կարեւոր փաստաթուղթը պիտի ըլլայ համայն հայութեան պահանջներու ներկայացման իրաւական թղթածրարը: Հռչակագիրը խորքին մէջ որոշ հայեցակարգային նախաբան կատարած է այս ուղղութեամբ: Այս երկրորդը ուղղակի իրաւագիտական բնոյթ ունի եւ նկատի կ'առնէ միջազգային օրէնքի ճշդած իրաւաչափութիւնները: Թղթածրարը ի վերջոյ կը բանաձեւէ մեր համազգային պահանջատիրութեան իրաւական հիմքերը:

Այս բոլորը իրադրային կարեւորութիւն կը ներկայացնեն եւ իբրեւ այդպիսին աննախընթաց շրջադարձեր կ'ընդգծեն: Հսկայածաւալ ձեռնարկներու կազմակերպման եւ իրաւական նշանակութիւն ներկայացնող փաստաթուղթերու մշակման առընթեր սուր կերպով քաղաքական բաժին կայ, երբեմն աներեւոյթ, երբեմն աւելի տեսանելի, երբեմն ալ ծխածածկոյթներու տակ թաքնուած: Հիմնականօրէն Անգարա-Երեւան մրցապայքարին հետ կապուած է այս բաժինը եւ ապա երրորդ կողմին՝ այս կողմերուն հետ ունեցած քաղաքական յարաբերութիւններու ելեւէջերուն: Քաղաքական այս պարունակին մէջ պէտք է փորձել մեկնաբանել Ֆրանսայի նախագահին բարձրաձայն յայտարարութիւնը այդ օրը Երեւան ներկայ ըլլալու, այլոց կողմէ տակաւին անորոշութեան մէջ ձգուող կեցուածքները, ուրիշներու մերժումը եւ պատուիրակութիւններու մակարդակներու ներկայացուածութիւնը:

Պէտք չէ շրջանցել նաեւ Հայաստանի Հանրապետութեան նախագահին կողմէ 100-ամեակի նախաշեմին արձանագրութիւնները խորհրդարանէն ետ կանչելու որոշումը, որ ստորագրութիւններու յետոյ կոչման նախաորոշումը կարելի է նկատել: Երեւանը 100-ամեակի առիթով Թուրքիոյ հետ յարաբերութիւններու մշակման համար իրաւաքաղաքական բոլորովին նոր բովանդակութեամբ փաստաթուղթի մշակման պէտք է ձեռնարկէ, եթէ միջազգային ընտանիքը այդ յարաբերութիւններու վերակենդանացման հրամայական դնէ կողմերուն առջեւ: Եւ նման որեւէ նոր փաստաթուղթի նախագիծ անպայման հիմնուած պիտի ըլլայ համահայկական հռչակագիրին եւ հատուցումներու իրաւական թղթածրարին ճշդած հիմնադրոյթներուն վրայ:

2. Արցախ

Ընդհանուր դիտարկումը կը յուշէ, որ Արցախը Խորհրդային Միութեան օրերուն հասկնալիօրէն ցեղասպանութեան հարցի արծարծման շատ տեղ ու առիթ չունէր: Ազրայէճանի խորհրդային հանրապետութեան մէջ յայտնուած ինքնավար մարզը նման համարձակութեամբ հանդէս գալու վտանգի հետեւանքներուն կշռաչափումով այդ ուղղութեամբ քայլեր առնելէ կը խուսափէր: Անկէ ետք արդէն Արցախի ազատամարտն էր եւ ըստ էութեան ինքնորոշման իրաւունքը հայութիւնը կը փրկէր երկրորդ ցեղասպանութեան ենթարկուելու անմիջական վտանգէն: Պաքուն փաստած էր այդ վարկածի արցախեան անմիջականութիւնը:

100-ամեակի իւրայատուկ նշումի ծրագիրներ նախատեսուած են Արցախի մէջ: Նախագահական մակարդակով կազմակերպուող ձեռնարկները նկատի ունեցած են գիտաժողովներ, քննարկումներ, համերգներ, ցուցահանդէսներ: Այստեղ ցեղասպանական քաղաքականութեան կը ներառուին նաեւ 1920-ի Շուշիի ջարդերն ու 20-րդ դարու վերջաւորութեան Սումկայիթի, Պաքուի, Կիրովապատի եւ Շահումեանի մէջ ազրայէճանական եղեռնագործողութիւնները: Տարին ուրեմն, Արցախի համար եւս յագեցած է Հայոց ցեղասպանութեան նիւթին յատկացուած աշխատանքներու ժամանակացոյցով: Յատկանշականը այս բոլորին մէջ Յեղասպանութեան յիշատակին յատկացուած յուշակոթող-գանգակատան կառուցումն է: Պաշտօնապէս յայտարարուած է արդէն, որ այնտեղ պիտի գետեղուին Յեղասպանութեան թանգարան-հիմնարկին կողմէ յատկացուած նահատակներու մասունքները:

Վերը նշուած պատճառներով՝ ցարդ ստեղծուած հիմնական բաց մը համարժեքօրէն կը լրացուի այս ձեւով եւ հայկական երկրորդ հանրապետութիւնը կ'ունենայ Հայոց ցեղասպանութեան զոհերուն յիշատակին սրբավայր-յուշակոթող մը:

Ձեռնարկներուն եւ շինարարական ծրագիրներուն առընթեր կայ բնականաբար քաղաքական երանգներ պարփակող բաժին: Պատահական չէ, որ Արցախը 100-ամեակի առիթով կազմակերպուած գիտաժողովներուն եւ քննարկումներուն ներառած է Պաքուի կողմէ սանձազերծուած ջարդերը: Այստեղ հարցը չի վերաբերիր միայն հանրային կարծիքը ճիշդ կողմնորոշելուն, թէ արցախահայութեան կը սպառնայ երկրորդ ցեղասպանութիւն, այլ նաեւ պայքարելու ազրայէճանական խեղաթիւրումներուն եւ սպատեղեկատուութիւններուն դէմ: Աւելի ճիշդը, թուրքազրայէճանական միացեալ մեքենայի արտադրանքներուն միջազգային շուկայի մէջ գնողական արժեքի անկման:

Ստեփանակերտի մէջ կայանալիք գիտաժողովներուն ընթացքին երրորդ կողմի պատմաբաններուն եւ ցեղասպանագէտներուն Խոջալուի ընդհարումներուն մասին առարկայական եւ սկզբնաղբիւրային նիւթեր տրամադրելը գլխաւոր առաջադրանք է Արցախի իշխանութիւններուն համար:

Խոջալուն շահարկման նիւթ է ինչպէս Պաքուի, այնպէս նաեւ Անգարայի համար, որ «ցեղասպանութիւն ընդդէմ ցեղասպանութիւն» սպառած խաղին կառչած կը մնայ: Խոջալունի հեքիաթի հիւսման համար Անգարայէն ստացած օժանդակութեան դիմաց Պաքու կը փոխհատուցէ Կալիփոլիի 100-ամեակի նշման աշխուժ եւ բարձրագոյն մակարդակի մասնակցութեամբ:

Նախադրեալները կը յուշեն նաեւ, որ Խոջալունի ընդհարումներուն շահարկումը դուրս կու գայ իսլամական երկիրներու վեհաժողովներէն եւ կը փորձէ մուտք գործել միջազգային կառոյցներ: Ահա այստեղ է, որ ոչ միայն Պաքուին համար, այլեւ իր իսկ շահերէն մեկնելով Անգարան զայն կ'օգտագործէ ժխտողականութեան քաղաքականութեան շրջանակներուն մէջ հայերուն կողմէ իր կրտսեր եղբօր դէմ գործադրուած «ցեղասպանութիւն»-ը տարածելով:

Խոջալունի միջազգայնացման նկրտումներուն դէմ պայքարելու համար հայկական աշխարհը չէզոքացման քարոզչաքաղաքական գործողութիւններն ու հանրային կարծիքը ճիշդ ուղղութեամբ կողմնորոշելու միտումն աշխատանքները պիտի համադրէ Ստեփանակերտի հետ. ոչ միայն տեսանիւթեր, արխիւներ շրջանառութեան մէջ դնելով եւ հասանելի դարձնելով հեղինակաւոր միջազգային կառոյցներուն թէ լրատումամիջոցներուն, այլ նաեւ քաղաքական լոպիստական աշխատանքները համակարգելով:

Անգարան նախապայմանային իր քաղաքականութեան մէջ *հայ-թուրք* յարաբերութիւններու զարգացման գործընթացն ու արցախեան տագնապի լուծման բանակցութիւնները կը փոխկապակցէր:

Փոխկապակցութիւն կայ, այո՛, երկու թղթածրարներուն միջեւ, սակայն հայկական դիտակէտի տարբերակով: Հայութեան ինքնորոշման եւ պատմական իրաւունքներու վերականգնումը համազգային առաջադրանք է հռչակագիրով ամրագրուած: Իսկ 100-ամեակին առիթով Ստեփանակերտի մէջ կանգնելիք յուշակոթող-զանգակատունը լաւագոյնս կը խորհրդանշէ հայութեան իրաւունքներու փոխկապակցուած ամբողջականութիւնը:

3. Սփիւռք

Սփիւռքեան զանազան միջավայրերու մէջ 100-ամեակին հետ կապուած աշխատանքներն ու մանաւանդ քաղաքական ձեռքբերումները գլխաւոր երկու գործօն ունին. նախ՝ անշուշտ տեղւոյն համայնքներու կազմակերպութեան եւ քաղաքական աշխուժութեան փաստը (վերջին շրջանին հայկական գործօնին կը ներառուի նաեւ պետականութեան մասնակցութիւնը կամ աւելի ճիշդ՝ յատկապէս *Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւններ* եւ Հայ դատի յանձնախումբեր համատեղ աշխատանքի արդիւնաւետութիւնը), ե ք) տուեալ պետութեան եւ Անգարայի միջեւ յարաբերութիւններու ներկայ իրավիճակը:

Երկու յատկանշական օրինակ կրնայ բացատրողական ըլլալ երկրորդ տեսութեան աշխատելու տրամաբանութեան առումով:

Գահիրէ – *Անգարա* յարաբերութիւններու ելեւէջները, Իսլամ եղբայրներուն դէմ իրականացուած իշխանափոխութեան բերած ամբողջովին նոր պահուածքը

Թուրքիոյ իշխանութիւններուն նկատմամբ եւ լարուած յարաբերութիւններու իրավիճակը շատ արագ հրապարակ բերին Հայոց ցեղասպանութեան մասին եզիպտացի քաղաքական եւ պետական գործիչներու աննախընթաց բարձրաձայնումներու շղթայ մը: Հարթութիւնը քարոզաքաղաքական էր. Յեղասպանութիւնը լուսաբանուեցաւ միլիոնաւոր համրանքներու հասնող զանգուածներու Եզիպտոսի ամէնէն հսկայ լսարանները ունեցող լրատուամիջոցներու կողմէ: Հարցը սակայն չմտաւ իրաւական ընթացակարգի մէջ: Պարզ էր, որ ուղերձը Անգարային էր՝ ըսելու համար, որ Գահիրէն իր զինանոցին մէջ կը պահէ ցեղասպանութիւնը ճանչնալու սպառնալիքը: Պատահական չէր կրնար ըլլալ անշուշտ Յեղասպանութեան վերաբերեալ եզիպտական արխիւներու հրկիզումը: Եզիպտոսի պարագան վերլուծական դիտակէտեր կը պահանջէ եւ այդ առումով ալ յատկանշական է՝ նկատի ունենալով տարածաշրջանի իրադարձութիւնները, եւ Գահիրէի ճիգը պահպանելու արաբական աշխարհին մէջ գլխաւոր խաղացողի հանգամանքը:

Բոլորովին այլ պայմաններ եւ այլ իւրայատկութիւններ կը ներկայացնէ հարաւային Ամերիկան, ուր իրար յաջորդեցին Յեղասպանութեան ճանաչման բանաձեւերու որդեգրումը. անոնցմէ Փարակուէլը նոյնիսկ շեշտեց հայոց հայրենագրկման փաստը եւ իրաւունքներու վերականգնման անհրաժեշտութիւնը: Մինչ Ուրուկուէլ սկսաւ բարձրաձայնել ժողովուրդներու ինքնորոշման իրաւունքի յարգումի հրամայականը եւ նախախորհրդային Հայաստանի վերահսկած սահմաններու վերահաստատման գաղափարը: Գաղափարական ենթահողին առընթեր անպայման պէտք է նկատի ունենալ տարածաշրջանային երկիրներուն ոչ լայնածաւալ չափերով առեւտրատնտեսական գործառնութիւններու բացակայութիւնը տարածաշրջանին մէջ: Պէտք չէ անտեսել նաեւ Փերինչեքի դեկավարած ջոկատի գործուղումը շրջան՝ Յեղասպանութեան հերքման առաքելութեամբ:

Փերինչեքի նման այլ դատեր եւս կրնան զբաղեցնել հայկական կողմը: Մինչ, Թուրքիան կրնայ այլ դատական հայցերու իւրայատուկ բաւարարումներ տալ՝ անհատական հատուցումներու դուռ բանալով եւ անուղղակիօրէն մղելով վերապրողներու ժառանգորդները իրաւունքներու վերականգնման անձնական նախաձեռնութիւններ առնելու: Այս մէկը մտածել կու տայ «Հայկական սփիւռքը մեր սփիւռքն է, Տաւրթօղլուի նշանաւոր յայտարարութեան մասին, որուն կը հետեւի «Հրամմեցէք մեր եւ ձեր բնօրրանը»: Ուրեմն, սփիւռքը նման հրաւերներուն ընդառաջել-չընդառաջելու հարկադրանքին առջեւ կրնայ գտնուիլ:

Արդէն յայտարարուած է Անգարայի վարիչներուն կողմէ, որ կը ձեռնարկուի սփիւռքեան տարբեր շրջանակներու հետ երկխօսութեան սկսելու ծրագիրը: Կալիփօղլիի հակաքայլը կրնայ դուրս գալ Թուրքիոյ սահմաններէն եւ ընդգրկել այն երկիրները, ուր թուրք համայնք գոյութիւն ունի: Սփիւռքը եւս այս



հակաքայլերուն կամ նոյնիսկ հակացոյցերուն փաստերուն հետ վարուելու խնդիր կրնայ դիմագրաւել:

Մինչ սփիւռքեան տարբեր քաղաքներու մէջ ցեղասպանութեան յիշատակի թանգարաններու հաստատումները թափ կը հաւաքեն, Յեղասպանութեան ճանաչման ու դատապարտման բանաձեւերը սկսած են արծարծել նաեւ տարածքային կոռուստներու հիմնախնդիրը:

Անգարան, եթէ մէկ կողմէ Երեւանի հետ յարաբերութիւններու բնականոնացման համար նախապայմանային քաղաքականութեան տարբեր խաբկանքի գործողութիւններ պիտի կազմակերպէ, միւս կողմէ սփիւռքի հետ խօսելու, հայկական կողմին մէջ պառակտման փորձեր սերմանելու աշխուժ վարքագիծ պիտի դրսեւորէ:

Սփիւռքի զգօնութիւնը աւելի քան հրամայական անհրաժեշտութիւն է՝ նման ծուղակներու մէջ չներքաշուելու: Ոչ միայն համասփիւռքեան միանշանակ պահուածքի խնդիր կայ այստեղ, այլ թրքական կողմին հետ որեւէ յարաբերութիւն մշակելու համար ներհամահայկական (Հայաստանի Հանրապետութիւն – Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն – սփիւռք) անհրաժեշտ քննարկումներու կայացման:

Ճանաչումէն հատուցում կարգախօսը եւ յատկապէս անոր իրաւական բաժինը գործնական դրսեւորումներ ունենալու հարկադրանքին առջեւ է:

4.-ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Հայկական աշխարհի տարբեր միջավայրերու մէջ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի նշումներուն բովանդակային բաժնին մէջ կը նկատուի արդէն գաղափարախօսական առանցքային նոյնութիւն: Տարողութիւններու եւ նշման եղանակներու տարբերութիւնները չեն ստուերեր այն, ինչ որ իբրեւ առարկայացող պահանջատիրութիւն համատարած է հայութեան մօտ: Պահանջներու իրաւականացման գործընթացը կը մեկնարկուի 100-ամեակին: Այս մէկը արդէն համահայկական հռչակագրի ճշդած սկզբունքներուն յենած կ'ապահովէ իր ընթացակարգը: Նախորդ բաժիններուն մէջ արծարծեցինք արդէն սպասուող քաղաքական այն գործընթացները, որոնց դէմ յանդիման Յեղասպանութեան արծարծման ռազմավարական մօտեցումները կրնան խնդիրներ դիմագրաւել կամ բարենպաստ հանգրուաններ օգտագործել:

Աշխարհաքաղաքական օրակարգերը այս օրերուն ստացած են արագընթաց, կտրուկ եւ յանկարծակիւութեան գործօնի թողած ազդեցութեան տակ յարափոփոխութեան իրավիճակ: Հայկական գործօնի դիտակետով երկու տարածաշրջանի օրինակները այս առումով կրնան քաղաքական խորհրդածութիւններու անսահման դուռեր բանալ: Նախկին խորհրդային հանրապետութիւններու, Կովկասի յատկապէս եւ միջին արեւելեան տարածաշրջանի մէջ արձանագրուող իրադարձութիւններու ահագնացումը կը խօսին տարածքներու ժողովրդագրական պատկերներու դիմաշրջումին, ցեղային գտումներով իրականացուող այլ շրջաններու ամայացումին եւ այս բոլորին

իբրեւ հետեւութիւն նոր երկիրներու ու պետութիւններու ձեւաւորման, նոր սահմանագծումներու իրականացման:

Այս բոլորին մէջ հաւանաբար ամենէն աւելի հայկական հիմնահարցերուն հետ կապուածը Քիւրտիստանի գէթ իրողական սահմաններու ուրուագծումն է: Յատուկ վերլուծական կանխատեսումներ ընելու պէտք չկայ՝ եզրակացնելու համար, որ քրտական գործօնը կամ Քիւրտիստանի ստեղծումը աշխարհաքաղաքական օրակարգ է: Այս կը նշանակէ, որ Անգարայի համար թիւ 1 գերխնդիր նկատուող այս իրականութիւնը յայտնուած է գերտէրութիւններու ուշադրութեան կիզակէտին: Իրաքեան Քիւրտիստանը կամ Սուրիոյ քրտական իրողապէս ինքնավար շրջանները վերջնական սահմանները չեն քիւրտերու առաջադրած Քիւրտիստանին: Հիմնականը Թուրքիոյ այսօրուան սահմաններէն ներս ինկած տարածքներն են:

Թէ քիւրտերու կողմէ առաջադրուած այդ տարածքներու ներառումը Քիւրտիստանին աշխարհաքաղաքական տնօրինումներուն մաս կը կազմէ, դժուար է հաստատելը: Պէտք չէ անտեսել, սակայն, Պետքարտուղարութեան վերլուծական բաժանմունքի հրապարակած կանխատեսումը՝ յառաջիկայ քսան տարիներու ընթացքին Թուրքիոյ մասնատումը ընդգծող: Մինչ, ամերիկեան տարբեր կայքեր տարածաշրջանի նոր քարտէսներու հրապարակման ընթացքին դէպի Սէւ ծով հասնող ընդլայնուած սահմաններ կը տրամադրէին Հայաստանի Հանրապետութեան:

Այս նկատառումները կը մղեն հայկական կողմը ամբողջացնելու պահանջներու իրաւականացման տանող թղթածրարը: Սեւն ու Ուիլսընեան իրաւարար վճիռը ոչ միայն Հռչակագրին մէջ նշուած յոման կէտեր են, այլ նաեւ Հայաստանի Հանրապետութեան պետական պաշտօնատարներու կողմէ պատեհ առիթներուն յիշեցուող փաստաթուղթեր: Ըստ երեւոյթին, նաեւ ոչ միայն հայկական շրջանակներ սկսած են յիշել այս մասին:

Ինքնութեան խնդիրներու ալիքաւորումը սպառնալիք է Թուրքիոյ տարածքային ամբողջականութեան: Եւ պատահական չէ, որ պաշտօնական թէ անպաշտօն աշխարհաքաղաքական կեդրոնները տարբեր առիթներու կ'արձարծեն այս խնդիրները՝ Քիւրտիստանը, Թուրքիոյ մասնատման հաւանականութիւնը, տարածաշրջանի նոր քարտէսները:

Այս գործընթացներուն հետեւելու եւ պատրաստ ըլլալու խնդիր ունի հայկական կողմը, իսկ ներագգային իմաստով՝ Ցեղասպանութեան թղթածրարի ընկալման հիմնահարց կամ ընկալման փիլիսոփայութեան փոփոխութեան հարց:

Այսպէս: Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի նշումներու աւարտին, համայն հայութիւնը պիտի նախապատրաստուի նշելու Հայաստանի Ա. Հանրապետութեան հիմնադրութեան 100-ամեակը: Երեք տարի իրարմէ կը բաժնեն երկու հարիւրամեակները: Այս կը նշանակէ, որ Ցեղասպանութենէն միայն երեք տարի ետք, միեւնոյն թրքական ուժերը Արեւմտահայաստանը



ամայացնել է արեւմտահայութիւնը բնաջնջելէ ետք կը սպառնային ամայացնել Արեւելահայաստանն ու նոյն ճակատագրին ենթարկել հայութեան մնացորդացը: Հայկական կողմը ձախողցուց համընդհանուր ցեղասպանական քաղաքականութիւնը: Այսօրուան Հայաստանի հանրապետութիւնը իրաւական ժառանգորդն է ցեղասպանական համընդհանուր քաղաքականութիւնը ձախողցուցած եւ Հանրապետութեան կերտած անկախութեան սերունդին:

Այսօրուան Հայաստանի հզօրացումը ամենաազդու եւ ամենաուժեղ պատասխանն է Ցեղասպանութեան: Հզօր հայրենիքը միայն կրնայ առաւելներ քաղել աշխարհքաղաքական գործընթացներու ստեղծելի բարենպաստ պայմաններէն: Մեր գերիսնդիրն ու համար առաջին նպատակը՝ հայրենատիրական գիտակցական մօտեցումով եւ առաջնային օրակարգով Հայաստանի Հանրապետութեան հզօրացումն է:

Ամփոփում

Սույն հոդվածում դիտարկվում և ուրվագծվում են այն անհրաժեշտ միջոցառումները, որոնք առնչվում են Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին:

Հոդվածի հեղինակը՝ Բեյրութում լինելով Լրագրողների համահայկական համաժողովները համակարգող մարմնի նախագահ, առանձին-առանձին անդրադառնում է Հայաստանի Հանրապետությունում, Արցախում, Մփյուռքում իրականացվող միջոցառումներին, բնութագրում աշխարհքաղաքական գործընթացները և եզրակացնում, որ Թուրքիայի պաշտոնական իշխանությունների հակահայկական խարդավանքներին դիմակայելու համար անհրաժեշտ է միաբանվել և նպաստել Հայաստանի Հանրապետության հզորացմանը:



Столетие Армянского геноцида. Опыт разностороннего подхода

Шаан Гантагарян

Резюме

Ключевые слова: *Армянский геноцид, мученики, музей, Комитас, Турция, Ислам, Армянская республика, усиление*

В данной статье рассматриваются и очерчиваются те необходимые мероприятия, которые будут проведены к 100 – летию Армянского геноцида.

Автор статьи, будучи председателем органа систематизирования общественных конференций журналистов Бейрута, по отдельности обращается к тем мероприятиям, которые должны осуществиться в республике Армения, Арцахе, диаспоре, характеризует политические действия в мире и приходит к выводу, что для предотвращения коварной политики официальных правителей Турции необходимо объединиться и всячески способствовать усилению Армянской республики.

The Centenary of the Armenian Genocide. The Experience of Multilateral

Approach

Shaan Kandagaryan

Summary

Keywords: *Armenian genocide, martyrs, museum, Komitas, Turkey, Islam, Armenian Republic, strengthening*

In the article the author discusses and outlines the series of events commemorating the Genocide Centenary.

The author, who is the head of the body for systematization of journalists' conferences of Beirut, separately treats the events that are to be held in the Republic of Armenia, Artsakh, diaspora, characterises the world political activities and concludes that in order to prevent the treacherous policy of the Turkish official leadership the nation must unite and contribute to the strengthening of the Republic of Armenia.

ՎԱՀԱՆ ՏԵՐՑԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ
Նաիրինե Հովհաննիսյան

բ.գ.թ., ղոցենտ
ԱրՊՀ

Բանալի բառեր՝ Նաիրի, կամավորական շարժում, <<Հոգևոր Հայաստան>>, Հայկական հարց, բոլշևիկյան կուսակցություն, Բրեստ-Լիտովսկ, գաղափարական շրջադարձ, ընդհատակյա գործունեություն, պետական գործուղում, կողմնորոշման գոհ:

Նաիրին՝ որպես ամբողջական Հայաստանի գաղափարագեղագիտական խորհրդանիշ, Վահան Տերյանի շնորհիվ ամրակայվեց հայ գրականության մեջ և այդուհետ դարձավ անհետացող պատմական հայրենիքի հիշողության, կորուստի ցավի և հարության հավատի գեղարվեստական հարակա պատկեր: Նաիրին մեր ժողովրդի բնիկ հայրենիքն է՝ Հայաստանը, հոմանիշ է նրան, բայց նույնանիշ չէ ոչ միայն պատմաաշխարհագրական, այլև խոհազգայական տարողության առումով. Նաիրին հայրենականի տենչանքի գաղափարահուզական խտացվածությունն է:

1914 թ. Ն. Թումանյանին հղած նամակում Տերյանը գրում է. <<Վերջ ի վերջո ես սկսում եմ գալ այն եզրակացության, որ մեր հայրենիքի ցավը մեզ այնպես է մաշում, ջլատում, կեղեքում, որ մենք դառնում ենք անընդունակ ուրիշ բան հասկանալու կամ անելու ... Եվ գուցե դրա համար անգոր ենք դառնում ու մեռնում ենք վաղ...>>Z1V: 1905-ի նոյեմբերի 9-ի նամակում Ս.Օտարյանին հայտնում է. <<Այստեղից Կովկաս է ուղարկվում մոտ ժամանակներս 200.000 ռուբլու գենք: Եթե գնալու լինեն, իհարկե, կարողացածիս չափ կտանեն>> Z2V: 1905 թ. դեկտեմբերին Տերյանն արդեն Կովկասում էր, ճեմարանական ընկերոջ՝ Պ.Մակինցյանի հետ Թիֆլիսում անցնում է Դաշնակցության շաբթերը, գործուղվում Շիրակի գյուղեր: Խորհրդային տերյանագիտությունը ջանադրաբար ջնջել է Տերյանի կենսագրության այս հատվածը՝ առանց վիճարկելու նույնիսկ առկա փաստերը: Տերյանի ընկերը՝ Ց.Խանզադյանը, հիշում է.<<1905 թ. դեկտեմբերին նրանք Կովկաս եկան ու Թիֆլիսում <<քննություն>>տալուց հետո գրկաբաց ընդունվեցին դաշնակցական պրոպագանդիստներ և ուղևորվեցին Շիրակի շրջանը>>Z3V: Նույնն է փաստում և Տերյանի գաղափարակիր ընկեր Պ.Մակինցյանը Z4V: Ինքը՝ Տերյանը, 1906 թ. Ս.Օտարյանին գրում է. <<Թիֆլիսում մտա Դաշն. կազմակերպության մեջ իբրև պրոպագանդիստ: Մերոնք լավ են այժմ, բավականին զինված են: Մանավանդ <<Դաշնակցությունը>> մեծ դեր է խաղում և, իմ խորին համոզմունքով, եթե չլիներ նա, շատ տեղերում ոչ մի հայ չէր մնա... Կովի մեջ Դաշնակց. հավասարը չունի, բայց պրոպագանդը շատ թույլ է>>Z5V: Նույն թվականին սոցիալիստական

գաղափարների շուրջ ընդհարվելով դաշնակցական մի խումբ հայդուկների հետ՝ Տերյանը հեռանում է Դաշնակցությունից: Դաշնակցության և Տերյանի ճանապարհները բաժանվում են՝ միառժամանակ օտարվելու և հակադարձվելու ընթացքով, իսկ հետագայում՝ հրապարակավ չընկալված դրամատիկ դարձի ավարտով: 1907 թ. Տերյանը գաղափարապես հարում էր արդեն սոցիալ-դեմոկրատներին, սակայն նրա քաղաքական կողմնորոշման կիզակետում մշտապես մնաց միացյալ և ազատ հայրենիքի՝ Նաիրիի գաղափարը: Ազգային կյանքի հեռանկարներով մտահոգ՝ 1914թ. <<Մշակ>>-ում հրատարակում է <<Հոգևոր Հայաստան>> հոդվածը՝ նպատակ ունենալով <<Հայության հավաքում կամ հայության կազմակերպում գաղափարական իմաստով>>: Հոդվածում Տերյանը հաստատագրում էր նաև իր քաղաքական հավատամքը Հայկական հարցի նկատմամբ. <<Ամեն մի հայ պիտի շահագրգռված լինի թուրքահայերի ազատագրումով, ինչ ձևով էլ լինի այդ ազատագրումը>>Z6V:

Տերյանը և կամավորական շարժումը հարցադրումը ևս տարակարծությունների տեղիք է տվել տերյանագիտության մեջ: Բանաստեղծը հայկական կամավորական շարժմանը չգինվորագրվեց. 1912 թ. նա ազատվել էր զինվորական ծառայությունից, 1917 թ. նույնպես՝ <<աջ թոքի տուբերկուլյոզի պատճառով ճանաչվելով միանգամայն ոչ պիտանի զինվորական ծառայության համար>>Z7V: Մակինցյանը գրում է, թե Վահան Տերյանը <<կամավորական շարժման հանդեպ բռնում է ժխտողական դիրք>>Z8V: Յ.Խանգադյանը Մակինցյանի վերոնշյալ տողերի լուսանցքում գրել է՝ Ընդհակառակը: Ո՞րն է իրողությունը: Սկսված աշխարհաքաղաքական մեծ շարժընթացների մեջ, Տերյանի համոզմամբ, փոքր ազգերը ի գործ չեն ինչ-որ բան փոխել, և Հայկական հարցի լուծումը, ըստ Տերյանի, հնարավոր կդառնա ոչ ազգային-ազատագրական կամավորական շարժմամբ, այլ Ռուսաստանի արմատական վերափոխմամբ: <<Մենք չէինք կամենա, որ մեր ժողովուրդը ոտնատակ գնար այս շփոթ օրերում, որ նա զոհ լիներ սխալ գաղափարախոսության, սխալ ըմբռնված ազգային իդեալի... Մենք թերահավատ ենք դեպի այդ՝ մի հարվածով, մի թեկուզ հերոսական ճիգով ստեղծվելիք Հայաստանը: Մեր խորին համոզումով, որքան և կարևոր ու խոշոր լինի այսօրվա այդ հերոսական ճիգը, այնուամենայնիվ նա չէ, որ պիտի որոշե, վճռե հայության ապագայի վիճակը...>>Z9V: Կամավորական շարժման նկատմամբ թերահավատություն, բայց նրա հերոսական ոգու տեղին գնահատում, միաժամանակ ազնիվ մտահոգություն ժողովրդի ֆիզիկական գոյության համար:

Տերյանագիտության մեջ թյուր դիտարկումներ են ամրակայվել նաև Տերյանի և Հայկական հարցի շուրջ: Անգամ Հ. Թամրազյանն է վրիպել. <<Խոր կսկիծով նա ասում է ավելին՝ ես չեմ հավատում թուրքահայ հարցի ապագային>>Z10V: Ազգային ճակատագրում կյանքի և մահու խնդրի բնավորություն ստացած Հայկական հարցի վերապրումը Տերյանի կողմից, անթիվ հույսերի, ցնորքների, մտահոգությունների, կանխատեսումների և դատողությունների բևեռացումը

հնարավորինս պատկերացնելու համար վերստին դիմենք բանաստեղծի՝ հակասական գնահատականների և բուռն վեճերի արժանացած <<Հոգևոր Հայաստան>> հոդվածին. <<Մի՞թե իրավունք ունենք մենք տարակուսելու կամ տատանվելու. պետք է հավատալ, պետք է հուսալ լիասիրտ, պետք է տենչալ սրտի բոլոր զորությամբ և մեր բոլոր կարողությամբ ձգտել, որ այժմ վերջնական կերպով լուծվի այդ արյունլվիկ հարցը>>: Վերադառնալով Հ. Թամրազյանի դիտարկմանը՝ նշենք, որ հիմքը թերևս Տերյանի՝ 1914 թ. ապրիլի 30-ին Թիֆլիսում կարդացած <<Հայ գրականության գալիք օրը>> դասախոսությունն էր, որի ընթացքում Տերյանը, ևս մի անգամ անդրադառնալով հայության ցավոտ խնդրին, ասում է. <<Ես տաճկահայկական հարցի լուծմանը Թուրքիայի սահմաններում չեմ հավատում: Լավագույն լուծումն այդ հարցի համարում եմ Ռուսիայի գրավումը տաճկահայկական նահանգների... >>:

Տերյանի ազգային-քաղաքական դիմանկարի վերագնահատումը պահանջում է անդրադառնալ նաև *Տերյանը և բոլշևիկյան հեղափոխությունը* հարցադրմանը: Հարցի հստակ մեկնաբանությունը կա. <<Տերյանը որոշ հակասություններով ընդունում և ըմբռնում է հեղափոխության մի շարք կողմեր, համակրանքով մոտենում այդ մեծ շարժմանը՝ նկատի ունենալով հատկապես ազգերի ազատագրության և անհատի բարոյական վերածնության խնդիրները>> Z11V: Առհասարակ, Տերյանի ազգային-քաղաքական գործունեությունը և պոեզիան գնահատելիս ելակետ պետք է ունենալ երկու թվանիշ՝ Տերյանը մինչև 1918 թվականը և 1918 -ից հետո:

1917 թ., անտեսելով խորացած հիվանդությունն ու մահվան վտանգը, հոգեկան ու ֆիզիկական աներևակայելի լարումով Տերյանը մաքառում է Հայկական հարցի համար: 1917 թ. նոյեմբերին գրում է <<Թուրքահայաստանի մասին>> զեկուցագիրը, նախապատրաստվում Բրեստ-Լիտովսկի բանակցություններին: Տերյանի պահանջատիրությունը Ժողովրդական կոմիսարների կառավարությունից արևմտահայերի լիակատար ազգային ինքնորոշման փաստացի ու վճռական պաշտպանությունն էր և այն երաշխիքների ստեղծումը, որոնք իրական հնարավորություն կտային ինքնորոշմանը: 1917 թ. նոյեմբեր-դեկտեմբերին <<Ընկերներից մեկին>> Z12V՝ Մակինցյանին, Տերյանը գրում է. <<Ստալինն ասաց՝ մենք իսկույն եթե կկարգադրենք, որ զորքերը հեռանան, և հայերին հնար տրվի ինքնորոշվելու: Ես վիճեցի ... Այսօր այդ առթիվ գրույց ունեցա ընկ. Լենինի հետ, որին բացատրեցի, թե ինչո՞ւ անհրաժեշտ է առայժմ զորքերը չհանել Հայաստանից և պայմանավորել Հայաստանի ինքնորոշումը աքսորվածների վերադարձով և այլ գարանտիաներով>> Z13V: Տերյանի զեկուցագիրը քննվում և հիմք է ընդունվում նույն թվականի դեկտեմբերին: Այն ազդարարում էր. <<Ռուսաստանի բանվորական և գյուղացիական կառավարությունը պաշտպանում է Ռուսաստանի կողմից օկուպացված <<Թուրքահայաստանի>> հայերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն>> Z14V:

Սակայն, հակառակ Տերյանի, որպես երաշխիք նշվում էր նաև զորքերի դուրսբերումը Արևմտահայաստանից: Այդուհանդերձ, կանխագծվում էր Արևմտահայաստանի ազատագրման ուղին. Տերյանը սպասումների մեջ էր, սակայն 1918թ. մարտի 3-ին Բրեստում *Լենին-Քենալ* դաշինքի արդյունքում բոլշևիկյան կառավարությունը Թուրքիային է վաճառում ոչ միայն ամբողջ Արևմտահայաստանը, այլև Կարսի և Արդահանի նահանգները: <<Ռուսաստանը կանի այն ամենը, ինչ որ իրենից կախված է, որպեսզի ապահովի իր զորքերի դուրսբերումը Արևելյան Անատոլիայի նահանգներից և վերջիններիս կանոնավոր վերադարձը Թուրքիային: Ռուսական զորքերը պետք է անհապաղ դուրս բերվեն նաև Արդահանի, Կարսի և Բաթումի մարզերից>> Z15V:

Բրեստի բանակցությունները սկսվել են 1917 թ. դեկտեմբերի 3-ին: Տերյանը Ազգադրժողովումատին կից Հայկական գործերի ժողովրդական կոմիսարիատի տեղակալն էր և որպես խորհրդական լիազորված էր Ռուսաստանի պատվիրակության կազմում: *Բրեստ – Լիտվսկի* բանակցություններով զերլարված՝ 1918թ. Տերյանը հնարավորություն չունեցավ մեկնել Ստավրոպոլ՝ իր մահամերձ երեխային վերջին հրաժեշտը տալու, սփոփելու կնոջը, որ հողին էր հանձնում իրենց երկրորդ զավակին, և դա ոչ թե հայրական կամ ամուսնական հոգատարության բաց էր, այլ ահավոր զոհաբերում՝ ազգային պարտավորության խոր գիտակցումով: Ազգային ու անձնական անվերադարձ կորուստների, չարբագրվելիք սխալների մղձավանջից ցնցված՝ բանաստեղծը սփոփանքի ու ինքնարդարացման նամակ է հղում կնոջը. <<Մի բան կասեմ միայն. հավատա, որ այս երկու ամսվա ընթացքում ես ապրել եմ այնքան վիշտ ու թախիծ, որքան չեմ ապրել ամբողջ կյանքիս ընթացքում ...>> Z16V:

1918 թ. ամռանը Տերյանը՝ ջլատված, գունատ, ջղային, շրջում էր Հյուսիսային Կովկասում՝ հայ գաղթականության օգնության գործը կազմակերպելով: <<Տերյանը իր հետ բերած դրամի մի աննշան մասը միայն տվավ Պյատիգորսկի Խորհրդային իշխանություններին: Նա տեսավ այդ իշխանությունների արարքներն ու բարոյականը և սկսեց անվստահությամբ նայել նրանց վրա... Վահանը կարմրում էր իր կուսակցական ընկերների արարքների համար: Նա երաշխավոր կանգնեց ինձ ու մի երկու ուրիշ ձեռքակալվածների համար և մեզ ազատեց Էսենտուկիի բանտից: Մյուսների համար համառորեն պայքարեց և նրանց ազատությունը պահանջեց... 1918 թ. Բեռլինի լրացուցիչ պայմանագրով Խորհրդային Ռուսաստանը Գերմանիայի առաջ ճանաչում էր Վրաստանի անկախությունը: Այդ լուրը ջղայնացրել էր բանաստեղծին: Նա շտապում էր վերադառնալ Մոսկվա, որպեսզի դրդե բոլշևիկներին ճանաչելու նաև Հայաստանի անկախությունը>>Z17V,- հիշում է Դ. Անանունը: Նշված հոդվածը՝ <<Հանդիպումներ Վ.Տերյանի հետ>> (1920), կանխամտածված շրջանցվել է խորհրդահայ տերյանագիտության կողմից, որովհետև բացառիկ էր Տերյանի ազգային դիմանկարի վերագնահատմամբ և հակասող բոլշևիկ բանաստեղծի կերպարին: Մակինցյանը հիշում է. <<Երբ նա վերադարձավ Հյուսիսային

Կովկասից, այդ մոտավորապես 1919 թ. փետրվարին էր, նա բոլորովին ջարդված էր – թոքախտն արդեն անցել էր կոկորդին>>Z18V: 1919 թ. ամռանը Տերյանը մի կարճ ժամանակ մտնում է Մոսկվայի Սոկոլնիկի արվարձանի Չետվերիկովի սանատորիա, սակայն, սրտնեղվելով պայմաններից, հեռանում է: Բոլշևիկյան կառավարությունը ոչինչ չարեց Տերյանի առողջության վերականգնման համար, այդ օրերին բանաստեղծին ձեռք է մեկնում բժիշկ Զավրիևը (Զավրյան)՝ Դաշնակցական կառավարության անդամներից մեկը՝ առաջարկելով բանաստեղծին ամեն տեսակի աջակցություն՝ Շվեյցարիայում բուժվելու համար: Ըստ Ա.Շահիջանյանի՝ Տերյանը հրաժարվում է: Հուլիսից հետո վկայում է. <<Մի անգամ չէ, որ նրան դիմում էին կասկածելի անձնավորություններ>>Z19V: Տերյանի և Դաշնակցության՝ 1917-1919 թթ. համագործակցության մասին կան պատմական մի շարք անուղղակի փաստեր. *բոլշևիկ-դաշնակցական* համագործակցության վերջնական նպատակը հայկական պետականությունը Արարատի վրա հաստատելն էր, հայ ժողովրդի համար կործանարար *Լենին-Քեմալ* դաշինքի կանխումը:

1919 թ. մայիսին Տերյանը, իր ծուռ խաչը կրելու ճանապարհի վերջին հանգրվանից առաջ, ինքնաքննադատաբար գրում էր, որ ինքը 1905 թ. լի էր <<նացիոնալիստական ու մանրբուրժուական նախապաշարումներով, ենթակա նացիոնալիզմի թունալի հմայքին>>Z20V: Ինչո՞ւ էր արդարանում Տերյանը և ինչի՞ց. ազգայնական մեղադրանքների՞ց, երբ արդեն Կոմկուսի և Համառուսական կենտգործկոմի անդամ էր, Հայկական գործերի ժողկոմի տեղակալ: 1937-ի նախասկի՞զբը չէ սա, և անմիջական կապ չկա՞ արդյոք Տերյանի այս խոստովանության և նրա <<պետական գործուղման>> միջև: 1919 թ. հոկտեմբերին Արտգործժողկոմի <<կարևոր և շտապ հանձնարարություններով>> Տերյանը գործուղվում է Տաշքենդ: Հակասական, բայց հիմնավոր ենթադրությունների ու կարծիքների տեղիք տված այդ ուղևորության մասին Մակինցյանը հայտնում է, որ Տերյանը Պարսկաստանի վրայով մտադիր էր անցնել կամ Պոլիս, կամ Անդրկովկաս. <<Շատ էր հիշում իր հայրենի Զավախքը և մանավանդ կարոտով փափագում էր լինել Հայաստանում>>Z21V: Ս. Սուքիասյանը գտնում է. <<Ինչ վերաբերում է Թուրքեստանից դեպի Պարսկաստան, այնտեղից էլ Թուրքիա անցնելու հետագա ծրագրերին, ապա դրանք հազիվ թե իրական հիմք ունենային>> Z22V: Մի բան ակնհայտ է. Տերյանն արքայություն էր մահվան ամիսը. հեռավոր, դավադիր ուղիներ ձգվող դանդաղընթաց, ցուրտ, ծխաշատ գնացքն արդեն գուժում էր պոետի մոտալուտ մահը:

Ժամանակի վավերաթղթերի, հիշողությունների, երբեմն կցկտուր, երբեմն իրարամերժ պատմությունների մեջ տեսանում է մեծ հայրենասերի կյանքի դրաման: Տերյանի վերջին ուղևորության հետ կապված՝ Ա. Շահիջանյանը հայտնում է. <<Նա իրեն թեթևացած էր զգում և ասում էր, որ հիմա, երբ ինքը դուրս պրծավ, կսկսի և կարող է շատ աշխատել>> Z23V: Ազգային չկայացած

բախտի դրաման, անձնական դժբախտությունները, հոգնատանջ տարիները Տերյանը մի պահ թողնում էր հետևում: Վերջապես հնարավորություն կունենար նաև ստեղծագործական կյանքով ապրելու: Բայց <<թեթևացած էր զգում>> ոչ միայն դրանից: Ըստ Շահիջանյանի հիշողությունների՝ <<Պոետը Մոսկվայում էր թողնում անձնական բնույթ կրող անախորժություններ, որոնք արդյունք են եղել ստոր մարդկանց ինտրիգների և հերյուրանքների>> Z24V: Դ.Անանունը գրում է. <<Շիրվանզադեն հախուռն հարձակում գործեց Վ.Տերյանի վրա՝ մեղադրելով նրան հայահալած քաղաքականության մեջ: Ես պաշտպանեցի Բարեկամիս ու բացատրեցի, որ, ընդհակառակը, Հյուսիսային Կովկասում հայ մտավորականներս նրա միջամտությանն ենք պարտական մեր կյանքը: Այս իմաստով էլ լուրեր տպագրվեցին Թիֆլիսի թերթերում: Իսկ այս ճշմարտապատում լուրերի հետևանքը: Մոսկվայում հայ փոքրոգի բոլշևիկների կողմից հալածանք Տերյանի դեմ, թե նա պաշտպանել է հակահեղափոխականներին>> Z25V: Սամարայում արդեն Մակինցյանին հղած վերջին նամակում Տերյանը գրում է. <<Ես ինձ լուսավոր ու ջինջ եմ զգում, ինչպես հավանորեն իրենց զգում էին առաջին քրիստոնյաները>> Z26V: Առաջին քրիստոնյաները՝ մատնված ու հալածված, բայց լուսավոր իրենց կերպարով ու վարքով, որոնք չարչարանքների ու նահատակության գնացին, բայց դավանափոխ չեղան:

Հիսունչորս օր տևած ծանր ճանապարհորդության կեսին մնացած պոետը մահանում է 1920 թ. հունվարի 7-ին հեռավոր, օտար Օրենբուրգում՝ կյանքի երեսունհինգը դեռ չբոլորած... Միակ հարազատը, <<անմխիթար օրերի>> ընկերը Անահիտն էր, մտատանջությունը՝ ոչ թե կյանքի հեռացող ափը, այլ հայրենիքի անհայտ ճակատագիրը, հեռու Գանձան: Հոգեվարքի մեջ որոնող հայացքով սպասում էր մեկին. ո՞ւմ տեսիլն էր հեռվից գգվել նրան: Նրա երկրային դուռը այդ պահին բացող չեղավ: Կողքին միայն Անահիտն էր, որի կրծքի տակ բաբախում էր Տերյանի ժառանգը՝ Նվարդ Տերյանը... <<Մեկնեցինք հոկտեմբերի 25-ին (1919 թ.), - պատմում է տարիներ հետո Անահիտ Շահիջանյանը: - ... Երեք շաբաթ տևեց, մինչև հասանք Օրենբուրգ... Ես արդեն տեսա, որ շարունակել ճանապարհն անկարելի է, և առաջարկեցի Վահանին, փոխանակ ուրիշ գնացք նստելու, գնալ Օրենբուրգ՝ իմ ծանոթ Օհանյանների մոտ... Ինձ վերստ մինչև Օրենբուրգ մենք գնացինք սահնակով: Երբ հասանք, նա համարյա անզգա էր... Մի ամբողջ շաբաթ աշխատում էի բժիշկ հրավիրել, բայց բժավոր տիֆի համաճարակ էր, բոլոր բժիշկները մոբիլիզացված էին... Դեղորայք չէր կարելի գտնել...>> Z27V: Քսենյա Վեբիյանը հիշում է. <<Մեր տանը խոսակցության ժամանակ նա շատ հաճախ էր հիշում <<անիծած վագոնը>>: Դեմքը մաշված էր, դալուկ, շարժումները արտաքուստ հանգիստ, սակայն ներվային... Ինքնին հարց էր առաջանում. ինչի՞ց դրդված այդ վիճակում նա ձեռնարկել էր իր դժվարին ճանապարհորդությունը>> Z28V: Ժնկում ամիսներ անց լսելով սիրելի պոետի

մահվան մասին՝ Ա.Խսահակյանը կսկիծով գրում է. <<Այդ ո՞վ հանդգնեց հանձարդ շքեղ// Հանգցնել ոգուդ աստղերը բյուրեղ...>>:

Չընդունել Տերյանի քաղաքական կողմնորոշումը՝ հիմա թերևս հեշտ է: Պատմության վերագնահատումն է պարզում անցյալի քաղաքական ուղեգծի ճիշտն ու սխալը, և այն ժամանակ դժվար էր երևակայել ազգային ճակատագրում իրար հակասող գաղափարախոսություններից մեկի ճշմարտացիությունը: Ս.Վրացյանը իր օրագրային էջերում գրառել է.<<Չեմ կարող չհիշել իմ խոսակցությունը տարիներ առաջ ֆրանս-գերմանական սահմանի վրա մի շատ կարևոր հայ բոլշևիկի հետ՝ իմ մոտիկ ընկեր և այն ժամանակ կառավարության անդամ: Բառացի հիշում եմ նրա խոսքերը.<<...Այն, ինչ որ դուք չհաջողեցիք անել, մենք պիտի անենք. մենք պիտի գրավենք Թրքահայաստանը, պիտի միացնենք Խորհրդային Հայաստանին և պիտի դառնանք Կովկասում ամենամեծ և զորավոր երկիրը: Ճիշտ է, նրան էլ<<մաքեցին, և ես չգիտեմ՝ ո՞ր է նա, թե՞ մեռած, դրա համար էլ անունը չեմ տալիս, բայց հավատում եմ նրա ասածներին: Հավատում եմ, որ հայ բոլշևիկներն էլ մեզ պես ուզում են լայնացնել Հայաստանի սահմանները. այդ բանը լսել եմ և ուրիշ պատասխանատու հայ բոլշևիկներից... Բայց այլ է ցանկանալ, այլ է կարենալ>> Z29V: Խոսքը Տերյանի մտերիմ ընկերոջ՝ Սարգիս Սրապիոնյանի (Լուկաշին) մասին է, որ զոհ գնաց 1937-ին: Տերյանի ընկերները՝ Պողոս Մակինցյանը, ձերբակալվում է 1936 թ., գնդակահարվում 1938-ին, Կարեն Միքայելյանը ձերբակալվում է 1936 թ., արստրավայրում մահանում 1941-ին, Յուլակ Խանզադյան՝ 1935 թ., Ալեքսանդր Մյասնիկյանը՝ 1925թ. ... Բոլշևիզմի մտավոր սպանդի հետքերն ամենուր են և դեռ պետք է բացահայտվեն: Մտավոր այդ սպանդին զոհ էին դառնում նաև նրանց անձնական պահոցների ձեռագրերը, որոնց մեջ՝ Տերյանի վերջին նամակներն ու հրատարակության սպասող բանաստեղծությունները:

1920-ական թթ. հալածվում էր արդեն Տերյանի գրական ժառանգությունը, հալածվում էր պրոլետգրականության դիրքերից: Տերյանի երգը չարչրկվում էր, կոպիտ դիրքերից ակնարկվում էր անգամ բանաստեղծի հիվանդությունը: <<Ներկա հայ բանաստեղծությունը մի թոքախտավոր է, որ անխուսափելիորեն դատապարտված է մահվան...>>Z30V: Հակատերյանական այդ գրոհի տարիներին բանաստեղծի անունն ու գործը օրվա հրապարակում պահպանելու համար ընկերները՝ Մյասնիկյանը, Մակինցյանը, Տերյանի քաղաքական պոեզիան փորձում էին հարմարեցնել Կոմկուսի չափանիշներին՝ այդ հիմքի վրա դնելով նաև տերյանագիտության հետագա ընթացքը:

Ամփոփում

Նաիրին՝ որպես ամբողջական Հայաստանի գաղափարագեղագիտական խորհրդանիշ, Վահան Տերյանի շնորհիվ ամրակայվեց հայ գրականության մեջ և այդուհետ դարձավ անհետացող պատմական հայրենիքի հիշողության, կորուստի ցավի և հարության հավատի գեղարվեստական հարակա պատկեր:



Ազգային բեկված կյանքի ճանապարհին Տերյանը մշտապես կանգնած էր հաստատ, միացյալ, անկախ, հոգևոր Հայաստանի վերակերտման համառ որոնումներով. դա նա ապացուցեց թե՛ գրական, թե՛ քաղաքական գործունեությամբ:

Ваан Терьян и армянский вопрос
Нарине Оганнисян
Резюме

Ключевые слова: *Наири, ополченческое движение, духовная Армения, армянский вопрос, большевистская партия, Брест-Литовск, изменения идеологической основы, подпольная деятельность, государственная командировка, жертва ориентации.*

Наири как обобщенный идейно-эстетический символ Армении, благодаря Теряну утвердился в армянской литературе и стал художественным вечным образом памяти исчезающей исторической родины, боли потерь и веры в воскресение. На трагическом пути жизни нации Терян всегда был непоколебим в настойчивых поисках возрождения единой, независимой, духовной Армении. Это он доказал как своим творчеством, так и национально-политической деятельностью.

V.Teryan and the Armenian Question
Narine Hovhannisyan
Summary

Keywords: *Nairi, the volunteer movement, spiritual Armenia, the Armenian question, the Bolshevik Party, Brest-Litovsk, changes of ideology, clandestine activity, business trip, the victim of orientation.*

It is due to Vahan Teryan that Nairi became the ideological-aesthetical symbol of all-Armenia in the Armenian literature. Hence it has been the eternal artistic portrayal of the memories about the vanishing historical homeland, losses, sorrow and belief in revival. V. Teryan always dreamt of the revival of stable, united, independent Armenia which he proved both with his literary and national-political activities.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հ. 4, Ե., 1979, էջ 175-176:
2. Ս.Սուրիապյան, Էջեր Վահան Տերյանի կյանքից, Ե., 1959, էջ 285:
3. Յուլակ Խանգադյան, Ալեքսանդր Սյանիկյան, 1926, էջ 7-8:
4. Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հ. I, Ե., 1924, էջ 24-25:
5. ԳԱԹ, Վ.Տերյանի ֆոնդ, գործ N 313:



6. Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հ. III, Ե., 1975, էջ 106-107:
7. ԳԱԹ, Տերյանի ֆոնդ, գործ N 274:
8. Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հ. I, Ե., 1924, էջ XXXIX:
9. Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հ. III, Ե., 1975, էջ 112:
10. Հ.Թամրազյան, Վահան Տերյան, Ե., 1985, էջ 108:
11. Ն.տ, էջ 160:
12. Վահան Տերյանի Երկերի ժողովածուի չորրորդ հատորում <<Ընկերներից մեկին>> գաղտնագրով նամականու հատվածները, մեր կարծիքով, հղված էին Պողոս Մակինցյանին, որն էլ առաջին անգամ 1925 թ. հրատարակեց դրանք: Ամբողջական նամակները չեն հասել մեզ: Հիշենք, որ <<Ընկերներից մեկին>> ծածկագիրը Պ.Մակինցյանը գործածեց նաև 1906 թ. հուշերում. <<Իր ընկերներից մեկի հետ անցնում է Շիրակ ...>>:
13. Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հ. IV, Ե., 1979, էջ 324:
14. Հայ ժողովրդի պատմություն, հ. VII, Ե., 1967, էջ 30:
15. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Ե., 1972, էջ 426:
16. Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հ. IV, Ե., 1979, էջ 333:
17. <<Հայաստանի կոռուպցիա>>, 1920, 15 հուլիսի, N13:
18. Жизнь национальностей", 1920, N20, 20 июня.
19. Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում, էջ 457:
20. Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հ. III, Ե., 1975, էջ 171:
21. Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում, էջ 479:
22. Ս.Սուքիասյան, Էջեր Վահան Տերյանի կյանքից, էջ 134:
23. Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում, էջ 473:
24. Ս.Սուքիասյան, Էջեր Վահան Տերյանի կյանքից, էջ 138:
25. <<Հայաստանի կոռուպցիա>>, 1920, 15 հուլիսի, N13:
26. Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հ. IV, Ե., 1979, էջ 337:
27. Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում, էջ 473-475:
28. Նույն տեղում, էջ 477-479:
29. <<Դրոշակ>>, 2008, N 2-3, էջ 64:
30. Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, հ. 6, Ե., 1967, էջ 553-554:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՃԱՆԱԶՄԱՆ ԽՆԴԻՐԸ
ՀՈՎՀ.ՇԻՐԱԶԻ «ՀԱՅՈՑ ԴԱՆԹԵԱԿԱՆԸ» ՊՈԵՄՈՒՄ

Միլվա Խաչատրյան

ԱրՊՀ

Բանալի բառեր- եղեն, ցեղասպփնություն, պահանջատեր, խիղճ, արդարություն, ազգային, մղձավանջ, ահեղասատ, ըղձասաց, հանցագործ, ոճրագործ, մարդակեր, յաթաղան, բնաջնջել, բնօրրան, հատուցում:

Հովհաննես Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմը 1915 թ. Հայոց մեծ եղենի թեման արծարծող բացառիկ չափածո ստեղծագործություն է թե ծավալով, թե գրական-գեղարվեստական կառույցի առանձնահատկություններով եւ թե նյութի խոր, համակողմանի ընդգրկմամբ ու լեզվառճական ինքնատիպությամբ: Սովարածավալ մի ամբողջ հատոր կազմող այս գրական-գեղարվեստական, նաև՝ փաստավավերագրական կոթողի կերտման աշխատանքին հայ ազգային մեծ բանաստեղծը ձեռնամուխ է եղել 1941-ին եւ լրամշակել, հղկել, ավարտին է հասցրել մինչեւ իր կյանքի վերջին օրերը:

Ինչպես վկայում է խմբագիր Հարություն Ֆելեքյանը, «Հայոց դանթեականը» պիտի լույս ընծայվեր 1984թ.: Այն արդեն տեղ էր գտել հրատարակչության թեմատիկ պլանի մեջ: Խմբագրված, պատրաստ էր հրատարակության, սակայն խափանվեց նրա լույսընծայումը եւ մնաց անտիպ մինչեւ 1990 թվականը:

Այն, որ Հայոց Մեծ եղենի մասին պատմող այս գիրքը եղել է համազգային մեծ բանաստեղծ Հովհ. Շիրազի ստեղծագործական կյանքի գլխավոր գործն ու նպատակը, վկայում է Հ. Ֆելեքյանը:

«Պոեմը խմբագրելիս զարմանքով հայտնաբերեցի շիրազյան մի բացառիկ ունակություն ևս: Աչքերի լույսը պակասել էր. ես կարդում էի, ինքը լսում էր, և էջ առ էջ առաջ էինք անցնում. մեքենագրական ամենաաննշան շեղումն անգամ ուշադրությունից չէր վրիպում: ... Նա անգիր էր ասում, ես համեմատում էի մեքենագիր տեքստի հետ, 8 հազար տողանոց պոեմն անգիր գիտեր. ...Զարմանահրաշ հիշողության վկայություն լինելուց առաջ ինձ համար սա հավաստումն էր այն իրողության, որ պոեմի ամեն մի տողը ստեղծագործական տառապանքի արդյունք է, որ այս գիրքը Շիրազը գրել է ողջ կյանքի ընթացքում, ամեն օր, ամեն ժամ: Առանձին հատվածներ անցել են ժողովրդի ձեռքը, անգիր են արվել, արտասանվել, ձայնագրվել»:¹

«Հայոց մեծ ըղձասացը» (գրականագետ Սուրեն Աղաբաբյանի բնութագրումն է) և հայոց մեծ ողբասացը, հայոց մեծ նախճիրը պատկերող մեծակտավ

¹ Հ. Շիրազ, Հայոց դանթեականը, Երևան, 1990, էջ 379:

ստեղծագործության յուրաքանչյուր տողը, հիրավի, իր գերզգայուն ու մեծ սրտի արյունով է գրել՝ հայոց նախադեպը չունեցող ողբերգությունը ապրելով ու վերապրելով որպես անձնական ողբերգություն: Արդարության սուր զգացողություն ունեցող հախուռն բանաստեղծը խորհրդային՝ ազգայինը մերժող վախի մթնոլորտում խիզախել է՝ ոգելով իր ազգի վշտի լավան: Տող առ տող, գլուխ առ գլուխ, տառապանքով կերտել է մեկ ու կես միլիոն անմեղ զոհերի գրական կոթողը՝ հանճարին տրված ի վերուստ պոռթկուն քանքարով:

Եղեռնի դժոխքը ներկայացնելուց բացի, բանաստեղծը պատկերել է նաև հայդուկային պայքարը:

«Հայոց դանթեականը» բաղկացած է նախերգանքից, 21 գլուխներից և վերջերգանքից: Պոեմի գլուխների վերնագրերը հուշում են արծարծվող նյութի մասին: Այսպես, «Գողգոթայի գիշեր», «Գիշեր խաչելության», «Անեծքի գիշեր», «Գիշեր լուսնահառաչ, պառնասախեղդ գիշեր», «դժոխատու գիշեր», «Լռության գիշեր», «Մեծ մռուսչի գիշեր» եւ այլն:

Պոեմի յուրաքանչյուր չափածո գլխին նախորդում է հրապարակախոսական շնչի արձակ նախաբանը, ուր շիրագյան պատկերավոր խոսքն ստեղծում է այն զգացողությունը, ասես արձակ բանաստեղծական խոսք ես ընթերցում: Իտալացի բանաստեղծ Դանթեի, ով իր հայտնի ստեղծագործության մեջ պատկերել է դժոխքը, և հայոց մեծերի Գ. Նարեկացու, Կոմիտասի, Անդրանիկ՝ զորավարի, Հովհ. Այվազովսկու և մյուս երևելիների հետ «փոքր Հովհաննեսը»՝ Հովհաննես Շիրազը, մտքի թևով «շրջագայում է» պատմական հայրենիքում, ուր տեղի է ունեցել մարդկության պատմության մեջ ամենամեծ ոճիրներից մեկը՝ 1915-ի Հայոց ցեղասպանությունը:

«Հայոց դանթեականը» տեսլաողբային դատաստանամատյան է, որը մարդասեր բանաստեղծը պարզել է աշխարհին՝ դատապարտելով ամենից առաջ մեծ տերություններին, որոնց հանցագործ անտարբերության արդյունքում, իր պատմական բնօրրանում, թուրքական բռնապետության քմահաճույքով բնաջնջվել է մեկ ու կես միլիոն հայ՝ հրի ու սրի մատնվելով ամենավայրագ ձևերով: Պոեմի գաղափարական ուղղվածությունը խտացված է «Վերջին գիշեր» վերտառությամբ պոեմի վերջին գլխում: Բերենք երկու նախադասություն.

«Ով աշխարհ, այս եղեռնը քո խղճի վրա է ծանրացած: Աչքերդ, թեն չոր, բայց հայոց այս մշտախարոյկ ցավերի և տառապանքների, խոցերի ու վերքերի վկան են, իլված հողերի ու չթաղված դիակերների վկան են... բայց թող երկնառաք անեծքս հրաբխվի ձեր ականջների մեջ՝ թե նորից լռեք»: «Վերջերգանք»-ից ներկայացնում ենք մեկ հատված

*Ես այս դարի սրտին պիտի
Փորագրեմ, որպես վերքեր,
Որպես հետքերն հայոց վշտի՝
Երեք միլիոն հայ անուններ,
Որպես մեղքերն հողագնդի,*

Երեք միլիոն անմեղ զոհեր,
Որ մորթվեցին յաթաղանով
Քար մարդկության աչքի առաջ,
Հարբած հայ ծով արյան գինով՝
Այն օրերում հայահառաչ,
Որ դարերից ծանր են վշտով՝
Հայաստանով այն ամայի,
Խլված հազար լեռ ու դաշտով,
Խլված բախտով ամեն հայի:

...

ՈՒ ոսոխի սրտին պիտի
Ես դեռ փորեմ, փորեմ, փորեմ
Որպես վիհերն Արարատի՝
Երեք միլիոն հայ անուններ,
Անմեղ, ինչպես ռին իմ սրտի,
Բնչպես մանուկ մորթված ձյուններ՝
Մորթված հին ցեղն Արարատի:
Այս դեռ պիտի փորեմ, փորեմ՝
Որ հովանա վերքն իմ սրտի՝
Կոտորածներն ու հայոց դժխեմ՝
Մեղքերի մեղքն հողագնդի¹

Համամարդկային վեհ ըղձանքներով տրոփող բանաստեղծի սրտում տեղ չունի նեղ չարությունն ու վրիժառությունը: Պոեմի յուրաքանչյուր գլխում՝ դիմելով այս կամ այն ազգին ու պետությանը՝ Ամերիկային, Անգլիային, Գերմանիային, Ֆրանսիային, Իտալիային, <<հյուսիսի հսկա>> բարեկամ Ռուսաստանին, մերձ հարեւան ու <<եղբայր>> Վրաստանին, Չինաստանին, Հնդկաստանին, Պարսկաստանին և շատ այլ երկրների ու ժողովուրդների, ոգեկոչելով մարդկությանը հայտնի այդ ժողովուրդների հանճարներին՝ բանաստեղծը արդարամտության ու սթափության կոչ է անում՝ հիշեցնելով, որ անպատիժ հանցանքը նոր հանցանքների համար պարարտ հող է հանդիսանում:

Դատապարտում է մեծ տերությունների անհասկանալի ու հանցագործ անտարբերությունը՝ կասկածի տակ առնելով ամերիկյան «մարդասիրությունը», չմոռանալով, սակայն, հայ որբերին տված հացի կտորը: Նա ահագանգում է ողջ մարդկությանը՝ նոր եղեռներն ու ցեղասպանությունները կանխելու, «մարդկության տանը»՝ Երկիր մոլորակին սպառնացող պատերազմի

¹ Հ.Շիրազ Հայոց դանթեականը, էջ 374:

հրձիգներին սանձահարելու և մարդկության խիղճը մշտապես արթուն պահելու. «Արթնացեք մարդիկ, որտեղ քնած մի խիղճ կա՝ զարթնեցրեք, բացեք խղճի աչքերը, արթնացրեք խղճի խիղճը՝ մարդկային մեծ բանականությունը...»:¹

«Բռնության ժայռի մեջ» խորհրդային խավար գնդանում, բանաստեղծը հնչեցնում է հույսի, հավատի և արդարության մեղեդին՝ հանդես գալով իբրև սրախողխող արված տասնյակ հազարավոր անմեղ մանուկների ու մայրերի, ազգի սերունդի՝ մտավորականության, իր հայրենիքում մոթված հայության պահանջատեր, կույր ու խուլ ձևացող աշխարհին ուղղելով իր բանաստեղծական ցավակեզ խոսքը: Աշխարհը պետք է և պարտավոր է դատապարտել ոճրագործին: Ազգային զարհուրելի ողբերգության աշխարհաճանաչման խնդիրն է արծարծել բանաստեղծը «Հայոց դանթեականը» պոեմում՝ մերժելով «եղկելի ու նողկալի անտարբերության սառույցը»:

Պոեմի «գեղարվեստական առաքելությունն» ակնառու է «Մեծ մոունչի գիշեր» գլխին նախորդող արձակ նախաբանում:

Համառոտ ներկայացնենք այն. «Ես ահեղ դատաստանամատյանն եմ արցունքաշարով որմնաշարում, որին դիպչելով պիտի փշրեն իրենց բուրձակատները լույսի օրերն ու դարերը... սա հրաբուխն է այն զոհասրտերի, որոնք չկարողացան լույսի ընդդեմ ժայթքել, աշխարհի լույսի հողը ծանր լինելու ժայռե պատճառով...»:

Ես խարանել եմ ուզում վարանողների լույսի պղծաճակատը... լացն ու ողբն են անչափելի. Հայոց եղեռնն է անչափելի,- Մասիսի հրաբուխն են իմ այս ողբամատյանի բյուրավոր ջարդված բերանների շրթունքները Աստծո կույր աչքի մեջ շատրվանում... քանզի անարդարություններն են անչափելի>>:²

Քաջատեղյակ լինելով հայ ժողովրդի պատմության թե հերոսական, և թե արյունոտ էջերին և այդ պատմությանն առնչվող նրա բարեկամների ու բարեկամ ներկայացող պետությունների վարած քաղաքականությանը՝ իր «փոքր ածուխ» վշտակիքը աշխարհին է պարզում Թուրքիայի իրագործած ոճրագործությունն իր ժողովրդի նկատմամբ, պահանջելով ճեղքել «պիղծ լույսի պատը» և իրերը կոչել իրենց անուններով. ահեղ վրեժասատով արդարության աստյան բացել և «եղեռնագարկ» իր ժողովրդի բռնազավթված բնօրրանը վերադարձնել տիրոջը: «Շուրթերին դողացող» գայրույթով նույնիսկ թշնամուն՝ թուրքին է դիմում՝ «մթնուղեղ, խաբված խաժամուժին», և հարց հղում. «Ինչպե՞ս չանիծեն քեզ»:

Չգիտես ուսկից «արտավիժած այդ ցեղասպանը», որ որևէ արժեք չի տվել «մարդկության գանձարանին», ցայսօր աշխարհի աչքի առաջ ուրանում է իր նախահայրերի նախաձեռնած նախաճիրը:

¹ Զ. Շիրազ, Հայոց դանթեականը, էջ 236:

² Նույն տեղում, էջ 290:



Այս լկտի ուրացման և պատմական ճշմարտությունը անտեսողների դեմ է ընդվզում Բանաստեղծը «Հայոց դանթեականը» պոեմում:

Պոեմի գլուխներին նախորդող արձակ նախաբաններում, դատապարտման խոսքին զուգահեռ, Բանաստեղծը վկայակոչել է նաև պատմական վավերագրեր՝ առ այն, որ 1915-ին իրագործված հայոց ցեղասպանությունը Թուրքիայի կողմից պետական մակարդակով ծրագրած, նախապես մշակված հայաջինջ քաղաքականության ծրագիր է: Դիմելով Օսմանյան Թուրքիայի դաշնակից Գերմանիային՝ Հովհ. Շիրազը գրում է. «Արթնացող դեմոսի ոգովդ դու էլ անեծքով թքիր խելացնոր անցյալի աչքի մեջ... թող փոքրիկ տղան մեծերիդ ձեռքով ուրիշի ոչ մի վարդ չքաղե այլևս... և չիմանա, թե չգիտեմ, որ մեղսակից ես հայ կոտորածներում՝ անգղ յաթաղանի հետ...»:¹

Ակնհայտ է հուսախաբությունը Ռուսաստանին ուղղված տողերում: Նշվում է ռուսական զորքերի Ղարսից, Վանից, Կարինից նահանջի և անգեն ժողովրդին թուրք մարդակերների երախում թողնելու մասին, իսկ որպես «հատուցում մեղքի»՝ պահանջումը Մասիսի, ասել է թե՛ Արեւմտահայաստանի ազատագրումը: «Երբ աշխարհում գողի ու գայլի գիշերն էր թագավորում, ելավ գայլագլուխ յաթաղանը, իմ՝ դարերով արդեն փոքրացած հայ ազգին գլխատելու... Հայոց քարերն էլ լացին, բայց այլոց խիղճը քնած մնաց», - մորմոքում է Բանաստեղծը «աստղերի պես բազմամիլիոն, բայց աստղերի պես խավարում գտնվող» հնդիկ ժողովրդին ուղղված իր խոսքում:²

Փաստորեն, «Հայոց դանթեականը» պոեմի գերակա խնդիրը 1915-ին Օսմանյան Թուրքիայի կողմից սանձազերծված հայոց ցեղասպանությունը դատապարտելն ու աշխարհին ճանաչելի դարձնելն է, ինչը եղել է հայոց ահռելի վշտի բեռնան տակ կքած ժողովրդական Բանաստեղծի կյանքի գերագույն նպատակը:

«Պոեմում մեկը մյուսի հետևից վեր են հառնում եղեռնապատումի տեսլապատկերները՝ սարսափի, զարհուրանքի, չարչարանքի պատկերներ, որոնց առաջ նսեմանում են անգամ դանթեական դժոխքի գույները, իսկ դրանց ստեղծողը Դանթե Ալիգիերին, այդ ողբերգական պատկերների ահռելի չափերի առաջ կարկամում է:

Խղճի ու Բանականության, մարդկայնության ու ասպետականության կանոններով հյուսված մեղադրական թուղթ, որը պետք է գրվեր, չէր կարող չգրվել», - գրել է գրականագետ Մուրեն Աղաբաբյանը «Հայոց դանթեականը» պոեմի մասին:³

¹ Նույն տեղում, գլուխ 12, էջ 149:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 372-373:



Այո, պիտի գրվեր և պիտի Հովհ. Շիրազը գրեր, հայոց մեծ սգակիրն ու ըղձասացը, աննախադեպ ժողովրդայնություն վայելող հայոց մշտաբերուն խիղճը, հայամերժ ժամանակներում հայ ոգու անթեղված կրակը բորբոք պահող, ժողովրդի անհուն սիրով թագադրված դասական քնարերգության արքան:

«Հայոց դանթեականը» պոեմն իր հոգու բովանդակ էությանը հայոց վիշտն ապրած մեծ բանաստեղծի հզոր պոռթկումն է՝ ընդդեմ բոլոր ժամանակների ցեղասպանությունների ու բռնությունների: Այն պատմական վավերագիր է, յուրօրինակ դատաստանամատյան և գեղարվեստական հուշարձան 1915թ. մեկ ու կես միլիոն անմեղ հայ նահատակների շիրիմներին:

Ամփոփում

Հայ մեծ բանաստեղծ Հովհ. Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմի գլխավոր խնդիրը, որն արձարծված է սույն հոդվածում, 1915թ. ցեղասպանության դատապարտումն ու այն համայն աշխարհին ճանաչելի դարձնելն է: Պոեմը գեղարվեստական հուշարձան է՝ մեկ ու կես միլիոն անմեղ նահատակների հիշատակին:

РЕЗЮМЕ

Задача миропознания армянского геноцида в поэме Ов. Шираза

«Айоц Дантеакан»

Сильва Хачатрян

Резюме

Ключевые слова: *Геноцид, совесть, справедливость, национальный кошмар, преступник, людоед, ятаган, уничтожение, колыбель, расплата*

В статье "Проблема миропознания геноцида" в поэме Ов.Шираза "Айоц дантеакан" обсуждается и рассматривается цель и задача поэмы великого армянского поэта Ованеса Шираза, которая является осуждением Армянского геноцида 1915года.

Поэма имеет мировое значение и является памятником о памяти полтора миллиона невинных армянских жертв геноцида 1915.

The Task of Armenian Genocide World Recognition in H.Shiraz Poem

"Hayoc Danteakan"

Silva Khachatryan

Summary

Keywords: *genocide, conscience, justice, national, horror, a criminal, cannibal, yataghan, the destruction, cradle, revenge*

In the article "The Problem of World Recognition of the Armenian Genocide" we discuss and consider the purpose and task of the great Armenian poet Hovhannes Shiraz "Hayots Danteakan" which is a condemnation of the Armenian Genocide of 1915.

The poem has a global significance and is a tribute to the memory of one and a half million innocent victims of the Armenian genocide of 1915.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Յաիր Աուրոն
փ.գ. դ., պրոֆեսոր
Իսրայելի Բաց համալսարան

Բանալի բառեր. 1915, Կոստանդնուպոլիս, ոստիկանություն, հայ մտավորականություն, տեղահանում, անապատ, չեթե, քուրդ, հավատափոխություն, ցեղասպանություն:

1915 թվականն առանձնապես ոչ մի փոփոխություն չմտցրեց Կովկասյան ռազմաճակատում: Հիմնական մարտական գործողություններն ընթանում էին այլ ուղղություններով, իսկ երբ անուշադրության էր մատված դրանց հետ կապ չունեցող ամեն ինչ, գումարած կայսրության տարբեր շրջաններից դիվանագիտական կորպուսի մեծ մասի էվակուացումը (մեկնեցին մոտ վաթսուհինգ դիվանագետներ), ապա ստեղծվեցին հարմար պայմաններ լայնածավալ ցեղասպանություն իրագործելու համար: Սկզբում 75-100 հազար հայեր զորակոչվեցին թուրքական բանակ և Էնվեր փաշայի հրամանով ուղարկվեցին <<բանվորական գումարտակներ>>, իսկ այնտեղ ենթարկվեցին պլանաչափ ոչնչացման:

1915 թվականի ապրիլի 23-ի լույս 24-ի գիշերը Կոստանդնուպոլիսի ոստիկանությունը ներխուժեց հայ մտավորականության ներկայացուցիչների տները: Երկու հարյուր քառասունհինգ երևելի հայեր՝ քաղաքական գործիչներ, գրողներ, ուսուցիչներ, իրավագետներ և այլք, ուղեկցվեցին ոստիկանական բաժանմունքներ և ապա տեղահանվեցին: Եվս մի քանի հարյուր հոգի ձերբակալվեց հաջորդ օրերի ընթացքում:

Առաջնորդների ոչնչացումը լիակատար շփոթմունքի մեջ գցեց հայ համայնքին՝ նրան զրկելով դիմադրելու կարողությունից: Այդ նույն սցենարը՝ առաջին հերթին ընտրախավի ոչնչացմամբ, կրկնվեց հայկական բոլոր վեց գավառներում, որտեղ ապրում էր հայ բնակչության մեծ մասը, ինչպես նաև Կիլիկիայում: Այդ ժամանակից ի վեր ապրիլի 24-ը հայերի համար խորհրդանշում է ցեղասպանության սկիզբը և ամեն տարի նշվում որպես Ցեղասպանության գոհերի հիշատակի օր:

1915 թվականի հունիսի սկզբին թուրքական կառավարությունը հրաման արձակեց, որն այդպես էլ չվավերացվեց պառլամենտի կողմից, թուրքական ճակատի մատակարարման գծին մոտ շրջաններից (այսինքն՝ փաստորեն ցանկացած տեղից) ոչ թուրք բնակչության տեղահանման մասին: Հրամանն ուղղված էր հայերի դեմ, թեև նրանք փաստաթղթում հիշատակված չէին: Ոչ հայ փոքրամասնություններն ազատված էին հրամանը կատարելուց: Տեղահանությունը վերաբերում էր ոչ միայն այն հայերին, որոնք ապրում էին Ռուսաստանի դեմ ռազմական գործողությունների շրջաններում:

Միջերկրականի ծովեզերքի Կիլիկիայի հայերը, որոնք հեռու էին մարտի դաշտերից, 1915 թվականի ընթացքում նույնպես տեղահանվեցին (այդ մասին տես «Մուսա լեռան քառասուն օրը» վեպում), և նրանց մի մասն առաջին հերթին արտաքսվածների թվում էր:

Քիչ ավելի վաղ Վանի իրադարձությունները կառավարության համար հարմար առիթ դարձան՝ հայտարարելու հայկական դավաճանության անժխտելի փաստի մասին: Թուրքական բանակի քրդական զորամասերն արդեն պատրաստ էին ոչնչացնելու Արևելյան Անատոլիայում քրդերի հետ ապրող հայ բնակչությանը: Ջարդերից ողջ մնացածները փախան Վան: Այնտեղ հայկական մեծամասնությանը հաջողվեց իշխանությունը վերցնել իր ձեռքը, ամրություններ կառուցել և նախապատրաստվել թուրքական բանակի հարձակմանը: Մայիսի 18-ին հայերը ողջունեցին ռուսական զորքերի մուտքը քաղաք, բայց շուտով ճակատում անսպասելիորեն փոխվեց իրադրությունը, և օգոստոսի 4-ին թուրքերին հաջողվեց հետ խլել Վանը: Հիվանդ և ծեր հայերը, որոնք չկարողացան հեռանալ քաղաքից, գլխովին մորթվեցին գազազած թուրքերի կողմից:

Հայերի «էվակուացման մասին հրամանի» կատարումը, որը նկատի ուներ տեղահանություն և դրան հետևող ոչնչացում, դրված էր ոստիկանության վրա, ինչպես նաև **չեթեի**՝ <<Հատուկ կազմակերպության >>, որն ստեղծված էր արդարադատության և ներքին գործերի նախարարությունների կողմից: Այդ <<Հատուկ կազմակերպությունը>> կիսառազմական կազմավորում էր՝ համալրված հիմնականում համաներված քրեական հանցագործներից: Հայ բնակչության տարհանումը ու աքսորումը ցեղասպանության գլխավոր փուլերից մեկն էր: Տարհանման մասին հայտարարում էին հայկական քաղաքների և գյուղերի ողջ բնակչությանը: Համաձայն պատերազմական ժամանակի օրենքների՝ բնակչությանը հավաքվելու համար տրվում էր մի քանի օր, թույլ էր տրվում կարողության դուրսբեկումը: Հայերին նաև խոստանում էին, որ նրանց տները և սեփականությունը պահպանության տակ կգտնվեն մինչև նրանց վերադարձը:

Դրանից հետո նրանց հավաքում էին շարասյուներում և հրամայում էին շարժվել հարավ՝ Սիրիական անապատի ուղղությամբ: Ցեղասպանությունը ներառում է մի քանի փուլեր: Քաղաքներից ու գյուղերից դուրս գալուց շատ չանցած՝ տասնհինգամյա և ավագ տարիքի տղամարդկանց առանձնացնում էին մնացածներից (հարկ է նշել, որ քսանհինգից քառասուն տարեկան տղամարդիկ բանակ էին զորակոչվել և արդեն ոչնչացվել), քշում էին մի կողմ և գնդակահարում կամ էլ սպանում ավելի կոպիտ մեթոդներով:

Կանայք, երեխաները և ծերերը դատապարտված էին ավելի դանդաղ ու տանջալից մահվան: Նրանց ստիպում էին ոտքով անցնել հարյուրավոր կիլոմետրեր: Շարասյուները գնում էին դժվարանցանելի վայրերի միջով, կլիմայական ծանրագույն պայմաններում և մշտապես ենթարկվում չեթեի,

Ժանդարմների ու տեղական բնակչության՝ հիմնականում քրդերի հարձակումներին: Այն կանայք ու երեխաները, որոնց հաջողվում էր ողջ մնալ, առնանգվում էին և հանձնվում հարուստ թուրքերի ընտանիքներին՝ որպես ծառաներ (փաստորեն՝ ստրուկներ). շատերը վաճառքի էին հանվում անազատների շուկայում: Երեխաներին և կանանց բռնաբարում էին, մայրերին ստիպում էին ճանապարհին թողնել մահացող երեխաներին: Ամբողջ ընտանիքներ կյանքին վերջ էին տալիս ինքնասպանությամբ:

Այդ ծանր ու երկար ճանապարհի ընթացքում տեղահանվածներն ստանում էին նվազագույն քանակի ջուր և ուտելիք:

Քաղցն ու ծարավը, շոգն ու ցուրտը, ինչպես նաև մահացածներին չթաղելու պատճառով առաջացած համաճարակները մեծացնում էին զոհերի թիվը: Գնալու ճանապարհը տանում էր հյուսիսային Սիրիա՝ Հալեպ քաղաքի մոտով: Այն քչերը, ովքեր հասան մինչև այդ վայրը, ուղարկվեցին Իրաքի և Սիրիայի անապատային շրջաններ: Անապատում՝ Դեյր-էլ-Ձոր քաղաքի մոտակայքում, ողջ մնացածներից շատերին սպանեցին: Շատ քչերը հասան մինչև ճանապարհի վերջը: Համաձայն գնահատականների՝ կենդանի մնացածները մոտ տասը տոկոս էին կազմում, իսկ որոշ շարայություններում՝ նույնիսկ ավելի քիչ (1915 թվականի հոկտեմբերի 16-ին Հալեպում ամերիկյան հյուպատոսի՝ ԱՄՆ պետքարտուղարին ուղղված զեկույցը բացահայտում է սահմոկեցուցիչ պատկերի չափերը մեկ շարայան օրինակով, ըստ որի՝ 18 հազարից մոտ 150 կանայք և երեխաներ, յոթանասուն օր ճամփա անցնելուց հետո հասան Հալեպ):

1915 թվականի հուլիսին հայերն արդեն վտարված էին արևելյան բոլոր վեց գավառներից, և նրանց մեծամասնությունը ոչնչացված էր: Տարվա երկրորդ կեսի ընթացքում տեղահանություններն իրականացվեցին Կիլիկիայի հայկական շրջաններում:

Այդ տարվա ապրիլից մինչև նոյեմբեր (հնարավոր է՝ սեպտեմբեր) հայերին ոչնչացնելու ծրագրի մեծ մասն արդեն իրագործված էր: Համաձայն գնահատականների՝ այդ ժամանակահատվածում ոչնչացվել են 600-800 հազար հայեր: Զոհերի ընդհանուր թիվը, տարբեր գնահատականներով, կազմում է 600 հազարից մինչև երկու միլիոն: ՄԱԿ-ի խտրականության կանխման և փոքրամասնությունների պաշտպանության գծով ենթահանձնաժողովը 1985 թվականին զոհերի թիվը գնահատեց <<առնվազն մեկ միլիոն>>: Իսկ հայկական աղբյուրները հաստատում են, որ 1915-ից 1923 թվականներն ընկած ժամանակահատվածում սպանվել է մեկուկես միլիոն հայ: Որոշ հետազոտողներ կանգ են առնում 800 հազարի վրա, երբ ուրիշները պնդում են, որ 1894 թվականից մինչև 1923-ը սպանվել է առնվազն 1 800 000 հայ, և ևս մեկ միլիոնը ճարահատյալ լքել է պատմական հայրենիքը:

Մինչև հիմա բանավեճեր են ընթանում ներկայացված իրադարձությունների ժամանակ թուրքիայում հայ բնակչության ելակետային թվի մասին, ինչպես և այն մասին, թե արժե՞ հայկական ցեղասպանությունը թվագրել 1894-1923 թվականներ ժամանակահատվածին թե՞ սահմանափակվել 1915-1916



թվականներով: Ամեն դեպքում, նույնիսկ ամենակուպիտ գնահատականը խոսում է այն մասին, որ ոչնչացվել է Թուրքիայի հայ բնակչության մոտ կեսը՝ աշխարհի յուրաքանչյուր երրորդ հայը:

Մինչև 1915 թվականը Թուրքիայում բնակվում էին մոտ երկուսուկես միլիոն հայեր: 1990- ականների սկզբին նրանց թիվը կազմում էր 40-60 հազար: Ոչնչացվել է ոչ միայն մի ողջ ժողովուրդ, այլև կենտրոններ: Թուրքերը նշանակալից ջանքեր են գործադրել, որպեսզի ջնջեն հայ մշակույթի բոլոր հետքերը, արմատախիլ անեն հայերի ներկայության բուն հիշողությունը այն հողերում, որոնք պատմական Հայաստանի սիրտն էին:

Հայերի փոքրիկ խմբերի հաջողվեց խուսափել տեղահանությունից: Այն փաստը, որ Կոստանդնուպոլսի և Իզմիրի ոչ բոլոր հայերն էին արքայազններ, բացատրվում է տարբեր պատճառներով՝ ներառյալ այդ քաղաքներում արտասահմանյան ներկայացուցչությունների առկայությունը: Ոմանց թույլ տրվեց մնալ՝ շնորհիվ մասնագիտական հմտությունների, մանավանդ նրանց, ովքեր կարող էին պիտանի լինել պատերազմի ժամանակ: Մյուսներին առաջարկեցին մահմեդականություն ընդունել, ինչին որոշ հայեր համաձայնվեցին: Ոմանք էլ ողջ մնացին պարզապես այն պատճառով, որ բարեկամներ ունեին թուրքերի, քրդերի և հույների մեջ, որոնք, անհավատալիորեն վտանգվելով, իրենց մոտ էին թաքցնում երեխաների, երբեմն էլ՝ նույնիսկ ամբողջ հայ ընտանիքներ:

Բացի դրանից, բավական շատ հայերի հաջողվեց փրկվել փախուստով. օրինակ, սահմանամերձ տարածքներում ապրողները փախչում էին Ռուսաստան: Շատ ավելի փոքր էր նրանց թիվը, ովքեր փորձեցին դիմադրություն ցույց տալ և կենդանի մնալ, ինչպես պատահեց հայտնի Մուսա լեռան վրա, որի պաշտպաններն իրենց ընտանիքներով փրկվեցին ֆրանսիական ռազմաճակատի կողմից: Փրկվածների թվին պետք է ավելացնել և նրանց, ովքեր կարողացան դիմանալ բազմամսյա երթի տանջանքներին և փախստականների ճամբարների պայմաններին:

Հայկական ողբերգության չափերը գիտակցելու համար կարելի է նաև չհաշվարկել զոհերի ճշգրիտ թիվը, որը, շատ հավանական է, այդպես էլ երբեք հայտնի չի դառնա: Շատ ավելի կարևոր է, որ խոսքը մի ժողովրդի ավելի քան կեսի համակարգված ոչնչացման անժխտելի փաստի մասին է, ժողովուրդ, որն արդյունքում բռնի կերպով վտարվեց այն տարածքից, որտեղ ապրել էր ավելի քան երեք հազարամյակ: Ոչ պակաս կարևոր է այն, որ այդ բոլոր գազանությունները կատարվեցին Թուրքիայի պաշտոնական իշխանությունների կողմից:

Ամփոփում

Մույն հոդվածում կոնկրետ փաստերի և իրադարձությունների հիման վրա հաստատվում է, որ 1915-1923 թվականներին Օսմանյան Թուրքիայում պաշտոնական իշխանությունների հրամանով ոչնչացվել են ոչ միայն իրենց



պատմական բնօրրանում ապրող մեկ ու կես միլիոն հայեր, այլև ավարվել ու ավերվել են հինավուրց քաղաքներ, վանքեր ու եկեղեցիներ:

Հեղինակը ցավով ընդգծում է, որ քաղաքակիրթ մի ժողովուրդ բռնի կերպով վտարվեց այն տարածքից, որտեղ ապրել էր հազարամյակներ շարունակ: Աշխարհը պետք է ճանաչի Հայոց ցեղասպանությունը՝ հանուն աշխարհում բոլոր ցեղասպանությունների ժխտման:

Армянский геноцид

Яир Аурон

Резюме

Ключевые слова: 1915, Константинополь, жандармерия, армянская интеллигенция, выселение, пустыня, курд, вероотступничество, геноцид.

В данной статье на основе конкретных фактов и событий утверждается, что 1915-1923 годах в Османской Турции по приказу официальных правителей были уничтожены не только полтора миллиона армян, проживающих исторических землях, но были ограблены и уничтожены старинные города, села, монастыри, церкви:

Автор с болью подчеркивает, что цивилизованный народ целиком был насильственно изгнан из тех земель, на которых жил тысячелетиями.

Мир должен признать Армянский геноцид ради недопущения новых геноцидов.

Armenian Genocide

Yair Anvon

Summary

Key words: 1915, Constantinople, gendarmerie, Armenian intelligentsia, apostasy, genocide.

In the given article the author deals with research into genocide in the Ottoman Empire in 1915-1923, and taking as a basis certain facts and events, states that upon the order of the official rulers 1.5 million of Armenians were exterminated and ancient cities, towns, monasteries and churches were exposed to plunder and ruin.

The author stresses the fact that the whole civilized nation was violently exiled from the land it had inhabited for thousands of years.

The world must recognize the Armenian genocide to prevent the occurrence of a new genocide.

ՀԱՅԴՈՒԿԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ
(ըստ Խ.Դաշտենցի «Ռանչպարների կանչը վեպի»)
Սիրուն Բաղդասարյան

բ.գ.թ., դոցենտ
ԱրՊՀ

Բանալի բառեր - Հայդուկ, հերոսական պայքար, ազատություն, տաքատ, բաճկոն, երդում, թուրքական բռնակալություն, Ավետարան, պաշտոն, մականուն

Հայդուկների պարտիզանական շարժումը ծնվեց թուրքական բռնակալության սաստկացող ճնշումների, նրանց իրավունքների և ազատության բացահայտ ոտնահարումների, 1896 թվականից սկիզբ առած պարբերական կոտորածների ազդեցության տակ:

Դարի հոգեբանական համայնապատկերի վրա պատկերված հայդուկներն ասես ոգեղենացած, մոնումենտալ հուշարձաններ լինեն, որոնց կողքով ընթերցողն անհնար է, որ անտարբեր անցնի: Ովքե՞ր են հայդուկները և ո՞րն է նրանց առաքելության նպատակն ու գործողությունների կերպը, նրանց հոգեբանությունն ու բարոյական նկարագիրը: Այս հարցերին սպառնիչ պատասխան տվեց գեղագետ Խ. Դաշտենցն իր «Ռանչպարների կանչը» վիպապոեմ:

«Սասունցի Դավիթ» ժողովրդական էպոսից մինչև Դաշտենցի երկերն ընկած հեռավորությունը մարդկային կյանքի ավելի քան հազար տարվա պատմություն ունի: Այս ժամանակի մեջ մաքառած ու գոյատևած «Էրզրի» մարդկանց կյանքում շատ բաներ են փոխվել, ավերվել ու կորուսվել, սակայն նրանց հոգու մաքրությունը, բարոյականության սկզբունքներն ու գործելու կերպը մնացել են անասա՛ն: «Էրզիրը» միայն կորուսյալ եզերք չէ, այն մարդկային խիղճ է, բարոյականություն, արդարամտության չափանիշ: Այս մասին Ջ.Ավետիսյանը գրել է «Էրզրի գաղափարը կրող մարդը չի կարող դավաճանել, խորամանկել, չի կարող չատել ու չսիրել: Անարդարությունն ու կեղծիքը Էրզրի մարդկանց թշնամին է, Էրզրի լեզուն ու երգը անեղծ է, քաղցրահունչ: Նրա մարդիկ ազգերի բարձր ու հավասար սկզբունքների վրա հենվող եղբայրության ջատագովներ են: Երեխայի պես անկեղծ են, անմիջական ու նաև՝ համառ, մեծի պես իմաստուն են և աշխարհանվեր, ինչպես Սանասարի որդին, թռն ու ծոռը»¹:

Խաչիկ Դաշտենցի գլուխգործոցի՝ «Ռանչպարների կանչի» հերոսների ճակատագրերը տոհմի ու ազգի ճակատագրեր են, որտեղ մարդկային ճակատագիրը կադավարված է ժողովրդականին:

«Հայդուկ» բառը հայկական կյանք մուտք գործեց անցյալ դարի վերջին տասնամյակներում՝ *թուրքական դաժան լծի դեմ պայքարի ելած մարտիկ* նշանակությամբ: Այն փոխ է առնված բալկանյան ժողովուրդների պատմական փորձից, նույն իմաստով գործածական է հատկապես Բուլղարիայում և Հարավսլավիայում: Հայդուկ գրական փոխառությանը զուգահեռ հայկական կյանքում գործ են ածվել «կաչաղ», «ֆիդայի»-ժողովրդական մտածողությամբ իմաստավորված բառերը, որոնք ծագում են *ավազակ*, ապստամբ, անձնագրի բառերից: Թուրքական տիրապետության

¹ Ջ. Ավետիսյան, Նորագույն գրականության զարգացման միտումները, Երևան, 2003թ., էջ 152:

դեմ ուղքի ելած հունական ժողովրդական վրիժառուներին նույնպես ավագակ էին անվանում: Մեծանուն վիպասան Րաֆֆին մտադիր էր «Կայծերը» վերնագրել «Հայդուկներ» և վեպի առաջին տպագրության սկզբում տեղադրել է մի փոքրածավալ, բայց ուշագրավ առաջաբան «Հայդուկներ» վերնագրով, որը հայ իրականության մեջ տվյալ պատմաքաղաքական երևույթի թերևս միակ խոր և բնորոշ գնահատականն էր. «Հայդուկը բնական արտահայտությունն է բռնակալության լծի տակ ճնշված, հարստահարությունից տանջված և յուր մարդկային բոլոր իրավունքները կորցրած ժողովրդի կյանքի, -գրում է Րաֆֆին: -Հայդուկը ստրուկի բողոքն է իշխողի բարբարոսության դեմ... Հայդուկը հասարակ ավագակից որոշվում է գլխավորապես նրանով, որ նա ոչ թե հափշտակության ազահությունից դրոշված կամ հանգամանքներից ստիպված է գործադրում իր արյունահեղ արհեստը, այլ նրա սրտի հետ կապված է խորին ազգային զգացմունք և ազատության բաղձանք»¹:

Արևմտյան Հայաստանի աշխատավոր ժողովուրդը ընդունակ էր հերոսական պայքարի՝ հանուն ազատության, սակայն նա զուրկ էր պայքարի տեսականորեն մշակված ծրագրից, աղոտ պատկերացում ուներ ստրատեգիայից ու տակտիկայից: Բացի դրանից չկար որևէ առաջադեմ կազմակերպություն, որ կարողանար գլխավորել ժողովրդական այդ ինքնաբերական շարժումը: Հայդուկի հավաքական կերպարի մասին որոշակի պատկերացում ընթերցողը կազմում է Անդրանիկի և Մախլուտոյի կյանքի ու գործի մասին կարդալով, չնայած մյուս հայդուկների կերպարները նույնպես ունեն հատուկ ֆիդայական գծեր: Վիպասքում տեղ են գտել բազմաթիվ հայդուկների կերպարներ՝ Արաբոն, Աղբյուր Սերոբը, Սոսեն, Անդրանիկը, Գևորգ Զառչը, Սպաղանաց Մակարը, Հրայր Դժոխքը, Սմբատը, Գալեն, Չոլոն, Մորուք Կարոն, Արծիվ Պետոն, Կայծակ Անդրեասը, Տեր Քաջի Ադամը, Կոտո Հակոբը, Լաճկանցի Արթենը, Առդա Զորիկը, Ալադին Միսակը, Սեյդո Պողոսը, Արտոնքա Զնդոն, Մոսե Իմոն, Բամբակու Մելոն, Փեթարա Մանուկը, Շենիքցի Մանուկը, Փեթարա Իսրոն, Թադեն, Կուրավա Շոնոն...

Ընդհանուր տպավորությունն այն է, որ Դաշտենցը վիպասքի հիմնական հատվածներում կարողացել է լայնորեն բացահայտել ու իմաստավորել հայդուկ-պարտիզանների սոցիալական և հոգեբանական վարքագիծը: Հասկանալի է, որ դա սոցիալական մի բարդ, պատասխանատու աշխատանք է, որը պսակվել է հաջողությամբ: Կերպարի անհատականացման գաղտնիքը հեղինակի կարողությունն է՝ վիպական դեպքերի զարգացման ընդհանուր շղթայի մեջ, կոնկրետ իրավիճակներից ելնելով, պատճառաբանել անձի հոգեբանական կողմնորոշումները: Հայդուկների կերպարներն անհատականացված են. այս մարդիկ ինքնատիպ են ամեն ինչում: Սովորական մարդն իր արատներն ուզում է թաքցնել ուրիշներից: Հայդուկը ոչինչ չունի թաքցնելու ոչ մեկից: Կարծես կուսական բնությունը մարդկային այս տիպը ներկայացրել է իր իսկ կերպարանքով՝ անխաթար, ազնիվ, անաղարտ, կուսական ներաշխարհով: Ու այս ամենը կատարվում է ընթերցողի համար աննկատ, աստիճանաբար:

Հայ ֆիդայիների հետ թուրքերի դեմ կռվում էին նաև քրդեր, ասորիներ, թուրքեր. «Հայ ազատագրական շարժմանը մասնակցում էին շատ ասորիներ, քրդեր, թուրքեր և այլ ժողովուրդների ներկայացուցիչներ: Քուրդ Մստոն և Ավդոն մի ժամանակ կռվել էին հայերի դեմ, իսկ հետո անցել նրանց կողմը և դարձել թուրքական կառավարության կատաղի թշնամիներ: Նրանք հերոսաբար կռվում և հայերին ազատագրում էին բազմաթիվ չարիքներից: Թուրքերի դեմ պայքարին մասնակցում էին նաև Վանի շրջանի

¹ Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգեր, ՀՍՄՀ ԳԱ հրատ., Երևան, 1989թ., էջ 29:

գյուղերից ասորիներ Գրեն, Սահակը, Խումոշը և ուրիշներ: Ասորիները միշտ համերաշխ էին իրենց բախտակից հայերի հետ»¹:

Հայդուկները հագնում էին լայն տաբատներ և գույնզգույն բաձկոններ՝ կարմիր ու դեղին նախշերով: Գոտիներին ամրացնում էին կաշյա քառակապ փամփշտակալներ՝ պասպլուն փամփուշտներով: Դրանք թողարկելու համար բոլորն էլ անխտիր հագած էին անթև աբաներ: Կողքերին կապած էին տասնոց մատուցեր և դամասկոսյան կեռ դաշույններ: Գլուխները ծածկած էին արախչի կամ գդակ՝ մուգ կարմրավուն փուշիներով ոլորած: Յուրաքանչյուրը մի պայուսակ ուներ մեջքին կապած և մի ձուկան՝ ժայռերը մազլցելու համար: Նրանք ունեին պարտադիր կանոններ և չգրված, հաստատուն օրենքներ, որին հետևելը պարտադիր էր յուրաքանչյուրի համար: Այն հայ շինականը, երիտասարդը, ով ըմբոստանում էր բռնության դեմ և ցանկանում զինվորագրվել հայդուկային շարժմանը, սկզբում անվանվում էր «Ճնձղուկ», որը նշանակում է թափառիկ, *ոսոոստուն կյանք*: Նախ և առաջ նա պետք է ճարպիկ լինի, լավ ձի վարի, գենք գործածի, կարողանա ժայռեր մազլցել, լինի տոկուն, հաստատակամ, հավատարիմ իր ուխտին: Սուլթանի ոստիկանները բռնել էին ռես Խեչոյին և տանջելով ցանկանում էին իմանալ Աղբյուր Սերոբի և մյուս ֆիդայիների տեղը: Գյուղացու խորիմաստ պատասխանի մեջ բնութագրական շատ բան կա հայդուկի մասին. «Դրանք թռչուն են, էֆենդի՛, ինչպե՞ս բռնենք: Ֆիդային սահման չունի: Հարյուր աշիրի միջով կանցնեն, հազար սարով կգնան, կթառեն իրենց ուզած սարին: Վաղն էլ կթջեն-կերթան ուրիշ սարեր: Թագավորի ձեռքը երկար է, թող գնա բռնի» (էջ 43)²:

Կարմիր իրիցու տան «Կոճղեզ» ավետարանը, որ, Արաբոյի թամբից ընկնելով, կորել էր Բռնաշենի անտառում, գտել էր Տատրակ գյուղում ապրող մի անառակ կին, անունը՝ Զմո, և հանձնել Մախլուտոյին, իսկ Մախլուտոն այն տվել էր Տեր-Փոթորիկին: Ու դրանից հետո հայդուկներն իրենց երդումը տալիս էին այդ գրքի վրա, մի սրբացած գրքի վրա, որ մաքրված, լուսավորված էր ամպրոպների փայլով: Այդ մեծ երդումը վերակենդանացրեց ու հավերժացրեց Խ.Դաշտենցը: Դրանից ստացված խորհուրդը ճառագեց նրա հայրենաբաղձ գրչի ու հոգու թևածումով՝ հենց նույն Մախլուտոյի հուշապատումի և մանրամասների վերակենդանացման հիման վրա: Դրանով՝ բոլորից առաջ և ամենից առավել Դաշտենցը մեզ է ժառանգում հայ ֆիդայիների հզոր կամքը, հրեղեն կանչը, մեծ ոգին, չարի դեմ ծառացած առասպելական կերպարը:

Հայդուկի սիրեցյալը հայրենիքն է, սիրուհին՝ Հայաստանը: Հայդուկը երդվում է սուրբ Ավետարանի վրա: Սմբատի երդման արարողության ժամանակ Զառուշ իր դաշույնը դնում է խաչի վրա: Երիտասարդ հայդուկը, ծունկի գալով «Կոճղեզի» առաջ, երդվում է. «Երդվում եմ իմ պատվի և ազգության վրա իմ բոլոր ուժով, եթե հարկ լինի նաև իմ արյունով, ծառայել Հայաստանի ազատագրության դատին՝ ընդդեմ սուլթանի բռնակալության: Այսուհետև իմ բարձը Հայաստանի լեռները կլինեն և իմ ամենամեծ բաղձանքը՝ Հայրենիքի համար մեռնելը: Բարով արժանանամ հրեղեն գնդակի համբույրին» (էջ 150):

Վիպասքում հայդուկները հիմնականում համապատասխանում են իրենց պատմական նախատիպերին: Շատ դեպքերում ունեն ֆիդայական անուններ: Օրինակ՝ երդումից հետո պարզվում է, որ Սմբատի կնքանունը Մամիկոն է, տատն էր Սմբատ կոչել, իսկ որպես զինական ստանում է Մախլուտո անունը: Նա սկզբում խմբի շալակատարն

¹ Ծ. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1976, էջ 222:

² Մեջբերումները կատարված են Խ. Դաշտենցի «Ռանչպարների կանչը», Երևան, 1984թ., գրքից:

էր:Օրենքով հայդուկն իրավունք չուներ ամուսնանալ, քանի դեռ հայրենիքը ազատագրված չէր բռնակալության լծից: Ուրեմն՝ նա իրավունք չուներ կնոջ հետ որևէ գործ ունենալ, մանավանդ՝ անծանոթ կնոջ: Սրբացած գրքի վրա երդվելուց հետո Մախլուտոն ծեռնափայտով դաժանորեն ծեծի է ենթարկվում Հրայր Դժոխքի կողմից, այնինչ ինքն ընդամենը մի անգույշ շարժումով արծազանքել էր անծանոթ կնոջ կանչին: Երդում տալը, դաժան ու խիստ կյանքին ենթարկվելը դեռևս քիչ էր. հայդուկ դառնալու համար պետք էր գեներ ունենալ: Աղբյուր Սերոբը կրկնում էր.«Սուլթանի երկրում առանց հացի մնացեք, առանց գենքի մի մնացեք» (Էջ 158):

Մինչև մախլուտոյին գենք տրամադրելը, Քևորգ Չաուշը նրան ներկայացնում է ֆիդայիների խմբին, պատմում նրա կատարած գործերի մասին, այն մասին, որ տարոնցի այս երիտասարդը ուխտել է մատաղվել Հայաստանի ազատագրության համար,որից հետո կարգադրում է նրան տրամադրել փամփշտակալ, որը հայդուկը ձգում է ուսերի վրայով, վրան հագնում աբան, աբայի վրա պայուսակը, որին ամրացրած փոքրիկ տուպրակի մեջ մի բուռ բոված կորեկայուր էր և մի չորթան՝ իբրև նեղ օրվա պարեն:

Հայդուկներից ամեն մեկը «պաշտոն» ուներ, օրինակ՝ մեկը շալակատար էր,մյուսը՝ եղանակը գուշակող, երրորդը՝ լավ հետախույզ, չորրորդը՝ չոր փայտերից անծուխ կրակ վառող, մեկ ուրիշը հսկում էր,որ ֆիդայիները ճանապարհին ծխախոտ չվառեն և վառելիս կրակը բռնեն ծեռնափայտի մեջ և, որ ամենագլխավորն է,մնացորդները գետին չգցեն: Հագարիկ անունով ֆիդային հսկում էր, որ հայդուկները լուսնյակ գիշերներին հրացանները ուսերին չդնեն, փայտե կոթերը միշտ պահեն լուսնի կողմը, որ չփայլեն: Տալվորիկցի հայդուկ Կամե Գասպարը հարուստ հայերի անասունները փախցնում-ծախում էր քրդերին, քրդերից փախցնում-ծախում հայերին և դրանով գումարներ հայթայթում ազատագրական շարժման համար: Հայդուկների խմբերը մի տեղից մյուսը տեղափոխվելիս ունենում էին առաջապահ, որն առաջնորդում էր խմբին, և հետնապահ, որի խնդիրն էր իր հետ քարշ տալ մի ծառաձյուղ, որպեսզի հետքերը կորցնի: «Աշխարհում ֆիդային ոչ մի հարստություն չունի: Նա օթևան չունի: Յոթ օրից ավելի ֆիդային իրավունք չունի մնալու նույն տեղում: Նա անվերջ շարժման մեջ է:Երբ բոլորը քնած են, ֆիդային ելնում է ոտքի: Նա գրկված է լուսաբացի քաղցր քնից: Ոչ ոք չպիտի իմանա, թե ֆիդային ինչ ուղղությամբ անհայտացավ խավարի մեջ. ո՛ր ձորից ելավ և ո՛ր սարի լանջերով գնաց: Գյուղ մտնելիս ֆիդայու իջևանը հայ լեռնականի գոմի կամ մարագի մոտք անկյունն է: Երբ ծնեռ է, նա պետք է գտնի որևէ քարայր և մտնի մեջը մինչև գարունը բացվի կամ սառած ձյունը փորի և ծածկվի ձյունի տակ՝ մի աննշան ճեղք թողնելով լույսի և օդի համար:

Ֆիդային գերեզման չունի: Նրա ամենամեծ բաղձանքը կռվի մեջ մեռնելն է՝ազատության երզը շուրթերին և գնդակը ձակատին» (Էջ 169):

Համարյա բոլոր հայդուկների վրա կռվի հետքեր կան՝ սպիներ, դեմքներին, թիկունքին, ոտքին կամ ձեռքին: Գրողը պատկերավոր հիշեցնում է, որ հայդուկներից ամեն մեկը վերքերի հին ու նոր սպիների մի թանգարան էր: Իսկ ֆիդայու ամեն մի վերքը, ամեն մի սպին դրոշմ է բռնակալության դեմ մղած անթիվ կռիվների:

Հայդուկի ծին միշտ թամբած է, խուրջինը՝ կապած:Ամեն րոպե նրանք կարող են ցատկել դրանց թամբերին և սլանալ խավարի կամ կիսամութի միջով:Նրանք ունեն պայմանական խոսքեր: Օրինակ, եթե կողքին կամ մոտերքում թշնամի կա,պետք է ասել. «է՛ն ընկել է գլուխ»:

Մախլուտոն կարգադրություն է ստանում գնալ Բերդաքաղաք (Կարս)՝ փամփուշտ քերելու: Մշեցի Տիգրանի հետ նրանք ճանապարհին ներկայանում էին որպես աման կլայեկողներ, Մախլուտոն՝ նաև փուքս փչող: Այսինքն՝ ի սեր գլխավոր նպատակի՝ ֆիդային ամեն գործ պատրաստ է կատարել: Հայդուկները պաշտպան էին ոչ միայն բռնադատված հայերին, այլև՝ մյուս ազգերին: Սա նշանակում է, որ ֆիդային



արդարության գինվոր է: «Ֆիդայու հոգին վախ չի ճանաչում, ջերմեռանդորեն նվիրված է հայրենիքի գաղափարին, բայց նաև զարմանալի միամիտ է: Դա պարզ, ռամիկ մարդու, ռանչպարի հոգին է, անվեհեր, բայց և դյուրահավատ, որը հեշտությամբ վստահում է ժողովրդական խոսք ու գրույցին և հենց ինքն էլ դրանք ստեղծում է: Այսպիսի հոգեբանական կոնստեքստում շատ բնական են ընկալվում վեպի միջանկյալ գլուխները (գերբնական սխրանքների, հրեղեն ծիերի, հրաշք ջրադացքարի, հրաշագործ մադի, անգլիական թագավորի մոտ կատարած պատմական այցելության մասին պատմող նովելները և այլն): Գրեթե յուրաքանչյուր գլխի, յուրաքանչյուր գրույցի մուտքը էպիկական-ոճական լուծում ունի»¹, - գրում է գրականագետ Գ. Հովսեփյանը:

Պայթող Աղբյուրի հրաշքը հայ ֆիդայիներն էին: Հրեղեն շնչով այրեր, հայրենիքի մատաղացու որդիներ, որ ապրեցին միայն հայրենիքի կյանքով և դեռ իրենց կենդանության օրոք դարձան պատմություն ու լեգենդ:

Հայդուկներից յուրաքանչյուրն ուներ իր մականունը: Իր մեծահոգության և բարության համար, դեպի հայ,թուրք և քուրդ հասարակ բնակչությունը, Անդրանիկը ստացել էր *փաշա* մականունը: Ծնվելով Շապին-Գարահիսարում՝ Անդրանիկը համեստորեն պնդում էր, որ ինքը փաշա չէ, իրեն դիմեն Շապինանդ անվամբ: Ձորավար Սմբար Բորոյանի կնքանունը Մամիկոն է, բայց ֆիդայական երդումից հետո ստանում է Մախլուտո գինական անունը: Սերոբը անարդարության գոհերի բարու պապակը զովացնող աղբյուրի էր նման, դրա համար ստացավ *Աղբյուր* մականունը: Նրա մահից հետո այդ անունը կրեց կինը՝ Սուսեն: Գևորգը կռվի ժամանակ սպանել էր բարձրաստիճան մի չաուշի, որի համար ստացել էր *Չաուշ* մականունը: Թավրիզեցի, վեցերորդ հայկական կամավորական դրուժինայի հեծյալ վաշտի հրամանատար Հայկ Բժշկյանը հայտնի էր *Գայ* մականվամբ: Հետաքրքիր է դարաբաղի Նիկոլ Դումանի մականվան պատմությունը: Նիկոլը Դարաբաղի Դշլաղ (այժմ՝ Ծաղկաշատ) գյուղից է: Խաթավինի կռվից մի տարի առաջ Նիկոլը իր խմբով դեպի Վան անցնելիս, Պարսկաստանի սահմանագլխին ապավինել էր մի մարագի: Համիդիե ծիավորները՝ խոտի խրճեր բերելով՝ հրդեհել էին մարագը՝ կամենալով ծխի մեջ խեղդել հայդուկներին: Նիկոլը հրամայում է ձեռքել պաշարման շղթան: Նա դուրս է ցատկում կրակի բոցերի վրայով և, անընդհատ կրակելով, սուրում է առաջ: Քրդերը մնում են ապշահար՝ տեսնելով, թե ինչպես իրենց առջևից փախչող հայդուկը դումանի, ծխի պես անհետանում է լեռան վրա: Շուտով իմանում են, որ նա ճանապարհին սպանել է երկու բռնակալ բեկերի: Սարսափահար քրդերը այդ առասպելական հերոսի անունը կնքում են Դուման և այդ անունով երգ են հորինում նրա մասին: Ավադին Միսակը հաճախ էր *երգում* այդ երգը:

Շատ հայդուկներ կոչվում էին իրենց ծննդավայրերի անունով՝ Ալիգոնանցի Միսակ, Փեթարա Մանուկ, Շենիքի Մանուկ, Մշեցի Տիգրան, Մշեցի Ճիրո, Ալիգոնանցի Մուքո, Լաճկանցի Արթին, Սպաղանաց Մակար, Սևբարեցի Սաքո, Սեբաստացի Մուրադ... Մորուք պահելու համար Կարոն կոչվեց *Մորուք Կարո*, իսկ թշնամու դեմ կռիվներում շեշտակի հարվածների և ճարպկության համար Անդրեասը ստացավ *Կայծակ* մականունը, անօրինակ քաջության համար Պետոն կոչվեց *Արծիվ Պետո*: Հրայր Դժոխքը (Արմենակ Ղազարյան) իր մականունը ստացել է թշնամուն դժոխքի կրակներին մատնելու համար: Անսպասելի հայտնվելու և ճարպկորեն անհետանալու համար ստացել է նաև *Ուրվական* մականունը, իսկ մի ծածուկ քարայրում հայդուկների զենքը պահելու համար կոչվել է նաև *Քարայր*:

Ամերիկա գնալուց առաջ աննկուն զորավար Անդրանիկը ցրում է իր հայդուկներին: «Անդրանիկն իր զինվորներին տուն էր ուղարկում առանց վարձատրության, առանց որևէ

¹ Գ. Հովսեփյան, Գրական դիմագծեր, Երևան, 1981թ., էջ 110:

երաշխիքի. միայն կամքի ուժն ու բարոյական վարձատրությունն էին կազմում նրանց գանձը, որ լուրջ կշիռ ու արժեք ուներ ազատագրական պայքարի ռոմանտիկայով ոգեշնչված մարտիկների համար: Նրանց արտաքին տեսքն անհրապույր էր. պատառնուկված հագուստով էին, ծակծկված տրեխներով, տառապանք կար դրոշմված նրանց դեմքին ու թախիժ՝ աչքերում: Տանն անհամբերությամբ սպասող մանկանը նրանք ոչինչ չունեին տանելու, վաղը չոր հաց գնելու գրոշ չկար գրպաններում: Վկայություն կա, և հավաստի է այդ վկայությունը, որ եթե Անդրանիկի գորախմբի ունեցած գումարը տրվեր զինվորներին, ապա դա հազիվ բավարարեր մեկ-երկու օրվա համար հաց ու պանիր հայթայթելու: Այդ ամենից «մարդ կարող էր միայն խղճահարվել, որ այդքան գրկանքներե վերջ, այդ անձնագոհ, խիզախ զինվորը այլ կերպ վարձատրվեր», - իրավամբ նկատել է հայկական առանձին հարվածող գորախմբի պատմագիրը¹. Ծ. Աղայան:

Հայդուկներին պատանք էր տրվում, բայց սատունցի հայդուկը մերժում էր պատանք վերցնել: Նա մեռնում էր պատերազմի դաշտում և ամենաբարեբախտ դեպքում՝ թաղվում լեռների մեջ՝ առանց պատանքի՝ նույնիսկ առանց քահանայի:

Ֆիդայիներին ամեն մեկի կյանքն առասպելական, հեքիաթային, բայց և իրական է: Ու ընթերցողը երբեմն տարակուսում է՝ սա հեքիաթ է, թե՞ իրականություն: «Մեզ հասած Դավթի հեքիաթը հանկարծ հայտնվում է որպես իրականություն, իսկ իրականությունը, որ թշնամու դեմ մենակ կանգնած Արաբոն է, դառնում է հեքիաթ: Դավիթ թե՛ է Բուռլիկ Զալալին հեծած կանգնել Մարութա սարի գլխին, մենակ մի զինվոր, իսկ վարը Մարա Մելիքի ավարառու բանակն է. թիվ կա աստղերին, թիվ չկա գործին: Այո՛, նույն Դավիթն է, նույն միայնակ զինվորը»², - գրում է գրականագետ Վարդանյանը:

Հայդուկների կերպարներն առանձնակի երևույթ էին և ժամանակի ոգին միավորող ուժ: Նրանք հարություն առան նորօրյա հայ հերոսների մեջ և իրականություն դարձրին արցախցու վաղեմի երազանքը՝ ազատությունը: Հայդուկները հայ ժողովրդական հերոսների՝ Վարդանի, Աղասու, Գևորգի և շատ-շատ քաջերի ոգեղեն իրդեհի ժառանգորդներն են ու այսօրվա հերոս ազատամարտիկների հոգևոր հայրերը:

Ամփոփում

Հոդվածում բացահայտվել է հայդուկի հավաքական կերպարը. պայքարի կերպը, հագնվելու ձևը, երդման արարողությունը, նրանց գործողություններն առաջնորդող գրված և չգրված «օրենքները»:

Յուրյե են տրվել նաև նրանց պաշտոնները, որոնք մշակված էին, իսկ վտանգների պահին գործողությունները՝ շնչտակի, մտածված ու նպատակասլաց: Հայդուկը գերեզման չունի, նրա ամենամեծ բաղձանքը կռվի մեջ մեռնելն է՝ ազատության երզը շուրթերին և գնդակը ճակատին:

¹ Ծ. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1976, էջ 222:

² Կ. Վարդանյան, Խ. Դաշտենցի «Ռանչպարների կանչը» վեպի ակունքները, «Գարուն», 1998թ., հ.10, էջ 84:



Собираательный образ армянского гайдуга

Сирун Багдасарян

Резюме

Ключевые слова: гайдук, героическая борьба, свобода, брюки, пиджак, клятва, турецкий деспотизм, Евангелие, должность, псевдоним

В статье описан собираательный образ армянского гайдуга: вид борьбы, стиль одежды, торжественная клятва, их действия по писанным и неписанным законам.

Для гайдуга большая честь умереть в борьбе, с песней свободы на устах и с пулей в голове.

Также отмечено, что в период арцахской войны образы гайдугов стали примером для нынешних бойцов, в результате этого им удалось победить врага превосходящего их в численности несколько раз.

A Collective Image of the Armenian Hajduk

Siroun Bagdasaryan

Summary

Keywords: Gaiduk,, the heroic struggle, freedom, trousers, jacket, oath, Turkish despotism, the Gospel, position, nickname

This article describes a collective image of the Armenian hajduk: the kind of fight, fashion, solemn oath, their actions according to written and unwritten laws. Hajduk doesn't have a cemetery, it is an honor to die in the fight, with the song of freedom on his lips and with a bullet in the forehead.

It is also noted that during the Artsakh war, images of Hajduks became an example for our current fighters, as a result, they were able to defeat the enemy exceeding them in number.

ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՄԻ ՇԱՐՔ ԼԵԶՎԱԿԱՆ
ՄԻԱՎՈՐՆԵՐ ՀՈՎՀՇԻՐԱԶԻ ԶԱՓԱԾՈՅՈՒՄ

Միլվա Մինասյան

բ.գ. թ., դոցենտ

ԱրՊՀ

Բանալի բառեր. Հայոց եղեռն, Հայոց դանթեական, Շիրազ, լեզվառճական, բառային, ձևաբանական, շարահյուսական, պատկերային միավորներ

Հովհ. Շիրազը Հայոց եղեռնի թեմային անդրադարձել է XX դարի 4-րդ տասնամյակում սկսված համաշխարհային պատերազմի ժամանակներից՝ նպատակ ունենալով հիշեցնելու և՛ հայոց ցեղասպանության կազմակերպիչների անլուր գազանությունները (նաև՝ հայոց տարածքների մեծ մասի կորուստը), և՛ խեղճ մարդուն ճնշելու անմարդկային վերաբերմունքը (հիտլերյան գազանությունները ևս ոչնչով չէին տարբերվում թուրքական հրեշավոր գործունեությունից): Խորհրդային կարգերում հակաթուրքական այդպիսի թեմաներից խոսելն արգելված էր (նշվածին մանրամասն անդրադարձել է տողերիս հեղինակը):¹

Ակադեմիկոս Ս. Սարինյանը նշում է. «Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում ապացույցի ենթակա հարց չէ: Այն միանգամայն հավաստի իրողություն է դարավոր բնությունների, հափշտակված պատմական Հայաստանի բնաշխարհից օտարված ազգային զանգվածների, միլիոնավոր զոհվածների անհերքելի վկայությամբ: Բայց որպես պատմական եղելություն՝ դա արժանի է խոր ու համակողմանի ուսումնասիրության, և դրա գիտական իմացությունն ուսանելի է ոչ միայն իրական ու դիվանագիտական տեսակետից, այլև քաղաքակրթության, Արևելքի ու Արևմուտքի բախման, կրոնական մաքառումի, մարդաբանության, ցեղային հատկանիշի, սադիզմի հոգեբանության ճանաչման առումով: Առավել ևս, որ թուրքի ցեղային այդ ծրագիրը շարունակվում է գործել նաև այսօր, ավելի կատարելագործված, ավելի ստոր ու ավելի ոճրագործ եղանակներով: Այս իմաստով հայոց ցեղասպանության խնդիրը պետք է քննել ներկա իրադարձությունների դիտակետից՝ իբրև իրերի տրամաբանության մեջ հայտնաբերելու պատմության փորձ»:²

Մեծ բանաստեղծ Հովհ. Շիրազի նպատակը վեհ էր: Նա ոչ միայն իր ժողովրդի անասելի ցավն էր ուզում վեր հանել, այլ նաև համայն մարդկությանը զգուշացնել ահասարսուռ վտանգից: Նրա մեծ ուսուցիչ Ավ. Իսահակյանը միշտ զգուշացրել էր ստալինյան բռնապետության վտանգներից (արդեն չարենցյան

¹ Մինասյան Ս. , Հովհաննես Շիրազ, Ստեփանակերտ, 2014 թ.:

² Սարինյան Ս. , Հայոց գրականության երկու դարը, հ. 4, Տիգրան Մեծ հր., Երևան., 2004թ., էջ 330:

անգերեզման վերջն այդ էր հուշում): Ետստալինյան շրջանում էլ կարգին լուծում չեղավ այդ հարցերին: Զակերտավոր ազատությունը պայմանական էր: Հովհ. Շիրազի «Հայոց դանթեական» պոեմը լույս տեսավ 1990 թ., ուր քայլ առ քայլ ներկայացվել են եղեռնված ժողովրդի կրած անլուր տանջանքները: Դրանք սահագարհուր պատկերներ են: Հովհ. Շիրազը հիշողության օրենքի տրամաբանությամբ վկայակոչել է հայ ու համաշխարհային մեծություններին, համադրել, հակադրել այն դաժան տառապանքներն ու լլկանքները, որոնք քաղաքակիրթ մարդկության սֆինքսված լռության, քար անտարբերության առաջ սկսվել են Սուլթան Համիդի ժամանակներից մինչև Աթաթուրք, մինչև մեր երկրի կոմունիստական կուսակցության գերիշխանության տապալում (թեև դրա վերջն առ այսօր չի երևում):

Հովհ. Շիրազի՝ Հայոց մեծ եղեռնի թեման մասնակիորեն շոշափող գործեր են՝ *Հայ լեռնապարը, Ես Մասիս կասեմ, Կարծում էի՝ ինձ են տվել, Սպիտակ ձիավորը Փարիզում, Թե չլինեք զորավարը, Չգիտեն, Երբ մորթել են հայրիկիս, Մորս աչքերն են լացել, Մորը վազող գառի պես, Հայրն՝ ամրոց, մայրը՝ տաճար, Հայրս ջաղացպան, Հորս մահն էր մայրս լալիս, Մայրս հաճախ ոգուս մեջ, Հայոց վիշտը, Այս ի՞նչ քնքուշ են փաթիլները ձյան, Հանճարեղ խելագարը, Հայոց դանթեականը* և այլն:

«Հայ լեռնապարը» բանաստեղծության մեջ, խախտելով ժամանակի և Հայոց լեռնագանգվածների աշխարհագրական դիրքերի բնականոնությունը, գեղագիտական երևակայությամբ նորովի լեզենդ է հյուսում՝ չափազանցված՝ ընդգծելով մարդկային վայրագ արարքի ահավորությունը.

Հայ լեռնապարը իր հայր Մասիսին Ա՛խ, կանգ է առել վշտից լեռնացած հայկական պարը,
Պարբաշի արել՝ պարում էր անցավ, Որ քարացել է հենց պարի պահին,
Երբ լսեց հայոց եղեռնի մասին՝ Անիծվեն Աստվածն ու քար աշխարհը,
Կանգ առավ իսկույն, վշտից քարացավ: Որ անպատիժ են թողնում ալլահին:

Իսկ թաշկինակը պարբաշու ձեռքից ընկել է վզին,
Քարացել, ձյուն է դառել Մասիսին: (1, 199):

Եղեռնի վերաբերյալ շիրազյան՝ իրական առարկաների ու գեղարվեստական մտապատկերային զուգորդումների ցնցող հուշ մասունք է փակագծված վերնագրով (Եղեռնի եղևնին) գողտրիկ ութտողանոց գործը՝ տեղադրված մայրապատում շարքում, որի ամանորյա ուրախության ու հայ ժողովրդի ցավոտ ճակատագրի զուգորդման հզոր հոգեցունց տպավորությունը չէր վրիպել որդու՝ Սիփան Շիրազի աչքից (հայր Շիրազը, տեսնելով կտրված ծառը, ցնցվել էր, երևի անհագիստ ուղեղում եղևնին իբրև եղեռնի մատաղ գոհերից մեկն էր պատկերվել):

Կանգնած տրսում է կանաչ եղևնին,
Այնինչ՝ լույսերը ցնծում են վրան,
Անտառն է հիշում տխրած եղևնին,-

Շուրջը թնդում է ուրախ նոր տարին,
Մարդիկ խմում են և անհոգ պարում,
Այնինչ ողբում է իմ մայր եղևնին,

Ոսկե լույսերը չեն հուզում նրան: Մորթված անտառն է նա մտաբերում:¹

Երբեմն մի տողով կամ պատկերային կառույցի շիրագյան վարպետ համադրությամբ նյութի մեջ շոշափվում է Հայոց ցեղասպանությունը: Օրինակ, ահա «*Ծաղկունքն հողից աչքեր բացին*» խոհափիլիսոփայական ու թախծաշշուկ բանաստեղծության հետևյալ հատվածը.

.... ինչու՞ գերեզմանի

Ծաղկներն էլ արցունք ունեն՝

Չորերի պես մեծ եղեռնի՝

Որ եփրատների արցունքներն են ,

Որ հոսում են մինչև այսօր....:

Կամ՝ (Փաթիլները ձյան) այսքան մաքուր, մաքուր կիջնեն վար. Իրենց մայրերի կաթի պես անեղծ.

-Այդ մորթված մանկանց ոգիներն են սուրբ ,

Կիջնեն փաթիլված, անշուշտ ու նուրբ:²

Հեղինակը կատարում է ահավոր ու ճշմարիտ ընդհանրացում՝ Իմ երկնամաքուրը՝ այսքան ոսոնահար...

Եղեռնին նվիրված ծավալուն գործը «*Հայոց դանթեական*» պոեմն է, որը ահեղամոռնչ հոգով ու սրտով պատմերգված մի դատաստանամատյան է, իսկ մյուս գործերը՝ *ողբագիր մի դասագիրք*, ուր հնչեցված է բանաստեղծի ճշմարտախոս բողոքը: Ահասարսուռ պատկերների մեծ մասը նշված պոեմում են:

Ես այս դարի սրտին պիտի

Որպես մեղքերն հողագնդի,

Փորագրեմ, որպես վերքեր,

Երեք միլիոն անմեղ զոհեր,

Որպես հետքերը հայոց վշտի՝

Որ մորթվեցին յաթաղանով

Երեք միլիոն հայ անուններ,

Քար մարդկության աչքի առաջ:³

Մեծատաղանդ հեղինակի՝ կրակված սրտով գրված այս տեսլապոեմը հայ գրականության բարձրարժեք նվաճումներից է, ցեղասպանությունների դեմ քաղաքակիրթ մարդկության սփինքսված լուրջության ահեղ դատաստանամատյանը:

Կարծես խելահեղ շուռ էին տալիս

Թե՞ մեր տեսածն էր մեր աչքը տանջում՝

Հազարաշիրի մի գերեզմանոց,

Կոտորածներով, որ այնքան տեսանք,-

Ու հողի տակից դուրս էին գալիս

Ինչ տեսիլք, սիրտ իմ, երբ ձորին հասանք,

Ուրվաշշուկներ, հառաչանք, տնքոց,

Չողը՝ ինչպես մի կուրծք, ելնում էր, իջնում,

Ստվերներ էին ելնում երկյուղած

Ո՛հ, մարդիկ էին հողից դուրս ելնում

Եվ ընկնում էին ու խուլ հառաչում.

Եվ ընկնում էին համր ու կիսամահ,

Ախ, հայերն էին՝ կենդանի թաղված,

Զարգանդով լցնում գիշերն էլ ամա:⁴

Մեծանուն հեղինակը Հայոց եղեռնին անդրադարձել է լեզվական՝ ամբողջական ու մասնակի, ուղղակի ու փոխաբերական (անուղղակի) գեղագիտական կառույցներով, որի նպատակը համայն մարդկությանը

¹ Ծիրազ, հ. IV, Երևան, 1986, էջ 87:

² Ծիրազ, հ. I, Երևան, 1981, էջ 12:

³ Ծիրազ, հ. V, (Հայոց դանթեական), Երևան, 1990, էջ 334:

⁴ Նույն տեղում, էջ 142 :



անմարդկայինից գեղարվեստորեն զգուշացնելն է: Չար ու աչքածակ մարդը չի հագեցել, չի հագնում, չի հագնա եղածով, որի ցցուն օրինակը XX դ. սկզբին թուրքն էր, հետո՝ գերմանացին, արդի օրերում՝ ազերին: Արցախյան գոյապայքարն արդի այդպիսի իրավիճակների օրինակներից զգուշացում է:

1. *Բառային լեզվական միավորներ*: Սրանք կառույցով տարաբնույթ են:

ա) *Պարզ* բառերով արտահայտված միավորներ: Ուղղակի իմաստով գործածված պարզ բառերից են. *Եղենն*¹՝ Արևմտյան Հայաստանի հայ ժողովրդի՝ թուրք հրոսակների կողմից բնաջնջվելն ու քիչ մասի վտարանդվելը (այս բառի օրինակները շատ են)՝ Հատուցումը *Եղեննի*, Երբ էլ լինի, կհառնի,² Ո՛վ աշխարհ, այս *Եղեննը* քո խղճի վրա է ծանրացած³ են: Այդպիսի ահագարհուր բառերից են նաև՝ *դազադ*⁴, *մահ*,⁵ *դի*, *զոհ*՝

Եվ անցնում էինք դեռ մտալուկ, Մինչ ամենատես աչքի տակ լուսնի՝
Դեռ դողում էին բիբերն աչքերիս, Գեթ ամենատես լո՛ւսնից չի քաշվում,-
Դեռ ձայներն էին այն մահադալուկ Զոհերի առջև կիսակենդանի
Դիերի տակից հանկարծ դուրս գալիս... Հանած ատամները՝ ավարն էր հաշվում:⁶
Կոցահարում էր դիերը նրա...:⁷

Կովեց ինքն էլ ձին Սպիտակ, Դիեր փռեց սմբակոց տակ, Դիեր, դիեր, Հետն էլ ձիեր:⁸

Առանձնանում է *լուռ* բառի կիրառությունը, որը, նաև իր տարբեր կառույցներով, հայ գրականության ոչ միայն չափածոյում, այլ նաև արձակում է լայն կիրառություն գտել (ներառյալ արցախյանը ամենահինչեղը Ռ. Եսայանի գործերում է արտահայտված)՝ լուռ կշտամբեց,⁹ լռեց շշուկը շատախոս մահվան¹⁰, լուռ լարվում էին... գորքերով մթին¹¹ են (բայաձևի ուղիղ ու թեքված կառույցում պարզի ու բաղադրյալի հակադրությունն է դրսևորվում, որը հայերենի համար սովորական լեզվաբանական իրողություն է):

Փոխաբերական իմաստով գործածված պարզ բառերից հնչեղ են՝ *գայլ*, *շուն*¹², *ռհմակ*¹³ են, որոնք խորհրդանշում են թուրք զինվորների ոչ մարդկային՝ զազանային վերաբերմունքը: Այդ բառերը հնչեղ, բայց ցածր ոճի են և

¹ *Շիրազ*, հ. I, էջ 269, հ. V, էջ 265 :

² *Շիրազ*, հ. I, էջ 9:

³ *Շիրազ*, հ. V, էջ 327:

⁴ Նույն տեղում, էջ 305 :

⁵ Նույն տեղում, էջ 148 :

⁶ Նույն տեղում, էջ 146 :

⁷ Նույն տեղում 148 :

⁸ Նույն տեղում, էջ 311 :

⁹ Նույն տեղում, էջ 18 :

¹⁰ *Շիրազ*, հ. I, էջ 267:

¹¹ *Շիրազ*, հ. V, էջ 301 :

¹² Նույն տեղում, էջ 201, 298, 311, 312 :

¹³ Նույն տեղում, 384 էջ 14, 284, 312 :

բնութագրում են թուրք հրոսակներին: Առանձնանում է *գայլի* կիրառությունը հիմնականում «*Հայոց դանթեական*»-ում է: Գայլը *մարդակեր*, *մարդասպան* իմաստով է գործածված,¹ ...մի շան մագուկն էլ բարձր է մարդ-գայլից², գայլի սև ուհակ,³ Զինված գայլերը,⁴ սև գայլ⁵ են: Շիրագյան օրինակները՝, *գայլ* բառի նոր իմաստավորումները հավելում են մեր մշակույթում եղած, որի ամփոփ արտահայտություններից է Ս. Ալ. Ստեփանյանի Գայլի խորհրդանիշը հայ գրականության մեջ՝ փոքրածավալ հոդվածը (ցավոք, շիրագյան մոտեցումները նկարագրված չեն):⁶

բ) *Ածանցված բառերով արտահայտված միավորներ*: Ուշադրություն գրավող է *լուրջություն* բառը, որը Հովհ. Շիրագի ստեղծագործություններում գեղագիտական հետաքրքիր կիրառություն ունի: Մեծ բանաստեղծն այս բառը խոսուն է դարձնում ներքին խոսքի բովանդակ էությանմբ, բնական է, իր շարահյուսական կառույցներում (*լուրջ*-ը գեղարվեստում կարծես սովորական է դարձել, իսկ *լուրջությունը* գեղագիտական մեծ արժևորում է ձեռք բերել և հնչողությամբ առանձնանում է. արդի գեղարվեստում այդ ձևը հիմա ավելի է ընդլայնված իր կիրառությամբ)՝ Մոնչում էր *լուրջ*ամբ էլ,⁷ Պիոթ *լուրջություն*,⁸ սև *լուրջ*ամբ,⁹ Որ *լուրջությունն* է զինված պոռնկանց,¹⁰ կաղապարված դավաճան *լուրջություն*, *լուրջ*ան բերան, *լուրջ*ան պղծաճակատը¹¹ են:

Այս բառով հեղինակը նաև փաստում է Թուրքիայի մամուլում տրվող մարդասիրական կեղծ վերաբերմունքները ու ցույց տալիս ամբողջ ազգության՝ եղեռնի նկատմամբ տմարդի վերաբերմունքը: Ուժեղ ու կեղծ պետությունների քաղաքական խաղերին վերջ չկա: *Անաստված, գլխատվել* ածանցավոր բառերը հայ ժողովրդի ահավոր վիճակն են բնութագրում:

Ով աշխարհ, այնինչ՝ դու մի եղնիկի՝	Որ զնդանում է մի մարդ՝ Գիզենգա...
Մի Լյուսումբայի համար էլ ճշում,	Քանզի, երբ հայոց ազգն էր գլխատվում՝
Ծով մեղքն ես ներում՝ ընդդեմ շիթ մեղքի,	Յաթաղան կացնով բյուրագորք դահճի,
Ինքդ՝ անաստված, Աստված ես կանչում,	Դու լեզուն պոկած զանգ էիր թվում,
Կարծեցիր խաղ է մի չարաճճի ¹² :	

¹ **Շիրագ**, հ. I, էջ 64: հ. II, Երևան, 1982, էջ 158, հ. V, էջ 10, 14 :

² **Շիրագ**, հ. V, 384 էջ 201, 311 :

³ Նույն տեղում, էջ 284 :

⁴ Նույն տեղում, էջ 298 :

⁵ Նույն տեղում, էջ 302 :

⁶ **Ստեփանյան Ս.**, *Գայլի խորհրդանիշը հայ գրականության մեջ*, ԱրՊՀ գիտական տեղեկագիր, 1/2012, էջ 133-135:

⁷ **Շիրագ**, հ. I, էջ 269:

⁸ **Շիրագ**, հ. V, էջ 18, 148, 217, 265, 384:

⁹ Նույն տեղում, էջ 32 :

¹⁰ Նույն տեղում, էջ 217 :

¹¹ Նույն տեղում, էջ 290 :

¹² Նույն տեղում էջ 230-231 :

Այսպիսի բառերի շարքը շարունակվում է:

Որբեր ու որբեր՝ *մորթված* հայրերի, Աչքերի առջև *մորթված*՝ մայրերի:¹

Հարեմ չտանեն, Յոթնադուր վատը՝ *չթուրքացնեն...*:²

Թե ինչպես եկան և հենց *թրքորեն* գիշերով տարան Յոթ հարյուր հայոց մտավորական:³

Ահա այդ տիպի բառերի շարք, ուր ածանցը կարող է մեկ կամ ավելին լինել՝ գայլանալ,⁴ բորենի,⁵ կոտորածներ⁶, արյունոտվել,⁷ եղեռնվել,⁸ կայենվել,⁹ հայդուկել,¹⁰ չինգիզվել,¹¹ ողբալ:¹²

Նույնիսկ *անողորմ* բառը գործածված է հակառակ իմաստով՝ 1. Անդրանիկը՝ վրիժառուներով 2. թուրքը՝ *Անողորմն անողորմին*:¹³

գ) *Բարդ բառերով արտահայտված միավորներ*: Այսպիսի կառույցներն իմաստաբանորեն առավել հնչեղ են՝ *եղեռնաձայն*՝ Դուք լսում էիք *եղեռնաձայնը*, քար էիք ծնում, Ես վաղվա ծնած խիղճ ու դարերի դատին եմ հանձնում,¹⁴ *դժոխսախենջար*, *ողբերգ*՝ Լուսինն էլ լռին մոլորվեց անձար՝ Յաթաղանի դեմ *դժոխսախենջար*, Ամպի տակ անցավ՝ մորս աչքի պես, որ էլ չտեսնի Բյուր տեսածները, և նոր *ողբերգը* հոգուն չհասնի,¹⁵ *դիպեռներ*, *եղեռնացավ* ...*դիպեռների* վկան են... Այն օրերում տեսաք, չլացիք, գեթ այժմ եկեք լալու, գեթ լալու՝, գեթ ողբալու՝ ինձ հետ, գեթ լալու՝, գոնե լացով կիսելու այս անկիսելիներս՝ եղեռնացավերն անբժշկելի... ո՛վ լռիմանիներ,¹⁶ *առյուծագոչ*, *գառնաբառաչ*՝ մորթված զավակների մոտ՝ ցնորված մայրը՝ *առյուծագոչ*...-*գառնաբառաչ*...¹⁷ ևն: Ահա այդ տիպի բառերի շարք՝ գայլակերպ,¹⁸ դժոխադուր,¹⁹ դժոխախոց,¹

¹ Նույն տեղում էջ 294 :

² Նույն տեղում, էջ 294 :

³ Նույն տեղում, էջ 236 :

⁴ **Շիրազ**, հ. II, էջ 158: **Շիրազ**, հ. III Երևան, 1984, էջ 177: **Շիրազ**, հ. V, էջ 94, 312 :

⁵ **Շիրազ**, հ. V, էջ 10, 148 : **Աճառյան Հր. Հ.**, *Հայերեն արմատական բառարան*, հ. I, Երևան, 1971, վերիք., էջ 477:

⁶ **Շիրազ**, հ. V, 142 :

⁷ Նույն տեղում, էջ 46 :

⁸ Նույն տեղում, էջ 313, 315 :

⁹ Նույն տեղում, էջ 120 :

¹⁰ Նույն տեղում, էջ 99 :

¹¹ Նույն տեղում, էջ 84 :

¹² Նույն տեղում, էջ 327 :

¹³ Նույն տեղում, էջ 311 :

¹⁴ Նույն տեղում, էջ 260 :

¹⁵ Նույն տեղում էջ 299 :

¹⁶ Նույն տեղում, էջ 327 :

¹⁷ Նույն տեղում, էջ 64 :

¹⁸ Նույն տեղում, էջ 201 :

¹⁹ Նույն տեղում, էջ 236 :

դժոխաձայն,² դժոխաքարոն,³ դիալեռ,⁴ եղեռնածին,⁵ եղեռնահաղթ,⁶ եղեռնաձոր,⁷ եղեռնապատում,⁸ եղեռնավիշտ,⁹ եղեռնացավ,¹⁰ թալեաթաթուրք,¹¹ հազարառհմակ,¹² մահադաշտ,¹³ մարդախեղդ,¹⁴ մեռելադաշտ,¹⁵ մշտավիշտ,¹⁶ յաթաղանաբեր,¹⁷ ողջակեզ,¹⁸ վիշապատրկոր,¹⁹ վիշտ ու կական,²⁰ վշտակեզ,²¹ ցեղասպան,²² քսան և չորս,²³ քստմնամեծ²⁴ նն: Երեք հիմնական ձևայնությամբ կառույցները սակավ են՝ ողբերգատող,²⁵ տիեզերավիշտ:²⁶

դ) *Խառը՝ բարդածանցավոր*, բառերով արտահայտված միավորներ (մի շարք բայերի դիմավոր ու անդամ ձևերի հակասությունը բնական է): Օրինակներից է՝ *ողբերգել՝ Ցնորք չի եղել հայոց վիշտը...* Ես *ողբերգում* եմ հավերժաբողոք երգով սգասն,-Սգա՛, Հայաստան ...:²⁷

Բանաստեղծը բազմիցս ասպարեզ է հանում հայ ցեղասպանության անհայտ հրահանգիչներին, նրա անմիջական իրագործողներին՝ դժոխաչար Թալեաթ, Էնվեր, Ջեմալ, Նազըմ եղեռնածիններին, որոնց անունից էլ բառ է կերտվել՝ ի

¹ Նույն տեղում, էջ 46 :

² Նույն տեղում, էջ 301:

³ Նույն տեղում, էջ 51 :

⁴ Նույն տեղում, էջ 222, 290, 327 :

⁵ Նույն տեղում, էջ 302 :

⁶ Նույն տեղում, էջ 303 :

⁷ Նույն տեղում, էջ 154 :

⁸ Նույն տեղում, էջ 282 :

⁹ Նույն տեղում, էջ 222 :

¹⁰ Նույն տեղում, էջ 327 :

¹¹ Նույն տեղում, էջ 298 :

¹² Նույն տեղում, էջ 14, 15 :

¹³ Նույն տեղում, էջ 189 :

¹⁴ Նույն տեղում, էջ 149 :

¹⁵ Նույն տեղում, էջ 148 :

¹⁶ Նույն տեղում, էջ 189 :

¹⁷ Նույն տեղում էջ 299 :

¹⁸ Նույն տեղում, էջ 53, 276 :

¹⁹ Նույն տեղում, էջ 51 :

²⁰ Նույն տեղում, էջ 255 :

²¹ Նույն տեղում , էջ 275 :

²² Նույն տեղում, էջ 107 :

²³ Նույն տեղում, էջ 12, 43, 155 :

²⁴ Նույն տեղում, էջ 14 :

²⁵ Նույն տեղում, էջ 289 :

²⁶ Նույն տեղում, էջ 159 :

²⁷ Նույն տեղում, էջ 260 :

դեմս Էնվերի՝ Էնվերագորքեր,¹ որոնց նախատիպն էր Լենկթեմուրը՝ լենկթեմուրվել:²

Ահա բարդաձանցավոր բառերի մի փոքրիկ փունջ՝ բնաջնջել,³ բռնախեղդ,⁴ գայլամարդուկ,⁵ դահճաձեռք,⁶ դատաստանամատյան,⁷ զարհուրատեսիլ,⁸ լուռընթաց,⁹ մեղսակից,¹⁰ մեռելադաշտ,¹¹ մշտախարույկ,¹² յոթնադժոխք,¹³ (Էնվեր փաշա) շնամարդուկ,¹⁴ վագրենագրահ,¹⁵ տեղահանություն,¹⁶ ցեղաջնջել¹⁷ են:

2. *Ձևաբանական միավորներ:* ա) *Գոյական:* Հնչեղ են եղեռնին առնչվող հատուկ անունները, *եղեռն* հասարակ գոյականը ու նրանից սերվածները՝ եղեռնաձայն,¹⁸ եղեռնապատում,¹⁹ եղեռնաձոր,²⁰ եղեռնացավ²¹ են: Օրինակ՝ եղեռնաձայնով ընդգծվում է համայն աշխարհի անտարբերությունն անտեղի ու ասհագարհուր տուժողների նկատմամբ՝ Դուք լսում էիք եղեռնաձայնը, քար էիք ծնում, Ես վաղվա ծնած խիղճ ու դարերի դատին եմ հանձնում:²² Այստեղ նաև գործածված *քար, խիղճ, դար, դատ* գոյականներն են հնչեղ ու ազդեցիկ, որոնք կիրառվում են նաև այլ տեղեր՝ ցանկանալով շեշտել բանական մարդ արարծի ծայրահեղությունները: Նրանց համար կարծես անարժեք է՝ *խիղճ, դատ, ողբերգ*²³ են միավորների գոյությունը, դրանք կարժևորվեն միայն շահադիտական նպատակներում:

¹ Նույն տեղում, էջ 293 :

² Նույն տեղում, էջ 84 :

³ Նույն տեղում, էջ 254 :

⁴ Նույն տեղում, էջ 229 :

⁵ Նույն տեղում, էջ 179, 200 :

⁶ Նույն տեղում, էջ 298 :

⁷ Նույն տեղում, էջ 289 :

⁸ Նույն տեղում, էջ 14 :

⁹ Նույն տեղում, էջ 269 :

¹⁰ Նույն տեղում, էջ 149 :

¹¹ Նույն տեղում, էջ 148 :

¹² Նույն տեղում, էջ 327 :

¹³ Նույն տեղում, էջ 16 :

¹⁴ Նույն տեղում, էջ 304 :

¹⁵ Նույն տեղում, էջ 15 :

¹⁶ Նույն տեղում, էջ 254 :

¹⁷ Նույն տեղում, էջ 299 :

¹⁸ Նույն տեղում, էջ 260 :

¹⁹ Նույն տեղում, էջ 282 :

²⁰ Նույն տեղում, էջ 154 :

²¹ Նույն տեղում, էջ 327 :

²² Նույն տեղում, էջ 260 :

²³ Նույն տեղում էջ 299 :

Կամ՝ ահա հայ աղջիկների անունների հոգնակի թվի ընդհանրական գործածությունները, որով բազմակողմանիորեն ընդգծում է խոշտանգված, լկված, անարգված ու նահատակված հայուհիների վիճակը: Անտարբեր, քար է մարդկության խիղճը: Գոյություն ունի անարդարություն: Ափեափ լցված Հովի. Շիրազն աշխարհի անարդարությունից է զարմանում, տրտնջում, բողբոջում, մեծ դատ պահանջում, բայց...:

Կույս աղջիկները մեկ-մեկ, բազմությամբ,
Ումանք մահաճիչ, ումանք համր ու հեզ՝
Գետն էին խուժում, ինչպես գահավեժ աստղերի կայծեր,
Խեղդվում էին, որ մարմինները պիղծը չպղծեր...
Քանզի կույսերին և թե հարսներին մեր լալահառաջ
Խեղդելուց առաջ՝ երկնքի, թուրքի լիրբ աչքի առաջ,
Մերկացնելով զիշեր թե ցերեկ, հենց գետի ափում՝
Ըմբռնվում էին, ապա ձեռքերը մեջքներին կապած՝
Գետն էին գցում, էլ հայոց գետը ինչպե՞ս չկոծեր,-
Մեղվում էին տեղահան արված մայր, մանուկ ու ծեր,
Արմենուհիներն իմ հազարագեղ ու մարմնանրբին,
Այծեմնիկները՝ քաջ, ինչպես արծիվ, նուրբ, ինչպես լուսին,
Գոհարիկներս՝ երկնքից բերված գոհարներ քնքուշ,
Մարիամիկներս՝ Հիսուսներ ծնող մայրեր փաղաքուշ,
Աստղիկներն իմ սուրբ՝ լցված արցունքով մեր հայոց բախտի,
Վարդանուշներս՝ մարմնակուսագեղ վարդեր դրախտի,
Վանա վարդեր մերկամոլորիկ Վարդուհի դառած՝
Ապշանք-շշմանքի փշերը լարած...
Հայկանուշներս՝ Հայկի աղեղի նման հոնքերով...:¹

Հեղինակը «Հայոց դանթեական»-ի ահեղատեսիլ տեսլաքառսում ներկայացնում է զազանաբարո հոշոտված հանրահայտ հայ մտավորականության մի շարք ներկայացուցիչների՝ իրենց անուններով ու տանջանքների ահասարսուռ նկարագրությամբ (Դանիել Վարուժան՝ էջ 236-238, Ռուբեն Սևակ՝ 240-241, Սիամանթո՝ 242-243, Գրիգոր Զոհրապ՝ 243-245...):

Եղեռնին առնչվող հատուկ անուններ կան, որոնցից կերտված նորակազմ հասարակ գոյականները, ածականները, բայերը կարևորում են այդ անձնանունների կամ տեղանունների էական հատկանիշները (հեղինակն իրական ժամանակից չի միայն օգտվել, այլ ազատ է եղել ժամանակի ու տարածության գեղագիտական անպարփակ հնարավորություններում): Հնչեղը բայերն են՝ իրենց ընթացականությամբ կարծես ավելի տիպականացնելով այդ առարկային յուրահատուկ հատկանիշները: Ամենահնչեղը, ազդեցիկը *անդրանիկվելն* է:

Ահա այդպիսի բառերի շարքը. *գոյական*՝ Փարիզ-մեղսափարիզ,² *ածական*՝ Ավարայր-ավարայրասուրբ (ավարայրասուրբ Վարդան),¹ Դանթե-

¹ Նույն տեղում, էջ 217 :

² Նույն տեղում, էջ 20 :



դանթեադժոխք²-դանթեական³ - դանթեակոտ,⁴ Եփրատ-Եփրատընթաց,⁵ Թալեաթ-թալեաթաթուրք,⁶ Հայաստան-հայաստանատեր (Հայ զենքի աստված հայաստանատեր Տիգրանից խոսե՞մ)⁷, Հայկ-հայկյան,⁸ Մասիս-մասիսատես,⁹ Պառնաս-պառնասալեռ¹⁰- պառնասախեղդ,¹¹ Տրդատ- տրդատաշեն,¹² Քարոն-անքարոն¹³-դժոխաքարոն,¹⁴ *բայ՝* Անդրանիկ-անդրանիկվել՝ 1. հերոսանալ, 2. սրբանալ, 3. անձնանվեր, ազգօգուտ լինել, Ո՛վ խաբեություն, ինքդ քեզ փրկած Սուրբ հայդուկներից խոլ անդրանիկված,¹⁵ Այսպես թուրքաց զորքը բեկվեց, Քանզի հայ զորքն անդրանիկվեց,¹⁶ Աշտիշատ-աշտիշատվել՝ 1. սրբատեղի դառնալ, 2. ավելի բարեկիրթ բնակավայր լինել՝ Հանեց մեր տնից, Դուրս վանեց, արծվի մեր բույնը խլեց, Հանեց Տարոնից սուրբ աշտիշատված, Դուրս վանեց, մեզ էլ դարձուց անաստված,¹⁷ Լենկթեմուր-լենկթեմուրվել-1. Աշխարհակալ լինել, 2. բռնակալ լինել, 3. մարդասպան, ցեղասպան լինել, 4. չարաբարո, ավագակաբարո լինել, Էնվերն էլ զորքվեց ...Նոր լենկթեմուրվեց՝ *Չպիտի՜ շնչե այս ազգն այսուհետ*,¹⁸ *Կայեն-կայենվել՝* 1. եղբայրասպան, հարազատասպան լինել, 2. եղեռնագործ լինել, 3. ոճրագործ լինել, 4. չարաբարո լինել, Այս էլ ինը սև դարեր կայենված անհավատը կույր Յաթաղանների ճանկերն էր սրում հեսանի վրա իր չար նախանձի,¹⁹ Էլ ո՞ւր է խիղճը թեկուզ Հիսուսի, Էլ ի՞նչն է անմեռ, Երբ ջնջեց ողջ իմ հայ աբելված ազգին կայենված մի նեռ, Բայց չճանթեցիք, զորքով կայենված, մահմեդված Բելին,²⁰ Հիտլեր- հիտլերվել՝ 1. չարաբարո, մահասպիյուռ լինել, 2. ազգայնամոլ լինել, Եվ դեռ հիտլերված դժոխաշունը, Հիշելով թուրքի խմած արյունը՝ Հեզ լեհաց վրա խոլ արշավելու վայրկյանից առաջ՝ Հրաման

¹ Նույն տեղում, էջ 55 :

² Նույն տեղում, էջ 49 :

³ Նույն տեղում, էջ 18, 78 :

⁴ Նույն տեղում, էջ 38 :

⁵ Նույն տեղում, էջ 218 :

⁶ Նույն տեղում, էջ 298:

⁷ Նույն տեղում, էջ 122 :

⁸ Նույն տեղում, էջ 233 :

⁹ Նույն տեղում, էջ 96 :

¹⁰ Նույն տեղում, էջ 15 :

¹¹ Նույն տեղում, էջ 170 :

¹² Նույն տեղում, էջ 59 :

¹³ Նույն տեղում, էջ 39 :

¹⁴ Նույն տեղում, էջ 51 :

¹⁵ Նույն տեղում, էջ 57 :

¹⁶ Նույն տեղում, էջ 324 :

¹⁷ Նույն տեղում, էջ 249 :

¹⁸ Նույն տեղում, էջ 84 :

¹⁹ Նույն տեղում, էջ 120 :

²⁰ Նույն տեղում, էջ 122 :

հաչեց...¹ Մասիս-մասիսվել՝ 1. Մասիս դառնալ, 2. հայանալ, 3. դիմացկուն լինել, 4. հավերժանալ, 5. ահագնանալ, 6. վեր բարձրացած, վեհ, լինել, 7. կատարյալ դառնալ, 8. հային խորհրդանշել, 9. ծեր, հարգարժան լինել, 10. ճերմակել, Ա խ, տեսաք, թե ինչ սև ձյուն է բուքել մասիսված գլխին իմ հայրենիքի² նն:

բ) *Եղենին առնչվող ածականները* տարաբնույթ են կազմությամբ, իմաստով, բառաշերտերով: Իմաստաբանական ու գունային ածականներում առանձնանում է *սևը*, որին կուզենանք ուշադրություն դարձնել: Գործածության հաճախականությամբ առանձնացող այս բառն անգամ տողում է կրկնվում մի քանի անգամ՝ ընդգծելով հեղինակի ցավ ապրած հոգու խոր տառապանքը: Սևի իմաստը մեր լեզվում ամբողջական հասկացվելու սովորույթը բնական է: Այն բովանդակում է *չարագույժ, չարաբարո, դաժան, թունոտ, վատ, անմարդկային, վատված, սգո նշան* իմաստները: Ահա գերադասների հետ եղած սև ածականի կիրառության մի շարք օրինակներ՝ գաղտնիքը սև,³ պատերազմը սև,⁴ սև գործ,⁵ սև սերմ,⁶ սև շատ է տվել հայ Աստվածն հային,⁷ սև ձի,⁸ սև ծով ասա, սև լռություն,⁹ սև աղետ,¹⁰ սև սիրտ,¹¹ սև աչք,¹² սև ճրագ,¹³ սև հագնել,¹⁴ սև փաշա,¹⁵ սև պահ, սև թույն,¹⁶ սև դար,¹⁷ սև սուլթան,¹⁸ սև ոճիր,¹⁹ սև արցունք,²⁰ սև մահիկ/ պալատ/ գիշեր/ մարմաշ,²¹ սև ձյուն է բուքել, սև թուխպեր,²² Մենայի սև կաթով սնված,²³ սև հրդեհ,¹ սև ժայռին խաչել,² սև մոխրակույտ, սև շալ,³ սև իթթիհաթ,

¹ Նույն տեղում, էջ 279 :

² Նույն տեղում, էջ 155 :

³ Նույն տեղում, էջ 10 :

⁴ Նույն տեղում, էջ 12 :

⁵ Նույն տեղում, էջ 12 :

⁶ Նույն տեղում, էջ 12 :

⁷ Նույն տեղում, էջ 23 :

⁸ Նույն տեղում, էջ 24 :

⁹ Նույն տեղում, էջ 32 :

¹⁰ Նույն տեղում, էջ 54 :

¹¹ Նույն տեղում, էջ 75 :

¹² Նույն տեղում, էջ 87 :

¹³ Նույն տեղում, էջ 97 :

¹⁴ Նույն տեղում, էջ 101, 130 :

¹⁵ Նույն տեղում, էջ 102 :

¹⁶ Նույն տեղում, էջ 116 :

¹⁷ Նույն տեղում, էջ 120 :

¹⁸ Նույն տեղում, էջ 126 :

¹⁹ Նույն տեղում, էջ 129 :

²⁰ Նույն տեղում, էջ 131 :

²¹ Նույն տեղում էջ 148 :

²² Նույն տեղում, 1990, 155:

²³ Նույն տեղում, էջ 159 :

սև կրակ,⁴ սև օձ,⁵ սև դժոխք,⁶ սև ձեռք,⁷ սև սուր,⁸ Զեքի սև փաշա, սև շանթ ու կայծակ,⁹ սև օր,¹⁰ սև ամպ,¹¹ սև հող,¹² ամպերի վարագույրը սև,¹³ սև թագբեհ,¹⁴ սև ձյուն,¹⁵ սև անգթություն,¹⁶ սև Չինգիզ խան,¹⁷ սև-կարմիր ծով,¹⁸ սև թուր,¹⁹ սև Դեր-Զոր,²⁰ սև եղեռնագործ Թալեաթ, յաթաղանի սև լեզու,²¹ գայլի սև ոհմակ,²² սև անգղ,²³ սև մահմեդներ,²⁴ սև ամպերի պես, սև ամպի նման,²⁵ և այլն:

Հովհ. Շիրազը «Հայոց դանթեական» պոեմի *Ապշանքի գիշեր* բաժնում, սահագարհուր իրողությունները նկարագրելիս, *սև* ածականը գործածում է 8 անգամ, 2 անգամ էլ՝ նրանից սերված բայ:

Եվ օրոցք էինք՝ գերեզման դառանք,
Սև հագավ Սև-սար գյուղը, մորս պես,
Սև էին սարի ձյուններն էլ, ասես,
Սև էին հագել նոճիներն անթիվ՝
Կախաղան դառած ծառերն անհաշիվ,
Սև էին լալիս ջրերն արցունքված՝
Իմ անմեղ հայոց արնից ակունքված,
թագբեհ թվաց՝

Գոմերում այրված գանգերը խղճուկ,
Սև էին անթիվ գյուղերն հրկիզված,
Սև էին անգամ աստղերն հուզված,
Հայ կույս ու կանանց կտրված կրծքի
Թագբեհ դարձված պտուկների պես՝
Սևացել էին աստղերն երկնքի...
Մեր Հարդագողի սև աստղացան էլ մի

¹ Նույն տեղում, էջ 177 :

² Նույն տեղում,):էջ 179 :

³ Նույն տեղում, էջ 180 :

⁴ Նույն տեղում, էջ 192 :

⁵ Նույն տեղում, էջ 195:

⁶ Նույն տեղում, էջ 196 :

⁷ Նույն տեղում, էջ 202, 212 :

⁸ Նույն տեղում, էջ 204 :

⁹ Նույն տեղում, էջ 215 :

¹⁰ Նույն տեղում, էջ 220 :

¹¹ Նույն տեղում, էջ 224 :

¹² Նույն տեղում, էջ 227 :

¹³ Նույն տեղում, էջ 239:

¹⁴ Նույն տեղում, էջ 246 :

¹⁵ Նույն տեղում, էջ 248 :

¹⁶ Նույն տեղում, էջ 260 :

¹⁷ Նույն տեղում, էջ 262 :

¹⁸ Նույն տեղում,, էջ 268 :

¹⁹ Նույն տեղում, էջ 269 :

²⁰ Նույն տեղում,, էջ 274 :

²¹ Նույն տեղում, էջ 277 :

²² Նույն տեղում, էջ 284 :

²³ Նույն տեղում, էջ 289:

²⁴ Նույն տեղում, էջ 298 :

²⁵ Նույն տեղում, էջ 301 :



Սևացել էին մեր մահաթնջուկ
մթնում ծպտված...¹

Մահիկնաճակատ ալլահի ձեռին՝

Հայոց դանթեականի 193-րդ էջում նշված *սև* ածականը գործածված է յոթ անգամ՝ սև թուխպ/ զրահ/ յաթաղան/ մուր/ ժայռ/ հրաման/ վանք:

Նաև կիրառված է չարագործ Թալեաթի վատ հատկանիշն առավել խտացված բնութագրելու համար՝ Սև եղեռնագործ Թալեաթն այսպես էր լպիրշ պարծենում:²

գ) *Եղեռնին առնչվող թվականները*: Խոստուն են թվականների՝ սովորությանին արժեք ձեռք բերածները, որոնք գալիս են հնուց: Օրինակ՝ *յոթ* թվականի՝ ժողովրդական մտածողությամբ դառնակակիծ կիրառություն կա «*Հայոց դանթեական*» պոեմում զարգացած տարբեր ազգ-պետություն-երկրների վերաբերյալ, է: Հեղինակն այդ երկիր-պետությունները սկզբից թվարկում է, որոնք յոթից ավելին են՝ Աֆրիկա, Եվրոպա, Ամերիկա, Ֆրանսիա, Իրան, Իսպանիա, Ճապոն, Չինաստան, Հյուսիս (Ռուսաստան), հետո նշում հայ և շատ ժողովուրդների խոսքում գործածվող այդ թիվը:

Աշխարհ սփինքը՝ քարե աչքերով անմտասևեռ...

Վիշտս չկիսեց թեկուզ կես կաթիլ քարե արցունքով...

Քարե խաչապաշտն ու ողջը քարե...

Տեսավ արնածովն ու սփինքավելով մի խոսք էլ չասավ,

Յոթն աշխարհները՝ յոթն էլ մշտաքար, յոթն էլ մշտաթուն,

Յոթն էլ մշտաթուն, ավաղ, մեզ համար յոթն էլ մշտաքուն,

Յոթն էլ յոթ սփինքս՝ խորքում կայենված...

Ահա թե ինչու յաթաղանը լիրբ չի ուզում քավել Իր մեղսածովը...³

Յոթ թվականը *շատ* իմաստով գործածված է *յոթն ազգերի չռած աչքեր* ⁴ շրջաստությամբ, որը նշանակում է *թշնամական, զավթողական վերաբերմունք*:

Չոհեր նշող մեծ միավոր թվականները շատ են գործածված «*Հայոց դանթեական*»-ում: Դրանցից են՝ բյուր.⁵ երեսուն հազար այրեր,⁶ վաթսուն հազար,⁷ հարյուր հազար,⁸ չորս հարյուր հազար,⁹ յոթ հարյուր հազար հայեր մորթվեցին,¹⁰ յոթ հարյուր հազար,¹¹ հազար հազար հայ¹² (միլիոն իմաստով),

¹ Նույն տեղում, էջ 207:

² Նույն տեղում, էջ 277 :

³ Նույն տեղում, էջ 262 :

⁴ Նույն տեղում, էջ 10:

⁵ Նույն տեղում, էջ 227:

⁶ Նույն տեղում, էջ 57:

⁷ Նույն տեղում, էջ 49, 318:

⁸ **Շիրազ**, հ. II, էջ 197:

⁹ **Շիրազ**, հ. V, էջ 55, 73:

¹⁰ Նույն տեղում, էջ 53:

¹¹ Նույն տեղում, էջ 278:

¹² Նույն տեղում, էջ 274:



Քանդակադեմքն էլ քո առյուծաբաշ:¹

Գեղագիտական մղումով անհարիր թվացող կապակցություններով շաղկապում է ճշմարտացի նախադասություն, որը ահագարհուր, մոռացված իրողության փաստարկում է:

Սգա՛ (Հայաստան),- գոռում են նահատակներդ Գանգ լռությամբ էլ գոռում են լռին:²

Ահա հանճարեղ Շիրազի կողմից վայրենաբարո թուրքին բնութագրող մի շարք նախադասություններ՝ մոլեգնել է գայլոհմակը սև,³ Մոնչում էին թուրք ասկյարները վայրենախոսժան, Ճչում, ձորն էին մղում վերնից սառնաղեմ, դաժան, Զինված գայլերը վիհն էին նետում անգեն գառներին, ...վարում հայերին կոտորում էին Անդունդը իջած ասկյարները նոր, ասկյարները հին, Ու դահճաձեռքով նախճիրն ու ոճիրը հորդեցին ձորում, Ցայտեց արյունը,⁴ ...ազգ է թաղում ցեղիկ մի ահմեդ, Ցեղաջնջվում է մի ողջ ժողովուրդ⁵ են:

Առանձնանում են շարահյուսական միջին չափի միավորների՝ բառակապակցությունների խոսուն օրինակները (սրանք շատ են տեսակներով ու կառույցներով՝ տարաբնույթ)՝ ձյան փաթիլներ՝ մորթված մանկանց սուրբ ոգիներ,⁶ յաթաղանի գորք,⁷ առյուծի բերան, զինավառ վագր,⁸ ապրիլի քսան և չորսին,⁹ հազարառոհմակ գորշ գայլը, ոհմակը վագրենագրահ, պես-պես ձևերով ցեղասպանության,¹⁰ Պիղծ լռություն,¹¹ գայլազլուխ յաթաղան, թուրք մարդասպան,¹² գանգ լռություն, լռին գոռալ,¹³ Փոս ընկած աչքեր՝ սով բահով փորված, Դուրս թռչող բիբեր ու բեղեր պոկված,¹⁴ շուն Թալեաթ,¹⁵ թուրք հորդաները գերմանագրահ,¹⁶ Մոնչում էր լռությամբ էլ,¹⁷ քնած խիղճ, դժոխսադուռ գիշեր,¹⁸ գաղտնի հրանգ,¹⁹ մեռելադաշտի լռություն,¹ վերջնական

¹ Նույն տեղում, էջ 229:

² Նույն տեղում, էջ 260:

³ Նույն տեղում, էջ 284:

⁴ Նույն տեղում, էջ 298:

⁵ Նույն տեղում, էջ 299:

⁶ **Շիրազ**, հ. I, էջ 12:

⁷ **Շիրազ**, հ. V, էջ 10 :

⁸ Նույն տեղում, էջ 11:

⁹ Նույն տեղում, էջ 12, 43, 155, 276:

¹⁰ Նույն տեղում, էջ 14:

¹¹ Նույն տեղում, էջ 18:

¹² Նույն տեղում, էջ 68:

¹³ Նույն տեղում, էջ 260:

¹⁴ Նույն տեղում, էջ 293:

¹⁵ Նույն տեղում, էջ 311:

¹⁶ Նույն տեղում, էջ 301:

¹⁷ **Շիրազ**, հ. I, էջ 269:

¹⁸ **Շիրազ**, հ. V, էջ 236:

¹⁹ Նույն տեղում, էջ 254:

հաշվեհարդար,² հայոց մեծ դատ,³ հայախեղդ վիհը թալեաթաթուրքի՝ աչքի պես անգութ, շան քաջություն (թուրք), ուռուսի շներ (հայ), փրփուր Աստված, մուր Ալլահ, դժոխքի դագաղ ձոր, սև մահմեդներն ասկյարներ դառած, փետուր մանկանց դեմ սուր թրեր առած,⁴ դժոխախենջար յաթաղան, յաթաղանաբեր ցավ, քսաներորդ դարի ցավ, դժբախտ ցեղ,⁵ եղեռնահաղթ մահաժամ, ցեղասպան քամի,⁶ Ավարայրի իմ հայ Վարդանի մոռունչը, հայոց եղեռն, մեծախորհուրդ լռություն,⁷ սև անգղի կտուց յաթաղան,⁸ կաղապարված դավաճան լռություն, լռության բերան, լռության պղծաճակատը, ջարդված բերաններ⁹ են:

4. *Եղեռնին առնչվող պատկերավորման, արտահայտչական միջոցներ*: Հնչեղ շատ միջոցներ կան, որոնք գեղագիտական պաճուճանքներով առավել ազդեցիկ են դարձնում ահագարհուր ճշմարտությունները: Առանձնանում են մակդիրները, համեմատությունները, կրկնաբերությունները, ճարտասանական շեշտը, հարցումը են: Անդրադառնանք մի քանիսին:

ա) *Մակդիր*: Մեծ բանաստեղծ Հովհ. Շիրազը մանրանկարել է եղեռնի ժամանակ եղած ահագարհուր եղելությունների ահավորություններն՝ ընդգծված ու տարաբնույթ հատկանիշներով կամ հատկանիշների հատկանիշներով: Տեղահանված մեծ մասսայական խմբերի՝ հայ ժողովրդի արևմտյան հատվածի կրած անլուր տանջանքները մանրամասնվում են բազմաթիվ հատկանիշներով: Ցնցող են մարդկային այդ ոտնահարված տեսլապատկերները, որոնք իրականություն են եղել, ու մարդկությունը չի ուզում հասկանալ, որ, չգնահատելով այդ դժնի արարքները, չարակամներին ազատություն է տալիս: Դժնի մարդկանց չարագործությունները, դրանց հետևանքները ցնցող են: Մակավ են մեր փոքր ուժերի հերոսական գործունեության հատկանշային խտացումները, որովհետև թուրքի կողմից մշակված պայքարի ձևը հիմնականում անգեն մարդկանց դեմ էր: Գեղագիտական որոշիչ, ձևի պարագա մակդիրներն առավել են խտացնում ներկայացվող մտքերը՝ դրական, թե բացասական: Տանջալլուկ պատկերների կամ նրանց հատկանիշների ընդգծումներն իրական են:

Գլուխն հայտնվեց, դեռ պոչը չկար,
Հյուժված, ուժընկեց, դեղնած ու տկար՝
Ցրթն օր, յոթ գիշեր սովահար մի ծով,
Հայ գորբից զրկված՝ գալիս էր կոծով...
Փոս ընկած աչքեր՝ սով բահով փորված,

Դուրս թռչող բիբեր ու բեղեր պոկված,
Հեք, ոգելքված հայացքներ ցավոտ,
Հայացքներ վհատ, հայացքներ ցասկոտ,
Ոտքեր՝ արնոտված, քար խեցված ոտքեր,
Մի հոտ՝ ետևից հովվի տեղ՝ գորբեր

¹ Նույն տեղում, էջ 148:

² Նույն տեղում, էջ 254:

³ Նույն տեղում, էջ 167, 275:

⁴ Նույն տեղում, էջ 298:

⁵ Նույն տեղում, էջ 299:

⁶ Նույն տեղում, էջ 303:

⁷ Նույն տեղում, էջ 265:

⁸ Նույն տեղում, էջ 289:

⁹ Նույն տեղում, էջ 290:

(Էնվերագորքեր՝ գերմանագրահ...):¹

բ) *Համեմատություն*: Համեմատությունը, կապակցությամբ, լրասույթով՝ բարդ նախադասությամբ արտահայտվելիս, բաղադրիչները շիրագյան ծավալումներով լցվում են և պահանջում ուշադրություն՝ համանման երևույթների հետ բաղդատվելու, առավել տիպականացվելու, ամբողջությամբ կամ սրությամբ ընկալվելու համար: Օրինակ՝ ահա «Հայոց Դանթեական» պոեմից Հայաստանի բռնագրավված իրավիճակի համեմատությունը բանտարկված Մասնա Միերի հետ (շիրագյան գեղումները Հայաստանին առաջին երեք տողերն են, իսկ վերջին երկու տողը ընդհանուր հատկանիշի նախադասություններով արտահայտվել են):

Ազգերի ծովում՝ իմ Հայաստանը մի լեռնակղզի՝

Աղամանդակուռ իր Արարատով՝ գահը Կովկասի:

Ինչպես Միերին՝ ժայռի մեջ առան, սեղմեցին նրան,

Յոթը ազգերի դարերով չոլած աչքերը վրան,

Բայց ամենամեծ սեղմողը դարեր

Մելջուկի զարմն է, որ սեղմում է դեռ...²

Հաջորդ տողերում նույնը շարունակելով՝ նորից լրասույթի՝ բարդ նախադասության շրջանակներում ավելի ծավալուն կառույցներով համեմատություն է կատարում: Սկզբում ստորադաս նախադասությամբ տրվում է համեմատությամբ՝ ավանդական հանրաձանոթ *հովիվ, հոռ, գամփո* հասկացությունների տարանջատ նկարագրությամբ (հինգ ասույթի՝ պարզ նախադասության շրջանակներում), այնուհետև համեմատությամբ՝ գերադաս նախադասությամբ, նորից այլ կենդանիների՝ թռչունների այլաբերությամբ հաստատում է միտքը, այնուհետև ուղղակի իմաստով շարունակում ասելիքը.

Ինչպես քաջ հովիվն իր հոտից խլես,

Սյդպես բորենին արծվին վանդակեց,

Անտերունչ թողնես ողջ հոտը նրա,

Ձատեց հայ ազգից ուժը պարմանի,

Խեղդես գամփոները, հույսը խարխուլես,

Ձենքի հասակի հայ ուժն հավաքեց,

Բաց թողնես գայլիդ գառների վրա,

Լուծեց գորքի մեջ իր յաթաղանի:³

գ) *Կրկնաբերություն*: Սրանք տարաբնույթ են՝ սկսած հնչյունական փոքր միավորից՝ ավարտած շարահյուսական մեծ միավորով՝ հավելված հնչաբանական շեշտով, հարցականով: Հովի. Շիրագը կրկնություններում միայն չի ողբերգում, այլ նաև նկարագրում է հայ բազկի ուժը՝ զինված ֆիդայիների քաջագործությունը⁴ ընդգծելով միաբանության գոյությունն ու բացակայությունը:

Ծավալուն կրկնություններում ընդգծվում են հեղինակի ուշադրության կենտրոնում գտնվող երևույթները, առավել էականը կամ հոգեբանորեն ծավալելու անհրաժեշտ մտքերը: Հատկապես եղեռնի զոհերի նկատմամբ

¹ Նույն տեղում, էջ 293:

² Նույն տեղում, էջ 10:

³ **Շիրագ**, հ. V, էջ 10:

⁴ Նույն տեղում, էջ 303-326:

համահայկական ցավը հոգեբանական համադրումների, հակադրումների կարիք ունի: Ընկան գլխաբաց հայերն աղոթող՝

Թնդանոթներից ձորն հրաբուխող	Ընկան խոնված հայրեր, հարս ու կին,
Հուր լավայի տակ... Ընկան գլխահակ,	Ընկան հարյուրները, հասկի պես ընկան,
Ընկան անդնդում՝ վերից զարկվելով,	Ընկան հագարներն իմ անօգնական,
Անբույժ վերքերի հրից խարկվելով,	Ընկան բյուրերը, իմ հայ քույրերը,
Ընկան անդնդում, հրագարկ ընկան,	Ընկան ծերուկներն, ընկան բյուրերը,
Ընկան մայրերը ճիչերով մանկան,	Ընկան հայերը՝ թուրքանալ մերժող...
Ընկան մանուկները՝ իրենց մոր գրկին.	Ահեղ դատաստանն աշխարհի բերելով... ¹

Ամփոփում

Հայ ժողովրդին թուրքի կողմից հասած ահագարհուր ու նենգ հարվածին՝ եղեռնին նվիրված այս գիտական հոդվածում հետազոտված են մեծանուն գրող Հովհ. Շիրազի չափածոյում գործածված մի շարք լեզվաոճական հետաքրքիր միավորների գեղագիտական արժեքները: Հնչողությամբ առանձնանում են բառային, ձևաբանական, շարահյուսական, պատկերային մի շարք կիրառությունների տեսակներ:

Some Linguistic-stilistic Units on the Armenian Genocide in the poetry of Hovannes Shiraz Silva Minasyan Summary

Key words: *Armenian Genocide, Hajoc Danteakan, Shiraz, linguistic, lexical, morphological, syntactic and figurative units*

The article deals with the artistic function of some linguistic units relevant to the Armenian Genocide in the poetry of great Hovannes Shiraz. In particular, poems and Hajoc Danteakany have been reviewed. The most distinguished features are the use of lexical, morphological, syntactic and figurative, expressive (metaphor, comparison, repetition) units.

Ряд языковых-стилистических единиц, отображающих Армянский геноцид в поэзии Ованеса Шираза Сильва Минасян Резюме

Ключевые слова: *Армянский геноцид, Армянская Дантеида, стилистико-языковые единицы, лексические, морфологические, синтаксические единицы*

¹ Նույն տեղում., էջ 302-303 :

В данной статье исследуется художественное значение ряда языковых-стилистических единиц, отображающих Армянский геноцид в поэзии великого писателя Ованеса Шираза. В частности, исследованы стихотворения и поэма Армянская Дантеиада. Особой яркостью выделяется употребление ряда лексических, морфологических, синтаксических, выразительных, экспрессивных (метафора, сравнение, повтор) единиц, которые отображают ужасное положение народа Западной Армении.

ՏԱՐԵԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՆՐԸ ՍՓՅՈՒՈՔԱԶԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՁ

Նոնա Դավթյան

ԿՄԻ ԼՂՀ մասնաճյուղ

Բանալի բառեր- տարեգրության ժանր, մանկության վերհուշ, սուգի օրեր, կորուստների ցավ, վերապրող սերունդ, կարոտ, նահանջ, ինքնալքում, ուղևորավեպ, ազգային նկարագիր:

Տարեգրության ժանրի՝ փաստագրական սկզբնաղբյուրի առաջին նմուշները հայ գրականության մեջ երևան եկան դեռևս միջնադարում՝ 11-12-րդ դարերում, պատմագրական արձակում: Ժանրի հիմնադիր համարվում է Մատթևոս Ուռհայեցին, ով իր երկասիրությունը շարադրել է՝ պահպանելով ժամանակագրական հաջորդականությունը: Ուռհայեցուց հետո տարեգրության ժանրային սկզբունքներով շարադրված երկերից է Սմբատ Գունդստաբլի «Տարեգիրքը», որն արժեքավոր և հարուստ տեղեկություններ է շարադրում Կիլիկիայի հայոց թագավորության, ինչպես նաև հարևան տերությունների հետ փոխհարաբերությունների վերաբերյալ:

Քսաներորդ դարասկզբի արձակում տարեգրության ժանրի փաստագրական ճշգրտությանը գումարվում են գրողի գեղարվեստական մոտեցումները, որոնք տարբեր գունդեանգավորումներով երևակվում են ինքակենսագրական երկերում: Ժանրի բացառիկ օրինակներից են Գուրգեն Մահարու կենսապատում-ինգապատումը, Վահան Թոթովենցի «Կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա» վիպակը, Ստեփան Զորյանի «Մի կյանքի պատմություն» վեպը:

Գեղարվեստական տարեգրության սկզբունքները ինքնահատուկ երանգավորումներով դարձան նաև սփյուռքահայ գրականության տրոփը: Իրական կյանքն իր ամբողջությամբ, մարդկային խեղված ճակատագրերը, հեղինակի ու հերոսների մտորումները, վերագտնելու ճիգերը դարձան սփյուռքում ստեղծվող գրականության ակունքը:

Եղեռնից փրկված սերունդը ապրեց անցյալի վերհուշով, կարոտով, որը երազային կապույտ թռչնակի թևերին թառած հետզհետե կորավ մշուշներում: Արձակի թե՛ փոքր, թե՛ լայնակտավ երկերում որքանոցի սերունդը գրականությամբ փրկեց իր և իր նման հարյուրավորների կյանքը: Վանը, Մեղիբեն, Արմտանը, Արմաշը, Ակնը, Ռոդոսթոն գեղարվեստական տարեգրության սկզբունքներով են գրականություն բերվում, ապա՝ սուգի օրերը, տարագրության բավիղները, նոր միջավայրը, մարդիկ վերարտադրվեցին լուսանկարչական ճշգրտությամբ: Այդ պատմությունները անմոռանալի ու նվիրական հուշեր են, որոնք պարտադրում են անհետացումից փրկել այն, ինչ պատկանում էր իրենց, բայց խլվեց յաթաղանի ուժով: Գրողին խոսեցնողը կարոտը, ցավն ու ցասումն են, նաև սպասումները, կորսված հայրենիքը վերագտնելու սրբազան հույսը: Գեղարվեստական տարեգրության բացառիկ

օրինակներ են Համաստեղի ու Մնձուրու արձակ պատումները: Փոքր կտավի այս ստեղծագործություններում հաճախ հերոսը նույնանում է հեղինակի հետ, ով տարիների հեռավորությունից գրչով անմահացնում է իր ապրած միջավայրը, դեմքերն ու հիշատակները: Համաստեղը իր և հերոսների՝ Տափան Մարգարի, Փիլիկ աղբոր, Պալիկ հորքուրի, փեսա Օվանի, Մակարի տղա Մարգարի, Երանոսի, ծննդավայրի պարզ ու անմիջական մարդկանց ապրած կյանքն է տարեգրում. վրձնվում են Էրզրի հին ու բարի մարդիկ, և հեղինակին մնում է «ճակտին վրա կնճիռներ շարելն ու դեմքին վրա զանազան գիծեր ձգելը»: Ահա վարժապետը, ով գրատախտակին «քերականական վերլուծումի» համար գրել են, թե «Արարատը աշխարհի ամենագեղեցիկ լեռն է», Երանոս աղբարը, ում համար անբացատրելի զգացումներ են արթնացնում Էրզրից բերված թուրք, որի «համը իր մարմնին մեջ դաշտանկարի մը պես տարածվեց», ծերունի Օհանի նվիրվածությունը հողին, ով տարագրության քշվող կարավանի մեջ քայլելիս չի մոռանում իր արտն ու այգին և անցնող գյուղացուն պատվիրում է Թուրքանց Միքայելին ասել, որ «կավառ կա շտկելու», որպեսզի ջուրը զուր չհոսի, բամբակին ջուր հասցնի:

Հ. Մնձուրին ևս «հայրենականներու մեջ տեսարան մը, պահ մը, անկյուն մը» տվեց, ինչպես հաճախ շեշտում էր՝ բառերով նկարչություն արեց: «Կապույտ լույս» և «Արմտան» ժողովածուներում բազմաթեւ գույներով նկարագրեց հայրենի գյուղի, գյուղացիների՝ Տյուկե Մամայի, Տաղլունց Մարոյի, Շիրինի, Նարոյի կերպարները: Նրա հերոսներից Տեմիրճենց մեծ պապը իր պապն է, ինքը՝ Ակոբը, մայրը, տատը՝ մարդիկ, ովքեր բարձր էին գնահատում իրենց ազնիվ աշխատանքը, տունն, օջախը անմար պահելու գաղափարը. «օճախը չմարիլը, մեջը մարդ ըլլալը, անունը չկորսուիլը»: «Հիմա այս հերոսները հոն չեն, հիմա ալ բամբուսիկները նորեն կրուսնի՞ն, արդյոք, կըսեք»[1], - հերոսի անունից լալախառաչ հարց է հնչեցնում Մնձուրին: Հայրենի գյուղը ավերակվում է .«Այս բոլորը գեշ երագի մը պես եկան»[2], - նկատում է Համաստեղը:

Ինքնակենսագրական տարեգրության ժանր է նաև Վահե Հայկի արձակ զինանոցը, մանկության օրրանը, ուր «ապրեցա բարի ու միամիտ երագներ, գեղջուկ տնակի մը մեջ, անհոգ ու բույիկ ոտքերով, խարտեաշ մագերս հովերուն»[3]:

Արձակագրի համար հեքիաթային, անմեկնելի կախարդանք ունեն ծննդավայրը, գյուղի աղբյուրը, որն իր անուշ երգով ելևեջում է գրողի հոգում, հիշեցնում անդարձ կորուստները: Հոդմաշունչ օրերը քշել-տարել են ամեն ինչ, բայց արմատախիլ անել հիշողություններից անցյալի հիշատակները, մանկության երագը, անհնարին էր: Հիշողության գույներով հեղինակը ներկայացնում է հին գյուղը, բարի ու աշխատասեր մարդկանց, տեսլանում են հոր լուսավոր կերպարը, այգին, որն այլևս լքված է իրական տերերից, ինչպես հեռվում մնացած բոլոր այգիները՝ ամայի, անշունչ, մահվան խորշակն է

թափառում ամենուր. «Հիմա լքված է ան, մեր այգին, ինչպես բոլոր այգիները...»[4]:

Շավարշ Նարդունին նույնպես ընթերցողին տեղափոխում է հարազատ ժողովրդի անցյալը, երբ կյանքն անուշանում էր գեղջուկի հորովելներից, հայ մամիկի քաղցրածոր աղոթքներից, դպրատան պատերի ներսում մանուկի շուրթերից հնչած այբուբենից: Բայց թուրքի բարբարոս ձեռքը ավերեց ամեն ինչ, և օդում կախվեց հարյուրավոր անպաշտպանների ճիչը, երկինք պարզված ձեռքը բռնեց ցավից, այբ-ը քարացավ մանուկի շուրթին... «Ապրիլ ամսուն իմ գիւղս ալ մեռաւ: Ու հիմա գիւղ չունիմ ես: Ինկեր եմ օտար գետերու ափը, ուռնիներու վրա կախեր եմ քնարս եւ կուլամ միտքս բերելով իմ գիւղս...»[5] - գրում է Շ. Նարդունին և «իմ գյուղս, ինչպես մատներս են իմս» ստացական հոդով հյուսում իր գյուղի երգը: Տառապանքների, ջարդի, ապրած սարսափների վկայությունն է Նարդունու «Աքսորի օրագիր» անավարտ օրագրությունը, որտեղ նկարագրում է հայրենի Արմաշի տարեգրությունը: Օրագրային գրառումներն արձակագիրը սկսում է 1915-ի օգոստոսի 13-ից, երբ արմաշցիները, անորոշության սարսափն աչքերում, հեռանում են նվիրական գյուղակից, և այդ երթը ձգվում է մինչև Ադաբասար:

Իր կյանքի դժնի օրերն է տարեգրում Երվանդ Օտյանը ««Անիծյալ տարիներ. 1914-1919 (Անձնական Ֆիշատակներ)» գրքում:

Մատնություններ, բանտ ու աքսոր, և այդ լաբիրինթոսը ծայր է առնում Պոլսից Նիկոմեդիա, ապա հասնում Տարսոն ու Հալեպ: Ճակատագրի անտեսանելի ձեռքը բռնեց դարձած հարվածում է նրան՝ այս անգամ նետելով Գոնիա, որտեղից էլ Սուլթանիե, իսկ մի քանի ամիս հետո նրան հաջողվում է վերադառնալ Պոլիս: Օտյանը այդ օրերի մասին գրում է. «Իր սկզբնավորությանը մեջ, չէի ըմբռնած աղետին մեծությունը, ու երբ 1915 թ. սեպտեմբերի 13-ին տարագրվեցա ու ակնառես եղա հարյուրավոր մեռնողներու, նոր զգացի, որ ամեն մեկ անհետացող հայու փոխարեն իմ ալ հոգիես մասս մըն է որ կը պակասի»[6]:

Տարեգրության ժանրի մատույցներում է նաև Երվանդ Օտյանի «Հայ տիասբորան» երկը, այն հեղինակը անվանել է «Ժամանակակից վեպ հայ հալածական կեանքէ»: Վեպը որպես թերթոն հրատարակվեց Կահիրեի «Արեւ» օրաթերթում՝ 1924-1925 թվականներին, առանձին գրքով՝ 1999-ին Հենրիկ Բախչինյանի խմբագրությամբ՝ Երևանի Գրականության և արվեստի թանգարանի կողմից: Վեպի հերոսները մահվան ճանապարհներն անցած, հայրենիքն ու հարազատներին կորցրած սերունդն են: Մեծ երգիծաբանը ողբերգականի կողքին երբեմն նուրբ ու ներդամիտ, երբեմն էլ սպանիչ ծաղրի է ենթարկում հաշվենկատ բարսեղների տիպերը, մտահոգություններ հայտնում սփյուռքի ներկայի ու անհեռանկար ապագայի հանդեպ, որքան է հայի ցեղային «տոկունությունը», կկարողանա՞ արդյոք պահպանել ինքնությունը, թե արագորեն կտարրալուծվի ապահայ հոսանքների մեջ:

Ազգաջնջումի, անապատի խոշտանգող իրականության, սով ու համաճարակ տեսած, որբանոցի սերնդի շարքերում է Վազգեն Շուշանյանը: Շուշանյանը նկարագրեց երեք միջավայր՝ հայրենի Ռոդոպթոն, աքսորի, մահվան ճամփաները և վերադարձը ավերված գյուղ: Ինչպես պոեմում, այդպես նաև արձակ երկերում, անցյալի ստվերները տեսանում են, մանկության ոսկե հեքիաթն է հյուսվում, ապա հեղինակը մտովի դեգերում է աքսորի անլուր տառապանքներով լի ճանապարհներով, հասնում մինչև ներկան՝ «անդեմ ու տրտում» ֆրանսիական քաղաքի պանդոկներից մեկի փոքրիկ սենյակ: Իր ստեղծագործությունների մասին խոսելով՝ Շուշանյանը նկատում է. «Եթե ոչ դիպախաղը՝ գործող անձերը սակայն առած են իրականութենեն»[7]:

«Սիրո և արկածի տղաքը» վեպում Շուշանյանը ամբողջացնում է իր և ճակատագրով որբության դատապարտված հոգեկից ընկերների կյանքը, որբանոցներում կրած տառապանքները:

«Սփյուռքահայ գրականության մեջ թերևս չկա մի հեղինակ, որի ստեղծագործությունն այդքան ինքնակենսագրական լինի, ինչպես Վազգեն Շուշանյանին է»[8]՝ նկատում է գրականագետ Ա. Թոփչյանը:

«Սիրո եւ արկածի տղաքը» վեպը առաջին անգամ լույս տեսավ 1929 թ. Բոստոնի «Հայրենիք» ամսագրում: Վեպում երկու բախտակից ընկերների՝ Երվանդի և Վահրամի Կովկասում անցկացրած օրերի նկարագրությունն է, որտեղ բացվում է փրկված հայրենիքի վարագուրված պատկերը: Երվանդի (հեղինակի) և Վահրամի (նախատիպը հավանաբար Լևոն-Զավեն Սյուրմեյանն է) համար հայրենիքը չդարձավ հանգրվան, այլ մի վայր, ուր շարունակվեց նրանց որբությունը, նրանք «պանդուխտներ» էին իրենց իսկ տանը, ուստի ստիպված եղան նորից բռնել գաղթի ճանապարհը. «Ուշ գիշերին փախանք գող մարդոց պէս, ես ու ան, երկու պզտիկ տղաք, կծկուած աղտոտ երկաթուղակառքի մը անկիւնը, կորսուած մեր յիշատակներուն խորը...»[9]:

Երվանդ-Շուշանյանի հայրենիքում մնալու կովան կարող էր դառնալ Արփիկի հանդեպ տածած սերը, սակայն բոլշևիկյան գաղափարապաշտությունը ներքին երկընտրանքի առաջ է կանգնեցնում նրան, Երվանդը գոհաբերում է սերը հոգուտ երկրորդի՝ մշուշներում մնացած էրգրի տեսիլքի: Եվ նրանք որոշեցին վերադառնալ «մե՛ր Հայաստանը», որովհետև այն, որ կար «դարձած է կրկին Ռուսաստան»[10]:

Մանկության հուշերին ավելի ուշ վերադառնում է բանաստեղծական ժողովածուներով իրեն հաստատած Մուշեղ Իշխանը: Նա գրեց իր կյանքի վեպերը՝ «Հացի եւ լոյսի համար», հրատարակվել է Բեյրութում 1951 թվականին, որին շարունակում են «Հացի եւ սիրոյ համար», իսկ 1974-ին՝ «Մնաս բարով, մանկութիւն» հուշապատումները: Հեղինակի տեսադաշտում աքսորի ճանապարհներն են, ուր «ինք ստիպուած էր ահա ակնատես յուղարկաւորը ըլլալու իր մեռած մանկութեան եւ նրբագարթ երագներուն...»[11]:

Но кроме этого памятника, за городом, по дороге в Эчмиадзин, у деревни Мусалер, у той самой деревни, в которой живут потомки защитников горы Муса, есть другой памятник, - памятник героям Мусадага. Он стоит как башня бесстрашная на взгорье, сооруженный из красного туфа, на лицевой стороне просматривая означенный рельефом орел – символ смелости и красоты человеческого духа.⁴ И наш народ, создавший эти памятники, не забывая о первом, должен ориентироваться на второй, другого пути у нас нет».

Касаясь кошмаров и кровавых преступлений в Армении, М.Горький писал: «Помимо воли, память воскрешает трагическую историю Армении конца XIX начала XX века, резню в Константинополе, сасунскую резню, «великого убийцу», гнусное равнодушие христиан «культурной» Европы, с которым они относились к истреблению их «братьев во Христе», позорнейший акт грабежа самодержавным правительством церковного имущества в Армении, ужасы турецкого нашествия последних лет, - трудно вспомнить все трагедии, пережитые этим энергичным народом. Удивительно быстро и ловко забывают факты такого рода господа «гуманисты», идеалисты, защитники «культуры», основанной на жадности, зависти, на рабстве и на циничном истреблении народных масс. Ложь и лицемерие защитников этой «культуры по уши в крови и грязи» восходят

Армянская ССР.Ереван 1966, стр.394

¹ Эрнест Хемингуэй. Избранные произведения в 2-х томах, ГИХЛ, Москва, 1959г, Т I. Стр.47

² В.Я. Брюсов "Летопись исторических судеб армянского народа" М., 1918г.

³ Франц Верфель "Сорок дней Муса-дага", "Советакан грох", Ереван-1984, предисловие стр.6

⁴ Франц Верфель "Сорок дней Муса-дага", "Советакан грох", Ереван-1984, предисловие стр.8

до явного безумия, до преступления, которому нет достойной кары».¹

О жутких впечатлениях поэта писала в своих мемуарах его жена Надежда Яковлевна Мандельштам: «Город начинался с бесконечного кладбища, потом крохотная базарная площадь, куда спускаются улицы разоренного города. В этом городе, когда – то, очевидно, богатом, и благоустроенном, картина катастрофы и резни была до ужаса наглядной. Мы прошли по улицам и всюду одно и то же: два ряда домов без крыш, без окон, без дверей. Говорят, после резни все колодцы были забиты трупами. Внизу – на базарной площади – копошилась кучка народу, но среди них ни одного армянина, только мусульмане. Создалось впечатление, будто мусульмане на базаре – это остатки тех убийц, которые с десятков лет назад разгромили город, только впрок им это не пошло: восточная нищета, чудовищные отрепья, гнойные болячки на лицах. Люди на базаре предлагали нам переночевать у них, но я боялась восточных болячек, а Мандельштам не мог отделаться от мысли, что перед ним погромщики и убийцы»²

Русский писатель и дипломат Александр Грибоедов, близко к сердцу принявший чаяния армянского народа, под руководством которого армяне переселялись в Эривань, Нахичеван другие земли, разделял все тяготы и радости нашего многострадального народа. В составе армии генерала Паскевича он участвовал в освобождении Эривана, Сардарапата, Нахичевана и был награжден медалью «За взятие Эривани».

Армянский народ близко к сердцу воспринял смерть великого поэта и дипломата, так много сделавшего для армян. В первопрестольном Эчмиадзине была проведена заупокойная служба по Грибоедову. В его честь в Ереване названы улица и русская школа. В 1975 году в городе Ереване был установлен памятник Грибоедову на перекрестке центральных улиц Тигран Мец и Хандяна. Надпись на гранитном постаменте гласит: «Александр Грибоедову от благодарного армянского народа».

Против геноцида армян, в защиту их интересов выступил также русский поэт и ученый –литературовед Юрий Веселовский.

Хачик Даштенц первый в Советской Армении заговорил о гайдуковском движении и трагических событиях тех времен. Выразив своей книгой «Зов пахарей»³ народную благодарность движению гайдуков, которому тогда еще не было дано должной оценки.

«Зов пахарей» рассказывает о тех героях армянского национально – освободительного движения конца XIX –начала XX веков, которые известны в истории под именем “гайдуки”. Партизанское движение гайдуков имеет глубокие демократические корни и родилось как протест против ужесточающейся политики османского правительства, угнетавшего национальные меньшинства и поработившего крестьянскую бедноту. (Самые миролюбивые пахари вынуждены были взяться за оружие дабы защитить свою честь и жизни).

Подобное движение вспыхнуло в тот же период в Болгарии, Венгрии, Греции, Югославии.

В книге Дж. С.Киракосяна «Младотурки перед судом истории»⁴ автор описал

¹ Горький М., Собрание сочинений, Т.17, 1952. Стр.134

² Н.Я.Мандельштам мемуары

^{2. 3} Х.Даштенц "Зов пахарей", Ереван "Советакан грох", 1986. 400стр.

⁴ Дж.С.Киракосян "Младотурки перед судом истории". Ереван " Айастан", 1989

историю и время возникновения и развие младотурецкого движения, отметил его пагубную роль в политических судьбах армян, здесь дан критический анализ государственной деятельности младотурок с 1908 по 1918, суть их националистической внутренней и патюркистской внешней политики в годы первой мировой войны.

В 1965г. вышла в свет книга Дж. Киракосяна «Первая мировая война и западные армяне», которая выдержала три издания в 1965 и 1967гг. На армянском, в 1971 г. на русском языках. В 1972 году вышел в свет составленный совместно с Р.Саакяном сборник «Армения в документах международной дипломатии и советской внешней политики».

В 1978 и 1980 гг., когда имя Дж. Киракосяна было уже широко известным, достоянием читателя стал двухтомник «Буржуазная дипломатия и Армения».

Во введении к своей монографии «Младотурки перед судом истории» Дж.Киракосян писал¹ «Отстаивая свою теоретическую платформу, когда они имеют дело с фальсификаторами, нужно быть публицистичным, боевитым “без гнева” писать о вредном – значит писать скучно. А говоря словами Сервантеса, «лживых историков следовало бы казнить как фальшивомонетчиков».

Нельзя также не отметить такие книги наших соотечественников как «Геноцид армян – преступление по международному праву» и «Геноцид армян в Османской империи».

Рано или поздно справедливость восторжествует и насильники встанут перед судом истории.

Факт совершения геноцида армян в Турции не вызывает сомнения. У прогрессивной общественности мира, его признают и турецкие официальные круги. Ведь несмотря на то, что почти 100 лет прошло со дня геноцида 1890-х годов, передовую общественность не перестают волновать события тех времен. Режиссер Фатий Акин турок по национальности - человек душу которого бередит несправедливость нации и боль угнетенного народа вопреки гонениям создал и выпустил на широкий экран фильма «Спи» - «Рубец», рассказывающий о трагических событиях геноцида.

В Потсдаме состоялась презентация книги "Tool in der Wiiste. Der Völker-morolan den Armenier" («Смерть в пустыне. Геноцид армян») немецкого литературоведа и философа Рольфа Хосфельда.

В ней содержатся важные исторические сведения о спланированных властями Османской Турции нечеловеческих действиях против армян весной и летом 1915 года, описаны важные исторические факты о действиях властей Османской Турции.

В книге автор поднимает вопрос о том, каким образом Османской Турции, в условиях гробового молчания и безразличного взгляда всего мира, удалось осуществить геноцид, который по сей день является историческим табу в этой стране.

Данный вопрос не перестанет будоражить умы человечества, пока не будет дана соответствующая оценка злу под названием - геноцид. Нужно провести черту под прошлым и строить новые отношения. Нельзя строить новые отношения, не осудив прошлого, не признав своих ошибок с целью искоренить их.

Так поступает любое уважающее и считающее себя цивилизованным государство,

¹ Дж.С.Киракосян "Младотурки перед судом истории". Ереван " Айастан", 1989, стр.15-16

чтобы не потерять лица и занять по праву свое место в мире.

Статья не ставит цель проведения подробного анализа всех произведений относительно геноцида армян, в преддверии 100-летия проведен лишь ознакомительный обзор произведений некоторых авторов, впервые затронувших данную тему в мировой литературе.

Резюме

В данной статье проведен краткий обзор произведений мировой литературы затрагивающих тему геноцида армян, с ознакомительной целью, в частности “Сорок дней Муса-дага”, “В порту Смирны”, “Армянка-мать” и многие другие. Особый акцент ставится на несомненной вине младотурок за осуществление массовой резни армянского населения.

Համաշխարհային գրականության մեջ առկա քննադատական հայացքները երիտթուրքերի գործունեության նկատմամբ

Նոննա Ավագյան

Ամփոփում

Բանալի բառեր՝ Չարիք, արքոր, մուսավաթներ, միջազգային կյանք, կոտորած, քաղաքակրթություն, ազատություն:

Սույն հոդվածում համառոտ անդրադարձ է կատարվում համաշխարհային գրականության մեջ Հայոց ցեղասպանության թեման արծարծող ստեղծագործություններին, մասնավորապես «Մուսա լեռան 40 օրը, «Սմիռնիայի Նավահանգստում», «Հայուհի-մայր» եւ այլն:

Հատուկ ուշադրություն է դարձվում հայկական բնակչության զանգվածային ջարդերի իրականացման մեջ երիտթուրքերի անառարկելի դերին:

Critical View on the Young Turks' Activity in the World Literature

Nonna Avagyan

Summary

Keywords: evil, deportation, Musavat, religion, international life, massacre, civilization,

freedom

This article conducts a brief overview of World literature about the topic of the Armenian Genocide for informational purposes, in particular, «The Forty Days of Musa Dagh», «Port of Smyrna», «Armenian Woman- Mother» and many others.

Special emphasis is placed on the unquestionable guilt of the Young Turks for the implementation of the massacre of the Armenian population.

**ՎՐԵԺԽՆԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ԸՆԴՎՁՈՒՄ
ԵՂԵՌՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՄ**

Արգիկ Մխիթարյան

հ.գ.թ., պրոֆեսոր

ՍԻՊՀ

***Բանալի բառեր**՝ վրեժխնդրություն, ըմբոստություն, եղենագործություն,
ցեղասպանություն, հույզեր, զգացմունքներ:*

Այսօր համայն հայությունը խոնարհվում ու խնկարկում է Հայոց Մեծ Եղեռնի գոհերի հիշատակը, որոնց անթաղ աճյուններն ու մարդկային գանգերից գոյացած բլուրները, տիեզերքի անհունում թափառող հոգիները դահիճից հատուցում են պահանջում:

1915 թվականն էր: Այդ թիվն էր, որ ողջ մի ազգի աղոթք սառեց շրթունքին և մորթվեց միայն նրա համար, որ հայ էր: 1915-ը պատմական մի տարեթիվ էր, որ կարող էր մի ամբողջ ազգի վախճանը դառնալ:

Եղեռն էր՝ հողագնդի մեղքերի մեղքը, որը նվաստացուցիչ ապտակ է՝ իջեցված մարդկության քաղաքակրթության դեմքին:

Միջագետքի անապատները դարձել են բազում հայերի անանուն գերեզմաններ, որտեղ տանջահար հայի մարմինն ու հոգին մինչ այսօր չեն հասնում անդրշիրիմյան խաղաղության, և Դեր –Ձորն այսօր տնքում է մեղքերի տակ:

Եվ ինչպես մեծ բանաստեղծը կասեր, այս էլ 100 տարի <<Դեր-Ձորի քամին մանկան ոսկորից շվի է սարքել և լուսաբացի աղջամուղջի մեջ սուրում է մահվան նվագներ>>¹:

Այո, ամեն դար մի վերք է թողել ու մի ավերակ, ամեն դար մի կնճիռ է դաջել մեր ժողովրդի ճակատագրին: Սակայն ամեն մի դար մի աստիճան է դարձել տառապանքի Տարտարոսից դեպի Ազատություն ձգվող սանդուղքի: Այդպես եղավ նաև անցյալ դարասկզբին, որը մեր ժողովրդի համար դարձավ դաժան ու ճակատագրական: Աշխարհի գերտերությունների քաղաքական, դիվանագիտական, տնտեսական շահերը, ինչպես այսօր, բախվում էին Կովկասում, և հիմնական թատերաբեմը Հայաստանն էր:

Ձուր էին անուղղելի լավատեսներն ակնկալում, որ քրիստոնյա Եվրոպան օգնության ձեռք կմեկնի օրը ցերեկով ամենքի աչքի առաջ ցեղասպանվող հին ու քաղաքակիրթ հայ ժողովրդին: Ձուր էին Եվրոպայի մեծ մարդասերները՝ Ռոմեն

¹ Վ. Դավթյան. Հատված <<Ռեքվիեմ>> պոեմից, Հալեպ-Երևան, 1977թ.

Ռուլանը, Կարլ Լիբկնեխտը, Ֆրիտյոֆ Նանսենը, Անրի Բարբյուսը, ամերիկացի Ջոն Ռիդը և մյուսները թերթերի էջերից, համալսարանների ու պառլամենտների ամբիոններից պահանջում շուտափույթ միջամտություն հայկական հարցին: Եվ գուր էր Անատոլ Ֆրանսը Սոդրոնի հնամենի սրահից աղաղակում՝ <<Արևելքում մեռնում է մեր քույրը: Մեռնում է միայն այն բանի համար, որ նա մեր քույրն է: Նրա հանցանքն այն է, որ նա բաժանել է մեր զգացմունքները, սիրել է այն, ինչ սիրել ենք մենք, մտածել է այնպես, ինչպես մենք. հավատացել է այն ամենին, ինչին հավատացել ենք մենք, և մեզ նման ընկալել է իմաստություն, բանաստեղծություն և արվեստ: Դրա մեջ է նրա հանցանքը...>>¹, իսկ Չերչիլը այսպես բնութագրեց հայերի ճակատագիրը. <<Հայերի դժբախտությունն այն է, որ նրա արյունն ավելի թեթև է, քան նավթի կշիռը>>:

Եվ ահա աստծուց ու մարդկանցից մոռացված հայ ժողովրդին մնում էր աղոթել հին, բայց միշտ կենդանի աստվածներից մեկին՝ վրիժառու Նեմեսիսին... Նրա այդ աղոթքը իրականացրին նույն բախտն ու կենսագրությունն ունեցող մի խումբ երիտասարդներ՝ երզնկացի, քաղեջի, խոտորջուրցի, և ավերակված մյուս գավառների ծնունդ, ջարդերից հրաշքով փրկված հայորդիներ, որոնք վճռել էին իրենց ուժերով պատժել անպատիժ մնացած հանցագործներին:

Հոգեբանական գրականության մեջ վրեժխնդրությունը դիտարկվում է իբրև զգացմունքների ապրման ձև, և այն չի դասվում դրական հուզական վիճակներին: Ընդհակառակը, վրեժխնդրությունը սովորական կենցաղային առօրյայում դատապարտելի է, քանի որ այս կամ այն երևույթին հակադարձելը վրեժխնդրությամբ համարվում է հակաօրինական երևույթ:

Սակայն այլ է Եղեռն տեսած ժողովրդի զավակների ապրած հոգեկան ընդվզումը, որը հրաբուխի պես պետք է ժայթքեր իբրև վրեժի հատուցում, իբրև լկտի ոճրագործին իր լեզվով պատասխանելու միջոց:

Ս. Թեհլերյանի հուշերում կարդում ենք.

<<Լուսաբացին ըմբոստ արթնացա մի ծանր երազից, իբրև թե մեռել եմ ու մտել գերեզման, ուր գտնվում են հարազատներս: Գերեզմանը բավական ընդարձակ է, քարաշեն, բայց խոնավ: Միայն մի կանթեղ լուսավորում է անթափանցելի խավարը: Մերոնք շատ ուրախ են, որ, վերջապես, մեռել եմ, մանավանդ հարսներն ու երեխաները: Վերջինները ցատկում են ուսերիս՝ հրճվանքից խենթացած: Բայց մայրս խիստ դժգոհ է. նա լաց լինելով մեղադրում է ինձ, որ շուտ եմ մեռել և առանց իրենց վրեժը լուծելու՝ իջել գերեզման...>>²

¹ Ս. Թեհլերյան. Վերհիշումներ, <<Թալեաթի ահաբեկումը>>, Երևան, 1993թ., էջ 4

² Ս. Թեհլերյան. Վերհիշումներ, <<Թալեաթի ահաբեկումը>>, Երևան, 1993թ., էջ 3



Եվ ինչ էր մնում անելու Սողոմոն Թեհլերյանին, եթե ոչ այն, ինչ իրագործեց:

1921 թվականի մարտի 15-ին Բեռլինի Հարդենբերգ փողոցում Թալեաթին գնդակահարող Սողոմոն Թեհլերյանը ձերբակալվեց և հանձնվեց գերմանական դատարանին: Հունիսի 2-3-ին Բեռլինի նահանգային դատարանում տեղի ունեցավ Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը: Երբ նախագահողը հարցաքննում էր մեղադրյալին, վկաներին ու փորձագետներին, ինքն էլ զգաց, թե ինչպես այդ ընթացքում Բեռլինի դատարանի պատերը կարծես բացվեցին, լայնացան, և ներկաների աչքի առջև պարզվեց անասելի մի ողբերգություն: Միջազգետքի անապատներից, Եփրատի, Տիգրիսի և ուրիշ փոքր ու մեծ գետերի հատակներից, ձորերի ու կիրճերի խորխորատներից, ավերակված քաղաքների քար ու մոխրի շարան-շարան եկան, կանգնեցին հազար-հազարավոր սպանվածների ուրվականներ, բռնեցին դատախազական ամբիոնը, իսկ մեղադրյալի աթոռին նստեցրին նրանց, որոնք զոհերի սուգ ու աղերսի առաջ խուլ ու անհողորդ դառնալով, շարունակում էին սպանել ու հրդեհել:

1921 թվականից սկսված, մեկը մյուսի հետևից՝ Բեռլինում, Պոլսում, Հռոմում,

Թիֆլիսում, Թուրքեստանում գնդակահար գետին են տապալվել հայկական ջարդերի գլխավոր կազմակերպիչ, մարդակեր Թալեաթը, Թուրքիայի նախկին վարչապետ Ֆաթալի Խան Խոյսկին՝ ցեղասպանության վճիռը տվող ու նաև հետևողական կիրառողը, բժիշկ Բեհաեդդին Շաքիրը, Տրապիզոնի կուսակալ, հայ մտավորականությանը, կանանց ու երեխաներին ոչնչացնող, նավերով ծովամույն անող հրեշը՝ Ջեմալ Ազմին, երիտթուրքական եռապետության պարագլուխներից՝ տեղահան քաղաքականներին դեպի անապատների երախը ուղարկող, ծովակալ Ջեմալ փաշան և ուրիշներ:

Վրեժխնդրության այս ծրագիրը իրականացվեց դաշնակցության հիմնած <<Նեմեսիս>> կազմակերպության որոշմամբ: Պետք է իրագործվեր հայության դեմ ուժի գործած մարդակերների հաշվեհարդարը, քանի որ վրիժառուների հոգում չէր հանդարտվում ցասումը հայ ժողովրդի հետ անմարդկային դաժանություններ ու վայրագություններ գործած մարդակեր հրեշների դեմ:

Ամենասարսափելի տանջանքների ենթարկված հայ մտավորականների սպանությունները անջնջելի հետք էին թողել մեր հայրերի հոգում, որոնք Անատոլիայի ճանապարհներին ու Միջազգետքի անապատներում վկա դարձան աննկարագրելի բարբարոսությունների:

<<Դանիել Վարուժանին ստիպեցին, որ իր ձեռքով փորի իր գերեզմանը և հետո միայն գնդակահարեցին: Գրիգոր Զոհրապի գլուխը քարերով ջարդեցին այնքան, մինչև անշնչացավ>>¹:

<<Նեմեսիսի>> արդար որաշմամբ սկսվեցին այն հաշվեհարդարները, որոնց համառոտ շարքը փորձենք ներկայացնել:

1920 թ. հունիսի 19-ին Արամ Երկանյանը Թիֆլիսում գնդակահարեց Ադրբեջանի նախկին վարչապետ Ֆաթալի Խան Խոյսկուն և խորհրդարանի խոսնակ Հասան Բեկ Ազանին:

1921 թ. մարտի 15-ին Բեռլինում Սողոմոն Թեհլերյանը գետնեց օսմանյան կայսրության վեզիր և ներքին գործերի նախարար, Հայոց Ցեղասպանության գլխավոր կազմակերպիչ Թալեաթին: Բեռլինի դատարանը արդարացրեց Սողոմոն Թեհլերյանին, որը դարձավ հայ ժողովրդի վրեժը լուծող անգերազանցելի անհատականություն:

1921 թ. հուլիսի 21-ին Միսաք Թոռլակյանը Կոստանդինապոլսում սպանեց Ադրբեջանի ներքին գործերի նախարար Բեհբուք Ջիվանշիր Խանին: Անգլիական Ռազմական դատարանը Թոռլակյանին արդարացրեց՝ որպես անմեղսունակ:

1921 թ. դեկտեմբերի 5-ին Արշավիր Շիրակյանը սպանեց երիտթուրք կուսակցության ղեկավար Մայիկ Հալիմին:

1922 թ. ապրիլի 17-ին Արշավիր Շիրակյանն ու Արամ Երկանյանը Բեռլինում վերացրին Տրապիզոնի նախկին նահանգապետ Ջեմալ Ազմիին, որը հրամայել էր ծովում խեղդել 15 000 հայ երեխաների:

1922 թ. ապրիլի 17-ին նրանք գնդակահարեցին նաև <<Թեշքիալաթվականը և մահսուսե>> կազմակերպության հիմնադիր Բեհաեդդին Շաքիրին (սպանելով նաև թիկնապահներից մեկին):

1922 թ. հուլիսի 25-ին Թիֆլիսում Պետրոս Տեր-Պողոսյանը և Արտաշես Գևորգյանը սպանեցին Թուրքիայի ռազմածովային ուժերի նախկին նախարար Ջեմալին:

1922 թ. Կարմիր բանակի հայազգի հրամանատար Հակոբ Մելքումովը Տաջիկստանում գնդակահարեց Օսմանյան կայսրության ռազմական նախկին նախարար Էնվերին:

Վրիժառունները չխնայեցին նաև հայ դավաճաններին: 1920 թ. Ս Թեհլերյանը Կոստանդինապոլսում սպանեց Օսմանյան կայսրության ոստիկանության գաղտնի ղեկավար Մկրտիչ Հարությունյանին:

¹ Ջ. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը>>, Ե., 1965 թ., էջ 253



1920 թ. մարտի 27-ին Արշավիր Շիրակյանը Կոստանդինապոլսում գնդակահարեց Վահե Իսսահանին (Եսայան), որը թուրքերի համար կազմել էր հայ մտավորականների ցուցակ և այդ ցուցակով էլ իրականացվել էր նրանց սպանդը:

1920 թվականին Կոստանդինապոլսում Արշակ Եզդանյանը գնդակահարեց դավաճան Յասայանին, որը մատնել էր Թալեաթին վերացնելու Հնչակյան կուսակցության նախաձեռնությունը և որի արդյունքում էլ Հնչակյան կուսակցության 21 անդամներ սպանվել էին:

Աշխարհը անբարո անտարբերություն ու անարդար վերաբերմունք ուներ հայի ու Հայաստանի նկատմամբ: Ավելին, Գերմանիայի կայսր Վիլհելմ II-ը Թալեաթին պարգևատրեց << Սև Արծվի >> շքանշանով, իսկ Թուրքիայի դեսպան Վանգենհայմը լկտիաբար հայտարարեց. << Մենք՝ գերմանացիներս, ատում ենք հայերին, որովհետև նրանք ռուսասեր են... >>¹:

Զարմանալիորեն, դարավերջին ևս, աշխարհի անտարբեր թողությունը կրկնվեց թուրքական սինդրոմը՝ Սուլգայիթում ազերին ապացուցեց, որ նորօրյա թուրքը կես քայլ անգամ հեռու չէ կանգնած 15-ի թուրք Թալեաթից ու ենիչերուց, որը յաթաղանով թրատեց հայ հղի կնոջ որովայնը և, տեսնելով կիսված մանկանը, հռչակեց՝ ասելով՝ << Աֆարիմ, տեսար ,որ երկվորյակ ունեցար >>:

Արցախյան Գոյամարտի Ոգին ծնվեց հենց նոր Նեմեսիսից՝ Սուլգայիթի ու Մարադայի, Կիրովաբադի ու Բաքվի ոճրագործություններից, և վրեժխնդրության ցասումը նորից հայ ֆիդայի - հայդուկին պայքարի հանեց ու իր պապենական հողից դուրս շարտեց եղենագործին: Այս է մեր պայքարի ֆենոմենը, որը չի հանգչի ոչ մի հայի հոգում, քանի դեռ աշխարհը անբարո վերաբերմունք ունի ցեղասպանություն ապրած մի ժողովրդի անցյալի հանդեպ, քանի դեռ հայոց աշխարհի տարածքից մեծ Դեր-Զորի գերեզմանը կա, ուր անթաղ նահատակների հոգիները դեգերում են տիեզերքի անհունում, քանի դեռ Արցախ աշխարհը ճանաչում չունի և քանի դեռ Հայոց Ոստանի կարոտակեզ հայացքի դեմ, կարծես ավիդ մեջ, բայց անհաս ու հեռու գերված Մասիսները կան:

Սակայն ինչպես Անատոլ Ֆրանսը կասեր՝ հայի մեկ կաթիլ Արյուն մնալու դեպքում էլ կհառնի Հայաստանը, կասեի՝ Արցախ- Հայաստանս, Արցախը՝ անունս, Հայաստանն՝ ազգանունս:

¹ Ջ. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը >>, Ե., 1965 թ., էջ 365

Ամփոփում

Հոդվածում լուսաբանվում է վրեժխնդրության զգացմունքի հոգեբանական բնույթը, որը ծնվում է իբրև եղեռնագործության ու վայրագության հանդեպ դրսևորվող ըմբոստություն: Այն դիտարկվում է Հայոց Մեծ Եղեռնի իրադարձությունների փաստարկներով:

Месть как протест против геноцида

Арзик Мхитарян

Резюме

Ключевые слова: *мечь, бунт, геноцид, геноцид, эмоции, чувства.*

В статье освещается психологический аспект чувства мести, рожденного как протест против совершенного зверства. Оно подтверждается фактами событий геноцида армян.

Revenge as a Protest against the Massacre

Arzik Mkhitaryan

Summary

Key words – *revenge, rebellion, genocide, emotions, feelings.*

The given article highlights the psychological aspect of the sense of revenge which was born as a protest against the atrocities committed. It is based on the real events of the Armenian Genocide.

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԷԹՆՈՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԲՈՒԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱԹՈԼՈԳԻԱՆ

Լուսինե Ղարախանյան

h. q. թ. դոցենտ

Բանալի բառեր - *հոգեբանական պաշտպանություն, ռեպրեսիա, արտամղում, ինֆորմացիայի արգելափակում, իդեալականացում, պաթոլոգիա, մոտիվացված մոռացում, ամենեզիա:*

Առհասարակ հոգեբանական պաշտպանությունները միջնորդավորում և ձևավորում են անձի իմացական գործընթացները, իր և շրջապատող աշխարհի մասին տարբեր ինֆորմացիաների ընկալման առանձնահատկությունները: Ըստ որում՝ այստեղ ինֆորմացիայի արգելափակումն առանցքային դեր է ստանում՝ բացառելով այն գիտակցության ոլորտից: Եթե սովորական հոգեբանական պաշտպանությունների դեպքում այս բացառումը տեղի է ունենում անգիտակցաբար, ապա թուրքական էթնոսի պարագայում այն ունի գիտակցական շեշտված երանգներ:

Հոգեբանական բարձրակարգ պաշտպանություններից ամենահիմնականը համարվում է արտամղումը /ռեպրեսիա/, որի էությունը մոտիվացված մոռացումը կամ անտեսումն է: Մոտիվացված մոռացման երևույթն է ընկած թուրքական կառավարության հայկական թաբուի հիմքում: Ֆրոյդը գրում էր, որ <<ռեպրեսիայի իմաստը այն է, որ ինչ որ բան հեռացվում է գիտակցությունից և լինում է նրանից հեռավորության վրա>>: Ըստ որում, եթե ներքին դրվածքը կամ արտաքին պայմանները բավականին վշտացնող են կամ ընդունակ են մարդուն հասցնել մոլորության, ապա հնարավոր է գիտակցությունից դրանց միտումնավոր դուրս բերումը դեպի անգիտակցական: Ռեպրեսիան գիտակցությունից հեռացնում է տագնապ առաջացնող իրադարձությունները, միտքը կամ ընկալումը՝ այդպիսով խոչընդոտելով դրանց հնարավոր լուծմանը: Պետք է նշել, որ արտամղված նյութի բովանդակությունը մնում է անգիտակցականի խորքերում՝ խնդիրներ պատճառելով այն կրողին: Ռեպրեսիան որպես պաշտպանական մեխանիզմ՝ Հայոց եղեռնի մոտիվացված մոռացումը կամ անտեսումն է: Ցավոք, արտամղված նյութը կամ բովանդակությունը շարունակում է մնալ որպես անգիտակցականի բաղկացուցիչ մաս և խնդիրներ առաջացնել: Աներկբա է, որ դիմադրության շատ ու շատ կողմեր գիտակցվում են թուրքական էթնոսի կողմից, սակայն դրանց մի մասը մնում է չգիտակցված: Ըստ էության, դիմադրության անմիջական պատճառը շարունակում է մնալ այնպիսի հիվանդագին երևույթներից անգիտակցական խուսափումը, ինչպիսին համազգային ամոթն է, տագնապն ու մեղքի զգացման գիտակցումը: Ի դեպ, արտամղումը չի կատարվում մեկընդմիջտ,

այն պահանջում է էներգիայի մշտական վատնում՝ նյութն արտամղված պահպանելու համար, իսկ արտամղվածն անընդհատ փորձում է էլք գտնել: Նման դեպքերում մարդն անընդունակ է հիշել կոնկրետ ցնցող, ցավ պատճառող իրադարձությունները, սակայն գտնվում է դրանց մասին հիշողության համառ բռնկումների ճնշման տակ: Դա մի ֆենոմեն է, որը Ֆրոյդը պատկերավոր անվանեց <<արտամղվածի վերադարձ>>: Թուրքական տարբեր քաղաքական գործիչների մոտ այդ վերադարձը հաճախակի է նկատվում: Օրինակ, Թուրքիայի նախկին նախագահներից՝ Թուրգուօ Օզալի՝ Հայաստանի հասցեին հնչած սպառնալիքներից մեկը: Երբ 1993 թվականի ապրիլին Քարվաճառի շրջանում ԼՂՀ պաշտպանության բանակի իրականացրած գործողություններից հետո պատերազմը փոխադրվեց հակառակորդի տարածք, Թուրգուօ Օզալը խախտեց միջազգային իրավունքի՝ ուժ և ուժի կիրառման սպառնալիք բացառելու մասին հիմնարար նորմերը: Եթե թուրքական հայտարարություններն ի սկզբանե պահանջում էին ետ քաշել առաջ շարժվող Արցախի բանակը, ապա հետագայում Օզալը սպառնալիքներ էր հնչեցնում, որը ժամանակին տարածվել էր արտասահմանյան առաջատար լրատվամիջոցներում. <<Հայերը չեն սովորել Անատոլիայի փորձառության իրենց դասը և այն պատիժը, որ ստացել են>>: Ավելին, այս հայտարարությանը գումարվել են <<Հայաստանին ատամներ ցույց տալու>> և <<Կիպրոսայան տարբերակը>> չբացառելու սպառնալիքները¹: Իսկ 2009 թվականի մայիսի 23-ին Դյուզեում Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հայտարարում է. «Տարիներ շարունակ մեր երկրից վտարվել են նրանք, ովքեր էթնիկապես այլ ինքնություն են ունեցել»: Հայ-թուրքական հարաբերությունների զարգացման համատեքստում Կարսի գրավման 77-րդ տարեդարձի տոնակատարություններին թուրք պաշտոնյա Սուլեյման Դեմիրելի հայտարարությունը, որում Հայաստանի հետ Թուրքիայի հարաբերությունների բարելավումը համարվում էր <<սարերի հետևում>>² ևս բովանդակում է այն սպառնալիքը և կարծրատիպային համոզմունքը, որով հնարվոր չէ կանխատեսել լուսավոր ապագա՝ ինչպես եղեռնի ճանաչման, այնպես էլ հայ-թուրքական հարաբերությունների բարելավման առումով:

Արտամղման պաշտպանական մեխանիզմը հաճախ գուցակցվում է ռացիոնալիզացիայի հայտնի պաշտպանիչ ռազմավարության հետ և թուրքական էթնոսին դրդում տարբեր ձևերով արդարացնել կամ մեղմացնել նախնիների արածը: Ռացիոնալիզացիաները ակնհայտ դրսևորում ունեն հատկապես Ահմեդ Դավութօղլուի տարբեր ելույթներում: Նշենք միայն մեկ օրինակ. Ֆրանսիայում Հայոց ցեղասպանությունը ժխտող օրինագծի ընդունումը նա դիտում էր որպես այլընտրանքային կարծիքների ժխտում, ինչը միջնադարին

¹ Անանյան Ա., Հայ-թուրքական երկխոսության նոր փորձ /Թուրք-հայկական հանձնաժողովի գործունեության մասին/, Երևան, 2003, էջ 6:

² Նույն տեղում՝ էջ 12-13 /հղումը՝ Turkish Daily News, 10,13,1997. /

բնորոշ մտածելակերպ է և վտանգավոր՝ Եվրոպայի զարգացման համար: Քաղաքագետի պաշտպանական հակազդումները, թվում է, անշեղորեն գնում են դեպի <<բարոյական պարտավորությունների ոլորտ>>: Բայց սա թվացյալ էֆեկտ է ապահովում և կրկին տագնապայնությունը թուլացնելու ներքին ուժեղ միտում ունի: Սա նույն Թալեաթ փաշայի ռասիզմի դրսևորումն է տասնյակ տարիներ անց, որից հիմա սնվում է թուրքական էթնոսի կանխամտածված ամենեզիան: Բայց, ինչպես տեսնում ենք, չնայած արտամղված նյութի բովանդակությանը, հիշողությունն իրեն հաճախակի է զգացնել տալիս թուրքական կառավարության հայտնի պաշտոնյաների ելույթներում:

Այստեղ զուգահեռ գործում է նաև իդեալականացման պաշտպանական մեխանիզմը: Դեռևս 1981 թվականի մարտին էր, երբ Ստամբուլում հանդիսավորությամբ, պետական ու զինվորական պատիվներով նշվեց ոճրագործ Թալեաթի սպանության 60-ամյակը: Հոծ բազմության, պետական ու զինվորական մարդկանց մասնակցությամբ թուրքական պետական հիմնի մեղեդիների ներքո կատարվեցին թուրքական ավանդական արարողություններ¹: Ի դեպ, այսօրվա Թուրքիայում ևս Թալեաթն ու Աթաթուրքը համարվում են մոդալ անձինք, էթնոկլիր անհատներ, որոնց անվան հետ կապվում է թուրքական պետության կայունությունն ու հաջողությունը:

Իդեալականացման պաշտպանական մեխանիզմն առաջին հերթին կապված է բարձրացված ինքնագնահատականի կամ այլ անձի գնահատման հետ: Օրինակ՝ Թալեաթի գերագնահատումը, որին վերագրվում է դրական հատկանիշների այն շրջանակը, որոնք կարող են բնորոշ չլինել անհատին, բայց պաշտամունքի առարկա են անձի համար: Իդեալականացումը կապված է անձնական իդեալի ձևավորման գործընթացի հետ: Ըստ որում՝ իդեալականացման պաշտպանական մեխանիզմը թուրքական էթնոսի հայկական թաքուի կոնտեքստում կարելի է դիտել որպես ներէթնիկական կոնֆլիկտի լուծման միջոց: Հորնին նշում է, որ իդեալականացման պաշտպանական մեխանիզմը կատարում է անձի կայունության համար մի շարք կարևոր գործառույթներ. փոխարինում է մարդու իր ուժերի իրական վստահությանը /սեփական հնարավորություններին հավատքը դառնում է իդեալականացված կերպարի անհրաժեշտ բաղադրիչ/, ստեղծում է պայմաններ գերակայության /կատարելության/ զգացման և այն բանի համար, որ նա ավելի լավն է, արժանի մյուսներից, ժխտում է ներհոգեկան կոնֆլիկտների առկայությունը /հերքում է այն ամենը, ինչը չի մտնում իր ստեղծած վարքի մոդելի մեջ/:

¹ Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ:- Երևան, 1982, էջ 3:

Իդեալականացման պաշտպանական մեխանիզմը ևս պաթոլոգիկ էլեմենտներ է պարունակում, քանի որ խոչընդոտում է ճիշտ գնահատականների ու տեսակետների ձևավորմանը:

«Փառապանծ անցյալի և անհրապույր ներկայի միջև ընկած ահռելի անդունդն անցյալի վերադարձի ձգտումը դարձնում է համազգային գաղափար: Ընդ որում, որքան ավելի վատ է ներկայիս վիճակը, այնքան մեծ է անցյալի իդեալականացման միտումը: Այդ իրավիճակը մարդկանց մեջ անասնական բնագոյների զարթոնքի պատճառ է հանդիսանում, նրանք վայրի գազաններից էլ վտանգավոր են դառնում»¹: Երբ 2004 թվականին Դինքը <<Ակոսում>> հայտարարեց, որ Մուստաֆա Քեմալի հոգեդուստր Սաբիհա Գյոքչենը որք հայուհի է, բանակի գլխավոր շտաբը հրապարակայնորեն արձագանքեց այդ հայտարարությանը և այդ <<կեղծ բացահայտումների>> հեղինակին մեղադրեց հանրապետության սրբազան խորհրդանիշերը պղծելու ցանկության մեջ: Այսինքն, Մուստաֆա Քեմալը և նրա համախոհները իրենց գաղափարներով ու համոզմունքներով թուրքական էթնոսի սրբազան խորհրդանիշեր են: Հենց այսպես է Դինքը դարձել ուլտրաազգայնական շրջանակների թիրախ: Այսինքն, ազգային ապաշխարման մասին ոչ մի խոսք: Այստեղ արժե հիշատակել նորմերի գիտակցված ընկալման՝ անձի էթնիկական գիտակցության դրսևորման մասին: Եթե անձը ընդունում է իր էթնոսի այս կամ այն նորմը, ապա այն ինչ-որ չափով համարում է իրենը: Նա հոգեբանական նույնացման մեջ է մտնում իր էթնոսի ու նրա պատմական անցյալի ու գաղափարախոսության հետ: Եվ այս գաղափարախոսությամբ է սնվում կոլեկտիվ ու ազգային ինքնագիտակցականը, որի մեջ խտացված են էթնիկական կարծրատիպերը, էթնոգենեզի ընթացքում առաջացած ժառանգական միտումները, որոնք իմպուլսներ են հաղորդում էթնոսի վարքին ու գործունեությանը:

Կառլ Յունգը, վերաիմաստավորելով անգիտակցականի մասին ֆրոյդյան տեսությունը, շեշտում էր կոլեկտիվ անգիտակցականի հիմնական ձևերը՝ արքետիպերը, որոնք առկա են բոլոր մարդկանց հոգեկան աշխարհում: Ըստ որում, կոլեկտիվ անգիտակցականի արքետիպերից կարևորագույնն է համարվում ինքնության արքետիպը, որը հանդես է գալիս որպես անհատականության կենտրոն: Թուրքիայում Հայոց ցեղասպանության կազմակերպիչների աճյունների վերաթաղման արարողությունը ևս համոզում է նախնիների հետ թուրքական էթնոսի ունեցած հոգեբանական դրական իդենտիֆիկացիայի ու անառողջ ինքնավեհացման (սուբիմացիայի) առկայության մասին: Այստեղ է, որ էթնոկիր թուրքի անհատական սկիզբը տարրալուծվում է կոլեկտիվ անգիտակցականի մեջ, և ես-ն իր բովանդակության մեջ սկսում է ճնշել (սուպրեսիա) կոլեկտիվ անգիտակցականի անցանկալի

¹ Акчам Т., Турецкое национальное “я” и армянский вопрос. <http://www.armenianhouse.org/akcam/akcam-ru.html>:

մտքերն ու պատկերները: Հոգեբանական այսպիսի վիճակի մեջ առկա է ազգային էգոիզմը, որից վերջնական փրկությունն ակունքներին վերադառնալն է, կոլեկտիվ անգիտակցականի բովանդակության, նախնիների կատարածի օբյեկտիվացումն ու վերապրումը:

Ցավոք սրտի, Թուրքիայի՝ հայկական թաքուի ինստիտուցիոնալացումը շարունակվում է հետևողականորեն տարվող քաղաքականությամբ, որի հիմքում ընկած են նաև, այսպես կոչված, ինտեգրատիվ հոգեբանական պաշտպանությունները: Այսպիսի պաշտպանությունների ժամանակ տեղի է ունենում ինֆորմացիայի ձևափոխման գործընթաց: Ըստ որում՝ ինֆորմացիայի փոփոխումը, աղճատումը կարող է իրականացվել տարբեր միջոցներով՝ ընդհանրացմամբ, վրիպումներով, կատեգորիզացիայով և այլն: Այս պաշտպանությունների արդյունքում թուրքական էթնոսը սկսում է <<տիրապետել>> իրականությանն անհամապատասխան ինֆորմացիայի և ապրել իր ստեղծած պատրանքների աշխարհում: Այս պաշտպանական մեխանիզմների գործունեության վրա ուժեղ ներգործություն ունի պանթուրքիզմի գաղափարախոսությունը: Պանթուրքիզմի գաղափարախոսությունը, որով սնվում է ազգային անգիտակցականը, ենթադրում է էթնիկական գերակայություն, ինչը հոգեբանորեն արդարացնում է դրանից բխող բոլոր գործողությունները, այսինքն՝ անպատժելիության զգացումը ամրապնդվում է էթնոսի ենթագիտակցության կամ կոլեկտիվ անգիտակցականի խորքերում: Թերևս Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանությունը մերժելու իրողությունը նաև սրանով է պայմանավորված: Թուրքական էթնոսի ազգային ինքնագիտակցության մակարդակում այսօր շարունակում է տիրել իմացական աններդաշնակությունը /կոգնիտիվ դիսոնանս/:

Բոլոր պաշտպանական մեխանիզմներում էլ առկա է պաթոլոգիան, ինչը չի կարող չանդրադառնալ թուրքական էթնոսի գիտակցության և ինքնագիտակցության վրա: Պաթոլոգիայի ծնած աններդաշնակությունը կվերանա միայն այն ժամանակ, երբ Թուրքիայում մատաղ սերունդը կարողանա առերեսվել պատմական անցյալի հետ, որով նաև էթնոսի քաղաքակրթվածության աստիճանն է որոշվում, կարողանա նախնիների հետ հոգեբանական նույնացման ընդունակություն ունենալ և նոր միայն վերաբժնորել եղեռնը կազմակերպող իր նախնիների արածը: Թաքուն կշարունակի միջամտել թուրքական իրականությանը, քանի որ պատմական ճշմարտությունը չի կարող երկար ժամանակ քաղաքականացված մնալ:

Ամփոփում

Հոդվածում արտացոլված է թուրքական էթնոսի հայկական թաքուի հոգեբանական պաշտպանության պաթոլոգիան: Թուրքական էթնոսն իր կանխամտածված ամենեզիայի արդյունքում դրսևորում է այնպիսի

պաշտպանական մեխանիզմներ, որոնց հիմքում ընկած է ինֆորմացիայի արգելափակումը կամ աղճատումը:

Հայկական թաբուի ինստիտուցիոնալացումը /պաշտոնականացումը/ չի կարող երկար կյանք ունենալ, քանի որ պատմական ճշմարտությունը նույնպես չի կարող երկար ժամանակ քաղաքականացված մնալ:

Psychological Defense Pathology of Armenian Taboo in the Turkish Ethnos

Lusine Gharakhanyan

Summary

Key words - *psychological defence, repression, airlift, information interlock, idealization, pathology, motivated oblivion, amnesia.*

In this article phsychological defence pathology of Armenian taboo the Turkish ethnos is revealed. As a result of its intended amnesia the Turkish ethnos expresses such defence mechanisms on the basis of which the lock or abuse of information lies. The official establishment of Armenian taboo can not last long either, because historical truth can not be politicized so long.

Патология армянского табу в качестве психологической защиты турецкого этноса

Лусине Караханян

Резюме

Ключевые слова - *психологическая защита, репрессия, супресия, блокировка информации, идеализация, патология, мотивированное забвение, амнезия.*

В статье выражена паталогия психологической защиты табу турецкого этноса на армянство. Турецкий этнос в результате преднамеренной амнезии, проявляет защитные механизмы, основой которых является торможение и искажение информации. Институционализация (официальное признание) армянского табу не может длиться долго, так как историческая правда так же не может долго оставаться политизированной.

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԲՈՆԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԿՁԲՈՒՆՔԻ
ՀԱՍՏԱՏՈՒՄԸ 1912-1913թթ. ԲԱԼԿԱՆԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆՈՒՄ

Արևիկ Պետրոսյան

պ. գ. թ.

ԱրՊՀ

Բանալի բառեր. բալկանյան, պատերազմներ, էթնիկ, գտումներ, տեղահանություն, գաղթականներ, տարածաշրջանային, գավթիչներ, եվրոպական, քաղաքականություն

Բալկանյան ժողովուրդների մղած ազատագրական պայքարի սկիզբը ստրկացված եղբայրների ազատագրման համար շատ ժողովուրդների մոտ ծնել է այն համոզմունքը, որ տարածաշրջանում Օսմանյան կայսրության գրեթե հինգ դար տևած իշխանության անկումն անցյալում կթողնի բռնությունն ու ազգային ճնշումը, իր բոլոր դրսևորումներով արյունալի ապստամբություններն ու դաժան բռնաճնշումը:

Սակայն իրական ազատագրման հույսը մարեց Մակեդոնիայում դաշնակցային զորքերի առաջին իսկ քայլերից հետո: Դաշնակցային զորքերի վերաբերմունքը ազատագրված տարածքների բնակչության հանդեպ ստիպեց լրջորեն մտածել նման պատկերացումների պատրանքայնության մասին:

Առաջին տագնապալի ազդակը դարձան մուսուլմանական /թուրքական և ալբանական/ բնակչության էթնիկ գտումները: Քրիստոնյա քաղաքացիական բնակչությունը վրեժ էր լուծում այն բոլոր բռնությունների համար, որոնց ժամանակին ենթարկվում էր թուրքերի կողմից: Ուսումնասիրելով իրավիճակը՝ Քարնեգի հանձնաժողովը հետազայում եկել էր այն համոզման, որ տեղի ունեցածը որոշակիորեն տրամաբանական է, նշելով, որ գյուղերի հրկիզումը և կողոպուտը Բալկանյան պատերազմների և ապստամբությունների ավանդական երևույթներից են: Հաշվի առնելով այն փաստը, որ դեռ բավականին թարմ են հիշողությունները քրիստոնյաների նկատմամբ շատ մուսուլմանների ոչ պատշաճ դերի, նրանց՝ բաշխեցությունների կարգավիճակով բռնաճնշումներին մասնակցության մասին, կարելի է նշել, որ վրեժխնդրության տենչը եղել է անսահման:

Նշված ժամանակահատվածում ներկա լինելով Բալկաններում որպես ռազմական թղթակից՝ Լ. Տրոցկին այսպես էր նկարագրում 1912թ. Կումանովոյում տեղի ունեցած հրդեհների տարօրինակ հրավառությունը:

«Այրվում էր բոլոր կողմերից, ալբանական գյուղերը ամբողջովին դարձել էին կրակի պուներ... Իր հրեղեն միօրինակությամբ պատկերը կրկնվում էր մինչև

Սկոպլե»¹: Մահմեդականների կողոպտման դեպքերը հանդիպում էին ոչ միայն շարքային զինվորների, այլ նաև սպայակազմի շրջանում: Լև Տրոցկին այդ կապակցությամբ բերում է սերբ սպաներից մեկի վկայությունները, ով խոստովանում էր, որ չնայած գողությունը կանխելու ձգտմանը, «այն միշտ չէր պահպանվում և առաջին հերթին հենց իրենց սպաների կողմից», որոնք «արշավից իրեղեն «հիշատակների» պահպանման պատրվակի ներքո, ամենուր հարուստ ալբանացիներից և թուրքերից վերցնում էին թանգարժեք զենք, գորգեր, մետաքսեղեն, ոսկի և արծաթ»²:

Սակայն Մակեդոնիայի մուսուլմանների նկատմամբ դաժան վերաբերմունքի մեջ ավելի մեղավոր են կամավորական կազմավորումների մասնակիցները, քան կանոնավոր զորքերը:

Գաղտնիք չէ և այն, որ դրանց շարքերն էին համալրում ոչ միայն թուրքական բռնապետության դեմ գաղափարապես պայքարողները, այլև քրեական դեմքեր, ովքեր զուրկ էին մարդկային զգացմունքներից ու քաղաքակրթության չափանիշներից և յուրաքանչյուր պահի պատրաստ էին վայրագության: «Իսկական վայրագությունները սկսվում էին այն ժամանակ, երբ կամավորական չեթնիկները մնում էին բնակչության զինաթափման համար և առանց հսկողության: Կոմիտաջները ոչ մի սահման չէին ճանաչում: Հիմնականում դրանք կազմված էին անբաններից, ավազակներից և արատավոր տարրերից, ովքեր սպանություններն ու բռնությունները վայրի սպորտ էին դարձրել»³:

Այդ մասին խոսվում է Քարնեգի հանձնաժողովի «Ձեկույցում»⁴: Ընդ որում՝ նշվում է, որ Բալկանյան պատերազմների ժամանակ 1912-1913թթ. փոխվել էր

¹ Троцкий Л.Д., Перед историческим рубежом. Балканы и балканские война // (Электронный ресурс) // www.Magister.Msk.ru/library/trptsky/trotm.104.htm

² Троцкий Л.Д., նույն տեղում :

³ Троцкий Л.Д., Указ. Соч. // (Электронный ресурс) // www.Magister.Msk.ru/library/trptsky/trotm.127..htm

⁴ Քարնեգի հիմնադրամի <<Ձեկույց>> հատուկ տեղ է գրավում հրապարակված աղբյուրների մեջ: 1913 թ. նշված կազմակերպությունը որպես իր առաջին ակցիայի որոշել է ուսումնասիրել և վերլուծել երկու Բալկանյան պատերազմները՝ նպատակ ունենալով անաչառ զեկույց պատրաստել միջազգային հանրությանը դրա իրական փաստերին ծանոթացնելու համար: Հանձնաժողովի կազմի մեջ մտան Եվրոպայի /Ռուսաստանը նեկայացրել է Պ. Ն. Միլյուկովը/ հայտնի քաղաքական գործիչներ և մտավորականներ: Հինգ շաբաթվա ընթացքում հավաքագրված փաստացի մեծաքանակակ նյութերը ընկալ զեկույցների հիմքում, որի հրապարակումը իրականացվեց 1914 թ. ամռանը: 20-րդ դարի վերջում կապված հերթական բալկանյան ճգնաժամի հետ, նշված աշխատությունը վերահրապարկվել է Բալկաններում: Մասնավորապես Մակեդոնիայի Հանրապետությունում այն հրապարակվեց մակեդոնական լեզվով 2000 թ.:

<<Ձեկույց>> հարուստ նյութեր է պարունակում խնդիրների լայն սպեկտրի մասին: Այս հանձնաժողովի անդամների փաստացի տվյալները թույլ է տալիս ամբողջությամբ ուսումնասիրվող ժամանակաշրջանում դատել Մակեդոնիայի իրավիճակի մասին, և

«Բաշիբոզուկ» հասկացության իմաստային նշանակությունը. բաշիբոզուկ կարող էր դառնալ ոչ միայն թուրքը, այլև «բուլղարացի գյուղացին ով կրում է զինվորի համազգեստը»:¹

Հարկ է նշել, որ ընդհանուր առմամբ մուսուլմանների նկատմամբ դաժանության մեջ մեղավոր էին ինչպես սերբերը, այնպես էլ բուլղարացիները և հույները:

Տեղի ունեցածի տրամաբանական հետևանք դարձան մեծ քանակությամբ փախստականները: Մուսուլմանների հետ կապված իրավիճակը միջազգային արձագանք ստացավ: Այս հարցում Բալկանյան երկրների դիրքորոշման մասին են վկայում ռուս դեսպանորդիների զեկուցումները բալկանյան մայրաքաղաքներում: Փաստորեն, ոչ մի բալկանյան երկիր չի համաձայնվել մուսուլմանների նկատմամբ կատարված դաժանությունների համար ներկայացված մեղադրանքների հետ՝ նշելով, որ նման պնդումները կեղծ են:²

Թուրքիայի դեմ մղվող պատերազմի տարիներին դաժանությունները մուսուլմանական բնակչության նկատմամբ հետզհետե հանդարտվում էին, ինչը մասամբ պայմանավորված էր Թուրքիայի ռազմական ներուժի ոչնչացմամբ: Օրակարգում դրված էր գրավյալ մակեդոնական տարածքների հետագա յուրացման հարցը:

Մի խոսքով՝ դաշնակիցները ձեռնամուխ են եղել գրավյալ մակեդոնական տարածքներում իրենց իշխանության իրականացմանը:

Հարկ է նշել, որ սկզբնական շրջանում մակեդոնացիների արձագանքը նոր իշխանությունների հաստատմանը ընդհանուր առմամբ առավել քան դրական էր: Այդ մասին են վկայում ռուս դիվանագետների տվյալները: Օրինակ՝ Աթենքում, դեսպանորդ Բ. Դիմիդովի խոսքերով, հունական զորքերին դիմավորեցին որպես ազատագրողների, անթաքույց հիացմունքով, իսկ հունական քաղաքացիական կառավարման հաստատումը ողջունվում էր աննկարագրելի ուրախության նշաններով:³

մասնավորապես նոր սերբական, բուլղարական և հունական իշխանությունների կառավարման ընդունման մասին, նմանատիպ գործընթացների առկայության և մասսայականության, ինչպիսին ասիմիլյացիան և էմիգրացիան և այլ, բալկանյան դաշնակիցների դաժանության և <<վայրագության>> երևույթների և այլ փոխադարձ մեղադրանքների ճշմարտացիության աստիճանի մասին: Նշված աղբյուրի անհերքելի արժեքը կարելի է ընդգրկել վերլուծականի առկայությունը, հիմնված լայն վիճակագրական նյութերի և կապված պատերազմների տնտեսական, բարոյական և սոցիալական հետևանքների հետ, Մակեդոնիայի զարգացման կանխատեսումներով /հեղինակի մեջբերում/:

¹ Поранешките Балкански војни (1912-1913). Извештај на Карнегиевата балканска комисија. – Скопје, 2000. С. 311>.

² АВПРИ - ф. 151. Политархив. – Оп. 482(1912). – Д.3754 – Л.133.

³ Նույն տեղում Д. 3699. – Л. 233.

Ուսկյուրում գլխավոր հյուպատոս Ն. Կալմիկովը նույն տեղեկություններն էր հայտնում նաև սերբերի նկատմամբ: Շուրջ 500 տարի տևած մուսուլմանական լծից ազատագրված ժողովրդի բերկրանքն անսահման էր: Շատերը ուղղակի ուրախությունից խենթանում էին», – գրում էր նա:¹

Մակայն մարդկանց խանդավառությունը երկար չտևեց: Դաշնակիցների համար ավելի ու ավելի հրատապ էին դառնում այն հարցերը, որոնք կապված էին ազդեցության տիրույթի հաստատման, ինչպես նաև Թուրքիայից հետ նվաճած տարածքների բաժանման հետ: Մակեդոնական հողերի պատճառով առաջացած մրցակցության սրմանը զուգահեռ բռնության էին ենթարկվում նաև Մակեդոնիայի քրիստոնյաները: Հենց որ թուրքական իշխանության վերին շերտը շարունակել էր, դրա տակ հայտնաբերվեց քրիստոնյա ազգությունների միջև մղվող բազմամյա պայքարը», – իր հիշողություններում գրում էր Պ.Ն.Միլյուկովը:²

Բուլղարացիների, սերբերի և հույների նախկինում համեմատաբար խաղաղ քարոզչությունը փախարինվեց զինված պայքարով, որը մղում էին հաղթողները բնակչությանը իրենց կողմը դարձնելու համար: Եվ այդ պայքարում գլխավոր չափանիշն էր պատկանելիությունը համապատասխան կրոնական և կրթական քարոզչությանը: Իսկ քանի որ Մակեդոնիայում տարիներ շարունակ տևած քարոզչության և կամավորական պայքարի արդյունքում առաջացան սերբական, բուլղարական և հունական ազդեցության շրջաններ, ապա սկսվեցին էթնիկ գտումներ, որոնք հաճախ իրականացվում էին առանձնակի դաժանությամբ ու նրանց նկատմամբ, ովքեր գտնվում էին օտար քարոզչության ազդեցության տակ:³

Այդ առումով ամենաքիչ տեղեկությունները բուլղարական կառավարման մասին է: Դա թերևս պայմանավորված է նրանով, որ ռազմական գործողությունների ժամանակ բուլղարական զորքերը գրավել են հիմնականում այն մակեդոնական հողերը, որոնց բնակչությունը դեռ մինչև Թուրքիայի հետ պատերազմը գտնվում էր բուլղարական քարոզչության ազդեցության տակ:

Ազգային պայքարի ամենավառ դրսևորումները կարելի էր տեսնել Մակեդոնիայի այն բնակավայրերում, որոնք գրավված էին հույների և սերբերի կողմից:

Հունական իշխանությունները ի սկզբանե չէին ընդունում այն փաստը, որ Մակեդոնիայում գոյություն ունի սլավոնական բնակչություն: Նրանց բուլղարախոս հույներ էին համարում: Սլավոնական բնակչությանը ստիպում էին հրաժարվել իրենց անուններից, լեզվից և ավանդույթներից: Այդ բռնաճնշումների նպատակը մեկն էր՝ ընդունել այն փաստը, որ իրենք ծագմամբ հույն են: Հարկ է նշել, որ բուլղարական իշխանությունները նույնպես էին

¹ Сборник дипломатических документов, касающихся событий на Балканском полуострове. Август 1912 – июль 1913. – СПб, 1914.

² Миллюков П. Н., Воспоминания/ П. Н. Миллюков. – М., 1991. с. 113.

³ Абациев Г., Балканските войни и Македонија/ Г. Абациев. – Скопје, 1958. с. 165.

վարվում իրենց տիրապետության տակ գտնվող Մակեդոնիայի հույների նկատմամբ՝ ձգտելով կորզել բուլղարական ծագման մասին խոստովանություն: Սոֆիյայում դեսպանորդ Նեկյուտովի խոսքերով, մի շարք բնակավայրերում կոտորել են արական սեռի բոլոր մարդկանց:

Այդ «հունաբուլղարական պատերազմի ընթացքում պարզ դարձավ երկու ժողովուրդների միջև արմատացած ռասայական և պատմական ատելությունը»:¹

Սերբական և հունական հատվածում սկսվեց բուլղարական կամավորների, ուսուցիչների և քահանաների հետապնդումը: Ազատագրողների համար ուսուցիչները միշտ եղել են բուլղարական քաղաքակրթության ընդարձակման կենտրոնը: Այդ պատճառով բուլղարական ուսումնարանները սերբերի և հույների շարունակական հարձակումների թիրախ դարձան: Բնակավայր մտնելով՝ առաջին գործողությունը ուսումնարանների փակումն էր: Ուսուցիչներին առաջարկում էին դասավանդել սերբերենով կամ հունարենով: Բոլոր նրանք, ովքեր իրենց բուլղարացի էին անվանում, արտաքսվում կամ կալանավորվում էին Սալոնիկում կամ Սկոպյեում:²

Անմիջապես մինչև երկրորդ բալկանյան պատերազմը, ազգայնական ճնշման ներքո սկսվեց մակեդոնական բնակչության վերախմբման գործընթացը որոշակի եկեղեցու՝ հունական պատրիարքության կամ բուլղարական եպարքիայի ճանաչման հիման վրա: Այդ գործընթացը ավելի վառ կերպով դրսևորվեց Երկրորդ բալկանյան պատերազմի ժամանակ, երբ ռազմական գործողությունները ոչ սերբ –սերբամոլ կամ հույն -հունամոլ բնակչության զանգվածային գոտում հրահրեցին: Շատ դեպքերում նմանապես գործում էր նաև բուլղարական բանակը:³

Տեղահանությունը շարունակվում էր նաև Բուխարեստի խաղաղ պայմանագրի կնքումից հետո: Քարնեզի հանձնաժողովի տվյալների համաձայն՝ Բալկանյան պատերազմների ժամանակ Բուլղարիա էր տեղափոխվել 112 հազար մարդ, որոնցից 50 հազարը մակեդոնացիներ էին: Հունաստան էր տեղափոխվել 157 հազար մարդ (հիմնականում հույներ, մակեդոնացիներ, թուրքեր, վլախներ): Նրանցից 90 հազարը բնակություն հաստատեց Մակեդոնիայի Էգեյան հատվածում:⁴

¹ АВПРИ. – Д. 34. – Л. 332.

² АВПРИ. – -Ф. 151. Политархив. – Оп. 482(1912). – Д. 2706. Л. 2-3.

³ Историја на македонскиот народ. Т. 4: Македонија меѓу Балканските Втората светска војна (1912-1941). – Скопје, 2000. – с. 65.

⁴ Историја на македонскиот народ. Т. 4: Македонија меѓу Балканските и Втората светска војна (1912-1941).- Скопје, 2000, с. 66.

Բուխարեստի խաղաղ պայմանագրի կնքման հետ կապված՝ Մակեդոնական ներքին հեղափոխական կազմակերպության Կենտրոնական կոմիտեն¹ հրապարակեց մի հուշագիր, որում խոսվում էր պայմանագրի վերանայման և Մակեդոնիայի համար Եվրոպայի գերտերությունների հսկողության տակ ինքնավարություն սահմանելու մասին:

Մակեդոնիայի համար ինքնավարություն հաստատելու նպատակով Եվրոպա ուղարկված պատվիրակության անդամ Գրիգոր Վասիլևին հասցեագրված հրահանգում Ալեքսանդրովը գրում էր. «Մակեդոնական ներքին հեղափոխական կազմակերպությունը համաձայն է, որ Մակեդոնիան միանա նույնիսկ Ալբանիային, միայն թե չմնա հունական կամ սերբական իշխանության ներքո»:²

Զմանրամասնելով ապստամբության ընթացքը՝ նշենք, որ այն ճնշվեց մի շաբաթվա ընթացքում և աղետալի հետևանքներ ունեցավ: Հիմք ընդունելով Հասարակական անվտանգության և նոր միացված տարածքների մասին դրույթը՝ սերբական իշխանությունները սարսափելի ոճրագործություն կազմակերպեցին: Օխրիդի արվարձաններում, օրինակ, այրվեց շուրջ 30 գյուղ, Օխրիդի և Գոստիվարի միջև ընկած հատվածում ավերվեց շուրջ 180 գյուղ:³

Հույն և մուսուլմանական բնակչության զանգվածային արտագաղթը այն շրջաններից, որոնք ի սկզբանե զբաղեցված էին հունական գործերով, պատճառ դարձավ, որ հետագայում դրանք փոխանցվեցին Բուլղարիային:

Հունաստան տեղափոխված մակեդոնական ծագում ունեցողների ընդհանուր թիվը 1913 թվականի օգոստոսի վերջին կազմել է 15 000 մարդ: Այդ արտագաղթը երկու հիմնական պատճառ ուներ.

1) գաղթականները վախենում էին բուլղարական իշխանություններից և չէին ցանկանում Բուլղարիայի իրավասությանը ենթակա լինել (առաջին հերթին դա վերաբերում էր Մակեդոնիայի հույն բնակչությանը),

2) հունական իշխանությունները գիտակցաբար ստեղծում էին օբյեկտիվ պայմաններ, որոնք բնակչությանը դրդում էին դիմել այդ քայլին: Լուրջ ջանքեր էին գործադրում մուսուլմանների մեջ հակաբուլղարական տրամադրություններ սերմանելու համար:

Դրա համար նրանք գործի էին դնում բռնի մեթոդներ, օրինակ հրկիզում են թուրքական ամբողջական գյուղեր հավաքված բերքի հետ մեկտեղ: Նրանք, ովքեր

